Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Գիրքը տպագրվում է ազգային գործիչ հանգուցյալ ԱՐՇԱՎԻՐ ՇԱՎԱՐՇՈՒՆՈՒ Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյին կտակած միջոցներով: Հեղինակը իր հարգանքն է բերում հանգուցյալի հիշատակին և շնորհակալություն հայտնում ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻՆ գրքի տպագրությունն իրականացնելու համար:

Հրատարակություն ՀՅԴաշնակցության Բյուրոյի

АРМЯНСКАЯ РЕВОЛЮЦИОННАЯ ПАРТИЯ ДАШНАКЦУТЮН И СОВЕТСКАЯ ВЛАСТЬ

(Сборник документов и материалов)

Ответственный редактор и составитель
профессор В.Н. Казахецян

Ереван 1998

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)

Պատասխանատու խմբագիր և կազմող
պրոֆեսոր Վ.Ն. Ղազախեցյան

Երևան 1999

1920-30-ական թվականները ՀՅ Դաշնակցության Հայաստանի կազմակերպությունների համար քիչ է ասել, թե դժվարագույն տարիներ էին: 1920թ. իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո նրանց կարևորագույն խնդիրը դարձավ ինքնապահպանությունը, իհարկե, ընդհատակում: Իսկ իր մենիշխանությունը հաստատած Կոմունիստական կուսակցությունը համառ և հետևողական պայքար ծավալեց ՀՅԴ- դեմ՝ նրան որպես կուսակցություն վերացնելու համար՝ նախ Հայաստանում և, եթե հաջողվեր, նաև ԽՍՀՄ մյուս հանրապետություններում ու արտասահմանում: Այդ նպատակով գործադրվեցին բոլոր միջոցները, բռնի ու ոչ բռնի, բացահայտ ու գաղտնի, գործի անցան ՀԿ(բ)Կ կազմակերպություններն ու պատժիչ մարմինները: Ստալինյան բռնատիրության և Կոմունիստական կուսակցության ամենատիրության պայմաններում բացառվում էր ՀՅԴ գոյատևումը, և գաղափարական ու կազմակերպական ջախջախիչ հարվածներ ստանալուց հետո Հայաստանում դադարեցվեց նրա գործունեությունը: Ժողովածուի փաստաթղթերը դասավորված են ժամանակագրական կարգով և ըստ հիմնախնդիրների: Իր բնույթով ու բովանդակությամբ այն առաջինն է հայ պատմագրության մեջ և նախատեսված է ընթերցող հասարակայնության ու հայ կուսակցությունների պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Ներկա պայմաններում, երբ հաստատվել ու ամրապնդվում է հայոց անկախ պետություն Հայաստանի Հանրապետությունը, հատուկ նշանակություն է ստանում նաև քաղաքական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը, կուսակցություններ, որոնք այս կամ այն դերն են խաղում պետության կայացման մեջ: Քաղաքական կուսակցություններից Հայ Յեղափոխական Դաշնակցությունը իր ավելի քան 100-ամյա գոյության ընթացքում կուտակել է հարուստ պատմություն: Նրա պայքարի ու գործունեության փորձի ուսումնասիրությունը ունի ոչ միայն ճանաչողական, այլև գործնական նշանակություն:

ՀՅԴ-ին պատմական տարբեր ժամանակաշրջաններում վիճակվել է գործել տարբեր պայմաններում, հետևաբար տարբեր մարտավարությամբ, կենտրոնական խնդիր ունենալով ազգին ծառայելը: Իր գոյության առաջին տասնամյակներում Դաշնակցությունը կանգնած է եղել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին դիրքերում: 1918-1920թթ. նա պետական կուսակցություն էր, վարել է հայոց առաջին հանրապետության իշխանության ղեկը և իշխանությունից հրաժարվել միայն արտաքին ուժերի ճնշման տակ: Խորհրդային իշխանության՝ Կոմունիստական կուսակցության բռնապետության պայմաններում դրվեց այդ կուսակցության չլինելու (համենայն դեպս Հայաստանի հողի վրա) հարցը:

Այսօր անկախ ժողովրդավարական հայկական պետությունը բոլոր քաղաքական կուսակցությունների համար հռչակում է սահմանադրական ազատություններ: Հայաստանի Հանրապետությունում գործում են տասնյակ քաղաքական կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնց թվում իր ուրույն տեղն ունի ազգային կուսակցություն ՀՅԴ-ը:

Ինչպես նշվեց, բացառիկ ծանր վիճակ բաժին ընկավ Դաշնակցությանը՝խորհրդային իշխանության՝կոմունիստական բռնատիրության հաստատման պատճառով:

Սույն գիրքը նվիրված է այդ պատմական բացառիկ ժամանակաշրջանում Դաշնակցության ապրած բացառիկ վիճակի ուսումնասիրությանը՝ փաստաթղթերի ու նյութերի միջոցով: Իր բնույթի ու բովանդակության բերումով գիրքը առաջինն է և առայժմ միակը պատմագրության մեջ:

Լուսաբանության ենթակա հիմնահարցը խորհրդային իշխանության, ավելի ճիշտ Կոմունիստական կուսակցության քաղաքականությունն է ՀՅԴ-ի նկատմամբ, որ նշանակում է վերացնել նրան որպես կուսակցություն՝ նախ Հայաստանում, ապա, եթե հաջողվի, նաև նրա սահմաններից դուրս՝ մյուս հանրապետություններում ու երկրներում: Խիստ խորհրդանշական է հայ բոլշևիկների խոսքը, որ ասվել է տակավին 1921թ., թե Դաշնակցությունը, որպես քաղաքական կուսակցություն, «Հայաստանի արևի տակ տեղ չունի և մահվան պիտի դատապարտվի»:

Դյուրին չէր դրված նպատակի իրագործումը: Չէ որ ՀՅԴ-ը ամենաազդեցիկ քաղաքական ուժը և ամենաբազմանդամ կուսակցությունն էր հայ իրականության մեջ: Որոշումով կամ հրամանով չէ, որ Հայաստանում վերացվեց Դաշնակցությունը: Այդպես անկարելի էր: ՀՅԴ-ը գաղափար է, որ տիրում էր շատ մարդկանց, հատկապես մտավորականությանը, գյուղական բնակչությանը, արևմտահայ գաղթականությանը և որի (գաղափարի) դեմ հարկ կլիներ տևական պայքար մղել: Դաշնակցությունը միաժամանակ ընդհատակյա կազմակերպությունների լայն ցանց էր, որը նախ պետք էր բացահայտել, ապա միջոցառումների դիմել՝ կազմաքրելու կամ վերակազմացրելու համար: Ուստի պահանջվեց երկարատև պայքար և՛ գաղափարական, և՛ քաղաքական-վարչական-կազմակերպական առումներով:

Ի վերջո հաջողվեց Հայաստանում կազմակերպորեն վերացնել Դաշնակցությունը: Ընդ որում Կոմկուսի գործելաձևերի մեջ կարևոր դեր էր հատկացվում նաև Դաշնակցությունը ներսից քայքայելու միջոցին: Ինչ վերաբերում է գաղափարախոսությանը, ապա այն պահպանվեց հայության մեջ որպես համոզմունք և վերակենդանացավ մեր օրերում, հենց որ ստեղծվեցին նպաստավոր քաղաքական պայմաններ, երբ 1991թ. Հայաստանը դարձավ անկախ, ինքնուրույն պետություն, հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Գրքի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են հիմնականում 1920-1930-ական թվականները, երբ գոյատևող Դաշնակցությունը Հայաստանում ապրեց իր պատմության ծանրագույն ժամանակաշրջանը: 1930-ական թվականների երկրորդ կեսի, երբ բռնությունների ստալինյան մեքենան գործում էր ամբողջ թափով և հետագա շրջանի, փաստաթղթերը բերված են հավելվածում, որը կարելի է բացատրել այսպես. նախ, այդ շրջանում Դաշնակցությունը, որպես կուսակցություն, Հայաստանում գոյություն չի ունեցել: 1933թ. բարձրագույն որոշումով Հայաստանում կուսակցական կազմակերպությունները հայտարարվել են ցրված՝ խուսափելու համար բացահայտվելուց և քաղաքական ու վարչական հետապնդումներից: Երկրորդը, տվյալ ժամանակաշրջանում դաշնակցականի պիտակ էին կպցնում յուրաքանչյուրին, և դժվար էր, եթե չասենք անհնար, իսկական դաշնակցականին ջոկել ոչ դաշնակցականից:

Ժողովածուի փաստաթղթերը մեզ մոտ հավաքվել են տարիների ընթացքում մեր ընթացիկ գիտական պրպտումների և արխիվներում աշխատելու բերումով: Միայն վերջին տարիներին հատուկ նվիրվեցինք ժողովածուն ամբողջացնելու ծրագրի իրականացմանը, երբ Հայաստանի Հանրապետությունում բազմակուսակցական կյանքի հաստատումով ՀՅԴ-ը դարձավ նրա կարևոր տարրերից մեկը:

Ձեռնարկելով ներկա գրքի հրատարակության պատրաստումը, խնդիր ենք ունեցել մի կողմից լրացնել ՀՅԴ պատմության, կարելի է ասել, անհայտ էջը: Մյուսը՝ անցյալում անձամբ առավելապես զբաղվել ենք Խորհրդային Հայաստանի պատմության հիմնախնդիրների հետազոտությամբ, ինչպես դա կարելի էր անել իր ժամանակի պայմաններում: Ներկա աշխատասիրությամբ մենք գալիս ենք լրացնելու անցյալի պատմության ու պատմագրության «սպիտակ էջը»:

Ժողովածուի փաստաթղթերի ճնշող մասը քաղված է արխիվներից և անտիպ է: Դրանք ծագում են հիմնականում Կոմունիստական կուսակցության ոչ ղեկավար ու ղեկավար մարմիններից՝ ստորիններից մինչև համամիութենականը: Մամուլից և գրականությունից ընտրված է գրքի փաստաթղթերի ու նյութերի փոքր մասը:

Կոմունիստական կուսակցությունը, նրա ղեկավարությունը մշակել էր ՀՅԴ-ի համար ճակատագրական նշանակություն ունեցող ռազմավարությունը, իսկ կյանքում նրա իրագործողները հանդիսացել են ինչպես կուսակցական կազմակերպությունները, այնպես էլ և հատկապես պատժիչ-իրավապահ մարմինները՝ առաջին հերթին պետական անվտանգության հիմնարկությունները (Արտակարգ հանձնաժողով՝ Չեկա, Պետական քաղաքական վարչություն՝ ՊՔՎ) և Դատախազությունը: Ուստի Ժողովածուի մեջ կարևոր տեղ են գրավում նրանցից բխող փաստաթղթերը: Նշենք, որ պետական անվտանգության մարմիններից ծագող փաստաթղթերը, որ իր ժամանակին ուղարկվել կամ ներկայացվել են հանրապե-

տության ղեկավար մարմիններին, մեզ հասել են Հայաստանի համապատասխան պետական ու կուսակցական արխիվների միջոցով: Ինչ վերաբերում է դատարաններին, ապա դրանք բացակայում են, որովհետև չեն գործել: Մարդկային ճակատագրերը որոշվել են առանց դատի ու դատարանների, անօրեն:

Ժողովածուն ըստ կառուցվածքի բաժանված է գլուխների ու ենթագլուխների: Բաժանման հիմքում դրված են ժամանակագրական ու հիմնախնդրային (պրոբլեմային) սկզբունքները: Դա արված է հեշտացնելու, դյուրին դարձնելու համար գրքից օգտվելը, այն ուսումնասիրելը:

Փաստաթղթերի մշակումը կատարված է ժողովածուների հրատարակության համար ավանդաբար ընդունված սկզբունքներով: Գերադասել ենք պահպանել փաստաթղթի բնագրի վերնագիրը: Հակառակ պարագայում՝ մեր կողմից վերնագիր դնելու դեպքում, չէինք կարող խուսափել միօրինակ ու խիստ միանման ձևակերպումներից: Փաստաթղթում, ըստ անհրաժեշտության, մեր խոսքը, արտահայտությունը դնելու կամ ժամանակը որոշելու դեպքում օգտագործել ենք սուրանկյուն փակագծեր: Ուղղանկյուն փակագծերը նշանակում են, որ բառի կամ կիսատ բառերի լրացումը հասկանալի է, որ հենց այդպես է լինելու: Չակերտներին դիմել ենք, երբ վերնագրերում բերվել է մեր արտահայտությունը, ձևակերպումը:

Փաստաթղթերի ու նյութերի ճնշող մասի բնագրերը ռուսերեն են, որոնք բոլորը տպագրվում են թարգմանաբար: Թարգմանության մասին նշվում է լեգենդայում: Ցույց է տրված բոլոր փաստաթղթերի ու նյութերի պահպանման տեղը՝ արխիվը, մամուլը, գիրքը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների, ուսանողության, գիտական աշխատողների, դասախոսների, Հայաստանի քաղաքական պատմությամբ հետաքրքրվողների համար:

Հեղինակը սիրով կընդունի յուրաքանչյուր դիտողություն ու առաջարկություն՝ հետագա աշխատանքում դրանք հաշվի առնելու համար:

Վլադիմիր Ղազախեցյան
Պրոֆեսոր

23 հուլիսի 1998թ.

Գլ. I

Դաշնակցության կազմալուծման խորհրդային իշխանության (Կոմունիստական կուսակցության) ռազմավարությունը

1. <Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագրից>

2 դեկտեմբերի 1920թ.

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը որևէ պատասխանատվություն չի կրում նախախորհրդային Հայաստանի բանակի շարքերում կատարած գործողությունների համար:

5. Դաշնակցությունն կուսակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները չեն ենթարկվելու որևէ բռնության կուսակցական պատկանելության համար:

6. Ռազմահեղափոխական կոմիտեի կազմում մտնում են՝ 5 անդամ Կոմունիստական կուսակցության նշանակումով և 2 անդամ ձախ դաշնակների խմբից, Կոմունիստական կուսակցության հետ համաձայնեցնելով:

ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ՝ **Լեգրան**

Հայաստանի Հանրապետության կառավարության
լիազորությամբ՝ **Դրո, Տերտերյան**

Արտասահմանյան պետությունների հետ ՌԽՖՍՀ-ի ստորագրած գործող պայմանագրերի, համաձայնագրերի ու կոնվենցիաների ժողովածու: Պրակ 3, Մոսկվա, 1922, թիվ 79, էջ 14-15 (ռուսերեն): Թարգմանություն ռուսերենից:

2. <Կարո Սասունու «Փետրվարյան ապստամբությունը» հոդվածից՝ ՀՅԴ բյուրոյի որոշումը Հայաստանից հեռանալու և իր ներկայացուցչին այնտեղ թողնելու մասին>

Դեկտեմբերի սկիզբ 1920թ.

1920թ. դեկտեմբերի 1-ին պառլամենտի դաշնակցական ֆրակցիայի նիստը որոշեց պաշտպանել կառավարության տեսակետը՝ իշխանությունը գիջել բոլշևիկներին:

ՀՅԴ բյուրոն նույնպես հանգած էր նույն եզրակացության, տալով հետևյալ որոշումը.

«Հարկադրված երկու հակառակորդ կողմերի ճնշումից՝ բյուրոն հեռանում է Հայաստանից, թողնելով իր ներկայացուցիչը և հրահանգում է ընկերներին իրենց տեղական պայմանների համաձայն գործել և գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը, իսկ ընկերներին չի արգելում մտնել նոր իշխանության մեջ և աշխատել երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար»:

Հայրենիք, 1925, թիվ 12, էջ 92:

3.Երևան, Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմին Պատճենը՝ Հայաստանի Հեղկոմին*

21 դեկտեմբերի 1920թ.

Ալեքպոլի կոմկուսակցության քաղկոմը տեղեկանալով այն տակտիկայի մասին, որն ունի Հայաստանի Հեղկոմը ներքին կյանքում, ընդհանրապես, և հանդեպ ոճրագործ դաշնակները, մասնավորապես. որոնց վերաբերմամբ գործադրվում է հեղափոխական ոգուն և գործելակերպին անթույլատրելի փափկություն, որպիսի հանգամանքը շատ թանկ կարող է նստել Կարմիր Հայաստանի առանց այն էլ հյուծված ընչազուրկների վրա և աննպաստ ընթացք ունենալ հեղափոխության համար, բողոքում է դրա դեմ և պահանջում է խիստ միջոցներ ձեռք առնել հակահեղափոխության դեմ:

Խմբապետների տեղը ոչ թե Կարմիր Բանակի հրամանատարության կազմի մեջ է, այլ Արտակարգ հանձնաժողովի** նկուղը:

Կորչե՛ն վերջնականապես մաուզերիզմի առաքյալները կարմիր իրականությունից:

Քաղկոմի անդամներ՝***

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.114, g.2, գ.19, թ.4:

** Հայաստանի Հեղկոմ (Ռազմհեղկոմ)՝ 1920-1921թթ. Խորհրդային Հայաստանի իշխանության բարձրագույն մարմին, օրենսդիր ու գործադիր գործառույթներով:*

*** Պետական անվտանգության մարմին, լրիվ անվանումն է՝ հակահեղափոխության, գեղծումների և չարաշահության դեմ պայքարող Արտակարգ հանձնաժողով, ռուսերեն՝ Չրեզվիչայնայա կոմիսիա (Չեկա):*

**** Հետևում են քաղկոմի 3 անդամների և անդամ-քարտուղար Գողթունու ստորագրությունները:*

4. Ալեքսանդրապոլի գավառի պատասխանատու աշխատողների բանաձևը

23 դեկտեմբերի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Լսելով ընկ. Գայանեի զեկուցումը Հայհեղկոմի քաղաքական վարքագծի մասին՝ ընդհանրապես ներքին քաղաքականության և հատկապես դաշնակների նկատմամբ, պատասխանատու ընկերների ընդհանուր ժողովը Հեղկոմի, տեղական և գավառային կոմիտեների հետ համատեղ, ընդունեց հետևյալ բանաձևը.

Նկատի ունենալով, որ Դաշնակցությունը կուսակցությունը, ի դեմս իր ընդհատակյա կազմակերպությունների, որոնք, ըստ մեր տեղեկությունների խիտ ցանցով փռված են ամբողջ Հայաստանում, և որոնք այժմ խորհրդային իշխանության դեմ մղում են դավադրական հակահեղափոխական աշխատանք, և նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլի դաշնակների հակահեղափոխությունը, որն այնքան է ուժեղացել ու ամրապնդվել, որ ակտիվ ելույթներ է կազմակերպում Ալեքպոլի Հեղկոմի դեմ, որի հետևանքով գնդակահարվել են Հեղկոմի անդամների դեմ տեռոր կազմակերպած երկու դաշնակ ահաբեկիչներ, համոզված լինելով, որ Երևանի դաշնակցական հակահեղափոխությունը սնում է Ալեքպոլի հակահեղափոխությանը, մենք գտնում ենք անհրաժեշտ նշել Հայհեղկոմին, որ անմիջապես, առանց հապաղելու խստագույն միջոցներով ճնշի մեր դիկտատուրայի դեմ նախապատրաստվող ելույթը Երևանի կենտրոնում և օգնի մեզ դժվարին գործում՝ հաստատելու և ամրապնդելու բանվորագյուղացիական իշխանությունը և կանխելու հակահեղափոխությունը:

Ժողովը անհրաժեշտ է համարում նշել այն հանգամանքի մասին, որ մեր իշխանությունը մասամբ հենվում է Դրոյի և մյուս խմբապետների վրա, և որը վարկաբեկում է ինչպես մեր կուսակցությանը, այնպես էլ բանվորագյուղացիական իշխանությանը և կասկածի վերաբերմունք է ծնում մեր իշխանության նկատմամբ ինչպես բանվորագյուղացիական զանգվածների, այնպես էլ թուրքական ասկյարների կողմից, որոնց համակրանքը մեր իշխանության նկատմամբ աճում է օրեցօր:

Նախագահ

Քարտուղար՝ Ն. Ստեփանյան

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.114, g.2, գ. 19, թ. 3: Բնագիր: Տպագիր:

5.<Ռուսաստանում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի նամակը ՀԿԿ Կենտկոմին՝ դաշնակցականներին իշխանությունից հեռացնելու անհրաժեշտության մասին>

15 հունվարի 1921թ.

Մոսկվա

Քանի դեռ կոնֆերանսը* չի սկսվել, Ձեզ անհրաժեշտ է մաքրվել դաշնակցական աղտեղությունից, Դրոյից և մյուսներից: Բանը այն է, որ Ռուսաստանին ուղղված դիմումներում թուրքերը անվստահություն են հայտնում դեպի հայ կոմունիստները ընդհանրապես, մասնավորապես մատնացույց են անում Դրոյի և մյուսների լինելը կառավարության կազմում: Որպեսզի մենք կարողանանք նույն ձևով հարվածել թուրքերին, ինչպես, օրինակ, թուրքական կառավարության մեջ Նուրի Փաշայի, գնդապետ Ջեյնալովի և մյուս ակնհայտ հակահեղափոխական տարրերի առկայությունը, որոնք արդեն բախվել են Ադրբեջանում կարմիր զորքերի հետ, անհրաժեշտ է հրաժարվել Դրոյի և մյուսների ծառայությունից, եթե նույնիսկ նրանք ամբողջ անկեղծությամբ աշխատում են մեզ հետ:

Բերվում է ըստ՝ Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում:

Երևան, 1966, էջ 297-298:

(Տե՛ս նաև՝ ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.114, գ.16, թ.69):

*Խոսքը Թուրքիայի հետ սպասվող կոնֆերանսի մասին է, որը կայացավ 1921թ. փետրվարմարտին Մոսկվայում: Նախապես ենթադրվում էր, որ կոնֆերանսին պետք է մասնակցի նաև Հայաստանը, բայց հույսերը չիրականացան:

6. Ադրբեջանում ՀԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ Մարգսի և Հայաստանի Հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանի միջև կայացած հեռախոսազրույցից

24 հունվարի 1921թ.

Մարգիս. ... Թիֆլիսի և Բաքվի ընկերները որոշակի դժգոհ են դաշնակների նկատմամբ Ձեր վերաբերմունքից ընդհանրապես: Եթե ցանկանում եք, որ Բաքվի բանվորների ու Թիֆլիսում կուսակցական ընկերների հսկայական համակրանքը չփոխվի Խորհրդային Հայաստանի նկատմամբ, և որպեսզի մենք այստեղ, մասնավորապես ես, կարողանանք աշխատել հաջողությամբ հօգուտ Խորհրդային Հայաստանի, անհրաժեշտ է ուղղել քաղաքականության գիծը, և ուղղվեք ինքներդ: Այսօր Թիֆլիսից թիֆլիսեցի ընկերների դիմումով ինձ մոտ եկավ Սուրեն Երզնկյանը, նշելով, որ այնտեղ, Թիֆլիսում Վրաստանի Կոմկուսի Չեկան և Թիֆլիսի ընկերները սարսափելի դժգոհ են...

Ավիս, Դովլաթով. Շատ բան, ինչ հաղորդվում է եկող ընկերների կողմից, չափազանցված է: Երկրի ներսում խորհրդային իշխանության դրությունը ամուր է...

Ոչ կոմունիստական կուսակցությունների նկատմամբ վերաբերմունքը այսպիսին է. Դաշնակների կուսակցությունը բոլորովին սնանկացել է: Առանձին մտավորականների և այդ կուսակցության վերնախավի մանկլավիկների դեմ մենք անխնա պայքար ենք մղում, մեկուսացնելով նրանց արտաքսումով և ձերբակալելով բանտերում: Մաուզերիստների այն զանգվածի դեմ, որոնց վրա հենվում էր կուսակցությունը և դաշնակցական կառավարությունը, ընդհանրապես, մղում ենք խստագույն պայքար: Մենք արդեն զինաթափել և տրիբունալի դատի ենք տվել այդ տարրերից շատերին: Հենց վերջերս հետ ենք կանչել արևմտահայերի մի հեծյալ զորաջոկատ, որը, չենթարկվելով մեզ, թշնամական վերաբերմունք ուներ խորհրդային իշխանության նկատմամբ:

Մենք ձեռնարկում ենք ամենաեռանդուն միջոցներ նաև այլ կուսակցությունների նկատմամբ, ինչպես մենշևիկները և էսեռներն են: Մեզ մոտ, ինչպես և ձեզ մոտ, այլ վերաբերմունք լինել չի կարող, քան պայքարը նրանց դեմ: Ռուսաստանից ժամանող շատ ընկերներ զարմանում են այն եռուն աշխատանքից, որ նկատվում է մեզ մոտ: Հայաստանից դուրս կանգնած ընկերներին զարմացնում է մեր բանակում Դրոյի ներկայության փաստը: Ես պետք է ասեմ, որ նա շատ դժբախտ մարդ է և օրերս մեկնում է Բաքու: Բանակը և աշխատանքը այստեղ ընթանում են մեծ հաջողությամբ: Կարելի է վստահությամբ ասել, որ մեկ ամսվա ընթացքում մեր բանակը կուղղվի որպես խորհրդային բանակ: Ռուսաստանից ժամանող այդ գործին տեղյակ լավագույն ընկերների կարծիքը ամենագովասանականն է: Ես չգիտեմ, թե ինչից է բխում մեր ընկերների այդ անբավականությունը: Երեկ կայացավ վիթխարի միտինգ, որին հաջորդեց առաջին վիթխարի շաբաթօրյակը, շուրջ հինգ հազար մարդու մասնակցությամբ: Ամբողջ Հայաստանում կատարվում են մաուզերիստների ուժեղ ձերբակալություններ: Կառավարության հին անդամներին մենք ձերբակալել ենք Երևան ժամանելու առաջին իսկ օրերին...

Ընդհանրապես ասած, Հայաստանում խորհրդային իշխանության դրությունը կայուն է: Վստահ եղեք, որ այլ քաղաքականություն, բացի

նրանից, որ կցանկանար Բաքվի պրոլետարիատը, այստեղ չկա և չի լինի:

Այլ հարցեր ես չունեմ...

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.114, ց.2, գ.35, թ.13 և հակ.-14: Թարգմանություն ռուսերենից:

7.<ՀԿԿ Կենտկոմի նամակը ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին Դաշնակցության նկատմամբ Հայաստանի Կոմկուսի վերաբերմունքի մասին>

27 հունվարի 1921թ.

1. Անողոք պայքար մաուզերիստների դեմ:

2. Անողոք պայքար դաշնակցական կառավարության ակնհայտ գործակալների դեմ:

3. Անողոք պայքար Դաշնակցության դեմ որպես կուսակցության: Վերացնել կազմակերպման բոլոր հնարավորությունները:

Այդ նպատակով բանտարկել և մեկուսացնել բոլոր դաշնակցականներին և կենտրոնական և գավառային դաշնակցական կազմակերպությունների բոլոր ղեկավարներին, լիդերներին, նախկին կառավարությունների բոլոր անդամներին, դատախազության աշխատողներին և պահեստի միլիցիայի անդամներին՝ «դաշնակցական օխրանկան» (պահնորդական բաժին):

Բանտարկել «ժողովրդական ազատություն» կուսակցության աչքի ընկնող բոլոր անդամներին: Այդ ամբողջ կամպանիան հանձնարարել անցկացնելու ՌՍՖԽՀ Չեկայի լիազոր ընկ. Աթարբեկյանին՝ անձնական ղեկավարությամբ և պատասխանատվությամբ:

Ընկ. ընկ. Կասյանը և Մռավյանը կտրականապես հրաժարվեցին Հեղկոմի նախագահությունում անցկացնել այդ բանաձևը, հայտարարելով, որ իրենք հեռանում են Հեղկոմից և զբաղեցրած պաշտոններից: Կենտկոմը հրաժարականը չէր կարող ընդունել և որոշեց հարցը փոխադրել Ռ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրո, հնարավոր չհամարելով հրաժարվել որևէ կետից*:

Անհրաժեշտ ենք համարում հայտնել, որ Երևանի կոնֆերանսը և կոմիտեն ընդունել են բանաձև Կենտկոմի պլենումի որոշման ոգով:

* *Հ(բ)Կ Կենտկոմի և ՀԽՍՀ Ռազմհեղկոմի անդամներ Ս. Կասյանը և Ա. Մռավյանը տվյալ և այլ հարցերում կողմակից են եղել մեղմ քաղաքականություն վարելուն:*

Անհրաժեշտ է ամենահրատապ կարգով հայտնել Ձեր վերաբերմունքը այդ բոլորի մասին: Ոչ մի որոպե ուշացնել չի կարելի:

Կենտկոմ՝ Ալիխանյան, Ավիս, Դովլաթյան:

Բերվում է ըստ՝ Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, էջ 299-300:

8. Զրույց Զինվորական գործերի ժողկոմ ընկ. Ավիսի հետ

29 հունվարի 1921թ.

Մեր թղթակիցը հետևյալ զրույցն է ունեցել ընկ. Ավիսի հետ Կարմիր բանակի և սպաների վերջին ճանապարհման առիթով: Այդ կապակցությամբ ընկ. Ավիսը հայտարարեց հետևյալը.

Մենք դաշնակների կառավարությունից ժառանգություն ենք ստացել, բացի քայքայված երկրից նաև քայքայված բանակ, որի գլուխ մինչև վերջին օրերը կանգնած էր հին սպայությունը: Նրա ներկայությունը բանակում կարող էր անուղղելի վնաս բերել գերազանցապես բանվորներից ու գյուղացիներից կազմված երիտասարդ Կարմիր բանակին: Հայաստանի կարգերի փոխվելը նա պետք է որ տեսներ ու զգար: Կարմիրբանակայինները հաճույքով հրացանի փողը կշրջեին երեկվա իրենց պետերի դեմ, եթե Հայաստանում խորհրդային հեղաշրջումը չկատարվեր ավելի անհիվանդագին ու խաղաղ իրադրության մեջ: Հանուն մեր բանակի շահերի հարկավոր էր արմատապես ջարդել հին վարչակազմը և սպայությունից բեռնաթափել Խորհրդային Հայաստանը: Մեր արժանահավատ տվյալներով կարմիրբանակային զորամասերը ուրախությամբ են ընդունել հեղափոխական կառավարության գործողությունը: Զորամասերի կացությունը բավական բարելավվել է: Կարմիրբանակայինները անմիջապես ուղղվեցին, իրենց զգալով որպես Հայաստանի խորհրդային իշխանության արժանավոր քաղաքացիներ ու պաշտպաններ: Շարքային կարմիրբանակայիններից մենք կպատրաստենք նոր հրամանատարական կազմ, Խորհրդային Ռուսաստանի օրինակով դաշնակցական կառավարության երեկվա ստրուկ զինվորին կներգրավենք իսկական դասակարգային բանվորագյուղացիական շինարարության մեջ: Մեր կողմից առաջին քայլն արդեն արված է. բանակը մնաց ամբողջական, անմիջապես ոգեշնչվեց հեղափոխությամբ, գիտակցելով, որ պաշտպանն է խորհրդային իշխանության: Ուղարկված սպաների մեջ անպայման կան շատ մասնագետներ ու ազնիվ աշ-

խատողներ, որոնք ոչ թե վախից, այլ խղճով կծառայեին Խորհրդային Հայաստանում: Ինչևէ, 3-րդ ինտերնացիոնալի բանակը ընդհանուր է. եթե նրանք (սպաները) օգուտ են բերում Ռուսաստանի որևէ վայրում կամ Ադրբեջանում, դրանով իսկ օգտակար են դառնում նաև Հայաստանի բանվորների ու գյուղացիների և նրա երիտասարդ Կարմիր բանակի համար: Այդ սպաները անպայման կօգտագործվեն Խորհրդային Ռուսաստանի կողմից: Հնարավոր է, որ այժմ նրանք դժգոհ են: Բայց երբ կընտելանան նոր իրադրությանը, շնորհակալություն կհայտնեն Հայաստանի խորհրդային իշխանությանը այդ «խիստ» գործողության համար: Թող նրանք անցնեն պրոլետարական կարգապահության հնոցով, թող իրենց հետևից պայթեցնեն բոլոր կամուրջները, այրեն բոլոր նավերը, և դրանից հետո նրանցից յուրաքանչյուրը ուզած պահին կարող է վերադառնալ Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի շարքերը: Աշխատավոր հայ ժողովրդի շահերն իրամայաբար պահանջում էին անշեղորեն անցկացնել այդ գործողությունը ոչ միայն նրա համար, որ հունի մեջ դրվի երիտասարդ Կարմիր բանակի հեղափոխությունը, այլև նրա համար, որ կանխավ զսպվեն մեր թշնամիների ախորժակները, որոնք այժմ գործում են Հայաստանում, ինչպես է Զանգեզուրը, և Հայաստանից դուրս: Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ մենք կտրել ենք արկածախնդիր Նժդեհի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների դահիճ Ռուբեն փաշայի գլուխները: Ռուսաստանի հեղափոխության փորձը այնքան ցայտուն է, որ մենք կարողանում ենք զգալ չեզոք, քաղաքականությունից դուրս կանգնած, երբեմն նաև հակահեղափոխական բազմաշատ սպայության կուտակման վտանգը մի երկրում, որտեղ դեռևս չի եղել հեղափոխական պայքար, որտեղ խորհրդային իշխանությունը հայ ժողովրդի շատ շերտերի, այդ թվում սպայության կողմից ընդունվել է որպես պայքարի միջոց ընդդեմ երեկվա իր հաղթողների: Զանգեզուրը և Փարիզի նրա դիվանագետները անպայման հույս էին դնում այդ իրական ուժերի վրա, որպեսզի հարմար պահին դանակը խրեն խորհրդային իշխանության թիկունքին:

Այդ գործողությամբ մենք փրկեցինք ոչ միայն Հայաստանի բանվորների և գյուղացիների, այլև այն սպաների կյանքը, ովքեր այժմ կարող են պիտանի լինել Խորհրդային Ռուսաստանի համար, այլապես կդառնային հակահեղափոխության զոհ: Հեղափոխության օրենքներն անողոք են, նրա բարերար արդյունքները երևան կգան հետագայում:

Այդ գործողության համար ուրախ են Հայաստանի աշխատավոր զանգվածները, և նրանք, ովքեր զրկանքներ ու փորձություններ են կրում, ուրախ են և տուժողների ընտանիքները:

Կոմունիստ (Երևան, ռուսերեն), 29 հունվարի 1921թ. Թարգմ.ռուս

9.Հեռագիր ընկ. Կասյանին

1 փետրվարի 1921թ.

Բաքու

Թիվ 1083

Կարծում ենք, որ քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է պայքարել դաշնակների կուսակցությունը ուղղակի վերացնելու, նրանց կազմակերպությունների պատասխանատու ղեկավարներին, ինչպես նաև Արտակարգ դատարանի և այլ հակաժողովրդական հիմնարկությունների վարկաբեկված անդամներին մեկուսացնելու համար: Դաշնակների դեմ մղվող պայքարում հարկավոր է չմոռանալ խորհրդային իշխանությանը համակրող կամ ակտիվորեն օժանդակող ներքին խմբավորմանը, օրինակ Դրոյի, Վրացյանի խումբը: Հակաժողովրդական կուսակցության վերացման համար պայքարը չպետք է դառնա մտավորականության դեմ, թեկուզ անցյալում դաշնակցական, պայքար: Չի կարող խոսք լինել այս կամ այն ընկերոջ հեռանալու մասին կուսակցական և պետական պատասխանատու պոստերից:

Օրջոնիկիձե, Օրախելաշվիլի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու թիվ 2, գ.43: (Նախկին ԽՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ԿԿԱ, Ֆ.85, ց.14, գ.118, թ.1): Թարգմ. ռուսերենից:

10. <ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումից Դաշնակցության, որպես կուսակցության, վերացման անհրաժեշտության մասին>

<Մինչև 7 փետրվարի 1921թ.*>

Գտնում ենք, որ քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է անողոք պայքար մղել Դաշնակցություն կուսակցության լիակատար վերացման համար, մեկուսացնել կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև արտակարգ դատարանների և հակաժողովրդական մյուս հիմնարկների անվանարկված անդամներին: Դաշնակցականների դեմ պայքարում չպետք է մոռանալ այն ներքին խմորումները, որոնց մասնակիցները ակտիվորեն պաշտպանում են խորհրդային իշխանությանը, օրինակ, Դրո-Վրացյանի խումբը: Հակաժողովրդական կուսակցության վերացման համար մղվող պայքարը ոչ մի դեպ-

Ժամանակը որոշվում է ըստ այն օրվա, երբ Ա. Մռավյանը և Ս. Կասյանը հեռանում են ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմից:

քում չպետք է վերածվի մտավորականության դեմ հախուռն պայքարի, թեկուզև դաշնակցական անցյալով:

Ոչ մի խոսք չի կարող լինել կուսակցական և պետական պատասխանատու պոստից այս կամ այն ընկերոջ հրաժարվելու մասին**:

Բերվում է ըստ՝ Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, էջ 302:

** *Խոսքը ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամներ Ա. Մռավյանի և Ս. Կասյանի մասին է:*

11.<Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի և Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ Ասքանազ Մռավյանի նամակից>[1]

9 մարտի <1921թ.>՝

Թանկագին ընկերներ.

Ձեզ մոտավորապես պետք է հայտնի լինի այն իրադրությունը, որի պայմաններում տեղի ունեցավ դաշնակցականների արկածախնդրությունը**: Մեր իշխանության մեջ վերջին օրերը նշանավորվեցին դաշնակների զանգվածային բանտարկություններով: Երևանում նրանցից ձերբակալվեց ավելի քան 200 մարդ: Հայաստանի մյուս բնակավայրերում նույնն էր՝ բանտարկում էին տասնյակներով, հարյուրներով, հաճախ անմեղներին, անվնաս մարդկանց: Երևանում կտրիճները հրապուրվել և ձերբակալել են նաև էսեռներին (Տեր-Ներսեսով), մենշևիկներին (Անանուն) և ուրիշ քաղաքացիների: Մեր թերթը աղմկալի տոնով, ճղճղան կոչ էր անում քաղաքացիական պատերազմի: Մթնոլորտը շիկանում էր ժամեժամ: Դաշնակները, որոնք գաղտնի մղում էին աշխույժ աշխատանք և հիանալի էին կազմակերպել իրենց ելույթը, այդ օրերին արտաքնապես իրենց հանգիստ էին պահում: Վրացյանը եղավ ինձ մոտ և զգուշորեն նախազգուշացրեց բռնությունների քաղաքականությունից, պատճառաբանելով, որ այդ քաղաքականությունը միայն ուժեղացնում է մեր այն հակառակորդներին՝ դաշնակներին, որոնք բուն են դրել Կոտայքի շրջանում: Դա փետրվարի 10-11-ին էր:

Ես և Սերգեյը*** եղել ենք միայն այդ աշխատանքի վկաները: Գործողությունը ղեկավարել է Գևորգը**** , դրա համար ունենալով Կենտկոմի լիազորությունը, առանց Հեղկոմի թույլտվության: Բաքվից Սերգոն***** մեզ բոլորիս նույնազգուշացնում էր մտավորականության դեմ պայքարից:

Նա մեզ խորհուրդ էր տալիս ձեռք չտալ Դրո-Վրացյան խմբին...******

Մի խոսքով, մենք բացարձակապես պատրաստ չէինք դաշնակների դեմ բացահայտ, սուր, կատաղի պայքարի համար և, իմ խոր համոզմամբ, վերջին ամսում Կենտկոմի քաղաքականությունը՝ դաժան ձևով սպանների աքսորը, բռնագրավումները, ուժից վեր սայլապարիակը, թուրքերի նկատմամբ վերաբերմունքի անորոշությունը, մեր անկարողությունը՝ բնակչությանը տալու թեկուզ ինչ-որ բան, - այս ամենը բնակչության մեջ առաջացրեց շատ նկատելի հոգեբանական ռեակցիա մեր դեմ...

Ահա ամբողջը:

Ողջույն բոլոր ընկերներին:

Ասքանազ

<Հ.Գ.> Հաջողացրեք ընկ. Լենինից նամակ Կենտկոմի կամ Հեղկոմի անունով մեր ներքին քաղաքականության մասին: «Պրավդա Գրուզիի» թերթում կարդացի «Ուղիղ հեռախոսագրույցը ընկ. Լենինի և ընկ. Օրախելաշվիլու******* միջև»: Լենինը խորհուրդ է տալիս ամենաչափավոր քաղաքականությունը վարել մանր բուրժուազիայի և այլ կուսակցությունների՝ սոցիալ-ֆեդերալիստների, ձախ մենշևիկների և նույնիսկ ժորդանիայի ******** հոսանքի նկատմամբ: Այդ խոսակցությունը կացնի հարվածի նման իջել է մեր քյալլագյոզների********* գլխին:

Տեղեկացրեք կոնֆերանսի********** աշխատանքների ընթացքի և հեռանկարների մասին: Թուրքերը գալի՞ս են արդյոք որոշ զիջումների:

Ասքանազ

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.114, ց.2, գ.79, թ.1 և հակ.-6 և հակ.: Ինքնագիր:

Թարգմ. ռուս.:

* *Տարեթիվը որոշվում է ըստ նամակի բովանդակության:*

** *Նկատի ունի 1921թ. Փետրվարյան ապստամբությունը:*

*** *Սարգիս Կասյան՝ Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ:*

**** *Գևորգ Աթարբեկյան՝ Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) լիազոր, Հայաստանի հյուսիսային շրջանների Ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ:*

***** *Սերգո (Գրիգորի) Օրջոնիկիձե՝ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար:*

****** *Այստեղ և նամակի մյուս բաց թողնված մասերում խոսվում է ներքին քաղաքականության հարցերի շուրջը ՀԿԿ Կենտկոմի և Ռազմհեղկոմի անդամների միջև մղված պայքարի և տարաձայնությունների մասին:*

******* *Մամիա Օրախելաշվիլի՝ Վրաստանի Հեղկոմի նախագահ, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի անդամ:*

******** *Նոյ Ժորդանիա՝ վրացական մենշևիկների առաջնորդ:*

********* *Խոսքը ՀԿԿ Կենտկոմի և Ռազմհեղկոմի այն անդամների մասին է, որոնք աչքի էին ընկնում կոշտ, բռնության քաղաքականությամբ:*

********** *Նկատի ունի 1921թ. փետրվար-մարտին կայացած Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը (բանակցությունները):*

12. <Ասքանազ Մռավյանի զեկուցումից ՀԽՍՀ Ռազմահեղկոմի, ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Դիլիջանի գավառեղկոմի ու գավկոմի և պատասխանատու աշխատողների համատեղ նիստում>

<Մարտ 1921թ.>

... Հակահեղափոխության դեմ հարկավոր է պայքարել մեթոդաբար և, ընդ որում, միայն դաշնակների դեմ, բացառությամբ Դրոյի և Վրացյանի խմբի, քանի որ մոտավորապես այդպիսին են Կովկասյան բյուրոյի ցուցումները:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.1, գ.41, թ.7 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

.13. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահության որոշումը

16 հունիսի 1921թ.

Լսեցին. Դաշնակցությունից հեռացածների կոմիտեի դիմումը իրենց Կոմունիստական կուսակցության մեջ ընդունելու մասին:

Որոշեցին. Քանի որ հարցը վերաբերում է Վրաստանի Կոմկուսի գործունեության շրջանին, առաջարկել դիմել ՎԿԿ Կենտկոմ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4033, ց.2, գ.1187, թ.8: Թարգմանություն ռուսերենից:

14. ՀԿԿ Կենտկոմի որոշումը

26 սեպտեմբերի 1921թ.

Լսեցին. Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) զեկուցումը:

Որոշեցին. Առաջարկել Արտակարգ հանձնաժողովին ուժեղացնել դաշնակցական ընդհատակյա կազմակերպությունների նկատմամբ իր հսկողությունը: Ձգտել բացահայտել դաշնակցական որևէ գործ՝ դիմելու համար հասարակական կարծիքին դաշնակների դեմ բռնաճնշման դեպքում: Մեկուսացնել դեռևս դաշնակցական կազմակերպությունների հետ կապերը չխզած բոլոր աչքի ընկնող և ակտիվ դաշնակներին, նրանց ուղարկելով Հայաստանից դուրս, ընդ որում միանգամայն զգույշ

և տակտով, դրան չտալով զանգվածային բնույթ: Արտասահմանում գտնվող պատասխանատու դաշնակներին ոչ մի ձևով թույլ չտալ Հայաստան:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.1, գ.39, թ.35: Թարգմ. ռուս.:

15. ՀԿԿ Կենտկոմի որոշումը

26 սեպտեմբերի 1921թ.

Լսեցին. Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ամիրխանյանի զեկուցումը Թիֆլիսի դաշնակների գործունեության մասին:

Որոշեցին. 1. Հանձնարարել Արտակարգ հանձնաժողովի նախագահին Թիֆլիսի դաշնակների գլխավորներին վերցնել պատանդ:

2. Խնդրել Վրաստանի Կոմկուսի Կենտկոմին ՎրՉեկայի միջոցով ուժեղացնել գործակալների աշխատանքը Վրաստանում:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.1, գ.39, թ.39: Թարգմ. ռուսերենից:

16. ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության որոշումը

22 նոյեմբերի <1921թ.>*.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցության նկատմամբ հրապարակային դատ կազմակերպելու մասին:

Որոշեցին. Առաջարկել նոյեմբերյան հեղափոխության տոնակատարության գծով կենտրոնական հանձնաժողովին այդ դատը կազմակերպել որքան կարելի է բովանդակալից:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.1, գ.43, թ.21 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

** Տարեթիվը դրվում է ըստ փաստաթղթի բովանդակության և արխիվային գործի փաստաթղթերի:*

17. Դաշնակցություն կուսակցության դատը

<3-13 դեկտեմբերի 1921թ.>*

Դատարանի կազմը. Նման երևույթը նոր էր Երևանի կյանքում և նոր լինելու հետ միասին չափազանց հետաքրքիր: Այդ էր պատճառը, որ Երևանի լայն մասսաները շտապել էին Բանվորական ակումբը. այդ պատմական նոր երևույթին մասնակից լինելու: Պահակը հազիվ-հազ կարողացավ զսպել դահլիճը լցվելու տարերային ցանկությամբ բռնված հասարակությանը: Ժամը 5-ից արդեն դատավարության սրահը լեփ-լեցուն էր, և դատը սկսվեց:

Դատարանի նախագահն էր ընկ. Տեր-Սիմոնյանը, անդամներն էին ընկ. ընկ. Հ. Ազատյան, Ս. Մարտիկյան, Ա. Խաչյան և Պ. Մակինցյան: Իբր հասարակական մեղադրողներ հանդես եկան Երզնկյան Ա., Ս. Մարգարյան և Ա. Ղարագյոզյան: Պաշտպանությունը հանձն էին առել ընկ. Ավիսը և ընկ. Ա. Հովհաննիսյանը:

Մեղադրյալի աթոռին, հանձինս ընկ. Հ. Յաղուբյանի, նստած էր Դաշնակցություն կուսակցությունը:

Մեղադրական ակտ.- Դատարանի նախագահը բացում է հանդիսավոր դատը հետևյալ խոսքերով. «Երեք օր առաջ լրացավ Հայաստանի սոցիալիստական հեղափոխության առաջին տարեդարձը և այդ օրը Հայաստանի բանվորներն ու գյուղացիները վերհիշեցին իրենց ղեկավարող նախկին քաղաքական հոսանքի անփառունակ և ավերիչ անցյալը: Նրանք իրենց նզովքն ուղղեցին տաճկահայ և կովկասահայ աշխատավորների խաղաղ կյանքը արյունի բեմ դարձնող կուսակցության դեմ, իսկ այսօր մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի այդ կուսակցության գործունեությունը դատենք անաչառ և անողոք կերպով»:

Ապա նախագահը կարդաց Դաշնակցության դեմ կազմված մեղադրական ակտը. որ առաջ ենք բերում լրիվ ձևով...

Ի նկատի առնելով այս բոլորը, Դաշնակցությանը ներկայացվում են հետևյալ մեղադրանքները...

Հարցաքննություն. Մեղադրական ակտի ընթերցումից հետո մեղադրյալին հարցեր են տրվում նրա ով լինելու մասին:

Մեղադրյալ. Հորս անունը Քրիստափոր է, իսկ մորս անունը՝ Մարթա:

---

* *Դատավարության նյութերը թերթում հրապարակելու ժամանակը:*

Զբաղվել եմ վարժապետությամբ և երբեմն էլ եղել եմ պարապ հեղափոխական Բարեկամներս եղել են Դավիթ Անանունը և Բաշխի Իշխանյանը: Ունեի նաև երկու ուրիշ բարեկամներ, որոնք իմ դեմ հարձակումներ էին գործում, բայց և աշխատում էին ինձ հետ և ինձ աջակցում էին: Դրանք Սինախորյանը և Խոնդկարյանն էին:

Նախագահ. - Մեղադրյալը իրեն հանցավոր ճանաչո՞ւմ է, թե ոչ:

Մեղադրյալ.- Ոչ:

Հարցաքննվում է վկա Գ. Վարդանյանը (նախկին հնչակյան, իսկ այժմ կոմունիստ, տաճկահայ)...

Հարցաքննվում է երկրորդ վկան՝ Տատյանը (կոմունիստ, զանգեզուրցի)...

Հարցաքննվում է վկա Հովսեփյանը (ղարսեցի, բժիշկ)...

Հարցաքննվում է վկա Գ. Պիճիկյանը (կոոպերատոր, ախալքալաքցի, մենշևիկ):

Հարցաքննվում է վկա Աղասի Վարդանյանը (ղազախեցի, պաշտոնյա, կոմունիստ)...

Հարցաքննվում է վկա Գ. Տեր-Ռուբինյանը (Հայ ժողովրդական կուսակցության նախկին անդամ, իսկ այժմ «Մշակ Հայաստանի» անկուսակցական թերթի խմբագիրը)...

Հարցաքննվում է վկա բժ. Մելիք-Մուրադյանը (վաղարշապատցի, 1905 թվից դաշնակ է եղել, 3 տարի է, որ Դաշնակցությունից հեռացել է)...

Հարցաքննվում է վկա Կ. Մելիք-Օհանջանյանը (կրթալուսավորական աշխատավոր, սպարտակյան)...

Հարցաքննվում է վկա Էֆենդիևը (թուրք, կոմունիստ, ղազախեցի)...

Հարցաքննվում է վկա Ասմարյանը (շուշեցի, կոմունիստ)...

Հասարակական մեղադրող ընկ. Արամայիս Երզնկյան...

Խոսք է տրվում հասարակական մեղադրող ընկ. Ս. Մարգարյանին-

... Ուստի և աչքի առաջ ունենալով այդ ավանտյուրիստական կազմակերպության վերևում թված հանցանքները, առաջարկում եմ Դաշնակցությունը դատապարտել բարձրագույն պատժի:

(Ծափահարություններ):

Խոսք է տրվում հասարակական մեղադրող ընկ. Ղարագյոզյանին (կոմունիստ) -

...Այս բոլորից հետո ի՞նչ է մնում անել, եթե ոչ պահանջել, որ նման ապիկար ու հակաաշխատավորական կուսակցությունը արժանանա ամենաբարձր պատժի: *(Ծափեր):*

Պաշտպան ընկ. Աշ. Հովհաննիսյանի ճառը.-

... Յուրաքանչյուր հանցանք պետք է քննվի այն իրավակարգի սահմաններում, որի դեմ նա մեղանչում է: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր հեղափոխություն սկզբնավորում է յուր աշխատանքը ամնիստիայի ակտով: Եվ այդ տեսակետից ներկա դատավարությունը պետք է նկատել որպես թյուրիմացություն, քանի որ եթե դատավարությունը դասակարգային պայքարի միջոց է ներկա դեպքում, այդ միջոցը գործադրվում է մի հակառակորդի դեմ, որ հրապարակի վրա չէ: Դաշնակցության գործունեությունը այսօր Հայոց պատմության սեփականությունն է, և այդ գործունեությունը պետք է ենթակա լինի մի ուրիշ դատի, ավելի ահեղ, քան ներկա դատը. դա պատմության դատն է: *(Երկարատև ծափեր):*

Խորհրդային Հայաստան, 1921թ. դեկտեմբերի 3, 4, 6, 9, 13-ի համարները:

18. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

13 ապրիլի 1922թ.

Լսեցին. Պարսկաստանից գաղթականների վերադարձը Հայաստան թույլատրելու մասին:

Որոշեցին. Բոլոր գաղթականներին բաժանել երեք խմբի. 1. չարամիտ դաշնակներ, 2. դաշնակներից հեռացածներ՝ չեզոքներ և 3. Խորհրդային իշխանությանը համակրողներ: Բոլոր խմբերից բաց թողնել վերջին երկուսին, բացառապես մասնագետներին և Հայաստանի հետ տնտեսապես կապված քաղաքականապես չեզոք աշխատավորական տարրերին: (Նրանց ընդհանուր թիվը չպետք է անցնի 300 մարդուց):

Սույն որոշման կատարումը դնել Արտգործժողկոմատի և Չեկայի վրա:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.2, գ.5, թ.13: Թարգմանություն ռուսերենից:

19. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

28 հունիսի 1922թ.

Լսեցին. Մելիք-Հովսեփյանի զեկուցումը բանդիտիզմի և նրա դեմ պայքարելու միջոցառումների մասին:

Որոշեցին. Հանձնարարել Չեկային երկշաբաթյա ժամկետում կարգի բերել Դաշնակցության մասին գոյություն ունեցող նյութը, նշել Դաշնակցության և բանդիտական ավազակախմբերի միջև քաղաքական կապը, իսկ այնուհետև անհրաժեշտ քաղաքական պայքար մղել Դաշնակցության դեմ: Ինչպես նաև միջոցներ ձեռնարկել բոլոր ավազակախմբերի վերացման համար:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.2, գ.5, թ.37: Թարգմանություն ռուսերենից:

20. ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշումը

1 օգոստոսի 1922թ.

Լսեցին. Ընկ. Ամիրխանյանի զեկուցումը Ջեմալ փաշայի սպանության և դաշնակների մասնակի ձերբակալություններ թույլ տալու մասին:

Որոշեցին. Թույլ տալ Չեկային կատարել դաշնակների մասնակի ձերբակալություններ, ինչպես նաև առաջարկել «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությանը տպագրել մի քանի հոդված Ջեմալ փաշայի սպանության առիթով:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.2, գ.5, թ.49: Թարգմանություն ռուսերենից:

21. Ժողկոմխորհ* ընկ. Լուկաշինին

3 օգոստոսի 1922թ.

Վերջերս տեղիս քաղաքական բյուրոն կատարում է ձերբակալություններ համաձայն ՀայՉեկայի կարգադրության: Մենք կարծում ենք, որ բոլոր նման հարցերում ՀայՉեկան կամ կենտրոնը պետք է հարցնի տեղական պատասխանատու օրգանի կարծիքը: Չէ որ, վերջիվերջո, Ալեքսանդրապոլում պատասխանատվությունը ապագա այս կամ այն բարդության դեպքում ՀայՉեկայի կամ նրա տեղական մարմնի հետ հավասար կամ նույնիսկ ավել ընկնում է մեզ վրա:

Ալեքսանդրապոլի գործկոմը և նրա ղեկավար ընկերները ունեն որոշ վերաբերմունք դեպի այս կամ այն հարցը իրենց գավառում: Մենք շատ զգույշ ենք նույնիսկ դեպի դաշնակները: Վերաբերմունքը մեր հանդեպ գավառում շատ լավ է: Դաշնակները ոչ մի համակրանք մասսաներում չունեն և նրանց փորձերը կապվել գյուղի հետ, միշտ անցնում են անհաջող: Այդ ձերբակալությունները այսպես կամ այնպես ստեղծում են որոշ տրամադրություն գավառում, ձերբակալություններ, որոնք անպայման չեն հասցնի ոչ մի դրական հետևանքի: Եթե կենտրոնը որոշել է անցնել ռեպրեսիվ միջոցների դաշնակների վերաբերմամբ, այն ժամանակ կարծում եմ, որ պետք է լինել ավելի հետևողական և միանգամից մաքրել բոլորին, քանի որ վերցնելով նրանց տականքներին, իբրև զինվորական ուժերի, ավելի զգույշ ենք դարձնում նրանց և ակտիվ դարձնում:

ՀայՉեկան յուր հակահեղափոխության դեմ մղած պայքարը ցանկալի էր տեղափոխեր Ղարաքիլիսա կամ Դիլիջան, իսկ մեր խաղաղ գավառը հանգիստ թողներ, եթե չի ցանկանում այստեղ էլ իր համար գործ սարքել:

Բողոքում ենք նման քաղաքականության դեմ, որ անպայման խանգարում է տեղական իշխանության հետևողական կերպով վարած գիծը, գցում նրա հեղինակությունը, խանգարում նրա խաղաղ աշխատանքը: Խնդրում եմ Ձեր կարգադրությունը ապագայում նման երևույթների վերացման և նույնպես ձերբակալվածների մասին: Մենք մեզ այստեղ այնքան ուժեղ ենք զգում, որ կարիք չունենք նման չեկայական էքսպերիմենտների:

Ալեքսանդրապոլի փոխնախագործկոմ**

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ.33, թ.183 և հակ. -184.: Թարգմանություն ռուսերենից:

* *Ժողկոմխորհ՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Ռազմհեղկոմին փոխարինած բարձրագույն գործադիր իշխանություն (կառավարություն):*

** *Ստորագրությունը անընթեռնելի է:*

22. Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի փակ նամակ թիվ 1

հունիս-օգոստոս 1922թ.

<Ոչ վաղ սկիզբը սեպտեմբերի 1922թ.>*

Բանդիտիզմը, որ ամառվա ընթացքում գոյություն ուներ Ղարաքիլիսայի, Իջևանի և Ջանգեզուրի գավառներում, հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում լիկվիդացիայի ենթարկվեց: Բանդիտների առաջնորդները անձնատուր եղան կամ փախուստի դիմեցին:

Հայաստանի սահմաններում դաշնակները առայժմ միայն նկուղային աշխատանք են տանում: Բանդիտների հետ դաշնակցական կազմակերպությունները կապեր ունեցել են: Այդ հանգամանքն ապացուցող փաստեր կան և շարունակում են հավաքվել: Այս կողմից դաշնակները ձգտում են լեգալիզացիայի ենթարկվել Հայաստանում: Այդ մասին հոդվածներ են տպվել «Ճակատամարտի» էջերում: Ռամկավարականների հետ միասին դաշնակներն աջակցում են ՀՕԿ-ին: Նկատելով, որ խորհրդային շինարարությունը մեծ ժողովրդականություն է ստեղծում կոմունիստական կուսակցության համար, հակահեղափոխական կազմակերպությունները ճիգեր են թափում բաժանել այդ ժողովրդականությունը, հայտարարելով, որ կոմունիստները Հայաստանում փաստորեն միայն ռամկավարներին ու դաշնակներին վերապահված աշխատանքն են կատարում և նրանց նպատակները շահագործում:

Կ. Կոմիտեի քարտուղար՝ ստորագրություն

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.2, գ.48, թ.2-13: Բերվում է նամակի մի մասը: Թարգմանություն ռուսերենից:

* *Ժամանակը դրվում է ըստ փաստաթղթի վերնագրի:*

23. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

16 հունիսի 1923թ.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցությունից դուրս եկած երիտասարդ գրողների խմբին ՀԿԿ-ի մեջ ընդունելու մասին: (Զեկ. Ե. Բակունց):

Որոշեցին. Հանել քննարկումից և փոխադրել Կենտկոմի պլենումի քննարկմանը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.7, թ.28: Թարգմ. ռուսերենից:

24. ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի որոշումը

16-20 հունիսի 1923թ.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու մեթոդների մասին: (Զեկ. Ամիրխանյան):

Որոշեցին. Անհրաժեշտ համարել սահմանել ավելի խիստ դրույթներ Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու մեթոդների վերաբերյալ և հանձնարարել նախագահությանը մշակել դրանք:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.5, թ.8: Թարգմանություն ռուսերենից:

25. ՀԿ(բ)Կ Անդրերկրկոմի նախագահության ընդլայնված նիստի որոշումը

23 հուլիսի 1923թ.

Լսեցին. Անդրկովկասյան դաշնակցականների մասին:

Որոշեցին. 1) Չառարկել ներկայացված հայտարարության հրապարակման դեմ: Նպատակահարմար համարել նրանում մտցնել որոշ խմբագրական ուղղումներ, չփոխելով նրա ոգին ու հիմնական բովանդակությունը:

2) Անհրաժեշտ համարել, որ հայտարարությունը ստորագրվի դաշնակների տեղական Կենտկոմի բոլոր անդամների կողմից անձամբ*:

3) Կուսակցական պատկանելության համար ձերբակալված դաշնակներին ազատել հայտարարության հրապարակումից հետո:

4) Թույլատրել Դրոյին և Կորյուն Ղազազյանին մեկնել արտասահման:

5) Հանրապետական Կենտկոմների և Արտակարգ հանձնաժողովի (Զեկա) մարմինների ուշադրությունը հրավիրել դաշնակների կողմից խորհրդային իշխանության նկատմամբ քաղաքական պարտավորությունների կատարմանը մշտապես հետևելու անհրաժեշտության վրա:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.11, թ.39: Թարգմանություն ռուսերենից:

** Տես սույն ժողովածուի 74 փաստաթուղթը:*

26. ՀԿ(բ)Կ բոլոր գավկոմների քարտուղարներին

25 հուլիսի 1923թ.

Խիստ գաղտնի

Անձամբ

Թիվ.211/գ

Կից Ձեզ է ուղարկվում «Դաշնակցություն կուսակցության կազմալուծման մասին» ՀԿԿ բոլոր գավկոմների քարտուղարներին ուղղված շրջաբերական նամակը*:

Կենտկոմի գործերի կառավարիչ՝ Աթաբեկյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14, թ.34ա: Թարգմանություն ռուսերենից:

** Տե՛ս ժողովածուի 27 փաստ.:*

27. Շրջաբերական նամակ Հայաստանի Կոմկուսի բոլոր գավառային կոմիտեների քարտուղարներին

<26 հուլիսի 1923թ.>*

Խիստ գաղտնի

Ի զարգացումն Դաշնակցություն կուսակցության հարցի կապակցությամբ Կենտկոմի պլենումի ընդունած բանաձևի, ՀԿԿ Կենտկոմը Հայաստանի ժողովրդական լայն զանգվածների, Եվրոպայի ու Ամերիկայի հայկական գաղութների հասարակայնության, ինչպես նաև աշխատավորների աչքում Դաշնակցությունը վերջնականապես վարկաբեկելու և կազմալուծելու նպատակով առաջարկում է նախապատրաստվել Դաշնակցության շարքերից խմբային հեռացմանը, պաշտպանելով հետևյալ հրահանգները.

1. Գործի մեջ ներգրավելով գավկոմների ամենապատրաստված անդամներին, անհատական հսկողություն սահմանել պակաս կամ ավել պատրաստված դաշնակների նկատմամբ, ովքեր սկզբունքային նկատառումներով թողել են կուսակցական գործունեությունը, նրանց միջո-

---

** ժամանակը դրվում է ըստ կից գրության (տե՛ս 26 փաստաթուղթը):*

ցով ի վերջո կազմակերպել կուսակցությունից հեռանալ ցանկացողների խմբեր: Ընդ որում, կոպիտ սխալներից խուսափելու համար հարկավոր է այդպիսի անձանց, նրանց իսկական գործունեության վերաբերյալ հետաքրքրվել Հայաստանի Չեկայի համապատասխան մարմիններում:

2. Դաշնակցության շարքային անդամների անհատական մշակման միջոցով, չբացելով նրանց առաջ մեր խնդիրները, նախապատրաստել նրանց, հետագայում միավորելով կուսակցությունից հեռացողների ոչ մեծ խմբերում:

Այդ աշխատանքը կազմակերպելու համար կարելի է ներգրավել ավելի լայն կուսակցական զանգվածների և այդ նպատակի համար ամենահարմար կուսընկերներից այլ ակտիվիստների, պայմանով, որ նրանց աշխատանքը անմիջապես ղեկավարի և անձամբ հրահանգավորի գավկոմի քարտուղարը:

3. Նախապատրաստել Դաշնակցություն կուսակցությունից այսպես կոչված «ձախերի» խմբային պաշտոնական հեռացումը. նկատի ունենալով, որ դաշնակների նախկին ձախ խումբը իրենից նետել է «Դաշնակցություն» անվանումը և պարզապես կոչվում է «Հայաստանի աշխատավոր կուսակցություն»:

Ձախերի հետ հատկապես պետք է լինել զգույշ, նրանց չդարձնելով մեր գլխավոր խնդիրը և ոչ մի դեպքում թույլ չտալ նրանց հայտարարություններում նշել Աշխատավոր կուսակցության մեջ անցնելու կամ նրան համակրելու մասին, որպես Հայաստանում չօրինականացված կուսակցություն:

(Ձախերին մեր կուսակցությունը, ունենալով դրա համար բոլոր հիմքերը, նույնպես քիչ է վստահում, ինչպես աջերին):

4. Նկատի ունենալով գլխավորապես Դաշնակցության անդամների խմբային հեռացումը կուսակցությունից, որոշ տպավորություն ստեղծելը. Կենտկոմը նկատի ունի հեռանալու մասին սկզբունքային նկատառումներով հայտարարությունների հրապարակումը հարմարեցնել համապատասխան պահի կամ համենայն դեպս դրանք հրապարակել աստիճանաբար, առանց մեծ ընդհատումների, որը կթուլացնի տպավորությունը: Դրա համար առաջարկվում է բոլոր հայտարարությունները՝ պատճեններով, նախօրոք ուղարկել կենտրոն և առանց Կենտկոմի թույլտվության չհրապարակել:

5. Հարկավոր է նաև մեզանից չվանել այն դաշնակներին, ովքեր թեկուզ ակնհայտորեն, ոչ անկեղծորեն են պատրաստ պաշտոնապես

հեռանալու կուսակցությունից, նկատի ունենալով, որ դա մեր պլաններին չի խանգարում, այլ՝ ընդհակառակը:

6. Բացի դրանից, գավկոմը պետք է մշտապես աշխատանք տանի դաշնակների գործունեությունը մերկացնելու և վարկաբեկելու ուղղությամբ, իր թերթերում տպագրելով փաստական նյութեր, մերկացումներ, հիշողություններ և այլն, որոնք վարկաբեկում են ինչպես առանձին անձանց, լինեն նրանք նախարարներ կամ խմբապետներ, այնպես էլ կուսակցությանն ամբողջությամբ:

Այս աշխատանքը առանձին ջանք չի պահանջում և դրան կարելի է ձեռնարկել անմիջապես:

7. Դաշնակցության մերկացման աշխատանքին տալով քաղաքական կամպանիայի բնույթ. Կենտկոմը գավկոմների քարտուղարների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ այդ կամպանիայի հաջողությունը ամբողջապես կախված է գավկոմների խելացի և լուրջ վերաբերմունքից դեպի սույն հրահանգների կատարումը: Ջսահմանափակելով գավկոմների գործունեությունը ներկա շրջաբերականի հրահանգներով, Կենտրոնական կոմիտեն միաժամանակ անհրաժեշտ է համարում գավկոմների սերտ կապը Կենտկոմի հետ՝ լուծելու համար ներկա շրջաբերականի կենսագործման հետ կապված ինչպես սկզբունքային, այնպես էլ գործնական բնույթի հարցերը:

8. Ներկա շրջաբերականը ստանալուց եռօրյա ժամկետում անհրաժեշտ է գավառային կոմիտեի անունից ՀԿԿ Կենտկոմ ներկայացնել զեկուցագիր Դաշնակցությունը վարկաբեկելու կամպանիայի գծով Ձեր գավառում հրահանգները կենսագործելու հնարավորության մասին:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Ալ. Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14, թ.35 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

28. Հայաստանի Կոմկուսի բոլոր գավկոմների քարտուղարներին (որպես լրացում թիվ շրջաբերականի)

<Ոչ շուտ 26 հուլիսի 1923թ.>*

Խիստ գաղտնի

Դաշնակցություն կուսակցության կազմալուծումն ընդգրկում է Հայաստանի բանվորների ու գյուղացիների լայն զանգվածներին: Հաճախ են Դաշնակցության գաղափարներից հետ կանգնելու և կուսակցությունից դուրս գալու մասին հայտարարություններ արվում, որոնք պարզորոշ ցույց են տալիս նրա կազմալուծման խորությունը: Պարզ է, որ նրանց համար, ովքեր դեռևս չեն ազատվել խորհրդային իշխանության դեմ պայքարի մտքից, այդ փաստերը բավական վտանգավոր են և հղի իրենց հետևանքներով: Պարզ է նաև, որ դաշնակները չեն կարող անտարբեր նայել իրենց ազդեցությունից բանվորագյուղացիական զանգվածների հեռանալու վրա և կուսակցության Կենտկոմը կձեռնարկի այս կամ այն միջոցները: Իմանալու համար, թե մենք ինչպես պետք է վարվենք մեկ կամ մյուս դեպքում, պետք է նախապես հաշվի առնենք, թե ինչ կհակադրի դաշնակների Կենտկոմը կուսակցության սկսված կազմալուծման իրողությանը:

Այս բնագավառում գործունեության պատասխանատվությունը և աշխատանքն ընկած է բացառապես Չեկայի մարմինների վրա:

Պարզաբանենք, թե ի՞նչ միջոցի կարող է դիմել դաշնակների Կենտրոնական կոմիտեն:

Ի վիճակի չլինելով հանդես գալ բացահայտորեն, նա փորձում է թուլացնել շարժման թափը, խանգարել իրադարձությունների գործընթացին: Դրա համար նա ունի լավ հնարավորություն՝ դա Աշխատավորականների Թիֆլիսի Կենտկոմի հայտարարությունն էր**: Վերջինս, խորհրդային իշխանության ճանաչումով և նրա դեմ պայքարից հրաժարումով, կուսակցության հետագա գոյության մասին հարցը թողնում է առկախ, դրանով իսկ հույս տալով կուսակցության հետագա կյանքին՝ «Չախ աշխատավորականներ» դրոշակի տակ: Նշանակում է՝ Կենտկոմը կարող է իր կուսակցականների միջոցով, որ դուրս են եկել կուսակցությունից հենց նրա ցուցումներով, անցկացնել Թիֆլիսի Կենտկոմի վերոնշյալ փաստական ուղեգիծը:

** Ժամանակը դրվում է ըստ 1923թ. հուլիսի 25-ի շրջաբերականի (տե՛ս 26 փաստ.):*

*** Տե՛ս 74 փաստաթուղթը:*

Բացի այդ, դաշնակների Կենտկոմը կարող է վերցնել Կենտրոնական նախաձեռնող խմբի լիազորների վարկաբեկման տակտիկա: Այդ խնդիրն ավելի է հեշտանում այն դեպքում, երբ դաշնակների Կենտկոմը տվյալ գավառում իր տրամադրության տակ ունի նախաձեռնող խմբի ավելի պատրաստված, հեղինակավոր մարդիկ:

Սրանք են դաշնակների Կենտկոմի վարքագծի հիմնական կողմերը: Կարող են լինել նաև ահաբեկման, տեռորի, գաղտնի քարոզչության դեպքեր և այլն, և այլն:

Կենտկոմի այսպիսի հնարավոր վարքագծի ուղղությամբ Չեկայի մարմինները պետք է կազմակերպեն իրենց աշխատանքը: Դրա համար՝

1. Յուրաքանչյուր քաղբյուրոյի պետ, յուրաքանչյուր լիազոր պետք է գիտակցի կուսակցության քայքայման հնարավորությունները և դրան համապատասխան իր ուժերի և հնարավորությունների մեծ մասը նվիրի այդ աշխատանքին:

2. Տեղյակ լինել նախաձեռնող խմբի լիազորների կողմից հրավիրվող բոլոր ժողովներին, խորհրդակցություններին՝ նրանց գործունեության նկատմամբ հսկողություն ունենալու համար: Սա այն դեպքում, եթե Լիազորը ցանկանում է մեր կուսակցության Կենտկոմի ցուցմունքների դրոշի տակ խառնաշփոթ մտցնել գյուղացիության մեջ՝ Թիֆլիսի Կենտկոմի ծրագրային հարցադրումների ոգով:

3. Չեկայի յուրաքանչյուր մարմին անմիջապես պետք է սկսի հաշվառել այն դաշնակներին, ովքեր տվյալ շրջանում օգտվում են հեղինակությամբ և, լինելով քաղաքականապես պատրաստված, հնարավորության դեպքում կարող են խանգարել կամ ձախողել մեր աշխատանքը:

4. Հատուկ հաշվառման վերցնել այն դաշնակներին, ովքեր նախնական խորհրդակցությունների ժամանակ իրենց ելույթներում անհամաձայնություն են արտահայտել մեր հարցադրումներին:

5. Ի հայտ բերել դաշնակների կուսակցության այն բոլոր անդամներին, ովքեր կարող են օգտակար լինել մեր այս աշխատանքում:

6. Այս ամենն իրագործել խիստ զգույշ, ոչ մի դեպքում թույլ չտալով, որ տվյալ գործում երևա Չեկայի անունը և աշխատակազմը: Հարկավոր է միշտ հիշել, որ տվյալ գործոնը մեր թշնամիներն օգտագործում են լրիվ և ամբողջությամբ՝ և այստեղ, և՛ արտասահմանում:

7. Ձեռք բերված բոլոր տվյալները, աշխատանքի ընթացքում ծագած պրակտիկ դիտողություններով, ըստ ներկա շրջաբերականի կետերի, համահավաք զեկույցով ներկայացնել Կենտկոմ յուրաքանչյուր ամս-

վա 1-ին և 15-ին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.5.: Թարգմանություն ռուսերենից:

29. Ընկ. Ավալյան

14 օգոստոսի <1923թ.>*

Գրաբերիս խնդրում եմ կապել դաշնակների խմբի հետ:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Ա. Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.2: Թարգմանություն ռուսերենից

---

*Տարեթիվը դրվում է ըստ փաստաթղթի բովանդակության:

30. Ընկ. Ավալյան

<14 օգոստոսի 1923թ.*>

Ընկ. Կրմենանցին կապի դաշնակների խմբի հետ, հատկապես աշխատանքի հետ: Նա որոշակի ցուցմունքներ ունի Կենտկոմից՝ դաշնակներին կազմալուծելու համար: Ընդհանրապես ընկ. Կրմենանցը, որպես նախկին դաշնակ, այս աշխատանքում պետք է աչքի ընկնող տեղ զբաղեցնի:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Ա. Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.1: Թարգմանություն ռուսերենից:

---

*Ժամանակը դրվում է ըստ նույն օրվա այլ համանման փաստաթղթի (տես փաստ. 29):

31. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

27 օգոստոսի 1923թ.

Լսեցին. Ինֆորմացիոն զեկուցում Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու ուղղությամբ կատարված աշխատանքի մասին:

(Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. Ընդունել ի գիտություն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.7, թ.42 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

32. Արձանագրություն Հայաստանի Արտակարգ հանձնաժողովին կից կոմբջիջի ընդհանուր ժողովի

3 սեպտեմբերի 1923թ.

Լսեցին. Ընկ. Մռավյանի <զեկուցումը> մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների կուսակցությունները կազմալուծելու մասին:

Ընկ. զեկուցողը նկարագրեց մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների կուսակցությունների համառոտ պատմությունը: Այնուհետև մատնացույց արեց այդ կուսակցությունների քայքայման պատճառը և նրանց կազմալուծման գործընթացը: Ցույց տվեց, թե ինչ նշանակություն ունի մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների հայտարարությունը: Ընկ. Մռավյանը մանրամասն կանգ առավ այն հարցի վրա, թե ինչ նշանակություն ունի մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների կուսակցությունների կազմալուծումը ինչպես միջազգային, այնպես էլ ներքին տեսակետից:

Զեկուցումն ընդունված է ի գիտություն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4, ց 1, գ.329, թ.24: Թարգմանություն ռուսերենից:

33. Հարգելի Աշոտ Հովհաննիսյան!

13 սեպտեմբերի 1923թ.

«Երկիր Նայիրին» ես մտադրություն ունեմ հրատարակել Ամերիկայում. եթե դուք հաստատ համաձայնվում եք առաջաբան գրել, ապա լավ կլիներ, որ ես այն ստանամ մինչև Մոսկվայից մեկնելս. հետո ուղարկել դժվար կլինի, և ես վախում եմ, որ չհաջողվի այն ստանալ: Այնինչ առանց առաջաբանի ես դժվար թե հրատարակեմ արտասահմանում «Նայիրին», որովհետև առանց նրան նա դժվար թե հասնի այն

նպատակին, որի համար <մեկ անընթ. բառ> և ուզում եմ հրատարակել արտասահմանում այդ գիրքս: Ապա ես կուզեի առաջին և ամենախոշոր շտկումը՝ դա Մարուքեի պատմությունն է. վեպի 1-ին մասում նա գավառցի վարժապետ է, ծեծում է երեխաներին և այլն, 2-րդ մասում՝ Դաշնակցության անպրինցիպ հակառակորդ, 3-րդում՝ բալշևիկ... Այս հանգամանքը, ինչպես և մի շարք այլ թյուրիմացություններ, առաջ են եկել նրանից, որ ես վեպը գրել եմ երկար ընդմիջումներով և անմիջապես մաս-մաս հանձնել տպագրության. 2-րդ հրատարակության համար ես հիմնովին կսրբագրեմ վեպս, կանեմ մի շարք կրճատումներ, կավելացնեմ մի շարք հատվածներ՝ ավելի ուռուցիկ դարձնելու համար բալշևիկների արածները՝ մի խոսքով հույս ունեմ, որ այդ շտկումներից հետո վեպս մի բանի կնմանի*:

Ընդունեցեք բարևներս և ընկերական հարգանքներս

Ձեր՝ Չարենց

923/13/IX*
Թիֆլիս**
ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.66, թ. 152 և հակ.-153: Ինքնագիր:

** Հատված նամակից:*

*** Եղիշե Չարենցը գտնվում էր արտասահման մեկնելու ճանապարհին:*

*Ընդ որում Չարենցը Հռոմում հանդիպել է նաև դաշնակցական գործիչ Վահան Նավասարդյանի հետ և, ըստ վերջինիս վկայության, իր տպավորություններն այդ մասին վերարտադրել «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը (արտասահմանյան պատմվածք)» ստեղծագործության մեջ, և որը տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթում, 1925թ. ապրիլին: «Իր այդ «պատմվածք»-ում, - գրել է Վահան Նավասարդյանը, - Չարենցը մեր հանդիպումին գրական ձև է տված, արդեն խորագիրն իսկ մատնում է գրության թագուն իմաստը, - հանձին նվաստիս՝ Չարենցը պատահական հանդիպում է ունենում ՀՅԴաշնակցության հետ, որ, իր համոզմամբ, Հայաստանի խորհրդայնացումից հետո ամեն տեղ մեռա՞ծ ու գերեզմանվա՞ծ պիտի լիներ...»: **Վահան Նավասարդյան**, Չարենց (հուշեր և խորհրդածություններ): Գահիրե, 1957, էջ 9:*

34. ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի որոշումը

24-26 սեպտեմբերի 1923թ.

Լսեցին. Ձեկուցում Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու ուղղությամբ տարվող աշխատանքի մասին: (Ձեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. Ձեկուցումն ընդունել ի գիտություն և առաջարկել Կենտկոմի նախագահությանը՝ ստեղծել հանձնաժողով՝ Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու ուղղությամբ աշխատանքը քաղաքականապես և կազմակերպորեն ընդգրկելու համար:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.5, թ.11 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

35. Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղարությանը

1 հոկտեմբերի 1923թ.

Խնդրվում է Կենտկոմիս ուղարկել 10-ական օրինակ նախկին մենշևիկների բոլոր շրջանային կոնֆերանսների սղագրական հաշվետվություններ:

Կենտկոմի գործերի կառավարիչ՝ Աթաբեկյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.20, թ.72: Թարգմանություն ռուսերենից:

36. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

2 հոկտեմբերի 1923թ.

Լսեցին. Տեղական ուղղիչ տանը և ԽՍՀՄ համակենտրոնացման ճամբարներում պատիժը կրող դաշնակցականների մասին: (Ձեկ. Մելիք-Հովսեփյան):

Որոշեցին. Ստեղծել հանձնաժողով՝ ընկ. Ս. Համբարձումյան (նախագահ) և Ա. Շահսուվարյան և հանձնարարել նրան վերանայել պատիժը կրող դաշնակցականների ցուցակը՝ նրանց ազատելու համար: Ընդ որում ազատումը իրականացնել Հայաստանի Կենտգործկոմի նախագահության միջոցով:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.7, թ.48: Թարգմանություն ռուսերենից:

37. ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունից (1923թ. հուլիս-սեպտեմբեր)

<Ոչ շուտ սկիզբը հոկտեմբերի 1923թ.>*

... Հակախորհրդային կուսակցությունների գործունեությունը որևէ ակտիվություն ցույց չի տվել, չնայած պարզված է, որ որոշ վայրերում կան ընդհատակյա խմբեր, որոնք կապ ունեն արտասահմանյան իրենց կենտրոնի հետ: Այդ գաղտնի խմբերը որոշ չափով խանգարում են Դաշնակցության կազմալուծման սկսված գործընթացին: Միջոցառումներ են ձեռնարկվում նրանց գործունեությունը դադարեցնելու համար: Այնուամենայնիվ կազմալուծման գործընթացը հաջողությամբ առաջ է գնում բոլոր գավառներում: Անց են կացվում շրջանային և գավառային կոնֆերանսներ, ներկայացուցիչներ են ընտրվում սույն տարվա նոյեմբերի 20-ին սկսվող Դաշնակցության նախկին անդամների համահայկական կոնֆերանսի համար: Համագումարի նախապատրաստման նախընտրական աշխատանքը արդեն ավարտվել է Նոր Բայազետի, Էջմիածնի, Զանգեզուրի գավառներում և Մեղրու շրջանում: Բյուրոյի** աշխատանքը ցուցադրելու համար բերենք Էջմիածնի գավառի օրինակը: 28 օրվա ընթացքում Բյուրոն շրջել է 41 գյուղ, որից 37-ը տվել են հայտարարություն, իսկ մյուս 4-ը դաշտային աշխատանքներով զբաղված լինելու պատճառով չեն տվել: Նշված գավառում Դաշնակցությունից հեռացածների թիվն է 1294 մարդ: Ամբողջ հանրապետությունում Դաշնակցությունից հեռացել է 2125 մարդ, այդ թվում 900 արևմտահայ: Դաշնակցությունը կազմալուծելու ամենօրյա աշխատանքի ընթացքում հեռանալու մասին հայտարարություն տվողների մեջ նշվում է 3 խմբավորում: Առաջին կարգը իսկական հիասթափվածները և կուսակցությունից անկեղծորեն հեռացողներն են, որոնք կազմում են հեռանալու մասին դիմում տվողների մեծամասնությունը (75 տոկոս): Այդ կարգի գերակշռող մեծամասնությունը սոցիալական դրությամբ գյուղացի է, իսկ երիտասարդ կուսակցականների ամենամեծ խումբը ակտիվ աշխատանք է տանում Դաշնակցությունը կազմալուծելու ուղղությամբ: Երկրորդ կարգում են ոչ անկեղծորեն հեռացողները և ընդ որում քաղաքական նկատառումներով: Սրանք հին կուսակցականներն են, ձախ դաշնակների ծրագրի վրա կանգնած «աշխատավոր» կոչվողները, ովքեր Թիֆլիսում կոլեկտիվ հայտարարություն են տվել Դրոյի գլխավորությամբ:

Այս խումբը տարբեր ձևերով անկասկած ձգտում է կազմակերպորեն պահպանել կուսակցությունը, այն օրինականացնել և օգտվում է Դաշնակցության կազմալուծման ուղղությամբ տարվող աշխատանքից՝ իր ուժերը կազմակերպելու համար: Երրորդ խումբը դարձյալ ոչ անկեղծորեն հեռացողներ են և ընդ որում մորթապաշտության շահերից ելնող: Նրանց մեծամասնությունը ընտանիքով ծանրաբեռնված և նյութապես անապահով ուսուցիչներ են, խորհրդային ծառայողներ:

Պատրաստված են հատուկ հարցաթերթիկներ, որոնց միջոցով Համահայկական կոնֆերանսի պահին ավելի հանգամանորեն կհետազոտվի և կուսումնասիրվի կուսակցությունից հեռացողների կազմը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.13, թ.6. և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

*Ժամանակը դրվում է ըստ փաստաթղթի բովանդակության:

**Դաշնակցականների Համահայաստանյան համագումարը նախապատրաստող Բյուրո:

38. ՈՒԿ. Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը Դաշնակցության ներկա քաղաքականության մասին

4 հոկտեմբերի 1923թ.

Զեկուցողն սկսեց իր խոսքը, բնորոշելով այն ճգնաժամերը, որ վերապրել է Դաշնակցությունը նախ տաճկահայ մեծ կատաստրոֆից հետո՝ 1915-1916թթ. և ապա Հայաստանի հեղափոխության և քաղաքացիական պատերազմների հետևանքով՝ 1920-21թթ...

Անցնելով Դաշնակցության ներկա քաղաքականությանը, զեկուցողը կանգ'է առնում գաղափարական այն էվոլյուցիայի վրա, որ կատարել են կուսակցության ղեկավարները՝ Վրացյան, Քաջազնունի և Դարբինյան և սրանց հետ կուսակցության հիմնական հատվածները քաղաքացիական կռիվներից հետո...

Եվ բնորոշ է, որ Դաշնակցության զարգացման բնականոն այս ընթացքը չի փոխում անգամ Վիեննայի խորհրդաժողովում հրապարակ ելած «ձախ» փոքրամասնությունը կամ Թիֆլիսում հրատարակված «աշխատավորականների» դեկլարացիան: Վ. Նավասարդյանը՝ «ձախերի» ղեկավարը, նպատակահարմար չի համարում հրաժարվել հին ֆրազեոլոգիայից: Իսկական սոցիալիզմը, հավատացնում է նա, կապ չունի բոլշևիկյան այլանդակությունների հետ: «Իսկական» սոցիալիզմը պետք է լինի բովանդակ աշխատավորության հեռավոր ու անտեսա-

նելի օրերի մի իդեալ, որ չպետք է իրագործվի, նախքան կնվաճի ժողովրդի մեծամասնությունը...

Տարիներ շարունակ վստահելով իրենց բախտը այն մարդկանց, որոնք այսօր հայտարարում են ցինիկաբար, թե սոցիալիզմը նրանց համար միջոց է եղել լոկ և ոչ նպատակ, շարքային դաշնակցականները պետք է հիմնական վերագնահատության ենթարկեն հին մոլորությունները, խզեն իրենց կապը ֆաշիստական կազմակերպության վերածվող Դաշնակցության և նրա ղեկավարների հետ և հաստատ վճռականությամբ կանգնեն կոմունիստական հեղափոխության դրոշի տակ...

Խորհրդային Հայաստան, 4 հոկտեմբերի 1923թ.:

39. ՀԿԿ գավկոմի քարտուղարին

<Ոչ շուտ 4 հոկտեմբերի 1923թ.>*

Խիստ գաղտնի

Անձամբ

Շրջաբերական թիվ 45

Դաշնակցության կազմալուծման բնագավառում անհրաժեշտ է տեղերում սերտ կապ հաստատել Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի մարմինների հետ, որի համար Դուք պետք է բջիջների հրահանգիչների և քարտուղարների միջոցով ձեռք բերեք հետևյալ տեղեկությունները՝ ներկայացնելու համար Կենտկոմ, ինչպես նաև Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի տեղական մարմիններին:

1. Զանգվածների վերաբերմունքը Դաշնակցության շարքերից հեռացող անդամների նկատմամբ ընդհանրապես:

2. Դաշնակցությունից հեռացող անդամների իսկական կերպարը երևում է Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքում, կուսակցությունից պաշտոնապես հեռանալուց հետո, ինչպես խոսքով, այնպես էլ գործնականում:

3. Կենտրոնական նախաձեռնող բյուրոյի հրահանգիչների, լիազորների գործունեությունը՝ կատարո՞ւմ են, արդյոք, նրանք իրենց վրա դրված խնդիրները, ինչպիսի հեղինակություն են նրանք վայելում բնակչության մեջ, ինչպիսի վերաբերմունք ունի նրանց նկատմամբ բնակչությունը:

4. Չե՞ն տարածվում, արդյոք, բնակչության մեջ սադրանք կազմալուծման առիթով և ինչպիսի արձագանք են գտնում այդ սադրանքները բնակչության մեջ:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14, թ.33: Թարգմանություն ռուսերենից:

*Ժամանակը դրվում է ըստ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ալ. Շահսուվարյանին ուղղված Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի 1923թ. հոկտեմբերի 4-ի թիվ 4215/գ գրության (տե՛ս 50 փաստաթուղթը):

40. ՀԿ(բ)Կ Անդրերկրկոմի որոշումը

9 հոկտեմբերի 1923թ.

Լսեցին. Դաշնակցության համագումար կազմակերպելու համար ՀԿԿ Կենտկոմին միջոցներ բաց թողնելու մասին: (Զեկ. Մյասնիկյան):

Որոշեցին. Առաջարկել ՀԿԿ Կենտկոմին ամենասեղմ կարգով ներկայացնել համագումար հրավիրելու մանրամասն նախահաշիվ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.11, թ.86: Թարգմանություն ռուսերենից:

41. Զանգեզուրի կոմիտեի քարտուղարընկ. Քեռուն

9 հոկտեմբերի 1923թ.

Խիստ գաղտնի

Թիվ 3229/գ

Կից ուղարկվում է ի գիտություն և ղեկավարություն Դաշնակցության կազմալուծման մասին շրջաբերականը* և «Ինչպես համագործակցել Արտակարգ հանձնաժողովի և գավկոմների աշխատանքը Դաշնակցություն կուսակցության կազմալուծման բնագավառում» հարցաթեր-

*Տե՛ս 27 փաստաթուղթը:

թիկը**:

Կենտկոմի քարտուղար՝ Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.20, թ.113: Թարգմանություն ռուսերենից:

** Տե՛ս 42 փաստաթուղթը:

42. Ինչպես կոորդինացնել Արտակարգ հանձնաժողովի և գավկոմների աշխատանքը Դաշնակցություն կուսակցության կազմալուծման բնագավառում

<9 հոկտեմբերի 1923թ.>*

Խիստ գաղտնի

1. Ամբողջ պաշտոնական աշխատանքը վարում է գավկոմը: Ամբողջ ոչ պաշտոնականը՝ Արտակարգ հանձնաժողովի Լիազորը:

2. Դաշնակցությունից յուրաքանչյուր հանձնաժողովի և առանձին մարդկանց ընտրությունը և օգտագործումը՝ Կենտկոմի նախնական համաձայնությամբ:

3. Գավկոմը պարտավորվում է պարբերաբար ԿԿ-ին տալ կատարված աշխատանքի տեսություններ, մատնանշելով աշխատանքի բոլոր փոփոխությունները և բոլոր թերությունները:

4. Կոնկրետ Արտակարգ հանձնաժողովի մարմինների խնդիրներն են.

ա) Հսկողություն, առանց որևէ ակտիվ ելույթի, միայն նախաձեռնող խմբի լիազորի գործունեության նկատմամբ տեղեկատվության նպատակով:

բ) Բացահայտում է հնարավոր խմբերին, որպիսիք կարող են լինել երեք տեսակ՝ շարժման հակառակորդներ, շարժման համակիրներ և աշխատավորականներ՝ Դրո-Ղազազյան հայտարարության կողմնակիցներ:

*Ժամանակը որվում է ըստ Զանգեզուրի գավկոմ ուղարկած գրության (տե՛ս 41 փաստաթուղթը):

5.Արտակարգ հանձնաժողովի Լիազորը պարտավորվում է պարբերաբար գավկոմ ներկայացնել ամփոփագիր նախաձեռնող խմբի աշխատանքի հսկողության մասին և ամփոփագիր հայտնաբերվող խմբերի նկատմամբ հսկողության վերաբերյալ, շարժման հակառակորդների հաշվառման մասին տեղեկությունների մանրամասն նշումով:

6. Օպոզիցիայի վնասազերծման գծով բոլոր միջոցառումները քննարկվում են Արտակարգ հանձնաժողովի և գավկոմի տվյալ մարզում աշխատողների համատեղ նիստում, որի համար սահմանվում է նիստերի պարբերական հրավիրում:

7.Բացի այդ կուսակցության քայքայման ընդհանուր ուղեգծի բոլոր կոնկրետ քայլերը քննարկվում են համատեղ:

8. Որպես պարտադիր կարգ Արտակարգ հանձնաժողովի Լիազորը ոչ մի դեպքում այդ աշխատանքին պաշտոնապես մասնակցել չի կարող:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14, թ.37: Թարգմանություն ռուսերենից:

43. ՀԿ(բ)Կ Վեդերկոմի որոշումը

8 նոյեմբերի 1923թ.

Լսեցին. Գաղտնի ծախսերի հսմար ՀԿԿ Կենտկոմին միջոցներ բաց թողնելու մասին:

Որոշեցին. Հարցում անել ՀԿԿ Կենտկոմին ծախսերի բնույթի վերաբերյալ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.11, թ.93: Թարգմանություն ռուսերենից:

44. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

19 նոյեմբերի 1923թ.

Լսեցին. Նախկին դաշնակցականների համագումարի օրակարգի մասին: (Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. Դաշնակների կուսակցությունից հեռացողների համագումարի հրավիրման գծով նախաձեռնող Բյուրոյին երաշխավորել հետևյալ օրակարգը:

1. Համագումարի հրավիրման գծով նախաձեռնող Բյուրոյի տեղեկատվական զեկուցումը:

2. Միջազգային քաղաքական դրությունը:

(Առաջին զեկուցող առաջադրել Բյուրոյի անդամներից, իսկ երկրորդ՝ համագումարի ցանկության դեպքում Ա. Մռավյանին):

3. Դաշնակցություն կուսակցության վերագնահատումը:

4. Ազգային հարցը և Դաշնակցություն կուսակցությունը:

5. Դաշնակցություն կուսակցության գաղափարախոսությունը:

6. Ընթացիկ հարցեր:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.7, թ.59 հակ.: Թարգմանություն ռուսերենից:

Գլ. II

Պետական անվտանգության մարմինների դերը

45. Հայաստանի ԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի թիվ 2 Պետական տեղեկագրիր. 1 ապրիլի - 1 մայիսի 1922թ.

<Ոչ վաղ 1 մայիսի 1922թ.*>

Երևան

... ՀԽՍՀ ամբողջ տարածքում հակախորհրդային աշխատանք է կատարում միայն Դաշնակցություն կուսակցությունը, որն ունի կազմակերպության ամբողջական ցանց: Կոմիտեներ ունեցող կազմակերպություններ կան Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Լոռու գավառներում, որոնք կապված են Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի ընդհանուր ղեկավարության տակ գտնվող մյուս գավառային կոմիտեների հետ: Բոլոր շրջաններում և գավառներում կան դաշնակցական բջիջներ, չնայած ոչ խոշոր, բայց կուսակցությանը նվիրված անձանց կազմով: Բացի այդ, Երևանի և Ալեքսանդրապոլի կազմակերպություններն անմիջական կապ են պահպանում Թավրիզի հետ: Այդ կապն արտահայտվում է գաղտնի թղթակցության փոխանակությամբ: Կապը պահպանվում է «Հայկոոպի» սուրհանդակների միջոցով, որը, ըստ իր դրության, հնարավորություն ունի անարգելք անցնել սահմանը:

Դաշնակցության աշխատանքը բացահայտ արտահայտվում է միայն ստոր սադրանքի ձևով, որն ունի կազմակերպված բնույթ: Գավառներում դաշնակցական կազմակերպությունները աշխատում են ավելի համարձակ, քան կենտրոնում, որը միանգամայն բացատրվում է տեղերում խորհրդային իշխանության թուլությամբ, ժողովրդական զանգվածների շրջանում կուսաշխատողների բացակայությամբ և գավկոմների տկարությամբ: Ժողովրդի մեջ սադրանքի և հակախորհրդային աշխատանքի համար լավ հող է սովը:

Հայաստանից բոլշևիկների իբր հեռանալու մասին դաշնակների կողմից տարածվող սադրանքը վերջին ժամանակներս տապալվել է գյուղացիներին սերմացու բաժանելու շնորհիվ, որը նրանց ակնառու ցույց տվեց, որ խորհրդային իշխանությունը բնավ չի պատրաստվում հեռանալ...

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.2, գ.75, թ.39: Թարգմանություն ռուսերենից:

**Ժամանակը որոշվում է ըստ փաստաթղթի վերնագրի տվյալների:*

46. ՀԽՍՀ Պետական տեղեկատու բյուլետեն թիվ 3-ից

(1 մայիսի-1 հունիսի 1922թ.)

<17 հունիսի 1922թ.>*

Թիվ 511/գ

Հակախորհրդային կուսակցությունների գործունեությունը.

Դաշնակցություն կուսակցությունը, ի դեմս իր Արևելյան Բյուրոյի, ավարտելով կազմակերպական գործունեությունն արտասահմանում, այսինքն Թավրիզում, ձեռնամուխ է եղել իր անդամների աստիճանաբար փոխադրմանը ՀԽՍՀ: Եթե մինչև այժմ նա իր ուշադրությունը կենտրոնացրել էր Պարսկաստանի վրա, ապա ներկա պահին այն փոխադրվել է Հայաստան և Դաշնակցություն կուսակցության գործունեության դաշտը անցել է այստեղ: Դա լրիվ ապացուցում է հակահեղափոխական կազմակերպությունների ու խմբավորումների իրական աճը, որոնց գործունեությունն ավելի ու ավելի է իրեն դրսևորում ՀԽՍՀ տարածքում, դրանով իսկ տրամաբանորեն հաստատելով վերը բերված եզրակացությունները: Նույնիսկ այն աննշան բանդիտիզմը, որը տվյալ պահին արձանագրվում է որոշ գավառներում, նույնպես դաշնակցականների ձեռքի գործն է:

Հաստատվում է, որ վերջին ժամանակներս դաշնակցականներն իրենց գործողություններում դարձել են ավելի ինքնուրույն ու վճռական, երբեմն դիմելով նաև ահաբեկչության (օրինակ՝ Ղարաքիլիսայի ահաբեկչությունը)**, հուսալով այդ միջոցով վախեցնել մեր պատասխանատու աշխատողներին: Դաշնակցության ակտիվացման մյուս օրինակը նրա դատարանի որոշումով Թավրիզում կատարված կուսակցության անդամ Միքայել Ֆահրադյանի սպանությունն է, որը տեղեկություններ է տվել Խորհրդային իշխանությանը դաշնակցականների գործունեության վերաբերյալ:

Թավրիզում Դաշնակցություն կուսակցության մեջ տեղի ունեցող պառակտումը աջերի ու ձախերի բնավ չի ազդել ՀԽՍՀ-ում դաշնակցական կազմակերպությունների վրա:

Այստեղ ձախ դաշնակցականները ոչ միայն իրենց համերաշխությունը և հավատարմությունը չեն ցուցադրել Թավրիզի ձախերի նկատմամբ, այլև ընդհակառակը, նրանցից ամենանշանավորները իրենց հակահեղափոխական գործունեությամբ ավելի ակտիվ են, քան մյուսները: Միաժամանակ, ըստ Հայարտհանձնաժողովի ունեցած տվյալների, բոլորովին անկարելի է թույլ տալ, որպեսզի Թավրիզում արհեստականորեն ստեղծվի «Աշխատավորականների» հոսանք Դաշնակցություն կուսակցության մեջ, օպերատիվ ու տակտիկական նպատակներով, որը բոլորովին կդժվարացնի «Աշխատավորականների» հոսանքի նկատմամբ կառավարության վերաբերմունքի որոշումը և լեգալ աշխատանքի թույլտվությունը: Դրա հանգամանալի պարզաբանման համար Հայարտհանձնաժողովը տվյալ մարզում ձեռնարկել է ամենավճռական քայլեր: Բնորոշ է այն, որ Դաշնակցությունը աշխատանքի մեծ արդյունավետության հասնելու համար սկսել է նրանում ներգրավել հոգևորականությանը: Բացի դրանից, ըստ ունեցած տվյալների, դաշնակցականներն սկսում են ստեղծել «Միասնական ճակատ» ընդդեմ Խորհրդային իշխանության, կադետների*** հետ միացյալ աշխատանքի միջոցով...

Վերջին ժամանակներս, ըստ ունեցած տեղեկությունների, Դաշնակցությունը հաջողել է ստեղծել իր կազմակերպությունը ամբողջ Հայաստանում: Հենց քաղաքում, ըստ տեղեկությունների, գոյություն ունի մոտ 13 բջիջ, որոնցից մեկը գտնվում է Հայարտհանձնաժողովի տեսադաշտում, մյուսները՝ միայն մասամբ: Այդ բջիջների աշխատանքը ղեկավարում է Երևանի կոմիտեն, որը արդեն բացահայտված է բավարար չափով: Երևանի կոմիտեի գլխավոր գործունեության ուղղությունը աշխատանքն է գյուղացիության մեջ: Ընդ որում կոմիտեն հաջողել է կազմակերպել մի քանի բջիջ Երևանի գավառի գյուղերում:

Դաշնակցականների ավելի ուժեղ կազմակերպություններ գոյություն ունեն Ալեքսանդրապոլում, ուր աշխատանքը տարվում է գլխավորապես Ամերիկոմի ծառայողների շրջանում: Այստեղ աշխատանքը կարգավորվում է նաև զինվորականների մեջ և տեղի է ունենում զենքի ուժեղ գնում, փոխանակություն հագուստեղենի ու սննդամթերքի հետ:

Որոշ տվյալներով կարելի է դատել, որ դաշնակները իրենց կոմիտեի միջոցով ուժեղ աշխատանք են տանում գյուղացիության մեջ: Ինչ վերաբերում է դաշնակների Ղարաքիլիսայի կազմակերպությանը, ապա, ըստ տեղեկությունների, կատարված ահաբեկչությունից հետո այն ջախջախվել է և շատ ժամանակ է պահանջվում վերակառուցման համար: Լոռու գավառում այդ կուսակցության գործունեությունը ավելի ակտիվ է Թիֆլիսին մոտ գտնվելու շնորհիվ, որտեղից հաճախ են ժամանում նշանավոր դաշնակցականներ կազմակերպական աշխատանքի համար: Բայց այնուամենայնիվ այդ աշխատանքի արդյունքները թույլ են, և այն բազմաթիվ բջիջները, որ կան որոշ գյուղերում, իրենցից որևէ նշանակալի բան չեն ներկայացնում:

** Ժամանակը կից գրության, որով փաստաթուղթն ուղարկվել է ՀԽՍՀ ժողկոմխորհ:*

*** 1922թ. մայիսի 5-ին Ղարաքիլիսայում (Վանաձոր) զինված հարձակում էր կատարվել գավառի երեք ղեկավար գործիչների վրա, որոնցից երկուսը զոհվել էին:*

**** Հասկանալ՝ ռամկավարներ:*

Ավելի պասիվ է դաշնակցականների գործունեությունը Դիլիջանի գավառում, որտեղ գոյություն ունեն խորհրդային իշխանության նկատմամբ ընդդիմադիր տրամադրություն ունեցող կազմակերպություններում չմիավորված անհատներ:

Աշխատանքն արդյունավետ է Զանգեզուրի գավառում՝ Թավրիզից մոտիկ գտնվելու աշխարհագրական դիրքի շնորհիվ, որը և հնարավոր է դարձնում Զանգեզուրի կազմակերպության անմիջական կապը Կենտրոնական կոմիտեի հետ:

Ինչ վերաբերում է խորհրդային իշխանության նկատմամբ Դաշնակցության ընդհանուր տակտիկային, ապա չնայած այն որոշ դեպքերում ոչ լրիվ է համընկնում Կենտրոնական կոմիտեի տվյալ պահի վարքագծին, այնուամենայնիվ ընդհանրապես իր ամբողջության մեջ նա պահպանում է սպասողական քաղաքականություն, երբեմն թույլ տալով գավառների ինքնուրույն ելույթներ (օրինակ Ղարաքիլիսայի ահաբեկչությունը):

Հայարտհանձնաժողովի նախագահ՝ Ամիրխանյան

Գաղտնի բաժնի պետ՝ Մելիք-Հովսեփյան

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.114, g.2, գ.40, թ.65 և հակ.-66 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

47. Հեռագիր, Մոսկվա, Պետքաղվարչություն Թիֆլիսից

26 հուլիսի 1923թ.

ժամը 16-11

Հանձնել Մենժինսկուն*: Անդրերկրկոմի որոշումով վճռված է վերջացնել Ջեմալի գործի կապակցությամբ ձերբակալված դաշնակցականների, այդ թվում դաշնակցականների Կենտկոմի անդամների գործերը՝ Դրոյի հայտարարության ստորագրման հիման վրա: Դրա համաձայն այսօր Վրաստանի Արտակարգ հանձնաժողովը դաշնակցականներին ազատել է: Մենք նրանց կառաջարկենք թողնել Անդրկովկասի սահմանները: Խնդրում եմ նշել, թե ուր ուղարկել նրանց:

Անդրարտհանձնաժողովի նախագահ՝ Մոգիլևսկի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.191, թ.48: Թարգմանություն ռուսերենից: Տե՛ս նաև «Դրոշակ», 12-25 մարտ 1998, թիվ 5, էջ 33:

*Մենժինսկի՝ ԽՍՀՄ Պետքաղվարչության հատուկ բաժնի պետ:

48. Հեռագիր, Մոսկվա, Պետքաղվարչություն (երկրորդ անգամ) Թիֆլիսից

26 հուլիսի 1923թ.

ժամը 18-34

Հանձնել Մենժինսկուն, պատճենը Վոլենբերգին: Սերգոն* առաջարկում է համաձայնվել Դրոյի առաջարկության հետ, վերացնել բոլոր ձերբակալված դաշնակցականների, այդ թվում դատավարության պատրաստ ջեմալականների** գործերը, նրանց ազատելով: Սերգոն խնդրում է համաձայնեցնել Ստալինի*** հետ: Խնդրում եմ ցուցմունքներ տալ:

Անդրարտհանձնաժողովի նախագահ՝ Մոգիլևսկի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.191, թ.48: Թարգմանություն ռուսերենից:

*Սերգո՝ Գրիգորի Կոնստանտինովիչ Օրջոնիկիձե, ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար:

**Ջեմալականներ՝ Ջեմալ փաշայի սպանության մասնակիցներ, ավելի ճիշտ՝ սպանության կապակցությամբ ձերբակալվածներ:

***Ի. Վ. Ստալին՝ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար:

49. Բոլոր քաղբյուրոների պետերին և Հայաստանի Չեկայի լիապորներին

29 օգոստոսի 1923թ.

Խիստ գաղտնի

Շրջաբերական

Անձամբ

Պահել գաղտնագրին հավասար

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Շահսուվարյանին

Ի տեղեկություն

Ներկայումս Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն կամպանիա է անցկացնում Դաշնակցություն կուսակցությունը վարկաբեկելու և քայքայելու համար: Այդ կապակցությամբ կուսակցության գավկոմներին ՀԿԿ Կենտկոմը ուղարկել է համապատասխան շրջաբերական նամակներ, որոնցում տրվում են մի շարք

ցուցմունքներ այդ հարցի վերաբերյալ:

Այժմ այդ կամպանիան լայնորեն ծավալվում է ամբողջ Հայաստանում և Դաշնակցությունից նրա անդամների խմբով ու անհատորեն դուրս գալը մեր մարմինների առաջ, ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում, դնում է այդ ուղղությամբ նոր խնդիրներ: Վերոհիշյալ կամպանիային, որպես քաղաքական կամպանիա, տալով վիթխարի նշանակություն, Հայաստանի Չեկան առաջարկում է Ձեզ, սույնը ստանալով՝

1. Մանրամասն և համակողմանիորեն ծանոթանալ վերը հիշված Հայկոմկուսի Կենտկոմի շրջաբերական-նամակին, մտնել լրիվ կապի մեջ գավկոմների հետ այս աշխատանքի էության գծով, շրջկոմներին մատակարարել անհրաժեշտ նյութեր՝ Դաշնակցությունից դուրս եկող անդամների քաղաքական կերպարը ճիշտ լուսաբանելու համար և, ընդհանրապես, ցույց տալ ամենայն օժանդակություն գավկոմների կողմից տվյալ շրջաբերական-նամակը իրագործելու ուղղությամբ:

2. Ձեր գավառում Դաշնակցությունից դուրս գալու փաստերի դեպքում բոլոր հեռացողներին վերցնել հաշվառման, ստուգելով այդպիսին Ձեր հաշվառման հետ:

3. Կազմել բոլորի ցուցակները ըստ սույնին կից անկետայի, որպիսին հանձնել գավկոմ՝ Դաշնակցությունից հեռացողների կողմից լրացնելու համար: Նշված ցուցակները, Դաշնակցությունից հեռանալու մասին հայտարարությամբ, պարբերաբար ուղարկել Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի Գաղտնի բաժին:

4. Պարբերաբար Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի Գաղտնի բաժնին տեղեկացնել այն մասին, թե ինչպես է անցնում Ձեր գավառում Դաշնակցության կազմալուծման կամպանիան, ինչպես են վերաբերվում իրենք՝ դաշնակները կուսակցությունից հեռացող անդամների և Դաշնակցության Կենտրոնական կոմիտեի հայտարարության նկատմամբ, որը հրապարակվել է «Զարյա Վոստոկա» թերթում, որից քաղվածքը բերվում է կից:

Անհրաժեշտ է նշել նաև հայտարարության և Դաշնակցությունից հեռանալու նկատմամբ բնակչության վերաբերմունքի մասին:

5. Հիշյալ աշխատանքը տանել գաղտնապահության խստագույն պահպանումով, դաշնակներին հասկացնել չտալու հասար, թե այն իրականացնում է Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը, այսինքն բոլոր անկետաները հանձնել գավկոմ և միայն դրանք հեռացողների կողմից լրացնելուց հետո հետ ստանալ: Կապվել անձամբ գավկոմի քարտուղարի հետ:

Ստանալը հաստատեք:

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահի
տեղակալ՝ Մ. - Հովսեփյան

Գործառմասի պետ՝ Պետրոսյան

Գաղտնի բաժնի պետի պաշտոնակատար՝ Մուղդուսի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.4: Թարգմանություն ռուսերենից:

50. Կենտկոմի քարտուղար

ընկ. Շահսուվարյանին

4 հոկտեմբերի 1923թ.

Թիվ 4215/գ

Դաշնակցություն կուսակցության կազմալուծման բնագավառում ՀԿԿ շրջկոմների հետ մեր ենթակայության մարմինների աշխատանքը կապակցելու համար Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը Ձեզ խնդրում է շրջաբերականով կարգադրություն անել ՀԿԿ բոլոր գավկոմների քարտուղարներին՝ գյուղբջիջների միջոցով պարզելու հետևյալը...*

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահի
տեղակալ՝ Մ. - Հովսեփյան

Գործառմասի պետ՝ Պետրոսյան

Գաղտնի բաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.116, թ.44: Թարգմանություն ռուսերենից:

** Հետևում են այն 4 կետերը, որոնք բերված են ՀԿԿ Կենտկոմի ոչ շուտ 4 հոկտեմբերի 1923թ. 45 շրջաբերականում (տե՛ս 39 փաստաթուղթը):*

51. Ընկ. Ավալյան

<Սկիզբը նոյեմբերի 1923թ.>*

Առանձնապես խնդրում եմ մանրամասն հիշեք հետևյալ ինֆորմացիոն տեղեկության մեջ, թե յուրաքանչյուր գավառից քանի ներկայացուցիչ են ընտրված Համահայաստանի համագումարին, նրանց անուն, ազգանունը և սոցիալական դրությունը: Եթե հնարավոր է, տվեք ընդհանուրի թիվը, թե մինչև այսօր քանի հոգի են հեռացել կուսակցությունից:

Մեր լրագրողներից հավաքած տեղեկությունների համաձայն մինչև հոկտեմբերի 1-ը դուրս են եկել 2391 հոգի:

Այս տեղեկությունները շատ կարևոր են, ուստի խնդրում եմ լուրջ ուշադրություն դարձնեք:

Կոմբարևներով Պետրոսյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.67:

** ժամանակը որվում է ըստ փաստաթղթում բերված տվյալների:*

*** Պետրոսյան՝ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի գործառնական պետ:*

52. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Հովհաննիսյանին ժողկոմխորհի նախագահի տեղակալ ընկ. Մռավյանին

29 սեպտեմբերի 1924թ.

Խիստ գաղտնի

Անձամբ

Թիվ 7609

Սույնի հակառակ երեսին Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի գաղտնի-օպերատիվ մասը ուղարկում է Զանգեզուրի քաղբյուրոյի ծածկագրի պատճենը: Այս թռուցիկը փակցնելու մանրամասնությունները դեռևս ամբողջությամբ պարզված չեն: Թռուցիկի հանդես գալու փաստը, իհարկե, չի կարելի դիտել որպես քաղաքական ելույթ: Բայց դա նախազգուշացնում է, որի վրա հրավիրում ենք Կենտկոմի ուշադրությունը, քանի որ հարկերի դեմ նման դժգոհությունը տեղի ունի բոլոր

գավառներում: Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի գաղտնի-օպերատիվ մասը բավական տվյալներ ունի շեշտելու համար այդպիսի տրամադրության քաղաքական բնույթը: Ստացվող նյութերը պարզ ցույց են տալիս, որ այդ աշխատանքը մղում է Դաշնակցություն կուսակցության գաղտնի կազմակերպությունը:

Տեղյակ պահելով Ձեզ այդ մասին, Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը խնդրում է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել այդ դժգոհության արագ վերացման և գյուղացիության լայն շրջաններում նրա խորացման ու տարածման կանխման համար:

ՀայԱՀ գաղտնի-օպերատիվ մասի պետ՝ Վարդանով

Գաղտնի տնտեսական բաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.24, թ.113: Թարգմ. ռուս.:

53. ՀԿԿ Կենտկոմի քարտուղարին

25 դեկտեմբերի 1924 թ.

Խիստ գաղտնի

Թիվ 10905

Անցյալ տարի նախկին դաշնակների Համահայաստանյան համագումարում ընտրվեց մի ինիցիատիվ Բյուրո, որին հանձնարարված էր մշակել և զբաղվել Համամիութենական մասշտաբով գումարվելիք համագումարի հարցով:

Սակայն անցել է մի տարի և ոչ մի գործունեություն չի նկատված այդ Բյուրոյի կողմից: Հայտնի չէ՝ որտե՞ղ են գտնվում Բյուրոյի անդամները և առհասարակ ի՞նչ աշխատանք են տանում այս ուղղությամբ:

Արտակարգ հանձնաժողովը խնդրում է կազմակերպել մոտիկ ապագայում խորհրդակցություն, հրավիրելով Բյուրոյի բոլոր անդամներին (որոնց քանակը ոչ ավելի է 22-23-ից), հետագա գործունեության ծրագիր կազմելու համար:

Եթե Կենտկոմը հնարավորություն չի ունենա բաց թողնել այդ խորհրդակցությունը կազմակերպելու համար հարկավոր գումարը, հայտնվում է, որ Արտակարգ հանձնաժողովը կարող է հատկացնել որոշ գումար:

Հայարտհանձնաժողովի նախագահ՝ Մելիք-Հովսեփյան
Գաղտնի բաժնի պետ՝ Մուղդուսի

<Մակագրություն (ռուս.)>. Ընկ.Շահսուվարյան, խնդրում եմ նախապատրաստել հարցը և զեկուցել նախագահության հերթական նիստում: 26 դեկտեմբերի: Եր. Բակունց:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.24, թ.163:

54. ՌԿԿ Անդրերկրկոմի քարտուղար ընկ.Մյասնիկյանին

19 հունվարի 1925 թ.

Խիստ գաղտնի

Անձամբ

Ի պատ. 12 հունվարի 1925թ.

թիվ 11/4192 խ.գ. գրության

Այն կապակցությամբ, որ Հայաստանում դաշնակցականների գործունեությունը ընթանում է ժողովրդական լայն զանգվածների առաջ Դաշնակցության աշխատանքը երևան չհանելու դրոշի տակ (լայն զանգվածներում աշխատանքի բացակայությունը, ընդհատակյա մամուլի բացակայությունը), Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովը գտնում է, որ մեզ համար քաղաքականապես նպատակահարմար է մեր մամուլում լռության մատնել Դաշնակցություն կուսակցության համագումարը*: Այլապես մենք ինքներս կարող ենք ակամայից վերածնել դաշնակցականների կուսակցությունը մարդկանց ուղեղում: Առավել ևս, որ մեր տրամադրության տակ չունենք համագումարի բոլոր նյութերը:

Անդրարտհանձնաժողովի նախագահ՝ Մոգիլևսկի

Գործառմասի պետ՝ Բերիա

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.22, թ.3: Թարգմ. ռուս.:

* *Նկատի ունի 1924թ. վերջին կայացած Դաշնակցության 10-րդ համագումարը:*

55. Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Քարտուղարություն

28 փետրվարի 1925 թ.

Թիվ 2096/գ

Սույնին կցելով Հյուսիսային Կովկասի երկրամասի Միացյալ պետքաղվարչության 1925թ. փետրվարի 18-ի թիվ 05693 գրությունը, Դաշնակցություն կուսակցությունից դաշնակցականների հեռանալու մասին հայտարարությունների պատճեններով, խնդրում ենք հայտնել Ձեր կարծիքը շոշափվող հարցի վերաբերյալ:

Իր կողմից Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը միանգամայն անհրաժեշտ ու ցանկալի է համարում Հյուսիսային Կովկասում Դաշնակցության շարքերի կազմալուծման կամպանիայի անցկացումը:

Հայարտհանձնաժողովի նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Գործառմասի պետ՝ Վարդանյան

Գաղտնի բաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.46, թ.7: Թարգմ. ռուս.:

Գլ.III

Կուսակցության կազմալուծման փորձերը «ձախերի» միջոցով: Ռիգայի բանակցությունները

56. Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Բյուրոյին

Պատճենը՝ «Կոմունիստ» թերթի խմբագրության

14 դեկտեմբերի 1920 թ.

Այսու ուղարկում ենք Ձեզ Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների խորհրդի դեկտեմբերի 14-ի որոշումը.

Ի նկատի ունենալով, որ մեր և Կոմունիստական կուսակցության մեջ չկա սկզբունքային տարբերություն, և որ խորհրդային իշխանության ու նրա Հոկտեմբերյան հեղափոխության նշանաբանները հաջող իրագործելու համար անպայման պահանջվում է, որ աշխատավորությունն ու գյուղացիությունը ունենան մեկ առաջնորդող բանվորա-գյուղացիական կուսակցություն, խորհուրդը որոշեց.

Լիկվիդացիայի ենթարկել Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների կուսակցությունը, համարելով անվավեր Կենտրոնական կոմիտեի կողմից տրված բոլոր վկայականներն ու փաստաթղթերը:

Խորհրդի նախագահ՝ Ավ. Օհանջանյան

Քարտուղար՝ Ավալյան

Կոմունիստ (Երևան), 18 դեկտեմբերի 1920: Որոշումը տպագրված է նաև ռուսերեն «Կոմունիստ» թերթի նույն օրվա համարում, որտեղ, սակայն, որպես խորհրդի նախագահ դրված է Ա. Վանցյանի ստորագրությունը:

57. Ձախ դաշնակցական ինտերնացիոնալիստների դեկլարացիան

29 դեկտեմբերի 1920 թ..

... Որովհետև համաշխարհային, նաև Հայաստանի աշխատավորության շահերի միակ պաշտպանը հեղափոխության մեջ վարժված Կոմունիստական կուսակցությունն է, որի հետ մենք չունենք ոչ մի սկզբունքային տարբերություն, այդ պատճառով մենք ձուլումն այդ կուսակցության մեջ գերադասում ենք անջատ գոյությունից, քանի որ միևնույն գաղափարի շուրջը անջատ աշխատելը շփոթություն, քան օգուտ պետք է բերի Հայաստանի և նրա հարևան աշխատավորությանը, մի աշխատավորություն, որ այնքան կարոտ է ստեղծագործական հեղափոխական աշխատանքի:

Մեր իրականությունը շատ խոցելի վերքեր ունի: Դաշնակցությունը հեռացել է անդառնալիորեն ասպարեզից, բայց նա թողել է հայ բանվորներին ու գյուղացիներին ծանր ժառանգություն: Չկա Դաշնակցությունը, բայց կա դեռ դաշնակցական սպեցիֆիկ հոգեբանությունը, որն ինքնցիայի օրենքով դեռ շարունակում է տիրել հետամնաց աշխատավորությանը և մեշչանական ինտելիգենցիայի հոգիներին: Այդ վտանգավոր հոգեբանությունը պղտորում է մեր մթնոլորտը և մեծամեծ արգելքներ հարուցում երկրի սոցիալիստական վերաշինության ու բանվորա-գյուղացիական իշխանության հաստատման:

Կռիվ այդ հոգեբանության դեմ, որը խոր արմատներ ունի մեր իրականության մեջ, կռիվ, որի միջոցով միայն կարելի է սեղմել բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարքերը և ամրացնել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները:

Մեր խորին համոզումով միայն Կոմունիստական կուսակցության եռուն, կտրուկ և անշեղ գործունեությամբ կարելի է դուրս բերել երկիրը ներկա կոշմարային վիճակից և փրկել աշխատավորությունը այլասերումից ու բարոյալքումից:

Մտնելով Կոմունիստական կուսակցության մեջ, մենք լծվում ենք կուսակցության աշխատանքին, կոչ անելով բոլոր ազնիվ և հեղափոխական ընկերներին հետևել մեր օրինակին:

<40 ստորագրություն >

Կոմունիստ (Երևան), 29 դեկտեմբերի 1920: Թերթի խմբագրությունը տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Տպում ենք նախկին «Ձախ դաշնակցական ինտերնացիոնալիստների» դեկլարացիայի այն մասը, որը զուրկ չէ որոշ քաղաքական նշանակությունից եթե ոչ մեզ՝ կոմունիստներիս համար, ապա նրանց, որոնք դեռ խարխափում են ձախամոլոր ուղիների վրա»:

58. Դաշնակցությունը կազմալուծվում է

14 ապրիլի 1921 թ.

Հայաստանի պառլամենտի դաշնակցական ֆրակցիայի մի խումբ նախկին անդամներ, որոնք ներկայիս գտնվում են Թիֆլիսում, 1921թ. մարտի 9-ին կազմել և իրենց ստորագրություններով նույն ամսի 10-ին Վրաստանի հեղկոմին ու Թիֆլիսի կոմիտեին ներկայացրել են հետևյալ բանաձևը.

«Բնավ համակարծիք չլինելով կուսակցության գերագույն մարմին Բյուրոյին, չճանաչել նրա իշխանությունը, դատապարտել զինյալ դիմադրությունը խորհրդային իշխանությանը Հայաստանում: Վկայելով մեր լոյալ վերաբերմունքը խորհրդային իշխանության հանդեպ, Անտանտի քաղաքականությունը ճանաչել կործանարար հայ ժողովրդի համար:

Ի նկատի ունենալով վերոգրյալը, խզել բոլոր կապերը կուսակցության ղեկավար օրգանի հետ, քննության առնել մեր հետագա ինքնուրույն գործունեության խնդիրը»:

Ստորագրել են՝ Հայաստանի պառլամենտի Դաշնակցության ֆրակցիայի անդամներ՝ **Սահակ Թորոսյան, Ենոք Միրաքյան, Գեորգի Խատիսով:**

Սրանով նորեն հաստատելով սույն բանաձևը, վկայում եմ նրա իսկությունը: **Գեորգի Խատիսով:**

Կարմիր աստղ (Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի և Թիֆլիսի կոմիտեի և Վրաստանի Հեղկոմի օրգան), 14 ապրիլի 1921թ.:

59. Դաշնակների դեկլարացիան

23 և 24 ապրիլի 1921 թ.

Վերջին ժամանակներս Անդրկովկասում խոշոր դեպքեր են տեղի ունեցել, որոնց նկատմամբ մեզանից անկախ պատճառներով մենք ժամանակին չենք կարողացել մեր դիրքը պարզել:

Այդ հանգամանքը բնականորեն առիթ է տվել մի շարք ենթադրությունների և դատողությունների մեր վերաբերմունքի նկատմամբ դեպի վերոհիշյալ դեպքերը:

Ամեն տեսակի թյուրիմացություններից զերծ լինելու և մեր իսկական դիրքը հասարակական լայն շրջանների առաջ պարզաբանելու համար մենք Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության «Աշխատավոր» սեկցիայի կողմից անում ենք հետևյալ հայտարարությունը.

Ա. Կուսակցության խնդիրների նկատմամբ

... 6. Ռուսական մեծ հեղափոխության սկզբին կուսակցության մեջ որպես ուժեղ օպոզիցիա հանդես եկավ կուսակցության Վրաստանի սեկցիան «Աշխատավոր» անունով:

7. «Աշխատավոր» սեկցիան ունենալով յուր հատուկ տեսակետը և յուր առանձնահատուկ հասկացողությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական հարցերի նկատմամբ, մշակել է յուրահատուկ «աշխատավորական» տարրերին և իր ազդեցությանը ենթարկել բանվորա-գյուղացիական մասսաներին:

9. Այդ բոլորի հետևանքը այն է եղել, որ «Աշխատավոր» սեկցիան ոչ միայն վերջնականապես ամրացել է Վրաստանում, այլև ձեռք է բերել խոշոր ազդեցություն Հայաստանի հայտնի կուսակցական շրջաններում: Սեկցիայի օրգան «Աշխատավորի» օրինակով Հայաստանում մեկը մյուսի հետևից հանդես են եկել կուսակցական օրգաններ, ինչպիսիք են՝ «Շիրակի աշխատավոր» (Ալեքսանդրապոլում), «Հայաստանի աշխատավոր» (Երևանում), «Աշխատավորի ձայն» (Ղարսում), «Արարատյան աշխատավոր» (Էջմիածնում):

10. «Աշխատավոր» սեկցիան հիշյալ յուր գործունեության ժամանակ ունեցել է մի շարք ընդհարումներ ոչ միայն կուսակցության բարձր գործադիր օրգան Բյուրոյի, այլև մեծ մասամբ նրա բարձր օրենսդիր ժողովի հետ (ընդհանուր համագումարը 1919 թվին), միշտ պնդելով և անցկացնելով իր տեսակետները:

11. «Աշխատավոր» սեկցիան տարբերվում էր և տարբերվում է կուսակցության մեջ գոյություն ունեցող ձախ օպոզիցիոն հոսանքներից նրանով, որ նա նպատակ չի դրել իրեն կուսակցությունից հաճախակի անջատվելը, այլ ձգտել է իր շուրջը համախմբել այն տարրերին, որոնք կանգնած են դասակարգային պայքարի տեսակետի վրա, ուժեղացնել իր ազդեցությունը, վերցնել յուր ձեռքը կուսակցության ղեկը, դուրս քշելով նրա շարքերից բոլոր ոչ աշխատավորական և հակազդող տարրերը:

Բ. Քաղաքական հարցերի նկատմամբ

...18. Ինչ վերաբերում է Հայաստանի քաղաքական կազմին՝ «Աշխատավոր» սեկցիան այստեղ ևս ժխտեց Հայաստանում ամրացած պառլամենտարիստական-բուրժուական կարգը, համարելով այդ թե հո-

գեբանորեն և թե պատմականորեն անհարազատ հայկական աշխատավորական մասսաներին և նրա փոխարեն առաջադրեց խորհրդային կազմը:

Գ. Սոցիալ-տնտեսական հարցերի նկատմամբ...

Դ. Արևելքում ազատագրական պայքարի

հարցերի նկատմամբ և Արևելքի ինտերնացիոնալը

...25. Անցնելով այժմ Անդրկովկասում տեղի ունեցող վերջին դեպքերին, «Աշխատավոր» սեկցիան՝ ա) Ողջունում է խորհրդային իշխանությունը Վրաստանում, խոստանալով իր բոլոր հնարավոր միջոցներով աջակցել նոր իշխանության ամրացման և ծաղկեցման: բ) Հայաստանում տեղի ունեցող վերջին հեղաշրջումը* համարում է միանգամայն անհամապատասխան Հայաստանի աշխատավորական մասսաների համար և գ) Կտրելով կապը կուսակցության բարձր օրգան Բյուրոյի հետ, «Աշխատավոր» սեկցիան հայտարարում է Վրաստանի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեն կուսակցության միակ բարձր և անկախ օրգանը մինչև «Աշխատավոր» սեկցիայի ընդհանուր համագումարը:

ՀՅԴ Վրաստանի Կենտրոնական կոմիտե՝

Կորյուն Ղազազյան, Մինաս Մակարյան, Աշոտ Իսրայելյան, Տիգրան Ավետիսյան, Արամ Նալչաջյան, Պողոս Տեր-Պողոսյան, Զորի Զորյան[2], Բագրատ Թոփչյան

Կոմունիստ (Երևան), 24 ապրիլի 1921թ.: Դեկլարացիան արտատպվել է Վրաստանի թերթերից:

** Նկատի ունի 1921թ. փետրվարյան ապստամբությունը:*

60. Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին*

26 մայիսի 1921 թ.

Բեռլին

Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության գերագույն մարմնի որոշմամբ ընտրվել է 3 մարդուց բաղկացած հատուկ պատվիրակություն ՌԿԿ Կենտկոմի հետ բանակցություններ վարելու համար՝ ինչպես երկու կուսակցությունների փոխհարաբերությունների, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ:

** Նամակը բերվում է մասնակիորեն:*

Կուսակցության որոշումը ուղղակի բխում է այս տարվա ապրիլ և մայիս ամիսներին Բուխարեստում կայացած կոնֆերանսի բանաձևից և վերաբերում է վերոնշյալ հարցերին:

ՌԿԿ Կենտկոմի, ինչպես նաև Հայաստանում նույն կուսակցության ներկայացուցիչների հետ ընդհանուր լեզու գտնելու Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ցանկությունը հրամայաբար թելադրվում է Հայաստանում առկա իրերի փաստական դրությամբ...

Պատվիրակության անունից անկեղծ ցանկությամբ՝

Վ. Փափազյան

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.191, թ.5-8: Բնագիր: Ձեռագիր:

61. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի որոշումը

8 հունիսի 1921 թ.

Հարցման կարգով 10 հունիսի 1921թ.

Լսեցին. Դաշնակցականների հետ բանակցությունների մասին:

Որոշեցին. ա) Բանակցությունները նշանակել Ռիգայում:

բ) Բանակցություններ վարելու համար ուղարկել ընկ. Տեր-Գաբրիելյանին, երկրորդ ընկերոջը ընկ. ընկ. Տեր-Գաբրիելյանի, Չիչերինի և Մոլոտովի համաձայնությամբ:

գ) Ռիգայում բանակցություններին ներգրավել ընկ. Իոֆեյին*:

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.191, թ.1: Թարգմ. ռուս.:

** Ռիգայի բանակցությունների մասին տե՛ս Հրաչիկ Սիմոնյանի «Վերջին փորձը. Դաշնակ-բոլշևիկյան բանակցությունները Ռիգայում 1921թ.» հոդվածը. «Armenian Review», 1991, հատոր 44, թիվ 2/174, էջ 53-70:*

62.ՌԿԿ Կենտկոմ

10 հունիսի 1921 թ.

Դաշնակցականների հետ բանակցությունների հարցին Արտգործժողկոմատի կոլեգիան լրիվ համաձայն է. բանակցությունները կարող են տպավորություն ստեղծել Զանգեզուրի գյուղացիության մեջ, որտեղ շարունակվում է դաշնակցականների ապստամբությունը: Դրանք կօգնեն պարզելու քեմալականների հետ դաշնակցականների բանակցությունների բնույթը, կնպաստեն մտավորականության աշխատանքի ներգրավմանը Խորհրդային Հայաստանում, վերջապես հնարավորություն կտան պարզել դաշնակցականների նախապատրաստվող ահաբեկչական գործողությունների մասին հարցը և նրանց սպառնալ Խորհրդային Հայաստանի կողմից հարյուրապատիկ բռնաճնշումներով: Այս առաջարկությունների հետ, որոնք բխում են պատասխանատու հայ կոմունիստների խորհրդակցությունից, Արտգործժողկոմատի կոլեգիան լրիվ համաձայն է և առաջարկում է այդ նպատակով գործուղել ոչ թե հեռավոր Բեռլին, այլ ավելի մոտ՝ Ռիգա՝ ընկ. Տեր-Գաբրիելյանին և հայ կոմունիստներից որևէ պատասխանատու ընկերոջ, օրինակ ընկ. Քաթանյանին: Այդ բանակցություններին մասնակցելու մեջ հարկավոր է ներգրավել, որպես ՌԿԿ Կենտկոմի ներկայացուցիչ, Ռիգայում գտնվող ընկ. Իոֆեյին: Արտգործժողկոմատի կոլեգիան համաձայն է, որ ներկա պայմաններում դաշնակցականների հետ կոալիցիան պետք է մերժվի:

Բեռլինի հետ մեր կապը անհարմար է, իսկ Ռիգայի հետ ունենք ուղիղ կապ և բանակցությունները Ռիգայում հարմարություն են ներկայացնում, որպիսին չունի Բեռլինը*:

Արտգործժողկոմ՝ Գ. Չիչերին

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.191, թ.10: Թարգմ. ռուս.:

* *Փաստաթղթի վրա կան մակագրություններ, Լենինը նշել է, որ կողմ է Ռիգային և Իոֆեյին: Մոլոտովը գրել է՝ Ռիգա ուղարկել Տեր-Գաբրիելյանին և երկրորդ ընկերոջ՝ Տեր-Գաբրիելյանի, Չիչերինի և իր համաձայնությամբ, ներգրավելով նաև Իոֆեյին, ինչպես նաև հարցում անել Քաղբյուրոյի մյուս անդամներին: Կա նշում նաև այն մասին, որ Զինովևը համաձայն է:*

63. Հայկոմկուսի Կենտկոմի որոշումը

20 հունիսի 1921 թ.

Լսեցին. Դաշնակցականների Արտասահմանյան Բյուրոյի դիմումը ՌԿԿ Կենտկոմին, ընկ. Չիչերինի միջոցով:

Որոշեցին. 1) Չտալով պաշտոնական բնույթ, Մոսկվայում բանակցություններ վարել ինֆորմացիայի նպատակով:

2) Լրացուցիչ հրահանգներ ուղարկել ընկ. Տեր-Գաբրիելյանին:

3) Ուժեղացնել ընդհատակյա աշխատանքը Զանգեզուրում, ուղարկելով նոր աշխատողներ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.1, գ.39, թ.11 հակ.:

64. Հեռագիր, Մոսկվա, Արտգործժողկոմատ, Հայաստանի ներկայացուցիչ Տեր-Գաբրիելյանին

22 հունիսի 1921 թ.

Ներքոշարադրյալը հաստատագրվում է Ձեզ և ՌԿԿ Կենտկոմին.

ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ կառավարության անունից հայտարարում ենք, որ Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների 1921թ. մայիսի 26-ի Վ. Փափազյանի ստորագրությամբ դիմումը ՌԿԿ-ին՝ հարկավոր է թողնել անպատասխան: Դրա հիմնավորումը լինելու է հետևյալը. առաջինը՝ խորհրդային իշխանությունը և Կոմկուսը դաշնակցականների հետ որևէ պայմանագրային հարաբերության մեջ չեն եղել և չկան: Երկրորդ. ճիշտ չէ, թե դաշնակցականներն ունեն որևէ ազդեցություն Հայաստանի աշխատավոր զանգվածների և, ընդհանրապես, հայերի շրջանում: Ընդհակառակը, այժմ չկա որևէ հայ, որը չանիծի այդ կուսակցությանը նրա արկածախնդրությունների, խարդախությունների, դավաճանության և անսահման հակահեղափոխականության համար: Երրորդ. մայիսի 16-ին դաշնակցականները նենգաբար հարձակվել են մեր զորքերի վրա, չնայած Զանգեզուրի գործը խաղաղ ճանապարհով վերացնելու մեր ձգտումներին ու քայլերին: Խորհրդային Հայաստանը պատերազմի մեջ է Զանգեզուրի հետ և դաշնակցականների կամքով Զանգեզուրի հարցը այսուհետև կլուծվի պատերազմով:

Այս բոլոր նկատառումներով ավելի լավ կլիներ դաշնակցական մտավորականության մնացորդներին ուղարկել մեզ մոտ Հայաստան, թող այստեղ նրանք ժողովրդական զանգվածների առաջ և բացեիբաց հայ-

տարարեն, թե ինչ են ուզում: ՌԽՖՍՀ-ին կից Հայաստանի ներկայացուցիչը, մեր կարծիքով, չպետք է մասնակցի բանակցություններին, իսկ եթե նա մեկնել է բանակցությունների, ապա պետք է հետ կանչվի: Վատագույն դեպքում նա կարող է դաշնակցականների հետ խոսել մասնավոր կարգով, նստելով Մոսկվայում:

Մյասնիկյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.191, թ.17: Թարգմ. ռուս.:

65. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի որոշումը

25 հունիսի 1921 թ..

Լսեցին. Դաշնակցականների հետ բանակցությունների մասին:

Որոշեցին. Ուժի մեջ թողնել նախորդ որոշումը*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.191, թ.11: Թարգմ. ռուս.:

** Նկատի ունի 1921թ. հունիսի 8-ի որոշումը: Տե՛ս սույն ժողովածուի փաստ.61:*

66. <Սահակ Տեր-Գաբրիելյանի (Մոսկվա) և Ալ. Մյասնիկյանի (Թիֆլիս) միջև կայացած հեռախոսապրույցից Ռիգայում դաշնակցականների հետ կայանալիք բանակցությունների մասին>

30 հունիսի 1921 թ.

Սահակ Տեր-Գաբրիելյան*. ՌԿԿ Կենտկոմի կարգադրությամբ երկուշաբթի ընկերների հետ ինձ ուղարկում են Ռիգա, չնայած Ձեր հեռագրին: Այդ հարցի կապակցությամբ Քաղբյուրոն ունի ոչ թե զուտ տեղական, Հայաստանին վերաբերող, այլ ավելի լուրջ մոտեցում: Հուսով եմ Դուք կհասկանաք:

Նորից եմ խնդրում հայտնել Զանգեզուրի դրության մասին և որքանով է հնարավոր այն կոալիցիան, որի մասին Դուք հաղորդել եք...

Մյասնիկյան.** ... Դաշնակցականները ձգտում են հենվել Մուսավաթի և քեմալականների վրա, որով և պետք է բացատրել նրանց

** ՀԽՍՀ ներկայացուցիչը Ռուսաստանում:*

*** ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ:*

վերջին արկածախնդրությունը Զանգեզուրում, որը հավանաբար կհանգեցնի նրանց վերջին ջախջախմանը:

... Մենք շարունակում ենք պնդել, որ դաշնակների հետ պետք չէ բանակցել: Դա դուք կտեսնեք մեր տեղեկատվությունից: Մենք անցել ենք դաշնակների ջախջախմանը***: Վաղն սկսվում է Կովկասյան բյուրոյի պլենումը, հարցը կդնենք և այնտեղ: Հավատացած ենք, որ Կովկասյան բյուրոն ամբողջությամբ կկանգնի մեր տեսակետի վրա: Կովբյուրո է եկել և Ստալինը:

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.114, g.1, գ.145, թ.61: և հակ.: Թարգմ. ռուս.:

**** Նկատի ունի Խորհրդային Հայաստանի զինված ուժերի և Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի զորամասերի հարձակումը Զանգեզուրի պաշտպանների վրա, որոնց ղեկավարն էր Գ. Նժդեհը:*

67. Հեռագիր, Մոսկվա, ՌԿԿ Կենտկոմ, Չիչերինին, Տեր-Գաբրիելյանին

16 հուլիսի 1921 թ..

Զանգեզուրը միանգամայն վերացված է*: Դաշնակցականների հետ բանակցությունների վարումը Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը համարում է աննպատակ և նույնիսկ վնասակար, մանավանդ որ Դաշնակցությունն արտասահմանում ամբողջությամբ վարկաբեկված է, իսկ երկրի ներսում մենք նրանց վերջնականապես վերջ ենք տալիս: Անհրաժեշտ է շտապ հայտնել Ռևել**:

<Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար՝ Լուկաշին>

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.191, թ.29: Թարգմ. ռուս.:

** Խոսքը Զանգեզուրում պատերազմական գործողությունների ավարտվելու մասին է:*

*** Ռևելը Տալինի նախկին անունն է:*

68. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի որոշումը

26 հուլիսի 1921 թ.

Հարցման կարգով

Լսեցին. ԸՆԿ. Իոֆեյի կողմից Ռիգայում դաշնակցականների հետ

համաձայնության նախագծի նախաստորագրման մասին:

Որոշեցին. Իոֆեյի և մյուսների կողմից Ռիգայում դաշնակցականների վերաբերյալ ստորագրված համաձայնության նախագիծը վճռականապես մերժել:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.191, թ.30: Թարգմ. ռուս.:

69. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահության որոշումը

30 հուլիսի 1921 թ.

Լսեցին. Ընկ. Մյասնիկյանի հայտարարությունը Ռիգայում Դաշնակցություն կուսակցության և ՌԿԿ Կենտկոմի միջև բանակցությունների և ՌԿԿ Կենտկոմի այդ հարցի գծով որոշման մասին:

Որոշեցին. Դիմել ՌԿԿ Կենտկոմ հետևյալ հայտարարությամբ. ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոն լիովին միանում է Հայաստանի Կենտկոմի որոշմանը: Քանի որ Դաշնակցություն կուսակցության օրինականացման մասին յուրաքանչյուր բանակցություն բարոյալքում է մտցնում Խորհրդային Հայաստանի աշխատանքում, գտնել նրա օրինականացումն անկարելի: Կովկասյան բյուրոն խնդրում է ՌԿԿ Կենտկոմին դադարեցնել ամեն մի բանակցություն Դաշնակցության հետ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4033, ց.2, գ.1187, թ.14: Թարգմ. ռուս.:

70. ՀՅԴ Գերագույն դատական ատյանի որոշումը «Ձախ դաշնակցականների» մասին

12 սեպտեմբերի 1921 թ.

Թավրիզ

ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի կողմից ընտրված Գերագույն դատական ատյանը մանրամասն քննության առնելով «Ձախ դաշնակցականների» խնդիրը, որոնք 1920թ.-ի դեկտեմբերի 2-ից հետո Երևանում հրապարակով հայտարարեցին, որ իբրև «Ձախ դաշնակցականների» հոսանքը անջատվելով կուսակցությունից, պիտի գործեն անկախաբար, ընդհանուր լեզու գտնելով այդ օրերին բռնի Հայաստան խուժող բոլշևիկների հետ, բայց որոնք կարճ ժամանակ հետո լիկվիդացիայի են են-

թարկած իրենց ձեռնարկը, որովհետև բոլշևիկները բացարձակ անվստահությամբ վերաբերված են իրենց հանդեպ: Հարցաքննելով միաժամանակ «Ձախ դաշնակցականներին» և բազմաթիվ վկաների, եկավ հետևյալ եզրակացության,

ա) Նկատելով, որ այսպես կոչված «Ձախ դաշնակցականների» մի խումբ դեռևս դեկտեմբերից ամիսներ առաջ գոյություն ունեցած է, հանձինս Հայկ Ավալյանի, Արշակ Գրիգորյանի, Թադևոս Տեր-Ղազարյանի և այլոց, որոնք ստորերկրյա գաղտնի աշխատանք կատարած են այդ ժամանակվանից սկսած ընդդեմ Դաշնակցության և օրվա կառավարության,

բ) Նկատելով, որ այդ խմբակն ստացած է դավադրական բնավորություն մասնավորապես հայ-թուրքական պատերազմի վերջին շրջանին, երբ մեր ժողովուրդն ու կառավարությունն ապրում էին կրիտիկական վայրկյաններ, գաղտնի հարաբերություն պահպանելով բոլշևիկյան Ռուսաստանի Հայաստանի ներկայացուցիչ Լեգրանի հետ, խորհուրդ տալով նրան Հայաստանը սովետիզացիայի ենթարկել, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ զորքը, ժողովուրդը և հայ աշխատավորությունը իբր թե իրենց կողմը կգտնվեն, և թե իրենք պատրաստ են հեղաշրջման րոպեին ձերբակալել դաշնակցական կառավարության անդամներին և նրանցից մի քանիսին նույնիսկ գնդակահարել, եթե միայն ռուսական մի գունդ զորք Հայաստանի սահմաններից ներս մտներ.

գ) Նկատելով, որ բոլշևիկյան Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանն ավելի ևս քաջալերված է, երբ սոցիալիստ-հեղափոխականների ձախ թևը, հանձինս իր ներկայացուցիչների (Լ. Թումանյան և այլն), նույն ուղղությամբ ներշնչումներ արած է Լեգրանին, որի հետևանքով վերջինս առանց մինչև անգամ Մոսկվայի համաձայնությունն ստանալու, ինքնագլուխ զորք մտցուցած է Հայաստանի սահմաններից ներս,

դ) Նկատելով, որ նոյեմբերի վերջին օրերին, երբ թուրքական բանակը կանգնած էր Ալեքսանդրապոլում, սպառնալով ավելի ևս առաջ շարժվել, իսկ ռուսական զորքը մտել էր արդեն Հայաստանի սահմաններից ներս, ճիշտ այդ օրերին ծնունդ առած էր նաև «Ձախ դաշնակցականների» մի ուրիշ խմբակցություն, ղեկավարությամբ ՀՅԴ պառլամենտական ֆրակցիայի մի քանի անդամների, որոնք կազմակերպված են, նպատակ ունենալով կանգնեցնել վերջնականապես թուրքական արշավանքը, հրավիրելով ռուսական միջամտությունը, բոլշևիկների մուտքը Հայաստան դարձնել անարյուն, մի քանի ամիսներից ի վեր կազմա-

կերպված մի խումբ «Ձախ դաշնակցականների» հանդուգն քայլերի առաջն առնել, նրանց ևս իր մեջ առնելով:

Ուժեղացնել որքան հնարավոր է հայ բոլշևիկների մեջ ևս անկախ Հայաստանի գաղափարը և բոլշևիկների ու դաշնակցականների միջև ստեղծել համագործակցության գետին, ժամանակավորապես ընդունել սովետական կարգեր Հայաստանում և առաջն առնել բոլշևիկների քաղաքական ու տնտեսական պայքարի կոպիտ ձևերի,

ե) նկատելով, որ ըստ երևույթին, իրար միացած «Ձախ դաշնակցական» խմբակներից առաջինը (Հայկ Ավալյան և այլն) խաբելով իրենց մյուս ընկերներին, անկախաբար բանակցություններ վարած է Հայաստանի հեղկոմի անդամների հետ, հրատարակած է երկու անճոռնի թռուցիկներ, որոնք ընդհանուր վրդովմունք՝ և զայրույթ առաջ բերած են բոլորի, ինչպես նաև իրենց ընկեր համարված «Ձախ դաշնակցականների» մեջ,

զ) նկատելով, որ բոլշևիկներն առաջարկված ձևով լեգալիզացիայի չեն ենթարկած «Ձախ դաշնակցականների» հոսանքը, չեն թույլատրած նրանց առանձին օրգան ունենալ, ընդառաջ չեն գնացած Հայաստանի անկախության գաղափարին, որի հետևանքով իրենք «Ձախ դաշնակցականները» 5-6 օր հետո լիկվիդացիայի են ենթարկած իրենց գործը և այնուհետև բազմաթիվ «Ձախ դաշնակցականներ» ակտիվ պայքար մղած են բոլշևիկյան բարբարոսությունների դեմ և մեծ ծառայություն մատուցած փետրվարյան հեղափոխության պատրաստության գործին,

է) նկատելով, որ Բյուրո կառավարությունը դեռ նոյեմբեր ամսից, կանգնած լինելով տաճկական վտանգի առաջ, որոշել էր հրաժարվել և տեղի տալ մի ուրիշ կառավարության, որը պիտի կարողանար հեշտությամբ լեզու գտնել նաև բոլշևիկների հետ և որովհետև հրապարակ եկած ընկեր Վրացյանի կառավարությունը համարվում էր ավելի Ձախ կառավարություն, իսկ այս վերջինը և ՀՅԴ պառլամենտական ֆրակցիան առաջարկել էին Հեղկոմի մեջ մտցնել ընկերներ Դրոյին և Տերտերյանին, իբրև բոլշևիկների վստահություն վայելող անձնավորությունների, և թե այս հանգամանքը ցույց է տալիս, որ բոլշևիկների հետ լեզու գտնելու համար ընկերների մեջ տրամադրություն ստեղծված էր, որպես կոչված «Ձախ դաշնակցականների» մի խմբակցություն հրապարակ բերելու,

Դատական ատյանը վճռեց.

ա) Հայտարարել, որ Դաշնակցության մեջ «Ձախ դաշնակցական հոսանք» գոյություն ունեցած չէ, որ իրենց «Ձախ» անվանող դաշնակցականներից ոմանք իրապես բոլշևիկյան հայացքներով տոգորված են

եղել, իսկ մյուսները նոյեմբերի վերջին որոշ նպատակներ հետապնդելու համար հանդես եկած են:

բ) Համարել «Ձախ դաշնակցականների» երկրորդ խմբակցության մեջ աշխատող ընկերներին, հանձինս Ա. Օհանջանյանի, Հայկ Սարգիսյանի և այլոց, անմեղ և նրանց գործունեությունը ոչ դատապարտելի:

գ) Հայտարարել Հայկ Ավալյանին, Արշակ Գրիգորյանին, Արտաշես Վանցյանին, Թադևոս Տեր-Ղազարյանին և Ալեքսան Կարապետյանին կուսակցական դավաճաններ, վտարված ՀՅԴ շարքերից:

ՀՅԴ Գերագույն դատական ատյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4, ց.2, գ.773, թ.38 և հակ. -39 և հակ.-40:(«Այգ» թերթի 1921թ. սեպտեմբերի 24-ի համարից արտագրված օրինակ):

71. Հայաստանի ժողկոմների խորհրդի նախագահ ընկ. Ալ. Մյասնիկյանին

12 հունվարի 1922 թ.

Թիֆլիս

Ի հետևումն մեր հունվարի 11-ի տեսակցության, ՀՅԴ Աշխատավորական հատվածի Կենտկոմի լիազորներս պարտք ենք համարում Ձեր ուշադրությանը հանձնել հետևյալը.

1. Տեսական և գործնական տարաձայնությունները առհասարակ բոլոր քաղաքական հոսանքների և մասնավորապես Դաշնակցության մեջ արագորեն զարգանալով, հասել են իրենց գագաթնակետին՝ շնորհիվ համաշխարհային պատերազմի, ռուսական հեղափոխության և սոցիալիստական շարժման աննախընթաց ծավալման:

2. Դաշնակցության Աշխատավորական ձախ թևը որոշակի ձևավորվեց փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո և, հակառակ Բյուրոյի կամքի, իր սեփական ջանքերով հիմք դրեց «Աշխատավոր» թերթին, որի միջոցով աշխատում էր ժողովրդականացնել սոցիալիզմի գաղափարը և մասնակից դարձնել հայ աշխատավորությանը միջազգային հեղափոխական շարժման ու դասակարգային կռվին:

3. Իբրև առանձին հոսանք իր գոյության չորս տարվա ընթացքում Աշխատավորական հատվածը անխնա պայքար մղեց Դաշնակցության ղեկավար մարմնի՝ Բյուրոյի և Հայաստանի կառավարության նեղ-

ազգային, անտանտոֆիլ քաղաքականության դեմ՝ թե ներքին կուսակցական կյանքում և թե հրապարակավ՝ «Աշխատավորի» էջերում:

4. Ուժեղացնելով իր շարքերը, նա կարողացավ Դաշնակցության վերջին ընդհանուր ժողովում (Երևան, հոկտեմբեր 1919թ.) անցկացնել իր բանաձևը Երկրորդ Ինտերնացիոնալից հեռանալու մասին:

5. Կանգնած լինելով Աշխատավորության դիկտատուրայի և խորհրդային վարչաձևի անհրաժեշտության տեսակետի վրա, նա իր ժամանակ բոյկոտի ենթարկեց Հայաստանի պառլամենտը:

6. Ընդունելով Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի ու Վրաստանի սովետիզացիան ստեղծված միջազգային հեղափոխական պայմաններում անխուսափելի անհրաժեշտություն և միակ գրավականը հայ աշխատավորության ֆիզիկական ապահովության, Դաշնակցության Աշխատավորական հատվածը մինչև վերջն էլ մնաց իր դիրքերում, հավատարիմ իր սկզբունքներին, պատրաստ իր բովանդակ ուժերը դնելու ի սպաս խորհրդային շինարարության (Աշխատավորական հատվածի ռայոնական ժողովի որոշման համաձայն, Թիֆլիս, հունվար, 1921թ.):

7. Պաշտոնապես խզելով իր բոլոր կապերը Բյուրոյի հետ, հատուկ դեկլարացիայով («Կարմիր աստղ», ապրիլ 8) հրապարակ բերելով մեր տեսակետները, մենք միաժամանակ բազմաթիվ դիմումների ու բանակցությունների միջոցով փորձեցինք ակտիվ գործունեության հնարավորություններ ստանալ: Հակառակ գոյացած համաձայնության ու խոստումների, այդ ոչ միայն փաստորեն չհաջողվեց, այլ, ընդհակառակը, մնալով չիրագործված, հետագայում վերածվեց անտեղի ու անհիմն հալածանքների ընդդեմ մեր հատվածի:

8. Վճռականորեն դատապարտելով Դաշնակցության Բյուրոյի և այլ աջակողմյան տարրերի ռեստավրացիոն, հակահեղափոխական գործելակերպը, պատմական այս ծանր օրերին գիտակցելով իր պարտք ու պատասխանատվությունը հանդեպ հայ աշխատավորության, ցանկանալով հնարավոր մասնակցությունն ունենալ նրա հեղափոխական-ստեղծագործական աշխատանքներին, Դաշնակցության Աշխատավորական հատվածը դիմում է Ձեզ և հանձինս Ձեր՝ Հայաստանի Ժողկոմների խորհրդին ու Կոմկուսին, առաջարկելով իր բոլոր ուժերը ծառայեցնել հայ աշխատավորության ազատագրության ու նոր կյանքի շինարարության գործին:

9. Ձեր ուշադրությանը հանձնելով ա) Դաշնակցության Աշխատավորական հատվածի և Կոմկուսի միջև նորմալ փոխհարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը, բ) Աշխատավորական հատվածի կատարյալ լեգալիզացիայի և գ) «Աշխատավոր» թերթի վերահրատարակման խնդիրները, մենք վստահ ենք, որ գեթ այժմ, Ձեր բարյացակամ աջակցությամբ, կհաջողվի վերջնականապես լուծել նոցա և այդպիսով հնարավորություն ստանալ կատարելու մեր պարտքը հայ աշխատավորության և միջազգային պրոլետարիատի:

Ի դիմաց Դաշնակցության Աշխատավորական հատվածի

Վր. Կենտկոմի լիազորներ*

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.203, թ.1 և հակ. -2 և հակ.:

Հետևում է 3 ստորագրություն՝ առաջինը (հավանաբար) Կ. Ղազազյան է (և ոչ թե Կ. Ղազարյան), երկրորդը՝ Թոփչյան, երրորդը չենք վերծանել:

72. Դաշնակցականները

17 ապրիլի 1922 թ.

Թավրիզում ուժեղ պայքար է մղվում դաշնակցականների՝ բյուրոականների և աշխատավորականների խմբի միջև: Վերջինները իրենց «Զանգ» պաշտոնաթերթի էջերում լուսաբանում են բյուրոականների մութ արարքները: Անկուսակցական սպաները և մտավորականությունը ձգտում են դեպի աշխատավորականները, սակայն չեն համարձակվում հարել նրանց այն պատճառով, որ կառավարությունը հայտարարել է «Աշխատավորական միության» կողմն անցնելու դեպքում նպաստից զրկվելու մասին:

Կուսակցությունը քայքայումից փրկելու համար Դաշնակցության Կենտկոմը պարբերաբար նպաստ է բաժանում կուսակցության անդամներին: Դրանով նա կուսակցությանը անդամագրվել է հարկադրում այն մարդկանց, ովքեր չեն ցանկանում որևէ ընդհանուր բան ունենալ բյուրոականների հետ և չունեն էլ, սակայն վախենում են զրկվել իրենց գոյության միակ միջոց մի քանի թումանից, որ տալիս է Կենտկոմը: Բացի այդ, Կենտկոմը բացել է ճաշարան, որը ճաշ է բաց թողնում կուսակցության անդամներին:

Միաժամանակ Դաշնակցության Կենտկոմը շարունակում է իր հակահեղափոխական գործունեությունը. նա մեծացրել է ագիտատորնե-

րի թիվը, որոնք զանազան հերյուրանքներ են տարածում խորհրդային հանրապետությունների մասին, ուժեղացրել է սահմանով գործակալներ ուղարկելը, Մուժամբարում գտնվող պահեստներից զենք է առաքում Զանգեզուր: Հունվարի վերջին հայդուկային խմբի 72 անդամներ ստացել են «Մաուզեր» ատրճանակներ: Խմբին առաջարկվել է պատրաստ լինել փոխադրվելու համար:

Նախկինի նման շարունակվում է դաշնակցականների կապը թուրքական, անգլիական և ֆրանսիական հյուպատոսների հետ:

Մարտի 25-ին Թեհրան է մեկնել Ռուբեն փաշան, հինգ մաուզերիստների հետ:

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.114, g.2, գ.162, թ. 97 (Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում ՌԽՖՍՀ Լիազոր ներկայացուցչությանը կից ինֆորմացիոն բաժնի Բյուլետեն, թիվ 8, 17 ապրիլի 1922թ., ք. Թիֆլիս: Ռուս.): Թարգմ. ռուս.:

73. ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի նախագահության որոշումը

20 մայիսի 1922 թ.

Լսեցին. Հայկական Դաշնակցություն կուսակցությունը (Աշխատավորական սեկցիա) օրինաթանացնելու մասին:

Որոշեցին. Հնարավոր համարել Դաշնակցություն կուսակցության (Աշխատավոր աշխատավորական սեկցիա) օրինականացումը ամբողջ Անդրկովկասում: Նրա հետ Անդրերկրկոմի կապի համար նշանակել ընկ. Արշ. Աթաբեկովին:

ՌԿԿ Անդրերկրկոմի քարտուղար՝ Օրախելաշվիլի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու թիվ 1, գ.3, թ. 48 հակ.: (Նախկին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի արխիվ, գ.44-3/3-բ, թ.48 հակ.): Թարգմ. ռուս.:

74. Դաշնակցություն կուսակցության կովկասյան խմբերի դեկլարացիան[3]

1 օգոստոսի 1923 թ.

... Դաշնակցություն կուսակցության կովկասյան կազմակերպությունները ամենաանկեղծ կերպով վճռել են չգործել խորհրդային իշխանության դեմ և չխանգարել նրա աշխատանքներին Հայաստանում, հավատացած, որ խորհրդային իշխանությունը, հավատարիմ իր սկզբունքներին, կամրացնի հայ ժողովրդի քաղաքական անկախ գոյությունը...

Համոզված, որ սրանից հետո խորհրդային իշխանությունը Հայաստանից և ոչ մի կտոր հող չի զիջելու և, որպես ճնշված ժողովուրդների պաշտպան, իրականացնելու է հայերի իրավունքներն ու արդարացի պահանջները, մենք հայտարարում ենք մի անգամ ընդմիշտ, որ մենք խորհրդային իշխանության թշնամիներ չենք, որի հետ կապված է այսուհետև հայ ժողովրդի բախտը:

Եվ ով կռիվ կմղի խորհրդային իշխանության դեմ, ինչպես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տերիտորիայում, այնպես էլ սահմանից դուրս, հայ ժողովրդական մասսաների թշնամին ու դավաճանն է:

1. Կենտրկոմի Կովկասյան խմբերի և Վրաստանի լիազոր («Աշխատավոր»)՝ Դրո
2. Վրաստանի Կենտրկոմի («Աշխատավոր») նախագահ՝ Կ. Ղազազյան

Անդամներ՝ 3. Բ. Թոփչյան, 4. Մ. Մակարյան, 5. Ա. Նալչաջյան, 6. Տ. Ավետիսյան, 7. Ա. Իսրայելյան

Մարտակոչ (հրատ. ՌԿԿ Անդրերկրկոմի), 1 օգոստոսի 1923 թ.:

75. Դաշնակցականների դեկլարացիայի առթիվ

1 օգոստոսի 1923 թ..

Այդ դեկլարացիան* և նրա հեղինակ լավ ծանոթ Դրոն, Ղազազյանը և մյուսները այսօր ասում են այն, ինչ նրանք ասացին 1920 թվի նոյեմբերի վերջերին, երբ Կարսի տակ ջախջախված Դաշնակցությունը ակամա քաշվեց հրապարակից: Համարյա նույն այդ այսօրվա դեկլա-

* *Տե՛ս 74 փաստաթուղթը:*

ռացիայի բառերով 1920 թվին Դրոն և Վրացյանը «ընդունեցին» խորհրդային օրիենտացիա: Դաշնակցականների Վրաստանի խմբակը, որն իրեն անվանում է նաև «Աշխատավորական», հայտնեց իր համերաշխությունը Դրո-Վրացյանական հոսանքին:

... Դաշնակցականների այս դեկլարացիան ամենաթերահավատին և մոլորվածին անգամ ասում է, որ խորհրդային աշխարհում վառված ջահերը աշխատող, կեղեքված ժողովուրդների փրկության փարոսներ են:

Ա. Մռավյան

Խորհրդային Հայաստան, 1 օգոստոսի 1923թ.:

76. «Աշխատավոր» դաշնակցականների դեկլարացիայի առթիվ

2 օգոստոսի 1923 թ.

... Արդյո՞ք ժամանակը չէ ավելի պարզ և անկեղծ խոսել:

Մեզ երբեք ցանկալի չէ, որ դաշնակցական «ազգասեր» ինտելիգենցիան պատմական խոշոր սխալներից, մոլորումներից ու երկար ջղաձգություններից հետո քողարկված ու երերուն դարձվածքներով հայտներ իր տեսակետը...

Նոր անվանակոչությամբ ասպարեզ եկած Վրաստանի «Աշխատավոր» դաշնակցականների վերջին դեկլարացիան գալիս է ասելու, որ իրենք արդեն սթափված են և համոզված, որ հարստահարված ազգերի ազատարար ՍԽՀՄ-ն է, որ պիտի կարողանա ապահովել կեղեքված ժողովուրդների հանգիստն ու անձեռնմխելիությունը...

Մեզանից շատերը այլևս ցանկություն չունեն ձեզ լսելու: Մենք արդեն կանգնած ենք խորհրդային իշխանության ամուր պլատֆորմի վրա...

Նախկին դաշնակցական*

Խորհրդային Հայաստան, 2 օգոստոսի 1923թ.:

** Ըստ արխիվային տվյալների հոդվածի հեղինակը Նիկոլայ Կրմենանցն է:*

(Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.208, թ.18-21):

77. Սիրելի Արամայիս*

21 օգոստոսի 1924 թ.

Գաղտնի, անձամբ

Սիմոնիկը** հաղորդում է, որ սեպտեմբերին տեղի է ունենալու Դաշնակցության համագումարը Փարիզում: Ինքը հնար ունի իրազեկ լինել համագումարի անցուդարձին դեպի ձախ թեքված որոշ դաշնակ դելեգատների միջոցով: Սրանք կարող են առաջադրել «нечто вроде платформы Дро», հարցնում է ինչպես վարվել՝ նպատակ դնել սրանց անջատումը դեկլարացիայով Դաշնակցությունը լքելը, թե թողնել, որ մնան և գործեն Դաշնակցության ներսում՝ այն շերտավորելու համար:

Կենտկոմում մենք հնար չունենք դրական կամ բացասական պատասխան տալու այդ հարցին: Պակասում են տվյալներ: Ովքեր են «Ձախերը», ինչ ազդեցություն ունեն մասսայի մեջ. եթե դրանք իրենց սոցիալական դրությամբ, անցյալով, ազդեցությամբ, քանակով նշանակություն ու արժեք ունեցողներ են, անհրաժեշտ է նպաստել բացահայտ պառակտման, հակառակ դեպքում՝ ոչ:

Պրիզիդիումի կողմից առաջարկում եմ քեզ հաշվի առնել այդ և համապատասխան ցուցմունքներ տալ դաշնակցականների «ձախին» անմիջապես կամ Սիմոնիկի միջոցով: Իմ կողմից պիտ հայտնեմ, մասնավորապես, որ Դրոյի պլատֆորմ գոյություն չունի: Այդ մասին գրել եմ «Նորքում» և, որքան գիտեմ, իմ տեսակետը նաև մեր պատասխանատու ընկերների կարծիքն է հիմա: Դրոն կատարել է միայն՝ ինչ հրահանգել է Վիեննայի խորհրդաժողովը: Դրոն չի հրաժարվել կուսակցության հին մեղքերից: Նշանակում է պետք է նպատակ դնել, որ կուսակցության «ձախերը» իրոք վերագնահատեն անցյալը, հրաժարվեն հին մեղքերից և դատապարտեն հին քաղաքականությունը պարզ ու որոշ:

Կոմ. ողջույններով՝ Աշոտ Հովհաննիսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.51, թ.10: Պատճեն***: Մեքենագիր:

** Արամայիս Երզնկյան:*

*** Սիմոնիկ Փիրումյան:*

**** Նամակի պատճենը Կենտկոմում մուտք է արվել «թիվ 1/255 22. VII» ձևակերպումով:*

Գլ. IV

Դաշնակությունը կպմպրող համագումարը Հայաստանում

Ա. Հայտարարություններ, կեկուցագրեր, հոդվածներ

78. Հայաստանի աշխատավոր դաշնակցականնե՛ր, ինչո՞ւ եք լռել

22 օգոստոսի 1923թ.

... Տաճկահայ մասսան, նմանապես և ռուսահայ դաշնակցական մասսան արդեն վաղուց է, որ վերագնահատման է ենթարկել ձեր գործունեությունը և հրապարակ է գալիս ասելու ձեզ իր վերջին և կտրուկ խոսքը. «Հեռու ձեր արյունոտ ձեռքերը տաճկահայ և ռուսահայ դատից: Մենք այլևս դատ չունենք, մեր դատը 3-րդ Ինտերնացիոնալի պահպանումն է և բանվոր ու գյուղացի դասակարգի հաղթանակը»:

Այդպես արտահայտվեց Վրաստանի աշխատավորական դաշնակցությունը, այսպես արտահայտվեցին 1920 թվականի ձախ ինտերնացիոնալիստ դաշնակցականները: Նույնը պիտի հայտարարեն նաև Հայաստանում գտնվող և իրենց աչքով ամեն բան տեսնող աշխատավոր գյուղացի ու բանվոր դաշնակցականները:

Նախկին դաշնակցական՝ Հ. Ավալյան

Խորհրդային Հայաստան, 20 և 22 օգոստոսի 1923թ.:

79. Շարքային դաշնակցականների ձայնը

30 օգոստոսի 1923 թ.

... Եվ այսօր մենք ականատես ենք արդեն շարքային, պասիվ դաշնակցականների զգաստացման, ինքնաճանաչման: Կարդացեք «Խորհրդային Հայաստանի» էջերում տպագրվող նախկին դաշնակցականների խմբային և անհատական նամակները, և ձեր աչքի առաջ պատկերանում են այդ նամակների հեղինակները: Երեկ կույր գործիք դաշնակցականների ձեռքին, այսօր նրանք համարձակորեն իրենց հեղափոխական արթնացման խոսքն են ասում: Համեմատեցեք այդ անպաճույճ տոնով գրված նամակները Դրոյի, Ղազազյանի ու Թոփչյանի

դիպլոմատիկական, խորամանկ ու երկմիտ ոճով գրված դեկլարացիայի հետ:

Սար ու ձոր տարբերություն կա նրանց մեջ: Վերջինները, այսինքն Դրոն ու իր Թիֆլիսի ընկերները խորամանկաբար սքողում էին Դաշնակցության հին մեղքերը, արդարացնում այն և իրենց «խորհրդային օրիենտացիան» էլ կապում անցյալի մեծ երազներ հիշեցնող սպասելիքների հետ և այդ բոլորն անում առանց հրաժարվելու Դաշնակցությունից, նրա քաղաքական միսիայի ֆիկցիայից: Դեկլարացիայի հեղինակների քաղաքական նկարագիրը պարզ է. նրանք և այն հին դաշնակցականներն էին, որոնք դեպքերի բերումով ստիպված էին կանգնել խորհրդային օրիենտացիայի տեսակետի վրա և ընդունել խորհրդային իշխանության տված բարիքները:

Այդպիսի «նուրբ» դիպլոմատներ չեն այն շարքային, պասիվ դաշնակցականները, որոնք այսօր համարձակորեն հրապարակ են եկել երեկվա հզոր կուռք Դաշնակցության դեմ...

Ա. Մռավյան

Մարտակոչ, 30 օգոստոսի 1923թ. (արտատպված է «Խորհրդային Հայաստան» թերթից):

80. Ընկ. Շահսուվարյան

31 օգոստոսի 1923 թ.

Ուղարկում եմ տեղական նախկին ակտիվ դաշնակցականների երեք հոգու* նամակներ, «Խորհրդային Հայաստանի» մոտիկ համարներից մեկում զետեղելու: Այս անձնավորությունները գավառում բավականին հայտնի են: Սրանց հանդես գալը խորը տպավորություն կթողնի մնացածների վրա և այս մի քանի օրը, ես վստահ եմ, որ շատ շատերը պիտի նման հայտարարություններով հանդես գան: Նույնիսկ նրանց մեջ շշուկներ կան համագումար հրավիրելու: Պիտի խոստովանել, որ մենք այդ աշխատանքի ասպարեզում առայժմ բավական պասիվ ենք: Աշխատում ենք միայն ես և կոմիտեի անդամ ընկ. Խ. Սարինգուլյանը: Մենք յուրաքանչյուրս մեկին ենք միայն տեսել, որից հետո նրանք իրենց հայտարարությունները տալուց հետո սկսել են ուժեղ կերպով ագիտացիա տանել իրենց ընկերների մեջ:

** Այդ անձինքն են. Վահան Սմբատյան (տաճկահայ), Հրաչյա Տեր-Հովհաննիսյան և Կոստանտին Կարապետյան (նախկին մաուզերիստ): (Տե՛ս նամակի հետագիրը):*

Աշխատանքները մենք երկուսով սկսել ենք ընդամենը մեկ շաբաթ է: Նրանք անսպասելի կենդանություն են ցույց տալիս, և այնպիսիք, որոնց համար իմ տունը կամ երբեմն գավկոմը անմատչելի վայր են եղել, այժմ այնքան են եկել-գնացել, որ ուխտատեղի են դարձրել: Ինչպես գիտես, մենք միայն «խորհուրդ» տալով ենք զբաղված:

Պիտի ասել, որ այդ խղճուկ ողորմելիների քաղաքական տգիտությունը այն աստիճանի է հասել, որ նրանց թվում է, թե իրենց տված հայտարարություններից հետո, կամ նրանց լեզվով ասած, դեկլարացիաներից հետո 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ պիտի փարվեն: Համենայն դեպս թող այդ մխիթարանքը և ցանկությունը լինի նրանց ընկերը:

Համենայն դեպս հեռանկարը բավականին նպաստավոր է: Կաշխատեմ միշտ իրազեկ պահել Ձեզ, բայց նույնը և կխնդրեի Ձեր կողմից:

Կոմբարևներով՝ Անանյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ. 14-19: Ինքնագիր:

81. Կոչ

5 սեպտեմբերի 1923 թ.

Գորիս

Մենք, Գորիսի նախկին դաշնակցականներս մեր հեղափոխական պարտքն ենք համարում հայտնել Զանգեզուրի գավառի նախկին դաշնակցականներին ու համակրողներին հետևյալը.

...* Այսու հայտարարում ենք, որ մենք խզում ենք մեր կապերը անցյալի հետ, դուրս ենք գալիս Դաշնակցությունից և հայտարարում այդ կազմակերպությունը լուծված:

Մենք կոչ ենք անում գավառի բոլոր ընկերներին հետևել մեր օրինակին, թողնել Դաշնակցության շարքերը և հայտարարել, որ արտասահման փախածներն իրավունք չունեն մեր անունից խոսել ու գործել, որով նոքա վնասում են մեր վերաշինության գործին:

Երկու ճամբա այլևս չկա. միակ ուղին տանում է դեպի 3-րդ Ինտերնացիոնալ, և յուրաքանչյուր հեղափոխական պարտավոր է շիտակ կերպով մասնակցել բանվորա-գյուղացիական հայրենիքի վերաշինման:

Կե՞ցցե 3-րդ Ինտերնացիոնալը:

Կե՞ցցե համաշխարհային հեղափոխությունը:

ՀՅԴ Զանգեզուրի նախկին Կենտրոնական կոմիտեի անդամներ

Ա. Գևորգյան, Ն. Դորունց, Ս. Մելիք-Փարսադանյան

Նախկին դաշնակցականներ՝ Աղ. Բակունց, Մ. Հայրապետյան (Մի-Հայր), Հ. Գրիգորյան, Իս. Մելիք-Փարսադանյան, Մ. Փարսյան, Հ. Մաշուրյան, Հ. Միրաքյան, Ս. Մելքումյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.210, թ.1: Տպագիր օրինակ: Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1923թ. սեպտեմբերի 16-ի համարը:

** Կոչի բաց թողնված մասում գովերգվում է խորհրդային իշխանությունը և մերկացվում Դաշնակցությունը:*

82. Ընկ. Շահսուվարյանցին

7 սեպտեմբերի 1923 թ.

Գորիս

Հաջողվեց Զանգ[եզուրի] Կենտ[րոնական] Կոմիտեին գործոն դաշնակցականների կողմից տպված կոչերով հայտարարել դաշնակցության լիկվիդացիայի մասին և կոչ անել գավառի դաշնակցականներին հետևել իրենց օրինակին:

Ամեն մի շրջան մարդ ուղարկվեց, մոտ օրերում աշխատանքների արդյունքը կլինի Երևանում:

Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.22: Ինքնագիր:

83. Հարգ[ելի] ընկ. Ա. Շահսուվարյանց

8 սեպտեմբերի 1923 թ.

Գորիս

Կոմիտեի անդամներից և ճանաչված անդամներից չորսին ուղարկեցի Դափանի, Բուն Զանգեզուրի*, Հալիձորի և Դարաբասի շրջանները, որոնք մինչև մի քանի օր կվերադառնան և ինձ կհանձնեն շրջանների դեկլարացիաները: Ես էլ վաղը անցնում եմ Սիսիան, որտեղ ինքս անձամբ կտանեմ այդ աշխատանքները և շուտով կլինեմ Երևանում:

Ուղարկում եմ մի օրինակ կոչ, շուտով տպագրել կտամ և, երկրորդը, որով կհայտարարվի համագումարի համար ընտրված 22 դաշնակցական ներկայացուցիչների ցուցակը և որոնց ձայն պիտի տան բոլոր շրջանները:

Իմ աշխատանքների մեջ ինձ օգնեց իմ ամենամոտ ընկերս՝ Ալեքսանդր Բակունցը, որը նոր է վերադարձել Խարկովի համալսարանից:

Դեռ այժմ այսքանը:

Հարգանոք Ն. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.23 և հակ.: Ինքնագիր:

** Բուն Զանգեզուրը Գորիսի շրջանն է:*

84. Զանգեզուրում

28 սեպտեմբերի 1923 թ.

... Անշուշտ նրանք, որոնք թերահավատ են, պիտի բամբասեն, ստահոդ լուրեր տարածեն, թե այդ արձանագրությունների կազմելը եղել է որոշ ճնշման տակ: Անատամ բամբասանքը չէ, որ զբաղեցնում է մեզ այժմ: Այդպիսի թերահավատ վերաբերմունք ունեն և մի շարք անկուսակցականներ, որոնք կարծում են, թե այդ շարժումը, որ վարից է գալիս, վերի թելադրանքով է եղել:

Միայն մեր չարամիտ թշնամիները կարող են հավատալ ու տարածել նման լուրեր: Ես, որ շատ մոտից ծանոթ եմ Դաշնակցության քայքայմանը Զանգեզուրում, իմ պարտքն եմ համարում հայտնել այդ թերահավատներին, որ ոչ մի ճնշում չի եղել մեզ վրա, այդ ամբողջ շարժումը տարերային թափ ունի, հետևաբար անհատական և ոչ մի ուժ չէր կարող պատնեշ կանգնեցնել այդ հոսանքի դեմ:

Կոչը հրատարակելուց հետո Զանգեզուրի դաշնակցության Կենտրոնական կոմիտեն հրահանգիչներ ուղարկեց Բուն Զանգեզուրի, Սիսիանի և Դափանի շրջանները: Ստացած արձանագրությունները պարզ և անպաճույճ բնորոշում են այդ շարժումը շատ ավելի լավ, քան հնարավոր է կատարել այդ լրագրի էջերում:

... Այս մի քանի վավերագրերը շատ են պերճախոս. մատիտավոր ստորագրությունները տարբեր ձևերով նույն բանն են կրկնում: Եվ երբ նախկին դաշնակցականների ընդհանուր համագումարը կավարտի յուր աշխատանքները, այս բոլոր վավերագրերը կհանձնվի հեղափոխության թանգարանին, որ ապագա պատմագիրն ավելի լավ ծանոթանա, թերահավատը կատարելապես համոզվի...

Աղ. Բակունց

Խորհրդային Հայաստան, 28 սեպտեմբերի 1923թ.:

85. Ընկ. Ավալյան

3 հոկտեմբերի <1923թ.>*

Ուղարկում եմ ընկ. Բակունցի «Խորհրդային Հայաստանում» զետեղված հոդվածը՝ արխիվի համար**:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Ա. Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.35: Թարգմ. ռուսերենից:

** Տարեթիվը դրվում է ըստ փաստաթղթի բովանդակության:*

*** Հավանորեն նկատի ունի թերթի 1923թ. սեպտեմբերի 28-ի համարում տպագրված «Դաշնակցության քայքայումը» ընդհանուր խորագրի տակ «Զանգեզուրում» հոդվածը, ստորագրությունը՝ Աղ. Բակունց: (Տե՛ս 84 փաստաթուղթը):*

86. Այրեցեք կամուրջները

4 հոկտեմբերի 1923թ.

Մեր թերթի հոկտեմբերի 3-ի համարում աշխատավոր Խ. Բարխուդարյանն այդպիսի կոչ է անում բոլոր աշխատավոր դաշնակցականներին:

Երևի դեռ շատ-շատերը, հարյուրներով ու հազարներով դաշնակ-

ցականներ (մեզ մոտ և գաղութներում) կհետևեն Խաչատուր Բարխուդարյանի վճռական կոչին և կլքեն Դաշնակցության ափերը:

... Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին «Խորհրդային Հայաստանի» էջերը լցվեցին տասնյակ և հարյուրավոր նախկին դաշնակցականների նամակներով, որոնք արժանի են ոսկեզօծ շրջանակների մեջ դրվելու և հեղափոխության թանգարանում կախվելու..

Բայց այս նամակից էլ ավելի հետաքրքրական է Աղ. Բակունցի երկար հոդվածը «Զանգեզուրում» վերնագրով («Խորհրդային Հայաստան», թիվ 215)...

Ա.Մ.*

Խորհրդային Հայաստան, 4 հոկտեմբերի 1923թ.:

** Հոդվածի հեղինակը հավանորեն Սաքանազ Մռավյանն է:*

87. Զեկուցում

12 հոկտեմբերի 1923թ.

Երևան

Մենք սկսել ենք մեր աշխատանքը էջմիածնի գավառում սեպտեմբերի 11-ից, առաջին հերթին շրջել ենք Արագի ափի տաճկահայ գյուղերը և վերջացրել Թալինի շրջանի սասունցիներով: Բոլոր գյուղերում էլ հանդիպել ենք սրտաբաց ընդունելության և անկեղծ վերաբերմունքի: Միայն մի քանի գյուղերում սառնորեն արտահայտվողներ եղան, որոնք ըստ էության համաձայնելով մեր տեսակետների հետ, քննադատում էին հարկային քաղաքականությունը և կառավարության վերաբերմունքը դեպի քյուրդերի բանդիտային շարժումները, որը, ըստ իրենց կարծիքի, տեղի է ունեցել թուրք կառավարության հրահանգներով, մասնավորապես գանգատվում էին, որ կառավարությունը իրենց զինաթափել է, և իրենք հնարավորություն չունեն պաշտպանվելու սովորական բնույթ ստացած ավազակային հարձակումներից: Մեր բացատրությունները կատարված դեպքերի և պարենտուրքի մասին նրանց բավարարում էր:

Պետք է շեշտել, որ բացառություն համարելով Վասպուրականի հայությունը, տաճկահայ աշխատավոր գյուղացիության մեջ զտարյուն, տոմսավոր դաշնակցականներ շատ քիչ են եղել, առանց չափազանցության կարելի է ասել մոտավորապես 5 տոկոս, բայց անհերքելի ճշմարտություն է, որ Դաշնակցությունը թե իր երեսնամյա ազգային-ազատագրական կռիվներում, թե իր իշխանության երեք տարիների ժամանակաշրջանում և թե իր վերջին փետրվարյան ավանտյուրայի ժամանակ, իր հետ ունեցել է տաճկահայ աշխատավորության և ինտելիգենցիայի խոշոր տոկոսը, որոնք մասսայորեն հետևել ու գործադրել են նրա քաղաքական այս կամ այն ձգտումը: Այնպես որ մեր աշխատանքի ընթացքում մեզ հետաքրքրողը միայն տոմսավոր դաշնակցականը չի եղել, այլ եղել են նաև այն ընկերները, որոնք գիտակցաբար, թե անգիտակցաբար հետևել են Դաշնակցության, եղել են նրա քաղաքականությունը կատարողներն ու տարածողները և տարօրինակ չէր թվում մեզ, երբ մենք տոմս չունեցող դաշնակցականների մեջ հաճախ հռչակավոր և իրենց հետևից մասսաներ քաշող դաշնակցականների ենք հանդիպել: Ամեն մի գյուղում մենք առանձնապես հետաքրքրվել ենք ակտիվներով և աշխատել ենք նրանց առաջ քաշել: Պետք է շեշտել, որ այդ ուղղությամբ մենք կատարյալ հաջողություն ենք ունեցել: Կոնֆերենցիաներին մասնակցելու համար ընտրված ընկերների աչքառու տոկոսը հայտնի դաշնակցականներ են: Օրինակ, Մուշեցի Քեռին, Զորիկը, Պոտոն, Սասունցի Մեծ Ղազարը, Միհրանը, Մրգոն, Թաթարը և այլն: Մեր զեկուցումները բոլոր գյուղերում էլ հառաջ են բերել ջերմ հետաքրքրություն և մտքերի տաք փոխանակություն: Շատ անգամ մեր խոսքերը ընդմիջվել են ներկաների «ճիշտ է, ճիշտ է» բացականչություններով: Որպեսզի պարզ լինի գյուղացիների տրամադրությունը, հառաջ ենք բերում նրանց հաճախակի կրկնված արտահայտություններից մի քանիսը. «Եթե Դաշնակցությունը մնար, հիմա հո մի քանի մարդ էլ կոտորված էինք»: «Դաշնակցությունը մեզ կռվել սովորեցրեց: Խորհրդային իշխանությունը սովորեցրել է աշխատել»: «Դաշնակցության օրոք բոլորս էլ թալանչի էինք դառել, մի օր եզ էի բերում տուն, կովը տանել տալիս, մի ուրիշ օր խալի էի խլում ուրիշից, մեկն էլ յաթաղս էր տանում տնից»: «Թող միշտ ապրի Խորհրդային իշխանությունը, որ մեր ականջից թոփի ու թվանքի ձենը կտրեց»: «Երեք տարի առաջ կորեկ չընք գտնի, երկու տարի հառիջ գարի կերանք բոլ-բոլ, էս տարի ցորեն ենք ուտում»: «Ռուբեն փաշեն մեր ձեռն ընկնի, էնոր արյունը քոսի դեղ կշինենք»: Ակնարկում էին ոչ միայն Ռուբենին, այլև դաշնակցության շեֆերին: «Խորհրդային իշխանությունը քյասիբների իշխանություն է, մեզ հող ա տալիս, սերմ ա տալիս, որ մենք էդ իշխանությունը չսիրե՞նք, բա ով ա սիրելու»:

Երբ մենք իրենց անունից գրված դեկլարացիան կարդում էինք, հետո հարց էինք տալիս, թե հակառակորդներ չկա՞ն, գրեթե բոլոր գյուղերում էլ ստանում էինք նույն պատասխանը. «էն, ինչ որ դուք ասում եք,

մենք ապրել ու տեսել ենք, ո՞նց հակառակենք, մարդ ճշմարիտ խոսքի դեմն էլ կհակառակի՞»:

28 օրվա ընթացքում մենք շրջել ենք 41 գյուղ, որից 37-ը դեկլարացիա են տվել, մեկը անհաջող է անցել, իսկ երեքում դաշտային աշխատանքների պատճառով մարդ չենք ճարել: Դեկլարացիա տվողների ընդհանուր թիվն է 1294, ընտրված ներկայացուցիչների թիվն է 65:

Պետք է խոստովանել, որ մենք 28 օրից 7-ը վատնել ենք իզուր, փոխադրական միջոցներ չունենալու համար: Այնպես որ, 41 գյուղ շրջել ենք 21 օրվա ընթացքում:

Այն գյուղը, որտեղ մենք հաջողություն չունեցանք, կոչվում է Թրինդ՝ Թալինի շրջան: Անհաջողության պատճառը Եղիազար Կարապետյան (Ուստա) անունով մի սասունցի կիսաինտելիգենտ մարդ է, որը իր գյուղում մեծ ազդեցություն ունի շնորհիվ այն հանգամանքի, որ Կենտգործկոմի անդամ է և Թալինի շրջհողբաժնի վարիչ: Այս քաղաքացին, ըստ իր արտահայտության, համաձայնում էր մեր շոշափած բոլոր տեսակետներին, բայց ավելորդ էր գտնում դեկլարացիա տալը, հայտնելով, որ իրենց ժողովուրդը վաղուց է լքել Դաշնակցությունը և իրեն այժմ դաշնակցական չի համարում:

Վերջացնելով, պիտի ասել, որ տաճկահայ աշխատավոր գյուղացիությունը վաղուց է լքել Դաշնակցությանը, միայն անհրաժեշտ է միշտ լինել նրանց մեջ, խոսել նրանց հետ, որպեսզի նրանք պրովոկացիայի չենթարկվեն:

Սևդաշունի, Միհրան Սերջանյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.5 և հակ. -6:

88. Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրոյին

. Զեկուցում

<12 հոկտեմբերի 1923թ.>*

Ձեր կարգադրության համաձայն ես անցա էջմիածին այդտեղ հանդիպեցի մի քանի անհատների (նախկին դաշնակցականների), որոնք դեմ չէին, այլ սկզբունքով անհրաժեշտ էին համարում մեր սկսած գործը:

Ես գործի հաջողության տեսակետից որոշեցի իմ աշխատանքները սկսել գավառի գյուղերում գտնվող շարքային դաշնակցականներից և անցնելով Մարգարա գյուղը, գումարեցի նախկին դաշնակցականների ժողով, պարզեցի մեր սկսած աշխատանքների ամբողջ պատկերը... Սկզբում նրանք որոշ տատանումներով մոտեցան իմ դրած խնդիրներին, բայց հետո համոզվեցին ու կազմեցին արձանագրություն և տվին իրենց հեռացման դեկլարացիան:

Մարգարա գյուղից անցա Էվջիլար, Ուզունօբա, Արմուդլու, Ղուզիգեղան, Ղուրդաղի և Ղուրդուղուլի, գումարեցի ժողովներ, որտեղ ներկա էր և կոմկուս ընկ. Սիրակ Վարդանյանը:

Ղուրդուղուլիում հրապարակ եկան շրջանային կոմիտեի անդամները և ուրախությամբ ընդունեցին մեր տեսակետները ու Դաշնակցության լիկվիդացիայի հարցը և միաժամանակ արտահայտվեցին, որ իրենք ամենահավատարիմ քաղաքացիներն են խորհրդային իշխանության և միշտ էլ պատրաստ են իրենց ուժերը նվիրել խորհրդային իշխանության վերաշինական հզոր աշխատանքներին: Հիշածս գյուղերում նույնպես դեկլարացիաներ ընդունելով, անցա Թափադեբի, Մոլլաբայազեդ, Փոքր և Մեծ Շահրիար, Ջաֆարաբադ և Քալագարխ գյուղերը: Ամեն տեղ էլ հանդիպում էի սկզբում դժվարությունների, իսկ հետո հաջողությունների:

Պետք է ասել, որ նախկին դաշնակցականների տատանումները բացատրվում էին հետևյալ պատճառներով.

1. Որ նրանք մինչև օրս իրենց գյուղերում եղել են ձայնազուրկ:

2. Որ երկար ժամանակ նրանց տները ենթարկվել են խուզարկությունների:

3. Որ նրանց հալածողները եղել են քաղաքական պատրաստականությունից զուրկ մարդիկ:

4. Որ նրանք վախենում են այսպիսի հայտարարություններից հետո իրենք ենթարկվեն հալածանքների:

Ես կարողացա նրանց համոզել, որ այդպիսի հալածանքներ տեղի ունենալ չեն կարող, քանի որ մենք անկեղծորեն մեր ուժերը տրամադրում ենք 3-րդ Ինտերնացիոնալին և հեռանալով Դաշնակցությունից ու նրա վնասակար քաղաքականությունից, մեզ տրամադրում ենք բանվորա-գյուղացիական հայրենիքի վերաշինման:

Իսկ ինչ վերաբերում է այն անձանց, որոնք ոչ թե համոզմունքով են

* *Զեկուցումը նախաձեռնող բյուրոյի նիստում հաստատելու օրը (էջմիածնի գավառ գործուղվելու մասին որոշումն ընդունվել էր հոկտեմբերի 10-ին)*

հեռանում, այլ ձևականորեն, այդպիսիներին ոչ թե կհալածի խորհրդային իշխանությունը, այլ ուշի-ուշով կհետևենք և մենք և հարկ եղած դեպքում նրանց հետ կվարվենք այնպես, ինչպես արժե վարվել:

Դաշնակցությունից հեռացող ընկերներից շատերը բուռն ցանկություն են հայտնում մտնելու Կոմկուսի շարքերը, որոնց ցուցակը վերցրել եմ ինձ մոտ:

Էջմիածնի շրջանի շրջ.՝

Հ. Եպիսկոպոսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.70 և հակ.:

89. Ընկ Ծահսուվարյան

14 հոկտեմբերի 1923թ.

Խիստ գաղտնի

Դաշնակցության կազմալուծման աշխատանքը սկսվել է: Կայացել է Դիլիջանի կոմիտեի ժողովը, որն ընդունել է հայտարարություն: Նրա տակ իրենց ստորագրություններն են դրել 15 նախկին դաշնակցականներ, այդ թվում և Ծովակ Ծովինյանը: Ընտրվել է երեք մարդուց կազմված նախաձեռնող բյուրո, ընկ. Պողոսյանի (նախկին դաշնակ, այժմ կոմունիստ) նախագահությամբ:

Սկսվել է աշխատանքը գյուղերում, ուր գործուղվում է ընկ. Պողոսյանը, նախաձեռնող բյուրոյի անդամներից մեկի հետ: Առայժմ աշխատանքը տարվում է Դիլիջանի շրջանում:

Աշխատողների գործուղման համար անհրաժեշտ են միջոցներ, որպիսիք մենք չունենք: Հայտարարությունը կուղարկեմ օրերս գյուղական դաշնակների ստորագրությունները հավաքելուց հետո:

Խնդրում եմ ուղարկել միջոցներ:

Գ. Քալաշյան*

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.26: Թարգմ. ռուս.:

* *ՀԿ(բ)Կ Դիլիջանի գավկոմի քարտուղար:*

90. Նամակ խմբագրության

21 հոկտեմբերի 1923թ.

Ընկ. Խմբագիր.

Որովհետև նախաձեռնող բյուրոյին կից կազմված առաջին հանձնաժողովը նպատակ ունի կազմել Դաշնակցության քայքայման պատմությունը՝ համագումարին զեկուցելու համար, ուստի խնդրում եմ հայտնել մեզ «Մարտակոչ» թերթի այն համարը, որտեղ տպված են անվանական կամ խմբական հայտարարություններ Դաշնակցությունից հեռանալու մասին: Եթե կան մեզ մոտ այդ համարներից, մեզ չափազանց աջակցած կլինեք, եթե բյուրոյի հասցեով ուղարկեիք այդ համարներից մի օրինակ վճարով:

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի
նախաձեռնող բյուրոյին կից առաջին հանձնաժողովի նախագահ՝

Ն. Կրմենանց

Մարտակոչ, 21 հոկտեմբերի 1923թ.:

91. Դաշնակցությունից դեկլարացիայով հեռացածների ընդհանուր ժողովը

24 հոկտեմբերի 1923թ.

Նախկին դաշնակցականների համագումար հրավիրող Բյուրոյի նախաձեռնությամբ հոկտեմբերի 24-ի երեկոյան ժամը 7-ին Բյուրոյի գրասենյակում կայացավ Երևանում Դաշնակցությունից դեկլարացիայով հեռացած ընկերների առաջին ընդհանուր ժողովը:

Օրակարգի հարցերն են. 1. Բյուրոյի ինֆորմացիոն զեկուցումը և կազմակերպչական հարցեր:

Բյուրոյի կողմից նրա գործունեության մասին ինֆորմացիոն ձևով զեկուցեց ընկ. Ա. Բակունցը...

Խորհրդային Հայաստան, 27 հոկտեմբերի 1923թ.

92. Անկետա թիվ 1

31 հոկտեմբերի 1923թ.*

1. Անուն, հայրանուն և ազգանուն

2. Տարիքը

3. Սոցիալական դրությունը

4. Ընտանեկան դրությունը

5. Որ թվից է կուսակցության մեջ

6. Ինչպիսի աշխատանք է տարել կուսակցության մեջ.

ա) կուսակցական

բ) վարչական

7. Ծննդավայրը

8. Որտեղ է ծառայել և զբաղվում է ներկայումս

9. Ինչպիսի մասնակցություն է ունեցել քաղաքացիական պատերազմին Հայաստանում և մյուս խորհրդային հանրապետություններում

10. Տարագրվել է՞ արդյոք Թավրիզ

11. Ինչով եք զբաղվել Թավրիզում, վարե՞լ եք արդյոք կուսաշխատանք

12. Գտնվելու վայրը և հասցեն

13. Ինչպիսի մասնակցություն եք ունեցել ազգամիջյան կռիվներին և կոտորածներին

14. Կամավորական ջոկատների կազմակերպման ժամանակ

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.224, թ.32: Թարգմ. ռուս.:

* Հիմք է ընդունվել Ռուբեն Վահանի Ղամբարյանի լրացված անկետան և լրացնելու ժամանակը

93. Ովքեր են հեռանում Դաշնակցությունից

20 նոյեմբերի 1923թ.

Մոտ 4 ամիս է, որ Դաշնակցության նախկին կուսակիցների բանակը Հայաստանում քայքայման ուղին է բռնել՝ անհատական, թե խմբովին դեկլարացիաներով, գավառական ու շրջանային համագումարներով միևնույն միտքն ասում՝ հեռանում ենք Դաշնակցությունից, որովհետև այդ կուսակցության վարած քաղաքականությունը աղետաբեր է մեր ժողովրդի համար, որովհետև տարիներից ի վեր նա իր քաղաքական վարքագիծը զուգորդել էր եվրոպական իմպերիալիզմի հաղթանակին, որովհետև Դաշնակցության իշխանությունը Հայաստանում տնտեսական ավերի, ազգամիջյան կռիվների, ժողովրդյան հարստության քայքայման դուռը բացեց:

Եվ այսպես հազար ու մի պատճառաբանություն, մեկը մյուսից խիստ ու արդար, մեկը մյուսից հետևողական: Մեր նպատակը չէ վեր հանել այդ բոլոր որոշումների հասարակական արժեքը, ինչպես և չենք ուզում որոշել, թե ինչո՞ւ այսքան ծավալ ստացավ Դաշնակցության քայքայումը Հայաստանում:

Այսօր բացվող նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումարը այս բոլոր խնդիրների վճռական պատասխանը կտա: Նա պատմական անաչառ վերագնահատումի հետ կմեկնի նաև հիմնական այն պատճառը, որ մղում էր Դաշնակցությանը դեպի ավանտյուրա:

Մեր նպատակն է այժմ վեր հանել մի այլ խնդիր և լուծել թվերի, վիճակագրական տեղեկությունների միջոցով:

Ո՞ր տարրն է հեռանում Դաշնակցությունից, սոցիալական ի՞նչ վիճակի տեր անձինք լքում են Դաշնակցությունը, ինչո՞վ են պատճառաբանում նոքա իրենց հրաժարվելը և արդյո՞ք կուսակցության մեջ կատարած աշխատանքն իրենց իրավունք է տալիս նման վճռական քայլ անելու: Մենք ուզում ենք, օգտվելով այն առիթից, որ նախաձեռնող Բյուրոյի տրամադրության տակ կա հեռացողների անկետաներ, - մի վիճակագրական կազմել հեռացողների ոչ միայն սոցիալական վիճակի, այլև կուսակցական ստաժի, Դաշնակցության մեջ կատարած դերի, տարիքի, կրթության և Դաշնակցությունից հեռանալու պատճառների մասին:

Անկետաները շատ են, սակայն նրանց մեջ մի հիմնական միտք է հոլովվում այս կամ այն կերպ: Հեռանում են Դաշնակցությունից, որովհետև Դաշնակցության ազգային քաղաքականությունն էր սխալ, հե-

ռանում են նրա հակասոցիալիստական ուղու համար: Հեռանում են, որովհետև սնանկացավ Դաշնակցության մտայնությունը, փետրաթափ եղավ և հետևորդների առաջ ցցվեց այդ տգեղ մարմինը՝ սոցիալական այլանդակությունների, քաղաքական ավանտյուրաների, սնամեջ ռոմանտիզմի, անմիտ նպատակների հետապնդելու ամբողջ պարզությամբ:

Թվերը շատ են անողոք, բայց և բնորոշ: Ի՞նչ են ասում նոքա: Սկսենք կուսակցական ստաժից: Ահա տախտակը, որը ցույց է տալիս, թե Դաշնակցությունից հեռացողների մեծ մասը բավական սոլիդ կուսակցական ստաժ ունի:

1890-95՝ 3.3%, 95-900՝ 5.4%, 900-905՝ 22.5%, 905-910՝ 20.8%, 910-915՝ 22.5%, 915-920՝ 25.5%:

Հեռացողների մի քառորդը կուսակցության մեջ մտել է պատերազմի առաջին տարիներին, երբ ամենից շատ հույսեր ուներ հայ ազգայնական միտքը՝ կապած ռուսական ու եվրոպական ինպերիալիստների բանակների հաղթանակին, մի շրջան, որ Դաշնակցության պատմության մեջ գուցե ամենից արկածախնդիրն է, հայկական ռոմանտիզմի ոսկեդարը, երբ պալատական մի կեղծիք, չեղյալ մի վավերագիր հերիք էր ոգևորելու դաշնակցական ղեկավարներին և ռուսական զենքի հաջողության տրամադրելու ժողովրդի նոր զանգվածներ, թող թեկուզ այդ շարժումը վատ անդրադառնար սահմանից այն կողմ ապրող անզեն հատվածի ապահովության վրա: Բնորոշ մի շրջան էր այդ, որ նախադուռը եղավ հետագա դեպքերի՝ կամավորական շարժումից մինչև Փետրվարյան ավանտյուրան, Դաշնակցության ավանտյուրաների մի կալեյդոսկոպ՝ «անգլուխ» պարագլուխների մարտական սխրագործությունների մի շարան, երբ, ինչպես սասունցիներն են ասում իրենց հայտարարության մեջ, «թոփ ու թվընքի ձեն մեր ականջից չէր խլսի»:

Մինչև 900-ական թվականները, մինչև Դաշնակցության գործունեության փոխադրումը Կովկաս, Դաշնակցության մեջ մտնողների տոկոսը մնում է համարյա թե նույն բարձրության վրա, միայն ռեակցիայի օրերին է* , որ տոկոսը մի քիչ իջնում է, հասկանալի պատճառներով:

Երբ ուշի ուշով նայում ենք թվերին, թվականների շարքից մի միտք է ելնում: Ստածում ես, թե որքան սխալ է եղել ընթացքը Դաշնակցության, որքան է դառնացած շարքայինն իր ղեկավարից, որ կյանքի կեսից ավելին կուսակցության բովում եփած-կռած մի նախկին դաշնակցական այսօր (ճիշտ է՝ հոգեկան ծանր ողբերգությամբ) երես է թեքում յուր դավանանքից, հետ նայում անցած տարիներին սարսուռով համոզվում, որ մի քանի աղոտ դրական կետերից զատ անցյալում ամայի ավազուտ է, այստեղ այնտեղ խելակորույս ընդվզումներ, հուսահատ պոռթկումներ, ավելորդ արյունահեղություն, իզուր զոհ, - իսկ այդ բոլորը հարկավոր էր ինչ որ դասի շահերին՝ օտար, թե հարազատ, այդպես պետք էր անել, որովհետև ծապլվարի մի հեղափոխական Փարիզում տեսնվել է մի «նշանավոր» դիվանագետի հետ, խոսել են և ասել, որ հայության ազատագրման համար հարկավոր է պայթեցնել Բանկ-Օտոմանը, ապստամբություններ կազմակերպել թեկուզ 10-ը հազարի դեմ, որովհետև այդպես է ասել այն «նշանավոր» մարդը:

Դառնություն կա, ինչ որ զայրույթ ու խուլ մորմոք նրանց դեմքին, որոնց մեջքը կռացել է զինապահեստներում աշխատելուց, Դաշնակցության գաղտնի հրահանգները կատարելուց: Նայում ես նոցա, լսում նրանց պատմությունները, մի անգամ էլ համոզվում, թե այդ կազմակերպությունը սկզբնական շրջանում ավելի մասսայական էր, ֆանատիկ, կարող էր անել ամեն տեսակի «ուղղափառ հավատացյալին» վայել գործեր:

Երկրորդ տախտակը վերաբերում է հեռացողների կատարած աշխատանքին Դաշնակցության մեջ կամ նրա հրահանգներով: Պաշտոնների, կատարած գործերի մի ամբողջ շարան՝ 900-ական թվականներին Վան գաղտնի զենք փոխադրումից մինչև Փետրվարյան ավանտյուրան, ռումբեր պատրաստողից մինչև բոլշևիկների դեմ կռվող գումարտակի հրամանատարը:

Ահա տախտակը.

Շարքային անդամ՝ 53%, պրոպագանդայի շրջիկ հրահանգիչ՝ 11%, զինվորական գործիչներ՝ 14%, գաղտնի և հատուկ աշխատանք կատարողներ՝ 2%, շրջգավառային կոմիտեի անդամ՝ 16%, կուսակցական բարձր մարմինների անդամ՝ 4%:

Հեռացողների կեսից ավելին շարքային անդամներ են, ապա շրջանային և գավառական կոմիտեների անդամներ: Այս հանգամանքը բնորոշ է հասկանալու համար Դաշնակցության կազմակերպչական սիստեմը: Այստեղ-այնտեղ ինքնագլուխ առաջանում էին կենտկոմիտեներ, շատ անգամ գործում իրար հակառակ: Չափազանց շատ էր Դաշնակցության բյուրոկրատիան շարքային անդամների հետ համեմատած: Յուր լեգալիզացիայի օրերին շատ շրջաններում Դաշնակցության կուսակցական բյուրոկրատիան թվով ավելին էր, քան այդ շրջանի կուսակցականների թիվը:

Զինվորական գործիչների մեջ մտնում են սպաներ, Դաշնակցութ-

* 1907-ից հետո: (Փաստաթղթի ծանոթությունը):

յան զինապահեստների պետեր, ռազմամթերք փոխադրող, խմբապետներ և այլն: Այս հատվածը Դաշնակցության զինված բռունցքն էր, որ հարվածում էր նույնիսկ յուր ծոցում առաջացած որևէ ընդդիմադիր հոսանքի և իրագործողն էր Դաշնակցության բարձր մարմինների, ինչպես և դաշնակցական «ղեկավար» անձանց անհատական քաղաքականության: Գաղտնի և հատուկ աշխատանք կատարողները եղել են Դաշնակցության տեռորիստները, գաղտնի տպարանում աշխատողները և այլն:

Ի դեպ, հիշելու է այստեղ մի դեպք, որ տեղի ունեցավ Երևանի նախկին դաշնակցականների ընդհանուր ժողովին: Ընկ. Թայիրյանը, մի հին դաշնակցական բանվոր, որ Դաշնակցության հիմնվելու օրից ակտիվ մասնակցություն է ցույց տվել, ժողովին, երբ հրաժարվելու խնդիրն էր դրված, կերկեր ձայնով հետևյալը հայտարարեց. «Դաշնակցության առաջին թռուցիկ տպողը ես եմ եղել, որ իմ չորացած կրծքի վրա պահել եմ, քուն ու դադար թողած տարածել, կազմակերպել, ես, որ կյանքս եմ անցկացրել Դաշնակցության մեջ, հիմա հրաժարվում եմ առանց տատանվելու»:

Հուզիչ էր տեսարանը, երբ մի մարդ կյանքի վերջին օրերում խաչ է քաշում յուր հեղափոխական անցյալի վրա և հայտարարում, որ իզուր և սխալ է եղել անցյալի աշխատանքը:

Երրորդ տախտակը վերաբերում է հեռացողների սոցիալական վիճակին: Ինչ խոսք, որ Դաշնակցության շարքային անդամների մեծ մասը գյուղացիներ են եղել՝ մոտ 60% (59.5): Երկրորդ խոշոր գրուպան քաղաքի բնակիչներն են կամ ավելի ճիշտ քաղաքի հետ կապված անձինք իրենց արհեստով կամ զբաղումով՝ մոտ 20% (20.2): Ապա գալիս են արհեստավորներ և բանվորներ՝ 12.7%, ծառայողներ (գրասենյակի աշխատողներ) և ուսուցիչներ՝ 7.5% և այլն:

Ափսոս, որ թվական տվյալներ չկան որոշելու, թե գյուղական ո՞ր խավի ներկայացուցիչներ են հրաժարվում Դաշնակցությունից: Մի քանի շրջաններից ստացած զեկուցումների, նամակների և ժողովների արձանագրությունների համաձայն գյուղի չունևոր նախկին դաշնակցականն է ավելի շուտ արձագանք տալիս Դաշնակցության քայքայման, իսկ սակավաթիվ կուլակներ դեռ տատանվում էին: Ալեքպոլի մի գավառամասի նախկին դաշնակցականները, երբ հավաքվում էին խոսելու այդ խնդրի շուրջը, հենց իրենք են կատարում զտում իրենց շարքերի մեջ և չեն ընդունում այնպիսի նախկին դաշնակցականի հրաժարական, որն արատավոր գործեություն է ունեցել կամ յուր սոցիալական վիճակով կուլակ է, նախկին տանուտեր և այլն:

Չորրորդ տախտակը վերաբերում է հեռացողների ուսման, ունեցած կրթության մակարդակին: Դաշնակցության նախկին անդամների մոտ մի հինգերորդն անգրագետ է: Պատահում են շատ անկետաներ, երբ 20 տարվա ստաժ ունեցող նախկին դաշնակցականը հազիվ է կարողանում յուր անունը ստորագրել: Այս էլ բնորոշ է Դաշնակցության համար: Շարքայինները պետք էին գործի համար, իբր սև աշխատավոր, իբր թնդանոթի միս, ավանտյուրաների զոհ, սակայն ոչ իբր հեղափոխական մասսա, որի կրթության մակարդակը բարձրացնել պարտավոր էին արևելյան, թե հարավային Բյուրոները, գեթ իբր հատուցում այն աշխատանքի համար, որ կատարել է այդ շարքայինը հենց Բյուրոյի համար: Մոտ 60%-ը տարրական կրթություն ունեն, որից մեծ մասը ինքնուսներ են, իրենց աշխատանքով, դժվարին պայմաններում հավանորեն մի քիչ գրագետ անձինք: Քիչ են միջնակարգ և բարձրագույն ուսման տեր անձինք: Դե, ասենք, այդ հասկանալի է: Չէ՞ որ Դաշնակցության «սերուցքն» արտասահմանում է և զբաղված է շատ կարևոր խնդիրների լուծումով, ինչպես, օրինակ, Կաթողիկոսի կոնդակի տպագրման հարցը դաշնակցական «Հայրենիքում» այն մասին, թե յոթ պորտի տեղ թույլատրվում է և հինգ պորտ: Դաշնակցական բժիշկներ, իրավաբաններ և այլն Հայաստանի վերաշինման խնդիրը շատ մանր հարց համարելով, զբաղված են զանազան «դիվանագիտական» գրագրությամբ:

Այսպիսով ուրեմն Դաշնակցությունից հեռացողների կրթության տախտակը հետևյալ պատկերն ունի. անգրագետ՝ 19.5, գրագետ՝ 59.5, միջնակարգ՝ 17.5, բարձրագույն՝ 3.5 %:

Վերջին տախտակը վերաբերում է Դաշնակցությունից հեռացողների տարիքին: Մինչև 20 տարեկան՝ 1%, 20-25 տարեկան՝ 6.5, 25-30 տարեկան՝ 13.8, 30-35 տարեկան՝ 20.5, 35-40 տարեկան՝ 22.7, 40-45 տարեկան՝ 15.1, 45-50 տարեկան՝ 9.2, 50-55 տարեկան՝ 6.3, 55-60 տարեկան՝ 4.9 և 60-ից բարձր՝ 0%: Մաքսիմումն ընկնում է 30-ից մինչև 40: Հասկանալի է, թե ինչու է ընկնում տոկոսը 40-ից հետո: Իսկ մինչև 40-ը, հատկապես մինչև 20 և 25 այդ տոկոսը շատ է թույլ, որովհետև Դաշնակցությունը հետամուտ չէր երիտասարդ գվարդիայի կազմակերպման, և ապա՝ այդ գվարդիան Դաշնակցությունից վաղուց է հեռացել և իբր ավելի հեղափոխական տարր լուծվել մարտական պրոլետարիատի շարքերում:

Թվական այս տեղեկությունները շատ են համառոտ, սակայն նոքա պարզորոշ ասում են, որ Դաշնակցությունից հեռանում են շարքային ակտիվ մասը, կուսակցական ստաժով, եփված ու կոփված անթիվ շարժումների մեջ:

Այն հարցին, թե ինչու են հեռանում Դաշնակցությունից, պատասխաններ շատ կան, բայց հիմնականը մի է՝ հեռանում են ոչ թե լինելու սոսկական քաղաքացիներ, այլ տրամադրելով իրենց բովանդակ ուժերը երկրի վերաշինման, միևնույն ժամանակ և սոցիալիստական հայրենիքի խաղաղության, դիմադրելով այն բոլոր սև ուժերին, որոնք երբևիցէ կփորձեն վրդովել երկրի անդորրը՝ դրսից, թե ներսից:

Աղ. Բակունց

Լրաբեր Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի, թիվ 1, 20 նոյեմբերի 1923թ.:

Ը. Համագումարը նախապատրաստող ՀԿ(բ)Կ Կենտկոմի եռյակը

94. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

2 հոկտեմբերի 1923թ.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու ուղղությամբ տարվող աշխատանքը քաղաքականապես ու կազմակերպորեն ընդգրկելու համար հանձնաժողով ստեղծելու մասին:

Որոշեցին. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Շ. Ամիրխանյան, Ա. Կարինյան և Շահսուվարյան*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.7, թ.48: Թարգմ. ռուս.:

** Շավարշ Ամիրխանյանը Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահն էր, Արտաշես Կարինյանը (Գաբրիելյան)՝ Կենտգործկոմի նախագահի տեղակալը, ապա նախագահը, Ալեքսանդր Շահսուվարյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար (գաղափարական աշխատանքի գծով):*

95. Արձանագրություն թիվ 1

ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից դաշնակների կազմալուծման գծով եռյակի նիստի

3 հոկտեմբերի 1923թ.

Ներկա էին ընկ. ընկ. Շահսուվարյանը, Մելիք-Հովսեփյանը և Ավալյանը:

Նախագահ՝ Շահսուվարյան.

Քարտուղար՝ Ավալյան.

1. **Լսեցին.** Կազմալուծման գծով նախահաշվի հաստատման քննարկումը:

1. **Որոշեցին.** Հաստատել 16.020ռ.63կ. չերվոն ռուբլիներով և ներկայացնել Անդրերկրկոմ:

2. **Լսեցին.** Կազմալուծման գծով կազմակերպական կառուցվածքի նախագծի քննարկումը և հաստատումը:

2. **Որոշեցին.** Նախագիծն ընդունել ուղղումներով տպագիր ձևով և ներկայացնել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Քարտուղարության հաստատմանը:

3. **Լսեցին.** Հրահանգիչներին շրջաններ ուղարկելու կարգի մասին հարցը:

3. **Որոշեցին.**

ա) Հրահանգիչներին անկետավորել:

բ) Համապատասխան մարմիններից նախապես հավաքել անհրաժեշտ տեղեկություններ նրանց մասին, եթե այդպիսի տեղեկություններ առկա չկան և եթե պատասխանատու աշխատողները նրանց գիտեն, ապա նրանց օգտագործել: Միաժամանակ համապատասխան ուղիներով տեղերին հայտնել հետևելու նրանց աշխատանքին և հավաքելու տեղեկություններ:

4. **Լսեցին.** Զավեն Կորկոտյանին օգտագործելու մասին:

4. **Որոշեցին.** Չօգտագործել:

5. **Լսեցին.** Անկետաների նախագծի քննարկումը և հաստատումը:

5. **Որոշեցին.** Հաստատել և պատվիրել 500 օրինակ:

6. Լսեցին. Միջոցների մասին:

6. Որոշեցին. Միջոցներ գտնել ժողկոմխորհի միջոցով մինչև նախահաշվով Անդրերկրկոմից ստանալը:

7. Լսեցին. Մինչև այժմ գավառներ և շրջաններ աշխատանքի մեկնած բոլոր հրահանգիչների ցուցակը հաստատելու մասին:

7. Որոշեցին. Ցուցակ. Սևդաշունի, Միհրան Սերջանյան, Եպիսկոպոսյան՝ էջմիածին: Լոռու գավառ և Ղարաքիլիսա՝ Համսո Տեր-Մարտիրոսյան: Մեղրի՝ Խաչիկ Դանիելյան: Զանգեզուր, Ջուլֆա՝ Կրմենանց: Կոտայքի շրջան՝ Աբգար Հովհաննիսյան: Ալեքպոլ՝ Բակունց:

8. Լսեցին. Գավառային և Համահայաստանյան համագումարի հրավիրման ժամկետը:

8. Որոշեցին.

ա. Գավառային համագումարներն ավարտել ոչ ուշ նոյեմբերի 20-ին:

բ. Համահայաստանյան համագումարը հրավիրել նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման օրը:

գ. Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին այս մասին հաղորդել գավկոմներին:

9. Լսեցին. Հայաստանի Կոմկուսի Երևանի կոմիտեի կողմից առաջադրվող աշխատողների մասին՝ Մինաս Մինասյան, Խաչիկ Տեր-Գրիգորյան, Հակոբ Տեր-Վարդանյան, Սրապիոն (Ժորես), Սոլո:

9. Որոշեցին. Հաստատել, ձևակերպել:

10. Լսեցին. Կենտրոնական բյուրոյի ձևավորման մասին:

10. Որոշեցին. Կենտրոնական բյուրոյի կազմում հաստատել հետևյալ ընկերներին. Բակունց, Կրմենանց, Դանիելյան, Տոնյան, Եպիսկոպոսյան, Տեր-Մարտիրոսյան, Ավալյան (Կենտկոմի ներկայացուցիչ): Նախագահության կազմը հաստատել 3 անձից. նախագահ՝ Բակունց և 2 անդամ՝ Կրմենանց և Տոնյան: Նախագահությունում քարտուղար նշանակել ընկ. Ավալյանին:

11. Լսեցին. Կենտրոնական բյուրոյի քարտուղարի մասին:

11. Որոշեցին. Խնդրել Կենտկոմին քարտուղարի համար տալ պատասխանատու ընկերոջ:

Եռյակի նախագահ՝ Շահսուվարյան
Քարտուղար՝ Ավալյան
Անդամ՝ Մ. - Հովսեփյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.32 և հակ.: Թարգմ. ռուս.:

96. Արձանագրություն թիվ 2

Դաշնակների կազմալուծման գծով ՀԿԿ Կենտկոմին կից Եռյակի նիստի

18 հոկտեմբերի 1923թ.

Ներկա էին ընկ. ընկ. Շահսուվարյանը, Մելիք-Հովսեփյանը և Ավալյանը:

Նախագահ՝ Շահսուվարյան.

Քարտուղար՝ Ավալյան.

1. Լսեցին. Կազմալուծման գծով աշխատանքի ուժեղացումը Ալեքպոլ, Երևան, էջմիածին քաղաքներում, ինչպես նաև Ալեքպոլի գավառում:

1. Որոշեցին. Սևդաշունուն ուղարկել Ալեքպոլ՝ վարելու համար.

ա. Աշխատանք Ամերկոմի բանվորների և ծառայողների շրջանում: Նույն տեղը Պետրոսյանին՝ մտավորականության շրջանում: Ալեքպոլի 5 շրջաններ աշխատանքի ուղարկել 5 հրահանգիչներ:

բ. Սույն ամսի 21-ին հրավիրել ընդհանուր ժողով էջմիածնում, զեկուցողներ ուղարկել Բակունցին, Կրմենանցին և Ավալյանին: Ընկ. Սերջանյանին ուղարկել էջմիածնի գավառ՝ աշխատելու համար ռուսահայ գյուղերի դաշնակների շրջանում:

գ. Երևանում հրավիրել հեռացող դաշնակների ընդհանուր փակ ժողով, այնուհետև ընդհանուր բաց ժողով: Առաջինում դնել բյուրոյի նախագահ ընկ. Բակունցի ինֆորմացիոն զեկուցումը և կազմակերպական հարցերի գծով՝ Ավալյանի զեկուցումը: Երկրորդում դնել զեկուցում դաշնակների կուսակցության գործունեության մասին: Զեկուցող առայժմ չնախատեսել:

դ. Ի ղեկավարություն հայտնել բոլոր գավառներին կազմակերպական կառուցվածքի մասին և սերտ կապ պահպանել գավառների հետ, նրանց տեղյակ պահելով բյուրոյի աշխատանքի մասին և հակառակը՝ տեղեկանալ գավբյուրոների աշխատանքի մասին:

2. Լսեցին. Բյուրոյի կազմում հաստատելու մասին խորհրդակցական ձայնով՝ Սևդաշունուն և վճռական ձայնով՝ Միհրան Սերջանյանին, Արտաշես Պետրոսյանին, Ս. Փոլյանին և Տրդատին:

2. Որոշեցին. Հաստատել:

3. Լսեցին. Նախիջևանի երկրամասում աշխատելու մասին:

3. **Որոշեցին.** Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին պարզել Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի հետ:

4. **Լսեցին.** Ղարաբաղում աշխատելու մասին:

4. **Որոշեցին.** Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին պարզել Կիրակոզովի հետ:

5. **Լսեցին.** Ագիտատորների և պրոպագանդիստների համար Բաքվի բանվորներին ուղղված նամակ-հրահանգի հաստատումը:

5. **Որոշեցին.** Հաստատել, ձևակերպել:

6. **Լսեցին.** Թիֆլիսի և Ղարաբաղի դաշնակներին ուղղված նամակը:

6. **Որոշեցին.** Ուղարկել: Մինչև այդ ձևակերպել բյուրոյի նիստում, նայելով ընկ. Շահսուվարյանի հետ:

7. **Լսեցին.** Ագիտատորների և պրոպագանդիստների համար դաշնակների կազմալուծման գծով Ադրբեջանի և Վրաստանի բյուրոներին կազմակերպական կառուցվածքը և հրահանգն ուղարկելու մասին:

7. **Որոշեցին.** Ձևակերպել բյուրոյի նիստում և ուղարկել:

8. **Լսեցին.** Ադրբեջանի և Վրաստանի բյուրոների հետ կապի մասին:

8. **Որոշեցին.** Հայաստանի բյուրոն սերտորեն կապել Ադրբեջանի և Վրաստանի բյուրոների հետ:

9. **Լսեցին.** Համահայաստանյան համագումարում Վրաստանի և Ադրբեջանի նախկին դաշնակների ներկայության մասին:

9. **Որոշեցին.** Գտնել անհրաժեշտ, ձևակերպել բյուրոյի նիստում և հայտնել:

10. **Լսեցին.** Էջմիածնի գավառային կոնֆերանսի մասին:

10. **Որոշեցին.** Գավառային համագումարը հրավիրել նոյեմբերի 4-ին:

11. **Լսեցին.** Համահայաստանյան համագումար հրավիրելու մասին:

11. **Որոշեցին.** Ի փոփոխումն առաջին որոշման Համահայաստանյան համագումարի բացման օրն ընդունել նոյեմբերի 26-ը, գավառային կոնֆերանսները ավարտել նոյեմբերի 15-ին:

12. **Լսեցին.** Համահայաստանյան համագումարի պատգամավորների նորման:

12. **Որոշեցին.** Ի փոփոխումն առաջին որոշման համագումարի

համար գավառային կոնֆերանսների ընտրությունների նորման 4 պատգամավորներից մեկի փոխարեն սահմանել կեսը:

13. **Լսեցին.** Ելիզավետպոլից Մկրտիչ Սասունցուն (դաշնակ) հրավիրելու մասին (կա նրա համաձայնությունը):

13. **Որոշեցին.** Ճանապարհածախսի համար ուղարկել 150 միլիոն և հրավիրել:

14. **Լսեցին.** Ղարաքիլիսայում դաշնակներ Ցոլակի և Գենյայի դիրքորոշումը պարզելու մասին:

14. **Որոշեցին.** Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին և Մելիք-Հովսեփյանին պարզելու իրենց գծով:

15. **Լսեցին.** Բաքու բյուրոյի ներկայացուցիչ ուղարկելու մասին:

15. **Որոշեցին.** Ձեռնպահ մնալ փող չունենալու պատճառով:

16. **Լսեցին.** Բյուրոյի «Լրաբեր» հրատարակելու մասին:

16. **Որոշեցին.** Հրատարակել, անվանելով Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար հրավիրող նախաձեռնող բյուրոյի Լրաբեր:

17. **Լսեցին.** Հայտարարությունների և նամակների բնագրերը Հայաստանի Չեկա ուղարկելու մասին:

17. **Որոշեցին.** Ժամանակավորապես թողնել բյուրոյում: Որոշ ժամանակ անց հանձնել Չեկային:

18. **Լսեցին.** Ֆինանսների մասին:

18. **Որոշեցին.** Փողի բացակայության կապակցությամբ նորից դիմել Անդրերկրկոմին՝ շտապ ուղարկելու մասին: Մինչև ստանալը հանձնարարել ընկ. Շահսուվարյանին կատարել որոնումներ:

19. **Լսեցին.** Բյուրոյի նախագահության ձևավորման մասին: Ընկ. Ավալյանը հայտարարում է, որ Եռյակի առաջին որոշումը չի կատարել, որովհետև, առաջինը՝ ընկ. Տոնյանը հարմար չէ նախագահության անդամության համար, երկրորդը՝ ընկ. Կրմենանցը և Բակունցը ցանկանում են անցկացնել կուսակցության գաղափարական ղեկավարությունից հեռու մնալու գիծ, ուստի փորձելու համար նրանց ժամանակավորապես ընդունել որպես նախագահ և քարտուղար: Այժմ այդ քերությունները վերացված են և աշխատանքը մղվում է մեր կուսակցության ղեկավարությամբ և, կարծում եմ, որ նրանց վերջնականապես կարելի է հաստատել:

19. **Որոշեցին.** Հաստատել ընկ. Բակունցին նախագահ, ընկ. Կր-

մենանցին քարտուղար: Առաջարկել ընկ. Ավալյանին առաջադրել նախագահության համար երրորդ անդամ:

20. Լսեցին. Նախկին դաշնակների Անդրկովկասյան համագումար հրավիրելու մասին, Ռուսաստանում ապրող դաշնակների մասնակցությամբ:

20. Որոշեցին. Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին ՀԿԿ Կենտկոմի միջոցով պարզել Անդրերկրկոմում:

21. Լսեցին. Ուսանողության շրջանում դաշնակներին կազմալուծելու գծով աշխատանքի մասին:

21. Որոշեցին. Հանձնարարել բյուրոյին: Ինչ վերաբերում է Դաշնակցությանը և աշակերտական միությանը <հարցը> հանձնել ՀԿԵՄ Կենտկոմին կից բյուրոյին:

Նախագահ՝ Շահսուվարյան

Քարտուղար՝ Ավալյան

Անդամ՝ Մ. - Հովսեփյան

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.39 և հակ.: Թարգմանություն ռուսերենից:

97. Արձանագրություն թիվ 3

Դաշնակների կազմալուծման գծով ՀԿԿ Կենտկոմին կից Եռյակի նիստի

26 հոկտեմբերի 1923թ.

Ներկա էին ընկ. ընկ. Շահսուվարյանը, Մելիք-Հովսեփյանը, Ամիրխանյանը և Ավալյանը:

Նախագահ՝ Շահսուվարյան

Քարտուղար՝ Ավալյան.

1. Լսեցին. Նախկին դաշնակների Համահայաստանյան համագումար հրավիրելու օրվա մասին:

1. Որոշեցին. փոխել նախորդ որոշումները և համագումարի բացումը նշանակել նոյեմբերի 20-ին առավոտյան ժամը 11-ին:

2. Լսեցին. Գավառային համագումարների հրավիրման օրվա մասին. Ալեքսանդրապոլ, Փամբակ-Ղարաքիլիսա և Երևան:

2. Որոշեցին. Նշանակել նոյեմբերի 18-ին, որի մասին հանձնարարել ընկ. Շահսուվարյանին շրջաբերական-կարգադրություններ ուղարկել գավառներ: Բոլոր միջոցները ձեռնարկել, որպեսզի Համահայաստանյան համագումարի պատգամավորները Երևանում լինեն 19-ի երեկոյան:

3. Լսեցին. Բյուրոյում Բալախանի ակտիվ բանվոր Սրապիոնին (Ժորես) մտցնելու մասին:

3. Որոշեցին. Մտցնել: Հանձնարարել Ավալյանին կատարել:

4. Լսեցին. Բյուրոյի նախագահության թվաքանակի մասին:

4. Որոշեցին. Ի փոփոխումն նախորդ որոշման հաստատել Բյուրոյի ներկա կազմը 5 հոգուց. նախագահ՝ Բակունց, քարտուղար՝ Կրմենանց, նախագահի տեղակալ՝ Փոլյան, նախագահության անդամներ՝ Ա. Պետրոսյան և Ավալյան:

5. Լսեցին. Բյուրոյի որոշումը աշխատանքները արագացնելու համար ընկ. Բակունցին և Թումյանին Ալեքպոլ ուղարկելու մասին:

5. Որոշեցին. Հաստատել:

6. Լսեցին. Եռյակի հոկտեմբերի 18-ի որոշումը վերացնելու մասին. արձանագրություն թիվ 2՝ դաշնակ ուսանողների շրջանում տարվող աշխատանքի մասին:

6. Որոշեցին. Վերացնել առաջին որոշումը: Ուսանողների և երիտդաշնակցականների կազմալուծման գծով ամբողջ աշխատանքը հանձնել երիտդաշմիության քայքայման գծով բյուրոյին: Դաշնակների համագումար հրավիրող բյուրոն իր ներկայացուցիչն ունի երիտդաշմիության համագումար հրավիրող բյուրոյում և փոխադարձաբար:

7. Լսեցին. Համահայաստանյան համագումարի օրակարգը որոշելու և դրա հետ կապված այլ կազմակերպչական հարցերի մասին:

7. Որոշեցին. Սահմանել հետևյալ օրակարգը.

ա. Միջազգային քաղաքական դրության մասին: Զեկուցող՝ Լուկաշին:

բ. Ազգային հարցը և Հոկտեմբերյան հեղափոխությունը: Զեկուցող՝ Մռավյան:

գ. Նախկին դաշնակների համագումար հրավիրող բյուրոյի գործունեության մասին ինֆորմացիոն զեկուցում: Զեկուցող՝ Բակունց:

դ. Դաշնակցության գործունեությունը վերագնահատելու և, Դաշնակցությունը, որպես կազմակերպություն, վերացնելու մասին: Զեկուցող առաջադրել բյուրոյի անդամ դաշնակներից, իսկ հարմար զեկուցող չլինելու դեպքում զեկուցումը հանձնարարել Ավալյանին:

ե. Նախկին դաշնակների համագումար հրավիրող բյուրոյի կազմակերպությունը վերացնելու մասին:

ը. Մինչև այժմ Դաշնակցության շարքերում մնացած դաշնակների աշխատավոր զանգվածներին համագումարի անունից կոչ ուղղելու մասին:

է. Ընթացիկ հարցեր:

8. Լսեցին. Պատգամավորների մեկնելու համար գավառներ փող ուղարկելու մասին:

8. Որոշեցին. Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին առաջին հերթին ուղարկել Զանգեզուր և Նոր Բայազետ:

9. Լսեցին. Համագումար հյուրեր հրավիրելու մասին:

9. Որոշեցին. Հրավիրել ՀԿԿ Կենտկոմի, Հայաստանի Երևանի կոմիտեի, Կենտգործկոմի, ժողկոմխորհի, «Խորհրդային Հայաստանի» խմբագրության, Հայհեռագործի, գործկոմի, արհմիության ներկայացուցիչներին: Վճռական ձայնով հրավիրել դաշնակների կազմալուծման Բաքվի և Վրաստանի բյուրոներին, ինչպես նաև Երիտդաշնության կազմալուծման բյուրոյին:

10. Լսեցին. Համագումարի նախագահության մասին:

10. Որոշեցին. Ընտրել 21 անդամ. նախկին դաշնակների համագումար հրավիրող բյուրոյի ամբողջ նախագահությունը, էջմիածին՝ 4 մարդ, որից 2-ը արևմտահայ, Նոր Բայազետ՝ 2, Ալեքպոլ՝ 3, Փամբակ-Ղարաքիլիսա՝ 2, Զանգեզուր՝ 2, Երևան՝ 1, Դիլիջան՝ 1, Պարսկաստանից ժամանողներ՝ մեկ և մեկական ներկայացուցիչ Կենտկոմից, ժողկոմխորհից և Կենտգործկոմից, անձամբ Շահսուվարյանը, Միքայելյանը և Համբարձումյանը:

Քարտուղարությունն ընտրել 5 հոգուց. մեկական բյուրոյից, Զանգեզուրից, Ալեքպոլից, Երևանից և էջմիածնից:

11. Լսեցին. Համագումարի հաշվետվությունը սղագրելու մասին:

11. Որոշեցին. Հատուկ հրավիրել սղագրողներ.

12. Լսեցին. Մանդատային հանձնաժողովի մասին:

12. Որոշեցին. Մանդատային հանձնաժողովն ընտրել 5 հոգուց՝ բյուրո, Նոր Բայազետ, էջմիածին, Զանգեզուր, Ալեքպոլ՝ մեկական ներկայացուցիչ:

13. Լսեցին. Համագումարը լուսանկարելու մասին:

13. Որոշեցին. Համագումարը լուսանկարել:

14. Լսեցին. Հեռացող դաշնակներին քաղաքացիական իրավունքներ տրամադրելու մասին:

14. Որոշեցին. Եռյակը չի առարկում: Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին հարցը ներկայացնել համապատասխան մարմիններին: Նույնը դաշնակցական բանակի սպաների վերաբերյալ:

15. Լսեցին. Հեռացած նախկին դաշնակների Կովկասյան համագումար հրավիրելու մասին:

15. Որոշեցին. Գտնել անցանկալի: Հանձնարարել ընկ. Շահսուվարյանին ՀԿԿ Կենտկոմի նախագահության միջոցով պարզել Անդրերկրկոմում:

Եռյակի նախագահ՝ Շահսուվարյան
Քարտուղար՝ Ավալյան
Անդամ՝ Մ. -Հովսեփյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.48-49: Թարգմ. ռուս.:

Գ. Համագումար նախաձեռնող բյուրոն

98. Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող գավառական ենթաբյուրոներին

Կազմակերպական ստրուկտուրա*

Շրջաբերական
3 հոկտեմբերի 1923թ.
Հայաստանի բյուրո

Գավառական ենթաբյուրոներ

Բյուրոյի կապը գավենթաբյուրոների հետ

Բյուրոյի նպատակը

---

* *Բերվում են միայն «Կազմակերպական ստրուկտուրայի» (կանոնադրության) կետերի (հոդվածների) վերնագրերը:*

Կանոնադրության մի այլ տարբերակում, որը ունի «Դաշնակցության քայքայման ստրուկտուրա» վերնագիրը, կա մի կետ ևս՝ Աշխատանքը գյուղում, ինչպես նաև հետևյալ վերջին կետը՝ Դաշնակցության քայքայման պատմության արխիվային հանձնաժողովի մասին: (Տե՛ս նույն տեղում, թ.7 և հակ.-8 և հակ.):

Հայաստանի համագումար

Ինչ պետք է լինեն համագումարի որոշումները

Շրջանային կոնֆերանսներ

Աշխատանքը քաղաքներում

Գավառական կոնֆերանսներ

Ինչ պետք է լինեն գավկոնֆերանսների որոշումները

Գավենթաբյուրոների նպատակը

Գավենթաբյուրոների աշխատանքի ավարտման ժամանակը

Անկետացում

Դեկլարացիայի հրատարակումը

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար
նախաձեռնող բյուրո

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.212, թ.1 և հակ.-4 և հակ.:

99. Հրահանգ

<3 հոկտեմբերի 1923թ.>*

1. Շրջան անցնելուց շրջիկը անմիջապես ներկայանա գավկոմկուսի պատքարտուղարին կամ տեղական իշխանության:

2. Յուրաքանչյուր շրջիկ անցնելով շրջան, պարտավոր է ամենից առաջ համախմբել իր շուրջը շրջանում գտնվող նախկին ակտիվ դաշնակցականներին և համակրողներին:

3.Ժողովին օրինական բնույթ տալու համար ընտրվում է նախագահ և քարտուղար, որոշվում է օրակարգը, ընդունվում են որոշումներ, և այս բոլորը արձանագրվում է, վավերացվում ներկա եղողների կողմից, ստորագրությամբ ու հաստատվում նախագահի, քարտուղարի և շրջիկ ընկերոջ ստորագրությամբ:

Ստորագրող ընկերները պարտավոր են գրել և իրենց ստաժը, տիտղոսն ու մականունը, եթե ունեցել են այդպիսին:

Աշխատել խույս տալ արատավոր անցյալ ունեցող դաշնակցականներից:

* *Ժամանակը դրվում է ըստ նույն օրվա համանման շրջաբերականի (տե՛ս 98 փաստաթուղթը):*

Ժողովի օրակարգի նախագիծ

1.Նախագահության ընտրություն.

2.Դաշնակցության գործունեության վերագնահատում.

3. Խորհրդային իշխանությունը Հայաստանում և Անդրկովկասում.

4. Բանաձևի որոշում.

5. Գավառական համագումարի համար ներկայացուցիչների ընտրություն:

Ցանկալի է, որ ժողովին նախագահի ոչ թե շրջիկ ընկերը, այլ տեղական ընկերներից որևէ մեկը: Օրակարգի կետերը սպառելուց հետո ժողովականների կողմից ընդունվում է դեկլարացիա:

Ծանոթություն. Այն ժողովականները, որոնք չեն ցանկանա միանալ դեկլարացիային խղճի մտոք, իրավունք ունեն չստորագրել, իսկ այդպիսիների մասին ոչ ոք իրավունք չունի որևէ բան հրատարակել:

6. Շրջանային համագումարին մասնակցելու համար ընտրվում են մինչև չորսիցը՝ մի ներկայացուցիչ, 6-8-ը՝ երկու և այլն: Շրջանային համագումարի համար աշխատել ներկայացուցիչներ ընտրել ակտիվ, ստաժ, տիտղոս, հմայք ունեցող մաքուր դաշնակցականներից:

7. Ցանկալի է, որ ժողովը ընդունի հետևյալ որոշումները.

ա. Դաշնակցությունը որպես ազգային և ոչ սոցիալիստական մի կուսակցություն, որի գործունեությունը աղետաբեր հետևանք ունեցավ հայ աշխատավորության համար:

բ. Ժողովականները հեռանում են Դաշնակցությունից և ընդմիշտ խզում իրենց կապերը նրա հետ:

գ. Ընդունելով բանվորա-գյուղացիական իշխանության անհրաժեշտությունը, ժողովականները ընդունում են նաև 3-րդ Ինտերնացիոնալի պլատֆորմը, խոստանում իրենց ուժերը նվիրել նրա պաշտպանության:

դ. Ընտրում են իրենց ներկայացուցիչները շրջանային համագումարին մասնակցելու համար, ընդունում են նաև Հայաստանի համագումարի պատմական անհրաժեշտությունը:

Ընդունված դեկլարացիան, ինչպես և ժողովի արձանագրությունը հայտարարել «Խորհրդային Հայաստանում»:

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար
նախաձեռնող բյուրո

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.212, թ.9 և հակ.:

100. Արձանագրություն թիվ 2

ՀՅԴ լիկվիդացիոն բյուրոյի երկրորդ նիստի

5 հոկտեմբերի 1923թ.

երեկոյան ժամը 7

Ներկա էին բյուրոյի անդամներ ընկ. ընկ. Աղ. Բակունց, Նիկ. Կրմենանց, Հայկ Ավալյան, Խաչիկ Դանիելյանց և Ռուբեն Տոնյան

Ժողովի նախագահ՝ Հ. Ավալյան.

Քարտուղար՝ Ն. Կրմենանց.

Օրակարգի խնդիրներ.

1. Ինիցիատիվ բյուրոյի ուժեղացում

2. Թավրիզից վերադարձած նախկին դաշնակցական ընկերների օգտագործումը

3. Թավրիզում մնացած տարագիր դաշնակցականների վերադարձի կարևորությունը

4. Շրջաններում կատարվող աշխատանքների ուժեղացումը

5. Ինիցիատիվ բյուրոյի գավառական ու շրջանային մարմինների կապի ուժեղացումը

6. Երևանի Ուղղիչ տնից արձակված նախկին դաշնակցականներին ժողովի կանչելու խնդիրը:

1. Լսեցին. Աղ. Բակունց. Մեր տեսակետների վրա կանգնած ու Դաշնակցության լիկվիդացիան կարևոր ու անհետաձգելի պահանջ համարող ընկերներից մենք պետք է հրավիրենք մեր բյուրոյի մեջ աշխատելու և ընդարձակելու մեր աշխատանքները:

1. Որոշեցին. Ինիցիատիվ բյուրոյի կազմը ուժեղացնել և բյուրոյի անդամների թիվը հասցնել 5 հոգու և այդ թվի մեջ մտցնել այնպիսի նախկին դաշնակցական ընկերներից, որոնք իրոք ակտիվ ու գիտակցաբար աշխատում են լիկվիդացիայի ենթարկել Դաշնակցություն կուսակցությունը, և որոնք աչքի են ընկած գավառներում, շրջաններում և որոնց հետևից կապված են դաշնակցական մասսաներ՝

2. Լսեցին. Ն. Կրմենանց. Թավրիզից վերադարձած ընկերների մեջ կան անհատներ, որոնք կարող կլինեն օգտավետ լինել մեր սկսած աշխատանքին, ուստի մենք պետք է այդպիսիներին ներս քաշենք և լծենք աշխատանքի:

2. Որոշեցին. Օգտագործել և աշխատանքի լծել միմիայն այնպիսիներին, որոնք ինքնակամորեն ցանկություն կհայտնեն մեր ցանկացած և տված ինստրուկցիայի համեմատ աշխատանքներ տանել:

3. Լսեցին. Թավրիզում դեռ կան բավականաչափ դաշնակցականներ, որոնց շարքերը օրեցօր քայքայվում-լուծվում են: Մենք, օգտվելով այդ հանգամանքից, պետք է միջոցներ ձեռք առնենք և այդ գիտակցության եկած նախկին մոլորվածներին վերադարձնենք Հայաստան:

3. Որոշեցին. դեռ այժմս միմիայն գրավոր ինֆորմացիաներ ուղարկել Թավրիզում գտնվող այն ընկերներին, որոնք քայքայման պրոցեսի առաջ են կանգնած և իրազեկ չեն մեր ներկա աշխատանքների մասին:

4. Լսեցին. Գավառներում և շրջաններում լիկվիդացիոն աշխատանքները տարվում են թույլ:

4. Որոշեցին. Շրջանների աշխատանքները դարձնել հարվածային. Նոր Բայազետի շրջան ուղարկել ընկ. Եզիկ Տեր-Գևորգյանին, իսկ Դարալագյազի շրջան՝ ընկ. Լիպարիտ Զաքարյանին:

5. Լսեցին. Գավառային և շրջանային ինիցիատիվ մարմինների կապը մեր ինիցիատիվ բյուրոյի հետ տարվում է շատ թույլ, որի ուժեղացումը հարվածային պահանջ է:

5. Որոշեցին. Ուժեղացնել ինիցիատիվ բյուրոյի կապը գավառների ու շրջանների հետ և շաբաթական երկու անգամ տալ նրանց գրավոր ինֆորմացիաներ և ստանալ այդպիսին:

6. Լսեցին. Երևանի Ուղղիչ տնից արձակված նախկին դաշնակցականներին ժողովի կանչելը անհրաժեշտ է:

6. Որոշեցին. Հրավիրել ժողովի, վերցնել կուսակցական անկետաներ և տալ ինֆորմացիա դաշնակցության քայքայման ու լիկվիդացիայի անհրաժեշտության մասին. այնուհետև նրանց մեջ եղած ոչ կասկածելիներին լծել աշխատանքի:

Ժողովի նախագահ՝ Հ. Ավալյան

Քարտուղար՝ Ն. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.1 և հակ.:

101. Արձանագրություն թիվ 3

ՀՅԴ լիկվիդացիոն բյուրոյի հրավիրանք կայացավ Երևանի կենտրոնական Ուղղիչ տնից արձակված նախկին դաշնակցականների ժողովը, մասնակցությամբ բյուրոյի անդամներ Աղ. Բակունցի, Հ. Ավալյանի, Ն. Կրմենանցի, Խ. Դանիելյանի և Ռուբեն Տոնյանի:

6 հոկտեմբերի 1923թ.

երեկոյան ժամը 7

Ներկա էին Ուղղիչ տնից արձակված հետևյալ ընկերները՝

Վ. Մադոնց, Գ. Գրիգորյան, Գ. Նասիբյան, Լիպարիտ Զաքարյան, Լևոն Բալյան, Ռ. Ղամբարյան, Հայկ Ստեփանյան և Սաֆար Մելիք-Սարգսյան:

Ժողովի նախագահ ընտրվեց

Հ. Ավալյան .

Քարտուղար՝ Ն. Կրմենանց.

Օրակարգի հարցերն էին.

1. Բյուրոյի ինֆորմացիան:

2. Ուղղիչ տնից արձակվածների դեկլարացիայի խնդիրը

3. Նրանց ներկայացուցիչները համագումարի համար

4. Նրանց ճանապարհածախսը հոգալու խնդիրը:

1. Լսեցին. Ընկ. Ա. Բակունցը ընդարձակ կերպով զեկուցեց ինիցիատիվ բյուրոյի և գավառական ու շրջանային մարմինների կատարած աշխատանքների ու հազարավոր ընկերների սթափման ու ՀՅԴ շարքերից հեռացման մասին և մանրամասնորեն կանգ առավ այն հանգամանքի վրա, որ այլ կերպ վարվել ու լռել դաշնակցական մասսան անկարող է, որովհետև կուսակցության գլուխ կանգնած շեֆերը անտես առնելով հայ աշխատավորության շահերը, ինքնագլուխ կերպով նրանց ծառայեցնում էին իրենց քմահաճույքին ու տանում դեպի կործանում:

Ընկ. Ավալյանը նույնպես տվեց լիակատար ինֆորմացիա խորհրդային իշխանության ու Կոմունիստական կուսակցության շինարարական ու սոցիալիստական հզոր աշխատանքների շուրջը:

Ն. Կրմենանց. Ընկերներ, ձեր կողմից տված դեկլարացիան, որը խմբագրված է Ուղղիչ տնում, մեզ համար մեծ նշանակություն չունի, և դա չի կարող հավաստիացնել մեզ, որ դուք դեռ տատանումների մեջ չեք: Ամենակարևորը մեզ և ձեզ համար այն է, որ դուք Ուղղիչ տնից դուրս, ձեր այս ազատ օրերում, որպես նախկին ակտիվ ու գիտակից դաշնակցականներ, հրապարակ գայիք և ձեր անհատական հոդվածներով քննադատեիք ձեր կուսակցության անցյալը ու ներկան և պարզեիք ձեր տեսակետները:

Ընկ. Կրմենանցից հետո խոսում է Ուղղիչ տնից արձակված Գ. Գրիգորյանը. Մեզ այլ ճանապարհ չունենք, բացի երրորդ Ինտերնացիոնալին հարելը: Մենք առանձին-առանձին կարծիքներ ու համոզմունքներ չունենք: Մենք բոլորս կանգնած ենք Հայաստանի շարքային դաշնակցականների վերջին արվող տեսակետների վրա և կարևոր ենք համարում հայտարարել Ուղղիչ տնում մեր խմբագրած դեկլարացիան:

2. Լսեցին. Ընկ. Ռ. Ղամբարյան. ընկերներ, մեր դեկլարացիան պետք է փոփոխվի և ապա հայտարարվի թերթում և միաժամանակ պետք է խոստովանվել, որ մենք հլու-հպատակ ծառայել ենք մանր բուրժուական իդեոլոգիային, բայց միաժամանակ պետք է մեր դեկլարացիայում խոստովանվենք, որ մեր արած սխալները մեր կողմից արված են գիտակցաբար և այլն:

Այս բոլորից հետո, ընկերներ, մենք Ուղղիչ տնից ազատվածներս մեր ներկայացուցիչները պետք է ընտրենք Համահայաստանյան նախկին դաշնակցականների համագումարի համար:

Ընկ.Գ. Գրիգորյան. դեմ եմ դեկլարացիայի հիմնական փոխոխության ենթարկելուն: Առաջարկում եմ նրա միջից հանել այն 4 ստորագրությունները, որոնք դեռ Ուղղիչ տնում բանտարկված են և դուրս հանել դեկլարացիայից «մասսայական» բառը, նույնպես և «Ուղղիչ տան հանցավորներ» նախադասությունը: Իսկ համագումարի համար իմ կողմից առաջարկում եմ Ուղղիչ տնից դուրս եկածներից ընտրել 4 ներկայացուցիչ:

2. Որոշեցին. Ընդունել ընկ. Գրիգորյանի առաջարկությունները և որից հետո տպագրության տալ դեկլարացիան:

3. Լսեցին. Տրվում է ներկայացուցիչների թեկնածուների ցուցակը:

3. Որոշեցին. Համահայաստանյան նախկին դաշնակցականների համագումարի համար ընտրվեցին ներկայացուցիչներ՝ Գ. Գրիգորյանց, Գ. Նասիբյան, Վ. Մադոնց և Ռ. Ղամբարյան:

4. Լսեցին. Գևորգ Գրիգորյան. Մեր ընկերները արձակվելով Ուղ-

դիչ տնից, ոչ մի նյութական միջոց չունեն իրենց ծննդավայրերը ճանապարհվելու, ուստի խնդրում եմ ինիցիատիվ բյուրոյի անդամներիդ միջնորդել ուր հարկն է՝ մեզ տալ դրամական օգնություն, որպեսզի մենք կարողանանք ճանապարհվել մեր տները:

4. Որոշեցին. Դիմել ուր հարկն է՝ ընկերների համար դրամ ստանալ և, նրանց ճանապարհածախսը տալով, ճանապարհել իրենց ցանկացած վայրերը:

Ժողովի նախագահ՝ Հ. Ավալյան

Քարտուղար՝ Ն. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.2 և հակ. -3:

102. Արձանագրություն թիվ 5

Նախկին դաշնակցականների Հայաստանյան համագումարի նախաձեռնող բյուրոյի նիստի

10 հոկտեմբերի 1923թ.

Նախագահում է Ընկ. Ավալյան.

Քարտուղարությամբ ընկ. Սևդաշունու

Օրակարգի հարցեր.

1. Նախորդ նիստերի արձանագրությունների ընթերցումը և վավերացումը:

2. Էջմիածնի գավառ ուղարկված ընկերներին բյուրոյի մեջ մտցնելու խնդիրները:

3. Նախաձեռնող բյուրոյի անվան մասին:

4. Թավրիզ ուղարկվելիք նամակի ընթերցում:

5. Բյուրոյի ժամանակավոր նախագահի և քարտուղարի ընտրություն:

6. Շրջաններ ընկերներ ուղարկելու խնդիր:

7. Գավառներ ուղարկված ընկերների զեկուցման մասին:

8. Դասախոսություն և ընդհանուր ժողով գումարելու հարցը:

9. Երևանի բյուրոն ուժեղացնելու համար Թավրիզից մի քանի հոգի

բերելու հարցը:

1. Լսեցին. 1,2,3 և 4-րդ նիստերի արձանագրությունների ընթերցումը:

1. Որոշեցին. Հաստատել: Հանձնարարել նորընտիր նախագահությանը անմիջապես կյանքի մեջ մտցնել 2-րդ արձանագրության 5-րդ կետը: Համաձայն 4-րդ նիստի արձանագրության դիմել Հողժողկոմին ընկ. Տոնյանին 5 օրով ազատել Ալեքպոլ և Նոր Բայազետ ուղարկելու համար:

2. Լսեցին. Էջմիածնի գավառ ուղարկված ընկերներին բյուրոյի մեջ մտցնելու խնդիրը:

2. Որոշեցին. Ընկ. ընկ. Սերջանյանին և Սևդաշունուն ընդունել բյուրոյում. առաջինն ընդունվում է միաձայնությամբ, իսկ երկրորդը՝ 4 ձայն ընդդեմ 2-ի, 1-ի ձեռնպահությամբ: Ընկ. Սևդաշունուն վճռական կամ խորհրդակցական ձայն տալը մնում է անորոշ:

3. Լսեցին. Բյուրոյի անվան մասին: Ընկ. Ավալյանը առաջարկում է բյուրոն անվանել նախկին Դաշնակցությունից հեռացող Համահայաստանյան համագումար նախաձեռնող բյուրո:

Ընկ. Բակունցն առաջարկում է անվանել Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի նախաձեռնող բյուրո:

Ընկ. Կրմենանցն առաջարկում է անվանել Դաշնակցությունից հեռացողների Հայաստանյան համագումար նախաձեռնող բյուրո:

3. Որոշեցին. Ձայների մեծամասնությամբ ընդունվում է ընկ. Բակունցի առաջարկությունը:

4. Լսեցին. Թավրիզ ուղարկվելիք նամակների մասին:

4. Որոշեցին. Անհատական նամակների բովանդակությանը ծանոթանալուց հետո նամակներ ուղարկել Թավրիզ, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի միջոցով:

5. Լսեցին. Բյուրոյի ժամանակավոր նախագահի և քարտուղարի ընտրություն:

5. Որոշեցին. Միաձայնությամբ նախագահ է ընտրվում ընկ. Ա. Բակունց և քարտուղար ընկ. Կրմենանց:

6. Լսեցին. Շրջաններ ընկերներ ուղարկելու խնդիրը:

6. Որոշեցին. Ղամարլուի շրջան ուղարկել ընկ. Գ. Բաբախանյանին, Հ. Թարվերդյանին, Հ. Տեր-Հակոբյանին և Խաչիկ Տեր-Վարդանյանին:

Դարալագյազի շրջան ուղարկել ընկ. Միերին, Ախտայի շրջան ընկ. Սոլոյին և Արամ Տոնյանին:

Էջմիածնի շրջանի մնացորդ գյուղեր ուղարկել ընկ. Եպիսկոպոսյանին, Ալեքպոլ, ամերիկյան բանվորների մեջ աշխատելու համար, ուղարկել ընկ. ընկ. Հմայակ Սևդաշունուն և Սերջանյանին, որից հետո վերջինին ուղարկել Զանգիբասարի շրջան:

7. **Լսեցին.** Գավառներից վերադարձող ընկերների գործունեության մասին զեկուցում տալը:

7. **Որոշեցին.** Առաջարկել ընկերներին ներկայացնել գրավոր համառոտ տեղեկություններ:

8. **Լսեցին.** Ընդհանուր ժողովներ գումարելու հարցը:

8. **Որոշեցին.** Հաջորդ շաբաթ օր նշանակել Դաշնակցությունից հեռացածների ընդհանուր ժողով, օրակարգ ունենալով.

ա. Ինֆորմացիոն զեկուցում բյուրոյի գործունեության մասին.

բ. Կազմակերպչական խնդիրներ.

գ. Ընթացիկ հարցեր.

ա. Օրակարգի մասին զեկուցելու է ընկ. Բակունցը, իսկ երկրորդը՝ ընկ. Ավալյանը:

9. **Լսեցին.** Երևանի բյուրոն ուժեղացնելու համար Թավրիզից մի քանի ընկերներ տեղս փոխադրել տալու մասին:

9. **Որոշեցին.** Հետաձգել երրորդ հերթական նիստին:

Նախագահ՝ Հ. Ավալյան

Քարտուղար՝ Սևդաշունի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.4 և հակ.:

103. Արձանագրություն թիվ 6

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաշեռնող բյուրոյի նիստի

12 հոկտեմբերի 1923թ.

Նիստին ներկա էին Ա. Բակունց, Ն. Կրմենանց, Խ. Դանիելյան, Հայկ Ավալյան, Ռ. Տոնյան, Մ. Սերջանյան և Արտաշես Պետրոսյան:

Նախագահում է Ա. Բակունց.

Քարտուղարում է Ն. Կրմենանց.

Օրակարգի հարցեր.

1. Նախորդ նիստի թիվ 5 արձանագրության ընթերցումը.

2. Համագումարի ռեգլամենտը.

3. Երևանի և Ալեքսանդրապոլի աշխատանքները.

4.Սեփական «Լրաբեր» թերթի հրատարակությունը.

5. Նոր ընկերների ընտրություն և գավառները նոր ընկերներ ուղարկելու անհրաժեշտությունը.

6. Հայաստանից դուրս Խորհրդային Ֆեդերացիայում գտնվող դաշնակցական կազմակերպությունների մասին.

7. Ֆինանսական մատակարարման մասին.

8. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին.** Նախորդ նիստի թիվ 5 արձանագրության ընթերցումը:

1. **Որոշեցին.** Հաստատել և կյանքի մեջ կիրառել բոլոր կետերը:

2. **Լսեցին.** Համագումարի նորմայի և օրվա մասին:

2. **Որոշեցին.** Բացառություն համարելով այն շրջանները, որտեղ աշխատանքները կատարվել վերջացել են, իսկ մյուս մասերում կազմակերպել նաև շրջանային, ապա գավառական և, ի վերջո, Համահայաստանյան համագումար: Նորմա ընդունել. շրջանային կոնֆերանսների համար 4-ից՝ մեկ, շրջանայինից գավառակայինի <համար> 4-ից՝ մեկ, քաղաքից գավառակայինի <համար> 5-ից՝ մեկ: Գավառական կոնֆերանսի ներկայացուցիչների կեսը ընտրվում են Համահայաստանի համագումարի պատգամավորներ:

Համագումար նշանակել նոյեմբերի 26-ին, աշխատանքները գավառներում վերջացնել 15-ին, բոլոր արձանագրությունները և դեկլարացիաները կենտրոնացնել Երևանում՝ 20-ին:

3. **Լսեցին.** Ալեքպոլի աշխատանքների մասին:

3. **Որոշեցին.** Ընկ. Ա. Պետրոսյանին ուղարկել Ալեքպոլ՝ աշխատանքներ տանելու համար: Ընկ. Տոնյանի առաքումը 15 օրով հետաձգվում է:

4. **Լսեցին.** Թերթ հրատարակելու խնդիր:

4. **Որոշեցին.** Հրատարակել «Լրաբեր» անունով*: Հրատարակչական աշխատանքները հանձնարարել ընկ. Ա. Բակունցին: Բյուրոն ամբողջ կազմով հանդիսանում է խմբագրական կոլեգիա:

5. **Լսեցին.** Բյուրոյի կազմը ուժեղացնելու և գավառները նոր ընկերներ ուղարկելու մասին:

5. **Որոշեցին.** Ձայնի իրավունքով բյուրոյի անդամ ընդունել ընկ. Արտաշես Պետրոսյանին: Հանձնարարել ընկ. Ավալյանին մի ընկեր գտնել Դիլիջան ուղարկելու համար:

6. **Լսեցին.** Հայաստանից դուրս Խորհրդային Ֆեդերացիայի զանազան մասերում գտնվող դաշնակցական կազմակերպությունների մասին:

6. **Որոշեցին.** Համահայաստանյան համագումարի ուշադրությունը հրավիրել և միջնորդել ապագայում գումարելու Համահայկական դաշնակցական համագումար:

7. **Լսեցին.** Ֆինանսական մատակարարման մասին:

7. **Որոշեցին.** Ֆինանսական հաշիվները պահելու համար ընտրել ընկ. Տոնյանին, դրամական միջոցները ստանալ ընկ. Ավալյանից:

8. **Լսեցին.** Ընթացիկ հարցեր:

8. **Որոշեցին.**

ա. Մեղրու շրջանի նախկին դաշնակցականների դեկլարացիայի մասին:

ա. Դեկլարացիան, երկար լինելով, չտպագրել: Բյուրոյի անունից «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրության մի բաց նամակ ուղղել և հայտնել Մեղրու շրջանի դաշնակցականների հեռանալու մասին:

բ. Մամիկոն Տեր-Հարությունյանի դիմումը Դաշնակցության քայքայման գործում աշխատելու համար:

բ. Մերժել:

գ. Գավառներից ու շրջաններից վերադարձած ընկերների գրավոր

* *Հայտնաբերվել է թերթի թիվ 1-ը, որը պահվում է ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ-ում:*

զեկուցումների ընթերցումը:

գ. Ընկ. ընկ. Սերջանյանի, Սևդաշունու և Եպիսկոպոսյանի գործունեությունը համարել բավարար, զեկուցումն ընդունել ի գիտություն, հանձնարարել ընկ. ընկ. Ավալյանին, Կրմենանցին, Պետրոսյանին՝ կազմված եռյակին, մշակելու մի ընդհանուր հրահանգ բոլոր շրջիկների համար և կազմել կազմակերպչական ստրուկտուրա աշխատանքների համար:

դ. Նոր Բայազետից ուղարկված նախկին դաշնակցականների ենթաբյուրոյի նիստի արձանագրության ընթերցումը և հաստատումը:

դ. Հաստատել 5 ձայնով, ընդդեմ 2-ի:

Նախագահ՝ Ա. Բակունց

Քարտուղար՝ Ն. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.213, թ.7 և հակ.:

104. Արձանագրություն թիվ 7

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրոյի նիստի

14 հոկտեմբերի 1923թ.

Նիստին ներկա էին՝ Ա. Բակունց, Ն. Կրմենանց, Խ. Դանիելյան, Հ. Ավալյան, Ռ. Տոնյան, Ա. Պետրոսյան, Մ. Սերջանյան և Սևդաշունի:

Նախագահում է՝ Ա. Բակունց.

Քարտուղարում է՝ Ն. Կրմենանց.

Օրակարգի հարցեր.

1.Հ. Ավալյանի, Արտ. Պետրոսյանի և Ն. Կրմենանցի կազմած հրահանգի և Հ. Ավալյանի կազմած շրջաբերականի ընթերցումը:

2. Փոլյանին ու Տրդատյանին հրավիրելու և ինիցիատիվ բյուրոյի մեջ մտցնելու խնդիրը:

3. Էջմիածին գավառի աշխատանքները հարվածային դարձնելու խնդիրը:

4. Նախիջևանում աշխատանքներ տանելու խնդիրը:

5. Ղարաբաղի նախկին դաշնակցականների կարևորությունը Հայաստանի համագումարին:

6. Ինֆորմացիայի թուլության խնդիրը:

7. Բյուրոյի հերթական ժողովի օրը:

1. **Լսեցին.** Նախորդ ժողովում ընտրված եռյակի կազմած ինստրուկցիայի ընթերցումը:

1. **Որոշեցին.** Հանձնարարել գավառներում աշխատող շրջիկներին ու ենթաբյուրոներին գործել Բյուրոյի կողմից հաստատված հրահանգների ու շրջաբերականների սահմաններում:

2. **Լսեցին.** Փոլյանին և Տրդատյանին Բյուրոյի մեջ մտցնելու խնդիրը:

2. **Որոշեցին.** Հրավիրել և ձայնի իրավունքով ընդունել Բյուրոյի մեջ:

3. **Լսեցին.** էջմիածին գավառի աշխատանքների հարվածային դարձնելու խնդիրը:

3. **Որոշեցին.** Առաջիկա կիրակի օրը, 21 հոկտեմբերի, Բյուրոյի ամբողջ կազմով անցնել էջմիածին քաղաքի աշխատանքները, իսկ նոյեմբերի 4-ին նշանակել էջմիածնի գավառական համագումար:

4. **Լսեցին.** Հին Նախիջևանում աշխատանքներ տանելու խնդիրը:

4. **Որոշեցին.** Հանձնարարել ընկ. Ավալյանին դիմելու ընկ. Ա. Շահսուվարյանին, որ նա հեռագրով դիմի Նախկրայի կուսկոմի պատքարտուղարին՝ մանդատ և նյութական միջոցներ տալու Շխմամուդ գյուղացի ընկ. Գեղամ Ավետյանին Նախիջևանի հայկական գյուղերում աշխատանքներ տանելու համար:

5. **Լսեցին.** Ղարաբաղի նախկին դաշնակցական ընկերների ներկայացուցիչների կարևորությունը մեր համագումարին:

5. **Որոշեցին.** Նախագահությունը պարտավոր է իր կողմից ինֆորմացիա ուղարկել Ղարաբաղի ընկերներին և կոչ անել մեր համագումարին մասնակցելու:

6. **Լսեցին.** Ինֆորմացիայի թուլության խնդիրը:

6. **Որոշեցին.** Ուժեղացնել ինֆորմացիան «Խորհրդային Հայաստանում» և այլ թերթերում:

7. **Լսեցին.** Բյուրոյի հերթական ժողովի օրը:

7. **Որոշեցին.** Նշանակել հոկտեմբերի 18-ի երեկոյան ժամը 7-ին:

Նախագահ (Ա. Բակունց)

Քարտուղար (Ն. Կրմենանց)

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.8 և հակ.:

105. Արձանագրություն թիվ 8
Նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումար նախաձեռնող Բյուրոյի նիստի

19 հոկտեմբերի 1923թ.

Ներկա էին՝ Հ. Ավալյան, Ս. Փոլյան, Ա. Պետրոսյան, Ա. Բակունց, Խ. Դանիելյան, Ռ. Տոնյան, Ն. Կրմենանց:

1. **Լսեցին.** Կ[ենտրոնական] Բյուրոյի անդամ Արտ. Պետրոսյանի զեկուցումը Ալեքպոլում տարվող աշխատանքների մասին:

1. **Որոշեցին.** Ի նկատի ունենալով, որ Ալեքպոլ քաղաքում և շրջանում դեռևս ուժեղ աշխատանք չի ձեռնարկված, անհրաժեշտ համարել այդ շրջանում աշխատանքներն ուժեղացնել և այդ նպատակով Երևանում կայանալիք առաջիկա ներկայացուցչական ժողովին ընտրել հինգ հոգու, հանձնարարելով նրանց շտապ մեկնել Ալեքպոլ և ուժեղ աշխատանք կատարել:

2. **Լսեցին.** Բյուրոյի նախագահության ընտրության հարցը:

2. **Որոշեցին.** Նախագահության համար ընտրել հետևյալ ընկերներին.

ա. Ա. Բակունց՝ նախագահ, Ս. Փոլյան՝ փոխնախագահ, Ավալյան և Պետրոսյան՝ նախագահության անդամներ, Ն. Կրմենանց՝ պատքարտուղար:

բ. Բյուրոյի գործավարության համար կազմել 5 հոգուց շտատ՝ նախագահ, պատքարտուղար, գործավար, նաև տեխնիկական քարտուղար, մեքենագիր և ցրիչ:

3. **Լսեցին.** Բաքվի և Թիֆլիսի բյուրոներից Համահայաստանյան համագումարին պատգամավորներ հրավիրելու և Երևանից այդ վայրերը մեկ հոգի ուղարկելու հարցը:

3. **Որոշեցին.**

ա. Բանակցություններ վարել Բաքվի և Թիֆլիսի բյուրոների հետ, հրավիրելով Համահայաստանի համագումարին մասնակցելու յուրաքանչյուրից 10-ական ներկայացուցիչ, որոնց ծախքը, սակայն, Հայաստանի Բյուրոն իր վրա չի վերցնի:

բ. Հատուկ մարդ չուղարկել Թիֆլիս, Բաքու, այլ գրավոր կապ հաստատել:

գ. Հանձնարարել Բյուրոյի նախագահ Ա. Բակունցին կոչ պատրաստել Թիֆլիս ուղարկելու համար և Ս. Փոլյանին՝ Դարաբաղի համար:

Նախագահ

Քարտուղար՝ Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.9:

106. Արյանագրություն թիվ 9

Դաշնակցությունից հեռացածների ընդհանուր ժողովի*

24 հոկտեմբերի 1923թ.

Երեկ. ժամը 6

Ներկա էին Բյուրոյի անդամները և 30 հոգի նախկին դաշնակցականներից:

Նախագահում է՝ Բակունց.

Քարտուղար՝ Կրմենանց.

1. Լսեցին. Ընկ. Բակունցի ինֆորմացիոն զեկուցումը Բյուրոյի երկամսյա գործունեության մասին:

1. Որոշեցին. Ընդունել հետևյալ բանաձևը.

«Մենք՝ դեկլարացիաներով Դաշնակցությունից հեռացած Երևանում բնակվող նախկին դաշնակցականներս լսելով համագումար նախաձեռնող Բյուրոյի զեկուցումը իր կատարած աշխատանքների շուրջը, գտանք միանգամայն խրախուսելի և ուղիղ: Այսօրվանից տրամադրում ենք մեր բովանդակ ուժերը Բյուրոյի հետագա աշխատանքներն ընդարձակելու և ավարտելու մինչև համագումարը»:

2. Լսեցին. Ընկ. Ավալյանի զեկուցումը կազմակերպչական աշխատանքների շուրջը:

2. Որոշեցին. Ընդունել ի գիտություն և ուժեղացնել աշխատանքները երկաթուղու վրա Ալեքպոլի և Փամբակ-Լոռու գավառներում:

** Ըստ էության ժողովը նախաձեռնող Բյուրոյի ընդլայնած նիստ է, ուստի փաստաթղթի վրա դրված է Բյուրոյի հերթական նիստի համարը:*

3. Լսեցին. Աքսորավայրերում գտնվող դաշնակցականների մասին:

3. Որոշեցին. Դիմել ուր հարկն է և աշխատել մինչև համագումարի օրը կապ ստեղծել աքսորավայրերում գտնվող ընկերների հետ և իմանալ նրանց տեսակետները մեր շարժման մասին:

Նախագահ

Քարտուղար՝ Ն. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.10:

107. Արյանագրություն թիվ 10

Դաշնակության լիկվիդացիայով զբաղվող Բյուրոյի նիստի

24 հոկտեմբերի 1923թ.

Ներկա էին՝ նախագահ Բակունց, անդամներ. Ավալյան, Փոլյան, Տոնյան, Պետրոսյան, Կրմենանց, Դանիելյան:

Մասնակցում է նաև Հ. Թումյան:

1. Լսեցին. Հոկտեմբերի 25-ին հրավիրված դաշնակցականների ընդհանուր ժողովի մասին, Բանվորական ակումբում:

1. Որոշեցին. Ժողովին տալ ագիտացիոն ընթացք: Ինֆորմացիոն զեկուցումը հանձնել Բակունցին, կուսակցության անցյալի քննադատությունը՝ Փոլյանին, նախագահի պաշտոնը՝ Պետրոսյանին:

2. Լսեցին. Դաշնակցական ուսանողների խնդիրը:

2. Որոշեցին. Ընդունել դաշնակցական ուսանողների առանձին լիկվիդացիոն մարմինը, թույլ տալ, որ այդ ուսանողությունը Համահայաստանյան համագումարին իր ներկայացուցիչներն ունենա:

3. Լսեցին. Ալեքպոլ և Աշտարակ ընկերներ ուղարկելու խնդիրը:

3. Որոշեցին. Ալեքպոլ և Աշտարակ ուղարկել ընկ. ընկ. Բակունցին և Թումյանին երեք օրով:

4. Լսեցին. Արամ Տոնյանի զեկուցումը Ախտայի շրջանի աշխատանքների մասին:

4. Որոշեցին.

ա. զեկուցումը պահանջել գրավոր:

բ. Ընկերների (Ախտայի շրջանի) իրավազուրկ վիճակի մասին դիմել պետական համապատասխան օրգաններին.

գ. Վավերացնել Ախտայի և շրջանի ընտրությունները:

դ. Թույլատրել ընտրված 13 պատգամավորներին մասնակցել Երևանի թե գավառական և թե Համահայաստանյան համագումարներին:

ե. Այսուհետև խստագույն հետևել ընտրական ինստրուկցիայի թելադրություններին:

5. Լսեցին. Ընկ. Հարություն Թումյանի մասին:

5. Որոշեցին. Ընդունել Բյուրոյի անդամ:

6. Լսեցին. «Լրաբերի» հրատարակության մասին:

6. Որոշեցին. Հանձնարարել Կրմենանցին, Բակունցին, Թումյանին, Փոլյանին, Խաչ. Դանիելյանին և մյուսներին պատրաստել հոդվածներ թերթի համար:

7. Լսեցին. Հաջորդ նիստի մասին:

7. Որոշեցին. Նշանակել երեքշաբթի:

Նախագահ

Քարտուղար՝ Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.11:

108. Արձանագրություն թիվ

Նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումար նախաշեռնող Բյուրոյի նիստի

1 նոյեմբերի 1923թ.

Ներկա էին՝ Հ. Ավալյան, Ն. Կրմենանց, Մ. Սերջանյան, Ա. Պետրոսյան, Ռ. Տոնյան և Հ. Թումյան:

Նախագահ՝ Հ. Ավալյան:

Քարտուղար՝ Ն. Կրմենանց:

Օրակարգի հարցերն են.

1. Լսեցին. Ընկ. Հ. Թումյանի զեկուցումը Ալեքպոլում տարվող աշխատանքների մասին:

1. Որոշեցին. Զեկուցումն ընդունել ի գիտություն:

ա. Ընկ. ընկ. Ա. Բակունցին և Հ. Թումյանին ուղարկել Ալեքպոլում աշխատելու մինչև գավառական կոնֆերանսի գումարումը:

2. Լսեցին. Բաքվի նախկին դաշնակցականների լիկվիդացիոն բյուրոյի նամակի ընթերցումը:

2. Որոշեցին. Ողջունել Բաքվի բյուրոյի աշխատանքները Ադրբեջանի սահմաններում և գտնում ենք անհրաժեշտ.

ա. ավարտել լիկվիդացիայի գործը Ադրբեջանի սահմաններում.

բ. Համահայաստանյան համագումարից ընտրել մի հատուկ մարմին, որը կապ հաստատելով այլ հանրապետությունների նախկին դաշնակցականների համագումարներից ընտրված նման հատուկ մարմինների հետ, կհոգա Համակովկասյան համագումար հրավիրելու մասին:

3. Լսեցին. Էջմիածնի գավկոնֆերանսի օրակարգի մշակում և զեկուցումների բաժանում:

3. Որոշեցին. Օրակարգ՝

ա. Գավբյուրոյի ինֆորմացիոն զեկուցում. կզեկուցի ընկ. Մ. Սերջանյան:

բ. Ներկա քաղաքական մոմենտը. կզեկուցի ընկ. Հ. Ազատյան:

գ. Ազգային հարց և Հոկտեմբերյան հեղափոխություն. կզեկուցի ընկ. Հ. Գյուլիքեխվյան:

դ. Դաշնակցության վերագնահատում. կզեկուցի ընկ. Ս. Փոլյան:

ե. Համահայաստանյան համագումարի համար պատգամավորներ ընտրելու խնդիր:

Նախագահ՝ Հ. Ավալյան

Քարտուղար՝ Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.12:

109. Արչանագրություն թիվ

<Նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումար նախաշեռնող Բյուրոյի նիստի>

9 նոյեմբերի 1923թ.

Ներկա էին՝ Բակունց, Ա. Պետրոսյան, Հ. Ավալյան, Մ. Սերջանյան, Հ. Եպիսկոպոսյան, Ռ. Տոնյան, Ն. Կրմենանց, Ս. Փոլյան, Խ. Դանիելյան, Բաքվի ներկայացուցիչ Սիր. Գրիգորյան

Նախագահում է՝ Ա. Բակունց.

Քարտուղար՝ Ն. Կրմենանց.

Օրակարգի հարցերն են.

1. Համագումարի օրակարգի մշակում.

2. Համագումարի պատգամավորների տեղավորման ու կարիքների հոգալու հարցը.

3. Ղարաբաղի և Թիֆլիսի ընկերներին դիմելու խնդիրը:

4. Բյուրոյի ընթացիկ ծախսերի և շտատի որոշում.

5. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին.**

Ա. Համագումարի օրակարգի մշակում:

1. **Որոշեցին.**

ա. Նախաձեռնող Բյուրոյի զեկուցում՝ Ա. Բակունց.

բ. Միջազգային քաղաքական դրություն՝ ընկ. Լուկաշին.

գ. Դաշնակցության վերագնահատում.

- Դաշնակցության անցյալի պատմական ակնարկ և Դաշնակցության քաղաքականությունը. զեկ. Ս. Փոլյան:

- Ազգային հարցը և Դաշնակցությունը. զեկ. Խաչ. Դանիելյան.

- Դաշնակցության իդեոլոգիան (Դաշնակցության աշխարհայացքի վերլուծում). զեկ. Արտ. Պետրոսյան:

- Ընթացիկ հարցեր:

Համագումարի բացմանը հրավիրվում են հետևյալ ընկերները Հայաստանի Կոմկուսի Կենտկոմից, Կենտգործկոմ, ժողկոմխորհ, Արհեստակցական միություն, Երևանի կոմիտե, Երևանի գործկոմ և «Խորհրդային Հայաստանի» խմբագրություն:

Զեկուցող ընկերները՝ Խաչ. Դանիելյան, Արտ. Պետրոսյան և Ս. Փոլյան պարտավոր են մինչև նոյեմբերի 15-ը ներկայացնել իրենց մշակած թեզիսները ի հաստատություն Բյուրոյի:

Բ. Համագումարի նախագահություն և քարտուղարություն:

Համագումարի նախագահությունը կազմել 21 հոգուց, որի մեջ մտնում է Բյուրոյի նախագահությունը, էջմիածնից՝ 2, Նոր Բայազետից՝ 2, Ալեքսոլից՝ 3, Լոռի-Փամբակից՝ 1-2, Զանգեզուրից՝ 2, Երևանից՝ 2, Դարալագյազից՝ 1, Թավրիզի տարագիրներ՝ 1 հոգի, նաև ներկայացուցիչներ Բաքվի ու Վրաստանի ընկերներից:

Քարտուղարություն կազմել 5 հոգուց. Մեղրի՝ 1, Ալեքսոլ՝ 1, Երևան՝ 1, էջմիածին՝ 1, Բյուրո՝ 1 հոգի:

Համագումարի նիստերը արձանագրելու համար հրավիրել սղագիրներ:

2. **Լսեցին.** Համագումարի պատգամավորների տեղավորման հարցը:

2. **Որոշեցին.** Համագումարի պատգամավորների անկետացման համար ընտրել մի հանձնաժողով՝ Ռ. Տոնյան, Մ. Սերջանյան և Հ. Եպիսկոպոսյան: Սույն հանձնաժողովը հոգում է պատգամավորներին տեղավորելու, ինչպես և նման կարիքների մասին, ղեկավարում է հանրակացարանը: Պատգամավորներն օրական ստանալու են 1ռ. 20կ. չերվոնոներով:

3. **Լսեցին.** Ղարաբաղի և Թիֆլիսի ընկերներին նամակ ուղարկելու հարցը:

3. **Որոշեցին.** Նամակների կազմելը հանձնել ընկ. Ս. Փոլյանին և Արտ. Պետրոսյանին:

4. **Լսեցին.** Բյուրոյի ընթացիկ ծախսեր և շտատ:

4. **Որոշեցին.** Ծախսերի որոշման, հաշվետարության, շտատի, օրապահիկի և ռոճիկի կանոնավորման համար լիազորել ընկ. Ն. Կրմենանցին, Ռ. Տոնյանին և Ա. Բակունցին՝ մշակել մի մնայուն նորմա, ինչպես և կազմել սմետա:

5. **Լսեցին.** Ընթացիկ հարցեր.

ա. Բյուրոյի կոչի խնդիր:

5. **Որոշեցին.** Հանձնարարել ընկ. Աղ. Բակունցին խմբագրել կոչը և ներկայացնել ամսույս 12-ի նիստին ի հաստատություն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.13 և հակ.:

110. Արձանագրություն թիվ

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի կողմից ընտրված հանձնաժողովի նիստի

10 նոյեմբերի 1923թ.

Ներկա էին՝ . Հայկ. Ավալյան, Խ. Դանիելյան, Ռ. Տոնյան:

Օրակարգի հարցեր.

1. Բյուրոյի տեխնիկական աշխատանքներ վարողների կազմի վարձատրությունը:

1. Լսեցին. Բյուրոյի մեջ աշխատանքներ տանողների վարձատրությունների մասին:

1. Որոշեցին. Բյուրոյի այն անդամները, որոնք ուրիշ հիմնարկություններում ծառայության մեջ են և ամբողջապես կապված չեն Բյուրոյի տեխնիկական աշխատանքների հետ՝ այդպիսիները ռոճիկ չպիտի ստանան:

Վարձատրվում են միայն նրանք, որոնք ուրիշ հիմնարկություններում չեն ծառայում և ամբողջապես կապված են Բյուրոյի աշխատանքներին: Այդպիսիներից վարձատրվում են նախագահ Ա. Բակունց՝ 18 պատասխանատու կատեգորիա, ծառայության մեջ հաշվել ս.թ. սեպտեմբերի 15-ից: Քարտուղար Ն. Կրմենանց՝ 18 պատասխանատու կատեգորիա, ծառայության մեջ հաշվել ս.թ. օգոստոսի 2-ից: Բյուրոյի անդամ հրահանգիչ Հ. Եպիսկոպոսյանին և Սիհրան Սերջանյանին նույնպես 18 պատասխանատու կատեգորիա: Առաջինին ծառայության մեջ հաշվել օգոստոսի 27-ից, իսկ Մ. Սերջանյանին՝ սեպտեմբերի 24-ից 1923թ.:

Հրահանգիչներին տալ 10 պատասխանատու կատեգորիա, ինչպես և գործավարին: Եվ բացի ռոճիկից գավառ գնացողներին տալ օրապահիկ և ճանապարհածախք:

Գավառից վերադարձած ընկերները պարտավոր են ներկայացնել ընկ. Ռ Տոնյանին իրենց մսխած դրամների հաշիվները:

Նախագահ՝ Խ. Դանիելյան

Քարտուղար՝ Ռ. Տոնյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.15:

111. Բոլոր նախկին դաշնակցականներին

20 նոյեմբերի 1923թ.

Ընկերներ, այսօր, նոյեմբերի 20-ին բացվում է Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը՝ նա ասելու է յուր վճռական խոսքը Դաշնակցության ղեկավարներին, վերագնահատելու է նրանց անցյալ գործունեությունն ու որոշելու նոր ուղի նախկին դաշնակցական մասսայի համար:

Պատմական նշանակալից մոմենտում է հավաքվում համագումարը, երբ, մի կողմից, երկու անհաշտ բանակներ՝ պրոլետարիատն ու բուրժուազիան ուժեր են կուտակում վերջին մարտի համար, երբ Գերմանիան դարձել է համամարդկային խնդիրների մի թատերաբեմ ու երբ դաշնակցության ներկա մտայնությունը որոշակի անցել է գալիք պայքարին ընդդեմ սև ուժերի կողմը, - Հայաստանի նախկին դաշնակցականները պարզ ու որոշ պիտի հայտնեն համագումարին, որ ոչ «աշխատավորական» և ոչ էլ ֆաշիստական կամ բուրժուական ճամփով է ընթանալու Հայաստանի նախկին դաշնակցական մասսան, այլ Հոկտեմբերյան հեղափոխության կարմիր ուղիով, որովհետև նա խորապես համոզված է, որ Հայաստանի աշխատավորության բարգավաճ ապագան միայն խորհրդային իրավակարգն է հաստատելու:

Համագումարը վեր է հանելու Դաշնակցության անցյալից այն շարժումներն ու դեպքերը, որոնք բնորոշ էին հանձինս Դաշնակցության հայ քաղքենի մտայնության, հաշվետու և պատասխանատու է ճանաչելու նոցա, որոնց ապիկար ղեկավարությունը վերջացավ Հայաստանի աշխատավորության համար այնքան արյունոտ կատաստրոֆով, մեր գյուղացիության մի խոշոր հատվածի բնաջնջումով:

Խորհրդային իրավակարգի գովեստ չէ, որ կազմելու է համագումարի զբաղումների առանցքը (այդ գովեստն անում է և արտասահմանի հայ բուրժուազիան) և ոչ էլ Դաշնակցության արդարացում, այնպես, ինչպես Դրոն ու Ղազազյանն են կատարել, այլ խիստ քննություն Դաշնակցության մտայնության ու նրա վարած քաղաքականության և ապա նոր ընթացքի որոշում, մի հանգամանք, որ տրամագծորեն հակառակ է նոցա, որոնք քննադատում են և չեն հեռանում Դաշնակցությունից, և նոցա, որոնք ինքնարդարացումից հետո իրենց հայտարարում են հակասոցիալիստ:

Դաշնակցության պատմությունը շատ անջատումներ գիտե, սակայն առաջին անգամ է, որ Հայաստանի դաշնակցականները վճռում են իրենց հավաքական որոշումով խաչ քաշել Դաշնակցության ներկա մտայնության վրա և խտացնել աշխատանքի հաղթանակի ղեկավար

3-րդ Ինտերնացիոնալի շարքերը:

Մենք դաշնակցական պաշտոնանկ վարչապետներին ենք թողնում որոշելու Դաշնակցության քայքայման իսկական տարեթիվը, սակայն չենք թողնում, որ բյուրոյականի հատուկ աղայավարի ասեն. թե «մենք ենք ծնել, մենք էլ կսպանենք ձեզ»: Ճիշտ է, եղել են ղեկավարներ, սակայն այդ նշանակում է, որ մեր առաջ այսօր պատասխանատու են նրանք: Շարքայինների համար նախկին շեֆերի նահանջի շեփորը ու լիկվիդացիայի կոչը դատարկ հնչյուն է, հաշվեհարդարից խուսափելու միջոց:

Համագումարի կետ նպատակը միայն չէ Դաշնակցության լիկվիդացիան, այլ նախկին դաշնակցական մասսայի մտայնության բեկումը, որ ամենից արժեքավորն է այս շարժման մեջ: Հայաստանի նախկին դաշնակցականները հրաժարիմք են ասելու հայ քաղքենական այն մտածելակերպին, որ Դաշնակցությունն էր որդեգրել յուր գոյության ընթացքում, մի մտայնություն, որ շարունակում են ունենալ արտասահմանի դաշնակցականները այսօր էլ ու ծրագրում ավանտյուրաների նոր շարժումներ երկրի համար:

Միայն հրաժարվելով հին մտայնությունից և կանգնելով Կոմունիստական կուսակցության պլատֆորմայի վրա, դաշնակցական մասսան կարող է լինել այս երկրում ոչ իբր վարձու պաշտոնյաների կամ քաղաքականությունից հեռու մի զանգված, այլ Հայաստանի Կոմունիստական կուսակցության ակտիվ հեղափոխականների մի բանակ, որ երկրի վերաշինումից զատ դիմադրելու է նոցա, որոնք կփորձեն մեր երկրի խաղաղությունը վրդովել դրսից կամ ներսից:

Կեցցե 3-րդ Ինտերնացիոնալը:

Կեցցե համաշխարհային հեղափոխությունը:

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար

նախաձեռնող Բյուրո՝

1. Աղ. Բակունց
2. Սիմ. Փոլյան
3. Արտ. Պետրոսյան
4. Նիկ. Կրմենանց
5. Խաչ. Դանելյան
6. Միհր. Սերջանյան
7. Գրիգ. Բալասբեկյան

8. Հովս. Միրզոյան
9. Պող. Տեր-Պողոսյան
10. Համ. Եպիսկոպոսյան
11. Արտեմ Թումյան*
12. Նիկ. Դորունց
13. Միս. Հայրապետյան
14. Վահ. Ամրազյան
15. Ռուբ. Տոնյան
16. Կամսար Տեր-Մարտիրոսյան (Գամսո)

Լրաբեր Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի, թիվ 1, 20 նոյեմբերի 1923թ.:

** Նույն Հարություն Թումյանն է:*

112. Արձանագրություն թիվ

<Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի նիստի>

նոյեմբեր 1923թ.

Մասնակցում էին՝ ընկ. ընկ. Բակունց, Ա. Պետրոսյան, Հ. Ավալյան, Միհրան Սերջանյան, Հ. Եպիսկոպոսյան, Ռ. Տոնյան, Ս. Փոլյան, Ն. Կրմենանց, Խ. Դանիելյան, Բաքվի լիկվիդացիոն բյուրոյի ներկայացուցիչ Սիրակ Գրիգորյան:

Նախագահում է ընկ. Բակունց.

Քարտուղարում է Ն. Կրմենանց.

Օրակարգի խնդիրներն են.

1. Զեկուցում ընկ. Բակունցի Ալեքպոլի աշխատանքների մասին:

2. Բաքվի բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Սիր. Գրիգորյանի զեկուցումը:

3. Բյուրոյի կազմի լրացումը:

1. Լսեցին. Ալեքպոլի աշխատանքների մասին լսվեց ընկ. Բակունցի զեկուցումը:

Զեկուցումից պարզվեց, որ աշխատանքներն ընթանում էին դանդաղ, որը հետևանք է այնտեղ տիրող մի շարք առանձնահատուկ պայմանների:

Գավառից և քաղաքից սպասվում է համագումարին 35 պատգամավոր:

Ընկերն առաջարկում է համագումարին պերսոնալ կերպով հրավիրել Ալեքպոլում գտնվող մի քանի աչքի ընկնող դաշնակցականներ, որոնք կապված չեն տեղական դաշնակցական մասսայի հետ և անհարմար են համարում ընտրվել անծանոթ շրջանից:

Գավառային համագումարն Ալեքպոլում լինելու է նոյեմբերի 18-ին:

Անհրաժեշտ է գտնում նաև ուժեղացնել աշխատանքները երկաթուղու գծի վրա:

1. Որոշեցին. Աշխատել Ալեքպոլի գավառական համագումարի կողմից ընտրել շրջանի աչքի ընկնող ընկերներին: Հարկ եղած դեպքում պերսոնալ ձևով հրավիրել մի քանի ընկերների, որոնք չեն կամենում ընտրվել Ալեքպոլի շրջանից:

Զեկուցման մյուս կետերն ընդունել ի գիտություն:

2. Լսեցին. Բաքվի բյուրոյի լիազոր ընկ. Սիրակի զեկուցումը.

Բաքուն, իբրև Կովկասի արդյունաբերական կենտրոն, ուժեղ է եղել դաշնակցական մասսայով: Սակայն հեղաշրջումից հետո և ոչ մի աշխատանք չի կատարվել: Ընդհանրապես վաղուց նկատվում էին լիկվիդացիայի ձգտումներ, սակայն նախաձեռնությունը ոչ ոք իր վրա չէր ուզում վերցնել: Բայց երբ իմացանք, որ Երևանում կազմակերպված է նախաձեռնող Բյուրո, մենք ևս կազմակերպեցինք մի խմբակ: Այդ խմբակը հոկտեմբերի 18-ին հրավիրեց մի ընդհանուր ժողով, որտեղ ընտրվեց Բաքվի բյուրոն: Բյուրոյի նպատակն է հրավիրել կոնֆերանս քաղաքային մասշտաբով, ապա աշխատանքներն ընդլայնել գավառներում: Որոշված է նաև աշխատել Հյուսիսային Կովկասում և Անդրկասպյան երկրում, որտեղ կան նախկին դաշնակցականներ:

Ընկերը շեշտում է այն, որ Բաքվի բյուրոն ցանկալի է համարում հրավիրել նախկին դաշնակցականների համակովկասյան համագումար և այդ աշխատանքները կատարելու համար հենց այժմից Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բյուրոներից կազմել մի հանձնաժողով, որը կզբաղվեր այդ խնդրով և կմշակեր այդ համագումարի համար անհրաժեշտ նյութեր: Բաքվի ընկերների ցանկությունն է Համակովկասյան համագումար հրավիրել Երևանում:

Ընկ. Գրիգորյանը վերջում կարդում է Բաքվի բյուրոյի նամակը մի քանի խնդիրների շուրջը:

2. Որոշեցին. զեկուցումն ընդունել ի գիտություն:

Սերտ կապ ստեղծել Բաքվի կազմակերպության հետ, պարբերաբար ուղարկել ինֆորմացիա «Լրաբերի» համար:

Ցանկալի է համարվում Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարին ցանկը Բաքվա և Վրաստանի ընկերների պաշտոնական ներկայացուցիչների: Այդ մասնակցությունը հնարավորություն կտա հենց Հայաստանի համագումարում որոշել Համակովկասյան համագումարի կազմակերպչական աշխատանքների մասին:

3. Լսեցին. Բյուրոյի կազմի լրացում:

3. Որոշեցին. Բյուրոյի կազմը լրացնելու համար ընդունել բյուրոյի կազմի մեջ ընկ. Սմբատ Կարոյանին, Անուշ Տեր-Միքայելյանին, Գր. Բալասբեկյանին, Հովսեփ Միրզոյանին, Պողոս Տեր-Պողոսյանին, Սրապիոնին (Ժորես), Նիկ. Դորունցին, Միս. Հայրապետյանին (Մի-Հայր) և Վահան Ամրազյանին:

4. Լսեցին. Ընթացիկ հարցեր.

ա. Բաշ-Գյառնի հրահանգիչ ուղարկելու խնդիրը.

բ. «Լրաբերի» խնդիրը.

4. Որոշեցին. Գործուղել ընկ. Հ. Եպիսկոպոսյանին, հրահանգելով ավարտել աշխատանքները մինչև նոյեմբերի 18-ը:

Խմբագրական պատասխանատու կոլեգիա հետևյալ կազմով՝ ընկ. Ն. Կրմենանց, Ռ. Տոնյան, Հ. Ավալյան:

Նախագահ՝ **Բակունց**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.213, թ.14 և հակ.:

Դ.Հայաստանում Դաշնակության ինքնավերացման համագումարը

113-125.* Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարը

<Սղագրական հաշվետվությունը՝ կրճատված>

20-23 նոյեմբերի 1923թ.

113. Համագումարի հանդիսավոր բացումը:

1923թ. նոյեմբերի 20-ին Երևանի Պետական թատրոնի դահլիճում, երեկոյան ժամը 6-ին Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի նախագահությամբ կայացավ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի հանդիսավոր բացումը: Ներկա էին պատգամավորներ Հայաստանի բոլոր գավառներից, համագումար նախաձեռնող Բյուրոն և բազմաթիվ հյուրեր:

Նիստը բացեց ընկ. Ալ. Բակունցը:

Ալ. Բակունց - Ընկերներ, Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը հայտարարում եմ բացված...

Ապագա պատմագիրը կգնահատի մեր համագումարի պատմական արժեքները: Սակայն մեզ համար, որ 4 ամիս շարունակ նախաձեռնող ենք հանդիսացել այս համագումարին և ականատես եղել բազմաթիվ փաստերի, պարզ է մի բան, որ մենք այլևս անկարող ենք մնալ Դաշնակցության մեջ: Հրաժարվելով Դաշնակցությունից, մենք մեր կենսունակ ուժերը ի սպաս ենք դնում Խորհրդային Հայաստանի վերաշինման ու պայքարին՝ ուղղված այն բոլոր շարժումների դեմ, որոնք նպատակ կունենան խախտելու մեր ազատ կյանքը: Դաշնակցական մասսան գալիք պայքարի ժամանակ կապացուցի, որ նա իր, խորհրդային հայրենիքի ամենաջերմ պաշտպանն է: *(Ծափեր):*

... **Նախագահ** - նիստը վերսկսվում է:

... Քվեարկությունից հետո նախագահության անդամ են ընտրվում ընկերներ Ալեքսանդր Բակունց, Պողոս Տեր-Պողոսյան, Գրիգոր Բալասբեկյան, Հարություն Թումյան, Սիմոն Փոլյան: Քարտուղարության համար ընտրվում են՝ Սմբատ Կարոյան, Հրանտ Կարինյան, Հովսեփ Միրզոյան և Արշակ Առստամյան: Մանդատային հանձնաժողովի համար՝

* *Համագումարի նիստերի սղագրությունը ներքին բաժանման ենթարկելը, որը պայմանական և հարաբերական է, արված է համագումարի նյութերի յուրացումը և օգտագործումը դյուրացնելու միտումով:*

Նիկ. Կրմենանց, Վ. Ամրազյան և Գամսո: Խմբագրական հանձնաժողով՝ Արտաշես Պետրոսյան, Ծովակ Ծովյան, Անուշավան Տեր-Միքայելյան, Միհրան Տեր-Սահակյան և Մխիթար Տեր-Աբրահամյան:

Բուռն ծափերով համագումարի պատվավոր նախագահ են ընտրվում ընկ. ընկ. Լենին, Զինովև, Տրոցկի, Մյասնիկյան, Համբարձումյան, Լուկաշին և Շահսուվարյան: Որոշվում է պատվավոր նախագահներին համագումարի անունից ուղարկել ողջույնի հեռագիր:

Նախագահ - Օրակարգի հարցերը հետևյալներն են՝

1. Զեկուցում նախաձեռնող Բյուրոյի գործունեության* մասին:
2. Զեկուցում միջազգային քաղաքական դրության մասին:
3. Դաշնակցության անցյալի և գործունեության վերագնահատում:
4. Ընթացիկ հարցեր:

Որևէ առարկություն կամ փոփոխություն անողներ չկա՞ն: Չկան: Օրակարգը ընդունվում է նույնությամբ: Խնդրում եմ նախագահության անդամներին գրավել իրենց տեղերը:

... Նիստը փակվում է ժամը 9 անց 20-ին:

114. Երկրորդ նիստ

Նոյեմբերի 21-ին առավոտյան ժամը 11 անց 40 րոպե.
Նախագահում է ընկ. Հարություն Թումյան

Նախագահ - Համագումարի 2-րդ նիստը հայտարարում եմ բացված: Օրակարգի հարցերն են. 1. Նախաձեռնող Բյուրոյի ինֆորմացիոն զեկուցումը, 2. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը: Խոսքը պատկանում է Բյուրոյի նախագահ ընկ. Բակունցին:

Մի պատգամավոր - Այսօրվա նիստը դռնփա՞կ է, թե դռնբաց:

Նախագահ - Նիստը դռնփակ է: Միայն Բյուրոն որոշ մարդկանց թույլ է տվել ներկա լինելու:

Բակունց - Ընկերներ, Դաշնակցության հեռանալուց հետո Խորհրդային Հայաստանում այլևս դաշնակցական կազմակերպություն չէր մնացել: Մնացել էին միայն անհատներ ու խմբակներ, որոնք չէին ներկայացնում դաշնակցական կազմակերպությունը: Այս նկատումով Դրո-Ղազազյանի վերջին հայտարարությունը Կովկասյան կազմակերպութ-

* *Այս և այլ դեպքերում պահպանել ենք ականավոր գրող Ակսել(Ալեքսանդր) Բակունցի ոճը:*

յան անունից անտակտ էր և անճիշտ: Դաշնակցության հեռանալուց հետո դաշնակցական մասսան սկզբում պասիվ էր. նա առհասարակ «հրաժարիմք» էր ասում ամեն տեսակ հասարակական շարժման: Ա-հա այդպիսի մոմենտում աննպատակ էր ձեռնարկել այս տեսակ շարժում: Այդ ուղղությամբ արված մի քանի փորձերը վիժեցին, կարելի չլինելով որոշ ձև և հաջողություն տալ: Այս տարի միայն մի քանի ընկերների մեջ միտք հղացավ այսպիսի մի համագումար կազմակերպել, իմանալու համար դաշնակցական մասսայի տեսակետները, վերագնահատելու Դաշնակցության անցյալը և որոշելու նոր ուղիները: Երբ վերջացավ պատերազմի, փախուստի, քաղաքացիական կռիվների ուգարը, այն ժամանակ արտասահմանում Դաշնակցությունը իր ույժերի մոբիլիզացիա հայտարարեց և, բնական է, որ նա պիտի վերագնահատության ենթարկեր իր գործունեությունը: Վիեննայի համագումարում Դաշնակցությունն այնպիսի ընթացք բռնեց, որից հետո բնական էր մեր և նրանց կապի խզումը: Դաշնակցության արտասահմանյան նորագույն քաղաքական ընթացքից հետո (Նավասարդյան, Չիլինկարյան և ընկերներ) Կովկասի ընկերներ (Դրո, Ղազազյան և այլն) տվին իրենց հայտնի դեկլարացիան*: Այդ դեկլարացիայի հեղինակները թեև զիջում են իրենց դիրքերը, բայց լիկվիդացիայի խոսք չեն ասում. գուցե դա որոշ տակտիկայի խնդիր էր: Ես գտնում եմ, որ Դաշնակցության այդ նախկին ղեկավարները դրանով մի կերպ ելք են ուզում գտնել փակուղուց դուրս գալու համար: Դաշնակցության ղեկավար մարմինների բեկորները Կովկասում չէին ուզում քայքայվել: Երբ մենք փորձեցինք նախաձեռնող հանդիսանալ Դաշնակցության քայքայման գործին, այդ մասին դիմում արինք որոշ խմբակների: Սակայն նրանց պատասխանն ավելի քան ծիծաղելի էր: Նրանք կարծում էին, թե կարելի է Դաշնակցությունը լեգալիզեի ենթարկել: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, Պարսկաստանում և արտասահմանում կազմակերպվել են աշխատավորական գրուպաներ, ինչպես, օրինակ, Նավասարդյանի գրուպան կամ «Հասկը» Պարսկաստանում: Սակայն այդ գրուպաները մի-մի արհեստական ամբարտակ են, դաշնակցական մասսային մի քիչ էլ պահելու համար, միառժամանակ էլ արգիլելու մասսայի թեքումը դեպի ձախ:

Ահա այս բոլոր նկատումներով մի շարք ընկերներ Երևանում նախաձեռնեցին կազմակերպել այս համագումարը: Սկզբնական շրջանում մեզ համար անորոշ էր, թե այս շարժումը ինչ կերպարանք է ստանալու գավառներում: Սկզբում ծրագրված էին Համակովկասյան համագումար հրավիրել, ինչպես և դիմել արտասահմանին, համագումարին տալով մի տեսակ համադաշնակցական բնույթ: Սակայն որոշ նկատումներով առայժմ հարմար համարվեց կազմակերպել միայն համահայաստանյան համագումար, որ միջազգային մասշտաբով ավելի արժեք ունի, քանի որ Հայաստանը քաղաքական մի միավոր է և ավելի ազդեցիկ է դառնում այդ միավորի սահմաններում ապրող նախկին դաշնակցականների հավաքական որոշումը: Եվ մենք պիտի հայտարարենք, որ դաշնակցական որևէ պատգամավորություն կամ մարմին այլևս իրավունք չունի մեր անունից որևէ դիվանագիտական քայլ անելու արտասահմանում: Համագումարը հետ պիտի վերցնի նրանից իր վստահության ու լիազորության մանդատը, որովհետև այդ «մանդատը» մեզ շատ սուղ նստեց: Այնուամենայնիվ նախաձեռնող Բյուրոն Համակովկասյան համագումար հրավիրելու ձեռնարկից չի հրաժարվել և այդ խնդիրը դրված է օրակարգում ընթացիկ հարցերի մեջ:

Մեր այս շարժմանը ամենից առաջ արձագանք տվեց Զանգեզուրը: Երևի դրա պատճառն այն է, որ Զանգեզուրը Դաշնակցության վերջին ավանտյուրայի ամրոցն է եղել: Զանգեզուրը չի ուրանում Դաշնակցության գնահատելի ծառայությունը իր ֆիզիկական փրկության գործում: Սակայն այս վերջին ավանտյուրան այնքան ծանր է ազդել նրանց վրա, որ նրանք զայրույթով են երես դարձնում Դաշնակցությունից: Զանգեզուրը պարզ ու որոշ հայտարարել է, որ խորհրդային կառավարությունն է ստեղծել խաղաղ աշխատանքի պայմաններ գավառի համար, մինչդեռ նախկին քաղաքականությունը ծայրահեղ չքավորության է հասցրել իրեն, և եթե խորհրդային իշխանությունն ուշանար, Զանգեզուրը կարող էր կործանվել, քանի որ ինքնապաշտպանությունը կլանել էր ժողովրդի ստացվածքն ու սպառել էներգիան:

Զանգեզուրի կոմիտեի կոչին արձագանք տվեց ամբողջ գավառը: Մեր համագումարի առաջին պատգամավորներն ընտրվել են Զանգեզուրից: Երկրորդ հերթին արձագանք է տվել Մեղրին: Մեղրիի դեկլարացիան չհրատարակվեց երկար լինելու պատճառով: Այդ դեկլարացիայի մեջ, սակայն, Մեղրիի դաշնակցականները արել են ավելի լուրջ հայտարարություններ, հակառակ այն հանգամանքին, որ դա համարվել է մի քիչ աջ: Գուցե այդպես է արտաքուստ, սակայն, Մեղրին Դաշնակցության վերագնահատման մեջ ավելի խիստ է ու անվերապահ, քան մի որևէ այլ շրջան:

Հետագայում Բյուրոն հատուկ ուշադրություն է դարձրել սասունցիների և ընդհանրապես Ալագյազի փեշերի վրա ապրող արևմտահայ լեռնականների վրա, ի նկատի ունենալով մոտ անցյալից այն կարևոր դերը, որ փետրվարյան ավանտյուրայի ժամանակ խաղում էին վերոհիշյալ լեռնցիք:

*Տե՛ս 74 փաստաթուղթը:

Ամենից դանդաղ և ուշ աշխատանք սկսվում է կենտրոնում՝ Երևանում և Ալեքպոլում, որովհետև այդ կենտրոններում են գլխավորապես հավաքված նախկին դաշնակցական մտավորականները: Նրանք առաջադրում էին որոշ պահանջներ և ուզում էին իմանալ այս շարժման իրական դրդապատճառները, որոճում էին երկար ժամանակ շարժման միանալու միտքը*: Այս հանգամանքը, անշուշտ, դրական պիտի համարել, որ նախկին դաշնակցական ինտելիգենտը այդքան որոճելուց հետո տալիս է իր դեկլարացիան: Շատ անգամ դեկլարացիաների խմբագրությունը Բյուրոն ինքն է հանձն առել, որպեսզի դա չդառնա նախկին Դաշնակցականների ինքնաժխտումը, ինքնալիկվիդացիան ու դեկլարացիաների մեջ չսպրդեն ավելորդ արտահայտություններ: Մենք գտնում ենք, որ Դաշնակցությունը իր սկզբնական շրջանում կատարել է դրական աշխատանք, մինչդեռ մի շարք նախկին դաշնակցականներ իրենց դեկլարացիաների մեջ հաճախ անտես էին առնում և այդ հանգամանքը:

Որպեսզի Ալեքպոլում և Երևանում մենք կարողանայինք աշխատանքներ տանել, կազմակերպեցինք մի շարք դասախոսություններ՝ ծանոթացնելու համար նախկին դաշնակցականներին Դաշնակցության ներկա մտայնության և գործունեության հետ: Պիտի ասել, որ դաշնակցական ընկերները վերջին տարիներս չափազանց սառել էին հասարակական գործերից. նրանց հետ խոսելը մեռելի տան մեջ հարսանիքի մասին խոսելուն էր նմանվում: Մյուս կողմից շատ ծանր էր դաշնակցական երբեմնի ղեկավարների համար դուրս գալ մասսայի առաջ և հայտարարել, որ երբեմնի իր քարոզած ուղին եղել է սխալ:

Այդ ժողովներում հանվել են մի շարք բանաձևեր, որոնք մեզ մոտ են և հավանաբար կիրատարակվեն առանձին:

Բյուրոն ուշադրություն է դարձրել նույնպես Թավրիզից եկող տարագիրների վրա: Նրանք այն մտավախությունն ունեին, թե իրենք հալածանքի պիտի ենթարկվեն այստեղ: Այդ համոզումը հետևանք էր Պարսկաստանի իրենց ընկերների պրովոկացիայի: Հարկավոր էր նրանց համոզել, գիտակցության բերել, որ նրանց հետ էլ խորհրդային իշխանությունը կվարվի, ինչպես սովորական քաղաքացիների: Հետաքրքիր է հետևյալ էպիզոդը: Թավրիզից առաջին անգամ Հայաստան մտնող խմբին ասել են, որ Ջուլֆայում իրենք պիտի ենթարկվեն գնդակահարության, սակայն դրա փոխարեն նրանք զարմանքով տեսնում են, որ իրենք ընդունվում են Ջուլֆայի բանվորության կողմից մուզիկայով, որից հետո նրանք իրենց նամակների հեղեղով հասկացնում են Պարսկաստանի իրենց ընկերներին ճիշտ իրողությունը:

Ինչպես ասի, կենտրոնում դժվար էր տարվում աշխատանքը: Շատերը չէին ուզում դեկլարացիա տալ, անելով իրենց ուրույն պահանջները, որոնց դժվար էր բավարարել: Մենք այդպիսիներին թողնում էինք, որ մնան սոսկական քաղաքացիներ: Իսկ գյուղերում ընդհանրապես բոլոր հակահեղափոխականներին համարում են դաշնակցական: Այդպիսով «դաշնակցական» բառը դարձել է սինոնիմ հակահեղափոխականի: Երբեմն կուլակները իրենց ձայնագրկությունը վերագրում են իրենց դաշնակցական լինելուն: Դա սխալ է. նրանք ձայնազուրկ են իբրև ոչ աշխատավորական տարր:

Բյուրոյի մի շարք նիստերում արծարծվել է այն խնդիրը, որ հնարավորություն տրվի արտասահմանի ընկերներին էլ մասնակցելու այս համագումարին: Այս խնդիրը որոշ նկատումներով չիրագործվեց, բայց մենք մանրամասն տեղեկություններ ուղարկել ենք արտասահմանի մի շարք դաշնակցական ընկերների: Դա կլինի որոշ միջոց քայքայելու արտասահմանում գտնվող շարքային նման դաշնակցականներին, որոնք դեռ շարունակում են մնալ Դաշնակցության մեջ:

Դաշնակցությունից հեռացածների սոցիալական վիճակի մասին արժե մի քանի տեղեկություններ տալ: Չափազանց մեծ է հեռացողների կուսակցական ստաժը. հեռացողների 40-50 տոկոսը կազմում են շարքային դաշնակցականներ, որոնք Դաշնակցության հիմնումից ի վեր գործել են այդ կուսակցության մեջ: Տաս տոկոսը դաշնակցական ակտիվ գործիչներ են, 17 տոկոսը ռազմիկ գործիչներ, 2 տոկոսը կուսակցության մեջ գաղտնի և հատուկ հանձնարարություններ կատարողներ են (տեռորիստ, զենք փոխադրող և այլն): Կուսակցական բարձր մարմնի անդամների տոկոսը 4 է, իսկ գավառական գործիչներինը՝ 16:

Այսպիսով, տեսնում ենք, որ Դաշնակցության հիմքը կամ այն մասը, որ իր ուսերի վրա է կրել կուսակցական ամբողջ բեռը, այս համագումարում ներկայացված է: Մի հանգամանք ևս նկատի պիտի ունենանք: Դա մասնակցողների տարիքն է: Ավելի բարձր տոկոսը 30-40 տարիք ունեցողներն են: Այս տոկոսը համապատասխանում է մեծ ստաժ ունեցողների տոկոսին: Տարիքը արժեքավոր է այն տեսակետով, որ ցույց է տալիս, թե հեռացողները հետագայում էլ պիտի աշխատեն ակտիվ կերպով ոչ միայն երկրի քաղաքական ապահովության, այլև մեր սոցիալական հսկա պայքարի և երկրի վերաշինության համար:

Դաշնակցությունից հեռացող շարքայինների խոշոր մասը կազմում է գյուղացիությունը, մյուս մասը ուսուցիչներ, գյուղական ինտելիգենտ-

*Համագումարի սղագրության արխիվային օրինակում հաջորդում է այստեղ հանված հետևյալ նախադասությունը. «Նրանք չէին նմանվում այն գյուղացիներին, որոնք շատ անգամ առանց դեկլարացիան կարդալու, ստորագրում էին տակը»:

ներ և բանվորներ են: Սրանց թողած թղթերը և դեկլարացիաները Դաշնակցության պատմության լավագույն վավերագրերը կդառնան: Նկատելի երևույթ է, որ քաղաքական անգրագիտության հետ հասարակ գրագիտությունը ևս թույլ է հեռացողների մեջ: Սրանց 30 տոկոսը բոլորովին անգրագետ են, հազիվ գրագետները կազմում են 40 տոկոս, միջնակարգ կրթություն ունեն 20 տոկոսը*, իսկ բարձր կրթությունը 4 տոկոս: Սրա պատճառն այն է, որ Դաշնակցությունը ուշադրություն չի դարձրել նրանց կրթության վրա: Մեկը, որ իր ամբողջ կյանքը տվել է Դաշնակցության, չի ստացել միջոց գոնե կիսագրագետ լինելու: Երբ հարցնում եք պատճառը, նա ասում է. «Կուսակցական գործերը չէին թողնում ուրիշ բանով զբաղվելու»: Դաշնակցությունից հեռացած այս մասսայի խոշոր մասի հեռացման պատճառը Դաշնակցության հակաաշխատավորական ընթացքն է եղել: Շարքային, ակտիվ դաշնակցականներն էլ հեռանում են, համարելով Դաշնակցությունը իրենց համար անհարազատ: Կան նաև Դաշնակցության քաղաքական տեսակետները չբաժանելու համար հեռացող ընկերներ:

Հայաստանում, անշուշտ, մնում են անհատ դաշնակցականներ, որոնք տարիներ շարունակ աշխատելով, չէին կարող խաչ դնել իրենց գործունեության վրա: Դա ևս դրական գիծ պետք է համարել: Այդպիսիների համար դեկլարացիան քաղաքական մահ էր նշանակում: Նրանց համար այդ քայլ չառնելը քաղաքացիական քաջության ապացույց պիտի համարել:

Գյուղացիներից ստացված են բազմաթիվ գրություններ, որոնք գեղեցիկ նյութ են ծանոթանալու համար գյուղական աշխարհի հոգեբանության հետ: Նկատվել են որոշ անհատներ, գյուղական որոշ պատասխանատու անձեր, որոնք թայֆայական պատճառներով հալածանքի են ենթարկել նախկին դաշնակցական աշխատավոր գյուղացիներին, համարելով նրանց հակահեղափոխական:

Գավառներից Նոր Բայազետում, Էջմիածնում, Ալեքսանդրում և Լոռիում քայքայման շարժումը բավական ուժեղ է եղել: Մի քանի վայրերում շարժումը ցանկալի կերպով չի տարվել, որովհետև աշխատանքին մասնակցել են ոչ դաշնակցական ընկերներ: Բյուրոն այդպիսի շարժումը համարել է անվավեր:

Նախկին դաշնակցական մի շարք ընկերներ, որոնք ենթարկվել են զտման, դիմում էին Բյուրոյին դեկլարացիաներով, հույս ունենալու, որ Բյուրոն նրանց համար կապահովի իրենց գործը: Սակայն այդ դիմումները չեն մտցրված գործերի մեջ և Բյուրոն այդպիսի գործերին չի մասնակցել, համարելով պաշտոնյաների զտումը Դաշնակցության քայքայումից անկախ գործ:

Բյուրոն ուզում է ունենալ նաև իր թերթը, որպեսզի կարողանար ուղարկել արտասահմանյան շարքային ընկերներին, ծանոթացնելու նրանց մեր շարժման հետ և կապ հաստատելու մեր և նրանց միջև: «Լրաբերը» կլինի այդպիսին: Այս համագումարի սղագիր արձանագրություններն էլ կհրատարակվեն, որով արտասահմանը կարող է լրիվ տեղեկություն ունենալ մեր շարժման մասին: Բագվի ընկերների հետ մենք կապ ստեղծեցինք: Բագվից եկան ընկերներ և նրանց հետ ունեցանք մի քանի նիստեր: Նրանց հիմնական առաջարկը Համակովկասյան համագումար հրավիրելն էր: Այդ հարցը թողնված է ուրիշ ընթացիկ հարցերի հետ համագումարի քննության:

Մի երկու խոսք Բյուրոյի հրատարակած կոչի մասին: Բյուրոյի կազմի մեջ մտել են նաև գավառի ընկերներ: Այդ կոչի տակ ստորագրված են երկու ընկերների անուններ, որոնք ներկա չեն եղել, բայց հեռագրով նրանց համաձայնությունն առնված է: Մի հոգի միայն հայտնեց, որ ինքը կոչի խմբագրական մի կետի հետ համաձայն չէ: Կարգադրվեց, որ կոչի հրատարակումը ուշանա, մինչև որ այդ խնդիրն էլ հարթվեց:

Վերջացնելով իմ զեկուցումը, պարտք եմ համարում ասելու, որ այս շարժումը մի քաղաքական ռևերանս անելու համար չէ երբեք: Սա բխում է մեր հեղափոխական խոր համոզումից. մեր նախկին կուսակցությունը անելիք չունի: Մենք համոզված ենք, որ դաշնակցական մասսան կասի իր որոշ խոսքը և կգծի իր ուղին: Բյուրոն համոզված է եղել, որ շարքային դաշնակցականը կարևորություն չի տա այն ասեկոսեներին, թե այս շարժումը կատարվել է որոշ ճնշման տակ և կամ կազմակերպված է որոշ դիտումով: Վստահ ենք, որ Դաշնակցության այս համագումարը չի սայթաքի: Նա իր վերազնահատությունը կտա ըստ արժանվույն և հաստատ ուղի կգծի իր համար: Մի ուղի, որ վայել կլինի քաղաքական անցյալ ունեցող հեղափոխական ընկերներին: *(Ծափեր):*

115. Նախագահ - Կարդում է բանաձևը.

«Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը լսելով նախաձեռնող Բյուրոյի նախագահ ընկ. Ադ. Բակունցի զեկուցումը նախաձեռնող Բյուրոյի գործունեության մասին, որոշեց հաստատել նախաձեռնող Բյուրոյի ամբողջ գործունեությունը, այդ գործունեությունն ընդունել պատմական մի անհրաժեշտություն Դաշնակցության քայքայման պրոցեսում և անցնել օրակարգի մյուս խնդիրներին»:

... **Նախագահ** - Քվեարկության եմ դնում ընկ. Բակունցի առաջարկը: Մերժվում է: Այժմ քվեարկում եմ բանաձևերը: Անցնում է առա-

* *Համագումարի սղագրության արխիվային օրինակում տոկոսը 26 է, որը և ճիշտ է:*

ջին բանաձևը՝ նույնությամբ*:

116. **Նախագահ** - Օրակարգի մեջ տրամաբանական հաջորդություն պահպանելու համար առաջարկում եմ նախքան մանդատային հանձնաժողովի զեկուցման անցնելը լսել Բագվի ընկերների կողմից ինֆորմացիոն զեկուցումը: - Ընդունվում է:

Պետրոսյան (Բագվի պատգամավոր) - Ընկերներ, Դաշնակցության քայքայման պրոցեսը մեզ մոտ նկատելի էր 1919 թվականից, երբ կուսակցության ղեկավար ուժերն անցել էին Հայաստան, որով Բագվի բանվորական շարքային տարրերը մնացել էին առանց ղեկավարի: Ահա այդ ժամանակվանից Բագվում կոնկրետ կերպով դրված էր Դաշնակցությունը Ադրբեջանի սահմաններում լիկվիդացիայի ենթարկելու խնդիրը, որի շուրջ մեր մեջ բացվել էր վիճաբանություն: Դրանից հետո, 1920 թվին, երբ Սովետական իշխանությունը եկավ Ադրբեջան, Դաշնակցության շարքային մասը իրեն կտրված համարեց Դաշնակցությունից, հանեց համապատասխան բանաձև և շնորհավորելով խորհրդային իշխանության գալուստը, իրեն դրեց նրա տրամադրության տակ, միասին աշխատելու համար, բայց որովհետև պայմանները յուրահատուկ էին, խորհրդային իշխանությունը վերջին առաջարկը չընդունեց:

Այնուհետև քայքայման պրոցեսը գնալով խորացավ: Վերջիվերջո միտք հղացավ ձևակերպել այդ պրոցեսը: Միայն այս տարի, սեպտեմբեր ամսում, մի խումբ ընկերներ կազմեցին մի հանձնաժողով և դեկլարացիա տվին: Դրանից հետո ընդհանուր ժողով հրավիրվեց Բագվում, ուր դրվեցին զանազան խնդիրներ, քննադատվեց Դաշնակցության գործունեությունը և ընտրվեց լիկվիդացիոն Բյուրո, որին հանձնարարվեց կապ հաստատել Հայաստանի նախկին Բյուրոյի հետ: Որոշվեց նույնպես լայն պրոպագանդա անել շրջաններում, կազմակերպել ժողովներ, նախապատրաստելու համար Բագվի ռայոնի կոնֆերանսը, ապա և ընդհանուր Ադրբեջանի կոնֆերանս, որից հետո հրավիրել համադաշնակցական կամ համակովկասյան նախկին դաշնակցականների համագումար: Հոկտեմբերի 18-ից հետո լիկվիդացիոն բյուրոն անցնում է գործի և սկսում հող պատրաստել, բայց որովհետև հենց այդ ժամանակ Բագվում կատարվում էին մի շարք ընտրություններ և նախապատրաստություն էին տեսնում Բագվի խորհրդի ընտրությունների և Հոկտեմբերյան հեղափոխության 6-րդ տարեդարձի համար, այդ պատճառով հնարավոր չեղավ անմիջական աշխատանքի դիմել:

** Բակունցն առաջարկել էր շարունակել բանաձևի քննարկումը: Մյուսը՝ Բյուրոյի գործունեությունը հաստատելու փոխարեն գրել՝ հաստատել զեկուցումը:*

Ընդունված բանաձևի հեղինակը Ալ. Բակունցն է: Պահպանվել է նրա ինքնագիր օրինակը: (Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.220, թ.23):

Նոյեմբերի 18-ին սկսվում են աշխատանքներ, սակայն այս համագումարի փութացումը մեզ ստիպեց արագացնել գործը:

Ունեցանք ժողովներ Բալախանում, Սև և Սպիտակ քաղաքներում, Բիբի--էյբաթում և շրջաններում, ուր Բագվի կոնֆերանսի համար ընտրություններ էին լինում: Այդ կոնֆերանսը կայացավ Բագվում նոյեմբերի 17-ին: Այնտեղ որոշվեց. 1. Մասնակցել նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումարին, 2. Բագվի մեջ և սահմաններում Դաշնակցությունը փաստորեն համարել լիկվիդացիայի ենթարկված, 3. Առաջարկել այս համագումարին, որ որոշվի հրավիրել համակովկասյան կամ համադաշնակցական համագումար: Ահա սրանք են այն կոնկրետ որոշումները, որ տվեց կոնֆերանսը: Ինչ վերաբերում է Բագվի ընկերների սկզբունքային տեսակետներին, դրա մասին կտեսնենք վերագնահատման ժամանակ, իսկ առայժմ միայն այսքանն եմ ասում, որ Բագվի և նրա ռայոնների նախկին դաշնակցականների տեսակետը հետևյալն է. մեր գործունեությունը Դաշնակցության մեջ եղել է սխալ: Դաշնակցությունը մեզ գցել է մի փակուղի, որից չէինք կարող դուրս գալ: Դաշնակցության գործունեությունը մեծ վնաս է հասցրել դասակարգային շահերին: Բագվի աշխատավորության պրոլետարական մասը կանգնած է 3-րդ Ինտերնացիոնալի պլատֆորմի վրա, գիտակցելով, որ նա է մեզ տանելու դեպի դասակարգային կռիվը և հաղթանակը:

... **Նախագահ** - Առաջարկում է հետևյալ բանաձևը.

«Բագվի զեկուցումը առնելով ի գիտություն, անցնել հերթական խնդրին»: Ընդունվում է: Այժմ տրվում է 5 րոպե դադար:

117. **Նախագահ** - Նիստը վերսկսվում է: Խոսքը պատկանում է մանդատային հանձնաժողովի զեկուցողին:

Ամիրազյան - Որովհետև մանդատային հանձնաժողովին տրված է քիչ ժամանակ, դրա համար մենք հնարավորություն չունեցանք հավաքելու բոլոր տվյալները պատգամավորների վերաբերյալ: Այդ առթիվ մենք հետագա նիստերից մեկում կզեկուցենք: Այժմ տալիս եմ միայն թվական տվյալները (կցել մանդատային հանձնաժողովի զեկուցումը):

Երեք պատգամավորների անկետաները չեն վավերացրել: Նրանցից երկուսը Նոր Բայազետից են. այդ մանդատների մեջ գրված է եղել «համակիր» և «դիմակավոր» բառեր, իսկ երրորդը՝ Տիգրան Վանյան, անցել է Կոմունիստական կուսակցության մեջ: Թալինի շրջանի 5 պատգամավորների մանդատները չեն ստուգված, անկետաները չլցնելու համար:

Հանձնաժողովը հայտնում է, որ բոլոր պատգամավորները ստաժ ունեցող դաշնակցականներ են:

... Նախագահ - Թույլ տվեք հանձնաժողովի զեկուցումն առնել ի գիտություն և եզրակացությունը հաստատել: Ընդունվում է:

Օրակարգի հարցերը վերջացան: Նիստը հայտարարում եմ փակված: Նիստը փակվում է ժամը 12-ին:

118. Երրորդ նիստ

Նոյեմբերի 21-ին երեկոյան ժամը 5-ին կայացավ համագումարի 3-րդ նիստը: Նախագահում էր ընկ. Պողոս Տեր-Պողոսյանը:

Նախագահ - Համագումարի 3-րդ նիստը հայտարարում եմ բացված: 2-րդ նիստում համագումարը ցանկություն հայտնեց լսելու ընկ. Մռավյանի զեկուցումը: Խոսքը պատկանում է ընկ. Մռավյանին, զեկուցելու խորհրդային երկրների միջազգային դրության և ներքին խնդիրների մասին: *(Երկարատև ծափեր)*:

Ա. Մռավյան - ...

Չորրորդ նիստ

Նոյեմբերի 22-ին, առավոտյան ժամը 11 անց 45 րոպե, նախագահում է ընկ. Սիմոն Փոլյանը...

119. Հինգերորդ նիստ

Համագումարի 5-րդ նիստը, կայացած նոյեմբերի 22-ի երեկոյան ժամը 6 և կեսին Պետական թատրոնի դահլիճում, նախագահությամբ ընկ. Գր. Բալասբեկյանի:

Նախագահ - Համագումարի 5-րդ նիստը հայտարարում եմ բացված: Խոսքը պատկանում է ընկ. Ս. Փոլյանին, զեկուցելու Դաշնակցության վերագնահատման մասին:

Ձայներ - Խնդրում ենք հեռացնել նրանց, ովքեր պատգամավորներ չեն:

Նախագահ - Ընկերներ, սրահում ներկա գտնվող ոչ պատգամավորներին խնդրում ենք թողնել դահլիճը: (Ոչ պատգամավորները հեռանում են դահլիճից):

Ս. Փոլյան - Ընկերներ, այս օրը շատ նշանակալից է, և նա մեր կյանքում հավանորեն պիտի դառնա նույնքան պատմական, որքան Դաշնակցության կազմակերպվելու օրը: Այսօր հավաքվել են վերագնահատելու Դաշնակցությունը և իրենց խոսքն ասելու նրանք, որոնք երկար տարիներ անձնվիրությամբ աշխատել են այդ կուսակցության մեջ...

Ընկերներ, հայ աշխատավորությունը արդեն եկել է այն ճիշտ համոզման, որ Դաշնակցությունը աշխատավորական կուսակցություն չի եղել երբեք և, չլինելով այդպիսին, նա երբեք հետևողականորեն չի պաշտպանել աշխատավորության շահերը: Նրա վարած քաղաքականությունը սկզբից մինչև վերջ եղել է վնասակար ու արկածախնդրական: Մեր գործը պիտի լինի խլել Դաշնակցության արտասահմանյան ղեկավարներից հայ աշխատավորի անունից խոսելու իրավունքը...

Որ Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն չի եղել, այդ ասում են իրենք՝ Դաշնակցության հայտնի ղեկավարները: Կուսակցության՝ Ամերիկայում հրատարակվող գլխավոր օրգանը Դարբինյանի բերանով պարզ հայտարարել է, որ սոցիալիզմը Դաշնակցության կողմից ընդունված է եղել եվրոպական սոցիալիստների ազդեցությունը տաճկահայ դատի համար օգտագործելու նպատակով:

... Դաշնակցությունը երբեք էլ չի ունեցել մի որոշ, գիտականորեն հիմնավորված իդեոլոգիա: Այդ տեսակետից նա այժմ ավելի վատ դրության մեջ է արտասահմանում: Նա պառակտված է և այնտեղ, պառակտված է գաղափարապես: Ինչպես տեսանք, Դարբինյանը քարոզում է ֆաշիզմ: Քաջազնունին գնում է դեպի ռամկավարություն: Նավասարդյանը սոցիալիզմը դարձնում է «անտեսանելի օրերի իդեալ»: Մի խոսքով, այնպիսի մի շփոթ, ինչպես միշտ եղել է Դաշնակցությունը: Վիեննայի ժողովում, սակայն, հաղթանակը տարել է Դարբինյանի հոսանքը, որ նշանակում է Դաշնակցությունը պաշտոնապես ընդունել է Դարբինյանի ասածները:

Դաշնակցության համար ճակատագրական մեծ հարված է Քաջազնունու վերջին գիրքը, որի անունն է «Դաշնակցությունն այլևս անելիք չունի»: Սա ասում է մի մարդ, որի մազերը ճերմակել են Դաշնակցության մեջ... Այսպես է խոսում Քաջազնունին, և շատ ճիշտ է ասում նա:

Դաշնակցությունն այլևս անելիք չունի, և նա պետք է մեռնի: Պատմության պահանջն ու անողոք տրամաբանությունն է դա:

Բայց Դաշնակցության աշխատավոր մասսան, որ այժմ երես է դարձնում նրանից հազարներով, թողնում է Դաշնակցության շարքերն ու

հեռանում անդարձ, որ կտրում է նրա հետ բոլոր կապերը՝ դեռ անելիքներ ունի: Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության նա տուրք ունի տալու: Այրելով վերադարձի բոլոր կամուրջները, նա վճռականապես կանգնում է 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ, իր բովանդակ ուժերն ու փորձը ի սպաս բերելով սոցիալիստական հեղափոխության:

Այս համագումարը որպես ամենաիրավասուն, լիկվիդացիայի պիտի ենթարկի Դաշնակցությունը Հայաստանում, իր բոլոր ճյուղերով ու մարմիններով: Առոչինչ պիտի հայտարարի բոլոր այն մանդատները, որ տրված կլինեն որևէ մեկին Հայաստանի սահմաններում... *(Երկարատև ծափեր):*

120. Վեցերորդ նիստ

Նոյեմբերի 23-ին, առավոտյան ժամը 11-ին: Նախագահում է Պողոս Տեր-Պողոսյան...

Յոթերորդ նիստ

Համագումարի 7-րդ և վերջին նիստը կայացավ նոյեմբերի 23-ի երեկոյան ժամը 9 և կեսին Բանվորական ակումբի դահլիճում: Նախագահում էր ընկ. Ա. Բակունցը:

Նախագահ - Ընկերներ, այսօրվա օրակարգի հարցերն են բանաձևերի ընթերցումն ու ընդունելը: Մենք ունենք երկու բանաձև, որոնցից մեկը վերաբերում է Դաշնակցության վերագնահատությանը: Այս բանաձևը ընդունված է Բյուրոյի կողմից միաձայն և առաջարկվում է ձեզ ի հաստատություն: (Ընկ. Բակունցը կարդում է բանաձևը Դաշնակցության վերագնահատության մասին, որի յուրաքանչյուր հոդվածի ընթերցումից հետո տեղի են ունենում երկարատև ծափեր ու բացականչություններ՝ «ճիշտ է, ճիշտ է»: Բանաձևը տե՛ս կցված):

Ընկերներ, թույլ տվեք բանաձևը համարել ընդունված: (Բանաձևը ընդունվում է կատարելապես միաձայնությամբ):

Ընկերներ, նախքան երկրորդ բանաձևին անցնեմ, պետք է հայտարարեմ, որ Բյուրոն որոշել է համագումարի անունից Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին նվիրել մի կարմիր դրոշակ: *(Որոտընդոստ ծափեր, կեցցե, կեցցե):* Թույլ տվեք անցնել երկրորդ բանաձևին, որ վերաբերում է ընկ. Մռավյանի զեկուցմանը:

Պ. Տեր-Պողոսյան - Ընկերներ, ես կրկին հիշեցնում եմ ձեզ, որ այս բանաձևը մեզ մոտ մի անգամ կարդացվել է, իսկ այժմ կարդում եմ

ձեր արած հավելումներով: (Կարդում է երկրորդ բանաձևը, տե՛ս կցված, *ժողովականները գոչում են բրավո, կեցցե*):

Նախագահ - Ընկերներ, չնայած այս բանաձևի մեջ ձեզ համար նորություններ չկան, բայց և այնպես ձևականությունը հարգելու համար թույլ տվեք քվեարկել: (Բանաձևը քվեարկվում է և, առանց մեկի ձեռնպահության և դեմ լինելու, անցնում է միաձայնությամբ):

Անցնում ենք հերթական հարցերին: Համագումարին առաջարկ կա, համաձայն մեր որոշումների, մի կոչ խմբագրել և ուղարկել այն դաշնակցականներին, որոնք շարունակում են տատանվել, բայց իրենց անցյալ հեղափոխական գործունեությամբ արժանի են մտնելու մեր շարքերը: *(Ծափեր):* Կոչի խմբագրումը առաջարկվում է հանձնել պրեզիդիումին: (Անցնում է): Գուցե ուրիշ միջոց կառաջարկեիք: (Առաջարկ չկա): Ուրեմն կոչի խմբագրումը կկատարվի, հիմք ունենալով մեր ընդունած բանաձևերը:

... Մի քանի պատգամավորների կողմից առաջարկ է ստացված՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր մի քանի ընկերներ, որպես քաղաքական հանցավորներ, մնում են բանտերում և բաժանում են մեր այժմյան տեսակետները, խնդրել համագումարից, որպեսզի միջնորդի ազատ արձակել այդ ընկերներին, որոնք կգործեն մեզ հետ:

Ձայներ - Դրան պետք է ավելացնել նաև աքսորվածների մասին: Այո, այո:

Նախագահ - Նիստը հայտարարում եմ վերսկսված: Դուք հիշում եք, որ համագումարը առաջարկեց ընկ. ընկ. Լենինին, Տրոցկուն և Զինովևին համագումարի անունից ողջույնի հեռագրեր ուղարկել: Այժմ կկարդացվեն հեռագրերը:

Ա. Պետրոսյան - (Կարդում է ողջույնի հեռագիրը: Տե՛ս կցված: Համագումարը որոտընդոստ ծափերով իր համաձայնությունն է հայտնում):

Նախագահ - Խոսքը պատկանում է ընկ. Լուկաշինին: (Ընկ. Լուկաշինն ընդունվում է բարձրագոչ ուռաներով և կեցցեներով, երաժշտախումբը նվագում է Ինտերնացիոնալ):

Լուկաշին - Ընկերներ, թույլ տվեք Հայաստանի Կոմունիստական կուսակցության և նրանով ղեկավարվող Հայաստանի խորհրդային իշխանության անունից ողջունելու ձեր այս հազվագյուտ և պատմական համագումարը: *(Ծափեր)...*

Նախագահ Ա. Բակունց - (Կարմիր դրոշակը համապատասխան վերտառությամբ ընկ. Լուկաշինին պարգևելով): Ընկեր Լուկաշին, նախկին շարքային դաշնակցականների համագումարի կողմից թույլ տվեք ի դեմս ձեզ Հայաստանի Կոմունիստական կուսակցությանը նվիրելու

պրոլետարիատի դրոշակը, և թող նա լինի լավագույն գրավականը համագումարի պատգամավորներից, որոնք ուղարկված են Հայաստանի բոլոր հեռավոր գյուղերից, այն բանի, որ երբ բանվորա-գյուղացիական իշխանությանը որևէ վտանգ սպառնա, մենք կթափենք մեր արյունը հանուն հայրենիքի և նրա լավագույն զավակների հաղթանակի: *(Ծափահարություններ և Ինտերնացիոնալ):*

Լուկաշին -...

<Համագումարի փակումը>

Նախագահ - Ընկերներ, համագումարը փակելուց առաջ թույլ տվեք երկու խոսք ասել: Առաջին անգամ ես ասացի, որ մեր համագումարը ցանկություն չուներ քաղաքական ռևերանս անել: Մեր քննադատությունը, որ վճռական ձև ուներ, հասկանալի է, որովհետև մենք ապրում էինք տրագիկ վիճակի մեջ և ճգնում կտրելու մեր կապերը: Դա արեցինք: Համագումարը ցույց տվեց, որ մենք ծանր մուրճի հարվածներ տվինք մեր նախկին ղեկավարներին: Համագումարի որոշումները որոշ կարծիքներ պիտի ստեղծեն արտասահմանում: Պիտի ասեն, թե նա կայացավ ճնշման տակ և այլն: Սակայն համոզված, որ համագումարի վերաբերմունքը օրակարգի հարցերին շատ լուրջ էր և վերագնահատումը խոր, նրանք գրավական են, որ դրանից հետո մենք չենք դանդաղելու, որովհետև քաղաքական մեռած տարր չենք և շարունակելու ենք մեր հեղափոխական գործը: Մեր համագումարի հիմնական արժեքը այս է: Թույլ տվեք ասել, որ նախկին դաշնակցականների այս հատվածը խզում է իր կապերը Դաշնակցության հետ, չի վերադառնալու դեպի հինը, որովհետև գիտենք, թե ինչքան ծանր էր նա:

Փակելուց առաջ ես բոլորի ցանկությունը արտահայտած կլինեմ, եթե ասեմ, որ մենք մեր կապերը խզելուց և անջատվելուց հետո դառնում ենք այս երկրի հավասար քաղաքացիներ: Երբ կգա կռվելու կարիքը, մենք ոչ թե կզլանանք, այլ առաջին դիրքերում կմարտնչենք, ինչպես վայել է ուժեղ թափով շարժվող շարքային մասսային: *(Ծափեր):*

Ընկերներ, թույլ տվեք հայտարարելու ձեր անունից, որ համագումարը հենց այս վայրկյանից այլևս տատանում չունի և առաջին քայլն է անում ոգևորված նոր գաղափարներով և վստահորեն գնում է դեպի այն փարոսը, որի անունն է 3-րդ Ինտերնացիոնալ:

Կեցցե Կոմինտերնը:

Կեցցե Խորհրդային Հանրապետությունների Միությունը:

Կեցցե համաշխարհային հեղափոխությունը: *(Երկարատև ծափահարություններ: Երաժշտախումբը նվագում է Ինտերնացիոնալ)*: Համագումարի վերջին նիստը հայտարարում եմ փակված:

Համագումարի 7-րդ նիստը փակվեց գիշերվա ժամը 12-ին:

Քանաչներ

121. Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը լսելով միջազգային քաղաքական դրության մասին ընկ. Մռավյանի զեկուցումը, ընդունում է հետևյալը.

...* Ի նկատի ունենալով այս բոլորը, Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը հայտարարում է, որ ինքը վճռականորեն անցնում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության կողմը և իր բոլոր ուժերը նվիրում է այդ շարժման միակ ղեկավար 3-րդ Ինտերնացիոնալին:

122. Ընկերներ Լենինին, Տրոցկուն և Զինովևին**

Մենք Հայաստանի չորս հազար նախկին դաշնակցականներից ընտրված ներկայացուցիչներս այսօր հավաքվելով Դաշնակցության մեջ անցած մեր ուղիների վերագնահատության համագումարին, առաջին նվագ մեր ջերմ ողջույններն ենք ուղղում ձեզ, համայն աշխարհի աշխատավորության դատի անշեղ ղեկավար ընկերներ Լենին, Տրոցկի, Զինովև...

123. Հայաստանի նախկին դաշնակցականների 4032 անդամ ներկայացնող համագումարը, հանձին իր 247 պատգամավորների, լսելով ընկ. Ս. Ֆոլյանի զեկուցումը Դաշնակցության պատմության ու քաղաքականության մասին և քննության առնելով զեկուցման թեզերը, ընդունում է, որ.

...Դաշնակցության շարքերում տակավին դեգերող և նրա գաղափարական ազդեցությունից դեռ չազատագրված անհատներն ու խմբակները համաշխարհային հեղափոխության և համաշխարհային հակահեղափոխության բախման ներկա օրերին պիտի համոզվեն, որ Դաշնակցության լիկվիդացիան Հայաստանում և գաղութներում միանգամայն ի դերև է հանում արտասահման ապաստանած դաշնակցական լիդերների ֆաշիստական արկածախնդրության հնարավորությունը Հայաստանում:

** Այստեղ և մյուս բանաձևերում բաց են թողնվել դրանց այն մասերը, որոնք չեն վերաբերվում գրքի հիմնահարցին, ինչպես նաև Դաշնակցության պատմական անցյալի, նրան անընդհատ դատապարտող և խորհրդային իշխանության դերի մասին նյութը:*

*** Պահպանվել են Ալեքսանդր Բակունցի կողմից գրված Լենինին, Տրոցկուն և Զինովևին հասցեագրված երեք ողջույնի հեռագրերի տարբերակները (տե՛ս ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.220, թ.131):*

Ի հետևումն վերոհիշյալի համագումարը որոշում է.

1. Լիկվիդացիայի ենթարկել ՀՅԴ բոլոր կազմակերպությունները Հայաստանում:

2. Հաստատել գավառական և շրջանային կոնֆերանսների որոշումները դաշնակցական տեղական կազմակերպությունների լիկվիդացիայի մասին:

3. Առաջարկել Ադրբեջանի, Վրաստանի և խորհրդային հանրապետությունների սահմաններում, այլև Տաճկաստանի և գաղութահայ մյուս վայրերում գտնվող դաշնակցական աշխատավոր շարքերին՝ մեր օրինակով լուծել դաշնակցական կազմակերպությունները ու ցրել ղեկավար մարմինները տեղերում:

4. Անվավեր համարել Դաշնակցության բարձր կուսակցական մարմինների կողմից տված կուսակցական մանդատներն ու հանձնարարությունները:

5. Վճռական կերպով արգիլել ՀՅԴ արտասահմանում գտնվող բարձրագույն մարմիններին հրապարակ գալ կամ հայտարարություններ անել Հայաստանի կազմակերպությունների անունից:

6. Սույն որոշումներն ուղարկել 2-րդ Ինտերնացիոնալի Միջազգային Բյուրոյին ի գիտություն:

7. Դնել մեր բովանդակ ուժերը միջազգային բանվորագյուղացիական հեղափոխության և իր մարտական շտաբ 3-րդ՝ Կոմինտերնի տրամադրության տակ և լինել պատրաստ նրա ղեկավարությամբ պաշտպանել Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և նրա ծնունդ խորհրդային իշխանության նվաճումները բոլոր հակահեղափոխական ուժերից ու վտանգներից, լինեն նրանք դրսից, թե ներսից:

124. Համագումարի կոչը բոլոր շարքային դաշնակցականներին

Սիրելի ընկերներ, անշուշտ ձեզ հայտնի է, որ սույն թվի նոյեմբերի 20-ին Երևանում գումարված Հայաստանի շարքային դաշնակցականների համագումարը, որին մասնակցում էր մոտ 250 պատգամավոր 4032 նախկին դաշնակցականների կողմից, վերագնահատման ենթարկելով Դաշնակցության անցյալ գործունեությունն ու նրա վարած քաղաքականությունը, ինչպես և Դաշնակցության արտասահմանյան հատ-

վածների ներկա քաղաքական ընթացքն ու մտայնությունը, միաձայն որոշեց խզել յուր բոլոր կապերը Դաշնակցության հետ և, որդեգրելով միջազգային պրոլետարական ուղին, անվավեր հայտարարել այն բոլոր մանդատները և կազմակերպությունները, որ տվել է Դաշնակցությունը այս կամ այն խմբակին կամ անհատին:

Ի նկատի ունենալով այս բոլորը Հայաստանի շարքային դաշնակցականների համագումարի կողմից առաջարկում ենք արտասահմանի և այլ վայրերի այն բոլոր շիտակ ընկերներին, որոնց համար թանկ է Հայաստանի աշխատավորության շահն ու բարգավաճ ապագան, որոնք համոզվել են Դաշնակցության քաղաքականության ու մտայնության սնանկության և, որոնք չեն ուզում հակահեղափոխական բանակում մնալով, հարվածել մարտնչող պրոլետարիատին, այդ բոլոր ընկերներին կոչ ենք անում հեռանալ Դաշնակցությունից, լուծել Դաշնակցության կազմակերպությունները, ազատագրվել Դաշնակցության հակաաշխատավորական մտայնությունից և, ընդունելով 3-րդ Ինտերնացիոնալի մարտական պլատֆորման, հարել տեղական այն կազմակերպություններին, որոնք պայքարում են 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ կապիտալիզմի դեմ, մի պայքար, որի հաղթանակից է կախված համաշխարհային աշխատավորության հետ, նաև Հայաստանի բանվորի ու գյուղացու բախտը...

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի նախագահություն

1. Բակունց Ալեքսանդր
2. Ֆոլյան Սիմյոն
3. Պետրոսյան Արտաշես
4. Բալասբեկյան Գրիգոր
5. Տեր-Պողոսյան Պողոս
6. Տեր-Միքայելյան Անուշավան
7. Կարինյան Հրանտ
8. Կրմենանց Նիկոլայ
9. Կարոյան Սմբատ
10. Տեր-Մարտիրոսյան Կամսարական (Գամսո)
11. Տեր-Աբրահամյան Մխիթար
12. Առուստամյան Արշակ
13. Տեր-Սահակյան Միհրան
14. Միրզոյան Հովսեփ

19 դեկտեմբերի 1923թ.

Երևան

125. Նամակ ուղղված Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի նախագահության կողմից 2-րդ Ինտերնացիոնալի Միջազգային Բյուրոյին

1923թ. նոյեմբերի 20-24 Երևանում կայացած Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը, որին մասնակցում էին 4032 շարքային դաշնակցականներից ընտրված 247 պատգամավոր, ՀՅԴ անցյալ գործունեությունն ու նրա ներկա քաղաքական ընթացքը վերագնահատելով, ընդունել է հետևյալ բանաձևը.

...<Կրկնվում են 123-րդ փաստաթղթի բոլոր 7 կետերը:>

Համաձայն բանաձևի 6-րդ կետի հայտնելով այս մասին ձեզ ի գիտություն, խնդրում ենք անվավեր համարել ՀՅԴ մանդատը, տված Հայաստանի դաշնակցական կազմակերպության կողմից, մասնակցելու 2-րդ Ինտերնացիոնալի Միջազգային Բյուրոյի աշխատանքներին:

Հայաստանի նախկին դաշնակցականների

համագումարի նախագահություն

Նախկին շարքային դաշնակցականների Համահայաստանյան համագումարի արձանագրությունները: Ստենոգրաֆիական հաշվետվություն: 20-23 նոյեմբերի 1923թ., Երևան: Երևան, Տրեստի առաջին տպարան, 1923*, էջ 3-135:

** Գրքի շապիկի վրա հրատարակության տարեթիվը 1924 է, որը և ճիշտ է, քանի որ Ա. Բակունցը 1924թ. փետրվարի 24-ին իր «Իմ համառոտ կենսագիրը» ինքնակենսագրականում գրել է՝ «Հետևում եմ նոյեմբեր 20-ի համագումարի սղագիր հաշվետվության հրատարակման»:*

Ընդ որում գիրքը սկզբում ունի «երկու խոսք», որի հեղինակը Ալ. Բակունցն է՝ ըստ դրա պահպանված ինքնագիր օրինակի: (Տես ՀՀ ՀԲԿՓ-ի ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.222, թ.6-8):

Սույն գրքի նյութերի հիման վրա «Հայ Յեղափոխական Դաշնակցության «ինքնավերացումը Երևանում 1923թ.» վերնագրով հոդված է տպագրել Սնահիդ Տեր-Մինասյանը: Տես «Armenian Review», 1991, հատոր 44, թիվ 2/174, էջ 71-110:

Սկսել Բակունցի մասին տես նաև Levon Mkrtchian, Axel Bakunts as the champion of the True Concert of the Popular Basis of Literature in Soviet Armenia (In Armenian). Munich, 1959.

126. Նախկին դաշնակցականների համագումարի արդյունքը*

25 նոյեմբերի 1923թ.

Մեծ խանդավառությամբ վերջացավ նախկին դաշնակցականների Հայաստանի համագումարը, որի ընդունած պատասխանատու բանաձևերը կտրում են բոլոր հին կապերը և գծում նախկին դաշնակցական բանվորների ու գյուղացիների առաջ նոր ուղիներ: Համագումարը չորս օր անընդհատ հիմնական քննության ենթարկեց Դաշնակցության հին մտայնությունը, նրա ժողովրդասպան գործունեությունը: Շարքային բանվորներից, գյուղացիներից ու աշխատավորական ինտելիգենտներից կազմված այդ բազմամարդ համագումարը (նրա նմանը Դաշնակցությունը չի ունեցել) իր անցյալում Հոկտեմբերյան հեղափոխության լույսի տակ վերագնահատության ենթարկեց Դաշնակցության սոցիալական և, մանավանդ, ազգային ծրագիրն ու քաղաքականությունը:

Համագումարն իր քննադատական վերագնահատական աշխատանքից հանեց տրամաբանական ճիշտ եզրակացություններ: Նա ժխտեց Դաշնակցություն կուսակցության գոյության իմաստը և հայտարարեց նրա լիկվիդացիան: Համագումարն ամենավճռական խոսքերով բացասեց ու հրաժարվեց Հայաստանի աշխատավորությանը իմպերիալիստական պետություններին ծառայելու դաշնակցական մտայնությունից և կտրականորեն հարեց Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշակին:

Այս բոլոր որոշումներով 4000 շարքային նախկին դաշնակցականներ ներկայացնող համագումարն անցյալի ժանգոտ շղթաները փշրելու մի համարձակ հարված իջեցրեց, որն ունի խոշոր քաղաքական նշանակություն Հայաստանի ներքին կյանքում և գաղութահայ աշխատավորության համար մասնավորապես: Հայաստանի համայն բանվորության և գյուղացիության միացյալ ֆրոնտի այն նպատակը, որին ձգտել է շարունակ Կոմունիստական կուսակցությունը, այդ նպատակն այսօր իրականանում է:

Բանվորագյուղացիական այդ ֆրոնտի դարանակալ թշնամի Դաշնակցությունն այսօր նախկին դաշնակցականների կամոք լիկվիդացիայի է ենթարկվում, վտարվում վերջնականապես Խորհրդային Հայաստանի սահմաններից: Այլևս հեռավոր գաղութներում նստած դաշնակցական լիդերները քաղաքական և ոչ մի իրավունք չունեն խոսելու Հա-

---

** Պահպանվել է «Նոյեմբեր 20-ի համագումարը» Ալ. Բակունցի ամփոփիչ հոդվածը (ինքնագիրը), որը տվյալ հոդվածի տարբերակ է: (Տես ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.222, թ.1-5):*

յաստանի մասին, քանի որ նրանց վերջին հետևողներն այսօր երես են թեքում նրանցից, այրում իրենց հետևից բոլոր դաշնակցական կամուրջները:

Հայաստանի շարքային դաշնակցականների հեղափոխական վճռականությամբ կատարված ազատագրական ակտն իր բարեբեր ու դրական ազդեցությունը պիտի ունենա նաև գաղութահայ աշխատավորության վրա: Այդ աշխատավորության մի զգալի հատվածը տակավին դեգերում է Դաշնակցության լծի տակ, հավատում նրա կարողությանը որևէ ազգային կամ սոցիալական խնդիր լուծելու: Ճիշտ է, գաղութահայ աշխատավորության այդ հավատը բավականաչափ տատանված է արդեն և Հայաստանից վտարված ղեկավար դաշնակցականները մեծ դժվարությամբ է, որ կարողանում են իրենց ազդեցության դիրքերը պահպանել: Այսօր Հայաստանի նախկին դաշնակցականների այս համագումարի տված հարվածներից պիտի շարժվի նաև գաղութային Դաշնակցությունը:

Հայաստանի խորհրդային հեղափոխության երրորդ տարեդարձին հոյակապ նվեր է Դաշնակցության լիկվիդացիան հանրապետության սահմաններում: Այդ նշանակում է, որ Խորհուրդների 3-րդ համագումարի հավաքվող Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն իրենց մյուս հաղթանակների ու գրավումների հետ կարող են արձանագրել և այն, որ միացյալ ու կուռ ֆրոնտ է կազմում Հայաստանի աշխատավորությունը և այդ ֆրոնտին ներքուստ սպառնացող վտանգը պիտի համարել համարյա ոչնչացած:

Խորհրդային Հայաստան, 25 նոյեմբերի 1923թ.:

127. Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ ընկ. Մելիք-Հովսեփյանին

16 հունվարի 1925թ.

Թիվ 633/գ

Կից ուղարկելով Դաշնակցություն կուսակցության և Դաշերիտմիության վերացման վրա ծախսված 9363ռ. 95կ. գումարի մասին հաշվետվությունը, խնդրվում է ընդունել հաշվետվությունը և նշված գումարը վերադարձնել ՀԿԿ Կենտկոմի վարկերը վերականգնելու համար:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.46, թ.1: Թարգմ. ռուս.:

128. Իմ համառոտ կենսագիրը*

24 փետրվարի 1924թ.

Ծնվել եմ 1899թ. Գորիսում: Ծնողներս եղել են ընչազուրկ քաղաքացիներ: Սովորել եմ քաղաքի դպրոցում, ավարտել եմ 1910թ. և մտել ճեմարանը (էջմիածնում): 1914թ. ծանոթացել եմ Դաշնակցության գործունեության հետ, 1915թ. օգոստոսին բանտարկվել եմ Գորիսում, Շուշվա «Փայլակ» թերթում Գորիսի ադմինիստրացիայի հասցեին ֆելիետոն գրելու համար:

Ընտանիքի ծանր նյութական վիճակը ստիպում էր ինձ ծառայության մտնել շատ կանուխ, դեռ 1912թ. (քաղաքի գրադարանում, ռեպետիտոր և այլն): Բանտարկությունից հետո ութ ամիս պաշտոնավարել եմ Զանգեզուրի Լոր գյուղում, որպես ուսուցիչ: 1916թ. աշնանը շարունակել եմ ընդհատված ուսումս, մինչև 1917թ. (ճեմարանը ավարտել եմ 1917թ.):

1917թ. փետրվարյան հեղաշրջումից հետո մինչև 1917թ. նոյեմբերը եղել եմ Զանգեզուրում, Դաշնակ[ցության] կոմ[իտեի] անդամ, շրջիկ-հրահանգիչ, կոմ[իտեի] քարտուղար. Զանգեզուրի կողմից մասնակցել եմ 1917թ. ապրիլի վերջին Բագվի դաշն[ակցական] կոմ[իտեի] ռայոնական ժողովին: Ղեկավարել եմ Սահմանադիր ժողովի ընտրությունները Ղափանի շրջանում: Այդ ժամանակամիջոցում (15-17թթ.) աշխատակցել եմ «Հորիզոնին» և «Աշխատավորին»: 1917թ. վերջին (նոյեմբ.) եկել եմ Երևան, ապա էջմիածին (ճեմարան), ուր կուս[ակցական] հրահանգի համաձայն, ճանապարհվել եմ Էրզրում, որպես կամավոր: Սովորել եմ Էրզրումի Учебная команда-ում, մասնակցել եմ Էրզրումի Դաշնակց[ության] կոմիտեի աշխատանքին՝ մանավանդ բանակի մեջ: Էրզրումից անցել եմ Մամախաթուն և Բայբուրթ, մասնակցելով բոլոր կռիվներին:

Մինչև 1918թ. հոկտեմբերը եղել եմ բանակի շարքերում, որպես զինվոր մասնակցել եմ Էրզրում-Սարիղամիշ-Ղարս-Սելիմ-Արդահան և մինչև Սարդարապատ եղած կռիվներին և ապա հայ-տաճկական առաջին հաշտությունից հետո (1918թ.) ենթարկվել զորացրման ու փոխադրվել Երևան: Ղարսում եղած ժամանակ մասնակցել եմ «Ռազմիկ» թերթի խմբագր[ության] աշխատանքներին: Երևանում տեղավորվեցի «Լույս»

** Փաստաթղթի վրա կա Կոմունիստական կուսակցության մեջ ընդունող հանձնաժողովի օգոստոսի 16-ի մակագրությունը՝ «Դնել բջիջի նիստին»: Նշանակում է Բակունցը կենսագրությունը գրել է Կոմունիստական կուսակցության մեջ ընդունվելու համար:*

տպարանում սրբագրիչի պաշտոնով, ապա սրբագրում էի «Զանգը» (Դաշն[ակցության] Երևանի կոմ[իտեի] օրգան): Եղել եմ «Զանգի» խրոնիկյոր, «Հառաջի» խմբագրության թարգման և լրատու, «Հայաստանի Աշխատավորի» խմբագրության աշխատակից: Դաշնակցական պարլամենտում մինչև 1919թ. հոկտեմբերը եղել եմ նիստերի արձանագրող (ստենոգրաֆիստ):

Այդ ժամանակ, և մանավանդ պառլամենտի աշխատանքների ընթացքում, իմ մեջ առաջացել էր տարակուսանք ու դժգոհություն Դաշն[ակցության] հանդեպ: Օգտվելով այն վատ տպավորությունից, որ թողել էր Դաշնակցության կոալիցիան ժող[ովրդական] կուսակցության հետ երիտասարդ դաշնակցակ[անի] վրա, մի փոքր խմբակի հետ մեզ հաջողվեց կազմել ժողովրդական մի ցույց ընդդեմ «ժողովրդական» կուսակցության (կադետների): Այդ ցույցը, ինչպես և շատ ինցիդենտներ, Դաշնակցության ներկուսակցական մի շարք հարցեր ու նրա վարած քաղաքականությունը, պատճառ դարձան, որ 1919թ. նոյեմբերին հեռանայի Հայաստանից դեպի Թիֆլիս: Թիֆլիսում մտել եմ Թիֆլիսի պոլիտեխնիկումի գյուղատնտեսական ֆակուլտետը, միևնույն ժամանակ և պաշտոնավարել եմ Մոսկվայի կոմիտեի որբերի գիմնազիայում: Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո անցել եմ Ռուսաստան (1920թ.) և հաստատվել Խարկովում:

Խարկովում 1920թ. մտել եմ Ուկրաինայի գյուղատնտեսական ինստիտուտը և ավարտել 1923թ. հուլիսին: Խարկովում ծառայել եմ պետական հիմնարկներում, տարել եմ կուլտուր-կրթական աշխատանք, կազմակերպել եմ մի շարք դասախոսություններ, ակտիվ մասնակցություն եմ ցույց տվել Խարկովի Շահումյանի անվան բանակումբի աշխատանքին:

1923թ. դեկտեմբերին, ընկեր Գուրգեն Խարմանդարյանի աջակցությամբ, Խարկովում փորձել եմ նախաձեռնել լիկվիդացիոն շարժում դաշնակցականների մեջ: Այդ շարժումը, սակայն, հաջողության չհանգեց:

1923թ. հուլիսի վերջերին վերադարձել եմ Հայաստան: Երկրի վիճակին, մանավանդ Դաշնակցության վերջին տարիների գործունեության հետ տեղն ու տեղը ծանոթանալուց հետո, Դաշնակցության հետ ունեցած կապերի խզումից բացի, ուրիշ ուղի էլ չկար:

Երևանից ճանապարհվեցի Զանգեզուր, ուր մնացի մոտ երկու ամիս (դասախոսում էի Զանգեզուրի ուսուցչական դասընթացքներում): Մինչև Երևան վերադառնալը ես ուշիմ ու մանրամասն քննել եմ գյուղացիների վիճակը, գյուղերում մնացած հատ ու կենտ դաշնակցական գործիչներից հարցրել եմ դեպքերի ու դեմքերի նկարագիր և այդ ամենը

ինձ համոզեց, որ փետրվարյան ավանտյուրայից հետո Դաշնակցության վտարումը Հայաստանից եղել է ամենահեղափոխական էջը Հայաստանի աշխատավորության պատմության:

Այդ բոլորի արդյունքը Զանգեզուրի Դաշնակցության նախկին Կենտկոմի ծանոթ կոչն էր և այն շարժումը, որ ծավալվեց ամբողջ Հայաստանում և որի բնական հանգումը եղավ 1923թ. նոյեմբերի 20-ի Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը: Այդ համագումարի կազմակերպման մեջ ես ցույց եմ տվել ակտիվ մասնակցություն և որպես նախագահ ղեկավարել եմ նախաձեռնող բյուրոյի աշխատանքը մինչև համագումար: Համագումարից հետո ես մինչև այժմ էլ աշխատում եմ Հողժողկոմի սերմաբուծարանում, որպես գյուղատնտես, միևնույն ժամանակ հետևում նոյեմբեր 20-ի համագումարի սղագիր հաշվետվության հրատարակման:

1924թ. փետր[վարի] 24

Աղեքսանդր Բակունց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4, ց.2, գ.1218, թ.5 և հակ.-6: Ինքնագիր:

129. Իմ՝ Հայկ Սիմոնյան Ավալյանիս կենսագրությունը

4 հոկտեմբերի 1921թ.

Երևան

Ծնվել եմ 1890թ. Գյանջում: Հայրս դերձակ էր իր արհեստով, կրթությամբ գրագետ և հին սովորությունների տեր մարդ: Սովորել եմ Գյանջի քաղաքային 6-դասյան դպրոցում, որը և ավարտել եմ 1908թ...

II. Ինչ կուսակցությունների մեջ եմ աշխատել

1903թ. անդամակցել եմ դաշնակցական մանկիկ խմբում և մնացել եմ պասիվ անդամ մինչև 1909թ., հասակիս փոքր լինելու պատճառով:

1909թ. անցել եմ Բաքու և ակտիվ մասնակցել բանվորների կազմակերպման Սաբունչի, Սամանի, Բալախանի, Զաբրադ, Սարուխանի և Բիբիէյբաթ, իբր հրահանգիչ և կազմակերպիչ:

1913թ. տեղափոխվել եմ Սաբունչի և 1914թ. դաշնակցական Բալախանու կոմիտեի անդամ ընդունվել Բալախանու բանվորների կողմից մինչև 1918թ.:

1919թ. տեղափոխվել եմ Երևան և մի խումբ Բագվա ընկերների ջանքերով վերընտրվել Երևանի մեշչանական կոմիտեն և կազմել Երևանի կոմիտե, որի անդամ եղել եմ մինչև մայիսի 8-ը:

Եղել եմ ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների կոմիտեի քարտուղար 1920 թվից, դեկտեմբերի 17-ին ընդունվել իբրև կոմունիստական կուսակցության թեկնածու, իսկ ապրիլ ամսում իբրև անդամ Կոմկուսակցության:

III. Իմ հեղափոխական անցյալս

... Կանգնած լինելով Հոկտեմբերյան հեղափոխության նշանաբանների տեսակետի վրա և երկար ժամանակ շփվելով ու աշխատելով Բալախանու բանվորների կողմից, առանց կուսակցության և խտրության:

... Եղել եմ ամբողջ ժամանակը կուսակցության մեջ ձախ թևի ներկայացուցիչ: Բագվում ենթարկվել եմ 3 անգամ կուսակցական դատի, երկու անգամ, հակառակ Կենտրոնական կոմիտեի որոշման, բանվորներին հորդորելու՝ պաշտպանել բանվորական խորհուրդները և երկրորդ անգամ՝ բ.խ. հակառակ կուսակցության որոշման միացել եմ կ. ֆրակցիայի բանաձևին իմ ընկերների հետ միասին, իսկ երրորդ անգամ՝ անպատվելով Կենտրոնական կոմիտեի և բյուրոյի անդամներին, նրանց կործանարար քաղաքականությունը:

1919թ. հունիսին մի խումբ Բագվա ձախ ընկերների հետ միասին գալով Երևան, մեր առաջին խնդիրն է լինում վերընտրել Երևանի քաղաքային կոմիտեն, որը մեզ հաջողվում է: Գաղտնի կազմվում է մեր ձախերի բջիջը, հանձնարարվում է ինձ կազմակերպել արհմիություններ, որի առաջին գործն է լինում դարձյալ կազմակերպված տոնել Մայիսի 1-ը, ձեր խոնարհ ծառայի նախագահությամբ Երևանում: Այդ ցույցը կազմված է լինում 3-րդ՝ Կոմունիստական ինտերնացիոնալի և ամբողջ իշխանությունը աշխատավորության նշանաբանով: Մայիսի 3-ին ներքին գործոց նախարար Ա. Գյուլխանդանյանը ինձ հրավիրում է միլիցապետի պաշտոնով: Արհեստակցական միությունների միության վարչության հետ խորհրդակցելուց հետո մերժվում է այդ առաջարկությունը: Մայիսի 6-ին Դաշնակցության տեղական քաղաքի կոմիտեն, որի պրեզիդիումի անդամն էր Ձեր խոնարհ ծառան, որոշում է պառլամենտը ցրել և հրավիրել բանվորական խորհուրդներ և իշխանությունը տալ նրան: Կենտրոնական կոմիտեն և Բյուրոն դեմ լինելով, քաղկոմիտեն համարում են լուծված: Մայիսի 8-ին կազմվում է նոր կաբինետ*, Հ. Օհանջանյանի ղեկավարությամբ: Սիմ. Վրացյանը աշխատանքի և հողագործության նախարար հրավիրում է ձեր խոնարհ ծառային իր օգնականը՝ աշխատանքի պաշտպանության նախարարի օգնականի

պաշտոնով: Լինելով դեմ պառլամենտարիզմի նրա քաղաքականության, հրաժարվում եմ այդ պաշտոնից: Մայիսի 18-ին ենթարկվում եմ ձերբակալության. հանձնում են կուսակցական դատի 3-րդ ինտերնացիոնալի լոզունգի և ամբողջ իշխանությունը աշխատավորությանը նշանաբանների կոչի և թռուցիկի առթիվ և ենթարկում են երեք ամսվա բանտարկության, և կուսակցությունից հեռացնելով միանգամայն:

Հիսունհինգ օր բանտարկությունից (Երևանի կենտրոնական բանտ) հետո համարվելով կուսակցությունից հեռացված, ակտիվ կերպով անցնում ենք մի շարք ընկերներով Ձախ Դաշնակցության անվան տակ դեզօրգանիզացիա մտցնել Դաշնակցության շարքերը և անցնել պոդպոլնիյ կուսակցական աշխատանքի:

Բոլոր գրության ասածներիս մասին հաստատելու համար ունեմ գրավոր վկայականներ, մեռած և կենդանի ընկերների հետ կարող եմ ներկայացնել առաջին պահանջման դեպքում: Կուսակցական անդամատոմս թիվ 2839: Եղել եմ 4-րդ Համարհմիութենական համագումարի անդամ Հայաստանից:

Ապրում եմ Մալյարսկի թիվ 11, ծառայում եմ առժողկոմում, դեղագիտական բաժնի վարիչ և բժշկասանիտարական աշխատավորների կենտրոնական վարչության նախագահ:

Հ. Ս. Ավալյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4, ց.2, գ.773, թ.41 և հակ.-45 և հակ.:
Ինքնագիր:

* *Համազասպ Օհանջանյանի կառավարական կաբինետը (Բյուրո-կառավարություն) կազմավորվել է մայիսի 5-ին:*

130. Կենսագրություն

28 փետրվարի 1924թ.

1906 թվին Զանգեզուրի Բռնակոթ գյուղից գնացել եմ Բագվի նավթաշխարհը: Այնտեղ Խատիսյանի, Պիտոևի և «Օլյովի» նավթահանքերում աշխատել եմ որպես սլեսար և ժելոնչիկ:

Բագվում 1907 թվին որպես համակրող մտել եմ ՀՅԴ Բիբիէյբաթի բանվորական խմբերի մեջ:

... Վերոհիշյալ տարիներում միշտ մասնակցում էի մեր կուսակցական գաղտնի ժողովներին և շատ անգամ հանձն էի առնում կուսակցության գաղտնի թռուցիկները ցրել բանվորների շրջանում, հետաքրքրվում ու լսում էի ուրիշ կուսակցությունների պրոպագանդիստներին, որոնք այդ թվերում նույնպես գաղտնի դասախոսություններ էին կարդում:

1912 թվին Բիբիէյբաթում մայիսի 1-ին մի քանի գործարանների բանվորների տոնման առթիվ իմ կատարած աշխատանքի շնորհիվ ձերբակալվեցի կոզակների կողմից և ուժեղ ծեծ ուտելուց հետո ազատվեցի:

1914թ. համաշխարհային պատերազմի սկսվելուն պես վերադարձա ծննդավայրս: Այդ օրերում մեր Զանգեզուրում և թե շրջաններում ոչ մի կուսակցական (դաշնակցական) աշխատանք չկար: Զանգեզուրում գոյություն ուներ միմիայն մի Կենտրոնական կոմիտե, որը ծնունդ էր առած 1906 թվի հայ-թրքական եղբայրասպան կռիվների օրերից:

Սկսած 1912թ. ես աշխատակցում էի պարբերական մամուլում, գլխավորապես «Հորիզոն» և Բագվի «Արև» թերթերում, Նիկսար, Նիգտաս և Ն. Կրմենանց ստորագրություններով...

1917 թվին ցարական կառավարության տապալումից հետո ապրիլ ամսում Դաշնակցության Արևելյան բյուրոյի կողմից կուսակցական մոբիլիզացիայի ենթարկվեցի և որոշ ժամանակ Մեղրու շրջանում աշխատելուց հետո անցա Զանգեզուր, այնտեղ ես սկսեցի կուսակցական աշխատանքներ տանել, իմ ծննդավայր Սիսիանի շրջանում ընտրվեցի շրջկոմի նախագահ, որից հետո մի քանի ընկերների հետ կազմակերպեցի կոոպերատիվ խանութներ...

Նույն թվին Սահմանադիր ժողովի ընտրությունների միջկուսակցական լիազոր Զաքարյանցի կողմից նշանակված էի Սիսիանի 35 հայ և թուրք գյուղերի Սահմանադիր ժողովի ընտրությունների միջկուսակցական շրջլիազոր:

... Նույն թվում Զանգեզուրի կառավարության կողմից հրավիրված

էի Զանգեզուրի 2-րդ և 3-րդ շրջանների պարենավորման կոմիսար... Չկարողանալով տանել այդ քավորտեղման մթնոլորտը, 1920 թվին տվի հրաժարականս և վերադարձա գյուղ և նորից զբաղվեցի հողագործությամբ...

Բռնակոթում Նժդեհը ինձ կանչում և առաջարկում է ընդունել հակահետախուզական պետի պաշտոնը Սիսիանում... Խորհրդակցելով մի քանի կուսակցական (դաշնակ) ընկերների հետ, եկանք այն եզրակացության, որ ես ընդունեմ այդ պաշտոնը, որպեսզի թույլ չտամ մեր Սիսիանի 30-40 գյուղերում սպանություններ լինելու: Այդ պաշտոնը ընդունելու առիթ ինձ դրդեցին և իմ ազգական երկու կոմունիստներ: Այդ պաշտոնում մնացի 2 և կես - 3 ամիս...

Ահա այդ օրերում ես ստանում եմ Դաշնակցության Արևելյան բյուրոյից և Զանգեկենտկոմից մի նամակ, որ շտապ կերպով իրենց զեկուցեմ, որպես Սիսիանի շրջկոմի նախագահ, թե արդյոք ինչպե՞ս են տրամադրված մեր սիսիանցիները դեպի բոլշևիկները, արդյո՞ք նորից կարող են վերագրավել խլված Դարալագյազը ու Երևանը...

Զանցած ևս մի քանի օր դաշնակցականները չվում են դեպի Պարսկաստան: Տեսնելով դաշնակցականների գազանությունները, դաշնակցական մարդը այլևս չէր կարող հաշտվել մնալու մտքի հետ, ուստի շատերի հետ անցանք Պարսկաստան: Պարսկաստանում տեսնելով, որ նորից ավանտյուրաների մասին են մտածում և ուզում են գաղտնի ավազակախմբեր անցկացնել և այլն, մի խումբ ընկերների հետ կուսակցական ժողովներ գումարելով, արծարծեցինք այն միտքը, որ Բյուրոյի անդամները պետք է Թավրիզի հորիզոնի տակից հեռանան և Բյուրոյի տեղ պետք է ընտրել մի գաղթականական կոմիտե (դաշնակցականներից) և բանակցության մեջ մտնել խորհրդային իշխանության հետ և ավանտյուրայի զոհ գաղթականությանը վերադարձնել Հայաստան:

... Ես արհամարհում էի նրանց սպառնալիքները ու տեռորները և որպեսզի միանգամայն ազատագրվենք այդ դաշնակցական խեղդեցուցիչ մթնոլորտից և բազմագույն ավազակներից կազմված դաշնակցական կոլեկցիայից, մի խումբ ընկերների հետ Բյուրոյին ուղարկեցինք մեր հրաժարականը և հետո «Զանգ» թերթին տվինք մեր դեկլարացիան: Որպեսզի միանգամայն ցրենք ու լիկվիդացիայի ենթարկենք Թավրիզում հավաքված ու գտնվող Հայաստանի Դաշնակցությունը, որոշեցինք մեզ՝ հեռացողներիս անվանել «Հայաստանի աշխատավոր դաշնակցականներ»...

Մեր դեկլարացիան լույս տեսնելուց Թավրիզի դաշնակցականների մեջ լքում առաջացավ: Մեծամասնությունը հակված էր դեպի մեր կող-

մը...

Ես որոշեցի վերադառնալ Հայաստան և ազատ կերպով մեր աշխատավորությանը մամուլի և բրոշյուրների միջոցով իրազեկ դարձնել մեր դաշնակցական լիդերների գործողությունների և հակահեղափոխական ընթացքի մասին:

Ութ ամիս Թավրիզում մենք նպաստ էինք ստանում Թավրիզի հայկական դեսպանից և խորհրդային հիմնարկությունների ծառայողների կողմից հավաքած ու մեզ տված գումարներով:

Երկար այդտեղ մնալ ու շնչել դաշնակցական ճահիճում, զզվանք էր թվում ինձ, ուստի լեգալ կերպով վերադարձա Հայաստան և ապա Զանգեզուրում 3 ամիս մնալուց հետո որոշեցի գալ Երևան և, ծառայության մտնելով, կատարել իմ պարտքս...

Հեռացա Զանգեզուրից և ընտանիքով գնացի Բագու: Այնտեղ ևս սկսեցին հալածել: Ես վերադարձա Երևան և այս բոլորի մասին զեկուցեցի ընկ. Պապիկին և ընկ. Շահսուվարյանցին: Վերջինիս խորհրդով ընտանիքս փոխադրեցի Երևան և ինձ տրվեց ասպարեզ անելու այն, ինչ որ Թավրիզից վերադառնալուց պիտի անեի, այն է՝ Հայաստանում թաղել Դաշնակցությունը որպես հայ աշխատավորության գերեզմանափորի: Այժմ թաղված է Դաշնակցությունը, իսկ առանց քաղաքական կյանքի ես ինձ համարում եմ ավելորդ բեռ այս հեղափոխական մթնոլորտում:

Նիկ. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.185ա, թ.66 և հակ.-70 և հակ.: Ինքնագիր:

131. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

24 օգոստոսի 1928թ.

Լսեցին. Մ. Սաֆրազբեկյանի, Կրմենանցի և մյուսների գործը: (Զեկ. Մ.- Հովսեփյան):

Որոշեցին. 1) Կալանքից ազատել Կրմենանցին, նկատի ունենալով նրա աշխատանքը Դաշնակցության կազմալուծման գծով:

2) Հաստատել Հայաստանի Պետքաղվարչության կոլեգիայի որոշումը Մ. Սաֆրազբեկյանի նկատմամբ սոցիալական պաշտպանության բարձրագույն միջոցը՝ գնդակահարությունը կիրառելու մասին:

3) Ի փոփոխումն Հայաստանի Պետքաղվարչության կոլեգիայի որոշման Ավ. Բունիաթյանի նկատմամբ պատժի բարձրագույն միջոցը փոխարինել 10 տարվա բանտարկությամբ համակենտրոնացման ճամբարում:

4) Մյուս մեղադրյալների նկատմամբ Հայաստանի Պետքաղվարչության կոլեգիայի որոշումը հաստատել:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.8, գ.31, թ.50: Թարգմ. ռուս.:

132. Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար Հ. Կոստանյանին

Պատճեն՝ Կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանին

ՊՔՎ կալանավոր Նիկ. Կրմենանցից

Դիմում*

8 փետրվարի 1929թ.

Իններորդ ամիսն է ես ձերբակալված եմ, և սա առաջին անգամը չէ, որ ես ձերբակալվում եմ...

Ես 1907 թվից մինչև 1921 թիվը եղել եմ Դաշնակցություն կուսակցության անդամ և նրա շարքերից հեռացել եմ Թավրիզում և կատաղի պայքար սկսել նրա դեմ:

Այնտեղ Թավրիզում, Դաշնակցության Արևելյան Բյուրոյի անդամ Ռուբեն փաշայի անունից, եղիշե Իշխանյանի բերանով ինձ հայտնած ու արած նախազգուշացումը, այն է՝ տեռորի սարսափը ինձ չկարողացավ հետ կանգնեցնել իմ պայքարից: Հետ չկարողացավ կանգնեցնել ու նաև նույն Ռուբեն փաշայի դիրեկտիվներով գործող Կարո Սասունու փաղաքշանք-առաջարկությունները, այն է՝ վերադառնալ ՀՅԴ գիրկը, ստանալ մի քանի հարյուր թուման դրամ, ճանապարհվելով Թեհրանի շրջանը՝ կուսակցական աշխատանք տանել և ապա անցնել արտա-

* *Դիմումը բերվում է քաղվածաբար:*

սահմանում սովորելու Դաշնակցության հաշվին:

Ասում եմ չկարողացավ հմայել, որովհետև իմ մեջ կուտակված բեկումը, որը ծայր էր առել Զանգեզուրում եղածս ժամանակվանից, չէր բխում անձնական շահից, փառքից ու եսից և ոչ էլ բոլշևիկյան սարսափից, ինչպես բղավում-որակում էին արտասահմանում վխտող դաշնակցականները, այստեղ Խորհրդային Հայաստանում 1923թ. շարքային դաշնակցականների լիկվիդացիայի առթիվ գրած դեկլարացիաների առթիվ, որի առաջին կազմակերպողը ես էի: Այնտեղ, Պարսկաստանում իմ հեռանալու պատճառը բխել էր Դաշնակցության իդեոլոգիայի արգասիք հակաաշխատավորական, ավանտյուրիստական ու կործանարար քաղաքականությունից:

Մանրամասն թվել, պատմել Պարսկաստանում իմ մղած պայքարի բնագավառում իմ արած մերկացումներն ու անալիզը, չեմ կարող: Իսկ եթե դուք կուզենաք ծանոթանալ, այդ դեպքում, խնդրում եմ, կանչել Ձեզ մոտ Պետքաղվարչության աշխատակիցներ Արշակ Սարգսյանին, Միշա Միխայելյանին և առհասարակ նրանց, ովքեր 1921-22 թվերում Թավրիզում են եղել: Այդ կենդանի վկաներից դուրս գուցե հանրային գրադարանում լինի իմ այնտեղ հրատարակած խմորատիպ շաբաթաթերթի համարներից, նույնպես և «Զանգ» թերթի համարներից, որտեղ հրապարակած հոդվածների իմաստից ավելի քան հնարավոր կլինի պարզել իմ էությունս և իմ պայքարի բնույթը...

Կալանավոր՝ Նիկ. Կրմենանց

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.9, գ.44, թ.2 և հակ.-5 և հակ.: Ինքնագիր:

133. Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին

27 փետրվարի 1929թ.

Բանտարկյալ Նիկոլայ Կրմենանցի դիմումի էության կապակցությամբ հայտնում ենք հետևյալը. Կրմենանցը նախկին դաշնակցական է: 1921թ. եղել է դաշնակցական հակահետախուզության պետ: Նժդեհի արկածախնդրության ժամանակ Զանգեզուրի Սիսիանի շրջանում մեծ դեր է խաղացել կոմունիստներին հետապնդելու, բանտարկելու, ծեծելու և գնդակահարելու գործում: Հակահետախուզական գործունեության համար Հայաստանի ՊՔՎ-ի կոլեգիան Կրմենանցին դատապարտել է սոցիալական պաշտպանության բարձրագույն չափին՝ գնդակահարության, բայց ներման է ենթարկվել և գնդակահարությունը փոխարինվել է 3 տարվա աքսորի՝ համակենտրոնացման ճամբարում, նկատի ունենալով ժամանակին նրա հեռանալը Դաշնակցությունից և այդ կուսակցության կազմալուծման գծով նրա աշխատանքը Խորհրդային Հայաստանի համար 1921-1922թթ. ծանր օրերին:

Մենք գործն ուղարկել ենք ԱնդրՊՔՎ, հաստատման և միայն այս ամսվա 23-ին ստացել նրա կոլեգիայի որոշումը, որով Կրմենանցը դատապարտվել է գնդակահարության, այն փոխարինելով 10 տարվա համակենտրոնացման ճամբարով, կիրառելով Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարեդարձի առթիվ ներումը:

Հայպետքաղվարչության նախագահի տեղակալ՝ Պետրոսյան

Գաղտնի բաժնի պետ՝ Պողոսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.9, գ.44, թ.9: Թարգմ. ռուս.:

Գլ. V

Երիտասարդ դաշնակցականների միության համագումարը

Ա. Համագումարի նախապատրաստումը

134. ՀԿ(բ)Կ Դիլիջանի գավկոմի տեղեկատու կեկույցից

<Ոչ շուտ սկիզբը հունիսի 1923թ.>*

Բացահայտ հակակոմունիստական երիտասարդական կազմակերպություններ չկան, բայց Դիլիջան քաղաքում աչքի է զարնում նախկին երիտասարդ դաշնակցականների հայտնի խումբը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.116, թ.17 հակ.: Թարգմ. ռուս.:

** ժամանակը դրվում է ըստ փաստաթղթի բովանդակության: Այն մոտիս ամսվա զեկույցն է:*

135. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

6 սեպտեմբերի 1923թ.

Լսեցին. Դաշերիտմիության փլուզումը: (Զեկ. Գումեդին):

Որոշեցին. Դաշերիտմիության կազմալուծման գծով աշխատանքը ղեկավարելու համար առանձնացնել Կենտկոմի նախագահության անդամ ընկ. Մուշեղ Մինասյանին: Առաջարկել նրան կապվել Դաշերիտմիությունից հեռացողների ու հին ակտիվիստների հետ Դաշերիտմիության կազմակերպությունը խորտակելու գործում նրանց օգտագործելու նպատակով: Հավաքել Դաշերիտմիության մասին գավառներում գոյություն ունեցող նյութերը՝ Երևան, Ալեքսանդրապոլ, էջմիածին, Դարաքիլիսա և Զանգեզուր:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.23, թ.22: Թարգմ. ռուս.:

136. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

9 սեպտեմբերի 1923թ.

Լսեցին. Նախկին երիտասարդ դաշնակների համագումարի մասին:

Որոշեցին. Ի նկատի ունենալով, որ քայքայման աշխատանքները սկսված են ուշ, համագումարի հավաքումը նոյեմբերի 20-ին համարել անհնար և հետաձգել Դաշնակցություն կուսակցության համագումարից հետո:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.23, թ.34:

137. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

16 հոկտեմբերի 1923թ.

Լսեցին. Դաշերիտմիության լիկվիդացիայի մասին: (Զեկ. Մինասյան):

Որոշեցին. 1) Դաշերիտմիության լիկվիդացիայի բյուրոն չմիացնել Դաշկուսակցության այդ նպատակով գործող Բյուրոյի հետ:

2) Կազմել առանձին ինիցիատիվ բյուրո բոլոր երիտասարդական հակախորհրդային կազմակերպություններին լիկվիդացիայի ենթարկելու համար:

3) Հակակոմունիստական այն էլեմենտը, որը չի ցուցադրում իր քաղաքական դեմքը, աշխատել հասնել նրանց դեկլարացիային, ուր պարզելով իրենց անցյալը, նրանք հրապարակ կբերեն իրենց պլատֆորմը:

4) Բյուրոյի աշխատանքների ծախսերը հոգալու համար դիմել կուսկենտկոմին, որպեսզի նա տրամադրի համապատասխան դրամական միջոցներ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.23, թ.28-29:

138. Ընկեր Ավալյան

19 հոկտեմբերի <1923թ.>*

Խնդրում եմ ուսանողների մեջ տարվող աշխատանքը իրագործել Դաշերիտմիության կազմալուծման բյուրոյի միջոցով: Բայց լիազորներ չառաջադրել, որոնք վարկաբեկում են մեր ընկերներին:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ Ա. Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.43: Թարգմ. ռուս.:

---

*Տարեթիվը որոշվում է ըստ փաստաթղթի բովանդակության:

139. Ընկեր Ավալյան

23 հոկտեմբերի <1923թ.>*

Խնդրում եմ ուսանողների շրջանում տարվող ամեն տեսակ աշխատանք դադարեցնել և այն հանձնել Դաշերիտմիության կազմալուծման նոր կազմակերպվող բյուրոյին:

Ա. Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.14ա, թ.46: Թարգմ. ռուս.:

---

*Տարեթիվը որոշվում է ըստ փաստաթղթի բովանդակության:

140. Դեկլարացիա նախկին երիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի

31 հոկտեմբերի 1923թ.

... Կոչ ենք անում համախմբել մեր շուրջը բոլոր նրանց, ովքեր բաժանված են Դաշնակցությունից, բայց դեռ վարանում են, որոնք բեկված են, բայց դեռ տատանվում են, որոնք գիտակցում են, բայց դեռ չեն վճռել, և որոնք հավատում են պրոլետարիատի մոտակա հաղթանակին և հարում են նրա ղեկավար շտաբին՝ Կոմունիստական Ինտերնացիոնալին:

1. Մկրտիչ Մարգարյան, 2. Միքայել Մարության,

3. Մամբրե Տ.-Հակոբյան, 4. Գրիգոր Գրիգորյան, 5. Տիգրան Վանյան , 6. Սարգիս Բեգլարյան, 7. Միքայել Գաբրիելյան

Ծանոթ. - Բյուրոյի գրասենյակի հասցեն կհայտարարվի առանձին:

Բյուրո

Մարտակոչ, 31 հոկտեմբերի 1923թ.:

141. ԴեկլարացիաՆախկին դաշնակցական Երկրի աշակերտական միության

6 նոյեմբերի 1923թ.

Մենք՝ նախկին դաշնակցական Երկրի աշակերտական միության անդամներս միասնորեն հեռանում ենք Դաշնակցությունից:

Դաշնակցությունը որպես քաղաքական կուսակցություն այլևս գոյություն ունենալ չի կարող: Նա թարգման չի հանդիսացել և չի հանդիսանում աշխատավորական այն մասսաների, որոնց անունից նա սիրում է խոսել, և որը այժմ իշխանության գլուխ է անցել...

Կորչի՛ միջազգային ֆաշիզմը:

Կե՛ցցե Կոմունիստական ինտերնացիոնալը:

Կե՛ցցե համաշխարհային հեղափոխությունը*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.217, թ.11 և հակ.:

---

* Հետևում է 24 ստորագրություն:

142. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

18 նոյեմբերի 1923թ.

Լսեցին. Դաշերիտմիության մասին: (Զեկ. Մինասյան):

Որոշեցին. 1) Ի նկատի ունենալով, որ Կենտկոմը մի քանի անգամ

---

*Իմա՝ իրենապես (գաղտագրապես):

փորձել է կազմալուծել Դաշերիտմիությունը և որ իդեալապես* նա չի կազմալուծվել, համագումարի հավաքումը հետաձգել:

2) Գաղափարական ֆրոնտում հաջող պայքարի համար առաջարկել բոլոր կազմակերպություններին զբաղվել Հայաստանի հեղափոխական շարժումների <ուսումնասիրությամբ>:

3) Առաջարկել ագիտբաժնին՝ ընկ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ պատասխանատու ընկերներից կազմել խմբակ և մոտ ապագայում Հնչակ ու Դաշնակցություն կուսակցությունների ուսումնասիրության ծրագիրը մշակել:

4) Խնդրել կուսակցության Կենտկոմին «Խորհրդային Հայաստան» թերթում հրատարակելու նախկին Դաշմիության անդամների դեկլարացիան:

5) Առաջարկել ագիտբաժնին կազմակերպել մի շարք դասախոսություններ համաշխարհային ֆաշիզմի մասին:

6) Առաջարկել ընկ. Մինասյանին ուսխորհրդի միջոցով անցկացնել համալսարանում քաղաքական զտում:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.23, թ.40:

143. Նախկին երիտասարդ դաշնակցականների համագումարի բյուրոյին

19 նոյեմբերի 1923թ.

Ներկա գրությամբ, չցանկանալով կրկնել «Խորհրդային Հայաստանի» համարներում համարյա ամեն օր կրկնվող հնի հայհոյանքի և նորի փառաբանության արդեն շաբլոնացած նախադասությունները, ուզում եմ միայն շեշտել այն հանգամանքը, որ ես գերադասեցի, հեղափոխական սկզբունքներին հավատարիմ մնալու համար, մտնել 3-րդ ինտերնացիոնալի դրոշի տակ, քան մնալով Դաշնակցության շարքերում, լինել համաշխարհային կապիտալի և ֆաշիզմի հետ:

Վերև հիշվածը հայտնելով Բյուրոյիդ, խնդրում եմ իրազեկ անել ինձ Բյուրոյիդ գործունեության և անելիքների հետ, որին ես պատրաստ եմ իմ ուժերը տրամադրելու:

Երպետ. համալսարանի գյուղֆակի 2-րդ կուրսի
ուսանող՝ Հ. Չալթիկյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.217, թ.17: Ինքնագիր:

144. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

3 դեկտեմբերի 1923թ.

Լսեցին. Նախկին երիտասարդ դաշնակների համահայկական համագումարի օրակարգի հարցերը:

Որոշեցին. Համագումարի համար ընդգծել հետևյալ օրակարգը.

1. Ընթացիկ մոմենտ:

2. Համագումար հրավիրող ինիցիատիվ բյուրոյի զեկուցումը:

3. Դաշնակցական կուսակցության և համակրող ուսանողների ու աշակերտական խմբակների մտայնության և գործելակերպի վերագնահատումը:

4. Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը:

Համագումարը հրավիրել դեկտեմբերի 30-ին:

Թեզիսները օրակարգի կետերի վերաբերյալ նախօրոք հաստատել նախագահության նիստին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.23, թ.43:

145. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

12 դեկտեմբերի 1923թ.

Լսեցին. Նախկին երիտասարդ դաշնակցականների համագումարի նախահաշվի հաստատումը:

Որոշեցին. Հաստատել 1470 ռուբլի չերվոն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.23, թ.50:

146. ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի որոշումը

19 դեկտեմբերի 1923թ.

Լսեցին. Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմի նախահաշիվը դաշնակցական սովորողների միության համագումար հրավիրելու համար:

Որոշեցին. Նպատակահարմար համարել համագումարի հրավիրումը: Իմանալ ՀԿԿ Կենտկոմի նկատառումները:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.3, գ.11, թ.100: Թարգմ. ռուս.:

147. Դեկլարացիա

Նախկին ՀՅԴ երիտասարդական միությունների

28 դեկտեմբերի 1923թ.

Մենք՝ ներքո ստորագրողներս պիտի հայտնենք ի լուր ամենին, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը եղել ենք ՀՅԴ երիտաշակերտական և ուսանողական միությունների անդամներ, որից հետո չենք պատկանել և ոչ մի կուսակցության:

Այսօր մենք մեր ուժերը տրամադրում ենք ՀՍԽ Հանրապետությանը և կաշխատենք երկրի վերաշինության, բարօրության և կրթական գործերի համար:

Կ. Աֆրիկյան, Կ. Ղազարյան, Ա. Սրապյան,
Ա. Թալալյան, Ս. Պետրոսյան, Տ. Ոսկանյան

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը մենք պատկանելիս ենք եղել ՀՅԴ աշակերտական և ուսանողական միություններին:

... Հայտարարում ենք՝ ընդմիշտ հրաժարվելով Դաշնակցությունից և Դաշնակցական աշակերտական միությունից, մեր ուժերը տրամադրում ենք Կոմկուսին՝ հանուն բանվորագյուղացիական մասսաների շահերի:

Կո՛րչի Դաշնակցությունը և նրա մանրբուրժուական երկու կազմակերպությունները:

Կե՛ցցե Կոմկուսն իր անսպառ պահեստով՝ Կոմերիտմիություններով:

Հ. Գինոսյան, Գ. Ամիրյան, Գ. Մխիթարյան

Բանվոր (Ալեքսանդրապոլ), 28 դեկտեմբերի 1923թ.

148. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

14 հունվարի 1924թ.

Լսեցին. Նախկին Դաշերիտմիության համագումարի մասին:

Որոշեցին. Համագումարի հետաձգումը համարել անհնար: Խնդրել <ՀԿ(բ)Կ> Կենտկոմին թույլատրել համագումարի հրավիրումը, բաց թողնել միջոցներ համագումարն անցկացնելու համար՝ մինչև Անդրերկրկոմից համապատասխան գումարի ստացումը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.26, թ.1: Թարգմ. ռուս.:

149. Արձանագրություն Հայաստանի նախկին երիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի

24 հունվարի 1924թ.

Լսեցին. ԸՆԿ. Մարգարյանը առաջարկում է հետևյալ ռեգլամենտը.

1. Բյուրոյի ինֆորմացիոն զեկուցում. Մարգարյան:
2. Ներկա մոմենտը. Բակունց:
3. Դաշնակցության պատմություն և գործունեություն. Ֆոլյան:
4. Երիտասարդության դերը Դաշնակցության մեջ. Գրո:
5. Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը. Սուրեն Տեր-Հարությունյան:

Որոշեցին. Ընդունվում է այս ռեգլամենտը, առանց փոփոխության:

Առաջարկ է մտցվում համագումարն անել դռնփակ:

Երկրորդ առաջարկը՝ համագումարը փակ անել, բայց որոշ մարդկանց տոմսերով թույլ տալ:

Անցնում է առաջին առաջարկը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.214, թ.10:

150. ՀԿԵՄ Կենտկոմի նախագահության որոշումը

31 հունվարի 1924թ.

Լսեցին. Երիտդաշնակների համագումարի մասին:

Որոշեցին. Թեզիսները հաստատել: Համագումարի բացման ժամանակ հրատարակել թերթիկ բյուլետեն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, g.39, գ.26, թ.5:

151. Դեկլարացիա

Նախկին երիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրոյի

1 փետրվարի 1924թ.

Երկու և կես տարվա տիրապետության ընթացքում կորցնելով իր քաղաքական պրեստիժը և ժողովրդական մասսաների մեջ իր ունեցած հենարանը, Դաշնակցությունը մեր երկրի պրոլետարիատի հաղթանակից հետո անհրաժեշտորեն ենթարկվեց քայքայման, աստիճանական լիկվիդացիայի...

Դասակարգային պայքարի այս վճռական վայրկյանին, երբ բախվում են համաշխարհային հեղափոխությունը և հակահեղափոխությունը, երբ միջազգային պրոլետարիատը 3-րդ՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշի ներքո վճռական իր կռիվն է մղում միջազգային բուրժուազիայի և իր ֆաշիստական ու սոցիալ-դավաճանական լակեյների

դեմ, Հայաստանի աշխատավոր երիտասարդության այն հատվածը, որ մինչև այսօր դեռ կապված է եղել Դաշնակցության հետ, պետք է ճշտի իր դիրքը, պետք է ասի ի լուր ամենքի՝ ինքը ում հետ է կամենում լինել:

Այդ նպատակով է, որ այսօր հավաքվող համագումարը պիտի իր վճռական խոսքն ասի, որ կուսակցության երիտասարդ թևը այլևս նրանց հետ չէ, որ նա հարում է խորհրդային իշխանության և Կոմունիստական Ինտերնացիոնալին, որ նա խզում է կապը Դաշնակցություն կոչված հակահեղափոխական կուսակցության հետ և թույլ չի տա խոսելու իր անունից:

Կե՛ցցե համաշխարհային հեղափոխությունը:

Կե՛ցցե 3-րդ՝ Կոմունիստական Ինտերնացիոնալը:

Կո՛րչի ֆաշիզմը և ֆաշիստական Դաշնակցությունը:

Երիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրո՝ 1. Մկրտիչ Մարգարյան, 2. Միքայել Մարության, 3. Գրիգոր Գրիգորյան, 4. Սարգիս Բեգլարյան, 5. Սուրեն Տ.-Հարությունյան, 6. Մկ. Զաքարյան, 7. Վ. Սառաֆյան, 8. Վարդան Քարտաշյան, 9. Վ.Տ. -Ավետիսյան:

Բանբեր նախկին երիտասարդ դաշնակցականների Համահայաստանյան համագումար նախաձեռնող բյուրոյի: Միօրյա թերթ համագումարի առթիվ: 1 փետրվարի 1924թ.:

152. Պատվավոր տոմս Ընկ. Բակունցին

1 փետրվարի 1924թ.

Այսօր երեկոյան ժամը 6-ին բացվում է նախկին երիտասարդ դաշնակցականների Համահայաստանյան համագումարը:

Բյուրոս խնդրում է Ձեզ ներկա գտնվել համագումարին:

Հայաստանի երիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող Բյուրոյի նախագահ՝

Պատասխանատու քարտուղար՝ Գրո

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ.216, թ.48:

Ը. Նախկին երիտասարդ դաշնակցականների համահայաստանյան համագումարը

153. Նախկին երիտասարդ դաշնակցականների (ուսանողական-աշակերտական խմբակցությունների) համահայաստանյան համագումարը

<Ըստ համագումարի սղագրական հաշվետվության, կրճատումներով>

<1-3 փետրվարի 1924թ.>*

Նիստը բացում է Մկրտիչ Մարգարյանը: Ներկա են 56 պատգամավորներ: Նախագահության անդամներ են ընտրվում. Մարգարյան Մկրտիչ, Գրիգորյան Գրիգոր (Գրո), Մարության Միքայել (Լեմբել), Չթչյան Օնիկ և Բակունց Ալեքսանդր (նախագահ), Վարդան Քարտաշյան և Միքայել Գաբրիելյան (քարտուղար), Սուրեն Տեր-Հարությունյան և Մկրտիչ Զաքարյան (խմբագրական մարմնի անդամներ):

Պատվավոր նախագահություն...

Նախագահ - Այժմ անցնում ենք համագումարի օրակարգի հարցերին.

1. Նախաձեռնող Բյուրոյի ինֆորմացիոն զեկուցումը:

2. Ներկա մոմենտը:

3. Զեկուցում Դաշնակցության գործունեության և պատմության մասին:

4. Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը:

5. Երիտասարդության դերը Դաշնակցության մեջ:

Օրակարգն ընդունվում է ամբողջությամբ, միայն տեղերի փոփոխություններով: Որոշվում է առաջին հերթին լսել ընկ. Բակունցի զեկուցումը մոմենտի մասին:

Ալ. Բակունց.-

Ընկերներ, սովորաբար ընդունված է, որ հասարակական որևէ շարժում լուսաբանելու համար ընթացիկ մոմենտի մասին է զեկուցվում: Ուրեմն այս համագումարի արժեքն էլ լուսաբանելու համար պիտի նկատի ունենանք, թե միջազգային ինչ պայմաններում է կայանում: Մեր և Ձեր համագումարի միջև թեև երկու ամիս ժամանակ է անցել միմիայն,

* Համագումարի կայացման ժամանակը:

բայց մեծ տարբերություն կա քաղաքական պայմանների տեսակետից: Այն ժամանակ մենք ապրում էինք Գերմանական հեղափոխության շրջանում: Սպասում էինք, որ այդ շարժման ալիքը պիտի հեղաշրջե Եվրոպան: Բայց այդ ալիքը վրիպեց: Համաշխարհային պատերազմի ժամանակ Հաղթական հանդիսացած դաշնակից պետությունների հաղթությունը սոսկ Պյուրոսի հաղթանակ էր: Այդ պատերազմում ամենից շատ հաղթողը Ֆրանսիան եղավ, որը գուցե ոչ մի ժամանակ պատմական այն հեգեմոնիան չէ ապրել, ինչպես այժմ: Մանր ազգությունները շղթայված շների նման այժմ կապված են կապիտալիստական պետություններին: Դաշնակից պետությունների բանալին ֆրանս-անգլիական հարաբերություններն են հիմա, որոնց լուծումը կատաստրոֆիկ կերպով անդրադառնում է համաշխարհային հեղափոխության վրա: Դաշնակիցների նպատակն էր քայքայել Գերմանիային: Այդ նպատակով Ֆրանսիան Ռուրի հովտում մտցրեց իր զրահապատներն ու թնդանոթները: Այստեղից են սկսվում 21 թվի պատմական այն մեծ իրադարձությունները, որոնք համաշխարհային ծավալ ստացան: Դրանց հետևանքը մեզ հայտնի է արդեն: Ֆրանսիական կապիտալիզմը երբեք հաշվի չէ առնում գերմանական պրոլետարիատի ույժը: Դուք հիշում եք Գերմանիայի պասիվ դիմադրությունը, որին ձայնակցում էր Գերմանական կոմունիստական կուսակցությունը: Առաջին հայացքով մեզ այնպես է թվում, թե գերմանական ամբողջ ժողովուրդը գնում է գերման բանվորության հետևից: Պարզվեց, սակայն, որ գերմանական խոշոր կապիտալիստները մինչդեռ, մի կողմից, քարոզում էին դեմ դնել ֆրանսիական բանակին, մյուս կողմից, նրանք հարաբերության մեջ մտնելով ֆրանսիական իրենց ընկերների հետ, սարքում էին իրենց գործերը: Դա գերման սոցիալ-դեմոկրատիայի ամենասև գործերիցն է: Առանց դրան գուցե գերմանական հեղափոխության երկրորդ ալիքը լիներ վերջինը, և մենք չսպասեինք երրորդ ալիքին: Նման պատմական խոշոր շարժման ժամանակ առաջ է գալիս միջին խավը՝ մանր բուրժուազիան, որի մեջ մտնում են նաև նախկին զինվորականները: Սրանք խոշոր դեր կատարեցին շարժման ընթացքում: Գերման Կոմկուսակցությունը ստիպված էր այդ միջին խավերն հաշվի առնել, որպեսզի ֆաշիզմի գիրկը չընկնեն: Այդ միջին խավը երբ տեսավ, որ սոցիալ-դեմոկրատները բանակցության մեջ են Ֆրանսիայի հետ, անցավ Կոմունիստական կուսակցության կողմը, գտնելով, որ միայն նա կարող է փրկել Գերմանիային: Պատմության մեջ սա մի չտեսնված շարժում է: Գերմանիան տնտեսական մեծ տագնապ է ապրում: Այնպես որ հեղափոխական շարժումը չի կարող այնտեղ մարել: Իբրև փաստ ասեմ, որ 23 թվի ռուսական ցուցահանդեսին մասնակցելու իրավերին գերմանացի պրոֆեսորները հայտնել են, որ մինչև Ռիգա հասնելու համար հարկավոր է իրենց

վեց ամսվա ռոճիկը ծախսել:

Շատերն ասում են՝ ինչպես է, որ ռուսական պրոլետարիատը տապալեց բուրժուական լուծը 1917-ին, իսկ գերման պրոլետարիատը այդ անել չի կարող: Պետք է գիտենալ, որ գերման պրոլետարիատը օղակված է այնպիսի երկրներով, որ գերմանական Կոմկուսակցությունն ստիպված է հաշվի առնել և լինել չափազանց աչալուրջ: Գերմանական երկրորդ հեղափոխությունը մի զորատես էր հեղափոխական ուժերի գնահատության համար: Նման 17 թվի ռուսական հեղափոխության նա մի լուսավոր էջ բաց արեց պատմության մեջ:

Մի գերման կոմունիստ պատգամավոր զեկուցելով Կոմինտերնի համագումարին, ասում է, որ արտաքուստ թվում է, թե գերման հեղափոխությունը վերջնականապես նստել է, բայց նա նմանվում է մի այրվող տան, որի կրակը ներսումն է և դրսից չի տեսնվում: Այս խաղաղությունը փոթորկից առաջ եղած խաղաղություն է: Գերմանիան շրջապատող օղակը հետզհետե պիտի նեղանա և շնչահեղձ անի Գերմանիային: Դա գիտակցում է գերման պրոլետարիատը և չի կարող նորից չպոռթկալ, մինչև Գերմանիան վերջնականապես դառնա սովետական: *(Ծափեր):*

Գերման հեղափոխությունը պետք է դեն շպրտի Վերսայլի դրած լուծը: Նա ստիպված է աջակցություն խնդրել շահագրգռված պետություններից: Առաջին անգամ Ռուսաստանն էր, որ բողոքեց Ռուրի գրավման դեմ: Գերման հեղափոխությունը ոչ միայն պիտի մաքրի Եվրոպայի արատները, այլև պիտի լինի շարունակողը ռուսական հեղափոխության:

Այժմ Գերմանիայում տեսնում ենք մինիստրական խաղեր՝ անվերջ փոփոխություններ: Սակայն հիմնական քաղաքական կուրսը նույնն է մնում շնորհիվ իշխող դասի, որ նրբորեն պաշտպանում է Ֆրանսիային:

Գերման հեղափոխության անկման գլխավոր պատճառը գերման սոցիալ-դեմոկրատներն են, որ աջակցում են ֆրանսիական իշխանությանը:

Միևնույն պատկերն ենք տեսնում հարևան մանր-մունր երկրների մեջ, որոնք սեփական քաղաքականություն չեն կարող ունենալ, այլ միայն օրիենտացիա: Երկու որոշ քաղաքականություն կա միայն՝ բուրժուական և պրոլետարական: Իսկ մանր պետությունների օրիենտացիան տատանվում է այդ երկու քաղաքականությունների միջև: Դաշնակցությունը լինելով մանրբուրժուական կուսակցություն, իր օրիենտացիան ուղղում էր դեպի բուրժուազիան, իսկ այժմ Դաշնակցությունից հեռացողները ուղղվում են դեպի պրոլետարական քաղաքականությունը:

Անգլիան, որը այժմ անխոցելի չէ, որովհետև Ֆրանսիան իր օդային նավատորմիղով կարող է երկու ժամում հողին հավասարեցնել Լոնդոնը, այդ Անգլիան, ասում եմ, այժմ ուզում է դաշնակից պահել Մայր ցամաքում: Դրա համար էլ նա պաշտպանում է Գերմանիային ընդդեմ Ֆրանսիայի: Այժմ Անգլիայում կա պարլամենտական սոցիալիզմ: Գլխավոր մինիստրը Մագդոնալդն է այնտեղ, որը խոստանում էր խաղաղ ճանապարհով սոցիալիզմ մտցնել: Բայց երբ գործի գլուխ անցավ, չափազանց տարտամ ու երերուն քաղաքականություն է վարում: Անգլիական կաբինետը իրոք հակաբանվորական, հակասոցիալիստական մի կաբինետ է, չնայած որ արտաքուստ բանվորական է: Այժմ անգլիական կապիտալը ավելի ապահով է զգում իրեն, քան բուրժուական կառավարության ժամանակ, որովհետև հեղափոխականացած բանվորությանը ավելի հեշտ է ճնշել բանվորական կառավարության միջոցով: Միևնույնը չէ՞ր կատարվում մեզ մոտ Կերենսկու ժամանակ: Այդ խայտառակ կոմեդիան գտնվում է ահա Անգլիայում, որը գուցե դրամայի փոխվի այն ժամանակ, երբ անգլիացի բանվորը տեսնի, որ այս փոփոխությունները նրան ավելի խայտառակ ստրկացման են տանում:

Թողնելով Ճապոնիային, որի հարցը լուծեց երկրաշարժը և Ամերիկային, դառնանք այժմ մեր հարևան Տաճկաստանին:

Այն ժամանակ, երբ սովետական կառավարությունը իր ամենանեղ դրպեներն էր ապրում, չէր զլանում իր օգնությունը տաճիկ հեղափոխական շարժմանը, որովհետև դա նպաստավոր էր համաշխարհային հեղափոխական շարժման համար: Նույն քաղաքականությունը շարունակում է տանել այժմ Ռուսաստանը: Սակայն Տաճկաստանն ունի տնտեսական կարևոր խնդիրներ լուծելու: Երբ Ռուսաստանը Բրեստի դաշինքը կնքեց, ձայներ էին բարձրանում, որ դա պիտի Հոկտեմբերյան հեղափոխության վրա արատ ձգի, բայց ընկ. Լենինի հանճարը շատ մեծ էր: Նա գտավ, որ մի քանի նահանգներից զրկվելով, պետք էր ազատել երկիրը գերմանական թաթից: Նույն դրությունն է այսօր Տաճկաստանում: Տաճկաստանը չլուծի հողային հարցը, երկիրը գուցե շատ քիչ օգտվի պատերազմի հաղթանակներից: Վերջերս, երբ մայրաքաղաքի փոխադրության հարցը կար, խոշոր տարաձայնություններ եղան թյուրք շրջանակների մեջ: Կար երկու խոշոր հոսանք՝ աջ, որը դեպի Անտանտան էր ուզում թեքել Տաճկաստանը, և ձախ՝ Քեմալի թևը, որը ավելի դիմացական էր և թեքվում էր դեպի Ռուսաստանը: Խալիֆայի խնդիրն իսկ առաջ բերեց ներքին կռիվ, որը լուծեց Քեմալը: Մայրաքաղաքի առիթով սկսված պայքարը կարծես նախանշանն է դասակարգային պայքարի: Վերջերս կարդում ենք թերթերում բանդիտական շարժումների մասին Տաճկաստանում: Դա նշանակում է, որ պատերազ-

մից տուն վերադարձող զինվորը տնտեսական պահանջներ ունի: Արդեն կազմակերպվել են այնտեղ բանվորական փոքրիկ խմբեր, որոնք պատուհաններն են ապագա սոցիալիստական շարժման: Տաճիկ ժողովուրդը բարելավումներ է պահանջում: Արդեն կառավարությունը սկսել է բռնել ռեֆորմների ուղին, բայց դա մի պալիատիվ է միայն դասակարգային պայքարի առաջն առնելու համար:

Տաճկական շատ զորամասեր շփվելով Կովկասի հետ, վարակվել են Հոկտեմբերյան հեղափոխության լոզունգներով և անշուշտ մի օր կբռնկվի ներքին հեղափոխություն Հողային հարցի շուրջը, եթե բավարարություն չտրվի հողազուրկներին:

Այժմ անցնենք արտասահմանում գտնվող դաշնակցականներին:

Եթե մենք նկատի ունենանք, թե Դաշնակցությունը ինչ դիրք է բռնել արտասահմանում, մենք պիտի գանք այն եզրակացության, որ եթե չորս տարի առաջ մեզ ասեին այն բոլորը, ինչ նրանք այժմ են ասում, մենք վաղուց դուրս կգայինք Դաշնակցությունից:

Բացի պրովոկացիաներից, այսօր կա թյուրքա-դաշնակցական միություն: Դաշնակցականներն այսօր կարողանում են լեզու գտնել թյուրքերի հետ ընդդեմ Խորհրդային երկրների: Սա նշանակում է ասել՝ էմիգրանտներ, հակահեղափոխականներ բոլոր երկրների, միացեք, նկատելի է սոսկալի թունավորումն դեպի Խորհրդային Միությունը: Երևանի Տաճկական հյուպատոսարանի շուրջը եղած փոքրիկ միջադեպը մեծ աղմուկ բարձրացրեց արտասահմանյան մամուլի մեջ: Նույնիսկ ասվեց, որ Մոսկվայի կառավարությունն է սարքել այդ, կռվի համար պատրվակ գտնելու: Սա գիտակցական պրովոկացիա է արդեն, որ ցույց է տալիս, թե էմիգրացիան հոգեվարքի մեջ է:

Մի այլ հանգամանք: Գերման պրոլետարիատի համար այստեղ հանգանակություն եղավ, որպեսզի մեր պրոլետարիատը և գյուղացին մի ներքին կապ զգան գերման բանվորության հետ: Այս առիթով Ամերիկայի «Հայրենիքը» մեծ աղմուկ բարձրացրեց, ասելով, որ եթե հայ գյուղացին ու բանվորը կարող են գերմանական բանվորին օգնել, էլ ինչու գաղութներից փող են ուզում: Պոլսո «Ճակատամարտն» էլ արձագանքում է դրան, մեր հանգանակությունը միլիարդներով ներկայացնելով, որպեսզի կարողանա ազդեցություն թողնել գաղութահայերի վրա:

Ռուսական թերթերն էլ, ինչպես Միլյուկովի թերթը, ձայնակցում են դաշնակցականներին, գրելով, որ Դրոյի և ընկերների դեկլարացիաները, ինչպես և նախկին համագումարը, ճնշման տակ են կատարված, որ այդ դեկլարացիաները բանտում են ստորագրել տվել և այլն:

Նշանակում է՝ Դաշնակցության մեջ ոչինչ չփոխվեց այն օրվանից, երբ նա թողեց այս երկիրը: Դաշնակցությունը լավ է համարում գաղթականությունը ուղարկել Բրազիլիա, քան Հայաստան: Երբ մենք ուզում ենք տաս հազար գաղթականություն բերել այստեղ, նրանք ասում են՝ ինչու բոլորը չեք տանում: Բայց մենք գիտենք, որ այդ գաղթականությունը կլինի այստեղ հակահեղափոխության ռեզերվը, քանի որ Դաշնակցությունը իր համագումարում որոշել է շարունակել իր գործունեությունը և գտնում է, որ Կովկասի իրենց ընկերները դեռևս շատ ամուր վիճակ ունեն: Անշուշտ, երբ մեր նախկին և այս համագումարների սղագիր արձանագրությունները և «Բանբերը» նրանց ձեռքը հասնի՝ պարզ կլինի այնուհետև իրողությունը *(ծափեր)*:

Քաղաքական այսպիսի վիճակում, անշուշտ, մենք փնտրում ենք այնպիսի ույժեր, որոնք կարող են մեզ նպաստել և ոչ հարվածել թիկունքից:

Ընկերներ, տեսնում ենք, որ այժմ սովետական կառավարությունը ուզում է ճանաչել այնպիսի պետություններ, որոնք սրանից առաջ չէին ուզում անունը տալ Խորհրդային Միության: Նրանք կարծում էին, թե կարելի է վերականգնել Եվրոպայի տնտեսությունը և անտես առնել Խորհրդային Միության տնտեսությունը: Բայց քանի որ նրանք տնտեսական փակուղու մեջ են, միջոցներ չեն խնայում Ռուսաստանին փաստորեն հաստատելու: Նրանք ճանաչում են Ռուսաստանի առևտրական ներկայացուցչին, առանց դիվանագիտական ներկայացուցչին ճանաչելու: Շատերն են ցանկանում առևտուր անել Ռուսաստանի հետ, բայց քչերն են ուզում ճանաչել նրան: Ա յդ արտաքին առևտուրը մի լծակ պիտի լինի մեր երկրի առաջադիմության համար, առանց թողնելու, որ երկրի նյութերը շահագործվեն նրանցից:

Տնտեսական ասպարեզում նկատվում է արդյունաբերական երկու ճյուղերի հակամարտության մեղմացումը: Մկրատի եզրերը սկսում են միանալ: Այդ երկու ճյուղերի հակամարտությունը արդյունք է նրան, որ գյուղատնտեսական արդյունաբերությունը իբր ավելի հեշտ, ավելի շուտ կազդուրվեց, որի համար էլ արդյունաբերական արտադրությունները թանկացան: Մենք ուզում ենք, որ գյուղի և քաղաքի զոդումը լինի ամուր: Եվ արդեն տեսնում ենք, որ գործարանային արդյունաբերությունը սկսում է իջեցնել գները, մինչդեռ գյուղատնտեսականը՝ բարձրանալ: Բուրժուական իդեոլոգները, կարծելով թե Ռուսաստանը ինքն իր համար ստեղծել է տնտեսական մի փակուղի, սկսում էին ուրախանալ: Բայց դա երազ էր նրանց համար: Ռուսաստանը իր դռները չի բաց անում լայնորեն եվրոպական բուրժուազիայի առաջ, ինչպես երևակայում են նրանք:

Ընկերներ, մենք ունենք նույնպես մեր կարմիր բանակը, որը ուժեղ է այժմ, քան երբևէ: Նա կարող է սարսափ ներշնչել եվրոպական ամենալավ բանակին: Այդ բանակը այժմ չէ թե միայն խաղաղ օրեր է ապրում, այլև պատրաստվում է նաև զինվորական կրթության, որպեսզի հարկ եղած դեպքում պաշտպանի երկիրը: Եթե կան խմբակներ, որոնք իրենց ատամները սրել են կատարված դիսկուսիայի առիթով և կամ ընկ. Լենինի մահվան վրա, շուտով պիտի ջախջախվեն կարմիր բանակի պողպատյա հարվածներից:

Դառնանք այժմ Անդրկովկասի միջազգային դրությանը: Անդրկովկասը եղել է տնտեսական մի միավոր: Նախկին կառավարությունների բռնած ուղին ազգամիջյան պայքար էր ստեղծում միմիայն: Մենք, որ տարիներ շարունակ սնվել էինք ազգային ոգով, տատանվում էինք ազգային խնդրի առիթով: Բայց երբ 22 թվին Խորհրդային Միության գաղափարն ստեղծվեց, համոզվեցինք, որ միակ ճանապարհը միջազգային բանվորական շարժման ճանապարհն է ազգային հարցը լուծելու համար, և որ մենք յուղ ենք քսել օտարների հացին մեր ազգային կռիվներով: Անդրկովկասի փրկությունը Ռուսական հեղափոխության շնորհիվ պետք է համարել մի հրաշք: Գուցե մի քանի տարուց մեր շարք ծաղկած վայրերը հողին հավասարեցվեին կամ գուցե դառնային եվրոպական մի որևէ պետության գաղութ՝ առանց ռուսական հաղթական բանակի մուտքի: Այս հանգամանքը մեզ պիտի զգալ տա, որ մեր պահած սվինները պետք է շարժենք ընդհանուր հակահեղափոխության դեմ: Բագվի բանվորներից մեկն ասում էր. - Տարիներ շարունակ ես կռվել եմ Դաշնակցության «Մահ կամ ազատություն» լոզունգի տակ և այժմ էլ կշարունակեմ այդ լոզունգի տակ կռվել, միայն մահ միջազգային ֆաշիզմին և ազատություն պրոլետարիատի համար: *(Ծափեր):*

Չեմ ուզում երկար կանգ առնել, որովհետև համոզված եմ, որ ձեզանից ամեն մեկը օր-օրին հետևում է քաղաքական բոլոր անցուդարձերին և չի մոռանում երբեք Հոկտեմբերյան լոզունգները:

Երբ այժմ Եվրոպայում կուտակվում են նոր խմբավորումներ, դրանք այս անգամ վճռական պայքարի համար են միայն: Ինչպես ասացի, միջին խավերն էլ այսօր գնում են պրոլետարիատի ետևից: Այս խոշոր ուրվական է, որ թափառում է եվրոպական հողի վրա և մի պատասխան կա միայն նրան՝ այն, որ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին օրը Մոսկվայում դրվել է հիմքը նոր մարդկության ընկ. Լենինի տված լոզունգներով և գուցե Լենինի ուսմունքն է Արքիմեդի այն լծակը, որով պիտի քանդվեն հիմքերը այն ծանր լծի, որը նստել է բանվորության վզին: Երբ պայթի գերմանական հեղափոխությունը՝ դա կլինի նախերգանքը միջազգային մեծ հեղափոխության: Այդ ուղիով պիտի գնանք մենք էլ վճռական կռիվը տանելու համար: *(Ծափեր):*

154. 2-րդ նիստ: 2-փետրվարի: Նախագահ Գրո (Գրիգոր Գրիգորյան):

Նախագահ. Խոսքը պատկանում է նախաձեռնող Բյուրոյի նախագահ ընկ. **Մկրտիչ Մարգարյանին:**

Ընկերներ. դաշնակցական մեծերի համագումարում ընկ. Բակունցը իրավացի կերպով հայտարարեց, որ քաղաքական անհեթեթություն էր Կովկասի դաշնակցական Բյուրոյի դուրս գալը դաշնակցական կազմակերպության անունից, որովհետև այդպիսի կազմակերպություն չկար Կովկասում: Կային միայն խմբակներ, որի անունից Բյուրոն իրավունք չուներ արտահայտվելու: Երկրորդ, խորհրդային կարգերում ապրող դաշնակցական մասսան առհավատչյա չէր ներկայացնում Բյուրոյի ձեռքում դուրս գալու նրանց անունից: Մասնավորապես երիտասարդների կողմից այդ կասկածանքն ավելի է շեշտվում, որովհետև դաշնակցական Բյուրոն երիտասարդ դաշնակցականների կողմից ավելի անվստահություն էր վայելում: Ուրեմն ինչ էր մնում անել: Այն, որ ամբողջ դաշնակցական մասսան պետք է հավաքվեր՝ իր առաջ նոր ճանապարհներ բաց անելու, իսկ դա կարելի էր անել միայն այստեղ, որովհետև արտասահմանի հետ հարաբերությունը դժվար էր:

Մեր կազմակերպության մեջ պետք է տարբերել երկու մոմենտ: Առաջինը գյուղի, երկրորդը քաղաքի երիտասարդությունը: Գյուղի երիտասարդությունը եղել է Դաշնակցության ազդեցության տակ, բայց չի խորացրել Դաշնակցության դաստիարակությունը: Քաղաքի երիտասարդությունն է, որ ստացել է այդ դաստիարակությունը: Մեր աշխատանքը գլխավորապես եղել է ուսանողության և երկրորդ աստիճանի ու երբեմն առաջին աստիճանի դպրոցների աշակերտության մեջ, իսկ երիտասարդ բանվորների ու բատրակների մեջ մենք աշխատանք չենք տարել:

Այժմ անցնենք նախաձեռնող Բյուրոյի բուն գործունեությանը: Բյուրոն իր գործունեությունն սկսել է նոյեմբերի սկզբից: Մեր աշխատանքը սահմանափակվել է միայն Հայաստանի սահմաններում, որովհետև Դաշնակցական երիտասարդության միության ցանցը գոյություն ուներ միայն Հայաստանում:Բացի այդ, մենք քաղաքական նկատառումներով էլ աշխատանք չենք տարել Վրաստանում և Ադրբեջանում, որովհետև այդ վայրերում էլ կային ինիցիատիվ բյուրոներ:

• Մենք մեր աշխատանքների ընթացքում գլխավորապես հաջողություն ենք ունեցել գավառներում, ուր երիտասարդությունը իսկույն արձագանք է տվել մեր կոչին, դեկլարացիաներով հրապարակ գալով: Իսկ քաղաքներում զանազան պատճառներով որոշ թվով երիտասարդներ

դեռ դուրս չեն եկել:

Մենք հեռագիրներ էինք տվել Վրաստան ու Ադրբեջան, որպեսզի ներկայացուցիչներ ուղարկեն այս համագումարին, բայց մեզ անհայտ պատճառներով ներկայացուցիչներ դեռ չեն եկել:

Դեկլարատորների պատկերը. մինչև համագումարը դեկլարատորների թիվը 245 էր, սակայն այժմ երևաց նոր տեղեկություն: Այդ թիվը հասնում է 274-ի. Երևանից՝ 93, էջմիածնից՝ 102, Նոր Բայազետից՝ 16, Ղարաքիլիսայից՝ 13, Լենինականից՝ 17, Դիլիջանից՝ 3: Այս թվերին պիտի ավելացնել, ըստ նոր տեղեկությունների, 30 դեկլարատորներ, ի հաշիվ Ալեքսանդրի և էջմիածնի, որով գումարը լինում է 274: Այստեղ բաց է մնում միայն Զանգեզուրի գավառը, ուր դաշնակցական կազմակերպությունը վաղուց է քայքայվել, այնտեղ երիտասարդ դաշնակցականներ չկան:

Դաշնակցությունից հեռացած երիտասարդների սոցիալական կացության անկետան ցույց է տալիս, որ նրանցից 215-ը գյուղացիներ են, իսկ մնացածները քաղաքացիներ: Ըստ կրթական ցենզի նրանք ներկայացնում են հետևյալ պատկերը. անգրագետ՝ 2, տարրական՝ 58, միջնակարգ՝ 187, ուսանող՝ 81, աշակերտ՝ 19, ուսուցիչ՝ 43, հողային և այլ աշխատանքով զբաղվող՝ 102:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների, դեկլարատորների թիվը շատ տարբեր չէ Դաշնակցության ժամանակի երիտասարդ դաշնակցականների թվից: Գրավոր փաստեր չլինելով, մեր ընկերներից հավաքած տեղեկությունների հիման վրա, պարզվում է, որ Դաշնակցության տիրապետության շրջանում Հայաստանում կային երիտասարդական միության 365 իսկական անդամներ, որոնցից Երևանի գավառում՝ 120, էջմիածնում՝ 105, Նոր Բայազետում՝ 40, Ղարաքիլիսայում՝ 15, Լենինականում՝ 70 և Դիլիջանում՝ 15 հոգի: Սրանցից դուրս են եկել դաշնակցությունից 274 հոգի, մնացած 91 հոգու մի մասը գտնվում է արտասահմանում, մի մասը մտել է Կոմկուսի մեջ, իսկ մի քանիսը մեռել են: Ուրեմն մնում է մի քանի հոգի, որոնք այս կամ այն պատճառով դեռ չեն ձևակերպել իրենց հայացքները: Ինչքան էլ այս թվերը շատ ճիշտ չլինեն, բայց համենայն դեպս կարող ենք ասել, որ դեկլարացիայով դուրս չեկողները հազիվ 30 հոգի լինեն, որոնք գտնվում են Երևանում և Լենինականում, ուր դաշնակցության դաստիարակությունը ավելի խորն է եղել...

155. Նախագահ - Նիստը վերաբացված եմ հայտարարում: Առաջարկված է երկու բանաձև:

Մ. Զաքարյան. Կարդում է հետևյալ բանաձևը.

Լսելով ընկ. Մարգարյանի զեկուցումը նախկին երիտդաշնակցականների համահայաստանյան համագումար նախաձեռնող Բյուրոյի գործունեության մասին, երիտդաշնակցականների համահայաստանյան համագումարը գտնում է, որ Հայաստանի նախկին դաշնակցական երիտասարդության ճնշող մեծամասնությունը հանդես է եկել հրապարակով, ձևակերպելով իր համոզումների բեկումը, որ հեռացածների սոցիալական կացությունն ըստ ամենայնի գյուղացիական է, հետևապես և ուրախալի մեր ապագա գործունեության տեսակետից, որ Բյուրոյի աշխատանքները ընդգրկել են լայն շրջանակ և հաջողություն ունեցել դեպի հեղափոխական ուղի՝ ղեկավարելու մի մեծ թիվ երիտասարդների:

Բյուրոյի գործունեությունը համարվում է բավարար և ընկերական շնորհակալություն հայտնվում նրան իր կատարած աշխատանքների համար:

Նախագահ - Երկրորդ բանաձևը չափազանց համառոտ է և նույնն է ասում, ինչ այս բանաձևը: Այստեղ գրված է. «Բյուրոյի զեկուցումը համարել բավարար և անցնել հերթական խնդիրներին»:

Ուրեմն մնում է միայն մի բանաձև: Քվեարկում եմ: Միաձայնությամբ և ծափահարությամբ ընդունվում է:

156. Նախագահ - Այժմ անցնում ենք մանդատային հանձնաժողովի զեկուցմանը:

Կ. Գործունյան -

Ընկերներ, մեր աշխատանքները տարվել են 6 շրջաններում: Պատգամավորների թիվը ըստ վայրերի հետևյալ պատկերն է ներկայացնում. Երևան քաղաք՝ 21, Երևանի գավառ՝ 6, էջմիածնի գավառ՝ 21, Լենինականի գավառ՝ 4, Լոռի-Փամբակ՝ 4, Նոր Բայազետ՝ 4, ընդամենը 60: Նրանց ստաժը. կուսակցական մինչև 1917թ.՝ 12 հոգի, մինչև 1921թ.՝ 15 հոգի, երիտասարդ դաշնակցական մինչև 1917թ.՝ 3, մինչև 1921թ.՝ 30: Որակը. ակտիվ՝ 21, շարքային՝ 39: Սոցիալական դրությունը. գյուղացի՝ 39, քաղաքացի՝ 8, ինտելիգենտ են, բայց իրենց գյուղացի են նշանակել, անկետաները պարզ չէին: Ընտանեական դրությունը. ամուսնացած՝ 11, ամուրի՝ 49: Կրթությունը. տարրական՝ 7, անգրագետ՝ 1, միջնակարգ՝ 52: Տոկոսային հարաբերությունը. կուսակցական ստաժ՝

45 տոկոս, երիտմիութենական՝ 55 տոկոս: Որակը. ակտիվ՝ 35 տոկոս, շարքային՝ 65 տոկոս: Սոցդրությունը. գյուղացի՝ 65 տոկոս, քաղաքացի՝ 13 մեկ երրորդական տոկոս: Ինտելիգենտ՝ 21 երկու երրորդական տոկոս: Կրթությունը. տարրական՝ 13 մեկ երրորդ, միջնակարգ՝ 86 երկու երրորդ:

Մանդատային հանձնաժողովը բոլորի մանդատները վավերացած է համարում:

157. **Նախագահ** - Անցնում ենք օրակարգի երրորդ հարցին: Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը: Խոսքը տրվում է ընկ. Ս. Տեր-Հարությունյանին:

Ս. Տեր-Հարությունյան... Դաշնակցությունը չի ունեցել լրիվ ազգային ծրագիր: Նրա սոցիալիստական ծրագիրն էլ քննադատության չի դիմանում: Դրանով է բացատրվում Դաշնակցության-մասսայական բնույթը: Ամենքը մտնում էին այնտեղ և իրենց երևակայությամբ ծրագիր առաջարկում ու գործադրում: Փոխանակ նա իր ավտոնոմիան հետապնդելու, Դաշնակցությունը ձեռնարկում է Միացյալ Հայաստանի անկախությունը, որ դարձավ մի խարույկ, ուր նա այրեց իր սոցիալիստական թևերը: Դրանից հետո արդեն Դաշնակցության պատմական քայքայումը դարձավ անխուսափելի:

... Ազգային հարցի առողջ լուծումը տալիս է խորհրդային իշխանությունը, պրոլետարիատի եղբայրությամբ և ոչ թե ազգերի եղբայրությամբ, ինչպես առաջարկում են բուրժուական պետությունները: Սա է միակ ճանապարհը, որ տանում է դեպի կոմունիզմի իշխանությունը: *(Ծափեր):*

3-րդ նիստ: Փետրվարի 2, երեկո: Նախագահ՝ Միք. Մարության:

Նախագահ - Համագումարի 3-րդ նիստը հայտարարում եմ բացված: Նախքան հերթական խնդրին՝ ընկ. Ֆոլյանի զեկուցմանն անցնելը այժմ կզբաղվենք ընկ. Ս. Տեր-Հարությունյանի զեկուցման քննադատությամբ...

Ֆոլյան *(ծափեր)*. Ընկերներ, մեր առաջ դրված խնդիրը շատ լուրջ է: Ինչի՞ց է առաջ եկել Դաշնակցությունը: Նա որոշ պատմական անհրաժեշտության արդյունք է: Փորձենք տալ այդ պատմականը, սկսած 70-ական թվականներից...

4-րդ նիստ: Փետրվարի 3, առավոտյան ժամը 10 և 30-ին: Նախագահ Օնիկ Չքչյան:

158. 5-րդ, վերջին նիստ: Փետրվարի 3-ի երեկոյան ժամը 6 և կեսին:

Նախագահ - Նիստը հայտարարում եմ բացված: Զեկուցելու է ընկ. Գրոն՝ «Երիտասարդության դերը Դաշնակցության մեջ» հարցի մասին:

Գրո (Գրիգոր Գրիգորյան).

... Ես այժմ պիտի խոսեմ, թե նախկին երիտասարդ դաշնակցականների միությունը երբ է առաջ եկել, ինչ բնույթ է կրել և ինչ գործեր է կատարել: Մինչև 1905թ. Հայաստանում երիտմիություններ չեն եղել (արտասահմանի մասին չի խոսքս): Երբ ցարիզմը փակում էր դպրոցները, այդ ժամանակ կազմակերպվեցին երկու միություններ՝ թեմական դպրոցներում, որոնք գրական խմբակի անունով պայքարում էին ցարիզմի դեմ:

Երբ Դաշնակցությունը ստիպված իր ծրագրի մեջ մտցրեց սոցիալիզմը, նկատի ունենալով հայ աշխատավորության պահանջները, երիտասարդությունը հրապուրվեց այդ ծրագրով և գնաց Դաշնակցության հետևից: Գաղութահայ բուրժուազիան դեմ էր այդ ծրագրին:

Երիտմիության զարգացման խթան է հանդիսանում 1914թ. պատերազմը: Դաշնակցությունը մասնակցելով պատերազմին, հակասոցիալիստական գործ կատարած եղավ: Երիտմիությունը անգիտակցաբար հետևում էր Դաշնակցությանը, որովհետև նրա համար պարզ չէին պատերազմի աստառները... Գուցե մանրբուրժուական տարրերը գիտակցաբար էին հետևում այդ շարժմանը, բայց երիտասարդությունը՝ ոչ:

Երիտդաշնակցականների կազմը. երիտդաշնակցական միությունը կազմված է մեծ մասամբ գյուղացի երիտասարդներից:

Երիտմիության գործունեությունը. Երիտմիություններն աճում են 1914 թվից, գլխավորապես դպրոցներում, գրական անուններով: 1917թ. ցարի տապալումով գործունեության ասպարեզն ավելի բացվեց նրանց առաջ: Այդ միությունները հնարավորություն ունեցան լեգալ աշխատանք տանելու: Նրանք մեծ գործ են կատարել Դաշնակցության կողքին, առանց գիտակցելու, թե հակաաշխատավորական գործ են անում: Պառլամենտական ընտրություններին երիտասարդությունն աշխատել է դաշնակցականների քվեներն ապահովել, առանց միջոցների մեջ խտրություն դնելու, նույնիսկ դիմելով ծեծի:

Դաշնակցության պետական տիրապետության շրջանում սկսվում են սահմանային վեճեր՝ Անդրկովկասի հարևան պետությունների միջև, որոնք մեզանից մեծամեծ զոհեր խլեցին: Երիտասարդությունն այդ շրջանում զրկվեց իր դպրոցից, ամիսներով ֆրոնտում եղավ:

Մայիսյան ապստամբության ժամանակ էլ երիտասարդությունը կույր գործիք է հանդիսացել Դաշնակցության ձեռքում. մասնավորապես Ալեքպոլի երիտասարդությունը գործոն դեր ունեցավ ապստամբության ճնշման մեջ: Երիտասարդության ղեկավար Հակոբ Զարիֆյանը սպանվեց հենց այդ կռիվներում, Դիլիջանի ֆրոնտում:

1920թ. Նոյեմբերյան հեղափոխության շրջանում երիտասարդությունը մի որպես սթափվում է և իրեն հաշիվ տալիս: Նրա համար անծանոթ էին Կոմունիստական կուսակցության գաղափարները:

Ռազմական կոմունիզմի շրջանը, բռնագրավումները, Չեկան, որոնք առաջացնում էին հակակրանք ոչ միայն բուրժուազիայի, այլև աշխատավորության մեջ, որը չէր կարող հասկանալ այդ քաղաքականության իմաստը: Այնպես որ, կարելի է ասել, թե խորհրդային իշխանության դեմ ապստամբություն առաջացնողը ոչ թե Դաշնակցությունն էր, այլ ժողովուրդը: Երիտասարդությունը ուժեղ մասնակցություն է բերել այդ ապստամբությանը: Նա պահակ է կանգնում: Նույնիսկ Դաշնակցության արխիվը այդ երիտասարդությունն է փրկել: Ապստամբությունը երկու ամսվա կյանք է ունենում: «Փրկության կոմիտեի» այդ կարճ տիրապետության շրջանում երիտասարդությունը կարծես մի տեսակ զգվանք զգաց Դաշնակցությունից: Հասավ ապրիլյան խուճապային փախուստը, որը շատ դասեր տվեց երիտասարդությանը: Երիտասարդությունը սթափվեց մինչև այն աստիճան, որ շեֆերի կողմից «Բոլշևիկ» անվանվեց: Պարսկաստանից եկող ընկերները հայհոյանքներ էին շպրտում Դաշնակցության շեֆերի հասցեին, որոնք տնտեսապես սոսկալի պայմանների մեջ էին դրել նրանց:

Ինչպե՞ս էր ղեկավարում Դաշնակցությունը երիտմիություններին և ինչո՞վ էր նպաստում նա այդ շարժմանը: Երիտմիությունները մեծ մասամբ տարերայնորեն են կազմակերպվել, պայմանների բերումով: Դաշնակցությունը նույնիսկ կազմակերպվածների մեջ ուժեղ աշխատանք չի տարել: Կազմակերպական այն սխեման, որ այժմ գոյություն ունի կոմերիտմիության մեջ, մեզ մոտ չկար: Մենք չգիտեինք մեր միությունների թիվը, անդամների քանակը և այլն:

Ի՞նչ է սովորեցրել մեզ Դաշնակցությունը: Կուսակցությունը առանձին ուշադրություն չի դարձրել երիտասարդության վրա: Չկային մասնավոր դասընթացքներ կամ սիստեմատիկ դասախոսություններ: Մեր լիկվիդատորներից շատերը նույնիսկ չգիտեին Դաշնակցության ծրագիրը: Դաշնակցությունը մտածում էր միայն անդամավճարի մասին: Մի դաշնակցական պրոպագանդիստ (Սինանյան) ասում էր, որ իր 30-ամյա պրոպագանդայի նյութն այն է եղել, որ տապալեն ցարիզմը և տեղը

հաստատեն հայկական իշխանություն Հայաստանում: Դաշնակցությունը Հայաստանում սոցիալիստական ուղղությամբ 90 հատ բրոշյուր է հրատարակել միայն և դրանով է նա իր իդեոլոգիան տվել երիտասարդությանը: (Չայներ՝ 200 օրինակ էլ ժնևում է հրատարակել): Շահխաթունին Թիֆլիսում, Վրացյանը, Խորենին ու Զամալյանը Հայաստանում մի քանի դասախոսություններ են կարդացել միայն այդ երիտասարդության համար, երբ նա դեռ գաղտնի էր գործում:

Կապ չի եղել մայր կուսակցության և երիտմիության միջև: Շատ անգամ միևնույն աշխատանքներն են տարվել՝ անջատ-անջատ, հակասելով իրար: Մինչդեռ այժմ կոմսոմոլը կուսօրգանների մեջ իր ներկայացուցիչը ունի: Երիտասարդ դաշնակցականների միությունը միայն Երևանում է ունեցել իր ներկայացուցիչը, այն էլ շատ թույլ կապերով միայն կապված կուսակցության հետ: Երիտասարդությունը ձգտել է գաղափարական դաստիարակություն ստանալ, բայց նրան չեն տվել այդ: 1917թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո աշխատավոր երիտասարդությունը սկսում է հետաքրքրվել նաև ռուսական հեղափոխությամբ և նույնիսկ դասակարգային խնդիրներով, բայց Դաշնակցությունը նրա սանձերը քաշել է: Ալեքպոլի աշակերտական «Հույս» թերթը լոզունգ է դնում իր համար՝ «Կեցցե 3-րդ Ինտերնացիոնալը»: Սակայն Դաշնակցությունը բթացնում է երիտասարդության այդ տենդենցը: Նույնիսկ երիտասարդության մեջ աշխատավորական և ազգային ֆրակցիաներ են առաջ եկել: Եթե Դաշնակցության ղեկավարները երբեմն խոսել են մեզ հետ մարքսիզմից, դա էլ տվել են խեղաթյուրված ձևով (Խորենու բրոշյուրները):

Մեր կազմակերպչական ներքին աշխատանքները. Մենք ունեցել ենք Կենտրոնական կոմիտե, բայց ոչ մի կապ, ոչ մի սիստեմատիկ աշխատանք միությունների և նրանց անդամների միջև: Երևանում 3 միություններ գործել են իրարից անկախ: Իբրև ապացույց այն, որ երիտդաշնակցական միությունները միայն մի համագումար են ունեցել, այն էլ կանոնադրությունը մշակելու համար:

Միությունների քայքայման պատճառը. 1921թ. փախուստի ժամանակ երիտասարդության ստացած տպավորությունները առաջ բերին նրանց մեջ բեկում: Վերադառնալով Պարսկաստանից, երիտասարդությունը խորհրդային իշխանության կողմից հանդիպեց սիրալիր վերաբերմունքի՝ հակառակ Դաշնակցության պրովոկացիաների... Կոմկուսն ընդառաջ էր գնում այդ բեկման ձգտումներին, ուզելով մեզ կապել իր հետ: Երիտասարդության բեկման խնդրում կարևոր դեր են խաղացել արտասահմանյան Դաշնակցության վերջին իրադարձությունները, նրանց հայտարարությունները, Քաջազնունու գիրքը...

Երիտասարդ Դաշնակցության քայքայման վրա ազդեց նաև մեծ դաշնակցականների քայքայումը:

... Մենք մեր հանցանքները կատարել ենք անգիտակցաբար, իսկ այժմ, երբ գիտակցության ենք եկել, արդեն հարում ենք Երրորդ՝ Կոմինտերնին, որը մեզ տանում է դեպի աշխատավորության հաղթանակը: *(Ծափեր):*

159. <Վերջին> նիստը վերաբացվում է ընկ. Մկրտիչ Մարգարյանի նախագահությամբ:

Նախագահ - Անցնում ենք բանաձևերի ընթերցմանը ու քննադատությանը: Կարդացվում է ընկ. Մ. Գրիգորյանի կողմից Դաշնակցության գործունեության և պատմության մասին ընկ. Ֆոլյանի և ազգային հարցի մասին ընկ. Ս. Տեր-Հարությունյանի տված զեկուցումների առիթով հետևյալ բանաձևը (կցել) : *(Բուռն ծափեր):*

Պատկումական նվագախումբը նվագում է «Ինտերնացիոնալը»:

Նախագահ - Կա՞ առարկություններ բանաձևի: Չկա: Քվեարկում եմ: Բանաձևն ընդունվում է միաձայնությամբ և ջերմ ծափահարությամբ: *Երաժշտախումբը նվագում է «Ինտերնացիոնալ»:*

Կարդացվում է միջազգային դրության մասին ընկ. Բակունցի զեկուցման առթիվ հետևյալ բանաձևը, ընկ. Մկրտիչ Զաքարյանի կողմից:

Նախագահ - Դիտողություններ կամ առարկություններ կա՞ն: Չկան:

Քվեարկում եմ: Բանաձևն ընդունվում է միաձայնությամբ: *Նվագում են «Ինտերնացիոնալը»:*

... **Քարտաշյան.** Առաջարկում եմ հեռագիր տալ Միջազգային երիտասարդական Ինտերնացիոնալին, հայտնելու մեր պատրաստակամությունը՝ գնալու նրա հետևից:

Առաջարկությունն ընդունվում է:

Նախագահ - Ընկերներ, նախկին երիտասարդ դաշնակցականների համահայաստանյան համագումարը հայտարարում եմ փակված:

(Բուռն ծափեր: Նվագում է «Ինտերնացիոնալը»):

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.229, թ.1-76:

---

*Տվյալ բանաձևերն արխիվային գործում չկան:

160. Հայաստանի Լենինյան Կոմերիտմիության Կենտրոնական կոմիտեին

20 մայիսի 1924թ.

Նախկին երիտդաշնակցականների Համահայաստանյան համագումարը իր աշխատանքներն ավարտեց, արձանագրելով իր դիրքերում կատարված մասսայական բեկումը, ընդգծելով հետագա ուղիներն ու անելիքները:

Այժմ ձեռքի տակ եղած Բյուրոյի, գավառական ներկայացուցիչների և համագումարի գործերը, որոշումներն ու արձանագրությունները, որպես պատմական վավերագրեր, հանձնվում են Ձեզ ի տնօրինություն:

Ի դիմաց Բյուրոյի՝ **Մարգարյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.208, թ.52:

Գլ. VI

Կազմալուծման հետհամագումարյան գործընթացը

Ա. Աշխատանքը նախկին դաշնակցականների շրջանում

161. Հայաստանի կոմկուսի Երևանի կոմիտեին (կազմբաժնին)

9 հուլիսի 1924թ.

Ի կատարումն Կենտկոմի նախագահության 1924թ. հունիսի 17-ի որոշման սույնին կցվում է դաշնակցականների կուսակցությունից հեռացած 7 մարդկանց կենսագրությունները՝ Պետրոսյան Արտաշես, Տոնյան Ռուբեն, Բակունց Ալեքսանդր, Ֆոլյան Սիմոն, Գամսո, Սերջանյան Միհրան, Հովհաննիսյան Խաչիկ, ովքեր պետք է ընդունվեն Հայկոմկուսի մեջ:

Կենտկոմի գործերի կառավարիչ՝ Աթաբեկյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.20, թ.88: Թարգմ. ռուս.:

162. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

5 հունվարի 1925թ.

Լսեցին. Կազմալուծված դաշնակցականների շրջանում հետագա աշխատանքի մասին: (Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. 1. Անհրաժեշտ համարել կազմբյուրոյի հրավիրումը, որոշ կազմալուծված դաշնակցականների մասնակցությամբ:

2. Կազմալուծված դաշնակցականների շրջանում մղել տևական խորացված աշխատանք:

3. Առաջարկել ՀԿԿ գավկոմներին՝ կազմալուծված դաշնակցականներին ներգրավել խորհրդային - վարչական աշխատանքում, ընդ որում նրանց առաջ քաշելով հատուկ ընտրությամբ:

4. Առաջարկել Կենտկոմի Քարտուղարությանը՝ պարզել կազմալուծված դաշնակցականների տրամադրությունը և նրանց մի մասին ընդունել ՀԿԿ-ի մեջ, մանրազնին ընտրությամբ:

5. Տվյալ որոշումը տարածել նաև Դաշերիտմիության վրա:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.1 հակ.-2: Թարգմ. ռուս.:

163. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարությանորոշումը

17 հունվարի 1925թ.

Լսեցին. Կազմալուծված դաշնակցականների շրջանում տարվող հետագա աշխատանքի մասին (ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1925թ. հունվարի 6-ի նիստի թիվ 34 արձանագրությունից քաղվածք, կետ 9/գ):

Որոշեցին. 1. Կազմալուծված դաշնակցականների տրամադրությունը պարզելու և նրանց մի մասին կուսակցության մեջ ընդունելու նպատակով Կենտկոմի կազմակերպական բաժնին՝ դիմել ՀԿԿ բոլոր գավկոմներին համապատասխան շրջաբերական նամակով:

2. Որոշ կազմալուծված դաշնակցականների մասնակցությամբ կազմակերպչական բյուրոյի հրավիրումը հանձնարարել ընկ. Ա. Շահսուվարյանին:

3. Հանձնարարել Հայաստանի Արտակարգ հանձնաժողովին փակել Դաշնակցություն կուսակցության կազմալուծման գծով կատարված դրամական ծախսերի հաշիվը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.10, թ.5: Թարգմ. ռուս.:

164. Բոլոր գավկոմներին

Շրջաբերական հրահանգ

30 հունվարի 1925թ.

Թիվ 680/գ

Անցյալ տարի Խորհրդային Հայաստանում քայքայելով Դաշնակցություն կուսակցությունը, քաղաքականապես խոշոր հարված հասցրինք այդ կուսակցությանը:

Բայց բացի քաղաքականից անհրաժեշտ է նաև գաղափարապես նրանց տիրել-գրավել մեր կողմը: Այդ ուղղությամբ մեր կազմակերպությունները քայքայվողների մեջ ոչ մի քաղաքական-դաստիարակչական աշխատանք չեն տանում: Առանց այդ աշխատանքի նկատվում է, որ նրանք կամաց-կամաց նորից կտրվում են մեզանից և մեր ուշադրության առարկա չդարձող նախկին դաշնակցականները նորից կարող են ընկնել Դաշնակցության գիրկը և դառնալ ավելի վտանգավոր ու կատաղի հակառակորդ մեր կուսակցության և խորհրդային իշխանության, քան եղել են մինչև քայքայվելը:

Այդ բանին օգնում է նաև այն, որ հալածանքը նրանց դեմ դեռ շատ տեղերում շարունակվում է: Մեր ընկերների կողմից ընկերական վերաբերմունք ցույց չի տրվում և շարունակում են նայել նրանց վրա իբրև դաշնակների, որ պատճառ է դառնում մեզանից հետ վանելու:

Այդ հանգամանքն ի նկատի առնելով, Կենտկոմը գտնում է կարևոր, որ գավկոմներում միջոցներ ձեռք առնեն, հրահանգեն բջիջներին վերացնելու այդ երևույթը և փոխելու իրենց վերաբերմունքը դեպի քայքայված դաշնակցականները և ուշադրություն դարձնելու նրանց քաղաքական-դաստիարակչական խնդիրների վրա:

Պետք է նրանց մասնակից անել կուսշրջիկ և քաղգրագիտական դպրոցներում քաղաքականապես պատրաստվելուն և ասպարեզ տալ հասարակական ժողովներում արտահայտվելու, որպեսզի հետագայում հնարավոր լինի ընդունելու մեր կուսակցության մեջ ամենաընդունակներին ու մեզ մոտ էլեմենտներին, եթե ցանկություն լինի նրանց կողմից:

Անհրաժեշտ է ոչ միայն գաղափարական աշխատանք տանել, այլև կապել նրանց այս կամ այն խորհրդային աշխատանքներին: Օգտագործել լիկկայաններում, դպրոցներում, խրճիթ-ընթերցարաններում: Այս աշխատանքը համարելով հարվածային և կարևոր, առաջարկվում է ամենաշտապ կերպով սկսել այդ աշխատանքները և ընթացքի մասին տեղյակ պահել Կենտկոմին:

Կենտկոմի քարտուղար՝ **Շահսուվարյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.46, թ.4:

165 ՀԿԿ Լենգավկոմի քարտուղար ընկ. Դաստակյանին

13 փետրվարի 1925թ.

Թիվ 730/գ

Նկատի ունենալով, որ դաշնակցականները զուրկ են լայն մասսաների մեջ և անլեգալ մամուլի միջոցով մեզ մոտ աշխատանք կատարելու հնարավորությունից, քաղաքական տեսակետից Կենտկոմը միանգամայն աննպատակահարմար է համարում մեր մամուլի էջերում Դաշնակցության համագումարի մասին որևէ բան գրելը*: Հակառակ պարագային մենք ակամայից ստիպված կլինենք վերակենդանացնել ազգաբնակչության աչքում Դաշնակցությունը, մանավանդ որ այժմ մեր ձեռքի տակ համագումարի աշխատանքների մասին համապատասխան նյութեր չունենք:

Կենտկոմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.22, թ.9:

** Խոսքը վերաբերում է 1924թ. վերջին կայացած ՀՅԴ 10-րդ համագումարին:*

166. ՀԿԿ Կենտկոմի նախագահության որոշումը

6 ապրիլի 1925թ.

Լսեցին. Կազմալուծված դաշնակցականներին Կոմկուսի մեջ ընդունելու մասին: (Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. Հարցը հանձնել Կենտկոմի Քարտուղարությանը և առաջարկել Կենտկոմի Նախագահության հաջորդ նիստին ներկայացնել ընդունվողների վերջնական ցուցակը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.14: Թարգմ. ռուս.:

167. ՀԿԿ Կենտկոմի Քարտուղարության որոշումը

30 ապրիլի 1925թ.

Լսեցին. Նախկին դաշնակցականներին ՀԿԿ-ի մեջ ընդունելու մասին: (Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. Առանձնացնել հանձնաժողով հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Ա. Շահսուվարյան, Գ. Հակոբյան և Ա. Թաթյան և նրան հանձնարարել մանրամասն ուսումնասիրել նրանց կուսակցության մեջ ընդունելու մասին ամբողջ նյութը և իր նկատառումները դնել Կենտկոմի Քարտուղարության հաջորդ նիստին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.10, թ.34: Թարգմ. ռուս.:

168. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

28 սեպտեմբերի 1925թ.

Լսեցին. - Կազմալուծված դաշնակցականներին ՀԿ(բ)Կ-ի մեջ ընդունելու մասին: (Զեկ. ընկ. Շահսուվարյան):

Որոշեցին. Առաջարկել Երևանի կոմիտեին անցկացնել համապատասխան բջիջների միջոցով:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.28: Թարգմ. ռուս.:

169. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

21 դեկտեմբերի 1925թ.

Լսեցին. - ՀԿ(բ)Կ-ի մեջ կազմալուծված դաշնակներին ընդունելու մասին: (Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին. 1. Առաջարկել Քարտուղարությանը շտապ կարգով իրականացնել Կենտկոմի Նախագահության և պլենումի որոշումը քայքայված դաշնակցականների լավագույն մասին ՀԿ(բ)Կ-ի մեջ ընդունելու մասին:

2. Գավկոմներին՝ պարզաբանել մեր քաղաքականությունը Դաշնակցություն կուսակցության քայքայման բնագավառում և նրանց առաջարկել ՀԿ(բ)Կ-ի մեջ ընդունել Դաշնակցությունից գաղափարապես հեռացած այդ կուսակցության նախկին անդամներին, պահպանելով առավելագույն զգուշություն և նրբազգացություն:

3. Դաշկուսակցության հետագա քայքայման մասին հարցը լուծել, լսելով Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի զեկուցումը տվյալ հարցի վերաբերյալ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.44 հակ.: Թարգմ. ռուս.:

170. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարություն

19 փետրվարի 1926թ.

Մեղրի

Խիստ գաղտնի

Գաղափարապես Դաշնակցությունից հեռացած նախկին անդամներին կուսակցության մեջ ընդունելու մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1925թ. դեկտեմբերի 21-ի որոշման* արդյունքների կապակցությամբ պետք է հայտնեմ, որ Մեղրու դաշնակցականների շրջանում մեր կուսակցության օգտին այդպիսի բեկում չի նկատվում: Մինչև այժմ նրանցից որևէ մեկը չի ձգտել հրապարակորեն հայտարարել Դաշնակցություն կուսակցությունից դուրս գալու մասին: Նրանք բոլորը, առանց բացառության, ներկայումս եռանդուն կերպով զբաղված են Մեղրու շրջանում իրենց կուսակցության շարքերը ամրապնդելու կազմակերպական աշխատանքով:

Այդ պատճառով Մեղրու շրջկոմը տվյալ հարցի կապակցությամբ գտնվում է սպասողական վիճակում:

ՀԿ(բ)Կ Մեղրու շրջանային կոմիտեի

քարտուղար՝ Ս. Բուդումյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.22, թ.11: Թարգմ. ռուս.:

** Տես սույն ժողովածուի 169 փաստաթուղթը:*

171. ՀԿԵՄ Կենտկոմի Նախագահության որոշումը

2 փետրվարի 1924թ.

Լսեցին. ՀԿԵՄ-ի մեջ երիտդաշնակների ընդունելության մասին: (Քաղվածք Երկոմի արձանագրությունից):

Որոշեցին. Երկոմի գիծը երիտդաշնակներին ՀԿԵՄ-ի մեջ ընդունելու վերաբերյալ համարել սխալ և Կենտկոմի երիտդաշնակների վերաբերմամբ բռնած գծին հակասող:

Առաջարկել Երկոմին հարցը նորից քննության առնել և ոչ մի դեպքում չթույլատրել Կոմերիտմիության մեջ ընդունելու հարցը փոխադրելու համալսարանի բջիջին:

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.48, ց.39, գ.26, թ.25:

172. ՀԿԵՄ Կենտկոմի Նախագահության որոշումը

11 մարտի 1924թ.

Լսեցին. Նախկին երիտդաշնակներին միության մեջ ընդունելու մասին:

Որոշեցին. Նախկին երիտդաշնակներից ՀԿԵՄ-ի մեջ մտնել ցանկացողներին ջոկելու և զտելու նպատակով նրանց Կոմերիտմիության մեջ ընդունելու համար Կենտկոմին կից ստեղծել հանձնաժողով, հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Գումեդին, Յամփրք, Գրիգորյան, հանձնարարելով նրանց դիմում տվողների հետ մանրակրկիտ ծանոթանալու և դրական կարծիք կազմելու դեպքում անցկացնել նրանց միության առանձին բջիջներում, գործադրելով Կենտկոմի առաջարկությունը միայն ծայրագույն դեպքում:

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.48, ց.39, գ.29, թ.32:

173. ՀԿԵՄ Կենտկոմի Նախագահությանորոշումը

4 ապրիլի 1924թ.

Լսեցին. Հակակոմունիստական հոսանքների մասին ուսանող երիտասարդության մեջ:

Որոշեցին. 1. Ամրացնել քաղաքի ակտիվիստներին աշակերտական կոլեկտիվներին, դպրոցում նրանց աշխատանքները ղեկավարելու համար:

2. Երևանի կուսկոմի միջոցով ամրացնել կուսակցական պատրաստված անդամներին աշակերտական խմբակներին, նրանց խմբակների մեջ քաշելու և 2-րդ աստիճանի դպրոցում, տեխնիկումում և համալսարանում աշխատող երիտասարդական հակակոմունիստական խմբակների ազդեցությունից լոյալ տրամադրված ուսանող երիտասարդությանը ազատելու նպատակով:

3. Առաջարկել Կոմերիտմիության Երկոմին ուժեղացնել դպրոցական կոլեկտիվների վրա իր ղեկավարությունը և պարբերաբար հրավիրել նրանց խորհրդակցության:

4. Հետագայում սահմանել հսկում այդ խմբակների աշխատանքների վրա:

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.48, ց.39, գ.26, թ.49:

174. ՀԿԵՄ Կենտկոմի Նախագահության որոշումը

24 ապրիլի 1924թ.

Լսեցին. Երիտասարդության հակակոմունիստական խմբակների աշխատանքների մասին: (Զեկ. Գումեդին):

Որոշեցին. 1. Տանել ուժեղ պայքար հակակոմունիստական դաշնակցական գրականության տարածման դեմ:

2. Դարձնել Գլխքաղլուսվարի ուշադրությունը գրադարաններից դաժան* դաշնակցական գրականության վերցնելու անհրաժեշտության վրա:

3. Խնդրել Գլխքաղլուսվարին առաջիկա շտատների կրճատման ժամանակ գրադարաններում ի նկատի ունենալ այդ գրականության

տարածման նպաստող անձանց, փոխարինելով նրանց Կոմերիտմիության անդամներով:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, ց.39, գ.26, թ.58:

** Որոշման ռուսերեն օրինակում «злостная» բառն է, որ պետք է թարգմանվի՝ չարամիտ: Վերջինս ճշտությամբ համապատասխանում է նախադասության իմաստին:*

175. ՀԼԿԵՄ Կենտկոմի Նախագահության որոշումը

25 սեպտեմբերի 1924թ.

Լսեցին. Հայաստանի հակակոմունիստական կազմակերպությունների մասին: (Զեկ. ընկ. Մուղդուսի):

Որոշեցին. 1.Պնդել տվյալ հարցի վերաբերյալ Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի նախագահության ընդունած որոշումների կատարման վրա (արձ. թիվ 26 և 28, կետեր 8 և 6):

2. Հրավիրել Գլխքաղլուսի ուշադրությունը գրադարաններում խորթ գրականության առկայության վրա:

3. Երևանի պետական համալսարանի ուսանողների կազմի զտման կապակցությամբ հրավիրել ՀԼԿԵՄ Երևանի կոմիտեների ուշադրությունը համալսարանի ԼԿԵՄ և կոմկուսի բջիջները կոմունիստական ուժերով ուժեղացնելու անհրաժեշտության վրա:

4. Առանձին նամակով ցուցումներ տալ գավկոմներին Հայարտհանձնաժողովի լիազորների հետ նրանց կապի և 2-րդ աստիճանի դպրոցներում աշխատանքներն ուժեղացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Մշակել ուսանողության և 2-րդ աստիճանի դպրոցների աշակերտների շրջանում աշխատանքի և կապի ձևեր, այդ աշխատանքի համար պիտանի ուսանող կոմերիտականների անկուսակցական մերձավորների միջոցով:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, ց.39, գ.26, թ.87: Թարգմ. ռուս.:

176. ՀԼԿԵՄ Կենտկոմի Նախագահության որոշումը

21 հոկտեմբերի 1924թ.

Լսեցին. Նախկին երիտասարդ դաշնակների մասին: (Զեկ. Գումեդին):

Որոշեցին. Առաջարկել նախկին երիտասարդ դաշնակներին Կոմերիտմիության մեջ ընդունող հանձնաժողովին յուրաքանչյուրին ուսումնասիրել անհատաբար և Կոմերիտմիության մեջ ընդունելու մասին հարցը հանձնել համալսարանի բջիջի քննարկմանը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.39, գ.26, թ.90: Թարգմ. ռուս.:

177. ՀԼԿԵՄ Կենտկոմի Նախագահության որոշումը

10 դեկտեմբերի 1924թ.

Լսեցին. Նախկին երիտասարդ դաշնակցականների շրջանում աշխատանք տանելու մասին:

Որոշեցին. 1. Առաջարկել Երևանի, Լենինականի և Էջմիածնի գավկոմներին ուժեղացնել աշխատանքը Դաշնակցությունից հեռացած երիտասարդների շրջանում, նրանց աստիճանաբար ներգրավելով մեր բջիջների հասարակական և մշակութային-լուսավորական աշխատանքներում:

2. Անհրաժեշտ համարել նախկին երիտասարդ դաշնակցականներից ԼԿԵՄ-ի մեջ 20 ընկերների ընդունումը:

3. Հանձնարարել ընկ. Յամփրթին այդ կետերի գծով շրջաբերական ցուցումներ տալ գավկոմներին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.48, ց.39, գ.26, թ.98: Թարգմ. ռուս.:

178. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին

Պատճենը Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղարին

9 նոյեմբերի 1928թ.

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն 1927/28 ուսումնական տարում համալսարանի գյուղֆակն ավարտած ԼԿԵՄ անդամ Վարդ Կոստանյանը 1918թ. մինչև 1921թ. ներառյալ եղել է Դաշերիտմիության անդամ: Դաշնակցական արկածախնդրության ժամանակ եղել է Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ և գործոն մասնակցություն է ունեցել կարմիրների դեմ մղած պայքարին: 1924թ. նա Օշականի գյուղական բջիջի թուլության հետևանքով ընդունվում է ԼԿԵՄ-ի մեջ, ապա գալիս է Երևան և ընդունվում է համալսարան: Կոստանյանը ներկայումս սերտ կապ է պահպանում դաշնակցականների և երիտդաշնակցականների հետ և նրանց հայտնում է կուսակցական և կոմերիտական գաղտնիքներ:

Սույնը հայտնում ենք ի գիտություն և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Հայպետքաղվարչության նախագահի տեղակալ՝ **Պետրոսյան**
Գաղտնի բաժնի պետ՝ **Մուղդուսի**

Երկրորդ խմբի ավագ լիազոր՝ **Եսայան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.47, թ.95: Թարգմ. ռուս.:

Գ. Դաշնակության դատավարությունը

(Մանուկ Խուշոյանի ահաբեկչական գործի դատավարության փոխարեն)

179. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

2 հունիսի 1926թ.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցության ահաբեկչության մասին գործը* (Զեկ. ընկ. Մ.-Հովսեփյան):

Որոշեցին. 1. Գործը հանձնել Հանրապետության դատախազին հասարակական դատավարություն նախապատրաստելու համար և մեկ-

* *Խոսքը վերաբերում է գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի սպանությանը:*

շաբաթյա ժամկետում մտնել Նախագահություն, իր նկատառումներով:

2. Առաջարկել Նախագահության բոլոր անդամներին այդ ժամանակամիջոցում ծանոթանալ տվյալ գործի առկա նյութերին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ1, ց.6, գ.5, թ.49: Թարգմ. ռուս.:

180. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

9 հունիսի 1926թ.

Լսեցին. Դաշնակցականների դատավարության մասին (Զեկ. ընկ. Վարդապետյան):

Որոշեցին. Առաջարկել Արդարադատության ժողկոմին ավարտել դաշնակցականների կողմից Մ. Խուշոյանի ահաբեկչական սպանության գործը դատական կարգով և նախապատրաստել դատավարությունը գործի սոցիալական ու քաղաքական կողմի տեսանկյունից:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ1, ց.6, գ.5, թ.71: Թարգմ. ռուս.:

181. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

7 սեպտեմբերի 1926թ.

Լսեցին. Խուշոյանի դատավարության մասին: (Զեկ. ընկ. Լ. Վարդապետյան):

Որոշեցին. 1. Թողնել ուժի մեջ Կենտկոմի նախորդ որոշումը Խուշոյանի դատավարության մասին:

2. Հավանություն տալ Արդարադատության ժողկոմատի կողմից ներկայացված մեղադրական եզրակացությանը Խուշոյանի ահաբեկչական սպանության գործի վերաբերյալ:

3. Դատավարության քաղաքական ղեկավարման համար առանձնացնել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Աշ. Հովհաննիսյան*, Ա. Մռավյան և Զ. Աշրաֆյան:

Հանձնարարել հանձնաժողովին նախատեսել դատարանի և հասա-

* *ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության հոկտեմբերի 10-ի որոշումով Աշ. Հովհաննիսյանի բացակայության դեպքում նախատեսվել է Ա. Կարինյանի թեկնածությունը:*

ռական մեղադրողների կազմը, ինչպես նաև որոշել դատավարության ժամանակը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.127: Թարգմ. ռուս.:

182-189. <Գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի ահաբեկչության գործի դատավարությունը>*

8-19 հոկտեմբերի 1926թ.

182. Մանուկ Խուշոյանի տեռորիստական սպանության մեջ մեղադրվողներ քաղ. Սահակ Ստեփանոսյանի և ուրիշների մեղադրական եզրակացության հակիրճ բովանդակությունից

1925թ. հուլիսի 26-ի լույս 27-ի գիշերը Ներքին Աղջաղալա գյուղում կատարվել է տեռորիստական ակտ նույն գյուղի խորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի դեմ, որը և սպանվել է գլխից ստացած «Մաուզեր» սիստեմի ատրճանակի 3 գնդակներից:

Այս առթիվ կատարված նախնական քննությունից պարզվել է հետևյալը՝

«... Խուշոյանի և Արագածի շրջանի դաշնակցական-խմբապետական տարրերի միջև բռնկված քաղաքական պայքարի շրջանում ուժեղանում է նաև Դաշնակցություն կուսակցության Հայաստանի գաղտնի կազմակերպությունների անմիջական ղեկավարների ակտիվությունը՝ Արագածի գաղտնի կազմակերպության անդամներ՝ Պետրոս Սինոյանի, Հակոբ Մովսեսյանի և Արտաշես Ստեփանյանի, որոնք և ի կատար էին ածել Խուշոյանի տեռորիստական սպանության ակտը:

1921թ. փետրվարյան անհաջող ավանտյուրայից հետո Դաշնակցություն կուսակցության գաղտնարան անցած անդամները, փաստորեն չխզելով իրենց կապը Պարսկաստանում գտնվող Կենտրոնական կոմիտեի հետ, շարունակում էին իրենց աշխատանքը Խորհրդային Հայաստանի սահմաններում, կուսակցության ընդհանուր և առանձին հրահանգներով հավաքելով իրենց շուրջը նոր ուժեր և կազմակերպելով գաղտնի բջիջներ: Սույն գործին կցած նյութից, որը վերաբերում է Քյուրդ-Ղազոյի կյանքի դեմ մահափորձ կատարելու դեպքին, երևում է, որ դեռ 1924թ. սկզբներին, այսինքն Մանուկ Խուշոյանին տեռորի ենթարկելուց շատ առաջ, Հայաստանի տերիտորիայի վրա պատրաստվելիս է

*Դատավարության նյութերը բերվում են քաղվածաբար, էական մասերը՝ ժողովածուի ոգուն համապատասխան:

եղել տեռորիստական ակտ անցյալում հայտնի դաշնակցական խմբապետ Քյուրդ-Ղազոյի դեմ: Այդ գործի կազմակերպումն իր վրա է վերցրած եղել դաշնակցական Կենտկոմի վերոհիշյալ անդամ Սահակ Ստեփանոսյանը...

Այդ նույն Ստեփանոսյանը գլխավորելիս է եղել Դաշնակցություն կուսակցության Վաղարշապատի գավառի գաղտնի կազմակերպությունը, որին ենթարկվում էր Արագածի կազմակերպությունը, սույն գործով մեղադրվող Պետրոս Սինոյանի գլխավորությամբ...

Նույն Պետրոս Սինոյանի ցուցմունքից պարզվում է, որ Խուշոյանի սպանությունը տեղի է ունեցել հետևյալ հանգամանքներում...

Այսպիսով Խուշոյանի սպանությունը, Քյուրդ-Ղազոյի դեմ կատարած մահափորձը և նախնական քննությամբ լուսաբանված մյուս փաստերն ակնհայտ կերպով ապացուցում են այն հանգամանքը, որ Արագածի շրջանի դաշնակցության դատի տրված տեղական աշխատակիցները և ղեկավարները, խմբապետական տարրերի հետ միասին, փորձում են հերյուրանքների, սպառնալիքների և տեռորի ճանապարհով Դաշնակցությունից երես դարձրած սասունցիների մեջ հենակետ ստեղծել, և նրանց մեջ իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով, իրենց հակահեղափոխական ձգտումների համար Խորհրդային իշխանության դեմ կռվելու գործիք դարձնել նրանց:

Այս գործով դատի տրված 11 մեղադրյալներից՝ Պետրոս Սինոյանը, Արտաշես Ստեփանյանը և Հակոբ Հակոբյանը տեռոր կատարելու համար իրենց մեղավոր են ճանաչել, Սահակ Ստեփանոսյանը ճանաչել է իրեն մեղավոր միայն դաշնակցական գաղտնի բջիջների կազմակերպելու մեջ, հայտնելով, որ տեռորի նախաձեռնությունն իրենից չի բխել: Մյուս մեղադրյալներն իրենց մեղավոր չեն ճանաչել, իսկ տեռորի անմիջական կատարողներից մեկը՝ Հակոբ Մովսեսյանը սպանությունից հետո անհետացել է:

Վերոհիշյալի հիման վրա մեղադրյալներ Սահակ Ստեփանոսյանին, Պետրոս Սինոյանին, Արտաշես Ստեփանյանին, Ղազար Պետոյանին, Ղազար Ֆահրադյանին, Միհրան Մանուկյանին, Գևորգ Մկրտչյանին, Ապրե Ղազարյանին, Ասատուր Խաչատրյանին և Հակոբ Հակոբյանին առաջադրված է մեղադրանք ըստ ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքի 16-64 հոդվածների, այսինքն՝ Խորհրդային իշխանության դեմ նախնական համաձայնությամբ տեռորիստական ակտ կատարելու համար:

Արո Մակարյանին Քր. Օր. 89 հոդվածի՝ դեպքի մասին իշխանությանը չհայտնելու համար:

Նույն Պետրոս Սինոյանին և Արտաշես Ստեփանյանին մեղադրանք է առաջադրված Քր. Օր. 72 և 61 հոդ., այսինքն՝ հակահեղափոխական

գրականություն տարածելու և գաղտնի կազմակերպություններին մասնակցելու համար:

Տե՛ս դատավարության նյութերի վերջում նշված գիրքը, էջ 1-8:

183. Պետական մեղադրող ընկ. Ա. Հովսեփյանի մեղադրական ճառից

Ինչպես ասում էր Ստեփանոսյանը, դաշնակցականները կարծել են, որ կկարողանան օգտագործել Հայաստանի աշխատավորության ամենահետամնաց հատվածը իրենց քաղաքական ու կազմակերպչական նպատակների համար. այստեղ են նրանք ամենից շուտ տարել իրենց աշխատանքները. հետամնաց սասունցիները մարտական ուժ են հանդիսացել անցյալում Դաշնակցության ձեռքին, այդ ուժը ցանկացել են կրկին ծառայեցնել իրենց շահերին դաշնակցականները: Բայց այստեղ խանգարել է մեկը. դա եղել է Մանուկ Խուշոյանը: Ուրեմն պետք է դրան վերացնել: Այս նկատառումներով է, որ Մանուկ Խուշոյանը ենթարկվում է տեռորի: Ինչպես հայտնեցին այստեղ Սինոյանը և Ստեփանոսյանը, Խուշոյանը մի քանի սասունցի դաշնակցականների դեմ «դավեր է լարել»: Պարզ է, որ Ստեփանոսյանը չէր կարող թողնել այդ «դավեր լարողին» այնպիսի մի վայրում, ինչպիսին է Ալագյազի վայրը: Անկասկած նա պիտի իր վճռական քայլը ձեռնարկեր: Նա պիտի իր համաձայնությունը տար: Նա պիտի ձգտեր հեռացնել Խուշոյանին և վերացրել է...

Տե՛ս նույն գիրքը, էջ 180:

184. Հասարակական մեղադրող Արամայիս Երվնկյանի ճառից

Ընկեր դատավորներ, Խուշոյանի տեռորիստական սպանության ակտը մի էտապն է այն բազմաթիվ ոճիրների, որ իր ամբողջ գոյության ընթացքում կատարել է Դաշնակցությունը: Խուշոյանի սպանությունը մի նյուանսն է այն բազմաթիվ դավերի, որ պատմության մեջ Դաշնակցությունը նյութել է հայ ժողովրդի և հայ աշխատավորության հանդեպ...

Տե՛ս նույն գիրքը, էջ 185:

185. Դատապաշտպան Տ. Տրդատյանի ճառը

Քաղաքացի դատավորներ. Մեղադրական եզրակացությունը առաջադրել է Ղազարներին և Միհրանին մեղադրանք Քր. Օր. 16, 64 հոդ.: Այդ մեղադրանքից դատախազությունը հրաժարվեց և առաջադրեց նոր մեղադրանք՝ նախատեսված Քր. Օր. 89 հոդ.: Եվ այդպես Ղազարները և Միհրանը դրդողներ չեն, նրանք չեն այս գործի ոգին, այս գործի ներշնչողը...

Քր. Օր. 89 հոդ. ոչ մի կապ չունի Ղազարների հետ, և ես խնդրում եմ, քաղաքացի դատավորներ, նրանց և Միհրանին ճանաչեք այդ հանցանքում ևս անմեղ, թողեք նրանք արդարացած վերադառնան տուն և շարունակեն կատարել իրենց զանգի դերը:

Տե՛ս նույն գիրքը, էջ 223, 232-233:

186. Դատապաշտպան Տ. Հախումյանի ճառը

Քաղաքացի դատավորներ. 1925թ. հուլիսի 26-ին Ալագյազի փեշերին գտնվող Ներքին Աղջաղալա գյուղում, կեսգիշերից հետո, 3 գնդակի հարվածով սպանվեց նույն գյուղի գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանը: Այդ սպանության գործն է, ահա, քաղաքացի դատավորներ, որ քննում է Գերագույն դատարանի ատյանը սկսած ա.թ. հոկտեմբերի 8-ից մինչև այսօր:

Թվում էր ինձ, որ այդ գործի քննությամբ է, որ մենք պիտի զբաղվենք այստեղ: Հասարակական մեղադրողը իր ճառում պետք է պարզաբաներ ոչ թե ընդհանրապես Դաշնակցության գործունեությունը, սկսած նրա ծագման օրից մինչև այսօր, այլ պիտի լուսաբաներ միմիայն և գլխավորապես այն ժամանակաշրջանը, որի ընթացքում տեղի է ունեցել Մանուկ Խուշոյանի սպանությունը:

Այն ձևով, ինչ ձևով կազմված է սույն գործի մեղադրական եզրակացությունը, թվում էր ինձ, որ այսօր դատախազների մեղադրական խոսքերը ուղղված պիտի լինեին ոչ թե ընդհանրապես Դաշնակցություն կուսակցության հասցեին, որպես քաղաքական կազմակերպության, որը 35 տարվա ընթացքում խոշոր դեր է խաղացել հայ իրականության մեջ (ես չեմ որակում այդ դերը, բայց որ նա որոշ դեր խաղացել է, այդ փաստ է), այլ բացառապես պետք է պարզաբանեինք այն արարքները, որոնք կատարել են այստեղ նստած մեղադրյալները, որոնք իրենց կու-

սակցության անցյալի մեղքերի և հանցանքների համար պատասխանատու չեն և ոչ մի կերպ:

Ես ասում եմ՝ քանի որ այս գործը կոչվում է Մանուկ Խուշոյանի սպանության գործ, թվում է, որ ներկա պրոցեսում Դաշնակցության մասին և նրա աշխատանքների մասին պիտի խոսել գլխավորապես այն սահմաններում, որոնցով ընդգրկվում է Մանուկ Խուշոյանի սպանության փաստը: Մինչդեռ ստացվում է այնպիսի տպավորություն, թե Խուշոյանի սպանության գործի այս դատավարությունը, Խուշոյանի սպանության առթիվ արտասանված ճառերը կարծես թե մեկ և միակ նպատակ միայն ունեին՝ նորից վերհիշել այն գործունեությունը, որ ունեցել է հայ իրականության մեջ Դաշնակցություն կուսակցությունը, նորից քամուն տալ հին դարմանն ու փոշին, և կարծես մենք ուզում ենք ասել, որ այս ամբողջ հսկայական պատասխանատվությունը և այն ամբողջ ծանրագույն բեռը, որ իր ուսերի վրա է վերցրել Դաշնակցություն կուսակցությունը, - այդ բեռը և պատասխանատվությունը մենք ուզում ենք կարծես դնել այս մի քանի ոչ իրազեկ և ոչ մեղսակից անհատների ուսերի վրա:

Ես կարծում եմ, քաղաքացի դատավորներ, որ սույն գործի նմանօրինակ ձևակերպումը միանգամայն սխալ է և ոչ համապատասխան գործի փաստական և օբյեկտիվ տվյալներին: Հարկավոր չէր բնավ, որ մենք այստեղ մանրամասնորեն քննադատեինք այն, ինչ որ կատարել էր Դաշնակցությունն անցյալներում, հարկավոր չէր թվել նրա 35 տարվա գործունեությունը, սկսած Օտտոմանյան բանկի գրավումից և ավելի վաղ օրերից մինչև այսօր, որովհետև, վերջին հաշվով այն մարդիկ, որոնց այսօր մենք այս դահլիճում դատում ենք, բոլորովին պատասխանատու չեն հիշյալ արարքների համար:

Մենք պետք է քննության առնենք ու դատենք գործերն ու արարքները միմիայն այն դաշնակցականների, որոնք ներկայումս գոյություն ունեն մեր երկրում, և այն էլ ոչ թե բոլորին, այլ միմիայն նրանց, որոնց մասին մեղադրական եզրակացությունն ասում է, թե տեռոր են կատարել Մանուկ Խուշոյանի դեմ: Մենք պետք է խոսենք այն դաշնակցականների մասին, որոնք շարունակում են իրենց գործունեությունը, և պիտի մեր վերաբերմունքը արտահայտենք նրանց հենց այդ գործունեության մասին և պիտի աշխատենք պարզել, թե որչափով է այսօրվա Դաշնակցության վարքագիծը անդրադարձել այսօր այստեղ, մեղադրյալների աթոռի վրա նստած մարդկանց գործունեության մեջ: Եվ ահա ես, որպես Սահակ Ստեփանոսյանի պաշտպանը, այս սահմաններում եմ հասկանում ոչ միայն իմ, այլև ամբողջ դատավարության դերը և այս սահմաններում պիտի աշխատեմ ծավալել իմ պաշտպանության

խոսքը, որպեսզի հնարավոր լինի թե տեսական և թե գործնական ապացույցների միջոցով հաստատել դատարանիդ առջև, որ այն ամբողջ մեղադրանքը, որը բարդված է Սահակ Ստեփանոսյանի վրա, բնավ իրավացի չէ նրա նկատմամբ:

... Մինչև 1925թ. դեկտեմբերի 17-ը ոչ մի վերսիա, ոչ մի հայտարարություն և ոչ մի ակնարկ այն մասին, որ այդ սպանությունը կատարվել է քաղաքական հողի վրա: Այդպիսի տվյալներ գործի մեջ չկային: Ամեն ուղղությամբ կարելի էր փնտրել սպանության պատճառները, սակայն ոչ երբեք քաղաքական գծով: Միայն 1925թ. դեկտեմբերի 17-ին է, որ առաջին անգամ Պետրոս Սինոյանը գալիս է և հայտարարում, թե այդ սպանությունը կատարել եմ ես, և այն էլ իբր թե այն պատճառով, որ Կենտկոմի անդամ Ստեփանոսյանը կանչել էր ինձ էջմիածին և ասել, թե Կենտկոմը որոշեց Խուշոյանին խփել, և դու պիտի հանձն առնես այդ և խփես: Եվ ահա մենք պիտի մանրամասն կերպով կանգ առնենք Պետրոս Սինոյանի ցուցմունքների վրա, որովհետև այստեղ է թաղված շան գլուխը...

Մենք, սակայն, գործի մեջ չունենք ոչ մի ապացույց, որ այստեղ տեղի է ունեցել տեռոր՝ կազմակերպված Կենտկոմի հրահանգով կամ նրա թեկուզ մեկ անդամի նախաձեռնությամբ և, ընդհակառակը, կան տվյալներ, որոնք գալիս են ասելու, որ այս սպանությունը կատարվել է տեղական անհատական դժգոհությունների հողի վրա և միայն և միմիայն տեղական նախաձեռնությամբ:

... Միևնույն ժամանակ ես պիտի հիշեցնեմ, որ դուք պիտի մոռանաք նաև այն, որ այսօր այս գործով մեղադրվողների շարքում դուք դատում եք այլևս ոչ թե դաշնակցական Սահակ Ստեփանոսյանին, այլ այն Ստեփանոսյանին, որը դեռ անցյալ տարվա դեկտեմբեր ամսից հեռացել է Դաշնակցության շարքերից, պարզ տեսնելով և համոզվելով, որ Դաշնակցությունն այլևս անելիք չունի ոչ մեր երկրում և ոչ էլ գաղութներում և բնավ չկամենալով պատասխանատու լինել իր անցյալ կուսակցության բոլոր մեղքերի, հանցանքների և արարքների համար...

Տե՛ս նույն գիրքը, էջ 233-235, 254-255, 264-265, 270-271:

187. Ադ. Հասան-Զալալյանի ճառը

Քաղաքացի դատավորներ. Ինձ հանձնված է մեղադրյալներ Գևորգ Մկրտչյանի, Արո Մակարյանի, Ապրե Ղազարյանի և Ասատուր Խաչատրյանի պաշտպանությունը:

... Այդ բոլորից հետո ինձ համար աներկբայելի է, որ սպանությունը կատարվել է քաղաքական հողի վրա, գուցե և Արտաշեսի և Պետրոսի նախաձեռնությամբ, - այդ ինձ համար, կրկնում եմ, միանգամայն անհետաքրքիր է, - բայց կատարված է առանց պաշտպանյալներիս մասնակցության և գիտության...

Տե՛ս նույն գիրքը, էջ 271, 282:

188. Դատական պաշտպան Գրիգոր Օուբարյան

... Պետրոս Սինոյանը, Արտաշես Ստեփանյանը և Հակոբ Հակոբյանը, որոնց պաշտպանությունն է ինձ հանձնված, թե նախաքննության ժամանակ, և թե դատաքննության ընթացքում ընդունեցին երկու հիմնական դրություն. առաջինն այն է, որ իրենք մասնակցել են Մանուկ Խուշոյանի սպանության, և երկրորդ՝ որ այդ սպանությունը քաղաքական տեռոր է:

Տե՛ս նույն գիրքը, էջ 283:

189. Դատավճիռ

Հանուն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ՀՍԽՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիան դռնբաց դատական նիստում 8-19 հոկտեմբերի 1926թ.

Մասնակցությամբ՝

Նախագահ՝ Զ. Ա. Աշրաֆյանի

Ժողատենակալներ՝ 1. Մ.Մ. Սարգսյանի

2. Ա. Պ. Աղամալյանի

Քննեց քաղ. քաղ. Սահակ Արտեմի Ստեփանոսյանի, Պետրոս Կիրակոսի Սինոյանի, Արտաշես Մարտիրոսի Ստեփանյանի, Ղազար Մնացականի Պետոյանի, Ղազար Հարությունի Ֆահրադյանի, Միհրան Շավարշի Մանուկյանի, Գևորգ Տոնոյի Մկրտչյանի, Հակոբ Հարությունի Հակոբյանի, Ապրե Մխիթարի Ղազարյանի, Ասատուր Պետրոսի Խաչատրյանի և Արո Սահակի Մակարյանի գործը, ըստ մեղադրանքի նրանց Վաղարշապատի գավառի Ներքին Աղջաղալա գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի տեռորիստական սպանության, հակահեղափոխական կազմակերպության մասնակցելու և հակահեղափոխական գրականություն տարածելու մեջ, որպիսի հանցագործությունները նախատեսված են ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքի 16, 64, 61, 89 և 72 հոդ. հոդ. և արձանագրված են սույն գործի մեղադրական եզրակացության մեջ:

Դատարանը, կշռադատելով գործում եղած տվյալները ու համեմատելով մեղադրյալների ու վկաների ցուցմունքները, համարում է ապացուցված,

1. որ սույն գործով վերը հիշված քաղաքացիներին առաջադրած հանցագործություններն ունեն որոշ քաղաքական նշանակություն և պետք է գնահատվեն միայն և բացառապես այն քաղաքական անցքերի տեսակետից, որի գլխավոր հեղինակը հանդիսանում է Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, հենված Հայաստանի աշխատավոր գյուղացիության և ողջ ՍՀԽ Միության բանվոր դասակարգի վրա*...

... Դատարանը ապացուցված է համարում այն հանգամանքը, որ Դաշնակցությունը թե արտասահմանում և թե երկրի ներսը չի հրաժարվել տեռորից, այլ միայն տեռորը ազգաբնակչության դժգոհությամբ քողարկելու հանձնարարություններ է տվել: Այդ բոլորից հետո դատարանն ընդունում է՝

2. Ներքին Աղջաղալայի գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի սպանությունը, որպես մի ակտ՝ Արագածի Դաշնակցության կազմակերպության անդամներ Պետրոս Սինոյանի, Արտաշես Ստեփանյանի և Հակոբ Մովսեսյանի նույն վերը հիշատակված անլեգալ Կենտրոնական կոմիտեի անդամ Սահակ Ստեփանոսյանի սանկցիայով. այդ սանկցիայի գոյության մեջ դատարանը համոզվում է նույն Սահակ Ստեփանոսյանի, Պետրոս Սինոյանի, Արտաշես Ստեփանյանի տված ցուցմունքների համեմատությամբ և նրանց հիման վրա... և անհիմն է գտնում բոլոր այս գործում եղած վերսիաները, որով Մանուկ Խուշոյանի սպանությանը անձնական բնույթ է տրվում...

** Այստեղ և այնուհետև որոշման բացթողնված մասերում հիմնականում վերլուծվում և քննադատվում է Դաշնակցության գործունեությունը:*

Վերոհիշյալի հիման վրա ՀՍԽՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիան, ղեկավարվելով հեղափոխական խղճով և ՀՍԽՀ Քր. Օրենսգրքով, որոշեց*...

Վճիռը վերջնական է, բեկման ոչ ենթակա:

Վճիռն ի կատար ածել 72 ժամվա ընթացքում:

Վճիռը հանված է 1926թ. հոկտեմբերի 19-ի ժամը 21 և կեսին:

Սույն գործով դատական բոլոր ծախքերը վերցնել պետության հաշվին:

Նախագահ՝ Զ. Աշրաֆյան

Դատարանի անդամներ՝ 1. Մ. Սարգսյան

2. Ա. Աղամալյան

Դաշնակցական տեռորիստների գործը (նյութեր Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության դատավարությունից): Զ. Աշրաֆյանի առաջաբանով: Երևան, 1927, էջ 336-345:

Դ. Կապմակերպական և գաղափարական ճնշման խստացումը

190. ՌԿԿ Անդրերկրկոմին

29 հունվարի 1925թ.

Թիվ 672/գ

ՌԿԿ Անդրերկրկոմի 1924թ. դեկտեմբերի 17-ի որոշման համաձայն Անդրժողկոմխորհին հանձնարարված է 5000 ռուբլի հատկացնել հայ հոգևորականության կազմալուծման նպատակով: Սակայն մինչև այժմ ԱնդրԺԿԽ այդ նպատակի վարկը չի բացել, ուստի խնդրվում է արագացնել:

Կենտկոմի քարտուղար՝ Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.22, թ.5: Թարգմ. ռուս.:

** Ըստ մեղադրյալների դատարանի որոշումը չի բերվում՝ որպես սույն ժողովածուի համար երկրորդական: Միայն նշենք, որ գլխավոր մեղադրյալ Սահակ Արտեմի Ստեփանոսյանը ըստ ՔՕ-ի 16-64 հոդ. դատապարտվել էր գնդակահարության, որը Հայկենտգործկոմի 1926թ. հոկտեմբերի 22-ի որոշումով փոխարինվել էր 10 տարվա ազատազրկումով, խիստ մեկուսացմամբ: (Տե ս նշված գիրքը, էջ 346-347):*

191. ՀԽՍՀ ընդհանուր քաղաքական դրությունը կենտկոմի*

21 մարտի 1925թ.

Հակախորհրդային կուսակցություններ և նրանց գործունեության բնույթն ու ազդեցությունը

Դաշնակցություն. Հայաստանի ԽՍՀ հակախորհրդային կուսակցություններից հասարակության լայն զանգվածներում ամենագործունը և իշխողը Դաշնակցությունն է: Խորհրդայնացումից հետո Դաշնակցությունը ձեռնարկեց Հայաստանում իր ընդհատակյա աշխատակազմի կազմավորմանը և ներկայումս վարում է խիստ գաղտնի ու խորացված աշխատանք: Դաշնակցության գործունեության մեջ ամենաեռուն շրջանը 1924 թիվն է և 1925թ. առաջին ամիսները, այսինքն Խորհրդային Հայաստանում Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու գործընթացից և նրա շարքերից որոշ անդամների պաշտոնական հեռացումից հետո: Դա բացատրվում է նրանով, թե Դաշնակցության առաջ ծառացել էր նրա վերջնական քայքայման սպառնալիքը, և նրանով, որ նա կարող էր վերածվել գաղութային կուսակցության: Դաշնակցության արտասահմանյան կենտրոնը հաշվի առավ այդ հանգամանքը և անցավ Հայաստանում ակտիվ ընդհատակյա աշխատանքի, հրահանգներ ու ցուցմունքներ և հնարավորին չափ միջոցներ ուղարկելու միջոցով: Դաշնակցության գործունեությունը դարձավ ավելի ակտիվ մասնավորապես նրա 10-րդ ընդհանուր ժողովի հրավիրման ժամանակ և նրանից հետո, ինչպես նաև Վրաստանում մենշևիկյան արկածախնդրության** պահին: Այդ շրջանում Դաշնակցության մեջ երևաց Խորհրդային Հայաստանում ակտիվ զինված ելույթի հակում, և գլխավորը, որ նրան խանգարում էր լուծել այդ խնդիրը, հարևան երկրների, մասնավորապես Թուրքիայի հետ փոխհարաբերությունների անորոշությունն էր:

ՀԽՍՀ սահմաններում անցկացվող պլանային աշխատանքներից հարկավոր է նշել.

1. Կապը Դաշնակցության արտասահմանյան կենտրոնի հետ, հակահեղափոխական սպիտակ գրականության ստացումը և տարածումը:

2. Բոլոր գավառներում ու շրջաններում կազմակերպությունների ու խմբերի կազմավորում և կենտրոնի հետ նրանց կապ:

** Զեկուցագիրը պատրաստել է ՀայԱրտահանձնաժողովը և կից գրությամբ ուղարկել ՀԿ(բ)Կ Կենտկոմ, ըստ վերջինիս մարտի 14-ի պահանջի:*

*** Նկատի ունի 1924թ. ապստամբությունը Վրաստանում:*

3. Խորհրդային իշխանության գրգռում, պայքար պարենհարկի և գյուղում գյուղբջիջների դեմ, թափանցել խորհրդային հիմնարկները և պետական ապարատ՝ աշխատանքը խանգարելու համար:

4. Աճող սերնդի դաստիարակումը Դաշնակցության գաղափարախոսության ոգով:

5. Կապ խմբապետական տարրերի հետ կուսակցության մարտունակությունը բարձրացնելու համար:

Մինչև 1924թ. Դաշնակցության ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա ավելի ու ավելի էր թուլանում բոլոր գավառներում, իսկ 1924թ. հետո քաղաքական իրադրության շնորհիվ որոշ գավառներում (Դարալագյազ, Զանգեզուր և այլն), որտեղ մարդիկ ավելի հետամնաց են, Դաշնակցության ազդեցությունը մեծացել է:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.68, թ.3 և հակ.: Թարգմ. ռուս.:

192. Հայկոմկուսի Կենտկոմ Պատճենը Արտակարգ հանձնաժողովին

Թիվ 93/գ

6 հունիսի 1925թ.

Վերջին ժամանակներս նկատվում է, որ նախկին դաշնակցական Հայաստանի վարչապետ Քաջազնունու Հայբամբակկոմում պաշտոնի անցնելուց հետո նրա շուրջը համախմբվում են դաշնակներ և հակահեղափոխական անցյալ ունեցող անձինք, օրինակ, երկաթուղու դաշնակցականների նախկին արտակարգ եռյակի նախագահ Քոչարյանը, երկաթուղու շենքի նախկին հսկիչ Գնունին, Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ, որն ուղարկված է Սարդարաբադ տասնյակի պաշտոնով և ուրիշները:

Հայտնելով վերոհիշյալի մասին, խնդրում եմ ձեռք առնել միջոցներ վերջ տալու այդ երևույթին:

<Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի>*
նախագահ Կուզնեցով

Ընդհանուր բաժնի վարիչ՝ Դադայան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.44, թ.100:

* *Պաշտոնը դրվում է ըստ բլանկի, որի վրա մեքենագրված է փաստաթուղթը: Փաստաթղթի վրա ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Երեմիա Բակունցը հունիսի 11-ին մակագրել է. «Խնդրել Արտակարգ հանձնաժողովին հայտնել կարծիքը ըստ էության»:*

193. ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Բակունցին

27 հունիսի 1925թ.

Թիվ 6456/գ

Ի պատասխան Ձեր թիվ 1249 15 հունիսի 1925թ., հայտնում ենք, որ ՀԱՄԽ-ի թիվ 93 գրության առթիվ, առայժմս ոչ մի քայլ արված չէ: Մենք դեռ գաղտնի կերպով ուսումնասիրում ենք Քաջազնունու և նրան շրջապատողների գործունեությունը և աշխատանքը, որից հետո մանրամասը կհաղորդենք:

<Հայարտհանձնաժողովի> նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Ի տեղի գաղտնի բաժնի պետ՝ Միքայելյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.44, թ.98:

194. Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին

Հ[այաստանի] Պ[րոլետարական] Գ[րողների] «Նոյեմբեր» միության կենտրոնական խորհրդից

Դիմում

17 հոկտեմբերի 1925թ.

Անցյալ ամսի 26-ին Երևանում կայացած ՀՊԳ «Նոյեմբեր» միության համահայաստանյան հիմնադիր-կազմակերպչական ժողովը, որ մշակեց միության կանոնադրությունը և առաջիկա գործունեության ծրագիրը, իբր հիմնական անելիք առաջիկա տարվա ընթացքին՝ ժողովն առաջադրեց.

1. Միության կազմակերպությունների միջոցով զարկ տալ բանվորա-գյուղացիական գրականության զարգացմանը և աճեցմանը Խորհրդային Հայաստանում:

2. Գրական արտադրանքներով և բանավոր ելույթներով կազմակերպված պայքար մղել դաշնակցական մտայնության դեմ գրականության ասպարեզում:

Իրեն առաջադրած այս աշխատանքները իրականացնելու համար միությանս հարկավոր է ինչպես բարոյական, այնպես էլ նյութական աջակցություն կուսակցական համապատասխան օրգանների կողմից: Առանց այդ աջակցության միությունս ոչ մի հնարավորություն չի ունենա

ծավալել իր աշխատանքները թե կազմակերպչական և թե գրական-հրատարակչական ասպարեզներում: Մանավանդ հրատարակչական գործը կարիք ունի ավել կամ պակաս չափով շոշափելի օժանդակության:

Առաջիկա տարվա համար միությունս առաջարկել է հրատարակչական մի պլան, որի մոտավոր նախահաշիվը ներկայացնելով ձեզ՝ խնդրում ենք օժանդակել միությանս, հնարավորության սահմաններում:

Առաջիկա տարվա ընթացքում միությունս ունի հրատարակելիք.

Քսան անուն գիրք, յուրաքանչյուրը միջին հաշվով 3 տպագրական թերթ, յուրաքանչյուր տպագրական թերթը միջին հաշվով նստում է 100 ռուբ., այսպիսով 20x3x100=6000 ռուբլի:

Բացի այս ծրագրվում է հրատարակել մի քննադատական ժողովածու դաշնակցական գրական իդեոլոգիայի դեմ 12 տպ[ագրական] թերթ.

12x100=1200 ռուբլի: Ընդամենը 6000+1200=7200 ռուբլի:

Ի նկատի ունենալով, որ հրատարակչական գործը մեզանում տալիս է ընդամենը 50% դեֆեկտ, կարելի է հիշյալ գումարը կրճատել 50%-ով և շրջանառության մեջ դնելով շուրջ 4000ռ. հնարավոր կլինի իրագործել ծրագրված հրատարակչական պլանը:

Բացի այս միությունս խնդրում է կազմակերպչական ծախսերի համար բաց թողնել 500 ռուբլի, իբր միանվագ սուբսիդիա, որով միությունս հնարավորություն կունենա թե ծածկել իր արած ծախսերը և թե կազմակերպչական աշխատանքները տեղերում կատարել:

ՀՊԳ «Նոյեմբեր» միության կենտրոնական խորհրդի

քարտուղար՝ Չարենց

Երևան

17.10.1925թ.

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.126, թ.3 և հակ.-4: Ինքնագիր:

195. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

30 հունվարի 1926թ.

Լսեցին. Հաղորդում բանտարկված դաշնակցականների մասին: (Զեկ. Մ - Հովսեփյան):

Որոշեցին. Ընդունել ի գիտություն:

ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.11: Թարգմ. ռուս.:

196. Հայաստանի Կենտրոնական կոմիտեին

14 հունիսի 1926թ.

Սիրելի ընկերներ, ներփակ դուք կգտնեք դաշնակցական մարտական գործիչ, Զանգեզուրի (Ղափանի շրջան, Գյուրգեմ գեղից) Գերասիմ Աթաջանյանի դիմումը «Բանտարկված ընկերներին և Զանգեզուրի ժողովրդին»: Բացի այդ այսօր ուղարկում եմ ծածկագիր հեռագիր, ուր համառոտակի հայտնում եմ Գերասիմի տված դեկլարացիան ու մեր տեսակետը:

Դեռ երկու ամիս առաջ Գերասիմը տեսակցել էր Չուբարի* հետ անպաշտոն բանակցությունների համար: Վերջերս, երբ Բյուրոն նրան առաջարկեց մեկնել Զանգեզուր՝ կազմակերպությունը վերականգնելու, իսկ մինչ այդ, այստեղ մեր դեմ ակտիվ կռիվ սկսելու, Գերասիմը մերժեց: Իսկ երբ նորից պնդեցին, նա իր հրաժարականը ներկայացրեց Բյուրոյին, հայտնելով որ ինքը հեռանում է Դաշնակցությունից և ընդունում խորհրդային իշխանությունը:

Հայտարարությունը մեծ իրարանցում պատճառեց Բյուրոյին և մերձբյուրոյական դաշնակ շրջաններում: Գերասիմի նման ժողովրդական ու երկրին կապված, միանգամայն մաքուր անհատներ շատ քիչ, համարյա ոչ մեկը կա ներկայիս տարագիրների մեջ: Ուստի Բյուրոն ամեն ջանք թափեց Գերասիմին համոզելու համար: Բյուրոյի անդամները վստահեցնում էին Գերասիմին, որ վերջ՝ նրա նկատած «թերությունները» քննության պիտի առնվեն գալիք ընդհանուրին: Իսկ Գերասիմի նկատած «թերությունները» ահա թե որոնք են. «Դաշնակցությունը պիտի հրաժարվի երկրում աշխատելուց, ժողովուրդը պիտի թողնի խորհրդային իշխանության հետ հաշտվելու, պիտի վերացնել Թավրիզի հատուկ

** Եղիա Չուբար՝ 1925-1927թթ. Փարիզի «Երևան» թերթի խմբագիր:*

(կապի) կոմիտեն»: Գերասիմը վերջին ձերբակալությունների ամբողջ պատասխանատվությունը ձգում էր Բյուրոյի վրա:

Մերձբյուրոյական և որոշ չափով հակաբյուրոյական երիտասարդ ու «երիտասարդ» (այսինքն բյուրոյի անդամության չարժանացած) տարրերը փորձում են Գերասիմին իրենց մեջն առնել, խոստանալով հունվարին տապալել Վրացյան-Ջամալյան-Ռուբենի Բյուրոն, իսկ մինչ այդ կուսակցության մեջ մնալ: Սակայն Գերասիմի վրա ոչինչ չազդեց: Միայն մի հանգամանք որոշ չափով ընկրկել էր տալիս Գերասիմին. արդյո՞ք խորհրդային իշխանությունը, իր հայտարարություններից հետո, ազատ կթողնի Զանգեզուրում ձերբակալվածներին: Արդյո՞ք եթե ինքը Զանգեզուր վերադառնա, չի ձերբակալվի: Արդյո՞ք պաշտոնից կհեռացվեն «անպետք» գյուղական ու շրջանային գործիչներից մի քանիսը: Նժդեհը, օրինակ, Գերասիմին գրած վերջին նամակում այս բոլոր «արգելքներին» բացասական պատասխան տալով, խնդրում է Գերասիմին հետ վերցնել հրաժարականը: Սակայն մեր վստահացումներից հետո Գերասիմը վճռեց գրավոր դեկլարացիա տալ տեղական թերթերում և ներփակ նամակ ուղարկել բանտարկվածներին:

Գերասիմին, մեր կարծիքով ու համոզմունքով, կարելի է միանգամայն վստահել: Այդ հաստատում են ոչ միայն ագենտուրային տեղեկությունները, այլև Գերասիմի վարմունքը. նա բնավ նյութական խնդիր չի հարուցանում (ապահովված է գործարանային աշխատանքով, կուսակցական դրամով չի ապրում, ուրեմն և չի զրկվում), կարող է Զանգեզուր չվերադառնալ և ընտանիքը այստեղ փոխադրել ու ապրեցնել: Այստեղ կարող է և պատրաստ է մնալ ու պայքարել Բյուրոյի դեմ, ինչպես որ ինքն է հայտնում մեզ:

Մեր կարծիքով.

ա) Գերասիմին պիտի ներել և լիակատար քրեական ապահովության պայմանով ընդունել խորհրդային սահմանները:

բ) Իր դիմումը ընկերներին տպել թերթերում («Խորհրդային Հայաստան» և «Կարմիր ռաշպար») ու կարդալ բանտարկյալներին, ցանկալի է Գերասիմի կնոջ կամ բանտարկված եղբոր միջոցով:

գ) Գերասիմի դեկլարացիան ընդունողներին ազատ արձակել և նրանց անունները հայտարարել թերթում, իսկ կնոջը կամ եղբորը նամակ գրել տալ Գերասիմին՝ կատարված ձերբակալությունների մասին (հականե, հանվանե):

դ) Մեզ շտապ տեղեկացնել ձեր որոշումների մասին և հատկապես՝ պնդո՞ւմ եք, որ Գերասիմը վերադառնա երկիր, թե հարկ եք տեսնում, որ մնա և հեռվից գործի:

Գերասիմի հայտարարությունը («Ինչո՞ւ եմ հեռանում Դաշնակցությունից») լույս կտեսնի այստեղ ամսի 20-ին «Ապագայում» Գերասիմի

օրինակին մոտ օրերս պիտի հետևի և ուրիշը՝ Դարալագյազի պատգամավորը 10-րդ համագումարին՝ Վարդան (Մամիկոն Գիրջյան):

Ներեցեք, որ վերջերս նամակ չեմ գրել, որովհետև տեղական գործերը հնար չեն թողնում:

Խնդրում եմ, ըստ հարկին, այս գործի մասին արված որոշումները կամ հարցումները ծածկագիր-հեռագրով անել:

Ընկերական բարևներով՝ Ս. Փիրումով

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.26բ, թ.24-27: Բնագիր: Ձեռագիր: Ստորագրությունը դրված է ռուսերեն:

197. ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմ (Հայաստան ուղարկելու համար) Պատճենը ընկ. Ս. Գ. Ռակովսկուն

25 հունիսի 1926թ.

Փարիզ

Թանկագին ընկերներ, վերջին նամակից դուք գիտեք, որ Դաշնակցության Կենտկոմի անդամ Շահան Նաթալին կուսակցության անունից իր ծառայություններն է առաջարկել մի շարք գործերում, որպիսիք կարող են մեզ հետաքրքրել:

Բայց նախքան մենք կստանայինք ձեր պատասխանը, Լիազոր ներկայացուցչությունը ստացել է նամակ, որը կցվում է սույնին:

Այդ նամակը, ինչպես տեսնում եք, քիչ չափով է առնչվում նախորդ առաջարկությանը:

Նամակը ստանալու օրն իսկ (երեկոյան) ես հանդիպել եմ Կենտկոմի մի այլ անդամի՝ Շավարշ Միսակյանի հետ (Շահան Նաթալին մեկնել է Ամերիկա և Կենտկոմի հետագա բանակցությունները հանձնարարել Միսակյանին), որին հայտնել եմ արված առաջարկության և նամակի բովանդակության հակասության մասին:

Միսակյանն ընկ. Չուբարի ներկայությամբ ինձ բացատրեց, որ նամակը որոշված է եղել ուղարկել նախքան այդ բանակցությունները, որ իրենք ճիշտ տեղեկություններ ունեն Հայաստանում «քրեական հանցագործների» անվան տակ իրենց ընկերների գնդակահարության հնարավորության մասին: Ընդ որում հենվեց արդեն տեղի ունեցած ոմն Սուրեն Սահակյանի գնդակահարության վրա և որ նման պայմաններ-

ռում նրանց ուրիշ ելք չի մնում, բացի տվյալ նամակից:

Մեր տվյալներով այդ նամակը հուսահատության ակտ է, որն առաջ է եկել շատ դաշնակ աշխատողների, մասնավորապես կուսակցության Զանգեզուրի հայտնի գործիչ Գերասիմի* հեռանալու հետևանքով, որի վերաբերյալ ձեզ արդեն հեռագրված է: Վախենալով վերջնական փլուզումից նրանք ընդունակ են դիմելու վճռական միջոցների իրենց կուսակցության «կենսունակությունը» ապացուցելու համար, որը դժվար չէ անել արտասահմանում մեր ընկերների (Միլանում Մակինցյանը, Կոստանդնուպոլսում Շահվերդյանը, Փարիզում Չուբարը և, վերջապես, ընկ. Լուկաշինը) լրիվ անպաշտպանվածության պայմաններում: Ուստի նպատակահարմար կլիներ դաշնակների նկատմամբ առայժմ ծայրահեղ միջոցների (գնդակահարություն) չդիմել, եթե այդպիսիները նախատեսված են, քանի դեռ համապատասխան ընկերները տեղյակ չեն պահվի և հնարավորության չափ վտանգազերծվի:

Բացի այդ, հայտնեք, թե ենթադրվո՞ւմ է, արդյոք, պատժի բարձրագույն միջոցների գործադրում ձերբակալված դաշնակների նկատմամբ, քանի՞ մարդ է ընդամենը բանտարկվել և քանի՞սն են այժմ մնում բանտերում և ի՞նչ նկատառումով է գնդակահարվել Սուրեն Սահակյանը, եթե նա ընդհանրապես գնդակահարվել է:

Դաշնակցություն կուսակցության մեջ փլուզումը մեծ է Երևանում կատարված ձերբակալությունների հետ կապված: Ոմանք, ինչպես Գերասիմը, կանգնել են կազմակերպությունը ցրելու և պայքարը դադարեցնելու տեսակետի վրա, հավատացած լինելով, որ դրանով կփրկեն իրենց ընկերներին: Իսկ Կենտկոմն ուզում է տապալել այդ ուղեգիծը, որ, հաջողության դեպքում, կարող է իր հետևից տանել կուսակցության մեծ մասին, հնարավոր է նաև տեռորի միջոցով: Ուստի ցանկալի է ճանապարհ բացել լիկվիդատորական հոսանքի համար և արձագանքել Գերասիմի նամակին՝ իսկապես բանտարկյալներին ազատելով և նրանց վիճակի ընդհանուր մեղմացումով:

Գերասիմի զղջացող նամակի և ձերբակալվածների վիճակի թեթևացման միջև առնչությունը պետք է արտահայտվի մամուլում:

Արդյունքների մասին հայտնեք, եթե կարելի է, հեռագրով: Նամակը համաձայնեցված է ընկ. Չուբարի և ընկ. Ռիգինի հետ:

Կոմունիստական ողջույններով_ Ս. Փիրումով

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.26բ, թ.16-17: Պատճեն:

*Խոսքը Գերասիմ Սարաջանյանի մասին է:

198. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

7 հուլիսի 1926թ.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցության Բյուրոյի նամակը: (Տե՛ս հատուկ թղթապանակ)*:

Որոշեցին. Ընդունել ի գիտություն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.83: Թարգմ. ռուս.:

*Նշված թղթապանակը արխիվում չի գտնվել, հնարավոր է, որ այն արխիվ չի էլ հանձնվել: Բյուրոյի նամակը կարող էր վերաբերվել 1926թ. Հայաստանում կատարված դաշնակցականների զանգվածային ձերբակալություններին:

199. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը

12-13 օգոստոսի 1926թ.

Լսեցին. Դաշնակցություն կուսակցության մասին:

Որոշեցին. Առաջարկել ընկ. ընկ. Աշ. Հովհաննիսյանին և Ա. Կարինյանին երկշաբաթյա ժամկետում Նախագահության անդամներին ուղարկել իրենց գրավոր դրույթները* Դաշնակցություն կուսակցության և այդ կուսակցության դեմ պայքարի մեր հետագա գործելակերպի մասին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.107: Թարգմ. ռուս.:

*Տե՛ս փաստաթուղթ 200:

200. Դրույթներ Դաշնակցություն կուսակցության դեմ մղվող մեր պայքարի տակտիկայի

<Օգոստոս 1926թ.>*

Վերջին տարիների իրադարձությունները, մեր երկրում պրոլետարական հեղափոխության բոլոր հաջողությունները հանգեցրել են Հայաստանում, Անդրկովկասում և ամբողջ ԽՍՀՄ-ում Դաշնակցություն կուսակցության խոր պարտությանը, միաժամանակ խորհրդային հանրապետությունների սահմաններից դուրս առաջ բերելով սուր ճգնաժամ այդ կուսակցության մեջ: Տասնյակ տարիներ Դաշնակցության հետևից գնացող Հայաստանի և Անդրկովկասի աշխատավորական լայն զանգվածները խոր հիասթափություն ունեցան նրանից: Սկսվեց աշխատավորական շրջանների ընդհանուր հեռացում այդ կուսակցությունից և նրա գաղափարախոսությունից:

Դաշնակցության դեմ մղվող քաղաքական պայքարի և պետական շինարարության հաջողությունների շնորհիվ ուժեղանում էր մեր աճող ազդեցությունը այդ զանգվածների վրա: Նրանք ավելի ու ավելի էին ազատվում անցյալի քաղաքական ավանդույթներից, տրամադրություններից ու գաղափարախոսությունից: Նույնպիսի երևույթ նկատում ենք և արտասահմանում: Մի շարք պատասխանատու ղեկավարների հեռանալը կուսակցությունից, սրա անդամների դժգոհությունը կուսակցության հրամանատարական վերիններից, երկրի ներսում Դաշնակցության վերացման գծով մղվող լայն կամպանիան, արտասահմանի հայության աստիճանական ընդգրկումը ՀՕԿ** անկուսակցական կազմակերպության մեջ և վերջինիս վրա մեր ազդեցության աճը, մեր մամուլի նվաճումները և այլն, նշանավորում են կուսակցության լուրջ և համատարած ճգնաժամի սկիզբը, որը կարող է հետագայում հասցնել նրա լրիվ կազմալուծմանը:

1924թ. վերջին հրավիրված դաշնակների 10-րդ համագումարը այդ վտանգը կանխելու նպատակով և կուսակցության վերևներում ավելի ու ավելի ուժեղացող քաղաքական ու գաղափարական տարընթացության դեմ պայքարի շահերի տեսանկյունից որոշեց կուսակցության պաշտոնական ուղեգիծը կանգնեցնել երկրորդ ինտերնացիոնալի ծրագրի վրա, այդ ուղեգիծը զուգակցելով Հայաստանի խորհրդային կառավարության նկատմամբ (խոսքով) «լոյալության» հետ: Միաժամանակ հա-

* *Ժամանակը որոշվում է ըստ ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության 1926թ. օգոստոսի 12-13-ի որոշման (տես 199 փաստաթուղթը):*

** *ՀՕԿ՝ Հայաստանի օգնության կոմիտե:*

մագումարը նշեց երկրի ներսում զանգվածային ընդհատակյա կազմակերպության վերածնման անհրաժեշտության մասին, կուսակցության մեջ հին ակտիվիստներին և մեզանից խիստ դժգոհ տարրերին ներգրավելու միջոցով:

Այդ հիմունքով դաշնակները նշված համագումարից հետո Հայաստանի քաղաքներում ու գյուղերում ձեռնամուխ եղան կազմակերպությունների լայն ցանցի ստեղծմանը, կուսակցության շարքերում ներգրավելով երկրի մեզանից դժգոհ մանրբուրժուական տարրերին, հին դաշնակների, ինչպես նաև կուսակցության երիտասարդ ակտիվիստների կողմից ղեկավարվող քաղաքային ու գյուղական մտավորականների՝ խորհրդային ծառայողների, ուսուցիչների, ուսանողների և ուրիշների:

Այդ կազմակերպությունների վերջին ջախջախումը՝ նրանց ղեկավարների ձերբակալությունները կուսակցության շարքերում առաջ են բերել նոր իրարանցում և նրա առաջ վերստին ամբողջ սրությամբ դրել կուսակցության հետագա ճակատագրի հարցը: Այստեղից դաշնակցական առաջնորդների կողմից նոր կազմակերպական ձևերի և նոր տակտիկայի ջղաձիգ որոնումները՝ կուսակցությունը լրիվ կործանման վտանգից պաշտպանելու համար: Դաշնակցական մամուլի էջերում կուսակցության «սոցիալիստական» և ֆաշիստական կողմնակիցների միջև վեճերի նորոգումը, Հայաստանում և արտասահմանում մի շարք ահաբեկչական մահափորձերի դեպքերը և, վերջապես, մեր դեմ ահաբեկչական պայքարի անցնելու հնարավորության մասին մեզ հասցեագրված «սպառնալիքները», - այս ամենը վկայում են կուսակցության մարտավարությունում և քաղաքականության մեջ նոր շրջադարձի գոյության մասին: Դժվար է, իհարկե, կանխատեսել, թե դեպի ուր կգնան դաշնակները նոր մարտավարության և նոր քաղաքական ուղեգծի որոնումներում: Պարզ է մի բան, որ ընթացիկ ընդհանուր իրադրության մեջ բոլոր առկա փաստերը նպաստում են կուսակցության լրիվ ֆաշիստական վերածնմանը, նրա քաղաքականության ու մարտավարության գիտակցական անցմանը ազգային ու միջազգային մասշտաբով կապիտալի շահերի ուղղակի սպասարկման ուղուն: ԽՍՀՄ-ի վրա համաշխարհային կապիտալի հարձակման ուժեղացումը, ֆաշիստական պրակտիկայի ու գաղափարախոսության վերականգնումը կապիտալիստական երկրներում, այս բոլորը ընթացիկ պահի ամենաբնորոշ երևույթներից են, որոնք ամրապնդում են Դաշնակցության կողմնորոշումը դեպի միջազգային հակահեղափոխություն: Երևույթների մյուս ոչ պակաս բնորոշ շարքը, որոնք Հայաստանի և Անդրկովկասի ընդհանուր հաջողությունների ֆոնի վրա մեր իրականության ստվերոտ կողմերի պատճառ-

ներն են, - դա մեր տնտեսության ապրանքայնացման ուժեղացումն է, գյուղի շերտավորումը և այդ հողի վրա կուլակության ու քաղաքային բուրժուազիայի աճը, գործազրկության ծավալումը մտավորականության շրջանում, ուժեղ հողասակավությունը, արոտների հարցի չկարգավորվածությունը և այլն: Հենց այս երևույթների առնչությամբ Անդրկովկասյան վերջին խորհրդակցությունը արձանագրեց հատկապես մտավորականության և բնակչությամբ բազմազգ սահմանակից վայրերում ազգային տրամադրությունների մնացուկների և փոխադարձ անվստահության առկայությունը: Այդ նույն երևույթները ստեղծում են որոշ նպաստավոր հող դաշնակների հակահեղափոխական աշխատանքի համար, ուժեղացնելով նրանց կապը գյուղական կուլակության, նոր քաղաքային բուրժուազիայի և նրանց շահերն արտահայտող քաղաքի ու գյուղի մտավորականության հետ: Բոլշևիզմի դեմ մղվող ուղիղ պայքարի պայմաններում Դաշնակցությունը բնականաբար նետվում է երկրի մեր նկատմամբ ամենաթշնամական տարրերի գիրկը, իր դրոշի շուրջը համախմբելով հենց այդ ամենաթշնամական տարրերին: Այդպիսի պայմաններում Դաշնակցությունը կանգնում է կուլակության ու նեպմանների մարտական կազմակերպություն դառնալու ուղու վրա՝ պայքարելու համար մեր կուսակցության և նրան հետևող քաղաքի ու գյուղի աշխատավոր զանգվածների դեմ:

Բոլոր նշված հանգամանքները մեր առջև դարձյալ դնում են Դաշնակցության դեմ մեր պայքարն ուժեղացնելու խնդիրը: Իսկ ընթացիկ պահի արտաքին ու ներքին իրադրության բարդությունը պահանջում է հատուկ հստակություն ու պարզություն այն մարտավարական գծի մշակման գործում, որը գործադրելու է <Կոմունիստական> կուսակցությունը այդ պայքարում: Ո՞րն է լինելու այն մարտավարական գիծը, որը պետք է կենսագործվի մեր կողմից տվյալ պահին:

Դաշնակցության դեմ մեր ամբողջ նախընթաց պայքարը բխել է երկու հիմնական նախադրյալներից:

Առաջին հիմնական նախադրյալ. Դա այն բանի գիտակցումն է, որ համաշխարհային քաղաքականության ընդհանուր կապակցության մեջ Դաշնակցությունը համաշխարհային իմպերիալիզմի զենքն է ԽՍՀՄ-ի և մեր կուսակցության դեմ մղվող պայքարում: Այստեղից դաշնակների դեմ մեր մղած անհաշտ քաղաքական պայքարի գիծը (Մայիսյան ապստամբություն, Նոյեմբերյան հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, դաշնակների հակահեղափոխական աշխատանքը խափանելու վարչական միջոցներ, գաղափարական պայքար հայկական ազգայնականության ամբողջ ժառանգության դեմ, ընդհանրապես, և դաշնակիզմի դեմ, մասնավորապես): Դաշնակցության կողմից մեզ սպառնացող վտանգի թերագնահատումից ելնող ամեն մի խոսակցություն ՀԿԿ Կենտկոմի կողմից հանդիպել է վճռական հակահարվածի: Հայաստանում դաշնակցական կազմակերպությունների ցանցի առկայությունը վիճարկելու յուրաքանչյուր փորձ, մեր երկրի մանրբուրժուազիայի և մտավորականության հետամնաց զանգվածների վրա այդ կուսակցության ազդեցության յուրաքանչյուր վիճարկում մերժվել է մեր կողմից: Ամբողջությամբ կուսակցությունը վճռական պայքար է մղել ամեն տեսակ շեղումների դեմ դեպի դաշնակների հետ «համաձայնություն» հաստատելու և «ընդհանուր լեզու» գտնելու կողմը ինչպես մինչև Մայիսյան ապստամբությունը, այնպես էլ դրանից հետո: Առանձին ընկերների կարծիքը այն մասին, իբրև թե «Հայաստանի Հեղկոմը ընկ. Կասյանի ղեկավարությամբ» երբևէ մղել է «դաշնակների ղեկավարների հետ ընդհանուր լեզու գտնելու քաղաքականություն», - փաստերին հակասող կարծիք է և երևան է հանում կամ պայքարի մեր ընդհանուր գծի անհասկացողություն, կամ շեղում է դեպի դաշնակների հետ քաղաքական համաձայնություն հաստատելու կողմը: (Տե՛ս Ս. Խանոյանի հոդվածը՝ «Մարտակոչ», 21 հունվարի 1926թ., թիվ 17): Այդ ընկերներին չէր խանգարի հիշել այնպիսի փաստեր, ինչպես Հայաստանի Հեղկոմի հրաժարվելը Դրոյի և ընկերների հետ գործակցությունից 1920թ. դեկտեմբերին, դաշնակների ձերբակալությունները 1921թ. փետրվարին, ՀԿԿ Կենտկոմի դիրքորոշումը Ռիգայի բանակցությունների և 1923թ. Վրաստանի դաշնակների կոմիտեի հայտարարության կապակցությամբ, ՀԿԿ Կենտկոմի ներկայացուցիչների վարքագիծը արտասահմանյան դաշնակների նկատմամբ և այլն:

Այստեղից հետագա մարտավարության հարցի կապակցությամբ մեր հիմնական եզրակացությունը դաշնակների նկատմամբ մեր ընդհանուր գիծը եղել է և այսուհետև մնում է ճակատային պայքարը:

Քրդական շարժման հարցի կապակցությամբ դաշնակների հետ մեր հնարավոր «կոնտակտի» մասին խոսակցությունները հաշվի չեն առնում քրդական շարժման կապը անգլիացիների և նրանց գործակալների իմպերիալիստական ոտնձգությունների հետ, հաշվի չեն առնում, որ մեր ամեն մի կապ այդ շարժման հետ, որ ուղղվում է Թուրքիայի ազգային-ազատագրական շարժման դեմ, հավասարազոր կլինի Արևելքում հակահեղափոխական շարժման ուղղակի օժանդակությանը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նույնպես մերժել մեր կողմից ձերբակալված դաշնակներին ազատելու և նրանց դրության ընդհանուր մեղմացման անհրաժեշտության վերաբերյալ խորհուրդները, որ մեզ հրամցնում են որոշ ընկերներ՝ որպես ղեկավար կենտրոնից այդ բանտարկություններից վախեցած դաշնակների հեռանալու հետագա ու-

ժեղացման միջոց: Այդպիսի զիջումը դաշնակները կդիտեին որպես մեր հրաժարում ճակատային քաղաքական հարվածներից և նահանջ՝ ի-րենց սպառնալիքների ազդեցության տակ, իրենց հաջողություն՝ կոմունիստներին ահաբեկելուց կամ սոսկ հնարավոր ահաբեկչական ելույթների մասին խոսակցություններից: Վերջնական արդյունքում դա կհանգեցնի ոչ թե կուսակցության քայքայման ուժեղացմանը, այլ, ընդհակառակը, նրա ամրապնդմանն ու համախմբմանը:

Մեր վարչա-քաղաքական պայքարի ընդհանուր դիրքերի պաշտպանության և ուժեղացման հետ մեկտեղ անհրաժեշտ է, անկասկած, ամրապնդել նաև մեր դիրքերը գաղափարական պայքարի ճակատում ընդդեմ ազգայնականության, ընդհանրապես, և դաշնակիզմի, մասնավորապես:

Այդ բնագավառում անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել ՀԿ(բ)Կ Կենտկոմի վերջին պլենումի ցուցումներով. «Գյուղի շերտավորման աճի, բնակչության բոլոր խավերի ակտիվացման և դրա հետ կապված ազգայնական կուսակցությունների աշխատանքի ու նրանց գաղափարախոսության մասնակի ակտիվացման, ինչպես նաև հեղափոխության ներկա արտաքին ու ներքին իրադրության մեջ.

Կոմունիստական կուսակցության ընդհանուր քաղաքականության ուսումնասիրության կապակցությամբ մի անգամ ևս կուսակցության ուշադրությունը հրավիրել լենինիզմի ուսումնասիրությունը խորացնելու անհրաժեշտության վրա: Պետք է նաև կուսակցական միտքը կենտրոնացնել Անդրկովկասի և Հայաստանի կոնկրետ իրական երևույթների մարքսիստական ուսումնասիրության վրա՝ ի շահ ազգայնամոլության դեմ գաղափարական պայքարի խորացման, մանրբուրժուական, հակաբոլշևիկյան թեքումների կանխման և գաղափարախոսական ճակատում ընդհանուր կուսակցական ղեկավարման ուժեղացման»:

Գաղափարական ճակատում այդ պայքարի ուժեղացումը պետք է իրականացնել, մասնավորապես, մեր դպրոցներում ոչ միայն լենինիզմի տեսանկյունով հասարակագիտական առարկաների դասավանդման համապատասխան դրվածքով, այլև համալսարանում հայագիտական ու արևելագիտական առարկաների դասավանդման մարքսիստական ուսումնասիրության ամրապնդումով: Հենց այս նպատակով անհրաժեշտ է համալսարանում ուժեղացնել պատմության, գրականության և Անդրկովկասի ժողովուրդների կենդանի լեզուների դասավանդումը, Առաջավոր Ասիայի մշակույթների ուսումնասիրությունը անցյալի նյութական մշակույթների պատմության և կենդանի այժմեականության հետազոտման հիման վրա: Մասնավորապես անհրաժեշտ է կարգավորել Կովկասի և Առաջավոր Ասիայի ժողովուրդների հասարակական զարգացման պատմության ուսումնասիրությունը և դասավանդումը, հատուկ ուշադրություն դարձնելով այդ երկրների հասարակական-հեղափոխական շարժումների պատմությանը:

Դաշնակցության դեմ մեր պայքարի *երկրորդ հիմնական նախադրյալը.* Դա գիտակցումն է այն բանի, որ իր գերակշիռ սոցիալական կազմով և քաղաքականության ընդհանուր դասակարգային բնույթով Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն է: Այստեղից այդ կուսակցությանը հետևող զանգվածների նվաճման անհրաժեշտությունը: Այստեղից ոչ միայն ճակատային հարվածների տակտիկայի գործադրման, այլև այդ կուսակցության նկատմամբ շրջանցիկ, թիկունքային մարտավարության, կուսակցությունը ներսից կազմալուծելու մարտավարության անհրաժեշտությունը: Նման մարտավարությունը մեր ձեռքին պետք է դառնա դաշնակների դեմ մղվող պայքարի ավելի գործուն զենք, քան եղել է մինչև այժմ:

1924թ.*** անցկացված Դաշնակցության «վերացման» կամպանիան մեզ տվել է բավական շոշափելի արդյունքներ, որքանով այդ կամպանիայի ընթացքում լոյալ դաշնակների զգալի մասը, ովքեր ավել կամ պակաս ազնվությամբ են խզել կապերը կուսակցության հետ, դուրս է եկել նրա հիմնական կենտրոնների ազդեցությունից և վճռական քայլ կատարել մեր կողմը: Այնուամենայնիվ մինչև այժմ մեզ չի հաջողվել կարգավորել աշխատանքը «լիկվիդատորների» շրջանում՝ կուսակցությունից նրանց հեռացումն ամրապնդելու, խորհրդային իշխանության և Կոմկուսի հետ նրանց կապերի կազմակերպական ու գաղափարական ամրապնդման նպատակով: Այդ խնդրի լուծման շահերի տեսակետից, ինչպես նաև Դաշնակցությունից շարքային անդամների հետագա հեռացման ընթացքն ուժեղացնելու նպատակով, անդամներ, որոնք այս կամ այն չափով կապեր են պահպանել կամ պահպանում են նրա հետ, անհրաժեշտ է մշակել մի շարք պրակտիկ քայլեր լիկվիդատորների շրջանում աշխատանք տանելու ուղղությամբ՝ նրանց գաղափարապես վերամշակելու, մեր կուսակցության վերահսկողության տակ տարբեր մարմիններում պրակտիկ աշխատանքի ներգրավելու, ինչպես նաև նախկին դաշնակներից սոցիալապես ու քաղաքականապես մեզ ամենամոտ տարրերին մասամբ կուսակցության մեջ ընդունելու միջոցով:

Սակայն Դաշնակցության կազմալուծման աշխատանքը հարկավոր է անցկացնել և մյուս ծայրից՝ աջից կուսակցության կազմալուծման մարտավարություն բանեցնելու միջոցով: Կուսակցության ղեկավար կենտ-

*** Պետք է լինի 1923թ.:

ռոնից նրա անդամների հեռացումը զգալիորեն պայմանավորված է նրանով, որ այդ կենտրոնը կտրվել է իր անդամներից և ամուր կողմնորոշվել դեպի կապիտալիստական բուրժուազիայի քաղաքականությունն ու գաղափարախոսությունը: Կուսակցության այդպիսի կողմնորոշման մերկացումը, նրա քաղաքականության տեղաշարժը դեպի կուսակցության կապիտալիստական, ֆաշիստական վերածնումը այդ տեսակետից միջոց է, որն ի զորու է արագացնել կուսակցությունից նրա անդամների հեռացումը և դաշնակների, որպես մանրբուրժուական կուսակցության, լրիվ կազմալուծումը: Այդ իմաստով կուսակցության քաղաքականության սկսված ֆաշիստական վերասերումը այնպիսի երևույթ է, որը պետք է ամեն կերպ օգտագործենք Դաշնակցության դեմ մեր ընթացիկ պայքարի գործընթացում: Դեռ ավելին, Դաշնակցության ընդհանուր կազմալուծումը արագացնելու շահերի տեսակետից պետք է ջանքեր գործադրվեն կուսակցության ֆաշիստական թևի գաղափարական ու կազմակերպական ձևավորման ուղղությամբ, խորացնելու գաղափարական ու կազմակերպական տարաձայնությունները ֆաշիստների ու կուսակցության ղեկավար ցենտրիստական, ռեֆորմիստական կամ «դեմոկրատական» կենտրոնի միջև: Կուսակցության աջ թևում ներկուսակցական պայքարը ֆաշիստների ու ցենտրիստների միջև կուժեղացնի պայքարը նրա ձախ թևում «լիկվիդատորների» ու ցենտրիստների միջև, վերջին հաշվով թուլացնելով կուսակցության ղեկավար կենտրոնը, նպաստելով կուսակցության ընդհանուր կազմալուծմանը: Եվ, ընդհակառակը, դրան իր հերթին կնպաստի ղեկավար կենտրոնից հեռանալը ձախ թևում, լիկվիդատորների «դավաճանությունը», լիկվիդատորությունը: Հենց ձախերի ելույթները և կուսակցությանն սպառնացող համընդհանուր փլուզումն են կուսակցության նյութական կարիքի մեջ գտնվող օրինապաշտ «մարտիկներին» նետել ֆաշիստական կազմակերպությունների, քաղաքական ահաբեկչության գիրկը: Դա նպատակ ունի ընկճել ոչ այնքան մեզ՝ կոմունիստներիս, որքան իրենց՝ դաշնակներին՝ «դավաճաններին»:

Կուսակցության աջ թևում պայքարի սոցիալական նախադրյալը անցյալում հանդիսացել է և այժմ էլ հանդիսանում է կուսակցության մանրբուրժուական բնույթը և, մասնավորապես, շահերի բաժանումը քաղաքի ու գյուղական մանր բուրժուազիայի միջև: Ընդհարումը կուսակցության «խմբապետական» ու «մտավորական», «ազգայնական» ու «սոցիալիստական» խմբերի միջև անցյալում եղել է (պայքարը միհրանականների ու կենտկոմականների, Անդրանիկի ու կուսակցության «թուրքահայ» և «ռուսահայ» ներկայացուցիչների միջև) և այժմ է քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի շահերի ընդհարման ուղիղ արտացոլումը մանրբուրժուական ազգայնականության ու նրա

կուսակցության ճամբարում: Նման նրան, ինչպես պայքարը «ձախերի» ու «աջերի», «անջատականների», «դեկլարատորների», «լիկվիդատորների», - մի կողմից, և դաշնակ-կուսակցականների, - մյուս կողմից, միջև երևան հանեց ընդհարումը հիմնական մանրբուրժուական կենտրոնի և բանվոր աշխատավորական զանգվածների տրամադրությունն արտահայտող տարրերի միջև:

Աջից կուսակցությունը քայքայելու այդ մարտավարության ճիշտ կիրառման դեպքում մենք կկարողանայինք վնասազերծել մեզ համար կուսակցության մարտական, ահաբեկչական ուժերը և այդ ուժերն ուղղել դեպի կուսակցության ղեկավար կենտրոն: Քայքայման այդ մարտավարությունը մենք պետք է մշակենք և կենսագործենք առավել ևս այժմ, երբ վերջին ձերբակալությունների առաջացրած որոշ խառնաշփոթությունից կուսակցության հիմնական միջնամասը կանգնում է խորհրդային իշխանության նկատմամբ «լոյալ ընդդիմության» մարտավարությունից հրաժարվելու ուղղությամբ և խոսում է մեր դեմ ահաբեկչական միջոցառումներ գործադրելու անհրաժեշտության մասին: Անհրաժեշտության դեպքում դաշնակների այդ հրավերին մենք կպատասխանենք համապատասխան միջոցներով: Իսկ դրա համար պետք է ոչ միայն բռնաճնշումների կիրառում երկրի ներսում, այլև հենց Դաշնակցության ներսում պայքարի միջոցների համապատասխան նախապատրաստում ինչպես Հայաստանում ու Անդրկովկասում, այնպես էլ արտասահմանում:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.108-116: Թարգմ. ռուս.:

201. <Աթաջանյան> Գերասիմի մարտահրավերը Դաշնակցության Բյուրոյին*

18 սեպտեմբերի 1926թ.

Շատերին հայտնի է, որ հունիս 26-ին «Ապագա» թերթի մեջ հայտարարել եմ Դաշնակցությունից հեռանալու մասին: «Երևան» թերթը, արտատպելով իմ հայտարարությունը, մի քանի անգամ մարտակոչի կծու ակնարկներ արեց ՀՅԴ Բյուրոյի դեմ և հրավիրեց արդարանալ իմ մեղադրանքներից: Բայց մինչև հիմա Դաշնակցության Բյուրոն և թերթերը ոչ մի պատասխան չեն տվել և շարունակում են լռել:

* *Նամակը բերվում է կրճատումներով:*

...Իմ հայտարարության մեջ Դաշնակցությունից հեռանալու բոլոր պատճառները չեմ ասել: Բյուրոն պետք է զգա և համոզվի, որ եթե Զանգեզուրում այսօր Դաշնակցության քիչ-շատ կողմնակիցներ կան, դրա պատճառն այն է, որ զանգեզուրցի մեր շինականները դեռ ամբողջովին տեղյակ չեն Դաշնակցության պարագլուխների անցյալ, թե ներկա սխալ գործունեության: Այսօր ինձ հաջողվել է շատ բան իմանալ, որի վրայից անկարող եմ լռությամբ անցնել: Բոլորը թող իմանան, որ այլևս չէի կարող մնալ խաբեբայությամբ և անարդարությամբ սնվող կուսակցության մեջ:

... Ինձ համար նշանակություն չունեն Դաշնակցության և կոմունիստների պայքարի զուտ կուսակցական շահերը: Ես չեմ կարող չբողոքել անարդարության դեմ: Ես ծառայել եմ և ծառայում եմ ժողովրդին, գիտակցելով, որ նրա համար լավ բան եմ անում: Ինձ համար ամենից բարձր է քայքայված հայ ժողովրդի գոյությունը և զարգացումը:

Այստեղ տեսնում եմ գաղութահայության մեծ մասի դժգոհությունը և ատելությունը Դաշնակցության հանդեպ: Դաշնակցությունը կուսակցությունը փեշակի (արհեստի) է վերածել: Ներկայիս չեմ տեսնում, որ կուսակցությունը զոհվի ժողովրդի համար, այլ ժողովուրդն է, որ զոհվում է Դաշնակցության:

Ահա այսքանից հետո այն մարդիկ, որոնք կարծում էին, թե իմ կուսակցությունից հեռանալու միակ նպատակը 5-10 մարդ ազատելն է**, սխալվում են. իմ նպատակն այն է, որ Հայաստանի ժողովուրդը ապրի խաղաղ, հանգիստ:

Ես այն Գերասիմն եմ, որ 24 ժամվա մեջ Ղափանի ուժերը շարժման մեջ էի դնում նրա հանգիստը խանգարողի դեմ: Իսկ այժմ նրա հանգիստը խանգարող չեմ տեսնում, բացի Դաշնակցությունից, իր քաղաքականությամբ: Այս վերջինս թող լավ իմանա և զգույշ վարվի Զանգեզուրի նկատմամբ: Հակառակ պարագային նույն ուժերը պիտի գործածեմ իրենց դեմ:

Ահա ասպարեզը բաց է: Բյուրոն կամ ուրիշները, եթե խոսք ունեն, թող ասեն:

Ղափանցի Գերասիմ

Նոր աշխարհ (Նյու Յորք), 18 սեպտեմբերի 1926թ.:

** *Խոսքը Հայաստանում (Զանգեզուրում) բանտարկված դաշնակցականների ազատման մասին է՝ կապված Դաշնակցությունից նամակագրի հեռանալու պայմանի հետ:*

202. ՀԿԿ Կենտկոմի քարտուղարին

Պատճեն՝ ժողկոմխորհի նախագահին (անչամբ)

22 հոկտեմբերի 1926թ.

Թիվ 9172/գ

Մի ամիս առաջ Երևանում մեր կողմից հայտնաբերվեց Փարիզից վերադարձած Հակոբ Գասպարի Քոչարյանը: Նա հայտնի դաշնակցական է, եղել է Թիֆլիսում նախկին Ազգային խորհրդի քարտուղար, Դաշնակցական կառավարության օրոք Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչության քարտուղար, Դաշկառավարության Փարիզի Ազգային պատվիրակության քարտուղար և Դաշնակցության 10-րդ համագումարի քարտուղար:

ՀՊՔՎ-ն հետաքրքրվեց այն հարցով, թե ինչպես է նա ստացել վիզա Հայաստան մեկնելու համար, որից պարզվեց, որ Քոչարյանի Հայաստան մեկնելու խնդիրը համաձայնեցված է Անդրերկրկոմի և ԱնդրՊՔՎ-ի կողմից: Բացի դրանից, Անդրերկրկոմը ստացել է ՀԿԿ Կենտկոմից հեռագիր թիվ 16 9/4-26թ. հետևյալ բովանդակությամբ. «ՀԿԿ Կենտկոմը Քոչարյանի և Դեմոնի Հայաստան մեկնելուն ընդդեմ չէ»:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ թե Քոչարյանի և թե Դեմոնի Հայաստան մեկնելու իսկական նպատակը և նրանց գործունեությունը Փարիզում վերջերս մեզ համար պարզ չէ, ՀայՊՔՎ-ն խնդրում է նման դեպքերում մինչև Ձեր համաձայնություն տալը այս կամ այն անձնավորության Հայաստան մեկնելու մասին, հարցնել նաև ՀայՊՔՎ-ի կարծիքը:

Ի միջի այլոց հայտնում ենք, որ Քոչարյանից ստացված տեղեկություններից պարզվում է, որ արտասահմանյան Դաշբյուրոյի անդամները ներկայումս հետևյալներն են՝ Վրացյան, Ջամալյան, Ռուբեն փաշա, Շահան Նաթալի և Շավարշ-Միսակ:

ՀայՊՔՎ նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Գործառնական պետ՝ Վարդանյան

Գաղտնի բաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.53, թ.29:

203. Սիրելի Սոնիչկա

23 նոյեմբերի 1926թ.

Փարիզ

Ստացել եմ քո հոկտեմբերի 21-ին գրած նամակդ: Անշուշտ դու իմ գրած նամակս կլինես ստացած, որ գրած եմ ամսույս 7-ին, պարզած եմ այստեղի վիճակը կամ ձեր գալուն ինչքան ծախսեր է նստում և այլն: Ոչ մի վայրկյան ծախսի մասին չմտածեք և խորհրդակցեք: Նախ երբեք այդտեղ բարեկամ-չարեկամի մի ասիր, որ գրած, որ պետք է գնանք Փարիզ: Երկրորդ, քո դիմումներիդ սպասիր, որ տված ես Երևան, խորհրդային իշխանության: Եթե թույլ կտան գալու, իսկույն կհայտնես, ես կկարգադրեմ, թե ինչ պետք է անես: Ես չեմ կարծում խ. իշխանությունը իրավունք տա ձեր գալուն, որովհետև ուրիշ հանգամանք կա: Այն է՝ երեկ տեսել եմ ընկ. Փիրումյանին, որ նույնը վերադարձել է Հայաստանից: Իմ խոսակցության նյութը նախ ձերբակալվածների մասին է, որ խոսք է տված այդտեղ գալուն պես ազատել տա, որի մասին գրել էի ձեզ: Սակայն բանից պարզվեց, որ ձերբակալվածներից Սողոմոնը իմ գրած նամակիս չեն հավատացել, ստորագրություն չեն տալ, որպեսզի ազատվեն: Բայց նորից Մոսկվայում խորհրդակցություն է արված և որոշած ազատեն: Նրա ասելով հիմա պետք է ազատված լինեն, և ես նորից մի նամակ եմ գրած բանտը, այս օրերս պիտի ստանան և այդտեղից դուք էլ հայտնեցեք Սողոմոնին՝ ինչպես գրած եմ, այնպես էլ անեն: Իսկ ինչ վերաբերվում է այն վատ մարդկանց, որ այդտեղ, մեր շրջանում անկարգություններ են արած, ժողովրդին տանջած, կառավարության կողմից կոմիսիա է նշանակված, որ պետք է քննեն նրանց անցյալը, թե ներկա գործունեությունը և պետք է հեռացնեն պաշտոնից: Այս որ գրած եմ, կարիք չկա տարածելու: Իմ անցյալ բոլոր մեղքերին <անընթ. բառ.> խորհրդային իշխանության կողմից, որ այսօր գրավոր պաշտոնապես հայտնեց ինձ, որ թերթի միջոցով պիտի հայտարարվի, որի մեջ գրված էր՝ երբ ուզենաք, կարող եք վերադառնալ Հայաստան կամ Անդրկովկաս: Սակայն այս վերադառնալու խնդրի համար էլի հարա-հրոց չանես, հենց այս վաթանս չեմ գալիս: Միայն գրում եմ քեզ, որ դու և Ասյան, և մեր մոտիկ բարեկամները իմանաք հետևյալը՝ Կառավարությունը կարգադրած է Փիրումյանին, որ ինձ համոզացնի՝ ես վերադառնամ երկիր, որոշ հանձնարարությամբ կառավարության կողմից, որպես կառավարության մարդ:

Նորից եմ գրում, որ հարա-հրոցի կարիք չկա այդտեղ տարածելու կամ ինձ վրա վարդապետի քարոզ գրելու, ես երեխա չեմ և

կառավարությունը կատակ չի անում ինձ հետ խոսելու կամ այլ մտքով չեն <անընթ. բառ> նոր ենք կարողանում իրար հասկանալ թե կառավարությունը, և թե ես <անընթ. բառ> ժամանակին որ դեմ ենք այդ պետք է բացատրել նրանով, որ մասամբ ես էի մեղավոր եղած, մասամբ էլ կառավարության մարդիկ, բայց երկու կողմերի նպատակը ժողովրդի շահերը պաշտպանելու նպաստել եղած <միայն> թե տարբեր զգացմունքներով: Հիմա ենք իրար հասկանում և նոր ենք զգում, թե անցյալ, թե եղած սխալը: Գոնե այսուհետև ձեռք-ձեռքի տված իրար հետ անկեղծորեն աշխատենք և պաշտպանենք մեր ժողովրդին:

Ահա այսպես խնդիրք է դրված իմ առաջ, սիրելիս, և նորից մերժած եմ, որ պետք է մնամ այստեղ և մտածեմ, շատ մտածեմ: Ես <անընթ. բառ> որ նորից դու պետք է տաքանաս, որովհետև քո միակ նպատակը երեխեքը վերցնես, դուրս գաս այդ երկրից ու գաս ինձ մոտ կամ թե չէ ես չհիշեմ այդ երկիրը: Ես քո գալուն կողմնակից եմ, բայց այդ երկրի ժողովուրդը չեմ կարող մոռանալ, այդ հիվանդ կողմը ես ունեմ: Հիմա ինչպե՞ս անենք, բայց նորից եմ գրում, որ մի կարծիր գալու միտք ունեմ, որ գրում եմ, որ իմանաք: Եթե այդտեղի կառավարությունը թույլ տա ձեզ գալու, ես բախտավոր կզգամ ինձ: Ինչո՞ւ: Որովհետև այստեղի կյանքի հետ արդեն ծանոթացել եմ և շատ եմ սիրում այս կյանքը: Երանի թե երեխեքս այստեղ լինեին, այս երկու տարին գոնե մի բան սովորեին: Ինձ հիմա գրիր տեսնեմ ինչ պիտի դրկես և ինչ պատասխան է տալիս ձեր դիմումին: Նա, Սոնիչկա, այդ երկիրը արդեն Գրիգոր Վարդանյանը բերավ, մինչև մի ամիս կտեսնի բժիշկ Խուրշուդին, Գարեգինը ինչ արավ իրերը, տված է, թե ոչ նույնպես 30ր. տվավ, թե ոչ: Եթե կառավարությունը թույլտվություն թույլ չի տա ձեզ գալու, գրիր մի 100ր. ևս ուղարկեմ:

Ես առողջ եմ: Դուք ուրախ կացեք, միք մտածիլ և շատ մի չարչարվիլ, խանումի պես պահիր քեզ, շատ ես չարչարված:

Բարև և համբույր բոլորիդ:

Գերասիմ[4]

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.26բ, թ.31: Գաղտընթերցված նամակի վավերացված պատճեն: Մեքենագիր:

204. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշումը

24 փետրվարի 1927թ.

Լսեցին. Կենտկոմի հանձնաժողովի որոշումների հաստատման մասին՝ հակակրոնական և հոգևորականության հարցերի կապակցությամբ:

Որոշեցին. Ընդունել հանձնաժողովի հետևյալ առաջարկությունները.

...4. Մամուլի էջերում մերկացնել դաշնակցականների կապը հոգևորականության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև նշել եկեղեցական համայնքների գրանցման հողի վրա հակախորհրդային տարրերի առանձին ելույթները:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.7, գ.32, թ.24: Թարգմ. ռուս.:

205. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը դաշնակիզմի շուրջը գրքույկների հրատարակության անհրաժեշտության մասին

13 հունվարի 1928թ.

1. Հանձնարարել ընկ. Ա. Կարինյանին կազմել գրքույկ դաշնակիզմի, սպեցիֆիզմի և մյուս հակակոմունիստական կուսակցությունների մասին, թեմաները նախապես համաձայնեցնելով քարտուղարության հետ:

2. Այդ նպատակով ընկ. Ար. Կարինյանին տրամադրել եռամսյա արձակուրդ5:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.15, թ.11: Թարգմ. ռուս.:

206. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումը Պետքաղվարչության հարցերի մասին

24 հունվարի 1928թ.

Թույլատրել սոցիալական պաշտպանության բարձրագույն միջոցը՝ գնդակահարությունը հոգևորական Տեր-Հարությունյանի ֆիզիկական մարդասպանի և Դաշնակցություն կուսակցության ընդհատակյա կազմակերպության անդամներ Կոլոտ Հախվերդյանի և Եգոր Մնացականյանի նկատմամբ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.31, թ.4: Թարգմ. ռուս.:

207. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության բանաձևը ՀՕԿ-ի ֆրակցիայի վերակազմման առթիվ

24 փետրվարի 1928թ.

1. Նշել, որ ՀՕԿ-ի կազմակերպությունների գործունեությունը հարուցել է հակախորհրդային կուսակցությունների չարամիտ քարոզչությունը, միաժամանակ նրանց շուրջը համախմբել աշխատավորական զանգվածներին, նախապատրաստելով նրանց մուտքը Կոմունիստական կուսակցության մեջ:

2. ՀՕԿ-ի հերթական խնդիրը համարել քարոզչական և կազմակերպական աշխատանքի շարունակումը, նպատակ ունենալով աշխատավորական զանգվածներին կտրել դաշնակներից ու մյուս հակախորհրդային խմբերից, ինչպես նաև ազգայնական բարեգործական ու մշակութային կազմակերպություններից:

3. Ելնելով այդ դրույթներից միանգամայն նպատակահարմար համարել ՀՕԿ-ի վերանվանումը «Խորհրդային Հայաստանի բարեկամների ընկերության»: Սակայն նկատի ունենալով, որ նույնիսկ այժմ ՀՕԿ-ի գոյություն ունեցող կազմակերպությունները դաշնակցականները ներկայացնում են որպես բոլշևիկյան կազմակերպություններ, հնարավոր համարել ներկա անվանման ու կարգավիճակի պահպանումը՝ մինչև արտասահմանում աշխատող ընկերների հանգամանալի զեկուցումը:

4. ՀՕԿ-ի արտասահմանյան բոլոր կազմակերպությունների աշխատանքի մասին բավարար ու մանրամասն տեղեկատվության, նրանց աշխատանքը ղեկավարելու և նշված խնդիրները կատարելու նպատակով անհրաժեշտ համարել ՀՕԿ-ի Երևանյան կենտրոնի պահպանումը:

5. Մի անգամ ևս ընդգծել, որ արտասահմանի հայ բանվորության ու աշխատավորության շրջանում ամբողջ կուսակցական աշխատանքը մղվելու է Կոմինտերնի համապատասխան սեկցիաների միջոցով:

6. Կրկին անհրաժեշտ գտնել անկուսակցական թերթի ստեղծումը Ամերիկայում:

7. Աննպատակահարմար համարել ՀՕԿ-ի պարբերական հրատարակության ստեղծումը Երևանում:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.15, թ.37: Թարգմ. ռուս.:

208. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի (ԿՎՀ) որոշումը

28 փետրվարի 1928թ.

Լսեցին. Զեկուցում դաշնակցականների և մենշևիկների գործունեության մասին: (Զեկ.Մ.-Հովսեփյան):

Որոշեցին. Հանձնարարել ըստ 5 կետի ընտրված հանձնաժողովին, կայացած մտքերի փոխանակության հիման վրա, մշակել բանաձև և մտցնել նախագահության հաստատմանը*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.31, թ.15: Թարգմ. ռուս.:

** Տե՛ս 209 փաստաթուղթը:*

209. Բանաձև դաշնակցականների և մենշևիկների գործունեության մասին ընկ. Մելիք-Հովսեփյանի զեկուցման առթիվ

<28 փետրվարի 1928թ.>*

I.Ընդհանուր առմամբ հավանություն տալ Հայաստանի Պետքաղ-

** Ժամանակը դրվում է ըստ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի 1928թ. փետրվարի 28-ի որոշման (տե՛ս փաստ. 208):*

վարչության գործունեությանը և Դաշնակցություն կուսակցության գծով նրա անցկացվող գործողությունը համարել բավարար:

II. Անհրաժեշտ համարել.

1. Մոտ ապագայում մեկուսացնել «Երիտասարդ մենշևիկների» կազմակերպության ակտիվ գործիչներին և սրել գաղափարական պայքարը այդ կազմակերպության դեմ:

2. Ընթացիկ տարում քաղաքական և ուսումնական զտման միջոցով համալսարանից հեռացնել «Երիտասարդ մենշևիկների» և Դաշնակցություն կուսակցության անդամներին:

3. Ուժեղացնել աշխատանքը Թավրիզում, ձեռնարկելով մի շարք միջոցառումներ Դաշնակցություն կուսակցության կազմալուծման ուղղությամբ: Հատկապես ուժեղացնել ՀՕԿ-ի աշխատանքը, ընտրելով տեղում կամ ուղարկելով այնտեղ ընդունակ աշխատողներ՝ ՀՕԿ-ի ղեկավար կենտրոնի համար:

4. Հեռացնել աշխատանքից արտաքսված դաշնակցականների կանանց և մերձավոր հարազատներին՝ ինչպես ուսումնական հաստատություններում, այնպես էլ խորհրդային հիմնարկություններում, ովքեր կապեր ունեն Դաշնակցություն կուսակցության հետ և տրամադրված են խորհրդային իշխանության դեմ:

III. Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ համարել նաև.

1. Կոմերիտական բջիջների և պիոներական պահակակետերի (Ֆորպոստ) աշխատանքի ուժեղացումը դպրոցներում և սովորողների ներգրավումը հասարակական ու քաղաքական աշխատանքում:

2. Ուշադրության սրումը համալսարանում գաղափարական աշխատանքի և կուսակցական ու կոմերիտական բջիջների գործունեության վրա:

3. Հանձնարարել ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարոզչության բաժնին մեկամսյա ժամկետում ներկայացնել պլան կազմալուծված դաշնակցականների աշխատանքի գծով:

4. Ուժեղացնել մեր շինարարության, մասնավորապես տնտեսական հարցերի լուսաբանումը մամուլում՝ Հայաստանում և արտասահմանում ի հակակշիռ դաշնակցականների մամուլի սադրիչ հարձակումների:

IV. Առաջիկա ամսում բանվորների, ծառայողների ու գյուղացիության լայն ժողովներում կազմակերպել մի շարք դասախոսություններ ու զեկուցումներ ըստ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարոզչության բաժնի նախապես հատուկ մշակված պլանի:

Դաշնակցություն կուսակցության ընթացիկ քաղաքականության քն-

նադատությունը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ համարել.

1. Մինչև դասախոսություններ ու զեկուցումներ կազմակերպելը հրապարակել դաշկազմակերպության վերջին ջախջախման ժամանակ Դաշնակցության արխիվից բռնագրավված բնորոշ փաստաթղթեր և Դաշնակցության Կենտկոմի անդամների հետաքննության տվյալներ: Այդ փաստաթղթերը ստուգելու և ընտրելու համար կազմել հանձնաժողով հատկյալ կազմով՝ ընկ. ընկ. Մռավյան, Չուբար և Մելիք-Հովսեփյան, տալով նրան մեկշաբաթյա ժամկետ:

2. Խորհրդային անկուսակցական մտավորականության ներգրավումը մտքերի փոխանակությանը:

3. Բանաձևերի ընդունում բանվորների և անկուսակցական մտավորականության առանձին ժողովներում:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.31, թ.16-17: Թարգմ. ռուս.:

210. Հայաստանի Պետքաղվարչության նիստի արձանագրությունը նախագահությամբ ընկ. Կաուլի և մասնակցությամբ ընկ. ընկ. Մ. Օսիպովի, Վարդանովի, Փանյան և Ծատուրովի

30 մայիսի 1928թ.

Լսեցին. - Զեկուցումներ հայ լուսավորչական հոգևորականության գործունեության մասին: Զեկուցողներ՝ Ծատուրով և Փանյան:

Որոշեցին. - 1. Հայ լուսավորչական հոգևորականության գծով աշխատանքի հիմնական խնդիրն է ինչ գնով էլ լինի մեր ազդեցության տակ վերցնել Գերագույն Հոգևոր Խորհրդի (ԳՀԽ) կազմը՝ էջմիածինը և մեկընդմիշտ Դաշնակցություն կուսակցության ազդեցությունից հանել հայ լուսավորչական հոգևորականության հետևից գնացող կրոնական զանգվածներին՝ ինչպես այստեղ ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում: Միաժամանակ անհրաժեշտ է հայ լուսավորչական եկեղեցին կտրել արևմտաեվրոպական երկրների ազդեցությունից (դեպի անգլիական եկեղեցին կողմնորոշման հարցը և ԳՀԽ-ի մտադրությունը կաթոլիկության ունիան տարածել հայկական եկեղեցու վրա): Այդ զանգվածներին կապել խորհրդային իշխանության հետ: Դրան հասնելու համար անհրաժեշտ է.

1. Նկատի ունենալ մեր բոլոր ուժերը, օգտագործել բուն ԳՀԽ-ի ներսում գոյություն ունեցող բոլոր տարաձայնությունները: Օգտագործել

ԳՀԽ-ի անդամ հին եկեղեցու, ինչպես նաև հայկական եկեղեցու նորոգման կողմնակիցներին: Աշխատանքը տանել այնպես, որ հնարավոր լինի նվաճել ԳՀԽ-ը՝ եթե ոչ ամբողջությամբ, ապա մեծամասնությանը: ԳՀԽ-ի կազմում ընդգրկել խորհրդային կողմնորոշումով հին եկեղեցու կողմնակից աշխարհականներ: ԳՀԽ-ի գործունեությունը ամբողջությամբ տանել մեզ համար նպաստավոր ուղղությամբ, հրատարակել կոնդակներ, հայտարարություն քաղաքական աշխատանքը դադարեցնելու, բացահայտ հակախորհրդային արքեպիսկոպոսներին հեռացնելու մասին և այլն: Եվ այդ ուղիներով կրոնական զանգվածներին կտրել Դաշնակցությունից, հատկապես գաղթօջախներում:

2. ԳՀԽ-ի և թեմերի կառավարման կազմից մեկուսացնել ավելի հետադեմ հոգևորականներին, ովքեր կողմնորոշվում են դեպի Դաշնակցությունը և արևմտաեվրոպական երկրները:

3. Նույնպիսի աշխատանք տանել ԽՍՀՄ խոշոր թեմերի վարչություններում, խնդիր ունենալով մեծամասնության նվաճումը և նրանց աշխատանքը հօգուտ մեզ:

4. Նկատի ունենալով, որ նոր-եկեղեցականները ընդդիմություն են ԳՀԽ-ի նկատմամբ և մեր կողմից օգտագործվում են որպես զենք-սպառնալիք, ուղղված ԳՀԽ-ի ներկա կազմի դեմ, նպատակահարմար ենք համարում ԳՀԽ-ի վերջնական նվաճումը:

ա). Նոր եկեղեցին թողնել այն վիճակում, որում նա գոյություն ունի այժմ, բայց նրան դնել որոշակի սահմանների մեջ և դուրս չթողնել մեր ազդեցությունից ու ղեկավարությունից:

բ). Աշխատանքը տանել այնպես, որ նոր եկեղեցին չհեռանա հայ լուսավորչական եկեղեցուց (որպես առանձնացած, որպես աղանդ հայ եկեղեցում և այլն), իսկ այսուհետև մնա որպես խորհրդային իշխանության կողմնորոշում և հայ եկեղեցու նորոգում պահանջող առանձին խումբ <հայ լուսավորչական եկեղեցու կազմում>*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.31, թ.36 և հակ.: Թարգմ. ռուս.:

** Փաստաթղթի վերին մասում կտրված տողի բառերը վերականգնվել են ըստ բովանդակության:*

211. ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում գաղափարական ճակատի խնդիրների մասին Ս. Կասյանի զեկուցումից

9-12 նոյեմբերի 1928թ.

Մենք համոզված ենք, իհարկե, որ դաշնակներն ու դաշնակիզմը ճակատագրորեն պիտի վերանան աշխարհիս երեսից: Բայց դա դեռ չի նշանակում, թե մենք պետք է ձեռքներս ծալենք ու հանգիստ սպասենք այդ երջանիկ օրվան: Կենդանի կյանքի, շնչող իրականության հանդեպ մենք չենք կարող սահմանափակվել դետերմինիստական հանգստով, պետք է մեկ հարվածին երկու հարված, այդ պատճառով էլ մենք պետք է անենք հետևյալը.

1. Ուշի ուշով հետևել դաշնակների ամեն մի քայլին և անխնայորեն հարվածել դրանց:

2. Բաց անել անխնա իդեոլոգիական պայքար դաշնակների սոցիոլոգիական և քաղաքական աշխարհայեցողության անկարողությունն ապացուցելու համար:

3. Բաց չթողնել ոչ մի առիթ՝ լայն զանգվածների առջև մերկացնելու նրանց թշնամական գործը բանվորության և գյուղացիության հանդեպ և նրանց մտայնության դասակարգային հակահեղափոխական, հակաբանվորական և հակաժողովրդական էությունը:

4. Չթողնել, որ մարի բանվորա-գյուղացիական զանգվածների մեջ այն ատելության թույնը, որ ավանդ է մնացել դաշնակների անփառունակ իշխանության օրից:

5. Չխնայել պետության և ոչ մի կոպեկը՝ հեղեղելու մեր գրական շուկան դաշնակների ու դաշնակիզմի վերաբերյալ հանրամատչելի և գիտական գրվածքներով:

Անհրաժեշտ է հասկանալ մեր հայ սմենովեխականության սոցիալական ծագումն ու դրա իդեական բովանդակությունը և ապա որոշել մեր դիրքն ու անելիքները դրա նկատմամբ...

Ռուսական օրիենտացիա՝ ահա հատկապես սմենովեխականության հիմնական մոտիվը:

Եթե նկատի ունենալու լինենք այդ օրիենտացիայի հիմնավորման, ինչպես նաև խորհրդային իշխանության և Դաշնակցության գնահատումների տարբերությունները, ապա հայկական սմենովեխականությունը կարող ենք բաժանել երկու ուղղության՝ ա) ազատամտական սմենովեխականություն և բ) դաշնակցական սմենովեխականություն:

Ազատամտական սմենովեխականության ներկայացուցիչը Գ. Չալ-

խուշյանն է... Մեզ ձեռնտու է այդ հոսանքը միայն այն պատճառով, որ նա իր հերթին պայքարում է Դաշնակցության դեմ: Մենք պետք է խորացնենք այդ պայքարը, բայց միաժամանակ պիտի ժողովրդական լայն զանգվածների առջև մերկացնենք այդ հոսանքը, պարզաբանելով, որ հայ ժողովրդի իսկական զավակների՝ բանվորների ու գյուղացիների փրկությունը ոչ թե ռուսական օրիենտացիան է, այլ միայն և միայն խորհրդային օրիենտացիան:

Դաշնակցական սմենովեխականությունը արտահայտվում է երկու ուղղությամբ, որոնց յուրաքանչյուրին կուզեի անվանել՝ մեկին բացասական լիկվիդատորական, իսկ մյուսին՝ դրական հաշտեցողական: Առաջինի արտահայտիչն է Հ. Քաջազնունին, իսկ երկրորդինը՝ Արշակ Ղազարյանը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.8, թ.10-11, 12-14:

212. ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի բանաձևից

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում

9-12 նոյեմբերի 1928թ.

Դաշնակցությունը եղել է հայ բուրժուազիայի իղձերի ու ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցությունը: Նա կատարել է և կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը: Դաշնակիզմը բուրժուական-ազգայնական -շովինիստական հակահեղափոխական իդեոլոգիա է: Նա հայ իրականության ֆաշիզմն է: Եվ հենց այդ իրականության մեջ Դաշնակցությունը ամենահակահեղափոխական ուժն է, խորհրդային իշխանության ու մեր երկրի աշխատավորության առավելագույն վտանգավոր թշնամին, որ միջազգային իմպերիալիստների ոսկիներով կաշառված ու զենքերով սպառազինված՝ պատրաստ է իր իմպերիալիստական տերերի առաջին իսկ հրամանով հարձակվել ԽՍՀՄ և Խորհրդային Հայաստանի վրա: Եվ ինչպես որ բոլոր թշնամական իդեոլոգիաներից ամենավտանգավորը համապարփակ նացիոնալիզմն է, այնպես էլ այդ նացիոնալիզմի ամենահետևողական արտահայտիչը՝ Դաշնակցությունը՝ հակահեղափոխական ճակատի հեգեմոնն ու ղեկավարն է:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.8, թ.165-166:

213. ՀԿ(բ)Կ Անդրերկոկոմի որոշումը

16 հուլիսի 1929թ.

Լսեցին. Հակակոմունիստական կազմակերպությունների դեմ պայքարի հարցերի կապակցությամբ հանրամատչելի գրքույկներ հրատարակելու մասին:

Որոշեցին. 1. Անհրաժեշտ համարել հակահեղափոխական կուսակցությունների (մուսավաթականներ, դաշնակցականներ և այլն) և երիտասարդության հակահեղափոխական կազմակերպությունների («Երիտասարդ մարքսիստներ», երիտասարդ դաշնակցականներ, մուսավաթականներ) մասին հանրամատչելի գրքույկների տպագրությունը ազգային լեզուներով:

2. Հանձնարարել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ագիտպրոպբաժնին հանրապետությունների Կենտկոմների և ՀամԼԿԵՄ Անդրերկրկոմի հետ համատեղ մանրամասն քննարկել տվյալ հարցը և իր առաջարկությունները ներկայացնել Անդրերկրկոմի Քարտուղարություն:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.9, գ.36, թ.111 հակ.: Թարգմ. ռուս.:

214. ՀԿ(բ)Կ Անդրերկրկոմի Քարտուղարության որոշումը

14 հոկտեմբերի 1929թ.

Լսեցին. Անդրկովկասում հակախորհրդային կուսակցությունների մասին հանրամատչելի գրքույկների մասին: (Քարտուղարության արձ. թիվ 73, կետ 78) (զեկ. Իոնով):

Որոշեցին. 1. Նշել, որ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի Քարտուղարության 1929թ. հուլիսի 22-ի որոշումը չի կատարվել:

2. Հանձնարարել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ագիտպրոպբաժնին, աշխատակազմի հետ համաձայնեցնելով, որոշել նրանց կողմից ձեռագրերի ներկայացման վերջնական ցուցակը:

3. Հանրապետությունների Կենտկոմներին՝ ապահովել հեղինակների համար այդ աշխատանքի կատարման անհրաժեշտ պայմաններ:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.9, գ.37, թ.27: Թարգմ. ռուս.:

Գլ.VII

Կուսակցության կազմալուծման եկրափակիչ փուլը Հայաստանում

Ա. Կազմալուծման միջոցառումները գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմաններում

215. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումից Հայաստանում կուլակության նկատմամբ կիրառվող միջոցառումների մասին

28 հունվարի 1930թ.

Հակախորհրդային խմբերի և հոսանքների դեմ մղվող պայքարն ուժեղացնելու մասին

1. Խորհրդային իշխանության տեղական և համապատասխան մարմինների գծով ուժեղացնել պայքարը հակախորհրդային խմբերին ու տարրերին հայտնաբերելու համար: Շտապ միջոցներ ձեռնարկել գոյություն ունեցող խմբերն ու կազմակերպությունները վերացնելու նպատակով, մեկուսացնել հակախորհրդային տարրերին: Այս ուղղությամբ հատուկ մարմինների գործունեությունը պետք է ուղեկցվի գյուղական չքավորության և միջակ գյուղացիության շրջանում մամուլի ու բանավոր քարոզչության զանգվածային աշխատանքով՝ դաշնակների կուսակցության, տրոցկիստների ու այլոց հակահեղափոխական, կուլակային էությունը մերկացնելու և այլ հակախորհրդային տարրերի ու խմբերի դեմ մղվող պայքարում զանգվածների զգոնությունն ու ակտիվությունը միավորելու համար:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.12, թ.6, 8-9: Թարգմ. ռուս.:

216. ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի որոշումը Դարալագյազի, Զանգեզուրի շրջաններում և Նախիջևանում տարածված բանդիտիզմի վերացման միջոցառումների մասին*

16 մարտի 1930թ.

1. Բանդիտիզմով վարակված «Նախիջևան, Դարալագյազ» շրջաններում ռազմական գործողությունները և քաղաքական ամբողջ աշխատանքը ղեկավարելու համար նշանակել եռյակ, հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Նազարեթյան, Կարաև, Ագրբա: Ընկ. Նազարեթյանին՝ անմիջապես մեկնել Նախիջևան:

Այդ շրջաններում գտնվող ՊՔՎ բոլոր զորամասերի, կոմունիստների և միլիցիոներների ջոկատների հրամանատարությունը դնել ընկ. Լեպինի վրա:

Եռյակին առաջարկել ամենավճռական միջոցները ձեռնարկել բանդաների շուտափույթ վերացման համար առկա զինված ուժերով:

2. Առաջարկել ՀԿ(բ)Կ Կենտկոմին՝ հավաքագրել 140 զինված կոմունիստներ, ուղարկելով նրանց Նորաշենից գործողների հետ միասին Դարալագյազի ուղղությամբ: Միաժամանակ առաջարկել ՀԿ(բ)Կ Կենտկոմին հրաման արձակել Դարալագյազում գտնվող Զանգեզուրի 140 կոմունիստներին շտապ վերադառնալ Զանգեզուր:

Առաջարկել ՀԿ(բ)Կ Կենտկոմին՝ Զանգեզուրի օկրուգկոմին կարգադրել անմիջապես հավաքագրել զինված խմբեր Ղափանի հանքերի բանվորներից, ի հավելումն Գորիսի կոմունարների:

3. Առաջարկել ԱդրԿ(բ)Կ Կենտկոմին՝ մարտի 17-ի ընթացքում Բաքվից Գորիս ուղարկել 100 զինված կոմունարներ, գերազանցապես հայեր, որոնց թվում պետք է լինեն փորձ ունեցող ընկերներ և գավառում քաղաքական աշխատանքի ընկերներ, ինչպես նաև ԱդրՊՔՎ ներկայացուցիչ:

Հանձնարարել ԱդրՊՔՎ-ին՝ կապվել Լեռնային Ղարաբաղի և նրա միջոցով Գորիսի հետ, ապահովելով շարունակական տեղեկատվությունը Զանգեզուրի և հարակից շրջանների դրության մասին:

ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար՝ Կրինիցկի

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.44, թ.2: Թարգմ. ռուս.:

*Որոշումը երևանում ընդունվել է հեռախոսով մարտի 17-ին ժամը 4.00-ին:

217. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության հատուկ որոշումը

17 մարտի 1930թ.

Հարցման կարգով

1. Հաստատել բանդիտիզմի դեմ պայքարի միջոցառումների ՀայՊՔՎ պլանը:

2. Հանձնարարել ՀայՊՔՎ՝ արագացնել բանտարկյալների գործերի ուսումնասիրությունը: Դա անել այն կարգով, որպեսզի առաջիկայում բաց թողնվի բանտարկյալների հիմնական մասը:

3. Բանտարկյալների գործերի ուսումնասիրությունն արագացնելու համար հանձնարարել Կենտկոմի բաշխիչ բաժնին՝ ՀայՊՔՎ տրամադրության տակ դնել անհրաժեշտ քանակությամբ աշխատողներ, լրացուցիչ կարգով աշխատելու համար:

4. Հանձնարարել ՀայՊՔՎ-ին՝ ձեռնարկել շտապ միջոցառումներ կալանավայրերը բեռնաթափելու համար, մասնավորապես ԱնդրՊՔՎ հաշվին գրանցված բանտարկյալների տեղափոխման գծով:

5. Հանձնարարել հանձնաժողովին՝ Մուշ. Չալյան (հրավիրող), Միխայլով և Ստեփանյան կազմով, եռօրյա ժամկետում մշակել միջոցառումների պլան՝ բանդիտիզմի դեմ պայքարում կոմունիստներին կազմակերպելու և օգտագործելու գծով:

6. Հանձնարարել ՀայՊՔՎ-ին՝ ձեռնամուխ լինել կազմակերպելու ա) օպերացիոն խմբեր (ԱնդրՊՔՎ-ի ցուցումների համաձայն), բ) հեծյալ միլիցիայի պահեստայիններ (ներկայացված նախագծով), գ) մշակել ճանապարհների, պետական ու հասարակական շենքերի ու ձեռնարկությունների հսկողության հարցը և անմիջապես ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ այդ ուղղությամբ:

7. Խնդրել Անդրերկրկոմին՝ ԱԽՖՍՀ ժողկոմխորհի պահուստային ֆոնդից անհրաժեշտ միջոցներ բաց թողնել միլիցիայի ռեզերվը և ճանապարհների հսկողությունը կազմակերպելու համար և ԱնդրՊՔՎ-ի միջոցներից անհրաժեշտ գումար՝ օպերխմբեր կազմակերպելու համար:

ՀայՊՔՎ-ին՝ ԱնդրՊՔՎ-ին ներկայացնել ծախսերի հաշվեկշիռը:

8. Հայաստանի ԺԿԽ-ին՝ պահուստային ֆոնդից անմիջապես ՀայՊՔՎ-ին բաց թողնել 50 հազար ռուբլի (հաշված արդեն տրամադրած 25 հազար ռուբլին):

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.21, թ.142 և հակ.: Թարգմ. ռուս.:

218. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշումը կոմունարների ջոկատներ կազմակերպելու մասին

26 մարտի 1930թ.

1.Կոմունարներին կազմակերպելու համար խնդրել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմին համապատասխան մարմինների միջոցով ստանալ նշված քանակությամբ զենք և հանդերձանք (ցուցակը կցվում է)*:

2. Անհրաժեշտ գտնել հայթայթել 60 հազար ռուբլի՝ նշված ջոկատները պահելու համար:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.17, թ.104: Թարգմ. ռուս.:

** Ցուցակը արխիվային գործում չի գտնվել:*

219. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշումը ՀայՊՔՎ նախագահ Ս. Օթյանի հաղորդման առթիվ

1 հունիսի 1930թ.

1.Հանձնարարել ՀայՊՔՎ-ին՝ ուժեղացնել բանդիտական խմբերի դեմ գործողությունների միջոցառումները Շամշադինի, Իջևանի և Դարալագյազի շրջաններում՝ ամենակարճ ժամանակում դրանք ջախջախելու և վերացնելու նպատակով: ԱնդրՊՔՎ-ից խնդրել անհրաժեշտ ուժեր այդ գործողությունների կենսագործումը ապահովելու համար:

2. Աննպատակահարմար գտնել զինաթափման գծով ընդհանուր միջոցառումների անցկացումը: Սահմանափակվել այն գյուղերի զինաթափումով, որոնք վարակված են բանդիտիզմով, այդ աշխատանքը զուգակցելով բանդիմբերի դեմ կիրառվող գործողություններով: Զինաթափել նաև ընդհատակից դուրս եկած բանդիտներին, ովքեր դեռևս զենքերը չեն հանձնել:

3. Անհրաժեշտ գտնել գործուն հակահեղափոխականների և դաշնակցական տարրերի մեկուսացումը, առաջին հերթին բանդիտիզմով վարակված շրջաններում:

Կենտկոմի քարտուղար՝ Խանջյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.5: Թարգմ. ռուս.:

220. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության հատուկ որոշումից Անդրերկրկոմի հունիսի 2-ի որոշումը կենսագործելու միջոցառումների մասին

3 հունիսի 1930թ.

1.Ի հավելումն քարտուղարության հունիսի 1-ի որոշման* Անդրերկրկոմի հունիսի 2-ի որոշման հիման վրա անհրաժեշտ գտնել, որպես բանդիմբերի վերացման օպերատիվ գործողությունների բաղկացուցիչ մաս, այն մի շարք գյուղերի զինաթափման անցկացումը, որոնք սնում են բանդիտիզմը Սիսիանի, Դարալագյազի և Դիլիջան-Իջևան շրջաններում: Հաստատել այդ միջոցառումների կենսագործման գծով ՀայՊՔՎ-ի պլանը, նրա վրա դնելով ինչպես բանդիմբերի դեմ գործողությունների, այնպես էլ զինաթափման ամբողջ ղեկավարումը:

2. Հանձնարարել Զանգեզուրի, Լոռու և Երևանի օկրուգկոմներին անմիջապես մշակել և իրագործել գործնական միջոցառումներ:

Կենտկոմի քարտուղար՝ Խանջյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.11: Թարգմ. ռուս.:

** Տես 219 փաստաթուղթը:*

221. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշումից բանդիտիզմի դեմ պայքարի հարցերի մասին

18 հունիսի 1930թ.

1.Բանդիտիզմի դեմ պայքարի միջոցառումների վճռական և արագ կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ գտնել պատասխանատու հնգյակների կազմակերպումը Դարալագյազի, Լոռու և Զանգեզուրի գծով, հետևյալ կազմով...*

2. Զինաթափման և բանդիտիզմի դեմ պայքարի գծով հնգյակների համար գործունեության հիմք համարել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի հաստատած և երաշխավորած հրահանգը:

** ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության 1930թ. սեպտեմբերի 30-ի հատուկ որոշումով հնգյակ հանձնաժողովներ են ստեղծվում նաև Բասարգեչարի և Կրասնոսելսկի շրջանների գծով: Տես նույն տեղը, թ.106:*

3. Թույլատրել ՀայՊՔՎ-ին այլ միջոցառումների հետ բանդիտների դեմ կիրառել բանդիտիզմով վարակված գյուղերի ու շրջանների սահմաններից նրանց ընտանիքների արտաքսումը, ինչպես նաև նրանցից առավել չարամիտ ու կուլակային տնտեսությունների գույքի բռնագրավումը:

4. Առաջարկել ընկ. Օթյանին՝ մեկնել Դարալագյազ և Զանգեզուր հնգյակների աշխատանքը ղեկավարելու համար:

Կենտկոմի քարտուղար՝ **Խանջյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.14 և հակ.: Թարգմ. ռուս.:

222. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության հատուկ որոշումից բանդիտիզմի դեմ պայքարի և զինաթափման հարցերի մասին

4 հուլիսի 1930թ.

1.Զինաթափման անցկացման և բանդիտիզմի դեմ պայքարի համար հավելյալ ստեղծել հետևյալ հանձնաժողովները, տալով նրանց արտակարգ միջոցառումների իրավունք ընդհուպ մինչև պատժի բարձրագույն միջոցները:

ա) Ստեփանավանի շրջանի գծով...*

բ) Ալափարսի և Կոտայքի շրջանի (Երևանի օկրուգ) գծով...*

գ) Համամլուի շրջանի (Լենօկրուգ) գծով...*

2. Զինաթափման համար նախատեսել այդ շրջանների հետևյալ գյուղերը...*

3. Զանգեզուրի և Ղարաքիլիսա-Դիլիջանի շրջաններում զինաթափման գծով աշխատանքը ավարտելու պատճառով արձակել ընկ. ընկ. Սարատիկովի և Լ. Ղազարյանի հանձնաժողովները:

Կենտկոմի քարտուղար՝ **Ամատունի**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.23 և հակ.: Թարգմ. ռուս.:

*Բաց են թողնվել հանձնաժողովների կազմերը և գյուղերի անունները:

223. ՀԿ(բ)Կ Կենտկոմի հատուկ որոշումից

6 հուլիսի 1930թ.

Խիստ գաղտնի

Լսեցին. Արտակարգ հնգյակների զեկուցումը գյուղում տիրող դրության մասին՝ բանդիտիզմով վարակված գյուղերի զինաթափում և բանդիտների նկատմամբ վճռական միջոցառումներ անցկացնելու կապակցությամբ:

(Զեկուցողներ՝ Ս. Օթյան, Լ. Ղազարյան, Սարատիկով, Անանյան, Հանեսօղլյան):

Արտահայտվեց ընկ. Ամատունին:

Որոշեցին. 1. Հավանություն տալ վարակված շրջաններում արտակարգ միջոցառումներ անցկացնելու գծով հնգյակների գործունեությանը:

Կենտկոմի քարտուղար՝ **Ամատունի**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.33 և հակ.: Թարգմ. ռուս.:

224. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Բյուրոյի փակ նիստի որոշումը դաշնակներին մեկուսացնելու մասին

17 օգոստոսի 1930թ.

1. Ընդունել Հայաստանի ՊՔՎ-ի առաջարկությունը Դաշնակցություն կուսակցության ղեկավար խավերի ու ակտիվի, թվով 300 մարդու, մեկուսացման մասին:

2. Հանձնարարել ընկ. ընկ. Օթյան, Մանդալյան և Եկավյան կազմով եռյակին երեքօրյա ժամկետում մշակել և Կենտկոմի հաստատմանը ներկայացնել կուսակցության շրջանային կոմիտեներին ուղղված փակ նամակի նախագիծ՝ դաշնակներին մերկացնելու և կազմալուծելու ուղղությամբ զանգվածային-քարոզչական աշխատանքը առավելագույնս ծավալելու մասին՝ վերջին շրջանում Դաշնակցություն կուսակցության ակտիվացման և դաշնակցական ակտիվի մեկուսացման գործողության կապակցությամբ*:

Կենտկոմի քարտուղար՝ Խանջյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.12, թ.83: Թարգմ. ռուս.:

---

*Տե՛ս 225 փաստաթուղթը:

225. Փակ նամակ ՀԿ(բ)Կ բոլոր շրջկոմներին

3 սեպտեմբերի 1930թ.

Խիստ գաղտնի

Թիվ 19/գ

Ընկերներ. սոցիալիստական արշավանքը և կապիտալիզմի արմատների ոչնչացումը մեր երկրում սրում են դասակարգային պայքարը, հակախորհրդային տարրերի կատաղի դիմադրություն են առաջացնում: Վերջին ժամանակներս դաշնակների կողմից մինչև այժմս չտեսնված ակտիվություն, կազմակերպության ցանցի լայնացում ու աշխատանքի աշխուժություն է նկատվում: Դաշնակների հետ միասին աշխուժության նշաններ են ցույց տալիս նաև մյուս հակահեղափոխական կազմակերպությունները՝ տրոցկիստական-մենշևիկյան խմբակները, դաշերիտները, «երիտասարդ մարքսիստները» և այլն: Դաշնակցական կուսակցությունն իր աշխատանքներն աշխուժացրել է մանավանդ գարնանային գյուղատնտեսական կամպանիայի, համատարած կոլեկտիվացման կիրառման ժամանակվանից, երբ մեր կուսակցական կազմակերպությունները թույլ տվեցին մի շարք կոպիտ սխալներ և քյալլագյոզություններ: Այս հիմնականում հակամիջուկային կարգի սխալները դաշնակ-կուլակային տարրերը կարողացան օգտագործել: Տեղերում երևան բերված դաշնակ կազմակերպությունների շարքերում բավական թվով միջակ և նույնիսկ չքավոր գյուղացիներ կան: Դաշնակ բջիջների մեծամասնությունը կազմակերպվել է կոլեկտիվ տնտեսությունների բուռն մաղման և մի շարք կոլեկտիվների քայքայման ժամանակ: ԵՒ,ա փաստերը պարզ ապացուցում են, որ մեր սխալները՝ միջակի նկատմամբ հակալենինյան մոտեցումը թշնամին օգտագործել է մեծ հաջողությամբ, և որ այդ սխալները նպաստել են մեր դասակարգային թշնամուն և աջ օպորտունիստներին:

Մի անգամ ևս կտրականապես շեշտելով կոլեկտիվացման սխալների խորապես բացասական դերը, որի ազդեցությունը դեռևս զգալի է տալիս իրեն, Կենտկոմը հիշեցնում է, սակայն, որ միանգամայն անթույլատրելի և ամենավատթար օպորտունիզմ է հանդիսանում այն, երբ դասակարգային թշնամու և դաշնակ տարրերի ակտիվանալը միայն և միայն մեր սխալներով է բացատրվում:

Պետք է խստությամբ հարվածել օպորտունիստական այս տրամադրությունները, որոնք թերագնահատում են դասակարգային թշնամու վտանգը:

Հակախորհրդային էլեմենտների և հատկապես դաշնակների չտեսնված ակտիվությունը ապացուցում է դասակարգային պայքարի սուր լարվածությունը մեր երկրում:

Կուսկազմակերպությունների հետ միասին Պետքաղվարչության օրգանները վերջին շրջանում խոշոր աշխատանք կատարեցին բանդիտիզմի վերացման համար, ոչնչացնելով բանդիտային խմբերը, դաշնակցական բջիջները, հրապարակից վերացնելով դաշնակների ակտիվ վերնախավը և զինաթափելով ազգաբնակչությունը մի շարք վայրերում: Սակայն սա դեռ բավական չէ: Պետքաղվարչության գծով ենթադրվում է մոտիկ ապագայում կատարել լրացուցիչ գործողություններ զինաթափումը շարունակելու և դաշնակ կազմակերպությունների ակտիվը հրապարակից վերացնելու ուղղությամբ: Այս հսկայական աշխատանքը միայն Պետքաղվարչության ձեռնարկումներով կատարելն անհնարին է: Կուսկազմակերպությունները պետք է օգնության հասնեն Պետքաղվարչության օրգաններին: Այդ օգնությունն ամենից առաջ պետք է արտահայտվի լայն բացատրական աշխատանքով՝ գյուղացիական հիմնական մասսաների քաղաքականապես նախապատրաստումով: Պետք է այնպիսի դրություն ստեղծել, որ դաշնակների ու հակախորհրդային ամեն տեսակ տարրերի ձերբակալումն ու արտաքսումը, Պետքաղվարչության կողմից ձեռնարկվող այս միջոցները գյուղական հիմնական մասսաների կողմից ոչ մի դիմադրության չհանդիպեն, այլ, ընդհակառակը, համակրական վերաբերմունքի և ակտիվ օժանդակության արժանանան մասսաների կողմից: Կենտկոմն անթույլատրելի է համարում այն, որ մի շարք շրջաններում նախապատրաստական հող չի ստեղծվում, երբ դաշնակների արտաքսումից հետո նույնիսկ ոչ մի բացատրական-քաղաքական աշխատանք չի տարվում մասսաների, անգամ իսկ կուսանդամների շրջանում, որպիսի երևույթն օգտագործում է դասակարգային թշնամին:

Կենտկոմը հիշեցնում է, որ Պետքաղվարչության օրգանների կող-

մից կատարվելիք առաջիկա աշխատանքը՝ դաշնակցական ակտիվի հրապարակից վերացնելու ուղղությամբ, հսկայական քաղաքական նշանակություն ունի: Այս դրությունից ելնելով Կենտկոմը անհրաժեշտ է համարում.

1. Մինչև վերջ վերացնել այն բոլոր սխալները, որոնք թույլ են տրվել կոլեկտիվացման ժամանակ, դրանով ամենուրեք վերականգնել միջակի վստահությունը դեպի կուսակցությունն ու իշխանությունը:

2. Վերականգնել և իրապես ուժեղացնել բատրակա-չքավորական խմբակների աշխատանքը:

3. Ծավալել քաղաքական-բացատրական աշխատանքը դաշնակցության հակահեղափոխական, հակախորհրդային գործունեության մասին, շեշտել իմպերիալիստական բանակում հակախորհրդային պատերազմի նախապատրաստության մեջ դաշնակների ակտիվ մասնակցությունը, Անդրկովկասյան հակահեղափոխության հետ ձեռք-ձեռքի տված, բացատրել նրանց աշխատանքը կուլակության հետ միասին կոլեկտիվները վարկաբեկելու և քայքայելու ուղղությամբ, բանդաների կազմակերպումը, պրովոկացիաների տարածումը, վնասարարությունը, մեր հատկապես վերջին շրջանի դժվարությունների օգտագործումը:

Կենտկոմը առաջարկում է կուսակցական կազմակերպություններին կիրառել գործնականում դաշնակ տարրերի հակախորհրդային աշխատանքի, նրանց պրովոկացիոն քայլերի կոնկրետ մերկացման ձևը: Օպերացիաներից հետո մասնավորապես պետք է բացատրել նման ձեռնարկումների անհրաժեշտությունը, որ բխում է տվյալ գյուղի հիմնական մասսաների շահերից: Պիտի բացատրել լայն չափով մեր տարած դժվարությունները, նրանց բնույթը և վերացման միջոցները:

4. Ուժեղացնել իդեոլոգիական պայքարը դասակարգային թշնամու, կուլակային տարրերի, մեր պայմաններում վտանգավոր թշնամի հանդիսացող բուրժուական նացիոնալիզմի, նրա ամեն տեսակ արտահայտությունների և առաջին հերթին դաշնակիզմի դեմ:

Կենտկոմը հիշեցնում է, որ այդ աշխատանքը պետք է կատարել սիստեմատիկորեն և ոչ կամպանիական բնույթ տալ, ժամանակ առ ժամանակ: Մի շարք միջոցներով (մամուլ, կուսդաստիարակություն, դպրոց, հասարակական կազմակերպություններ և այլն) պետք է ամենաբարձր աստիճանի հասցնել պրոլետարական ինտերնացիոնալիզմի հարձակումը:

5. Ուժեղացնել պայքարը աջ իդեոլոգիայի և աջ պրակտիկայի դեմ,

մասնավորապես կուսակցության ազգային քաղաքականության ասպարեզում եղած թեքումների դեմ, հատկապես տեղական ուկլոնիզմի և նրա բազմատեսակ արտահայտությունների դեմ, որոնք ջուր են լցնում դաշնակցականների ջրաղացին: (Պ. Թորոսյանի հոդվածը, Ե. Չուբարի գիրքը և այլն):

6. Կենտկոմն այս հարցերը շրջկոմների առաջ դնում է Պետքաղվարչության առաջիկա կատարելիք օպերացիաների կապակցությամբ: Սույն նամակի հիման վրա անհրաժեշտ է ծավալել համապատասխան աշխատանք՝ ապահովելու համար այն բոլոր ձեռնարկումները, որոնք կատարվում են դաշնակցական կազմակերպության մերնախավի ծերբակալման և զինաթափման ուղղությամբ:

ՀԿ(բ)Կ Կենտկոմ

Թիվ 19/գ

3 սեպտեմբերի 1930թ.

Երևան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.38, թ.59-60.:

226. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության բանաձևը գյուղի քաղաքական դրության մասին

9 հոկտեմբերի 1930թ.

Լսելով Հայաստանի ՊՔՎ-ի նախագահ ընկ. Օթյանի հաղորդումը գյուղի քաղաքական դրության մասին, Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նշում է գյուղացիության տրամադրության մեջ կատարված հսկայական բեկումը գյուղի նորմալ քաղաքական դրության բարելավման և վերականգնման ուղղությամբ: Ընթացիկ տարվա փետրվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում կուսկազմակերպությունների աշխատանքի, ՊՔՎ-ի գծով կատարված միջոցառումների (պայքար բանդիտիզմի դեմ, դաշնակների և մյուս հակահեղափոխական կազմակերպությունների ջախջախում) և գյուղում խորհրդային-կուսակցական աշխատանքի բարելավման (գյուղում կուսգծի ծռումների դեմ պայքար, տեղական աշխատակազմի աշխատանքի ու կադրերի բարելավում) շնորհիվ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը արձանագրում է գյուղում բանդիտիզմի և բան-

դիտական տրամադրությունների զգալի նվազում:

Կենտկոմը, սակայն, արձանագրում է գյուղացիության որոշ խավերի տրամադրություններում դեռևս զգալի բացասական երևույթների առկայությունը՝ անբավականություն, հատկապես ընթացիկ տարվա գարնանը բանդիտիզմով վարակված և ապստամբական շարժումով ընդգրկված շրջաններում (Շամշադին, Վեդի-Բասար, Զանգեզուր, Դարալագյազ և այլն): Բանդիտական շարժումներում մինչև 2.000 զինված և այժմ լեգալ վիճակի անցած գյուղացիների մասնակցությունը, ապստամբական շարժման մեջ մինչև 70.000 բնակչություն ունեցող շրջանների ընդգրկումը խոր հետք են թողել գյուղացիների տրամադրությունների մեջ, որի լրիվ հաղթահարումը պահանջում է հետևողական ու համառ տևական աշխատանք:

Երկրում դասակարգային պայքարի սրումը, այս տարվա գարնանը գյուղում հակախորհրդային տրամադրությունների աճը լայնորեն օգտագործվեց հակահեղափոխական կազմակերպությունների՝ դաշնակների, մուսավաթականների, «Խագիգա օրդուի» և ուրիշների կողմից: Այդ ընթացքում մենք ունենք այդ կազմակերպությունների, հատկապես դաշնակների աննախադեպ աշխուժացում, նրանց կազմակերպությունների ընդլայնում ի հաշիվ նոր տարրերի՝ տատանվող ու սադրանքի ենթարկված գյուղացիների, իսկ մի շարք շրջաններում դրանց վերածվելը զանգվածային կազմակերպությունների: Չնայած վերջիններիս պարբերական ջախջախումներին և ՊՔՎ կողմից անցկացված մեկուսացումներին, տեղ-տեղ մինչև այժմ էլ դաշնակները դրսևորում են մեծ կենսունակություն և կազմակերպվածություն (Երևանի և Լենինականի օկրուգներ) և մնում են ուղղություն տվող հիմնական հակահեղափոխական մարտական կազմակերպությունը երկրում:

Բանդիտիզմով վարակված շրջաններում անցկացված մասնակի զինաթափման արդյունքները և ՊՔՎ տվյալները ցույց են տալիս, որ գյուղացիական բնակչության (հատկապես հակախորհրդային տրամադրված) մոտ կա մեծ քանակությամբ գաղտնի զենք, որը բանդիտական տարրերի և հակահեղափոխական մարտական խմբերի զինման հիմնական աղբյուրն է, և որը հարմար պահին կարող է հաջողությամբ օգտագործվել խորհրդային իշխանության դեմ:

Չնայած գյուղում կուսգծի ծռումների դեմ պայքարի գծով անցկացված մեծ ու հաջող աշխատանքին, տեղական խորհրդային և կուսակցական աշխատակազմի համեմատական բարելավմանը, մինչև այժմ դեռևս շարունակում են պահպանվել բազմաթիվ սխալներ, որոնք խանգարում են խորհրդային իշխանության տեղական մարմինների նկատ-

մամբ լրիվ վստահության վերականգնմանը և միաժամանակ սնող հանգամանք են հանդիսանում հակահեղափոխական կազմակերպությունների հակախորհրդային աշխատանքի համար:

Կենտկոմը նշում է նաև տեղական մարմինների թույլ աշխատանքը հակախորհրդային տրամադրությունների դեմ պայքարելու համար զանգվածներին մոբիլիզացնելու ուղղությամբ, գյուղում հակահեղափոխական դրսևորումների հանդեպ գյուղական կոմունիստների և չքավորության շփոթվածության որոշ պահերը, չքավորության հետ աշխատանք տանելու և նրան կազմակերպելու պայքարում անհրաժեշտ բեկման բացակայությունը:

Ելնելով վերոհիշյալից Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նախատեսում է հետևյալ միջոցառումները.

Հայաստանի ՊՔՎ-ին՝ շարունակել պայքարը գոյություն ունեցող բանդիտական խմբերի ու անհատների դեմ (Դարալագյազ, Լոռի, Սևան)՝ նրանց լրիվ վերացման համար: ՊՔՎ-ից խստագույնս պահանջել առաջիկա երկու ամսում բոլոր միջոցներով հասնել հետևյալ քաղաքական փախստականների բանդաների ու խմբերի վերացմանը՝ Սարատիկովների բանդան (Լոռի), Բալա Սարգիսի խումբը (Լոռի), Մուրուք Կարոյի և Այվազի խումբը, Լազգոյի խումբը (Դավալու), Պարույրի բանդան (Դարալագյազ):

2. Հատուկ ընդգծելով Բասարգեչարի և Կրասնոսելսկի շրջանների լարված դրությունը՝ տեղական և ադրբեջանական բանդաների սանձարձակությունը, անասնագողությունը, ահաբեկչությունը, հակախորհրդային-տարրերի ու կուլակության լկտիությունը, ՊՔՎ-ին հանձնարարել՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրագործել լայն միջոցառումներ հակահեղափոխական տարրերի մեկուսացման, բանդիտական խմբերի վերացման և վարակված գյուղերի զինաթափման ուղղությամբ:

Հայաստանի ՊՔՎ-ին՝ այդ շրջաններում բոլոր միջոցառումները համակարգել Ադրբեջանի ՊՔՎ-ի հետ՝ իրագործվող միջոցառումներն ապահովելու համար:

3. Անհրաժեշտ և անհետաձգելի համարելով բանդիտիզմով ու դաշնակցական ազդեցությամբ վարակված Հայաստանի բոլոր շրջաններում գաղտնի զենքի հավաքումը, հանձնարարել Հայաստանի ՊՔՎ-ին՝ արագացնել զինաթափման աշխատանքի նախապատրաստումը և կոնկրետ պլանով մտնել Կենտկոմ:

4. Հետագա միջոցառումներ իրականացնել Դաշնակցության դեմ՝

ամբողջ ղեկավար կազմի մեկուսացման միջոցով, խնդիր ունենալով գոյություն ունեցող կազմակերպությունների լիակատար ջախջախումը և ապագայում նրանց կազմակերպական հնարավորությունների վերացումը: Նույն միջոցառումներն իրականացնել նաև մյուս հակահեղափոխական կազմակերպությունների՝ երիտասարդ դաշնակցականների և «մարքսիստների», էսեռների, մուսավաթականների, «Խագիգա-Օրդուի» և ուրիշների նկատմամբ:

5. Հայաստանի ՊՔՎ-ին՝ հանձնարարել իր գծով նախատեսելու հատուկ և հրատապ միջոցառումներ ջախջախված կազմակերպությունների մնացորդների կազմալուծման ուղղությամբ՝ նրանց գաղափարական և կազմակերպական քայքայման իմաստով, դրանով իսկ ապահովելով միջակային-չքավորական տարրերի հեռացումը դաշնակներից և ուրիշներից:

Կենտկոմը նշում է այդ միջոցառումների խիստ կարևորությունը, հատկապես այն շրջաններում, որտեղ դաշնակներին հաջողվել է սադրել և իր ազդեցության տակ ընդգրկել զգալի քանակությամբ գյուղացիներ (Կոտայք, Ալափարս, Մոլլա-Գեոկչա, Դուզքենդ, Սիսիան և այլն):

6. Հանձնարարել Հայաստանի ՊՔՎ-ին՝ շրջանացման կապակցությամբ ուժեղացնել ՊՔՎ-ի տեղական վարչակազմը որակյալ գործարար աշխատողներով առաջին հերթին բանդիտիզմով վարակված շրջաններում:

Կենտկոմի բաշխիչ բաժնին՝ կարճ ժամկետում առանձնացնել 10 նոր աշխատողներ ՊՔՎ-ի գծով մշտական աշխատանքի համար:

7. Նշելով բանդիտիզմի դեմ պայքարի գործում միլիցիայի կատարած մեծ աշխատանքը, հանձնարարել ՊՔՎ-ին ուշադրություն դարձնել ղեկավար կադրերի ընտրության, միլիցիայի կազմի կայունության ստեղծման և մարտունակության վրա (մարդկանց ընտրությունը, զինումը, հեծյալ կազմը):

8. Հանձնարարել ՀԿ(բ)Կ շրջկոմներին՝ ուժեղացնելու զանգվածային աշխատանքը բանվորական ու գյուղացիական զանգվածների միջավայրում դաշնակների և մյուս հակահեղափոխական կազմակերպությունների մերկացման ուղղությամբ: Նշելով այդ գծով մինչև այժմ կատարված աշխատանքի անբավարարությունը, պայքարի վարչական միջոցների նկատելի անհամաձայնությունը քարոզչության ու բացատրական աշխատանքի հետ, հանձնարարել շրջկոմներին ՊՔՎ-ի բոլոր միջոցառումներն ապահովել զանգվածային-պրոպագանդիստական նախապատրաստությամբ ու աշխատանքով:

9. Կենտկոմի կուլտպրոպ և զանգվածային քարոզչության բաժնին՝

տալ համապատասխան ցուցումներ զանգվածային աշխատանքի բոլոր գծերով (թերթեր, ամսագրեր, խմբակներ և այլն)՝ դաշնակցության դեմ պայքարի կապակցությամբ: Հատուկ նշել այդ աշխատանքի թուլությունը մամուլի գծով, հանձնարարելով «Խորհրդային Հայաստանին» հավաքագրել բոլոր լրագրողների ուժերը այդ ուղղությամբ շարունակական աշխատանքը ուժեղացնելու համար:

10. Արձանագրելով երիտասարդության հակահեղափոխական կազմակերպությունների՝ երիտասարդ դաշնակների ու «մարքսիստների» աշխատանքի նկատելի աշխուժացումը, ինչպես նաև գյուղական ու սովորող երիտասարդության որոշ խավերի կազմակերպական ու գաղափարական ընդգրկվածությունը, հանձնարարել ՀԼԿԵՄ Կենտկոմին՝ ձեռնարկել հրատապ միջոցառումներ համախմբելու կոմերիտական շարքերը երիտասարդության շրջանում հակահեղափոխական և ազգամոլական տրամադրությունների դեմ պայքարելու համար:

11. Անհրաժեշտ համարել խորհրդային-կուսակցական աշխատակազմերի վերանայումը և հետագա ուժեղացումը հետևյալ շրջաններում՝ Թալին, Վեդի, Կոտայք, Մեղրի, Աշտարակ, Դիլիջան, Բասարգեչար, Մոլլա–Գեոկչա:

12. Կենտկոմի բյուրոյի մոտակա նիստերից մեկում լսել զեկուցում չքավորության հետ տարվող աշխատանքի դրության մասին:

13. Նշելով այն հսկայական աշխատանքը, որ կատարել են ընթացիկ տարում ՊՔՎ-ի մարմինները բանդիտիզմի և հակահեղափոխական կազմակերպությունների դեմ մղվող պայքարում, հանձնարարել Հայաստանի ՊՔՎ-ին ներկայացնել նախագիծ ՊՔՎ և միլիցիայի այն աշխատողներին պարգևատրելու համար, ովքեր աչքի են ընկել բանդիտիզմի, հակախորհրդային ելույթների և ուրիշների դեմ մղվող գործողություններում:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.120-121: Թարգմ. ռուս.:

227. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշումից զինաթափման պլանի մասին

14 նոյեմբերի 1930թ.

1. Հաստատել ՀայՊՔՎ-ի ներկայացրած զինաթափման պլանը:

Հանձնարարել ՊՔՎ-ին՝ ձեռնամուխ լինել պլանի կենսագործման նախապատրաստմանը:

2. Ձինաթափման գծով հանրապետական եռյակի կազմում Կենտկոմից ընդգրկել ընկ. Ամատունուն:

3. Հանձնարարել ՊՔՎ-ին և Կենտկոմի կազմբաժնին որոշել օկրուգային եռյակների կազմը և մտցնել Կենտկոմի քարտուղարություն՝ հաստատման:

4. ՊՔՎ-ին՝ Կենտկոմին հատուկ ներկայացնել իր նկատառումները զինաթափման ենթակա շրջանների կազմում Դարալագյազը մտցնելու անհրաժեշտության մասին:

Կենտկոմի քարտուղար՝ **Խանջյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.18, թ.169: Թարգմ. ռուս.:

228. Հայաստանի Պետքաղվարչության կոլեգիային՝ չեկիստ-մարտիկներին, ՀՊՔՎ բոլոր աշխատակիցներին

20 դեկտեմբերի 1930թ.

ՀԿ(բ)Կ Կենտկոմը իր բոլշևիկյան բոցավառ ողջույնն է հղում ձեզ, պայքարի և հաղթանակի ձեր տասնամյակի առթիվ:

Կոմունիստական կուսակցությունը և բանվոր դասակարգը ձեզ հանձնել են սոցիալիզմի գործի պայքարի կարևորագույն ֆրոնտներից մեկը՝ գործնականում բնումը խեղդել և ջախջախել հայկական բուրժուազիայի մարտական կուսակցության, իմպերիալիզմի ագենտ Դաշնակցության, կոնդրատևշչինայի բուրժուական և մանրբուրժուական ամեն տեսակի ռեստավրատորների հակահեղափոխական դավերն ու փորձերը մեր երկրում...

ՀԿ(բ)Կ Կենտկոմ

Խորհրդային Հայաստան, 20 դեկտեմբերի 1930թ.: Հատված փաստաթղթից:

229. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության հատուկ որոշումը գյուղում տիրող դրության մասին

4 մարտի 1931թ.

Խիստ գաղտնի

Հանձնարարել ընկ. ընկ. Ս. Վարդանյանին և Աբուլյանին հնգօրյա ժամկետում մշակել և բյուրոյի հաստատմանը ներկայացնել կոնկրետ միջոցառումների նախագիծ՝ բանդիտիզմի դեմ պայքարի և գյուղում հակախորհրդային կուսակցությունների ու տարրերի նկատելի ակտիվացման կապակցությամբ շրջանային կուսակցական կազմակերպությունների զգոնությունը բարձրացնելու, ինչպես նաև գաղափարական պայքարի ճակատում աշխատանքը ուժեղացնելու մասին:

Կենտկոմի քարտուղար՝ **Վարդանյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.11, գ.8, թ.72: Թարգմ. ռուս.:

230. Ավելի կգաստ, ավելի աչալուրջ

4 մայիսի 1931թ.

Դաշնակցության խմբապետներն անգործ չեն նստած Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ: Նրանց անմիջական ղեկավարությամբ էր, որ անցյալ տարի գլուխ բարձրացրին կուլակային-բանդիտական առանձին խմբակներ մեր մի քանի շրջաններում, որոնց նպատակն էր խանգարել սոցիալիզմի հաղթարշավը մեր երկրում, և որոնք արժանի հակահարված ստացան ու ոչնչացան մեր աշխատավորության անողոք հարվածների տակ: Կասկած չի կարող լինել այն մասին, որ Դաշնակցության աշխատանքները մեր երկրում և կարմիր գծից դուրս՝ անբաժանելի ու օրգանական մասն են կազմում Խորհրդային Միության դեմ իմպերիալիստական գիշատիչների և նրանց սոցիալ-ֆաշիստական գործակալների կողմից պատրաստվող ինտերվենցիայի:

... Կան միամիտներ կամ «միամիտ» ձևացողներ, որոնք այս կամ այն չափով կասկածում են Դաշնակցության դերի մասին՝ ինտերվենցիայի կազմակերպման ասպարեզում: Նախկին դաշնակցական ղեկավար քաղաքացի Քաջազնունին Խորհրդային Հայաստանի 10-ամյակին նվիրված իր մի անտիպ հոդվածում գրում է. «Երբ մտածում եմ, թե Միության վրա գրոհ տվող այլազան ուժերի շարքերից մեկում կա-

րող է գտնվել նաև մի հայ մարդ, որն իրեն հայրենասեր է անվանում, սիրտս լցվում է անհուն ցավով ու զայրույթով»: Քաղաքացի Քաջազնունին կասկածում է, որ ինտերվենցիոնիստների շարքերում «կարող է գտնվել նաև մի հայ մարդ»: Կարիք կա՞ ասելու, որ երկմտել այն փաստի վերաբերմամբ, թե Դաշնակցությունն ինտերվենցիան պատրաստողների առաջին շարքերում է, նշանակում է կամա թե ակամա կատարել Դաշնակցության՝ հակախորհրդային ինտերվենցիայի կազմակերպման այդ ջերմ գործակցի դավերն ու ոտնձգությունները...

Ա. Խանջյան

Խորհրդային Հայաստան, 4 մայիսի 1931թ.:

231. Քաջազնունու քաղաքական իդեալների և հայրենասիրական «միամտության» մասին

23 մայիսի 1931թ.

Շինարարական ինստիտուտի կոմբջիջի դռնբաց նիստում ունեցած իր երկու ելույթի մեջ քաղաքացի Քաջազնունին ճիգ էր թափում վիճարկել ընկ. Ա. Խանջյանի (տես «Խորհրդային Հայաստան», թիվ 102, ընկ. Խանջյանի հոդվածը) այն մասին, որ Քաջազնունու դիրքերը երկդիմի են, որ նա կոծկում է Դաշնակցության, որպես հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստման գործակցի դերը:

Ա. Բզնունի

Խորհրդային Հայաստան, 23 մայիսի 1931թ.: Հատված հոդվածից:

232. ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի նախագահության միացյալ նիստի բանաձևը Դարալագյազի շրջանի իրադարձությունների մասին

11 հուլիսի 1931թ.

Դարալագյազի շրջանի Արփա գյուղի կուսակցական և կոմերիտական բջիջների ելույթը (հուլիսի 3-6) ցույց է տալիս, որ մի խումբ գազազած աջ օպորտունիստներ փորձ են արել անցնելու տրոցկիզմի անլեգալ, հակակուսակցական աշխատանքի մաշված ուղին, կուսակցության և խորհրդային իշխանության դեմ ուղղված անլեգալ և հակահեղափոխական բացահայտ ելույթով, ձուլվելով դաշնակցական հակահեղափոխական կուսակցության հետ:

Իր «պլատֆորմում» Արփայի բջիջը արտացոլել է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դեմ կուլակ-դաշնակցական տարրերի ծրագիրը ընդդեմ սոցիալիստական ծավալուն հարձակման, կոլտնտշինարարության ծավալման, տեխնիկական մշակույթների զարգացման և այլն:

Արփայի բջիջի անդամները, համարելով իրենց «լենինյան կուսակցության իսկական գծի կողմնակիցներ», գտնում են, որ «կուսակցության ներկա ղեկավարությունը շեղվել է լենինյան կուսակցության իսկական գծից, ամբողջ կուսկազմակերպությանը, բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը տանում է դեպի կործանում, որ սոցիալիզմը կառուցվում է բռնի կերպով, որ աշխատավորները զրկված են ամեն տեսակի ազատությունից և իրավունքներից, չկա ազատ հողօգտագործում, որ կամպանիաներն ուղղված են աշխատավորության դեմ, կոլեկտիվ տնտեսությունները հարկադրանքով են կազմակերպվում» և այլն և այլն: Նրանց «պլատֆորմը» պահանջում է «1925-1927թթ. կուսակցության քաղաքականության վերականգնումը, կուլակության, որպես դասակարգի, վերացման քաղաքականությունից հրաժարումը, հարկային և մթերման քաղաքականության վերանայում» և այլն[6]:

... Արփայի «կոմունիստների» հակահեղափոխական ելույթը, կոմունիստներ, որոնք իրենց «պլատֆորմում» կրկնում են աջ թեքման, կուլակ-դաշնակցական զրպարտությունները կուսակցության քաղաքականության նկատմամբ, Խաչիկ գյուղի բջիջի համակրական վերաբերմունքը արփացիների ելույթին, ինչպես նաև Ռինդ, Էլփին, Չիվա և այլ գյուղերի կուսակցական բջիջների առանձին անդամների տատանումները վկայում են այն մասին, որ Դարալագյազի կուսկազմակերպության առանձին օղակներում տեղի է ունեցել կուլակային վերասերում, որ աջ օպորտունիստական տարրերը կուսակցության և խորհրդային իշխանության դեմ ուղղված կռվում գլորվել են մինչև դաշնակների դիրքերը, դաշնակներ, որոնք օգտագործում են աջ օպորտունիստներին և քայքայված տարրերին՝ կազմակերպելու համար բացահայտ հակահեղափոխական ելույթներ՝ ուղղված կուսակցության և խորհրդային իշխանության դեմ:

Արփայի բջիջի հակակուսակցական, հակահեղափոխական աստիճանի հասած գործունեությունը իր հիմքում ունենալով դասակարգային կռվի սրվածությունը և կուլակ-դաշնակցական տարրերի հուսահատ ընդդիմությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման միջոցառումներին (կոլեկտիվացում, մթերումներ և այլն), հիմնա-

կանում հետևանք է Դարալագյազի շրջանի կուսկազմակերպության մեջ ծավալուն պայքարի բացակայության՝ ընդդեմ կուլակության, դաշնակների, կուսակցության ներսում նրանց գործակալության աջ թեքման և հաշտվողականության՝ վերջինիս նկատմամբ և որպես հետևանք այս բոլորի՝ կուսակցական կազմակերպության դասակարգային զգոնության ու մարտունակության բթացման:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.14, գ.9, թ.340-'343: Թարգմ. ռուս.:

233. ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Խանջյանի ճառից Հայաստանի ինժեներ-տեխնիկների և գյուղատնտեսական մասնագետների համագումարում

29 սեպտեմբերի 1931թ.

Հին ինտելիգենցիայի ստվար մասը, հատկապես նրա վարի շերտերը (մասսայական ուսուցիչները, գյուղատնտեսները և այլն) հենց սկզբից իրենց նվիրաբերեցին պրոլետարիատի աշխատանքին ու պայքարին: Իսկ գլխավորապես բարձրորակ ինտելիգենցիայի ռեակցիոն տարրերը միայն «հաշտվեցին» Խորհրդային իշխանության հետ, տարվելով սմենովեխյան հովերով:

... Քաղաքացի Քաջազնունին, չնայած իր ծերունի հասակին, երիտասարդի պես ոգևորվում է մեր շինարարությամբ, մեր կուլտուրական վերելքով: Սակայն նա և նրա նմանները չեն ուզում կամ չեն կարողանում հաշտվել այդ շինարարության սոցիալիստական իմաստի ու բովանդակության հետ, շարունակելով զարդարված մնալ սոսկ լոյալության փետուրներով:

Խորհրդային Հայաստան, 29 սեպտեմբերի 1931թ.:

Ը. Կուսակցության կազմակերպական քախքախումը

234. ԱԽՖՍՀ Ժողկոմխորհին կից Պետքաղվարչության գրությունը ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմ ընկ. Կրինիցկուն, պատճենը Երևան ՀԿԿ Կենտկոմ ընկ. Կոստանյանին

2 հունվարի 1930թ.

Խիստ գաղտնի

Անձամբ

1926թ. հունիսի 21-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհի միջնորդությամբ մենք թույլատրել ենք քաղաքական էմիգրանտ գրող Ավետիք Իսահակյանի մուտքը Հայաստան: Վերջինս, ինչպես հայտնի է, մինչև էմիգրացիան և հետո, լինելով գործուն դաշնակ, բավական մոտ է կանգնած եղել Դաշնակցության ղեկավար վերնախավին: Ժամանելով Հայաստան, Իսահակյանը որոշ ժամանակ իրեն պահել է լոյալ, բայց այնուհետև, ինչպես մենք հաստատ պարզել ենք, նա խիստ գաղտնի կապվել է առանձին ընդհատակյա գործուն աշխատողների հետ: Հետագայում մենք ցանկանալով վերջնականապես բացել նրա քաղաքական դեմքը, արտասահմանից հաղորդման համաձայն, պարզել ենք, որ Դաշնակցություն կուսակցության ընդհատակյա կազմակերպությունը նրան լրիվ վստահում է և նույնիսկ առաջիկա 11-րդ համագումարի համար նրան նախատեսել է որպես իր պատվիրակ: Դա մի ավելորդ անգամ հաստատվում է նրանով, որ համագումարի հրավիրման պահին, մոտավորապես ապրիլ-մայիս ամիսներին, Իսահակյանը եռանդով ձգտում էր ստանալ թույլտվություն, ընդ որում, մերժվելու դեպքում նա նույնիսկ սպառնում էր ինքնագործունեությամբ: Նրա թույլտվությունը մենք մերժել ենք, ելնելով նրանից, որ Իսահակյանը, ստանալով թույլտվություն, համագումար է ընկնում որպես Հայաստանի պատվիրակ և դրանով իսկ խախտում է մեր պլանը, որն ուղղված է նրան, որ Հայաստանից ոչ մի պատվիրակ չթողնվի և այդպիսով համագումարին տրվի գաղութային բնույթ:

Այնուհետև ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց նրան թույլտվություն տալ 11-րդ համագումարի ավարտից հետո: Ընդ որում այդ հարցը մենք փոխադրեցինք Անդրերկրկոմ, որը հաստատեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը:

Նկատի ունենալով, որ Իսահակյանը մեծ վստահություն է վայելում Դաշնակցություն կուսակցության Արտասահմանյան բյուրոյում և Հայաստանում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում շրջելով դաշնակների միջավայրում, Արտասահմանյան բյուրոյին կտա Հայաստանի կազմակերպությունների դրության մասին ճիշտ տեղեկություններ և դրանով իսկ կժխտի կազմակերպության վիճակի մասին մեր այն կարծիքը, որն ստեղծվել է մեր մարդկանց միջոցով և որի հետևանքով հնարավոր է շարքերի կազմակերպական վերակառուցում (ղեկավար մարդկանց, կապավորների փոխարինում, ակտիվիստների մի մասի և մեր լրտուների մեկուսացում), ինչպես նաև չի բացառվում մեր երկու արժեքավոր լրտուների տապալումը, մենք այնուամենայնիվ կարծում ենք, որ Իսահակյանին նշված նկատառումներով չի կարելի բաց թողնել և խնդրում ենք վերանայել այդ հարցը:

ԱնդրՊՔՎ նախագահ՝ **Ռեդենս**

ԱնդրՊՔՎ գաղտնի բաժնի պետ՝ **Ցատուրով**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.45, թ.1: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

235. ՀայՊՔՎ կոլեգիայի Հատուկ խորհրդակցության որոշումը*

25 ապրիլի 1930թ.

Լսեցին. Թիվ 664 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացիներ՝ Գրիգոր Պապիկի Աղումյանի, 28 տարեկան, ամուսնացած, Աշտարակ գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, Դաշնակցություն կուսակցության անդամ 1926թ., <թվարկվում է ընդամենը 31 մարդ, Աշտարակի և էջմիածնի շրջաններից, որոնք մեղադրվել են Դաշնակցությանը պատկանելու, գաղտնի գործելու համար, հոդ. հոդ 67 և 68>:

Որոշեցին. <Դատապարտվել են համակենտրոնացման ճամբարի՝ մեկ մարդ 8, 7 մարդ 5 տարով, 5 մարդ 3 տարով: Մեկ մարդու համար բավարար է համարվել նախնական կալանքը և ազատ է արձակվել: Հինգ մարդ կալանքից ազատվել են մեղադրանքը չապացուցված լինելու պատճառով: Տվյալ գործից առանձնացվել և քննությունը շարունակելու մասին որոշում է ընդունվել 11 մարդու համար >:

Մեղադրական եզրակացություն*

Ըստ թիվ 664 քննչական գործի, քաղաքացիներ Գևորգ Եղիշի Զաքարյանի, 28 տարեկան, <ընդամենը 31 մարդ> մեղադրվում են հանցագործություններում, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Նախավերջին գործողությունից (ս.թ. փետրվար ամսին) հետո, երբ մեկուսացվել էին Աշտարակի և էջմիածնի շրջանների ընդհատակյա դաշնակցական կազմակերպության ղեկավարները, ազատության մեջ գտնվող այդ կազմակերպության որոշ անդամներ, ինչպես Գևորգ Զաքարյանը, Սիմոն Զազյանը, Աշոտ Մովսիսյանը և ուրիշներ, նորից ձեռնամուխ եղան կազմակերպական աշխատանքի...

Վերոշարադրյալի հիման վրա <բերվում են 31 մարդու տվյալները> մեղադրվում են այն բանի համար, որ գործուն մասնակցություն են ունեցել Դաշնակցություն կուսակցության ընդհատակյա կազմակերպության աշխատանքի մեջ, այսինքն գործել են հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Կազմված է 19 ապրիլի 1930թ.:

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.571, g.1, գ.31, թ.9-16, 17-20: Թարգմ. ռուս.:

** Շնականորեն որոշումը և տվյալ գործի մեղադրական եզրակացությունը երկու տարբեր փաստաթղթեր են: Սակայն նկատի ունենալով դրանց ընդհանրությունը, նպատակահարմար ենք համարել դնել նույն թիվ փաստաթղթի տակ՝ ինչպես այս, այնպես էլ հաջորդ բոլոր դեպքերում:*

236. ՀայՊՔՎ կոլեգիային կից Հատուկ խորհրդակցության որոշումը

26 մայիսի 1930թ.

Լսեցին. Թիվ 746 գործը*, հետևյալ քաղաքացիների մեղադրանքով՝ Ենգիբարյան Մկրտիչ Առաքելի, 29 տարեկան, Նոր Բայազետ քաղաքի բնակիչ, միջակ գյուղացի, արհեստավոր, կիսագրագետ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Գորոյան Լևոն Մկրտչի, 46 տարեկան, Նոր Բայազետ քաղաքի բնակիչ, միջակ գյուղացի, արհեստավոր, նախկին առևտրական, կիսագրագետ, Դաշնակցության անդամ, չդատված, ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Սաֆարյան Խալաթ Հովսեփի, 48 տարեկան, Մազրան գյուղի բնակիչ, դասատու, միջնակարգ կրթությամբ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Մելիքյան-Պողոսյան Մելիք Պողոսի, 29 տարեկան, Հաջիմուխան գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, կիսագրագետ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Խլղաթյան Վաղարշակ Ալեքսանդրի, 27 տարեկան, Վերին Ադիյաման գյուղի բնակիչ, ունևոր, ձայնազուրկ, անկուսակցական, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Տեր-Բարսեղյան Տեր-Մաթևոս Տեր-Մելիքսեթի, 60 տարեկան, հոգևորական, կիսագրագետ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Ամիրխանյան Սմբատ Հովհաննեսի, 52 տարեկան, Ադամխան գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ձայնազուրկ, գրագետ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Ժամհարյան Դանիել Հայրոյի, 40 տարեկան, Մարտունի գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ձայնազուրկ, կիսագրագետ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Երանոսյան Խաչատուր Հակոբի, 45 տարեկան, Բասարգեչար գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, կիսագրագետ, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68:

Որոշեցին. <Նշված ինը մեղադրյալները դատապարտվել են 3 տարով համակենտրոնացման ճամբարի: Նրանք ձերբակալված են եղել

** Գործով մեղադրվում է 24 մարդ:*

նույն օրը՝ 1930թ. մարտի 14-ին: Մյուս մեղադրյալների մի մասը դատապարտվել է այլ ժամկետներով (ավելի պակաս): Ոմանք արդարացվել են կամ բավարար է համարվել նախնական կալանքը:>

Մեղադրական եզրակացություն

Թիվ 1 քննչական գործի, ըստ մեղադրանքի Մկրտիչ Առաքելի Ենգիբարյանի, 29 տարեկան, Նոր Բայազետ քաղաքի բնակիչ և <ապա հետևում են ևս 23 մարդու տվյալներ: Գործում ընդամենը 24 մարդ:>

Տակավին 1927 թ. նախկին Նոր Բայազետի գավառում գոյատևել է գաղտնի դաշնակցական կազմակերպություն, որպիսին ղեկավարել են Նոր Բայազետի ուսուցիչ Գալուստ Ռշտունին, Սրապիոն Փոլոյանը և ուրիշներ: Ջանգվածային ձերբակալությունների ժամանակ Գալուստ Ռշտունին ձերբակալվել է, իսկ Սրապիոն Փոլոյանը բացակայել է Նոր Բայազետի գավառից, բնակվել է Երևան քաղաքում, բայց որոշ կապեր է ունեցել Դաշկուսակցության առանձին անդամների հետ: Ռշտունու բանտարկությունից և Փոլոյանի բացակայելուց հետո Նոր Բայազետի գավառում դաշկազմակերպությունը չի դադարեցրել իր գործունեությունը: Կազմակերպելով նոր գավառային կոմիտե և գավառակային կոմիտեներ, շարունակել է իր աշխատանքը, այն է՝ կապ է հաստատել Երևանի, Դաշնակցություն կուսակցության Կենտկոմի հետ, հանձին Նիկողոս Մուրադյանի՝ վերջինից հետագա աշխատանքի համար ցուցումներ ու դաշգրականություն ստանալու համար: 1927-1929թթ. նախկին Նոր Բայազետի գավառային կոմիտեի նախագահը եղել է Խաչատուր Խոյեցյանը, իսկ կոմիտեի անդամ և միաժամանակ գանձապահի պաշտոնակատար է եղել Մկրտիչ Ենգիբարյանը...

Ելնելով վերոհիշյալից փետրվարի 5-6-ին ձերբակալվել է 16 և մարտի 14-ին 8 մարդ: Քննության են վերցվել բոլոր 24-ը, որոնց ցուցմունքներով հաստատվել է վերոշարադրյալը:

Յուրաքանչյուրի նկատմամբ քննությունը պարզել է <բերվում են 24 մարդու քննության տվյալները:> Մեղադրվում են այն բանի համար, որ, լինելով գաղտնի դաշկազմակերպության անդամներ, վարել են կազմակերպական աշխատանք, մղել քարոզչություն, տարածել գրականություն՝ խորհրդային իշխանությունը թուլացնելու և խորտակելու կոչով, այսինքն կատարել հանցագործություն, որը նախատեսված է ՀԽՍՀ ՔՕ (1927թ. հրատ.) 67 և 68 հոդ. հոդ.:

Կազմված է 23 մայիսի 1930թ.:

Սևանի օկրուգի հակահետախուզության բաժնի լիազոր՝
Գրիգորյան

«Համաձայն եմ՝ » Սևանի օկրուգի հակահետախուզության
բաժնի պետ՝ Սրաբով

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.31, թ.75-84: Թարգմ. ռուս.:

237. ՀԽՍՀ ՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը

25 հուլիսի 1930թ.

Լսեցին. Թիվ 824 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացիներ՝ Հայրապետյան Լևոն Մարկոսի, 41 տարեկան, կուլակ-բանդիտ, անգրագետ, ՀԽՍՀ Հերհեր գյուղի բնակիչ, անկուսակցական, չդատված: ՀԽՍՀ ՔՕ 59, 74, 67 և 68 հոդ. հոդ.:

Մկրտչյան Սաֆրազ Մանուչարի, 40 տարեկան, Հերհեր գյուղի բնակիչ, կուլակ-ձայնազուրկ, կիսագրագետ, ՀԽՍՀ քաղաքացի, չդատված, ՀԽՍՀ ՔՕ 59, 74, 67 և 68 հոդ. հոդ.:

Հակոբյան Ենոք Մովսեսի, 24 տարեկան, Հերհեր գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, կիսագրագետ, ՀԽՍՀ քաղաքացի, չդատված: ՀԽՍՀ ՔՕ 59, 74, 67 և 68 հոդ. հոդ.: <Ապա բերվում են 7 այլ անձանց տվյալները:>

Որոշեցին. Հայրապետյան Լևոն Մարկոսի, 41 տարեկան: Գնդակահարել:

Մկրտչյան Սաֆրազ Մանուչարի, 40 տարեկան: Գնդակահարել:

Հակոբյան Ենոք Մովսեսի, 24 տարեկան: Գնդակահարել:

<Նույն գործով մեղադրվող մյուս 7 անձինք դատապարտվել են տարբեր պատիժների՝ 5-10 տարվա համակենտրոնացման ճամբարի՝ 4 մարդ և 1-3 տարվա ազատազրկման՝ 3 մարդ:>

Մեղադրական եզրակացություն

Թիվ 824 քննչական գործի՝ ըստ մեղադրանքի Դարալագյազի շրջանի Հերհեր գյուղի բնակիչներ Լևոն Մարկոսի Հայրապետյանի... <բերվում են ընդամենը 10 մարդու տվյալներ:>

1930թ. մարտ ամսվա սկզբին դասակարգային պայքարի սրման ժամանակ Դարալագյազի շրջանի Գնդևազ, Ղուշչի և Հերհեր գյուղերում որոշ ակտիվ դաշնակցականներ և հակահեղափոխական տարրեր օգ-

տագործելով այդ գյուղերի կտրվածությունը, իրենց շուրջը համախմբելով քաջամարտիկների, մղում են խորհրդային իշխանության դեմ զինված ելույթի կազմակերպված նախապատրաստական աշխատանք: Կազմակերպված զինված ելույթի կենտրոնը գտնվում էր Գնդևազ գյուղում, որտեղից կապ են ստեղծել Ղուշչի, Հերհեր գյուղերի հետ և սույն տարվա մարտի 9-10-ին գործել զինված հարձակում և նշված գյուղերում մի քանի օր իրենց ձեռքը վերցրել իշխանությունը:

... Հերհեր գյուղում հայտարարում են խորհրդային իշխանության տապալման մասին, ընտրում գյուղական պառլամենտ և 12 զինված մարդ ուղարկում Գնդևազի ճակատ: Երկու-երեք օր անց Հերհեր և մյուս գյուղերն են ժամանում կարմիր զորամասեր և կոմունարների խումբ: Հերհեր գյուղում զինված ելույթի մասնակիցները չհանձնվելով իշխանությանը, թվով 8 մարդ զենքով թաքնվում են և միանում Գնդևազ, Ղուշչի և Զանգեզուրի օկրուգի Բազարչայ գյուղերի փախստականներին: Վերջիններս միանալով հետագայում կազմավորում են զինված բանդա, կատարում ահաբեկչական գործողություններ (Հերհեր գյուղում սպանում են երկու ազնիվ կոմունիստների), Կոչբեկի լեռնանցքում կողոպտում են գծային բանվորներին, խլում են հեռախոսային ապարատը, կտրում են հեռագրային կապը Զանգեզուրի և Դարալագյազի միջև: Այսպիսով զինված բանդան տվյալ գյուղերի շրջանում գործում է մարտ ամսից մինչև հունիսի 25-ը և միայն նրանց նկատմամբ ձեռնարկած պատժիչ միջոցառումների, նրանց ընտանիքները արտաքսելու շնորհիվ բանդիտները ստիպված եղան հունիսի 25-ին ներկայանալ իշխանությանը:

Բանդիտների ներկայանալով ձերբակալվել և քննության են ենթարկվել հետևյալ անձինք՝ <բերվում են 10 անձանց տվյալները:>

Վերոհիշյալի հիման վրա սույն գործով մեղադրվում են <բերվում են նույն 10 մարդու տվյալները> խորհրդային իշխանության դեմ զինված ելույթ և բանդիտական շարժում կազմակերպելու և նրանում մասնակցելու, հակահեղափոխական աշխատանք ու հակախորհրդային քարոզչություն կատարելու մեջ, այսինքն հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ (1927թ. հրատ.) 59, 74, 67 և 68 հոդ. հոդ.:

Սույն գործի քննությունը համարել ավարտված և ՔԴՕ 211 հոդ. հիման վրա, ՀԽՍՀ ՊՔՎ դատախազի միջոցով հանձնել Հայաստանի ՊՔՎ կոլեգիայի արտադատարանային կարգով լսմանը:

Կազմված է 5 հուլիսի 1930թ.:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.31, թ.89-95: Թարգմ. ռուս.:

238. <Քաղվածքներ քնութագրերից, ներկայացված Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրելու համար>

Նոյեմբեր 1930թ.

Գրիգորյան Հազարապետ Համբարձումի. 1926թ. ընկ. Գրիգորյանը բացահայտել և վերացրել է ընդհատակյա դաշնակցական կազմակերպությունը Դարալագյազի շրջանում: 1928թ. ընկ. Գրիգորյանը բացահայտել և վերացրել է խոշոր դաշնակցական կազմակերպությունը էջմիածնի շրջանում, անձամբ ղեկավարելով գործողությունը:

Արշակունի Սուրեն Անդրիասի[7]. Լենինականի խորհրդայնացումից հետո 1921թ. մայիսի 2-ին ընկ. Արշակունին կուսակցական կոմիտեի կողմից առաջադրվել է գաղտնի-օպերատիվ մասի պետ՝ Լենինականի գավառի Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ և փոխարինելով Հեղկոմում զբաղված նախագահին, անձամբ ղեկավարել է բանդիտական խմբերի, փախուստի մեջ գտնվողների մնացորդների վերացման ամբողջ աշխատանքը, ինչպես նաև բացահայտել է դաշնակցական կազմակերպության մնացորդներին:

Բանդայի մեջ թափանցելու շնորհիվ ընկ. Արշակունին կարողացավ այնքան լավ ուսումնասիրել դաշնակցական կուսակցության կազմակերպությունը Զանգեզուրում, որ նրան հաջողվեց լրիվ վերացնել այդ կազմակերպությունը:

Օգանեզով Գրիգորի Հովհաննեսի. Լենինականում աշխատելու կարճ ժամանակամիջոցում ընկ. Օգանեզովը անմիջական մասնակցություն է ունեցել ինչպես դաշնակցության, այնպես էլ հակահետախուզության բաժնի գծով միջոցառումների մշակմանը: Տրանսպորտում բացահայտել է երկու դաշնակցական կազմակերպություն, իրենց կոմիտեով և երկաթուղու մի շարք գործակալների, որոնք կապ են ունեցել օտարերկրյա հետախուզության հետ և գործել օտարերկրյա պետությունների օգտին: Նրանք մեկուսացվել են տրանսպորտից և հանձնվել Հայաստանի ՊՔՎ-ի կոլեգիայի դատին:

Հայաստանի ՊՔՎ-ի նախագահ՝ **Աբուլյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.26, թ.106-107, 109-113: Թարգմ. ռուս.:

239. ՀայՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը

16 հունվարի 1931թ.

Լսեցին. Թիվ 1249 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացիների՝ Աբրահամյան Աբրահամ Տեր-Միքայելի, 60 տարեկան, Դարալագյազի շրջանի Մարտիրոս գյուղի բնակիչ, անկուսակցական, միջակ գյուղացի, ձայնազուրկ, կիսագրագետ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 74:

Գասպարյան Հազարապետ Գրիգորի, 56 տարեկան, Մարտիրոս գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, անկուսակցական, նախկին դաշնակ, ուրյադնիկ, կիսագրագետ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 74:

Բաբայան Սամսոն Լևոնի, 28 տարեկան, Մարտիրոս գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ենթակուլակ, անկուսակցական, կիսագրագետ, զորացրված կարմիրբանակային, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 74:

Հախնազարյան Սամսոն Մակարի, 40 տարեկան, Մարտիրոս գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ձայնազուրկ, նախկին դաշնակցական սպա, Դաշնակցություն կուսակցության անդամ, գրագետ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 74:

Արմաղանյան Կարապետ Սամսոնի, 36 տարեկան, Մարտիրոս գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, գրագետ, անկուսակցական, նախկին դաշնակցական բանակի ենթասպա: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 74:

Որոշեցին. <Ազատազրկման են ենթարկվել՝ առաջինը 5, երկրորդը՝ 3, երրորդը՝ 9 և վերջին երկուսը՝ 8 տարով:

Մեղադրական եզրակացություն

Թիվ 1249 քննչական գործի՝ ըստ մեղադրանքի Մարտիրոս գյուղի բնակիչներ՝ Աբրահամյան Աբրահամ Տեր-Միքայելի, Գասպարյան Հազարապետ Գրիգորի, Բաբայան Սամսոն Լևոնի, Հախնազարյան Սամսոն Մակարի, Արմաղանյան Կարապետ Սամսոնի:

1930թ. նոյեմբերի 26-ին Դարալագյազի շրջանի լիազորը բանդիտիզմի մեջ մասնակցելու կասկածանքով ձերբակալել և ուղարկել է ՀայՊՔՎ Դարալագյազի շրջանի Մարտիրոս գյուղի բնակիչներ <ապա բերվում են վերոհիշյալ 5 անձանց տվյալները>:

Պարզված է, որ համատարած կոլեկտիվացման ժամանակ Դարալագյազի շրջանի կուլակները և հակախորհրդային տարրերը, որպես տնտեսապես ուժեղ տնտեսություններ, ցուցաբերել են ակտիվություն... Գրեթե ամբողջ շրջանում տեղի է ունեցել կուլակության և հակախորհրդային տարրերի զինված ելույթ, որ սկսվել է 1930թ. մարտի առաջին օրերին (վերացվել է 1930թ. մայիսի կեսերին): Նրանք նվաճել են իշխանությունը...

Խումբը 1930թ. մարտի սկզբին շրջանի գյուղերում կատարել է ուժեղ հակախորհրդային կազմակերպչական աշխատանք բանդիտական շարժումն ընդլայնելու ուղղությամբ, սերտ կապ է պահպանել ամբողջ շրջանի բանդղեկավարների, մասնավորապես խմբապետներ Մարտիրոսի և Կարդաշխանի հետ: Մարտին խումբը Մարտիրոս գյուղում, Բաբայանի տանը, հանդիպում է ունեցել Մարտիրոսի հետ...

Նրանց պրովոկացիոն աշխատանքը ստիպել է փախուստի դիմել լեռները գյուղերի բոլոր խաղաղ բնակիչներին և թաքնվել իշխանություններից:

Բանդիտները գործել են Երևանի օկրուգում և Նախիջևանում, պարտություն կրելով, նահանջել են Նախիջևան և կանգ առել Ռամաշան գյուղում:

1930թ. հուլիսին նշված մեղադրյալները Դարալագյազի շրջանի լիազորի առաջարկությամբ ներկայացել են՝ այն բանից հետո, երբ նրանց ուղարկվել է գրավոր երաշխիք ազատ բնակության իրավունքի մասին: Նշված մեղադրյալները ներկայանալուց հետո չեն խզել կապը բանդիտական խմբերի հետ և շարունակել են հակախորհրդային աշխատանք տանել գյուղում, որի համար և նոյեմբերի 26-ին ձերբակալվել են:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.29, թ.34-36, 37-38: Թարգմ. ռուս.:

240. ՀայՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը

16 հունվարի 1931թ.

Լսեցին. Թիվ 1246 գործը, ըստ սեղադրանքի քաղաքացի՝ Ասլանյան Սմբատ Հովհաննեսի, 51 տարեկան, Դարալագյազի շրջանի Փաշալու գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, կիսագրագետ, նախկին դաշնակցական կոմիսար, անկուսակցական, չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 17-74:

Հովհաննիսյան Տիգրան Աբրահամի, 52 տարեկան, Փաշալու գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, անկուսակցական, նախկին դաշնակցական կոմիսար, Դաշնակցություն կուսակցության անդամ. կիսագրագետ,

չդատված: ՀԽՍՀ ՔՕ հոդ. 17-74:

Որոշեցին. Ասլանյան Սմբատ Հովհաննեսի, 51 տարեկան, բանտարկել համակենտրոնացման ճամբարում 5 տարի ժամկետով, հաշվելով 1930թ. նոյեմբերի 26-ից:

Հովհաննիսյան Տիգրան Աբրահամի, 52 տարեկան, բանտարկել համակենտրոնացման ճամբարում 5 տարի ժամկետով, հաշվելով 1930թ. նոյեմբերի 26-ից:

Մեղադրական եզրակացություն

Ըստ թիվ 1246 քննչական գործի քաղաքացիներ Սմբատ Հովհաննեսի Ասլանյանի և Տիգրան Աբրահամի Հովհաննիսյանի, մեղադրվում են հանցագործություններում, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ հոդ. 17-74:

1930թ. նոյեմբերի 26-ին Դարալագյազի շրջանի լիազորը բանդիտիզմի մեջ կասկածանքով ձերբակալել և Հայաստանի ՊՔՎ է ուղարկել Դարշրջանի Փաշալու գյուղի բնակիչներ Սմբատ Ասլանյանին (միջակ գյուղացի) և Տիգրան Հովհաննիսյանին:

Համատարած կոլեկտիվացման ժամանակ Դարալագյազի շրջանի կուլակության և հակախորհրդային տարրերի կատարած աշխատանքի... հետևանքով ամբողջ Դարշրջանում տեղի են ունեցել զինված ելույթներ խորհրդային իշխանության դեմ:

Փաշալու գյուղում խորհրդային իշխանությունը խորտակելու նպատակով զինված ելույթների կազմակերպիչները և մասնակիցներն են Սմբատ Ասլանյանը, Տիգրան Հովհաննիսյանը և ուրիշներ:

Ստեղծված դրության հետևանքով Փաշալու գյուղի կոմունիստները հեռացան շրջկենտրոն՝ Քեշիշքենդ: 1930թ. մարտի վերջին նշված անձինք, տեղի կուլակության և հակախորհրդային տարրերի հետ, օգտվելով կոմունիստների հեռացումից, ցանկացան իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, հրավիրելով ընդհանուր ժողով: Փաշալուում տեղի ունեցած ժողովում, որին մասնակցել են 60-70 բանդիտներ, հայտնի քաղաշխատող Կարապետ Հարությունյանի գլխավորությամբ, ընտրել են 5 մարդուց բաղկացած կառավարություն, հետևյալ կազմով... Այնուհետև նորընտիր կառավարության ղեկավար է ընտրվել Սմբատ Ասլանյանը (գյուղական կոմիսար)... ժողովում հակախորհրդային ճառով հանդես է եկել բանդղեկավար Կարապետ Հարությունյանը: Ժողովում տեղի է ունեցել նոր համակիրների հավաքագրում, թվով 13 մարդ (Մաղաք և Արշակ Ասլանյաններ, որոնք բոլորն այժմ գտնվում են բանդայում): Ժողովից հետո Հարությունյանի բանդան Փաշալուից մեկնել է Գնդևազ...

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.29, թ.31-32, 33: Թարգմ. ռուս.:

241. *Հայաստանի ՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը*

10 մարտի 1931թ.

Լսեցին. Թիվ 4079 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացի՝ Սմբատ Կուրղինի Բագրատունու, 47 տարեկան, Դուզքենդի շրջանի Ղոնախղռան գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ամուսնացած, գրագետ, նախկին դաշնակցական, չդատված: Ըստ ՀԽՍՀ ՔՕ հոդ. 68:

Որոշեցին. Սմբատ Կուրղինի Բագրատունուն՝ 47 տարեկան, բանտարկել համակենտրոնացման ճամբարում, 5 տարով, բանտարկության ժամկետը հաշվելով 1931 թ. մարտի 10-ից:

Մեղադրական եզրակացությունից

Թիվ 4079 քննչական գործի, ըստ մեղադրանքի քաղաքացի Սմբատ Կուրղինի Բագրատունու դաշնակցական ընդհատակյա աշխատանք կատարելու համար, հանցագործություն, որը նախատեսված է ՀԽՍՀ ՔՕ հոդ. 68 (1927թ. հրատ.):

... Վերոշարադրյալի հիման վրա Սմբատ Կուրղինի Բագրատունին, 47 տարեկան, Կարսի մարզի Բայգարա գյուղի ծնունդ, բնակվում է Դուզքենդի գավառամասի Ղոնախղռան գյուղում, ամուսնացած, գրագետ, նախկին կուլակ, այժմ ունի միջակ տնտեսություն, ՀԽՍՀ քաղաքացի, նախկին դաշնակ, ակտիվ մաուզերիստ, մասնակցել է <Դուզքենդի գավառամասի> կոմիտեի և գյուղական խմբերի ներկայացուցիչների բոլոր ժողովներին, գումար է հավաքել իր ենթաշրջանի գյուղերում: Կապված լինելով Թիֆլիսի կոմիտեի հետ, հաճախ մեկնել է այնտեղ՝ կապի համար և աշխատել Թիֆլիսի կոմիտեի ղեկավարությամբ: Կոմիտեի նախագահ Սարդար Երեմյանի և կազմակերպության մյուս անդամների ձերբակալության ժամանակ Բագրատունին փախել է շրջանից և երկար ժամանակ գտնվել Թիֆլիսում, Դաշնակցության Թիֆլիսի կոմիտեի տրամադրության տակ:

Երեմյանի բանտարկությունից հետո Բագրատունին եղել է նրա տեղակալը, կապ է պահպանել գյուղերի հետ և տվել աշխատանքային

ցուցումներ:

Հարցաքննության ժամանակ ընդունել է իր գործունեությունը և դերը դաշկազմակերպության մեջ, բայց չի մատնել գյուղական բոլոր աշխատողներին, որոնց հետ ունեցել է կապ: Իրեն մեղավոր է ճանաչել դաշնակցական ընդհատակյա աշխատանք տանելու մեջ, հանցագործություն, որը նախատեսված է ՀԽՍՀ ՔՕ հոդ. 68:

12 փետրվարի 1931թ., ք. Լենինական:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, g.1, գ.39, թ.43-44, 45: Թարգմ. ռուս.:

242. Հայաստանի ՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը

15 մարտի 1931թ.

Լսեցին. Թիվ 1241 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացի՝ Սարգիս Խաչատուրի Բարխուդարյանի, 39 տարեկան, Մեղրու շրջանի Լիճք գյուղի բնակիչ, անտառապահ, գրագետ, ՀԱՄԿ(բ)Կ նախկին անդամ, կուսակցությունից հեռացված 1929թ. կաշառակերության համար, ամուսնացած, չդատված: Ըստ ՀԽՍՀ ՔՕ 68-71, 74 հոդ. հոդ.:

Որոշեցին. Սարգիս Խաչատուրի Բարխուդարյանին, 39 տարեկան, բանտարկություն համակենտրոնացման ճամբարում, 10 տարով, նրան պատկանող անձնական գույքի բռնագրավումով: Բանտարկության ժամկետը հաշվել 1930թ. դեկտեմբերի 7-ից:

Մեղադրական եզրակացությունից

Թիվ 1241 քննչական գործի՝ քաղաքացի Սարգիս Խաչատուրի Բարխուդարյանի, ըստ մեղադրանքի ՀԽՍՀ ՔՕ 68 և 74 հոդ. հոդ.:

Վերոշարադրյալի հիման վրա Սարգիս Խաչատուրի Բարխուդարյանը, Մեղրու շրջանի Լիճք գյուղի բնակիչ, ծառայող՝ անտառապահ Մեղրիում, տարրական կրթությամբ, ամուսնացած, ՀԽՍՀ քաղաքացի, չդատված, վտարված ՀԱՄԿ(բ)Կ-ից 1929թ. ազգամիջյան ընդհարումներում գործուն մասնակցության և կաշառակերության համար, մեղադրվում է նրա համար, որ լինելով Մեղրու շրջանի տեղեկատվական կետի ռեզիդենտ, իմացել է դաշնակցական գաղտնի կազմակերպության գոյության մասին, կապ է ունեցել այդ կազմակերպության և նրա անդամների հետ, նրանց ոգևորել խորհրդային իշխանության մոտալուտ տապալումով, հպարտացել է, որ շուտով երևալու է իր բարեկամ, հայտնի դաշնակ, Հայաստանում քաղաքացիական կռիվների ժամանակ ուլատժիչ ջոկատի նախկին պետ Թովմաս Բարխուդարյանը, որը 1921թ.

քաքնվում է ՊՔՎ մարմիններից, նամակագրական կապ է ունեցել դաշնակցական բարեկամ Ալեքսան Բարխուդարյանի հետ, նյութական օգնություն է ցույց տվել գնդակահարված քաղաքական բանդիտ Մակար Բարխուդարյանի ընտանիքին, իմացել է Օրդուբադի շրջանում գործող բանդայի տեղը, 1930թ. սեպտեմբերին հանդիպել է բանդային թաքցնողների ու օգնողների հետ և այդ ամենը թաքցրել Մեղրիի տեղեկատվական կետից, մեղադրանքներ, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ 68, 69 և 74 հոդ. հոդ.(1927թ. հրատ.):Կազմված է 13 մարտի 1931թ.:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, g.1, գ.39, թ.77-78, 79: Թարգմ. ռուս.:

243. Հայաստանի ՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը

12 ապրիլի 1931թ.

Լսեցին. Թիվ 4076 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացի Լևոն Մեսրոպի Սաֆարյանի, 38 տարեկան, Վաղարշապատի շրջանի Հաջիղարա գյուղի բնակիչ, կուլակ-ձայնազուրկ, կուլակաթափված, բնակվում է Երևանում սեփական տանը, ամուսնացած, առևտրական, Դաշնակցության անդամ, չդատված: ՀԽՍՀ ՔՕ 67, 68, 70 հոդ. հոդ.:

Որոշեցին. Լևոն Մեսրոպի Սաֆարյանին, 38 տարեկան, գնդակահարել: Բռնագրավել անձամբ նրան պատկանող գույքը:

Մեղադրական եզրակացությունից

Թիվ 4076 քննչական գործի՝ Լևոն Մեսրոպի Սաֆարյանի, ըստ մեղադրանքի ՀԽՍՀ ՔՕ 67, 68, 70 հոդ. հոդ. (1927թ. հրատ.):

... Վերոշարադրյալի հիման վրա Լևոն Մեսրոպի Սաֆարյանը, Էջմիածնի շրջանի Հաջիղարա գյուղի բնակիչ, ամուսնացած, կուլակ, ձայնազուրկ 1926թ., կուլակաթափված, բնակվում է Երևանում իր սեփական տանը, միաժամանակ ունի խոշոր կուլակային տնտեսություն գյուղում, զբաղվել է գինու մեծածախ առևտրով, խոշոր քանակներով արտահանելով Միության տարբեր քաղաքներ, չդատված:

Մեղադրվում է նրա համար, որ 1921թ. փետրվարյան դաշնակցական խռովության ժամանակ եղել է դաշնակցական Արտակարգ հանձնաժողովի գաղտնի աշխատակից, մինչև նրա վերացումը: 1929թ. մտել է ընդհատակյա դաշնակցական կազմակերպության մեջ: Կուլակության որպես դասակարգ վերացման ժամանակ կուլակաթափվել է և ար-

տաքսվել գյուղից: Գտնվելով Երևանում մեղադրյալ Լևոն Սաֆարյանը կապված է եղել Հաջիղարա գյուղի դաշնակցական կազմակերպության անդամների հետ, նրանց ցուցումներ տվել հետագա աշխատանքի համար: 1930թ. մայիսին, թաքցնելով իր սոցիալական դրությունը, խցկվել է բանվորների շարքերը և ծանոթությամբ սևագործ բանվոր դասավորվել Հայպետշինում, հանցագործություն, որը նախատեսված է ՀԽՍՀ ՔՕ 67, 68 և 70 հոդ. հոդ.:

Կազմված է 3 ապրիլի 1931թ.: Երևան:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, g.1, գ.39, թ.149, 150-151: Թարգմ. ռուս.:

244. ՀայՊՔՎ կոլեգիայի դատական նիստի որոշումը

12 ապրիլի 1931թ.

Լսեցին. Թիվ 4236 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացի Արտաշես Գալուստի Դադալյանի , 32 տարեկան, Գորիս գյուղի բնակիչ, ամուսնացած, Դաշնակցություն կուսակցության անդամ, չդատված, մեղադրվում է ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 68, 74 և 107:

Որոշեցին. Արտաշես Գալուստի Դադալյան, 32 տարեկան, գնդակահարել: Բռնագրավել անձամբ նրան պատկանող գույքը:

Մեղադրական եզրակացություն

Ըստ մեղադրանքի քաղ. Գորիսի շրջանի Հին Գորիս գյուղի բնակիչ Արտաշ Դադալյանի, ծնված 1898թ.:

... Վերոշարադրյալի հիման վրա քաղ. Արտաշես Գալուստի Դադալյանը մեղադրվում է այն բանի համար, որ լինելով Հին Գորիս գյուղի դաշնակցական խմբում, եղել է տեղական իշխանության դեմ ապստամբության կազմակերպիչներից մեկը, գտնվել է Գորիսի շրջանի բանդիտական խմբակներում և թաքնվել իշխանություններից, հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 74, 68 և 107 (1927թ. հրատ.):

Կազմված է 4 մարտի 1930թ.:

Տեղեկանք. մեղադրյալ Արտաշ Դադալյանը ձերբակալվել է 1930թ. հուլիսի 8-ին, Ստալինաբադ կայարանում: 1931թ. հունվարի 31-ին էտապով բերվել է ՀԽՍՀ ՊՔՎ Զանգեզուրի տրամադրության տակ, կալանքի տակ է պահվում Գորիսի ուղղիչ աշխատանքային տանը:

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.571, g.1, գ.39, թ.139, 140-141: Թարգմ. ռուս.:

245. Հայաստանի ՊՔՎ հատուկ խորհրդակցության որոշումը

4 նոյեմբերի 1931թ.

Լսեցին. Թիվ 4974 գործը, ըստ մեղադրանքի ընդդեմ՝ Ասատուր Վլասի Հակոբյանի (Սաֆարյանի), 1909թ. ծնված, միջակ գյուղացի, Աշտարակի շրջանի Ղզլբամուր գյուղի բնակիչ, միջնակարգ կրթությամբ, զբաղվում է ուսուցչությամբ, չամուսնացած, բանակում չի ծառայել, չի դատվել: Ըստ ՀԽՍՀ ՔՕ 68 հոդ:

Հովակիմ Ալեքսանդրի Հովակիմյանի, 1906թ. ծնված, տարրական կրթությամբ, Աշտարակի շրջանի Ղզլբամուր գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ամուսնացած, զինվորական ծառայությունից ազատված է 1-ին կարգի արտոնությամբ, չի դատվել: Ըստ ՀԽՍՀ ՔՕ 68 հոդ.:

Որոշեցին. Ասատուր Վլասի Հակոբյանին (Սաֆարյանին), 1909թ. ծնված, աքսորել Սիբիր 3 տարով:

Հովակիմ Ալեքսանդրի Հովակիմյանին, 1906թ. ծնված, աքսորել Սիբիր 3 տարով:

Երկուսի համար էլ աքսորի ժամկետը հաշվել 1931թ. մայիսի 26-ից:

Մեղադրական եզրակացությունից

Ըստ թիվ 4974 քննչական գործի՝ Աշտարակի շրջանի Ղզլբամուր գյուղի բնակիչներ Ասատուր Վլասի Հակոբյանի (Սաֆարյանի) և Հովակիմ Ալեքսանդրի Հովակիմյանի: ՀԽՍՀ ՔՕ 68 հոդ.:

... Շարադրվածի հիման վրա՝ Ասատուր Վլասի Հակոբյանը (Սաֆարյանը), ծնված 1909թ., միջակ գյուղացի, Աշտարակի շրջանի Ղզլբամուր գյուղի բնակիչ, միջնակարգ կրթությամբ, զբաղվում է ուսուցչությամբ, չամուսնացած, բանակներում չի ծառայել, չդատված (իր խոսքով), մեղադրվում է Ղզլբամուր գյուղի երիտասարդ դաշնակցականների ընդհատակյա կազմակերպությանը անդամակցելու, դաշնակցականների կենտրոնական կազմակերպության անդամներ Հովհաննիսյանի և Նիկողոսյանի հետ կապ ունենալու, քաղփախստական Այվազի համար նրանց փող հանձնելու մեջ:

Հովակիմ Ալեքսանդրի Հովակիմյանը, ծնված 1906թ., տարրական կրթությամբ, Ղզլբամուր գյուղի բնակիչ, միջակ գյուղացի, ամուսնացած, չդատված (իր խոսքով)՝ մեղադրվում է Աշտարակի շրջանի Ղզլբամուր գյուղում երիտասարդ դաշնակցականների խումբ կազմակերպելու և ղեկավարելու, գյուղացիների շրջանում հակախորհրդային, մասնավորապես զատիկի ժամանակ զոհաբերության համար անասուն-

ներ մորթելու քարոզչության մեջ:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.36, թ.78-80: Թարգմ. ռուս.:

246. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Խանջյանին

19 նոյեմբերի 1931թ.

Խիստ գաղտնի

Անձամբ

Թիվ 001908

ՀայՊՔՎ Դարալագյազի շրջբաժնից ստացված տեղեկությունների համաձայն ս.թ. հոկտեմբերի 25-ին Գնդևազ գյուղում կոլտնտեսային շարժման հարցի կապակցությամբ դրված է եղել Փաշալուի շրջգործկոմի նախագահ ընկ. Բերբերյանի զեկուցումը: Իր խոսքում ընկ. Բերբերյանը իմիջիայլոց ասել է. «Այն գյուղացին, որը կոլխոզ չի մտնում, մեր թշնամին է»:

Զեկուցման ավարտից հետո ընկ. Բերբերյանի առաջարկությամբ կազմվել է օժանդակող խումբ, կոլտնտեսության նախագահի, կոոպխանութի վաճառողի և կուսբջիջի քարտուղարի կազմով, խնդիր ունենալով անհատական մշակման ենթարկել առանձին գյուղացիների, նրանց կոլխոզ ներգրավելու նպատակով:

Հետևելով ընկ. Բերբերյանի դրույթին, նախաձեռնող խումբը, մշակելով առանձին անհատական տնտեսատերերի, նրանց առաջ հարց է դրել՝ «Եթե դու դաշնակ չես, պետք է գրվես կոլխոզ»:

ՀայՊՔՎ նախտեղ.՝ **Սուղդուսի**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.11, գ.50, թ.112: Բնագիր: Մեքենագիր: Բերվում է փաստաթղթի սկզբի մասը: Թարգմ. ռուս.:

247. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Խանջյանին

8 դեկտեմբերի 1931թ.

Խիստ գաղտնի

Թիվ 02/2696

Հայտնում ենք, որ ս.թ. նոյեմբերի 25-ին 20 կոլտնտեսականներ՝ Աշտարակի շրջանի Ղարաջորան գյուղի բնակիչներ եկել են շրջկենտրոն՝ Աշտարակ, պահանջելով իրենց հեռացնել կոլխոզից և վերադարձնել անասունները: Շրջկենտրոնում նրանց մերժել են վերադարձնել անասունները և հայտարարել են, որ տեղական կազմակերպությունները կօգնեն իրենց՝ կանոնադրությանը համապատասխան: Նշված կոլտնտեսականներից 12 մարդ նույն օրը մեկնել են Երևան՝ Կոլխոզկենտրոն, նույն պահանջով:

Այդ ելույթի նախաձեռնողներն են՝ 1. Հաբեթ Վարդանյանը, 35 տարեկան, միջակ գյուղացի, 2. Գերասիմ Կարապետյանը, 40 տարեկան, միջակ գյուղացի (հորեղբոր տղան բանտարկված է ՀայՊՔՎ-ի կողմից), 3. Արմենակ Ամիրխանյանը, 38 տարեկան, միջակ գյուղացի (հորեղբոր տղան բանտարկված է ՀայՊՔՎ-ի կողմից) և 4. Գարուշ Կարապետյանը:

Նշված գյուղում գոյություն ունի հակախորհրդային խումբ, որի մեջ են տվյալ գյուղացիները: Խումբը գյուղում մղում է հակակոլտնտեսային աշխատանք, մշակելով առանձին կոլտնտեսականների, կոլտնտեսությունից դուրս գալու մտքով:

Խմբի անդամ Ամիրխանյանը կոլխոզի ժողովում բացահայտ ելույթ է ունեցել, կոչ անելով «կոլխոզից դուրս գալ, քանի որ կոլխոզը ոչինչ չի տալիս և նրա անդամները սոված են»:

ՀայՊՔՎ խորացված աշխատանք է տանում պարզելու կոլխոզի քայքայման իսկական պատճառները և հիմնական նախաձեռնողներին:

Դրան զուգահեռ ՀայՊՔՎ անհրաժեշտ է գտնում կատարել Ղարաջորան գյուղի կոլխոզի հետազոտություն, որի համար խնդրում է Կենտկոմի համապատասխան կարգադրությունը:

ՀայՊՔՎ նախտեղ.՝ **Սուղդուսի**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.11, գ.50, թ.119: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

248. ՀԽՍՀ Ժողկոմխորհի լրավճարի միջոցներով պահվող հաստիքների բացատրագրից

<26 դեկտեմբերի 1931թ. >*

Դաշնակցական հակահեղափոխական գաղափարախոսությունը մեծ մասամբ ստանում է բանդիտիզմի, զինված հարձակումների, ապստամբական շարժման, բնակչության ահաբեկման և արտագաղթի տրամադրությունների ձև: Այդ գաղափարախոսությունը զանազան ուղիներով, մեր թուլության պատճառով, թափանցելով կարմիր բանակ, ներգործում է կարմիրբանակային զանգվածների անկայուն խավերի, իսկ բնականից դուրս փոխարինող ու պահեստի կազմի, նախագորակոչային ների ու զորակոչայինների վրա, դրանով իսկ լուրջ վտանգ դառնում զորահավաքի համար: Ուստի բոլորովին ակնհայտ է, որ մեր կարմիր բանակի ու պահեստայինների բարոյաքաղաքական վիճակի պահպանության համար ինչպես այժմ, այնպես էլ ապագայում պետք է ուժեղացվի ՊՔՎ-ում բացառիկ տեղ ունեցող հատուկ բաժնի աշխատակազմը:

... Դաշնակիզմով. բանդիտիզմով, արտասահմանյան լրտեսությամբ վարակված Դարալագյազի, Վեդու, Աղբաբայի, Ղամարլուի, Թալինի, Աբարանի և Իջևանի շրջանները իսկապես պետք է ուժեղացվեն օպերատիվ չեկիստական կադրերով, որպեսզի նորմալ պայմաններ ստեղծվեն այդ շրջաններում ամբողջ խորհրդային և կուսակցական աշխատակազմերի աշխատանքի համար:

Դարալագյազի, Վեդու, Աշտարակի ՊՔՎ-ի աշխատակազմերի թուլության օրինակը և այդ շրջաններում տեղի ունեցած իրադարձությունները ահազանգում են պրոլետարիատի մարտական մարմին Պետքաղվարչությունը նման վիճակում թողնելու լուրջ վտանգի մասին...

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.11, գ.50, թ.125-127: Թարգմ. ռուս.:

* *Ժամանակը որվում է ըստ կից գրության. տես ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ. 1, ց. 11, գ. 50, թ. 124:*

249. Հայաստանի ՊՔՎ. կոլեգիայի դատական նիստի որոշումը

27 դեկտեմբերի1931թ.

Լսեցին. Թիվ 4853 գործը, ըստ մեղադրանքի քաղաքացի՝ Սարգիս Գևորգի Ասատրյան-Գևորգյանի, 1894թ. ծնված, գրագետ, ամուսնացած, արևմտահայ, ԽՍՀՄ քաղաքացի, մասնագիտությամբ խառատ, Դաշնակցություն կուսակցության անդամ, երկու անգամ դատված՝ «Մաուզեր» ատրճանակ պահելու և սպանության համար: Ըստ ՀԽՍՀ ՔՕ 68, 109 և 214 հոդ. հոդ.:

Որոշեցին. Սարգիս Գևորգի Ասատրյան-Գևորգյանին, 1894թ. ծնված, աքսորել համակենտրոնացման ճամբար տասը տարով, բանտարկության ժամկետը հաշվելով 1931թ. հուլիսի 22-ից: Բռնագրավել անձամբ նրան պատկանող գույքը և խուզարկության արձանագրությամբ վերցված իրերն ու զենքը:

Մեղադրական եզրակացություն

Թիվ 4853 քննչական գործի. ըստ մեղադրանքի ընդդեմ քաղաքացի Սարգիս Գևորգի Գևորգյանի: ՀԽՍՀ ՔՕ 68, 109 և 214 հոդ. հոդ.:

Սույն թվականի հուլիսի կեսերին Նախիջևանի 41-րդ սահմանապահ ջոկատում տվյալներ ստացվեցին այն մասին, որ Դարաշամբ գյուղից (Պարսկաստան) ոմն Սարգիս Դաշնակցություն կուսակցության Թավրիզի կոմիտեի հանձնարարությամբ մտադիր է գաղտնի անցնել պետսահմանը, կապ հաստատելու համար Հայաստանում Դաշնակցություն կուսակցության ընդհատակյա կազմակերպության հետ:

Հուլիսի 22-ին սահմանն անցնելիս Սարգիսը ձերբակալվեց Երևան մեկնող գնացքում: Խուզարկությամբ Սարգսի մոտ հայտնաբերվեց լիցքավորված «Մաուզեր» տեսակի ատրճանակ, 70 մարտական փամփուշտներով և տարբեր հասցեներով նամակներ:

Նախնական քննությամբ պարզվել է, որ Ախսրով գյուղի (Թուրքիա) բնիկ բնակիչ քաղաքացի Սարգիսը Երևանում բնակվող Սարգիս Գևորգի Ասատրյան-Գևորգյանն է: Նա դժգոհ լինելով խորհրդային իշխանությունից և 250 ռուբլու պարտք ունենալով հանքմետաղառին, 1930թ. համատարած կոլեկտիվացման ժամանակ գաղտնի անցել է Պարսկաստան. ապրել է Թավրիզ քաղաքում իր բաջանաղ, պարսկահպատակ Վարդան Հովսեփյանի մոտ:

Ընթացիկ տարում Ասատրյանը նախապես պայմանավորվելով որոշ քաղաքական էմիգրանտների հետ հատուկ վարձահատուցումով, պար-

տավորվում է գաղտնի անցնել ՀԽՍՀ սահմանը և նրանց ընտանիքները անցկացնել Թավրիզ:

Յոթանասուն թուման ստանալով քաղէմիգրանտ-դաշնակ Ալեքսան Մուրադյանից (անցյալ տարի գաղտնի անցել է Պարսկաստան), հենց այնտեղ 15 թումանով գնելով «Մաուզեր» տեսակի ատրճանակ (իր խոսքերով) և մեքենայով Թավրիզից Դարաշամբ գյուղ մեկնող ոմն Սուրեն վարորդի հետ հասնում է Դարաշամբի քոչավայրերը: Կանգ առնելով այստեղ և զրույց ունենալով ոմն դաշնակ կապավոր Կոստանի հետ, նրան հայտնել է սահմանն անցնելու իր մտադրության մասին:

Թավրիզում Ասատրյանը շփվել է քաղէմիգրանտների հետ, տեղեկացել իրադարձություններին, այն է՝ Դարալագյազի շրջանի բանդիտական շարժման ղեկավար դաշնակ Պարույրի գտնվելը հայտնի դաշնակցական գործիչ Ռուբեն փաշայի մոտ Թեհրանում, այստեղ դաշնակների կոնֆերանսում նրա մասնակցությունը, պարսկական իշխանությունների կողմից անցյալ տարի ՀԽՍՀ-ից Պարսկաստան փախած դաշնակցական խմբապետներ Մուրուք-Կարոյի, Ղազարի և այլոց ներբակալությունը:

Ասատրյանը մեկուսացած լինելով ՊՔՎ-ի կամերայում, երկաթե ցանցը ջարդելով, մտադիր է եղել դիմել փախուստի, որի մասին խոստովանել է ինքը:

Ներկայացվող մեղադրանքներում մեղադրյալ Ասատրյանը իրեն ճանաչել է հանցավոր...

Շարադրվածի հիման վրա Սարգիս Գևորգի Ասատրյան-Գևորգյանը... մեղադրվում է նրանում, որ գաղտնի անցել է պետական սահմանը, նպատակ ունենալով քաղէմիգրանտների ընտանիքների անցկացումը, փորձել է փախուստի դիմել կալանքից, այսինքն հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀԽՍՀ ՔՕ 68, 109 և 214 հոդ. հոդ.:

Կազմված է 27 նոյեմբերի 1931թ., ք. Երևանում:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.35, թ.96, 97-98: Թարգմ. ռուս.:

Գլ. VIII

Աքսորավայրերում ու բանտերում

(ներման խնդրագրեր)

250. Ժողկոմխորհի նախագահ ընկ. Լուկաշինին

27 փետրվարի 1923թ.

Թիվ 539/գ

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը հայտնում է, որ ըստ քաղաքացի Մուսինյանի դիմումի՝ նրա որդի Թադևոս Մուսինյանի Հայաստան գալու մասին, մեր կողմից միջնորդություն է արվել Անդրարտհանձնաժողովի առաջ թույլատրելու Թադևոս Մուսինյանին գալ Հայաստան, պայմանով, որ նա անմիջապես մեկնի Մոսկվա ուսումը շարունակելու համար, քանի որ մենք ունենք հավաստի տեղեկություններ, որ նա դաշնակցական ուսանողական կազմակերպության անդամ է և Հայաստանում նրա ներկայությունը Հայարտհանձնաժողովը գտնում է անցանկալի: Այդ մասին ժամանակին հայտնվել է Ձեզ 1922թ. դեկտեմբերի 2-ի թիվ 1955/գ գրությամբ:

Անդրարտհանձնաժողովը, ի պատասխան մեր հարցումի, իր 1922թ. դեկտեմբերի 20-ի թիվ 12432 գրությամբ Թադևոս Մուսինյանի այցը արգելել է, որի վերաբերյալ Ձեզ ևս հայտնի է դարձվել մեր դեկտեմբերի 27-ի թիվ 2265/գ գրությամբ:

Արտհանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Մելիք-Հովսեփյան**

Գրանցման բաժնի պետ՝ **Թովմասյան**

<Մակագրություն> Արտհանձնաժողով, անձամբ Ամիրխանյանին. Լուկաշինի կարգադրությամբ բաց թողնել Երևանով Մոսկվա սովորելու համար: Գ. Պարզյան*:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ.121, թ.10 և հակ.: Թարգմ. ռուս.:

** Գ. Պարզյանը եղել է ՀԽՍՀ ժողկոմխորհի քարտուղարը:*

251. Հայկական ԽՍՀ Դատախազին

16 հուլիսի 1923թ.

Թիվ 1650

Կարելիայի աշխատավորական կոմունայի բանտերի վարչությունը սույնին կից Ձեր հայեցողությանն է ուղարկում միջնորդություն Պետրոզավոդսկի ուղղիչ տան բանտարկյալ Վաղարշակ Եղիազարյանի ներման մասին, դատապարտության մասին՝ վճռի պատճենով և վարքի ու ապրելակերպի մասին տնօրինության կարծիքներով[8]:

<Մակագրություն՝ հայերեն>: Ուղղել Կենտգործկոմին ի տնօրինություն: 6. VIII: Ստորագրություն:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.112, g.8, գ.22, թ.66: Թարգմ. ռուս.:

252. Արտակարգ հանձնաժողովին

Կալանավորներ Մուշեղ Ավագյան Հարությունյանից, Խաչատուր Շահբազյանից և Հայկազ Գևորգյան Վարդանյանից

25 դեկտեմբերի 1923թ.

Դիմում

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը անցյալ տարի մեր երեքիս դատապարտել է՝ առաջինիս և երրորդիս 2-ական տարի, իսկ երկրորդիս 3 տարի կալանքի, մեղադրելով մեզ հակահեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը պատկանելու մեջ ու նրա շարքերում գործելու համար:

Ճիշտ է, ինչպես և շատերը, նախքան խորհրդային իշխանության հաստատվելը, մենք աշխատավոր գյուղացիներս եղել ենք Դաշնակցության ձեռքի խաղալիքը և կուրությամբ հետևել ենք նրա թելադրանքներին: Սակայն խորհրդային իշխանության հաստատումից հետո մենք հասկացանք մեր սխալը ու այնուհետև ընդմիշտ խզեցինք մեր կապերը Դաշնակցության հետ: Մենք տվեցինք այդ առթիվ նաև մեր դեկլարացիան Դաշնակցությունից ընդմիշտ հեռանալու մասին: Սակայն լինելով պարտադիր աշխատանքների կատարման վայրում, ուշացրել էինք այդպիսին նախկին դաշնակցականների համագումարի նիստին ու այդ պատճառով մեր դեկլարացիան չէր մտել ընդհանուր ցուցակի մեջ:

Ներկայումս Խորհրդային Հայաստանի գերագույն մարմնի առաջ

կրկնում ենք, որ մենք ոչ մի կապ չունենք Դաշնակցության հետ ու մեր տանջանքը կալանքի տակ կորցրել է իր իմաստը, ուղղված լինելով մեր դեմ իբրև հակահեղափոխականների...

Դիմելով Կենտգործկոմիդ, խնդրում ենք բավական համարել մեր մեկ տարուց ավելի կալանքի տակ եղած տանջանքները ու ներելով մեզ, ազատել պատժից ու կալանքից, որով հնարավորություն ստեղծած կլինեք մեզ համար դիմել խաղաղ սովորական գյուղական աշխատանքներին:

<Հետևում են երեքի ստորագրությունները>

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.152, թ.97 և հակ.:

253. Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի որոշումը

2 օգոստոսի 1924թ.

Լսեցին. Դատապարտյալ Աշոտ Գևորգյանի դիմումը, դատապարտված Հայարտհանձնաժողովի կոլեգիայի 1923թ. օգոստոսի 14-ի որոշումով, 5 տարով՝ հակահեղափոխական նպատակով սահմանն անլեգալ անցնելու, զենք պահելու, Դաշնակցություն կուսակցությանը պատկանելու և Արտուշ Քոչարյանի բանդային մասնակցելու համար, նրան ժամկետից շուտ կալանքից ազատելու մասին:

Որոշեցին. Մերժել:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.152, թ.343: Թարգմ. ռուս.:

254. ՀԽՍՀ Կենտգործկոմի Նախագահության որոշումը կալանավոր Սահակ Թորոսյանին ներում շնորհելու մասին

6 ապրիլի 1926թ.

Լսեցին. Կալանավոր քաղաքացի Սահակ Թորոսյանի միջնորդությունը՝ ներում շնորհելու մասին: (Մտ. թիվ 245գ):

Որոշեցին. Նկատի առնելով, որ քաղաքացի Սահակ Թորոսյանը

«խորապես զղջում է իր հայացքները» և Դաշնակցությունից հեռանում է, համարելով վերջինիս մի կուսակցություն, որը «պատկանում է պատմությանը, և որը այլևս անելիք չունի», ինչպես նաև նրա հայտարարությունը, որ բանվորա-գյուղացիական իշխանության կարմիր դրոշակի առաջ գլուխ է խոնարհում, պատրաստակամություն հայտնելով ՀՍԽՀ «լուսավորության գործին ազնվորեն ծառայելու»*, քաղաքացի Սահակ Թորոսյանին ներում շնորհել:

ՀայԿԳԿ-ի նախագահի տեղակալ՝ Հ. Ազատյան

ՀայԿԳԿ-ի քարտուղար՝ Հ. Տատյան

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.321, թ.400:

---

*Չակերտներում բերված արտահայտությունները պատկանում են Սահակ Թորոսյանին և վերցված են ներման խնդրանքի մասին նրա 1926թ. հունվարի 22-ի դիմումից: Դիմումը տե՛ս՝ ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.321, թ.409:

255. ՀԽՍՀ Կենտգործկոմին

28 սեպտեմբերի 1926թ.

Թիվ 844/գ

Վերադարձնելով Հայպետքաղվարչության կալանավորներ Սամսոն Ղարիբյանի, Արամայիս Ազնավուրյանի, Երվանդ Ջանիրյանի, Տիգրան Օհանջանյանի, Բարդուղիմեոս Հարությունյանի, Միխայիլ Էլչիբեկյանի, Ղազար Բաղդասարյանի, Սողոմոն Աթաջանյանի և Սեդրակ Հարությունյանի դիմումները, հայտնում ենք, որ վերոհիշյալները մեղադրվում են հակահեղափոխական աշխատանք տանելու մեջ և.

1. Սամսոն Ղարիբյանը, Արամայիս Ազնավուրյանը, Երվանդ Ջանիրյանը, Տիգրան Օհանջանյանը եղել են Լենինականի ընդհատակյա Դաշնակցություն կազմակերպության ակտիվ անդամներ.

2. Միխայիլ Էլչիբեկյանը, Ղազար Բաղդասարյանը և Սողոմոն Աթաջանյանը* եղել են Զանգեզուրի գավառի ընդհատակյա Դաշնակցություն կազմակերպության ակտիվ անդամներ.

3. Սեդրակ Դավթյանը, Հմայակ Բարսեղյանը, Արտաշես Գալոյանը, Արտաշես Զարգարյանը և Սեդրակ Հարությունյանը եղել են ընդհատակյա զինվորական Դաշնակցություն կազմակերպության անդամներ:

Համաձայն Հայպետքաղվարչության կոլեգիայի որոշման Սամսոն

---

*Սողոմոն Աթաջանյանի մասին տե՛ս նաև թիվ 203 փաստաթուղթը և դրա ծանոթագրությունը:

Ղարիբյանը, Արամայիս Ազնավուրյանը, Երվանդ Ջանիրյանը, Տիգրան Օհանջանյանը, Բարդուղիմեոս Հարությունյանը, Միխայիլ Էլչիբեկյանը, Ղազար Բաղդասարյանը և Սողոմոն Աթաջանյանը դատապարտված են 5 տարի, Սեդրակ Դավթյանը, Հմայակ Բարսեղյանը, Արտաշես Գալոյանը 3 տարի, և Արտաշես Զարգարյանը, Սեդրակ Հարությունյանը 2 տարի աքսորման:

Վերոհիշյալների գործերը ուղարկված են Անդրպետքաղվարչություն:

Հայտնելով վերոհիշյալը, Հայպետքաղվարչությունը անհնարին է գտնում նրանց ներում շնորհել:

Հայպետքաղվարչության նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Գաղգործառմասի պետ՝ Վարդանյան

Գաղբաժնի պետի տեղակալ՝ Միքայելյան

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.205, թ.2:

256. ՀԽՍՀ Կենտգործկոմին

15 հոկտեմբերի 1926թ.

Թիվ 8929/գ

Վերադարձնելով քաղաքացի Անահիտ Կարապետյանի դիմումը*, հայտնում ենք, որ նրա ամուսին Մելիքսեթ Կարապետյանը մեղադրվում է հակահեղափոխական աշխատանք տանելու մեջ, եղել է Դարալագյազի գավառի ընդհատակյա Դաշնակցություն կազմակերպության ղեկավարը:

Համաձայն Հայպետքաղվարչության կոլեգիայի որոշման Մելիքսեթ Կարապետյանը դատապարտված է 5 տարի աքսորման, որի գործը ուղարկված է Անդրկովկասյան Պետքաղվարչությանը:

Հայտնելով վերոհիշյալը, Հայպետքաղվարչությունը անհնարին է գտնում ներում շնորհել նրան:

Հայպետքաղվարչության նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Գաղբաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.205, թ.56:

---

*Անահիտ Կարապետյանի դիմումը տե՛ս նույն տեղում, թ.57 և հակ.-58: Անահիտ և Մելիքսեթ Կարապետյանները եղել են ուսուցիչներ Այնազուր գյուղում:

257. Հայպետքաղվարչության կոլեգիայի որոշումը

30 հոկտեմբերի 1926թ.

Լսեցին. Արտավազդ Գևորգյանի դիմումը, դատապարտված Հայպետքաղվարչության 1926թ. հուլիսի 15-ի որոշումով, որպես ընդհատակյա ուսանողական դաշնակցական կազմակերպության կոմիտեի անդամ, աքսորի՝ ԱԽՖՍՀ սահմաններից դուրս ԽՍՀՄ խորքերը, 5 տարի ժամկետով, խնդրանքով՝ հիվանդության պատճառով ժամանակավորապես իրեն ազատել և հնարավորություն տալ բուժվելու իր միջոցներով:

(Տե՛ս ՀԽՍՀ Կենտգործկոմի 1926թ. հոկտեմբերի 27-ի թիվ 473 գրությունը).

Որոշեցին. Խնդրել Կենտգործկոմին մերժելու Արտավազդ Գևորգյանի դիմումը:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.205, թ.98:

258. ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ ընկ. Համբարձումյանին

8 նոյեմբերի 1926թ.

ՀՊՔ Վարչությունը հայտնում է, որ քաղաքացի Անգին Տեր-Հովհաննիսյանի ամուսին Միհրան Տեր-Հովհաննիսյանը, որը իրոք բանտարկված է մեր կողմից և գտնվում է կալանքի տակ: Քաղ. Տեր-Հովհաննիսյանը ընդհատակյա Դաշնակցություն կազմակերպության խոշոր աշխատողներից է: Մինչև բանտարկությունը եղել է Լենինականի կազմակերպության Կենտկոմի անդամ, կապ է պահպանել դաշնակցական կուսակցության արտասահմանյան մարմինների հետ, 1925թ. ամառը մասնակցել է Համամիութենական դաշնակցական ընդհատակյա կոնֆերանսին, որը տեղի է ունեցել Ռուսաստանում, որպես Հայաստանի դաշնակցականների ներկայացուցիչ: Բանտարկության օրից Տեր-Հովհաննիսյանը իրեն ցույց է տվել որպես խորհրդային իշխանության անուղղելի թշնամի և մնացել է որպես այդպիսին մինչև վերջ:

Իր հակահեղափոխական աշխատանքի համար Տեր-Հովհաննիսյանը ՀՊՔՎ կոլեգիայի կողմից դատապարտված է արտաքսման Հայաստանի սահմաններից ՌԽՖՍՀ խորքերը: Նրա արտաքսման ուշանալու պատճառը կապված է Անդրկովկասյան ՊՔՎ-ից որին հայտնել ենք այդ մասին:

Հայպետքաղվարչության նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Գաղգործառմասի պետ՝ Վարդանյան

Գաղբաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.336, թ.225 և հակ.:

259. ՀԽՍՀ Կենտգործկոմին

24 նոյեմբերի 1926թ.

Թիվ 10156

Կալանավոր Միքայել Մկրտչի Տեր-Միքայելյանը 1920թ. եղել է Դաշնակցության Արտակարգ հանձնաժողովի ակտիվ անդամ Հայաստանի երկաթուղագծի վրա: Ինչպես հայտնի է այդ հանձնաժողովը ակտիվ կերպով կռվել է Հայաստանի բանվորական հեղափոխական շարժման դեմ, ճնշելով գործադուլները, կալանքի ենթարկելով և գնդակահարելով այդ շարժման ղեկավարներին: Այդ հանձնաժողովի աշխատանքներին զոհ են գնացել Սևյանը, Փանյանը Պրիբիլսկին Ոսկանյանը և մի շարք ուրիշ կոմունիստներ: Մի շարք վկաների ցուցմունքներով, թվով մոտ 40 հոգի, որոնց մեծ մասը կոմունիստներ են, հաստատված է, որ Տեր-Միքա ելյանը ինիցիատորն է եղել մեծ մասամբ ինչպես բանտարկությունների, այնպես էլ գնդակահարությունների

ՀՊՔՎ կոլեգիայի կողմից Տեր-Միքայելյանը դատապարտված է եղել սոցիալական պաշտպանության առավելագույն չափի՝ գնդակահարության, բայց նկատի առնելով նրա տարիքը և բանվորական ծագումը, պատիժը մեղմացված է և փոխարինված ազատազրկումով՝ 5 տարի ժամկետով, խիստ մեկուսացմամբ:

Գաղգործառմասի պետ՝ Վարդանյան

Գաղբաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.205, թ.200:

260. ՀԽՍՀ Կենտգործկոմին

27 նոյեմբերի 1926թ.

Թիվ 10440

Վերադարձնելով քաղաքացի Անգին Տեր-Հովհաննիսյանի դիմումը*, հաղորդվում է, որ նրա ամուսին Միհրան Տեր-Հովհաննիսյանը մեղադրվում է հակահեղափոխության մեջ և որպես դաշկուսակցության Լենինականի ընդհատակյա կազմակերպության անդամ:

ՀՊՔՎ կոլեգիայի որոշման համաձայն Տեր-Հովհաննիսյանը աքսորվում է 5 տարի ժամկետով: Նրա գործը ուղարկված է Անդրկովկասյան ՊՔՎ, որտեղից և մոտ օրերս կստացվի պատասխանը:

ՀՊՔՎ նախագահ՝ Մելիք-Հովսեփյան

Գաղգործառմասի պետ՝ Վարդանյան

Գաղբաժնի պետ՝ Մուղդուսի

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.205, թ.234:

** ՀԽՍՀ Կենտգործկոմի Նախագահության 1926թ. դեկտեմբերի 1-ի որոշումով ներման մասին Անգին Տեր-Հովհաննիսյանի դիմումը մերժվել է: Տե՛ս նույն տեղում, թ.233:*

261. Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեին Քաղաքական աքսորյալ Գալուստ Ռշտունուց

8 հունիսի 1930թ.

Դիմում

Սկսած 1905թ. մինչև ձերբակալությանս օրը պատկանել եմ ՀՀ Դաշնակցություն կուսակցությանը, այդ մասին ես խոստովանել եմ համապատասխան մարմնին, իր ժամանակին:

Մանկությունից եղել եմ որբ ու բատրակ: Ծնողներս զոհ են գնացել տաճկական յաթաղանին, դեռ 1895թ.: Ուրիշների օգնությամբ Կովկաս եմ եկել և վերջացրել միջնակարգ կրթությունը: Տասնութ տարի անընդհատ եղել եմ Հայաստանի զանազան գավառներում ուսուցիչ և

այդ պաստի վրա էլ մնացել եմ մինչև ձերբակալությանս օրը:

Կյանքիս մեջ չեմ ունեցել և չունեմ ոչ մի սեփականություն: Ապրել եմ միշտ ամենադառն ու չարքաշ աշխատանքով ու կյանքիս ամենալավ պայմաններում միշտ էլ եղել եմ կարիքավոր ու հազիվ ապրող...*

Երկրում թողել եմ՝ մի հիվանդ կին և չորս մանր երեխաներ, ամենածանր ու խեղճ պայմաններում, բախտի հույսին...*

Սույն օգոստոսի 2-ին լրանում է աքսորմանս երեք տարի ժամանակամիջոցը: Առանց կեղծելու ու խաբելու պիտի ասեմ, որ ես մնում եմ կանգնած իմ քաղաքական տեսակետի վրա, բայց խորապես գիտակցում եմ և ըմբռնում, որ ներկա պայմաններում խորհրդային իշխանության տիրապետությունը Հայաստանում ամենամեծ բարիքն է հայ ժողովրդին: Ով սա չի հասկանում, նա չի ըմբռնում իր երկրի ու աշխատավոր ժողովրդի շահերը:

Իդեապես չմիանալով Ձեզ, ես գտնում եմ, որ ոչ մի աշխատավորական կուսակցություն կամ անհատ իրավունք չունի խանգարելու Ձեր իդեական աշխատանքները Հայաստանում ու պարտավոր է տնտեսական ու կուլտուրական բոլոր ասպարեզներում, Ձեզ հետ միասին ձեռք-ձեռքի տված աշխատել, կարմիր դրոշակի պաշտպանության տակ, իր երկրի ու աշխատավոր ժողովրդի շահերի համար:

Ի նկատի ունենալով, որ աքսորմանս ժամանակամիջոցը լրանում է, խնդրում եմ ինձ ևս թույլ տաք վերադառնալու Հայաստան, մասնակցելու այդ տնտեսական ու կուլտուրական աշխատանքներին ու աշխատանքովս կերակրելու նաև իմ միանգամայն կարիքավոր ընտանիքիս: Որի համար խոստանում եմ հրապարակով ու ազնվորեն լինել խորհրդային լոյալ քաղաքացի:

Հայաստանի քաղաքական աքսորյալ՝ Գալուստ Ռշտունի

1930թ. 8 հունիսի

Սերնուր

Իմ հասցեն

Мар [ийская] область, Сернур

Галуст Риштуни

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.77, թ.149 և հակ.-150:

** Բազմակետերը բնագրինն են:*

262. ՀամԿ(բ)Կ Կենտկոմ ընկ. Ստալինին

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմ ընկ. Ա. Խանջյանին

Վարչական-աքսորական Վաղարշակ Դավթի Հարությունյանից

Դիմում

13 հուլիսի 1931թ.

1929թ. սեպտեմբերի 27-ին ես բանտարկվել եմ ՀայՊՔՎ մարմիններ-ի կողմից: Ինձ մեղադրանք է ներկայացվել ըստ ՔՕ հոդ. 58-10, 58-11, Դաշնակցությանը պատկանելու համար: Դրա հիման վրա ՀայՊՔՎ կոլեգիան 1930թ. հունվարի 26-ին ինձ դատապարտել է աքսորի համակենտրոնացման ճամբար երեք տարի ժամկետով:

Գտնվելով կալանքի տակ այդ վճիռը ես բողոքարկել եմ Մոսկվա՝ Միացյալ պետքաղվարչության կոլեգիային, որը աքսորը համակենտրոնացման ճամբար փոխարինել է վարչական աքսորով Ղազախստան՝ քաղաք Ղզըլ-Օրդա, նույն ժամկետով, որտեղ և գտնվում եմ 1930թ. հունիսի 6-ից:

Կյանքումս չեմ պատկանել և չեմ էլ պատկանում որևէ կուսակցության և չեմ էլ դատվել որևէ գործով, այլ միայն հանդիսանում եմ թյուրիմացության և չար լեզուների զոհ:

Խնդրում և աղաչում եմ ազատել ինձ որպես անմեղ տուժողի:

Հարությունյանց

13 հուլիսի 1931թ.

Ղազախստան, Ղզըլ-Օրդա

Կ. Մարքսի 24

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.11, գ.50, թ.57-60: Բնագիր: Մեքենագիր: Հատված դիմումից: Թարգմ. ռուս.:

263. Հայկական ԽՍՀ Կենտգործկոմին

3 մարտի 1934թ.

Վերադարձնելով Գևորգ Թարխանյանի, Ալավերդի Բաղդասարյանի, Հայրապետ Դանիելյանի, Հովհաննես Հախվերդյանի, Արմենակ Գևորգյանի, Մովսես Մաչանյանի, Գրիգոր Փիլիպոսյանի և Հարություն

Բարսեղյանի դիմումները ներման մասին, Հայկական ԽՍՀ Պետքաղվարչության Դատախազությունը հայտնում է, որ նշված անձինք Միացյալ Պետքաղվարչության կոլեգիայի կողմից դատապարտված են երեք տարվա ազատ աքսորի հակահեղափոխական դաշնակցական աշխատանքի համար և անհրաժեշտ է համարում մերժել նրանց խնդրանքը[9]:

Հայաստանի ՊՔՎ-ի դատախազ՝ Միքայելյան

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.112, ց.13, գ.34, թ.245: Թարգմ. ռուս.:

Գլ. IX

Կապմալուծման փորձերը Հայաստանից դուրս

264. ՀԿԿ Կենտկոմի որոշումը

13 դեկտեմբերի 1921թ.

Լսեցին. Պարսկաստանում գտնվող գաղթականների մասին:

Որոշեցին. Թույլ տալ այն բոլոր լոյալ գաղթականների մուտքը Հայաստան, ովքեր արտագաղթել են Պարսկաստան դաշնակցական իշխանության անկումից հետո: Այս որոշման կատարումը հանձնարարվում է ժողկոմխորհի Նախագահությանը, որին միաժամանակ հանձնարարվում է լուրջ ուշադրություն նվիրել, որպեսզի լոյալության քողի տակ Դաշնակցության ակտիվ անդամները չթափանցեն Հայաստան:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, g.1, գ.39, թ.49: Թարգմ. ռուս.:

265. Հեռագիր Թավրիզ՝ ՀԽՍՀ գլխավոր հյուպատոս Երվանդյանին (Մակեդոնսկու համար)

11 օգոստոսի 1922թ.

Թիվ 278/գ

Ըստ Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի տեղեկությունների՝ Նժդեհը Պարսկաստանից տեղափոխվել և՛ գտնվում է Բաքվում: Պարզեք ճշտությունը:

Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի նախագահ՝
Ամիրխանյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.157, թ.30: Թարգմ. ռուս.:

266. Հեռագիր Թավրիզ՝ ՀԽՍՀ գլխավոր հյուպատոս Երվանդյանին (Մակեդոնսկու համար)

20 օգոստոսի 1922թ.

Թիվ 976/գ

Շտապ հայտնեք հետևյալ մաուզերիստների ու խմբապետների, որոնք Ջուլֆայով անցել են սահմանը անօրինական կարգով և բռնվել մեր կողմից՝ Լևոն Մելիքսեթյան, Խաչատուր Շահբազյան, Հովհաննես Ախեյան, Ռուբեն Թաթոսյան, Հայկ Աբրահամյան, Արամ Օգանեսով, Ալեքսանդր Էլիզբարյան, Միքայել Օհանյան, Գուրգեն Նասիբյան, Արսեն Ղազարյան, Արտավազդ Հարությունյան, գալու նպատակը, Թավրիզի դաշնակցական կազմակերպության հետ կապի մասին և արդյո՞ք նրանց վրա դրված չեն որոշակի խնդիրներ և ինչպիսի:

Պատասխանը չուշացնել:

Հայարտհանձնաժողովի նախագահ՝ **Ամիրխանյան**

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.157, թ.29: Թարգմ. ռուս.:

267. Պարսկաստանում ԽՍՀՄ լիապոր-ներկայացուցիչ ընկ. Շումյացկուն*

18 սեպտեմբերի 1923թ.

Թավրիզ

Հարգելի ընկեր.

Ըստ փոստին կցվող իմ օրագրության շարունակության՝ Դուք կարող եք հետևել հայկական հարցում իմ բոլոր գործողություններին:

Սույն նամակով կփորձեմ ընդհանրացնել այդ հարցի դրությունը և մեր կողմից ձեռնարկված միջոցառումները:

Թիվ 15 ամփոփագրում նշվում էր, որ դաշնակցական հարցը սկսում է կորցնել իր նախկին սրությունը: Բանն այն է, որ աստիճանաբար դաշնակների լիդերները ցրվում են: Նրանք բոլորը ուղևորվում են Արևմտյան Եվրոպա և մասամբ Ամերիկա: Նրանց մեծ մասը մեկնում է Պրահա, համալսարան ընդունվելու համար, որի նպատակով դաշնակնե-

*Զեկուցագրի պատճեններն ուղարկվել են ընկ. ընկ. Յուսեյնովին, Լուկաշինին, Սոգիլևսկուն և Պաստուխովին: - Բնագրի ծանոթագրությունը:

ին տրամադրվել է 50 տեղ: Բանը, իհարկե, համալսարան ընդունվելը չէ, այլ թոշակը, որը նրանց հնարավորություն կտա շարունակել իրենց գոյությունը, ընդ որում որպես դաշնակների կուսակցության լիդերների գոյությունը:

Թավրիզում դաշնակ լիդերների մնացորդները, հատկապես վերջին իրադարձությունների բերումով, որոնց մասին խոսք կլինի ստորև, սկսում են աստիճանաբար կծկել իրենց աշխատանքը, պատրաստվելով հեռավոր ճանապարհորդության: Արտասահմանից ստացվող նրանց բոլոր միջոցները, գլխավորապես Թեհրանի միջոցով, ներկայումս ծախսվում են դաշնակ լիդերներին, ենթալիդերներին ու ձայնակիցներին արտասահման ուղարկելու վրա:

Կառավարությունը[10], որպես այդպիսին, Թավրիզում այլևս գոյություն չունի: Նա գրեթե էվակուացվել է Թավրիզից: Փախուստի պատճառները շատ են: Մի կողմից, հայկական տարագրության միջավայրում սկսվող քայքայումը, որը օր-օրի ուժեղանում է, Կովկասում և հատկապես Հայաստանում վարվող խելացի քաղաքականության և Կովկասում դաշնակների կազմալուծման, Դրոյի ու Ղազարյանի հայտարարության կապակցությամբ և մյուս կողմից փողի գրեթե լրիվ բացակայությամբ Թավրիզի դաշնակների աղքատացումով: Վերջինը, պետք է ենթադրել, որ ունի առաջնակարգ նշանակություն: Վերջին ժամանակներս դաշնակների լիդերները դադարել են պարբերաբար փող ստանալ: Եվ հենց որ փող է հայտնվում դրամարկղում, սկսում է մարդկանց մեկնումը:

Վերջին ժամանակներս ֆինանսական աղքատության հողի վրա նկատվում է դաշնակցության ձգտումը իր ձայնակիցներին դասավորել ինչ-որ տեղ հիմնարկություններում: Ոմանք դիմում են պարսկական բանակում ծառայելու համար, մյուսները տեղավորվում են տեղի հայկական մշակութային հիմնարկություններում, երրորդները ներկայանում են գլխավոր հյուպատոսություն անցաթղթի համար: Մի խոսքով սկսվում է վտարանդիության փախուստը:

Բացի սրանից, չի կարելի եզրակացնել, թե դաշնակցական ուժը Թավրիզում այնքան է թուլացել, որ մենք կարող ենք պայքարել դաշնակցականների դեմ և հաղթանակ նվաճել, ասենք, մեջլիսի ընտրություններում կամ թեմական ժողովում, եթե անգամ Նեոսես եպիսկոպոսը համաձայնի վերընտրություններ հայտարարել:

Դեռ վաղ է ձեռքերը լվանալ, քանի որ եթե վտարանդիության միջավայրում սկսվում է քայքայումը, եթե նույնիսկ լիդերների մեծ մասը լքել է կամ լքում է Թավրիզը, ապա այստեղ մենք պետք է հաշվի առնենք այն փաստը, որ տեղի դաշնակցական խումբը բավական լուրջ մեծություն է, հատկապես գոյություն ունեցող հակադաշնակցական տարրերի համեմատությամբ:

Կոմունիստական ողջույններով՝ Սլավուցկի

<Մակագրություն> Ընկ. Լուկաշինին. ծանոթանալուց հետո խնդրում եմ զեկուցագիրը հանձնել ընկ. Հովհաննիսյանին: Պարտական կլինեմ, եթե մեզ գրեք ձեր կարծիքը մեր աշխատանքի մասին և մատնանշեք սխալները, որպիսիք կձգտենք ուղղել: Կոմունիստական բարևներով՝ Մ. Սլավուցկի:

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ.148, թ.65 և հակ.-72 և հակ.:
Թարգմ. ռուս.:

268.Հայարտահանչնաժողովին

Պատճենը՝ Անդրարտահանչնաժողովին

Դաշնակցություն կուսակցությունը և նրա գործունեությունը Թավրիզում

24 սեպտեմբերի 1923թ.
Երևան

...* Մինչև վերջին ժամանակներս նրանք իրենց տրամադրության տակ ունեին 350 մարդ, որոնց թվում էին՝ մաուզերիստներ, խմբապետներ, սպաներ ու զինվորներ: Այդ ժամանակամիջոցում մեզ հաջողվեց ուժեղ պառակտում կազմակերպել վերնախավերի ու շարքայիններ միջև:

Մի կողմից արևմտահայերի ու ռուսահայերի միջև, որի հետևանքով շարքայիններից ավելի քան 100 մարդ մեկնեցին Միջագետք, Ամերիկա և Կոստանդնուպոլիս: Միջագետքում նրանցից ոմանք, ըստ մեր ստացած տեղեկությունների, արևահար են եղել և մահացել: Մի քանի սպաների անգլիական կառավարությունը հավաքագրել է իր բանակում: 25 մարդ ցանկություն են հայտնել մեկնել Չեխոսլովակիա, սովորելու, որտեղ պրոֆեսոր Մասսարիկը 25 տեղ է հատկացրել համալսարանում:

Բոլոր զինվորները գյուղացիներ են: Մեր քարոզչության շնորհիվ

** Բաց թողնված մասում խոսվում է Թավրիզում Դաշնակցության կազմակերպությունների գործունեության մասին:*

հեռացել են <Դաշնակցությունից> և ցանկություն հայտնել մեկնել Խորհրդային Հայաստան: Նրանց երեք ներկայացուցիչներ եղել են Թիֆլիսում, գտնվում են Երևանում, որտեղ և նրանց խնդրանքը հարգվել է:

Այդ զինվորները ստորագրել են մեր կազմած կոչը, որտեղ նրանք անարգում են Դաշնակցություն կուսակցությանը և խոստանում մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել Հայաստանի խորհրդային իշխանությունը:

Այդ իրադարձություններից հետո Թավրիզում դաշնակցական ճակատը գրեթե կորցրել է իր սրությունը: Այժմ գործը մնում է տեղի մեր ընկերներին, ովքեր պետք է հայկական հասարակական հիմնարկությունները խլեն դաշնակցականների ձեռքից:

Պարսկական Ադրբեջանում աշխատելու ընթացքում մենք դաշնակցական քարոզչության դեմ օգտագործել ենք հետևյալ միջոցները.

1. Ձախ դաշնակցականներին կամ աշխատավորականներին: Վերջիններս մեծաթիվ չեն, բայց ունեին ազդեցիկ դեմքեր. նշանավորներից էր Առաքել Հարությունյանը՝ «Մինարեթ» հայկական թերթի խմբագիրը և Ավետիս Օհանջանյանը՝ փետրվարյան արկածախնդրության ժամանակ դաշնակցական Արտակարգ հանձնաժողովի նախագահը: Երկուսն էլ այժմ պաշտոնապես հեռացված են Դաշնակցություն կուսակցությունից: Չնայած ձախ դաշնակցականների մի շարք թյուրիմացություններին, օրինակ, քարոզչությունը քեմալականների դեմ, նրանք հայտարարել են, որ պաշտպանում են խորհրդային կողմնորոշումը և ցանկություն ունեն ստեղծել նոր՝ Աշխատավորականների դաշնակցական կուսակցություն:

Ձախ դաշնակցականների օրգան «Մինարեթ» հայկական թերթը իրենից ներկայացնում է հակահեղափոխական հոդվածների հավաքածու: Թերթի առաջին էջը զարդարում են Վրացյանի, եպիսկոպոս Մելիք-Թանգյանի և այլոց նամակները: Չնայած այդ թյուրիմացություններին, մենք կարող ենք նրանց հարկավոր չափով օգտագործել:

Մեզ ծառայեցրել ենք նաև տեղի հնչակյաններին: Այս պարոններն իրենց կոչում են կոմունիստներ: Նրանց փաստական գործունեությունը, սակայն, ապացուցել է, որ ոչ մի տարբերություն չկա նրանց և մյուս «ազգային հեղափոխականների» միջև: Այսպես, «Ձանգ» թերթի խմբագիր Ալեքսանդր Տեր-Վարդանյանը, բնավ չամաչելով, դաշնակ տարագիրների օգտին կազմակերպել է երեկույթ, որտեղ ինքն էլ եղել է պատասխանատու կարգադրիչը:

Մեր տրամադրության տակ եղել է 83 մարդուց բաղկացած աշակերտական կոմերիտական խումբ, որոնց թվում տպարանի պարսիկ ու հայ բանվորներ: Այդ խումբը եղել է մեր հիմնական հենարանը դաշ-

269. Ցուցակ

Հայաստան վերադառնալ ցանկացողների, որոնց Հայարտահանձնաժողովը աննպատակահարմար է համարում բաց թողնել խորհրդային տարածք

28 սեպտեմբերի 1923թ.*

Ազգանուն և անուն	Տարիքը	Սոց. դրությունը	Կուսակցականությունը	Գործունեությունը Դաշնակցություն կուսակցության մեջ
1.Գրիգորյան Միխակ	32	գյուղացի	դաշնակ	Աշխատել է ԴԿ Կենտկոմին կից դաշգործակալության հակահետախուզությունում
2. Ազատյան Դավիթ	45	"	"	Դաշարտահանձնաժողովի քննիչ
3.Կարապետյան Սիմոն	28	քաղքենի	"	Խուզարկու բաժանմունքի խուզարկու
4. Գրիգորյան Գրիգոր	28	գյուղացի	"	Աշխատում է ԴԿ Կենտկոմին կից դաշգործակալության հակահետախուզությունում
5. Գրիգորյան Սամսոն	27	քաղքենի	"	Փրկության կոմիտեի անդամ
6.Խանամիրյան Գեղամ	29	գյուղացի	"	Աշխատում է ԴԿ Կենտկոմին կից դաշգործակալության հակահետախուզությունում
7. Ալոյան Գեղամ	29	"	"	Դաշչեկիստ
8. Սայադյան Ենոք	33	"	"	Աշխատում է ԴԿ Կենտկոմին կից դաշգործակալության հակահետախուզությունում
9. Հովհաննիսյան Արտաշես	27	"	"	«Վրեժ» կոմիտեի անդամ
10. Բաղդասարյան Վարդան	25	"	"	"
11. Խանամիրյան Վահան	36	"	"	Խմբապետ

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ.121, թ.152: Վավերացված պատճեն:

* Կից գրության ժամանակը:

270. Հայտարարություն

Հայաստանից Թավրիզ տարագրված սպաների

1 Հոկտեմբերի 1923թ.

Թավրիզ

Մենք, ներքոստորագրյալ սպաներս, որ տարագրվել ենք Հայաստանից Թավրիզ, մեր քաղաքացիական պարտքն ենք համարում հայտարարել հետևյալը.

Անցել է այն ժամանակը, երբ մեր մեջ իշխում էր այն նախապաշարմունքը, թե իբր զինվորականները պետք է լինեն անկուսակցական, քանի որ այդ անվան տակ իրականում քողարկվում էին ինքնակալության կողմնակիցները, որ պաշտպանում էին կալվածատերերի դասակարգի ու բուրժուազիայի շահերը...

Յուրաքանչյուր գիտակից քաղաքացի պետք է ընդունի աշխատավոր դասակարգի իրավունքների արդարացիությունը և պաշտպանի նրա շահերը: Ահա ինչու և մենք, տարագիր սպաներս, գիտակցում ենք մեր պարտքը՝ վերջնականապես խզել մեր կապերը այն հակախորհրդային կուսակցություններից, որոնք իրենց կարճատև քաղաքականությամբ մեզ մղեցին աշխատավոր ժողովրդի իսկական պաշտպանի դեմ և այսուհետ պարտավորվում ենք մեր բոլոր ուժերը տրամադրել աշխատավոր դասակարգի շահերի և խորհրդային իշխանության պաշտպանությանը՝ ընդդեմ բոլոր թշնամիների, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Դրանով իսկ մենք կպաշտպանենք աշխատավոր ժողովրդի հսկայական մեծամասնության արդարացի իրավունքները, նրա մշակույթը և քաղաքականությունը՝ ընդդեմ ճնշողների ու շահագործողների դասակարգի*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, ց.1, գ.208, թ.3-6: Թարգմ. ռուս.:

** Հետևում է 20 սպայի ստորագրություն:*

271. Նամակ Բագվի նախկին դաշնակցականներին

15 հոկտեմբերի 1923թ.

... Բագվի ընկերներ, համոզված լինելով, որ ձեր սրտին ևս մոտ են համագումարի առաջադրած նպատակները, դիմում ենք ձեզ և առաջարկում մասնակցել համագումարին: Բագուն ամենից լավ գիտե, թե

ինչ էր Դաշնակցությունը, և Բագվի բանվորության ձայնը հուժկու է ու խրոխտ նրանց համար, ովքեր դեռ համառում են:

Մենք դիմում ենք նախկին այն դաշնակցականին, որի համար բանվորության ապագան եղել է կետ՝ նպատակ, որին ձգտել է նա ազնիվ ու շիտակ հեղափոխականի պես, առաջարկում ենք թողնել Դաշնակցության շարքերը և իր ձայնը միացնել մեր համագումարի ձայնին...

Հայաստանի նախկին դաշնակցականների

համագումարի նախաձեռնող Բյուրո

Մարտակոչ, 21 հոկտեմբերի 1923թ.: Տես նաև «Խորհրդային Հայաստան», 1923թ., թիվ 231:

272. Բագվի նախկին դաշնակցականների

ընդհանուր ժողովը

18 հոկտեմբերի 1923թ.

Հոկտեմբերի 18-ին նախկին Հայ մարդասիրական ընկերության դպրոցի դահլիճում կայացավ Բագվի և նրա շրջանների նախկին դաշնակցականների ընդհանուր ժողովը, մասնակցությամբ 34 հոգու: Ներկա էր նաև հետաքրքրվողների մի ստվար բազմություն:

Օրակարգում դրված էին մի շարք հարցեր: Առաջին հարցի՝ Դաշնակցության լիկվիդացիան նախաձեռնող հանձնաժողովի կողմից և նրա մասին զեկուցում է հանձնաժողովի անդամ Գ. Իսքենդարյանը...

Սիրակ Գրիգորյանը մի համառոտ պատմական ակնարկ է գցում Դաշնակցության գործունեության վրա անցյալում և ներկայում ...

Բանաձև

Ճառերից հետո ընդունվում է հետևյալ բանաձևը.

... Պաշտոնապես լիկվիդացիայի ենթարկված համարել Դաշնակցությունը Բագվում, որի համար ընտրել կենտրոնական լիկվիդացիոն հանձնաժողով, հանձնարարելով նրան բոլոր շրջաններում կազմակերպել ժողովներ և նախապատրաստել Բագվի և ապա Ադրբեջանի ընդհանուր լիկվիդացիոն համագումար, կապ հաստատել Հայաստանում և Վրաստանում գոյություն ունեցող լիկվիդացիոն մարմինների հետ. կազմակերպելու համաանդրկովկասյան վերջնական լիկվիդացիոն

համագումար:

Ընտրվում է նախաձեռնող մարմին հետևյալ կազմով 1. Բեջանյան Վահան, 2. Ոշտունի Գեղամ, 3. Սիմոնյան, 4. Իսքենդարյան Գալուստ, 5. Պետրոսյան Գրիգոր, 6. Գրիգորյան Սիրակ, 7. Մարտիրոսյան Բենիամին:

Մարտակոչ, 24 հոկտեմբերի 1923թ.:

273. Ղարաբաղի նախկին շարքային դաշնակցականների հայտարարությունը

4 նոյեմբերի 1923թ.

Նոյեմբերի 4-ին, կիրակի երեկոյան, Ստեփանակերտում կայացավ Դաշնակցության շարքային նախկին անդամների ժողովը, որը Դաշնակցության լիկվիդացիայի մասին ընկ. Վ. Վարդապետյանի և Աբ. Կիսիբեկյանի զեկուցումները լսելուց հետո միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը.

«... կոչ ենք անում բոլոր այն ընկերներին, որոնք երբևէ եղել և աշխատել են Դաշնակցության շարքերում, հետևել մեզ և միանալ մեր կոչին»:

Մարտակոչ, 18 նոյեմբերի 1923թ.:

274. ԱԽՖՍՀ արտգործժողկոմ ընկ. Հուսեյնովին

16 նոյեմբերի 1923թ.

Հույժ շտապ

Թիվ 496/գ

Կից ներկայացնելով նախկին սպաներ՝ Հայաստանից տարագիրների խմբի հայտարարությունը*, Կենտկոմը կարծում է, որ հայտարարությունը բոլոր ստորագրողներին հարկավոր է թողնել Հայաստանի ԽՍՀ, բացառությամբ երեքի՝ Ամիրջանյան Գարեգին, Կրասիլնիկով Գրիգորի և Օրբելյան Նիկիտա:

Կենտկոմի քարտուղար՝ Շահսուվարյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.3, գ.33, թ.67: Թարգմ. ռուս.:

*Տե՛ս սույն ժողովածուի 270 փաստաթուղթը:

275. Դաշնակների ինքնալիկվիդացիան

23 նոյեմբերի 1923թ.

Բաքու

Մոտ օրերս Բաքվում և նրա ռայոններում կայացավ Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների կոնֆերանսը: Լսելով զեկուցում Դաշնակցություն կուսակցության գործունեության մասին, իր գոյության ամբողջ ընթացքում, և այն պատճառների, որոնք այդ կուսակցությանը հասցրին ինքնալիկվիդացիայի, կոնֆերանսը որոշեց.

«... Համարել վերացված կուսակցական բոլոր օրգանները, կոմիտեները, խմբերը և դաշնակցական այլ կազմակերպությունները, որոնք կապված են Դաշնակցություն կուսակցության Ադրբեջանի բաժանմունքի հետ: Լիազորական բոլոր մանդատները, որ տրված են նախկին բոլոր դաշնակցական ներկայացուցիչներին, որոնք մինչև օրս շարունակում են խոսել ու գործել Կովկասում և Կովկասից դուրս հայ աշխատավոր ժողովրդի անունից, ոչնչացվում են, իսկ իրենք, այդ ներկայացուցիչները հայտարարվում են հայ պրոլետարիատի թշնամիներ. կուսակցության արտասահմանում գտնվող ներկայացուցիչներն ու կազմակերպությունները, որոնք բուրժուական կառավարությունների ձեռքին զենք են ծառայում, դադարում են մեր ներկայացուցիչները լինելուց, որովհետև մենք վաղուց ենք խզել մեր կապերը նրանց ավանտյուրիստական գործունեության հետ:

Որոշելով մասնակցել նախկին դաշնակցականների համահայկական լիկվիդացիոն համագումարին, մենք պետք է այժմյանից նպաստենք ընդհանուր լիկվիդատորական շարժմանը և մասնակցություն ցույց տանք ընդհանուր Կովկասյան լիկվիդացիոն համագումարի կազմակերպման գործում... »:

Սույն որոշումը ընդունված է կոնֆերանսի կողմից միաձայն:

Մարտակոչ, 24 նոյեմբերի 1923թ.:

276. Քաղվածք Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցչության 1923թ. նոյեմբեր ամսվա բյուլետենից

20 դեկտեմբերի 1923թ. *

Հակադաշնակցական բլոկը

Նոյեմբերի 3-ին կայացել է հակադաշնակցական բլոկի կոմիտեի առաջին նիստը: Բլոկի մեջ են երկուական ներկայացուցիչներ հնչակյաններից՝ Տեր-Վարդանյանը և Տեր-Կարապետյանը, մինարեթցիներից՝ Արուտյունովը և մեկ ոչ մշտական և աշխատավորականներից՝ Օհանջանյանը և Ճուտուրյանը:

Հաշվետու ամսում հակադաշնակցական բլոկի գործունեությունը որևէ բանով աչքի չի ընկել, այն պատճառով, որ մեջլիսի ընտրությունների հարցի կապակցությամբ մինարեթցիները ձգձգել են իրենց որոշումը, Թեհրանից հրահանգ չունենալով ցանկալի թեկնածուի վերաբերյալ: Տեղական թեկնածուներից միայն Տեր-Վարդանյանի թեկնածությունը կարող է ունենալ միջին հաջողություն:

Դաշնակների միջավայրում քայքայումը, գաղթականներին օգնելուց Ռելիֆի** հրաժարվելը և նրա աշխատանքի կրճատումը, հյուպատոսության, հակադաշնակցական բլոկի և Ներսես եպիսկոպոսի միջև ծավալված հարաբերությունները, կանխավ ենթադրում են հակադաշնակցական տարրերի գործունեության հաջողություն:

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ.153, թ.26 և հակ.-26ա:

** Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցչությանը կից հայկական գործերի քարտուղարության կողմից բյուլետենի նյութերի հետ միասին ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին ուղարկած թիվ 141/գ կից գրության ժամանակը:*

*** Ռելիֆ՝ Relief (անգլ.) օգնություն: Խոսքը Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի մասին է:*

277. Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի նախագահ ընկ. Մոգիլևսկուն (անչամբ)

Պատճեն՝ ՀԿԿ Կենտկոմի քարտուղարին

25 հոկտեմբերի 1924թ.

Թավրիզից մի խումբ տարագիրների Հայաստան ճամանելու կապակցությամբ, ովքեր մուտքի թույլտվություն էին ստացել Ձեզ հայտնի հայտարարություն տալուց հետո, մեր առջև բացվեց բավական խայտառակ պատկեր, որի մասին հարկ ենք համարում հայտնել Ձեզ հետևյալը.

Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի ս.թ. օգոստոսի 29-ի թիվ 2340 խ/գ գրությունն ստանալուց անմիջապես հետո, գրություն, որում նշվում է Դաշնակցություն կուսակցության Թավրիզի կազմակերպության շարքերում սկսված կազմալուծման մասին և այն մասին, որ Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովը հնարավորություն ունի խորացնելու և ընդլայնելու նկատված պառակտումը, մենք արեցինք միայն մեկ եզրակացություն՝ պառակտումն ունի զուտ տնտեսական բնույթ, նրանում չկա քաղաքական պահ, և այնպիսի խոշոր դաշնակցական գործիչներ, ինչպիսիք են Վահե Արծրունին, Մելիք-Յոլչյանը և ուրիշներ, իհարկե մտադիր չեն թողնել Դաշնակցության շարքերը, այլ միմյանց հետ գգվռտում են միայն ներկուսակցական տարաձայնությունների հողի վրա: Ինչևէ, անկասկած ցանկանալով օգտվել այդ քայքայման առաջին արդյունքներից, մենք տվեցինք 32 տարագիր դաշնակներին մեր հանրապետություն մուտքի սկզբունքային համաձայնություն, միաժամանակ պայման դնելով. եթե այդ պառակտումը Թավրիզում կխորանա և կընդլայնվի, որ իսկապես կուսակցությունից կհեռանան իսկական դաշնակները, որ եթե այդ քայքայումը կընդգրկի Թավրիզի տարագրության լայն շրջաններ, եթե նրանք կտպագրեն իրենց թերթը, ընդ որում նյութական օգնությունը մեր կողմից երաշխավորվում էր և, որ, վերջապես, եթե այդ հեռացած մասը այնտեղ, Թավրիզում որոշ աշխատանք տանելուց հետո կարող է գալ Հայաստան՝ շարունակելու Դաշնակցության քայքայման սկսված կամպանիան: Ահա այդպես ենք տվել մեր համաձայնությունը նրանց գալու վերաբերյալ: Բայց ի՞նչ ստացվեց: Թավրիզի հյուպատոսությունը, առանց որևէ համաձայնության, բոլորովին չընդունելով մեր սկզբունքային համաձայնության իմաստը, բավարարվել է միայն ոչինչ չնշանակող հայտարարությամբ և տվել է թույլտվություն 10 մարդուց բաղկացած խմբի՝ մեկնելու Հայաստանի ԽՍՀ: Մեզ բոլորովին հայտնի չէ, թե Գլխավոր հյուպատոսությունը ինչպես է հավատացել, որ հայտարարություն տված անձինք իսկապես Դաշնակցության անդամներ են և իրենցից ինչ են ներկայացնում որակական տեսակետից: Բայց հենց այստեղ ստուգումից պարզվեց, որ Հայաստան ժամանածների մեծամասնությունը երբեք Դաշնակցություն կուսակցության մեջ չի եղել: Մեր այն հարցին, թե չլինելով դաշնակներ, ինչպես են ստորագրել հայտարարությունը, նրանք պատասխանում էին՝ «Որպեսզի անցաթուղթ ստանանք Հայաստան մուտք գործելու»: Նրանց մեջ կա նաև ոչ տարագիր, այլ՝ պարսկահպատակ: Լավ ցուցադրության համար կցում ենք Հայաստանի Արտակարգ հանձնաժողովում այդ «դաշնակների» հարցաքննության արձանագրություններից երեք քաղվածք: Այդպիսի դրությունը մենք չենք կարող չդիտել որպես քաղաքական խայտառակություն: Այժմ մեր

թշնամի դաշնակների ձեռքում կհայտնվեն լավագույն հաղթաթղթեր մեզ վարկաբեկելու նրանում, որ մենք քայքայում ենք իրենց կուսակցությունը, երբ վերջինս որևէ առնչություն չունի այդ մարդկանց հետ: Նրանց հետ ուղարկել Պարսկաստան, իհարկե, անհնար է միանգամայն հասկանալի պատճառներով: Եվ այսպիսով, այդ քայքայման արդյունքներն առայժմ բավական անշահավետ են, նույնիսկ վնասակար մեր աշխատանքի համար: Մյուս կողմից, այլոց թվում Հայաստան ժամանելը այնպիսի երդվյալ խմբապետների, ինչպիսին են Չոլո Աբրահամյանը և Բուլոյանը, անկասկած մեզ համար շահավետ չէ: Մեզ համար անցանկալի է, որ մեր երկիր վերադառնան Դաշնակցության մարտիկները: Այդպիսի տարրերը մեզ մոտ քիչ չեն: Հայտարարություն տվածների մեջ մենք չենք տեսնում ոչ մի խոշոր մտավորական դեմք, որի հեռացումը մեզ համար խաղար, քաղաքական իմաստով, էական դեր: Մեծ մասը խմբապետներ ու մաուզերիստներ են:

Հրավիրելով Ձեր ուշադրությունը այդ միանգամայն անթույլատրելի երևույթի վրա, որը հակասում է մեր ընդհանուր գծին, կտրականապես խնդրում ենք առաջարկել Թավրիզի գլխավոր հյուպատոսությանը այլևս առանց մեր համաձայնության և մանրամասն ծանոթության տարագիրներից որևէ մեկին Հայաստան մուտք ունենալու իրավունքի թույլտվություն չտալ: Ինչ վերաբերում է այժմ Թավրիզում տիրող տրամադրության օգտագործմանը, ապա մենք մնում ենք մեր նախկին կարծիքին, այն է՝ քայքայումը պետք է տանել այնտեղ՝ Թավրիզում, կազմակերպել խումբ, դաշնակցական մտավորական ամենաազդեցիկ ուժերի կազմով, որին հանձնարարել դարձյալ Թավրիզում զուտ քաղաքական ուղղությամբ պառակտման խորացման ու ընդլայնման աշխատանք: Այդ կամպանիայի ընթացքում ոչ ոքի թույլ չտալ գալ Հայաստան: Նյութական տեսակետից, հնարավորության դեպքում, Կենտկոմի գիտությամբ, հիշյալ խմբին կարող ենք օժանդակել, եթե դա կօգտագործվի տարբեր գրքույկներ և, ամենագլխավորը, դարձյալ Թավրիզում թերթ տպագրելու համար:

Հավելված. Երեք քաղվածք ԱնդրԱրտհանձնաժողովի համար:

ՀայԱրտհանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Մելիք-Հովսեփյան

Գործառնասի պետ՝ **Վարդանյան**

Գաղտնի բաժնի պետ՝ **Մուղդուսի**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.24, թ.126 և հակ: Թարգմ. ռուս.:

278. ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի Քարտուղարության բյուրոյի որոշումը

19 նոյեմբերի 1924թ.

Լսեցին. Արտասահմանյան հարցեր: (Զեկ. զեկ. ընկ. ընկ. Մռավյան, Մյասնիկյան, Օրջոնիկիձե):

Որոշեցին. Հայկական հարցերի գծով.

1. Անհրաժեշտ համարել արտասահմանում դաշնակների քայքայման գծով համագումարի հրավիրումը: Համագումարի անցկացումը հանձնարարել ընկ. ընկ. Ա. Երզնկյանին և Փիրումյանին: Այս կետի վերաբերյալ հարցնել ՀԿԿ Կենտկոմի կարծիքը:

2. Ընկ. Ս. Փիրումյանին ընդունել Կոմկուսի մեջ: Ստանալ ՌԿԿ Կենտկոմի հաստատմանը:

3. Անդրժողկոմխորհի միջոցով ամսական 50 դոլար բաց թողնել «Բանվոր Փարիզի» թերթի համար:

4. Ցանկալի համարել արտասահմանում «Խորհրդային Հայաստանի բարեկամների ընկերության» կազմակերպումը, որը գործելու է «Խորհրդային Ռուսաստանի բարեկամների ընկերության» օրինակով:

5. Հայտարարել անվերապահորեն Հայաստանի ազգային և դաշնակցական պատվիրակություններին, որոնք գործում են արտասահմանում Հայաստանի անունից, որ նրանք չեն ներկայացնում Խորհրդային Հայաստանի կարծիքը և որ չեն կարող հանդես գալ հայերի անունից, նրանց դեմ մղելով կատաղի պայքար:

6. Հարց հարուցել ՌԿԿ Կենտկոմի առաջ Փարիզի մեր միսիայում Անդրկովկասի ներկայացուցիչ (հայ) մտցնելու անհրաժեշտության մասին:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.4, գ.13, թ.160: Թարգմ. ռուս.:

279. ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի Քարտուղարության բյուրոյի որոշումը

4 փետրվարի 1925թ.

Լսեցին. Արտասահմանյան հարցեր: (Զեկուցողներ՝ ընկ. ընկ. Մյասնիկյան, Օրջոնիկիձե, Էլիավա):

Որոշեցին. 1. Վրացական տարագրության շրջանում աշխատելու համար նշանակել ընկ. Գոգոբերիձեին և հանձնարարել ՀԿԿ Կենտկո-

մին շտապ առանձնացնել մի ընկերոջ հայկական տարագրության շրջանում աշխատելու համար:

2. Հայ գաղթականների ընդունման վերաբերյալ նկատի ունենալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Միկոյանի հայտարարությունը, որ եթե տեղավորման համար նրանցից միջոցներ չպահանջվեն, ապա նրանց հող կտրամադրվի, մոտավորապես, Հյուսիսային Կովկասում:

3. Առաջարկել ՀԿԿ Կենտկոմին առաջադրել մի ընկերոջ Կոմինտերնում աշխատելու համար, որից հետո նրա թեկնածությունը առաջ քաշել ՌԿԿ Կենտկոմի և ընկ. Զինովևի միջոցով:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.14, թ.10-11: Թարգմ. ռուս.:

280. ՀԿԿ Կենտկոմի Նախագահության որոշումը

10 փետրվարի 1925թ.

Լսեցին. Զեկուցում արտասահմանյան գործերի մասին: (Զեկ. զեկ. ընկ. ընկ. Լուկաշին, Երզնկյան, Փիրումյան):

Որոշեցին. 1. Հաստատել, որ անհրաժեշտ և ցանկալի է հայերով բնակեցված վայրերում (Կոստանդնուպոլիս, Բալկաններ, Փարիզ, Մարսել, Ամերիկա) ԽՍՀՄ համապատասխան լիազոր ներկայացուցչություններին կից ունենալ Դաշնակցության կազմալուծման աշխատանքի գծով ընկերներ:

2. Ուժեղացնել Դաշնակցության կազմալուծման աշխատանքը արտասահմանում և խնամքով նախապատրաստել ըստ շրջանների Դաշնակցության կազմալուծման համագումարների հրավիրման մասին հարցը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.7: Թարգմ. ռուս.:

281. ՀԿԿ Կենտկոմի Նախագահության որոշումը

10 փետրվարի 1925թ.

Լսեցին. Վրաստանում և Ադրբեջանում կազմալուծված դաշնակցականների շրջանում տարվող աշխատանքի մասին: (Զեկ.Շահսուվարյան):

Որոշեցին. 1. Մի շարք կազմալուծված դաշնակցականների հայտարարության հիման վրա ՌԿԿ Անդրերկրկոմի առաջ հարց բարձրացնել՝ չի՞ համարում արդյոք անհրաժեշտ ու ժամանակին արդեն ձեռնարկելու Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում Դաշնակցություն կուսակցության կազմալուծման գծով աշխատանքին:

2. Կրկին հաստատել Կենտկոմի Նախագահության 1925թ. հունվարի 5-ի որոշումը (արձանագրություն թիվ 34, կետ 9, ենթակետեր՝ բ, գ, դ, ե)*:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.7: Թարգմ. ռուս.:

** Տես սույն ժողովածուի 162 փաստաթուղթը:*

282. ՌԿԿ Անդրերկրկոմի մամուլի ենթաբաժնի վարիչին

24 մարտի 1925թ.

Թիվ 856/գ

Կենտրոնական կոմիտեն անհրաժեշտ է համարում Թավրիզում խորհրդային կողմնորոշման անկուսակցական թերթի հրատարակությունը: Թավրիզը մինչև այժմ էլ դաշնակցականների մոտակա բազան է ընդդեմ Խորհրդային Անդրկովկասի և մասնավորապես Խորհրդային Հայաստանի: Թավրիզում դեռևս կան մի քանի հարյուր դաշնակ տարագիրներ, ովքեր պարսկահայ զանգվածներում հակահեղափոխական քարոզ են մղում մեր դեմ:

Թավրիզում այժմ ստեղծվում է խորհրդային կողմնորոշման ընկերություն՝ այսպես կոչված «Հայ ժողովուրդ», որի կանոնադրությունը նախատեսում է հասարակական-քաղաքական աշխատանքի պլան՝ խորհրդային կողմնորոշման ծրագրի վրա: Կանոնադրությամբ ընկերությունը դնում է ավելի արմատական քաղաքական խնդիրներ, քան այդ անում են այսպես կոչված «Հայաստանի օգնության կոմիտեները»:

Արտասահմանի հայության վրա մեր ազդեցությունը ուժեղացնելու և նրա հետ մեր կապերը ամրապնդելու մասին ՀԿԿ Կենտկոմի և ՌԿԿ Անդրերկրկոմի որոշումների կապակցությամբ այդ ընկերության գործունեությունը ձեռք է բերում հատուկ այժմեականություն: Անհրաժեշտ է այդ աշխատանքը ամրապնդել անկուսակցական խորհրդային թերթի վարկավորման միջոցով, թերթ, որը, ինչպես կարծում ենք, նպատակահարմար կլինի կապել «Հայ ժողովուրդ» ընկերության հետ:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար՝ **Հովհաննիսյան**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.22, թ.25: Թարգմ. ռուս.:

283. ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի Քարտուղարության բյուրոյի որոշումը

27 մարտի 1925թ.

Լսեցին. Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու աշխատանքի մասին: (ՀԿԿ Կենտկոմի որոշումը)*:

Որոշեցին. 1. Համաձայնել ՀԿԿ Կենտկոմի կարծիքին:

2. Հանձնարարել ՀԿԿ Կենտկոմին առանձնացնել համապատասխան ընկերոջ դաշնակցականների կազմալուծման գծով Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովում աշխատելու համար:

3. Առաջարկել Վրաստանի Կոմկուսի Կենտկոմին և Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմին մշակել Վրաստանում և Ադրբեջանում Դաշնակցություն կուսակցության կազմալուծման աշխատանքի պլան և ներկայացնել Անդրերկրկոմ:

4. Խնդրել ՌԿԿ Հյուսիս-Կովկասյան երկրային կոմիտեին Հյուսիսային Կովկասում ևս անցկացնել կազմալուծման համապատասխան աշխատանք:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.14, թ.21: Թարգմ. ռուս.:

*Տե՛ս ժողովածուի 281 փաստաթուղթը:

284. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

6 ապրիլի 1925թ.

Լսեցին. Դաշնակցությունը կազմալուծելու գծով Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովում աշխատելու համար մեկ ընկերոջ առանձնացնելու մասին (քաղվածք Անդրերկրկոմի Նախագահության նիստի արձանագրությունից. արձ. 30, կետ 4)*:

Որոշեցին. Հանձնարարել Կենտկոմի քարտուղարությանը Հայաստանի Արտակարգ հանձնաժողովից առանձնացնել մեկ ընկերոջ Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովում տվյալ բնագավառում աշխատանքի համար:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.13 հակ.: Թարգմ. ռուս.:

*Տե՛ս ժողովածուի 283 փաստաթուղթը.

285. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

6 ապրիլի 1925թ.

Լսեցին. Հյուսիսային Կովկասում Դաշնակցության կազմալուծման մասին: (Զեկ. Շահսուվարյան):

Որոշեցին 1. Գտնել անհրաժեշտ Հյուսիսային Կովկասում Դաշնակցության կազմալուծման անհրաժեշտությունը:

2. Տալ համապատասխան ցուցումներ այդ աշխատանքը կատարելու տեխնիկայի վերաբերյալ:

3. Հայտարարությունն ընդհանրապես համարել ընդունելի և հրապարակման ենթակա:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.14: Թարգմ. ռուս.:

286. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարությանը

15 հունիսի 1925թ.

Թիվ 6020 խ/գ

Ինչպես Ձեզ հայտնի է, ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի որոշման* համաձայն մենք պետք է առաջադրեինք համապատասխան ընկերոջ՝ աշխատելու համար Անդրկովկասում Դաշնակցության կազմալուծման գծով: Նկատի ունենալով, որ մենք այդպիսին չունենք, այդ աշխատանքի համար առաջադրել ենք Անդրարտհանձնաժողովի աշխատակից ընկ. Նազարովին, որի մասին մենք արդեն հայտնել ենք Անդրարտհանձնաժողովին: Այդ հարցը համաձայնեցնելու համար Հայարտհանձնաժողովը խնդրում է ադ մասին տեղեկացնել Անդրերկրկոմին:

Հայարտհանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Վարդանյան**
Գաղտնի բաժնի պետ՝ **Մուղդուսի**

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.46, թ.12: Թարգմ. ռուս.:

*Տե՛ս ժողովածուի 279 փաստաթուղթը:

287. Սիրելի Արշակ*

30 հունիսի 1925թ.

Փարիզ

Ողջ և առողջ ու ապահով ժամանակին հասել եմ Փարիզ: Միջագետքի անապատներում միայն շատ նեղություններ կրեցինք ջրի պակասության և սաստիկ շոգերի շնորհիվ: Բոլոր տեղերում ընկերների բարոյական աջակցության շնորհիվ շատ արագ կերպով էի անցնում, որ ազատվեմ շոգերից և թե ծախսերից: Միջերկրական ծովի վրա 8 օր եկանք, կանգ առնելով մի քանի ժամ Ալեքսանդրիա նավահանգստում, Սարդինիա և Սիցիլիա կղզիների մոտ: Հասնելով Մարսել, նավահանգստից գնացի ուղղակի երկաթուղու կայարանը և 2-3 ժամից ճանապարհվեցի դեպի Փարիզ. Մարսելեն 12 ժամվա ընթացքում հասա և տեղավորվեցի ընկերների մոտ: Այնպես որ հունիսի 8-9-ին եղել եմ Փարիզում: Այս քսան օրվա մեջ շատ խոսեցինք ընկերների հետ և շատ բան տեսա և շատ բան իմացա: Քո մասին շատ հետաքրքրվեցին, թե ինչպես ես ապրում, ոնց է տնտեսական դրությունդ, տրամադրությունդ և այլն, և այլն: Պիտի ասեմ բոլորն էլ անկեղծ կերպով կհետաքրքրվեին քեզնով և կցավեին, որ դու այդպիսի դրություն ստեղծեցիր: Երբ ասացի, որ տնտեսական դրությունը որոշ չափով լավ է, ամբողջ ընտանիքը իր մոտ է, շրջապատված իր զավակներով և այլն, շատ ուրախացան:

Ընկերներից ասողներ կան և խորհուրդ կտան, որ դու պաշտոնական կերպով հայտնես կուսակցությանը, որ դու, ճիշտ է, կանգնած ես այն տեսակետի վրա, որի մասին գրել ես, սակայն քանի որ կուսակցության գերագույն խորհուրդը կանգնած է անկախության տեսակետի, ուստի անհատապես դու, կանգնած լինելով քո տեսակետի վրա, սակայն պետք է, իբրև կուսակցական, ենթարկվես կուսակցության որոշումներին և նրա ընդունած ծրագրի ու կանոնագրի համաձայն շարժվես ու աշխատես: Այսինքն, որ դու քո տեսակետը առաջարկելիս քո կուսակցությանը, մնալով միաժամանակ քո կուսակցության մեջ:

Սիրելի Արշակ, մի՞թե Տրոցկին այդպես չարավ. նա շատ բան կամեցավ անել իր կուսակցության շարքերում, սակայն չանցնելով իր առաջարկությունները, նա նորից մնաց իր կուսակցության մեջ և այստեղ նախկին եռանդով աշխատում է:

Պիտի ասեմ, որ իմ անհատական կարծիքն է, որ բացի քո բրոշյուրից**, եղել են այլևայլ ասեկոսներ և աննպաստ տեղեկություններ էլ քո մասին, որ քո խնդրին այդպիսի ընթացք է տրված: Այդ տեսակետի վրա կանգնած, որքան լսեցի, եղել են և 2-3 հոգի էլ մեր ականավոր ընկերներեն, որոնք ներկայումս աշխատում են նախկին եռանդով:

Խատիսյանն ինձ ասաց, որ քեզ նամակ կգրի:

Ես շատ կցավեմ, որ դու չես կարողացել գալ ընդ[հանուր] ժող[ով]***, գոնե իբրև Ա. Ղազարյան, և ես համոզված եմ, որ նման ընթացք չէր տրվիլ քո խնդրին: Համենայն դեպս այս ուղղությամբ մտածիր և կարիք չկար նորից նոր գրքեր լույս ընծայել այդ խնդրի շուրջը:

Դրոն գտնվում է Ռումինիայում, ծառայում է, այլևս չի վերադառնա Ռուսաստան:

Հանրապետության պատվիրակությունը գոյություն ունի և դեռ ճանաչվում է Ֆրանսիայի և այլ մի քանի պետությունների կողմից:

Այստեղ եկած ընկերները բոլորը այս կամ այն ձևով մտել են ծառայության և շատ համեստ կերպով ապրում են:

Նամակ գրիր: Ես էլ կաշխատեմ միշտ կապ պահպանել: Բարևներս տիկնոջդ, օրիորդներին և փոքրիկներին. հիշեցրու նույնպես Սարգսին:

Համբույրներով՝ Գերասիմ

Հ. Գ. խնդրում եմ, որ նամակս ոչ ոք չկարդա, որովհետև գրում եմ միայն քեզ և անհատական և իմ անձնական տպավորությունները ու տեղեկություններն են, որ գրում եմ քեզ իբրև իմ ընկերոջը:

Նույնը

Հասցես Paris (France)

71, avenue Kleber

M-G. Balaian[11]

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ.362, թ.3 և հակ.-4 և հակ.: Ինքնագիր:

---

* Արշակ Ղազարյանի մասին տե՛ս նաև ժողովածուի 289, 291, 298 փաստաթղթերը:

** Տե՛ս Արշ. Ղազարյան, մոմենտը պահանջում է: Թեհրան, 1925թ.:

*** Խոսքը ՀՅԴ 10-րդ ընդհանուր ժողովի մասին է:

288. ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

23 հուլիսի 1925թ.

Լսեցին. Կարո Սասունու հայտարարության մասին: (Զեկ. Մռավյան):

Որոշեցին. Լսել բանավոր հաղորդում Կ. Սասունու հայտարա-

ռությունների մասին ընդդեմ Կենտրոնական բյուրոյի և նրա դաշնակ ընկերների: Խնդրել Անդրերկրկոմին միջոցներ գտնել նրանց նյութական օգնություն ցույց տալու համար, այն տրամադրելով գրականության տպագրությանը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.8, թ.22 հակ.: Թարգմ. ռուս.:

289. Ընկ. Ս.Կ. Պաստուխովին՝ Մոսկվա

Ընկ. Ս. Համբարձումյանին՝ Երևան

Ընկ. Ա. Հովհաննիսյանին՝ Երևան

18 օգոստոսի 1925թ.

Թեհրան

Թիվ 113գ/Հայ.

Հարգելի ընկերներ.

Հունիսի 22-ի թիվ 73 և օգոստոսի 3-ի թիվ 100 գրություններին լրացուցիչ հայտնում եմ Դաշնակցություն կուսակցության կազմալուծման ուղղությամբ հետագա աշխատանքի մասին:

Բժիշկ Ա. Ղազարյանը, դաշնակցականների նախկին նշանավոր լիդեր և այժմ կազմալուծման անցկացման գծով կենտրոնական գործող անձը, որ պարտավոր է սկսել պառակտումից, արդեն հրատարակել է իր «Գաղափար» թերթի երկու համար:

Հիմնական գործունեության նկատմամբ բժշկի զգույշ մոտեցումը սկզբում կասկած առաջացրեց նաև մեր մեջ՝ կամ բժիշկը գործել է ոչ անկեղծ, ունենալով այլ, թաքնված նպատակներ, կամ անշրջելիորեն որոշելով իր վարքագիծը, նա պարզապես ձեռնարկել է բոլոր նախազգուշությունները, որոնք անհրաժեշտ են արտասահմանյան կյանքի պայմաններում, այն էլ Թեհրանում կուսակցական մաուզերիստների առկայությամբ:

Ուստի մենք բժշկին առաջարկեցինք կազմակերպել դաշնակների դեմ պայքար մղելու գծով «եռյակ» և ունենալ պարբերական նիստեր: Նա համաձայնեց: Եռյակի մեջ մտան՝ բժիշկ Ա. Ղազարյանը (նախագահ), Ս. Առաքելյանը և Ն. Բորիսովսկին (անդամներ): Հենց երկրորդ նիստում բժշկին առաջարկվեց ստորագրել արձանագրություն, որը և նա արեց անվերապահորեն:

Բժիշկը ձեռնարկեց «Երիտասարդական միության» կազմակերպումը (ընկ. Ա. Հովհաննիսյանի գրքույկում շարադրված «Հայ ժողովրդի» նման):

Միությունը հանդես կգա համայնքի խորհրդի առաջին իսկ ընտրություններում, այլ հակադաշնակցական կազմակերպությունների հետ միասին:

Մեզ, սակայն, հավասար չափով հետաքրքրում է նաև դաշնակցական կազմակերպությունների մասին հարցը նաև Եվրոպայում և Ամերիկայում:

Բժիշկ Ղազարյանը իր թերթը ուղարկել է այդ երկրներում իր հին ընկերներին և վստահություն է հայտնում, որ նրանցից համեմատաբար խելացիները կընդունեն իր պլատֆորմը և կպաշտպանեն իր թերթը:

Հետագայի մասին հաջորդ փոստով:

Լիազոր-ներկայացուցիչ՝ Յուրենև

Հայկական գործերի գծով քարտուղար՝ Ս. Առաքելյան

ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ.113, ց.3, գ. 362, թ.48-49: Թարգմ. ռուս.:

290. ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմին

21 օգոստոսի 1925թ.

Հայաստանից Ամերիկա մարդ ուղարկելու մասին հայ կոմունիստների՝ ամերիկյան «Ուորկեր» կուսակցության անդամների, մի շարք դիմումների հետևությամբ, և հաշվի առնելով արտասահմանյան, մասնավորապես և հատկապես ամերիկյան դաշնակցականների կազմալուծման գծով աշխատանքի ուժեղացման կարևորությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության ս.թ. մայիսի 2-ի որոշումով նախատեսված է Ամերիկայում աշխատելու համար գործուղել Կենտկոմի մամուլի ենթաբաժնի վարիչ ընկ. Կարո Համդիյանին, որը տիրապետում է անգլերեն լեզվին և ունի կուսակցական զանգվածներում կազմակերպական և քարոզչական աշխատանք վարելու գործնական փորձ:

Հայաստանի Կենտկոմը խնդրում է թույլատրել այդ գործուղումը և միջնորդություն հարուցել համապատասխան մարմինների առաջ նրան ապահովելու անհրաժեշտ փաստաթղթերով Ամերիկա մեկնելու համար:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.5, գ.22, թ.68: Թարգմ. ռուս.:

291.Թեհրանում ԽՍՀՄ դեսպանության գաղտնի բյուլետենից՝ Պարսկաստանում Դաշնակցությունը կպմալուծելու ուղղությամբ տարվող աշխատանքի մասին

25 օգոստոսի 1925թ.*

Թեհրան

Տեղական դաշնակցականների շրջանում զգացվում է որոշ իրարանցում: Նրանց կարծիքով 10-րդ համագումարի որոշումները կուսակցությունը դուրս են բերել փակուղուց: Դատելով թերթերից, նույն իրարանցումը նկատվում է և արտասահմանյան այլ գաղութներում, որտեղ կան դաշնակցական կազմակերպություններ: Թեհրանի Կենտկոմը սկսել է պարբերաբար հրահանգներ ստանալ Փարիզից, - մի կապ, որը նախկինում բավական թույլ էր պահպանվում:

Այդ կապակցությամբ Ղազվինից Թեհրան ժամանած բժիշկ Ա. Ղազարյանի ելույթը, կուսակցության 10-րդ համագումարի քննադատությամբ, և Թեհրանում նրա հրատարակած «Գաղափար» թերթի երկու համարները, թերթ, որի ուղղությունը բավական ցցուն արտահայտված է թերթի առաջին համարի «Մեր ուղին» առաջնորդողում, դաշնակցականների շարքերում առաջացրել են ուժեղ չարություն բժշկի դեմ:

Սակայն թերթը մեծ համակրությամբ է ընդունել այն անկուսակցական զանգվածը, որն առաջ ուղղակի կամ անուղղակի դաշնակցականների նեցուկն էր: Այդ է առայժմ Ղազարյանի աշխատանքի արդյունքը: Կհաջողվի՞ արդյոք նրան պառակտել դաշնակցականներին, ցույց կտա մոտակա ժամանակը: Համենայն դեպս նրա կողմնորոշումը դեպի Խորհրդային Հայաստան, գունազարդված ազգայնականությամբ, ոչ միայն անկուսակցականների, այլև դաշնակցական երիտասարդության ճաշակով է, որը հետաքրքրությամբ է սպասում թերթի հերթական համարին:

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.362, թ.31-32: Թարգմ. ռուս.:

*Դեսպանության հայկական գործերի գծով քարտուղար Ս. Առաքելյանի կողմից փաստաթուղթը ՀԽՍՀ ժողկոմխորհ ուղարկելու ժամանակը: Բյուլետենն ընդգրկում է 1925թ. հունիս-հուլիս ամիսների ժամանակաշրջանը:

292.ՀԽՍՀ Ժողկոմխորհ՝ ընկ. Ս. Լուկաշինին

Պատճենը՝ ընկ. Ս. Պաստուխովին

26 հունիսի 1926թ.

Այս նույն փոստով Ձեզ է ուղարկվում իմ հայտագրի* պատճենը՝ ս.թ. հունիսի 8-ի թիվ 1232 բողոքը Արտաքին գործերի մինիստրին պարսկական դաշնակների կողմից «Հայաստանի 8-րդ տարեդարձը» նշելու առթիվ, ինչպես նաև Ռեշտի մեր հյուպատոսի գրությունը արքեպիսկոպոս Ներսեսի գործունեության մասին: Այս արքեպիսկոպոսը, ինչպես դուք կտեսնեք «Հայկական կյանքի» քաղվածքից, իրեն պահում է ոչ միայն լոյալ, այլև նպաստում է դաշնակների զսպմանը, ինչպես և մեզ համար նպաստավոր իմաստով ազդում է չեզոք զանգվածների վրա:

Ինչ վերաբերում է դաշնակցականների տոնակատարությանը, ապա մենք, բացի պաշտոնական միջոցներից, ձեռնարկել ենք նաև անմիջական ներգործության, բոյկոտելով «Սրճարան Լոնդոնը», որը դաշնակցականներին տվել է «տոնակատարության» ապաստան: Բոյկոտը բարոյական լավ ազդեցություն է ունեցել նաև մյուս առևտրական հիմնարկությունների վրա, որոնք մինչև այժմ բարենպաստ չեզոք են եղել դաշնակցականների նկատմամբ, իսկ «Սրճարան Լոնդոնը» ուժեղ կերպով տկարացել է, իսկ նրա տերը ամեն օր մաշում է գլխավոր հյուպատոսության ու Լիազոր-ներկայացուցչության շեմքերը, խնդրելով ներողամտություն: Մենք շուտով կհանենք բոյկոտը, քանի որ այդ դասը հասավ իր նպատակին: Բոյկոտի կապակցությամբ դաշնակցականների լիդերները ունեցան մի շարք տհաճություններ, և սրճարանի տերը ներկայացավ մեզ ու խնդրեց ներողություն:

Պարսկական կառավարության ձեռնարկած միջոցների մասին կհայտնեմ լրացուցիչ:

Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ՝ Կ. Յուրենև

Հայկական գործերի գծով քարտուղար՝ Ս. Առաքելյան

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.362, թ.111-112: Թարգմ. ռուս.:

*Հայտագրի պատճենը տե՛ս նույն տեղում, թ.114:

293.ՀԿ(բ)Կ Կենտկոմի Նախագահության որոշումը

12-13 օգոստոսի 1926թ.

Լսեցին. Ընկ. Գ. Մեհրաբյանի հաղորդումը Պարսկաստանում դաշնակցականների աշխատանքի մասին:

Որոշեցին. Ընկ. Գ. Մեհրաբյանի[12] առաջարկությունները հանձնել Քարտուղարության հաստատմանը:

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.107: Թարգմ. ռուս.:

294.Հարգելի ընկ. Նազարեթյան*

<Ոչ շուտ 12-13 օգոստոսի 1926թ.>**

Ձեզ վերադարձնում եմ դաշնակցական փաստաթղթերի մասին գրագրությունը: Դժվարանում եմ պարզաբանել, թե ինչ ուղիներով կարող է դաշնակցականներին հայտնի դարձած լինել այստեղ հիշված մեր տեղյակության մասին փաստը՝ Գյուտի13 հետ նրանց բանակցությունների վերաբերյալ:

Չի կարող խոսք լինել այն մասին, որ ընկերներից որևէ մեկը օգտագործած լինի դաշնակցականների մասին գաղտնի փաստաթղթերը, քանի որ դրանք պահվում են Հայպետքաղվարչությունում և որոնց բովանդակությունը մատչելի է միայն սահմանափակ շրջանի մարդկանց:

Վերջին գաղտնի փաստաթղթերի բովանդակությունը, սակայն, հայտնի է դարձել մարդկանց ավելի լայն շրջանի, քանի որ Կենտկոմի Նախագահությունում դրված է եղել ինֆորմացիոն զեկուցում Թավրիզի դաշնակցականների աշխատանքի մասին*** և այդ կապակցությամբ հաղորդվել է նաև Իշխանյանի հետ Գյուտի բանակցությունների մասին:

Հավանաբար հենց այդ հաղորդումն է հայտնի դարձել դաշնակցականներին: Տվյալ դեպքում, իհարկե, տվյալների հաղորդումը կարող է տեղի ունեցած լինել միայն անգիտակցաբար և անզգուշորեն, հինգերորդ և տասներորդ մարդկանց միջոցով, ինչպես պատահում է նման դեպքերում: Կաշխատեմ ձեռնարկել համապատասխան նախազգուշական միջոցառումներ:

Սույնին կցելով Պարսկաստանում դաշնակցականների աշխատանքի մասին ընկ. Մեհրաբյանի զեկուցման կապակցությամբ Կենտկոմի որոշման**** պատճենը, օգտվում եմ առիթից Ձեր ուշադրությունը հրավիրելու այն աշխատանքի կարևորության վրա, որը պետք է կատարվի Պարսկաստանում Անդրպետքաղվարչության ներկայացուցիչների կողմից:

Ընկ. Մեհրաբյանի զեկուցումից մենք այստեղ ստացել ենք այնպիսի տպավորություն, որ ընկ. Դուբսոնը որոշ չափով ձևականորեն է վերաբերվում տվյալ աշխատանքին: Բացակայում է հարկավոր կապը մասնավորապես ընկ. Մեհրաբյանի հետ:

Ցանկալի է հյուպատոսությանը կից ստեղծել պատասխանատու եռյակ, Դուբսոնի, Մեհրաբյանի և ևս որևէ մեկի մասնակցությամբ՝ դաշնակցականների կազմալուծման աշխատանքը ղեկավարելու համար:

Կոմունիստական բարևներով*****

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.26բ, թ.43: Թարգմ. ռուս.:

---

* Հմայակ Նազարեթյան՝ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար:

** Ժամանակը որվում է ըստ փաստաթղթի բովանդակության. Գ. Մեհրաբյանի զեկուցումը ՀԿ(բ) Կ Կենտկոմի Նախագահության նիստում լսվել է 1926թ. օգոստոսի 12-13-ին:

*** Խոսքը օգոստոսի 12-13-ի նիստի մասին է:

**** Տե՛ս ժողովածուի 293 փաստաթուղթը:

***** Փաստաթղթի հեղինակը կարող է լինել ՀԿ(բ) Կ Կենտկոմի քարտուղարը:

295. Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի քարտուղար Կոստանյանին

29 օգոստոսի 1928թ.

Փարիզ

... Դաշնակցությունն կուսակցությունը, որը երեք տարի առաջ ապրում էր զգալի կազմալուծման ժամանակաշրջան, այժմ որոշ չափով ամրապնդվել է: Ընդ որում որոշ օբյեկտիվ պատճառների հետ մեկտեղ այդ հարցում պակաս դեր չի խաղացել և մեր անբավարար աշխատանքը գաղութի սահմաններում...

Կոմունիստական ողջույններով՝ Դ. Սիմոնյան, Գ. Վարդանյան, Մուսայելյան*

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.8, գ.63, թ.24: Թարգմ. ռուս.:

---

* Առաջին երկուսը ներկայացնում էին ՀՕԿ-ի հանձնաժողովը, իսկ վերջինը Փարիզի «Երևան» թերթի խմբագիրն էր:

296. Թիֆլիս, Անդրպետքաղվարչության նախագահին Պատճենը ՀԿ(բ)Կ Կենտկոմ

26 սեպտեմբերի 1929թ.

Պետքաղվարչության ունեցած տվյալների համաձայն վերջին ժամանակներս դաշնակները Պարսկաստանում հատկապես ուժեղացրել են իրենց հակախորհրդային աշխատանքը, այդ նպատակի համար օգտագործելով եկեղեցական-ազգային կազմակերպությունները, մասնավորապես Պարսկական Ադրբեջանի թեմի վարչությունը:

Հուլիսին դաշնակների կապավորների ձերբակալության կապակցությամբ, որոնց մոտ հայտնաբերվել են գաղտնագրի բանալի և նամակներ Արարատից, Քրդական շարժման ղեկավար Արտաշես Մուրադյանից, արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանի անունով, որոնք հաստատում են Թավրիզի դաշնակների կապը Քրդական շարժման հետ, դաշնակների հետ Պարսկական կառավարության հարաբերությունները դարձել են լարված:

ՀայՊՔՎ անհրաժեշտ է համարում Պարսկական կառավարության այդ տրամադրությունն օգտագործել և համապատասխան մարմինների միջոցով Պարսկակառավարության առաջ դնել Պարսկաստանից Թավրիզի դաշնակների ղեկավարներին և արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանին Պարսկաստանից հեռացնելու մասին հարցը, հայտնելով մի շարք լրացուցիչ փաստեր, որոնք հաստատում են Քրդական շարժման ղեկավարման ուղղությամբ դաշնակների նշված աշխատանքը:

Տվյալ դեպքում մեծ շահավետությամբ կարելի է օգտվել Քրդական շարժման ղեկավար Արտաշես Մուրադյանին ցույց դնելուց:Արդյունքների մասին խնդրում ենք մեզ տեղեկացնել:

ՊՔՎ նախագահ՝ Մարգարյան

Գործառբաժնի պետ՝ Պետրոսյան

Գաղտնի բաժնի պետ՝ Պողոսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.9, գ.44, թ.44: Թարգմ. ռուս.:

297. Բոլշևիկ-թրքական սադրանքներ Ատրպատականի մեջ

24 հունվարի 1930թ.

Ուքը տարիե ի վեր խորհրդային իշխանությունը ոչ մեկ միջոցի առջև կանգ կառնե Ատրպատականեն հեռացնելու համար Առաջնորդ Մելիք-Թանգյան արքեպիսկոպոսը:

Հայտնի է, որ վերջին տարիներու ընթացքին Չեկայի սպառնալիքին տակ էջմիածին քանի մը անգամ ստիպված եղավ հրահանգ տալ Մելիք-Թանգյան արքեպիսկոպոսին, որ հեռանա Թավրիզեն: Սակայն ամեն անգամ ալ Ատրպատականի ժողովուրդը, թեմական խորհրդի գլխավորությամբ, վճռականապես արգելք եղավ իր սիրած Առաջնորդի հեռանալուն: Մինչև այժմ եղած փորձերեն մասնավորապես հիշատակելի է քանի մը տարի առաջ Գյուտ եպիսկոպոսի առաքումը Թավրիզ՝ համոզելու համար Մելիք-Թանգյան արքեպիսկոպոսը: Բայց Գյուտ եպիսկոպոս ձեռնունայն էջմիածին վերադարձավ: Այժմ բոլշևիկյան Չեկան էջմիածնի անունով նման մի փորձ մը կընե Թավրիզ դրկելով Արսեն վրդ. Ղլըտճյանը, որ դարձյալ Չեկայի հրամանով եպիսկոպոս է ձեռնադրված, որպեսզի կարենա գրավել Մելիք-Թանգյանի աթոռը:

Հարկավ, էջմիածինը ինքը ոչ մեկ շահ կրնա ունենալ Ատրպատականեն հետ կանչելու համար Մելիք-Թանգյանի պես առաքինի և հեղինակավոր հոգևորական մը, որ ամբողջ ժողովրդի սիրելին է և պարսից կառավարության կողմե ալ չափազանց հարգված անձ մըն է: Հարկավ, էջմիածինը ինքը շահ չունի երբեք Մելիք-Թանգյանի պես վստահելի, ազդեցիկ և կարող հոգևորականի մը տեղ Ատրպատականի Առաջնորդի պատասխանատու պաշտոնին վրա դնելու Արսեն նորընծա եպիսկոպոս Ղլըտճյանի պես հեղհեղուկ և անվստահելի անձնավորություն մը, որ անակնկալ կերպով այժմ ալ դարձած է բոլշևիկներու մարդը: Սակայն էջմիածինը դադրած է անկախ հաստատություն մը ըլլալե և հարկադրված է ընել այն, ինչ որ կհրամայե բոլշևիկյան Չեկան:

Ուշագրավ է այն տեղեկությունը, որ «Դրոշակ» տված էր վերջերս հավաստի աղբյուրե , այն է, որ խորհրդային կառավարութենեն ոչ նվազ ենկյուրիի կառավարությունը կպահանջե, որ Մելիք-Թանգյանը հեռացվի Ատրպատականեն: Ինչո՞ւ: Որովհետև, ըստ թուրքերու, «Մելիք-Թանգյանը հովանավորում է դաշնակներին, իսկ դաշնակները արգելք են լինում Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի բարեկամության զարգացման»: Ասիկա կնշանակե, թե, ինչպես իրավամբ կնկատե «Դրոշակի» թղթակիցը, «Մելիք-Թանգյանի և դաշնակների ներկայությունը խոչընդոտ է հանդիսանում Անգորայի գործակալների համաթրքական գործունեության Ատրպատականում»:

Չափազանց հատկանշական է բոլշևիկներու ընթացքը Պարսկաստանի մեջ, ուր անոնք ոչ այնքան իրենց սեփական, այլ քեմալականներու գործակալի պաշտոնը կկատարեն համառորեն: Այսպես, օրինակ, բոլշևիկներն են, որ մեծ եռանդով կգրգռեն պարսկական քրդերը պարսից կառավարության դեմ, բայց որոշ է, որ այդ կընեն թուրքերու համար, իրենց բարեկամ էնկյուրիի համար: Այսպես, օրինակ, Ատրպատականի թուրքերն ալ պարսից կառավարության դեմ գրգռողները բոլշևիկյան գործակալներն են, որոնք, սակայն, կգործեն թանձր վարագույրներու ետև պահված էնկյուրիի գործակալներուն հետ համախորհուրդ:

Հարկավ Մելիք-Թանգյանի ներկայությունը հաճելի չի կրնար ըլլալ ոչ բոլշիկներուն, և ոչ ալ էնկյուրիի թուրքերուն, որովհետև Մելիք-Թանգյան ոչ միայն հավատարիմ է հայ ժողովրդի շահերուն, այլև անպայման լոյալ է պարսից կառավարության հանդեպ:

Որոշ է, որ եթե բոլշևիկներու և անոնց միջոցով նաև թուրքերի ձեռքին գործիք եղող Առաջնորդ մը ըլլա Ատրպատականի մեջ, հաջողության ավելի մեծ հավանականություն կրնան ունենալ:

Սակայն, որոշ է նույնպես, որ Մելիք-Թանգյանը հեռացնելու համար, նախ պետք է Ատրպատականեն հեռացնել անոր ետև կանգնած հայրենասեր և գիտակից հայությունը:

Վստահ ենք, որ բոլշևիկ-թրքական այս վերջին դավադրությունն ալ Մելիք-Թանգյանի դեմ ապարդյուն պիտի անցնի, ինչպես որ անցան նախորդները:

Հայրենիք (Խմբագրական), 24 հունվարի 1930թ., թիվ 5390: Բերվում է ըստ՝ «Բյուլետեն Հայհեռագործի և Անդրհեռագործի արտասահմանյան դաշնակցական մամուլի»

Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.10, գ.58, թ.13 և հակ.-14:

298. <Զեկիստ Գ.Ս. Ագաբեկովի գրքից արտասահմանում ՀՅԴ կազմալուծման մասին>

Հուլիս-օգոստոս 1930թ.

Փարիզ

1927թ. վերջերին սկսեցին զեկուցագրեր ստացվել Թավրիզի գլխավոր հյուպատոս Դուբսոնից և Պետքաղվարչության (ՊՔՎ) գործակալ Մինասյանից...

Մինասյանի գլխավոր խնդիրը փաստաթղթեր ձեռք բերելն էր: Թավրիզն էր այն վայրը, որտեղից Դաշնակցություն հայկական կուսակցությունը հեղափոխական աշխատանք էր կատարում Խորհրդային Հայաստանում և Թուրքական Քրդստանում: Եվ այնտեղից էր մուսավաթականների կուսակցությունը ղեկավարում աշխատանքը Խորհրդային Ադրբեջանում: Թավրիզում Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչն էր ոմն Իշխանյան: Իր գործունեության մասին նա շարունակաբար տեղեկացնում էր կուսակցության Կենտրոնական կոմիտեին և նրանից ստանում առաջադրանքներ՝ հետագա գործողությունների և տեղեկություններ՝ մյուս կենտրոններում կուսակցական գործերի մասին: Նամակագրությունը կատարվում էր փոստով: Ընդ որում երկու կողմից էլ նամակներն ուղարկվում էին գաղտնագրված և գրվում էին քիմիական թանաքով: Դաշնակների գաղտնագիրը և քիմիական թանաքների բաղադրակազմը հայտնի էին ՊՔՎ-ին: Մնում էր կազմակերպել նամակները բռնելը:

Մինասյանը ՊՔՎ-ում ծառայության հավաքագրեց Թավրիզի փոստային բաժանմունքի խոշոր չինովնիկներից մեկին: Նրա միջոցով դաշնակների և մուսավաթականների բոլոր նամակները մեզ էին հանձնվում պատճենահանելու համար: Այդ նամակներից իմանում էինք, թե դաշնակների կուսակցությունը ում և ինչ նպատակով է գաղտնի ուղարկում Խորհրդային Հայաստան: Իշխանյանը կուսակցության բոլոր պլանների մասին մանրամասն տեղեկացնում էր Կենտրոնական կոմիտեին: Նամակները հանգամանալի տեղեկություններ էին հաղորդում թուրքերի դեմ քրդական շարժման մեջ դաշնակցականների կուսակցության անդամների դերի ու մասնակցության մասին...

Մեզ հայտնի էին ոչ միայն Խորհրդային Հայաստանի հետ արտասահմանյան դաշնակների կապավորները, այլև Հայաստանում նրանց գործակիցների անուններն ու հասցեները: Այսպիսով Հայաստանի ՊՔՎ-ն հնարավորություն էր ստանում վերացնել դաշնակների բջիջները դրանց ծագմանն ու աճին համընթաց.

ՊՔՎ-ն առաջադրանք էր ստացել քայքայել Դաշնակցություն կուսակցությունը, շարքայիններին կտրել վերիններից և շրջել Խորհրդա-

յին իշխանության կողմը: Այդ խնդիրն իրականացնելու համար Թեհրանում հավաքագրեցինք կուսակցության հին անդամ բժիշկ Ղազարյանին, որը երկար ժամանակ եղել է Կենտկոմի անդամ և նրան համոզեցինք թերթ հրատարակել հայերեն լեզվով: Բժիշկը թերթում զարգացնում էր Խորհրդային Հայաստանին օգնելու գաղափարը, իր հոդվածներով կազմալուծում դաշնակների կուսակցությունը և նրանից կտրում շարքային անդամներին: Կուսակցության մեջ նրա նախկին դիրքը և անձնական հեղինակությունը նպաստում էին, որ դաշնակների կուսակցության շատ շարքայիններ հետևեին նրա օրինակին և սկսեին անցնել խորհրդային իշխանության կողմը:

Երկու տարի Ղազարյանը հրատարակում էր «Գաղափար» թերթը: Այդ գործի դիմաց նա բժշկական աշխատանքի ընդունվեց խորհրդային հիվանդանոցում, իսկ նրա աղջիկը դասավորվեց խորհրդային տնտեսական հիմնարկներից մեկում: Բացի այդ, թերթը խմբագրելու համար նրան ամսական վճարվում էր 100 դոլլար: Թերթը քարոզչական նպատակներով տարածվում էր ձրի և ամսական բերում 300 դոլլարի վնաս, ուստի 1927թ. վերջին որոշվեց այն փակել, առավել ևս, որ այդ ժամանակ կուսակցության մեջ Ղազարյանի հեղինակությունը լրիվ ընկել էր:

Հայերի հասարակական կարծիքի մշակմանն էր ծառայում նաև Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)...

Պարսկաստանում, 1927թ. քրդական ապստամբության ժամանակ, Թավրիզի դաշնակների կուսակցության նամակների պատճեներից և Քրդստանում նրանց ներկայացուցիչ Մուրադյանից մենք իմացանք, որ այդ կուսակցությունը սերտ կապ է պահպանում ապստամբների հետ, նրանց օգնելով զենքով ու մարդկանցով: Բացի դրանից նամակներում վարկաբեկող տվյալներ կային Թավրիզի հայ եպիսկոպոս Ներսեսի մասին, որի տակը վաղուց փորում էր ՊՔՎ-ն: Թեհրանի լիազոր - ներկայացուցիչ Դավթյանը, ձգտելով վատացնել պարսկական կառավարության հետ դաշնակների հարաբերությունները և մասնավորապես արքեպիսկոպոս Ներսեսին վտարելու նպատակով, այդ նյութերը հանձնեց արքունական մինիստր Թեյմուրթաշին, միաժամանակ նրանց մասին տեղյակ պահելով թուրքական դեսպանությանը: Թուրքերը եռանդով օժանդակում էին Դավթյանին, շատ լավ գիտակցելով, որ առանց դաշնակների օգնության քրդերը հազիվ թե կարողանային լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքական կանոնավոր զորքերին:

Այս ամենի հետևանքով պարսկական կառավարությունը կարգադրեց Թավրիզում դաշնակների միջավայրում կատարել խուզարկություններ ու բանտարկություններ և վերահսկողություն հաստատել նրանց

նկատմամբ: Ի վերջո դաշնակների գործունեությունը դարձավ գրեթե ոչինչ: Այդ մասին մենք իմացանք Ադրբեջանում դաշնակների ներկայացուցիչ Իշխանյանի նամակներից՝ ուղղված Փարիզում կուսակցության Կենտրոնական կոմիտեին:

1930թ. հունիսի 19-ին ես թողեցի Կոստանդնուպոլիսը և հունիսի 27-ին ժամանեցի Փարիզ: Գրառումներս հետս չվերցրի, այլ ուղարկեցի ուրիշ, վստահելի ուղիով, զգուշանալով թուրքական մաքսային խուզարկությունից: Թուրքիայում գաղտնաբար կատարած գրառումներս կազմեցին ներկա գիրքը: Այդ գրառումները ես սկսել էի փախուստից մի քանի ամիս առաջ, նպատակ ունենալով դրանք հրատարակել, երբ ինձ չէր հաջողվի դուրս պրծնել ՊՔՎ-ի ձեռքերից:

Գ.Ս. Ագաբեկով, ՊՔՎ (Չեկիստի գրառումները), «Ստրելա» հրատ., 1930, էջ 115-116, 219, 248: Թարգմ. ռուս.:

299. Արձանագրություն թիվ 4

ՀԿ(բ)Կ Կենտկոմում կայացած խորհրդակցության

22 հոկտեմբերի 1932թ.

Լսեցին. Ընկ. Խանջյանի հաղորդումը արտասահմանում տարվող աշխատանքի վիճակի և Դաշնակցություն կուսակցության պառակտման մասին:

Որոշեցին. Հավանություն տալ ընկ. Խանջյանի դրույթներին Դաշնակցություն կուսակցության մեջ պառակտման նկատմամբ մեր գծի և արտասահմանում տարվող աշխատանքի միջոցառումների մասին:

Կենտկոմի քարտուղար՝ Ա. Խանջյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.12, գ.28, թ.6: Բնագիր: Մեքենագիր և ձեռագիր (ձեռագիրը պատկանում է Խանջյանին, ձեռագիր է որոշման մասը): Թարգմ. ռուս.:

300. <«Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարի ելույթից ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում>

19 մարտի 1937թ.

Չուբար. ... 1926թ., երբ Հայաստանում տեղի ունեցան մասսայական ձերբակալություններ, կարծեմ այն ժամանակ 3000 հոգի ձերբակալվել էին, հենց այդ ժամանակ...** լույս տեսավ հոդված խորհրդային կառավարության հասցեին...** Դաշնակցական կազմակերպության Բյուրոն ուլտիմատում էր ներկայացնում այն ժամանակ Ֆրանսիայում խորհրդային դեսպան...**, որ եթե 10 օրվա ընթացքում չազատեն ձերբակալված դաշնակցականներին... այդ ուլտիմատումը...** և մեր Պետքաղվարչության հարգելի ընկերների միջոցով այս խնդիրը պարզվում է...

Այդ ժամանակ Պողոս Մակինցյանը, Սիմոնիկ Փիրումյանը, Դանուշ Շահվերդյանը*** Դիսբադենում մի շարք հանդիպումներ են ունենում, որպես Հայաստանի ներկայացուցիչներ, և այդ հանդիպումը հետագայում հայտնի է Դիսբադենյան խորհրդակցություն: Այդ խորհրդակցության հիմնական խնդիրը լինում է այն, թե ինչ տակտիկա պետք է վարել Դաշնակցության և ռամկավարների հանդեպ: Այդ խորհրդակցություններից մեկին ես մասնակցել եմ: Ես հիշում եմ, թե ինչպես 5 հոգու ձայները բաժանվեցին երկու հիմնական խնդրի շուրջը՝ Դաշնակցության և ռամկավարների: Դանուշ Շահվերդյանը և Պողոս Մակինցյանը կողմնակից էին այն բանին, որ պայքարը Դաշնակցության դեմ պետք է թուլացվի, իսկ մնացած երեքս՝ Լուկաշինը***, ես և Փիրումյանը, որ ոչ մի համաձայնություն չի կարող լինել, ռամկավարների դեմ պետք է պայքարել:

Դրանից մեկ ամիս հետո ՕԳՊՈՒ-ի**** գծով հանձնարարություն ենք ստանում: Ընկերներ, դա վերաբերում է նրան, թե չի՞ կարելի օգտվել նրանից, որ դաշնակցականների մեջ սկսվել է տաճկահայ դաշնակցականների հոսանք, և դաշնակցականները միաժամանակ դեռ չէին կարողացել հաշտության լեզու գտնել «Պրոմեթեյ» խմբակի հետ: Օգտվելով այդ հանգամանքից արդյո՞ք չէր կարելի օգտագործել դաշնակցականներին ինչ-ինչ նպատակով: Մեզ ասված էր՝ ոչ մի

** Չուբար Եղիա՝ 1925-1927թթ. Փարիզի «Երևան» թերթի խմբագիր:*

*** Այստեղ և այնուհետև բացթողումները պլենումի սղագրությանն են:*

**** Տվյալ ժամանակաշրջանում Պողոս Մակինցյանը զբաղվում էր դիվանագիտական գործունեությամբ Իտալիայում և Ֆրանսիայում: Սիմոնիկ Փիրումյանը, ըստ Չուբարի տվյալների, եղել է Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանատան 2-րդ խորհրդականը: Դանուշ (Դանիել) Շահվերդյանը աշխատել է ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատում, եղել է Հայաստանի Կարմիր խաչի ներկայացուցիչը Եվրոպայի տարբեր երկրներում:*

***** Լուկաշին (Սարգիս Սրապիոնյան)՝ 1925-1928թթ. ԱԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ և Պետպլանի նախագահ:*

****** ՕԳՊՈՒ՝ Միացյալ պետքաղվարչություն՝ Объединенное государственное политическое управление.*

քաղաքական համաձայնության մասին խոսք լինել չի կարող, օգտագործեք այսինչ, այնինչ մարդուն:

Տրված էր Շավարշ Միսակյանի և ... անունները: Դրանցից երկու տեսակցություն ես ունեցել եմ Շավարշ Միսակյանի և Ռուբեն Փաշայի հետ... Պետք է ասել, որ հենց առաջին տեսակցության ժամանակ ես զգացի, որ Շավարշ Մինասյանը դաշնակցական է: Ես նրան ասում էի, որ մենք ուզում ենք իմանալ այսինչ-այնինչ տեղեկությունները: Նա առաջարկել էր իր ծառայությունը: Երբ ես խոսում էի, նա աշխատում էր ինձանից մի որևէ թուղթ ունենալ, բայց ես նրան 3 նախադասություն ասացի և ասացի, որ պետք է հիշես: Նա խոստանում է մի շաբաթից հետո իր պատասխանը տալ: Մի շաբաթից հետո, երբ ես գնում եմ նշանակված տեղը, այնտեղ Շավարշ Միսակյանի փոխարեն տեսնում եմ Ռուբեն Տեր-Մինասյանին: Նա ասում է, որ Շավարշը հիվանդ է, դրա համար ինքն է եկել: Նա ասաց, որ պետք է լայն հոդի վրա խոսել: Իսկ ես նրան պատասխանեցի, որ այդ երեք հարցն է մեզ հետաքրքրում: Ներեցեք ինձ, եթե ես ասեմ, թե նա ինչ ասաց: Նա ասաց, որ ինքը դեռ <հայհոյական բառ> չի, որ ինձ պես երիտասարդ չեկիստին որևէ խոսք ասի:

... 1928թ. համար ես կարող եմ համաձայնել, որ այնտեղ եղել են և քաղաքական բանակցություններ, քանի որ եղել է այսպիսի հոդված, որը վերջացել է «թող պարոն Փիրումյանը շատ չխոսա» խոսքերով: սա ես ասում եմ այն կապակցությամբ, որ այդ ներկայացուցիչները, որոնք Հայաստանից լինում էին արտասահմանում, լիազորություններ չունեին հանդիպելու դաշնակցականների հետ: Այսպես, ես հիշում եմ, որ Դանուշ Շահվերդյանը երբ մեկնում էր, ոչ մի լիազորություն չուներ Կենտկոմից, և երբ նա վերադարձավ, ստացավ Մյասնիկյանի դիտողությունը: Ես լավ եմ հիշում, թե Հայաստանի Կենտրոնական կոմիտեն ինչ հանձնարարություններ էր տալիս բոլոր արտասահման մեկնողներին: Այն է՝ անխնա պայքար մղել դաշնակցականների դեմ և ոչ մի հանդիպում չունենալ նրանցից որևէ մեկի հետ:

Ինչու ՀՕԿ-ը, որը ստեղծված է նրա համար, որ աշխատանք տանի Հայաստանի աշխատավորների շրջանում, այդ կազմակերպությունն օգտագործում են այլ նպատակների՝ դակահեղափոխական աշխատանքների համար: Ե՛վ Երզնկյանը******, և՛ Դանուշ Շահվերդյանը, և՛ Փիրումյանը այս հարցերում կուսակցական դիրքերում չեն կանգնած:

******* Երզնկյան Սրամայիս՝ եղել է նաև ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ և այդ կապակցությամբ մեկնել արտասահման:*

ԸՆԿ. Ամատունի******* - Այդ մասին Դուք հայտնե՞լ եք որևէ մեկին:

Չուբար - Տեսակցության մասին ես հայտնել եմ: Իսկ ռեպլիկան թույլ չտվեց, որ ես ավարտեմ խոսքս: Մենք Թիֆլիսից ստացանք հաղորդագրություն՝ դադարեցնել բոլոր տեսակի բանակցությունները Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների հետ, և ես անմիջապես դադարեցրի: Այդ կարգադրությունն արել էր Հմայակ Նազարեթյանը:********

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.12, գ.27, թ.63-79: Պլենումի սղագրական հաշվետվությունից: Փաստաթղթում կատարվել են որոշ լեզվառճական ճշտումներ: Մասամբ թարգմանություն է ռուսերենից:

******* *Ամատունի՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար 1936-1937թթ.:*

******** *Նազարեթյան Հմայակ՝ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար և Կենտրոնական Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:*

ՀԱՎԵԼՎԱԾ

1.ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Խանջյանին
Անդր. ԽՖՍՀ ներքգործժողկոմ ընկ. Գոգլիդեին

28 հունվարի 1936թ.

Թիվ 02305

1936թ. հունվարի 19-ին Միկոյանի շրջանի Արփա գյուղի բնակիչ Հակոբ Խաչատրյանը, մենատնտես, նախկին կուլակ-ձայնազուրկ, կոլտնտեսությունից հեռացված հակահեղափոխական քարոզչության համար, Արշակ Խաչատրյանը, սպանված հակահեղափոխականի որդի և ուրիշներ, թվով 12 մարդ, մեկնել են նույն շրջանի Այնաձոր գյուղը, փորձել են 1921թ. քաղաքացիական կռիվների ժամանակ սպանված դաշնակցականներ-արփեցիների աճյունները, թվով 5 մարդու: Փորելուն օգնել են նաև 25 մարդ տղամարդ և կին՝ այնաձորցիներ: Աճյունները բերել են Արփա գյուղ և նորից հանդիսավոր կերպով թաղել: Հուղարկավորությանը մասնակցել են մինչև 50 մարդ մենատնտեսներ, կոլտնտեսականներ և հակահեղափոխական տարրեր, նրանց թվում 3 կոմերիտականներ: Այնաձորում և Արփայում գերեզմանոցներում հարգել են հանգուցյալների հիշատակը:

Արփա գյուղի կոմերիտականներ Սուրեն Մնացականյանը, դասատու, սպանվածների բարեկամ, Ռաֆիկ Սողոմոնյանը և Այնաձոր գյուղից Հովհաննես Խալաթյանը, մասնակցելով հուղարկավորությանը, խմել են հոգեհանգստի համար:

ՀամԿ(բ)Կ համակրող Սերգո Շահինյանը, Այնաձոր գյուղից, օղու շիշը ձեռքին ընդառաջ գալով արփեցիներին, ասել է. «Չնայած ես գիտեմ, որ սպանվածները դաշնակցականներ են, բայց ես, որպես մարդ, ուզում եմ ձեզ հյուրասիրել օղիով» :

Արփա և Այնաձոր գյուղերի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները իմացել են սպանվածների դիակները հանելու մտադրությունների մասին: Բայց որևէ միջոց չեն ձեռնարկել:

Տեղը գործուղվել է Պետքաղվարչության գաղտնի բաժնի պետ ընկ. Գևորկովը: Գործի առթիվ առայժմ ձերբակալվել են. Հակոբ Խաչատրյանը՝ նախկին կուլակ, ձայնազուրկ, Արշակ Խաչատրյանը՝ սպանված հոգևորականի որդի, Վ. Ծատուրյանը՝ Արփայի դեպքերի հակահեղափոխական մասնակից:

ՀԽՍՀ գծով ԱԽՖՍՀ ՆԳԺԿ վարչության պետ՝ Մուղդուսի
Պետանվտվարչ. գաղբաժնի պետի փոխարեն՝ Թովմասյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.16, գ.76, թ.8: Թարգմ. ռուս.:

2.Տեղեկություններ Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ-ի կողմից կատարված չերբակալությունների մասին 1 հունվարի 1936թ. - 1 հունվարի 1937թ. ժամանակամիջոցում

<Սկիզբը 1937թ.> *

1936թ. ընթացքում բանտարկվել է ընդամենը.

1. Տրոցկիստներ	417	նրանցից խումբ և կազմակերպություն	35	բանտարկված	164
2. Դաշնակցականներ	93	"	13	"	84
3. Մուսավաթականներ	14	"	2	"	11
4.Հակահեղափոխական ազգայնական ագիտացիա	251	"	13	"	40
5. Սիաբեկչական արտահայտություններ	13	"	2	"	6
6. Սիաբեկչություն	19	"	1	"	5
7.Բանդիտիզմ և նրան նպաստողներ	106	"	17	"	64
8.Հակահեղափոխական ապստամբական խմբեր	20	"	1	"	19
9.Լրտեսություն	19	"	2	"	8
10.Այլ հակահեղափոխական և պաշտոնի հանցագործություններ	172	"	24	"	94
11.Խաբեբաներ կուստոմսով	8	"	-	"	-
12.Դիվերսիոն գործողություններ	2	"	-	"	-
13.Հայրենիքի դավաճանություն	4	"	-	"	-
Ընդամենը	1138	"	110	"	495

Տեղեկանք. Նշված տեղեկությունները կազմված են այն օպերատիվ - վիճակագրական ամփոփագրերի հիման վրա, որոնք ամեն սմիս ուղարկվում են ԽՍՀՄ ՆԳԺԿ Պետական անվտանգության գլխավոր վարչությունն:

ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի տեղակալ, պետանվտանգության մայոր՝ **Գևորկով**

ՀԽՍՀ ՆԳԺԿ պետանվ. վարչ. 8-րդ բաժնի պետ, պետանվտ. լեյտ՝ **Գրիգորյան**

*Ժամանակը դրվում է ըստ փաստաթղթի վերնագրի տվյալների:

3. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունուն

Հատուկ հաղորդագրություն

2 փետրվարի 1937թ.

Թիվ 15/38

Լենինական քաղաքում որպես Կոնսերվտրեստի ավագ հաշվապահ աշխատանքի է տեղավորվել քաղաքացի Արամ Արշակի Նահրատյանը, որը լինելով դաշնակցական ծառայության սպա, 1920 թ. դաշնակցականների կողմից նշանակվել է նախկին Ալեքսանդրապոլի գավառային միլիցիայի պետ:

Նշված Նահրատյանը ղեկավարելով դաշնակցական գավառային միլիցիան, ակտիվ և ղեկավար դեր է խաղացել 1920 թ. դաշնակների պատժիչ գործունեության մեջ, անմիջական ղեկավար մասնակցություն է ունեցել բոլշևիկների Մայիսյան բոլշևիկյան ապստամբության կազմակերպիչներ Փանյանի, Սկյանի և Պրիբիլսկու գնդակահարություններում:

Սակայն չնայած Հայաստանի խորհրդայնացումից հետո դաշնակ պատժիչների նկատմամբ իրականացված բռնաճնշումներին, Նահրատյանին երկու անգամ հաջողվել է խուսափել պատասխանատվությունից կեղծ, խառնաշփոթ ցուցմունքների միջոցով:

1936 թ. սեպտեմբերին Լենինականի բանվորները կրկին մերկացրին Արամ Նահրատյանին որպես դաշնակցական կամակատար և ակտիվ պատժող, որի հիման վրա 1936 թ. սեպտեմբերի 4-ին նա Հայկական ԽՍՀ դատախազի կարգադրությամբ մեկուսացվել է և դրվել քննության տակ:

Վկաների ցուցմունքների և քննության ժամանակ բերված հանցանշանների ճնշման տակ մեղադրյալ Նահրատյանը իրեն մեղավոր ճանաչեց միայն նրանում, որ լինելով դաշնակցական գավառային միլիցիայի պետ, 1920 թ. բոլշևիկների Մայիսյան ապստամբության ճնշումից հետո նախկին Ալեքսանդրապոլում (Լենինական) իր միլիցիոներների խմբի գլուխ անցած մասնակցել է ակտիվ կոմունիստների բոլշևիկյան Մայիսյան ապստամբության կազմակերպիչներ բժիշկ Փանյանի, Սկյանի և Պրիբիլսկու գնդակահարություններին:

Վերոհիշյալ գործի նախաքննությունը ավարտվել է և մեղադրյալ Արամ Արշակի Նահրատյանի գործը, ըստ Հայկ. ԽՍՀ Քր. Օր. հոդ. 70, հանձնված է ՀԽՍՀ Գերագույն դատարանի Հատուկ կոլեգիայի լսմանը:

Հայկական ԽՍՀ դատախազ՝ Թորոսյան

Հայկ. ԽՍՀ դատախազի տեղակալ հատուկ գործերի գծով՝ Միքայելյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.17, գ.84, թ.11: Թարգմ. ռուս.:

4. ԽՍՀՄ Միության դատախազ ընկ. Վիշինսկուն

ՀԿ (բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունուն

Հատուկ հաղորդագրություն թիվ 19131 քննչագործի կապակցությամբ

2 փետրվարի 1937թ.

Խիստ գաղտնի

Թիվ 15/39

Գործակալական-քննչական ստուգված նյութերի համաձայն Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ Պետական անվտանգության վարչության քննչական բաժինը Դատախազության թույլտվությամբ ս.թ. հունվար ամսվա սկզբին Հայկ. ԽՍՀ Ապարանի շրջանում վերացրել է դաշնակցական ընդհատակյա կազմակերպություն: Գործի կապակցությամբ ձերբակալվել է 27 մարդ, նշված կազմակերպության բոլոր ակտիվ անդամները, ովքեր իրենց հակահեղափոխական դաշնակցական աշխատանքը տարել են գրեթե մինչև կազմակերպության վերացումը:

Հակահեղափոխական դաշնակցական կազմակերպության ղեկավարներն են.

1. Ռաֆայել Մխիթարյանը, Ապարանի շրջանի Կխտագիրմազ գյուղի բնակիչ, մենատնտես-միջակ, զբաղվել է սպեկուլյացիայով 1930-1932 թթ., եղել է ՀամԿ(բ)Կ թեկնածու:

2. Մամիկոն Սարգսի Սուքիասյանը, միջնակարգ կրթությամբ, Ապարանի շրջանի Կխտագիրմազ գյուղի դպրոցի մանկավարժ:

...Ինչպես վերևում նշվեց, սույն գործով ձերբակալվել է 27 մարդ, որոնցից 18 մեղադրյալներ նախնական հարցաքննության ժամանակ ընդունել են ներկայացված մեղադրանքները:

Գործի նախաքննությունը շարունակվում է, քննության ընթացքի մասին ժամանակին Ձեզ կտրվեն տեղեկություններ:

Հայկական ԽՍՀ դատախազ՝ Թորոսյան

Հանրապետության դատախազի տեղակալ հատուկ գործերի գծով՝ Միքայելյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.17, գ.84, թ.9-10: Թարգմ. ռուս.:

5. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունուն

Ձեկուցագիր*

10 փետրվարի1937թ.

Խիստ գաղտնի

Թիվ 18-64

1936 թ. ընթացքում Հայկական ԽՍՀ դատախազության կողմից Գերագույն դատարանի Հատուկ կոլեգիայի քննությանն են հանձնվել 352 գործ, 662 մարդու նկատմամբ: Այդ գործերից Հատուկ կոլեգիան ըստ էության քննել է 242 գործ՝ 374 մարդու նկատմամբ, իսկ մյուս գործերը փոխադրվել են 1937 թիվ:

Ըստ նայված հակահեղափոխական գործերի հիմնական կատեգորիաների Հատուկ կոլեգիայի պատժիչ քաղաքականությունը ունի այսպիսի պատկեր.

1. Հակահեղափոխական ագիտացիա, պրոպագանդա, ազգայնական և տրոցկիստական արտահայտություններ տարածելու համար դատի է տրվել 199 մարդ, որոնցից ազատազրկման են դատապարտվել 10 տարի ժամկետով՝ 4 մարդ, 5-10 տարի՝ 27մարդ, 2-5 տարի՝ 138 մարդ, 2 տարուց պակաս՝ 8 մարդ:

2. Հակահեղափոխական կազմակերպությունների և խմբերի (դաշնակցականներ և ուրիշներ) պատկանելու համար դատի է տրվել 54 մարդ, որից դատապարտվել են 5-10 տարի՝ 24 մարդ, 2-5 տարի՝ 28 մարդ, 2 տարուց պակաս՝ մեկ մարդ:

3. Բանդիտիզմի, բանդիտիզմին նպաստելու և բռնության՝ սպանությամբ, համար դատի է տրվել 98 մարդ, որից երեքը դատապարտվել են գնդակահարության, 10 տարի՝ 7 մարդ, 5-10 տարի՝ 35 մարդ, 2-5 տարի՝ 47 մարդ:

Բոլոր նշված կատեգորիաների գործերով ընդամենը արդարացվել է 24 մարդ:

*Ձեկուցագրի մի այլ օրինակի համաձայն այն նույն օրը հաստատագրվել է (այսինքն ուղարկվել է) ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ամատունուն և ԽՍՀՄ դատախազ Վիշինսկուն: Տես ՀՀ ՍՊԿՊԱ, Ֆ.571, ց.1, գ.92, թ.40-41:

Հայկ. ԽՍՀ դատախազ՝ Պ. Թորոսյան
Հայկ. ԽՍՀ դատախազի տեղակալ հատուկ գործերի գծով
Միքայելյան
ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.17, գ.84, թ.16-17: Թարգմ. ռուս.:
Բնագիր: Մեքենագիր:

6. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունուն

1920 թ. Կարսում բոլշևիկյան Մայիսյան ապստամբության ինը բոլշևիկների, Ռևկոմահեղափոխական կոմիտեի նախագահ Ղուկաս Ղուկասյանի սպանության գործի կապակցությամբ

Զեկուցագիր*

17 մարտի 1937թ.

Խիստ գաղտնի

Թիվ 18/163

Դատախազությունը հայտնաբերել և կալանավորել է հայտնի դաշնակցական խմբապետներ Երեմ Մխիթարյանին (Շեկ Երեմ), Սահակ Քոչարյանին (Սև Սահակ), Մխիթար Պողոսյանին, Այվազ Այվազյանին և Աբգար Տոնոյանին, ովքեր մեղադրվում են 1920 թ. Կարսում բոլշևիկյան ապստամբության ղեկավարների գնդակահարության մեջ:

Հայկական ԽՍՀ դատախազ՝ Պ. Թորոսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.17, գ.84, թ.31-37: Թարգմ. ռուս.:

* Հատված զեկուցագրից:

7. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունուն

Հատուկ հաղորդագրություն Հայկ. ԽՍՀ Ամասիայի շրջանի Ղոնջալի գյուղի հակահեղափոխական դաշնակցական կազմակերպության քննչական գործի ընթացքի մասին

31 մարտի 1937թ.

Թիվ 18/182

Սկսած 1930/31 թթ. Ամասիայի շրջանի Ղոնջալի գյուղում գոյություն է ունեցել հակահեղափոխական դաշնակցական կազմակերպություն, նույն գյուղի բնակիչներ Հովսեփ Էլոյանի և Ոսկան Պապիկյանի ղեկավարությամբ:

Կազմակերպությունը իր գործունեությունը ակտիվացրել է 1930 թ. համատարած կոլեկտիվացման ժամանակ, պարբերաբար ընդգրկելով կազմակերպության մեջ 25-30 մարդ: Կազմակերպության մեջ գլխավորապես ընդգրկվել են նախկին դաշնակցական խմբերի ակտիվ տարրերից, ովքեր Հայաստանի խորհրդայնացումից հետո, թաքնվելով, հաստատվել են Ամասիայի շրջանի գյուղերում, հիմնականում Ղոնջալուում:

Այս կապակցությամբ Հայկ. ԽՍՀ դատախազությունը գործ է հարուցել ըստ ՀԽՍՀ ՔՕ հոդ. հոդ. 67 և 68, ձերբակալելով հիշյալ կազմակերպության անդամներից ներքև հիշվածներին*... Այսպիսով կալանքի տակ են վերցվել 5 մարդ՝ կոմկուսի թեկնածուներ, որոնք հեռացվել են կուսակցությունից ՀԿ(բ)Կ շրջկոմի կողմից և 6 անկուսակցական կոլտնտեսականներ-մենատնտեսներ, ընդամենը 11 մարդ**:

Հայկական ԽՍՀ դատախազ՝ Պ. Թորոսյան

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.17, գ.84, թ.38-44: Թարգմ. ռուս.:

* Բաց են թողնվում 11 մարդու տվյալները:

** Բերված է փաստաթղթի էական մասը:

8. ԽՍՀՄ Գլխավոր դատախազի օգնական, 1-ին կարգի արդարադատության պետական խորհրդական ընկ. Դ.Ե.Սալինին

Տեղեկանք*

(Հայկ. ԽՍՀ դատախազության գծով)

<6 հունվարի 1956>**

...Հակահեղափոխական հանցագործությունների գործերի վերանայման գծով հանրապետության հանձնաժողովին իրավունք է տրված լուծելու այն մարդկանց մասին գործերը, ովքեր արտաքսվել են Հայաստանից դաշնակցական լինելու շարժառիթներով:

Հայկ. ԽՍՀ ՆԳՆ-ի աշխատողների տվյալներով Ալթայի երկրամաս, հատուկ աքսորավայրեր արտաքսվել է 2698 ընտանիք, այդ թվում և գերմանական զորամասերում(լեգեոն) ծառայության համար արտաքսվածները:

Լեգեոնականները ազատվել են 1955 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրով և դրա շնորհիվ նրանց մասին գործերը հանձնաժողովում չեն նայվում:

Ներկայումս հանձնաժողովում նայվել է 1312 գործ, ըստ որի հատուկ աքսորաբնակավայրերից ազատվել է 1174 ընտանիք 4616 մարդ, մերժված է 181 ընտանիք՝ 788 մարդ: Չնայված է մնում 547 գործ:

Այդ***, ինչպես նաև քրեական գործերի առթիվ կատարվում է խոր ստուգում (անց են կացնում Հայկ. ԽՍՀ ՆԳՆ-ի աշխատողները): Բարդությունն այն է, որ արտաքսման ժամանակ դաշնակցությանը մարդկանց պատկանելու մասին նյութերը չեն ստուգվել, այլ կազմվել են լրտուների չստուգված տեղեկությունների կամ առանձին անձանց հայտարարությունների հիման վրա...

Մեծի մասամբ նյութերը լրիվ չեն հաստատվում և որոշումներ են ընդունվում աքսորաբնակների ազատման մասին...

Հատուկ գործերի գծով բաժնի պետի տեղակալ,
արդարադատության 3-րդ կարգի պետական խորհրդական՝
Սամոլուկով

Հատուկ գործերի գծով բաժնի դատախազ, կրտսեր
խորհրդական՝ Զաշիբալով

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.571, g.6, գ.94, թ.2-11:

---

*Տեղեկանքը կազմված է ԽՍՀՄ դատախազության կողմից:

** Ժամանակը դրվում է ըստ կից գրության:

*** Խոսքը մինչև աքսորվելը դատապարտված դաշնակցականների (ընտանիքների գլխավորների) մասին է:

9. ԽՍՀ Միության Գլխավոր դատախազ, արդարադատության իսկական պետական խորհրդական ընկ. Ռ.Ա.Ռուդենկոյին

30 հոկտեմբերի 1956թ.

7/3/2809գ.

Համաձայն Ձեր 1954 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 220 գ. հրամանի և վերադաս դիրեկտիվ մարմինների ցուցմունքների Հայկական ԽՍՀ Դատախազությունը 1955 թ. սկսած վերանայում է Հայկական ԽՍՀ նախկին ՆԳԺԿ-ին կից եռյակի, ԽՍՀՄ ՆԳԺԿ-ՊԱՄ-ՆԳՆ-ի, Միացյալ Պետքաղվարչության կոլեգիայի, ինչպես նաև դատական մարմինների կողմից դատապարտվածների գործերը:

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Պետական անվտանգության կոմիտեի տվյալներով վերոնշյալ կատեգորիաների գործերի թիվը ավելի քան 15 հազար է, չհաշված Հայկական ԽՍՀ Գերագույն դատարանի, ՀԽՍՀ ՆԳՆ զորքերի և Անդրկովկասյան Զինվորական օկրուգի Զինվորական տրիբունալների նայած գործերը:

Հայկ. ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Պետական անվտանգության կոմիտեի ունեցած տվյալների համաձայն միայն Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ եռյակը, որը գործել է 1937 թ. օգոստոսի 11-ից մինչև 1938 թ. մարտի 25-ը, նայել է 7518 մարդու գործ, որոնցից դատապարտվել են

Պատժի առավելագույն չափի (ՊԱՉ) 4603 մարդ:

Պատժի տարբեր ժամկետների՝ 2915 մարդ:

Վերջին երկու տարում հանրապետությունում զգալի աշխատանք է կատարված ժողովրդի թշնամիների վնասարարության հետևանքների վերացման ուղղությամբ: Վերականգնված են զգալի թվով քաղաքացիներ, որոնք դարձել էին կամայականության ու անօրինականության զոհ...

Մեր աշխատանքը դժվարանում է և նրանով, որ զգալի թվով (1620) գործեր և մեծաքանակ դիտողական նյութեր (наблюдательное производство) 1946 թ. տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքով փչացել են Հայկ. ԽՍՀ նախկին ՊԱՄ-ի արխիվում և վերադաս մարմինների պահանջով պետք է վերականգնել: Ոչ քիչ թվով արխիվային գործեր, որոնցում գրվածը ջնջվել է, ջրհեղեղի հետևանքով դարձել են ոչ պիտանի...

Հայկական ԽՍՀ դատախազ, արդարադատության 3-րդ կարգի
պետական խորհրդական՝ Կ. Ի. Իոաննիսյան

ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.571, g.6, գ. 94, թ.21-24: Թարգմ. ռուս.:

10. ԽՍՀ Միության Գլխավոր դատախազ, արդարադատության իսկական պետական խորհրդական ընկ. Ռ. Ա.Ռուդենկոյին

Տեղեկատվություն

1 փետրվարի 1977թ.

Իրականացնելով ԽՄԿԿ 20-րդ և 21-րդ համագումարների որոշումները, Հայկական ԽՍՀ Դատախազությունը զգալի աշխատանք է կատարել վերանայելու այն անձանց արխիվային-քրեական գործերը, ովքեր դատապարտվել են անցյալում պետական հատուկ-վտանգավոր հանցագործությունների գծով՝ ուղղելու համար ՊՔՎ-ի ՆԳԺԿ-ի և ՊԱՆ-ի մարմինների կողմից թույլ տված սոցիալիստական օրինականության խախտումները և վերականգնելու անհիմն պատժված խորհրդային քաղաքացիներին:

Վերոհիշյալ կատեգորիայի գործերի ստուգումը և վերանայումը, որը քաղաքացիների դիմումների ու բողոքների հիման վրա կատարվել է 1954 թվականից մինչև ներկա ժամանակը, ցույց է տալիս, որ 1936-1938 թթ. զգալի թվով խորհրդային քաղաքացիներ ձերբակալվել ու դատապարտվել են անլեգալ դաշնակցական կազմակերպություններին պատկանելու մեղադրանքով կամ հակախորհրդային ազգայնական գործունեության համար:

Վերանայվել են որոշակի թվով այն անձանց գործերը, ովքեր ընտանիքներով կամ միայնակ 1937, 1941 և 1949 թվականներին աքսորվել են հանրապետության սահմաններից դուրս անցյալի դաշնակցական գործունեության համար, որպես կուլակային տնտեսություն ունեցողներ և սոցիալապես վտանգավոր տարրեր: 1937 և 1941 թվականներին նշված կատեգորիայի անձինք Հայաստանի սահմաններից արտաքսվել են հիմնականում առանց գործեր հարուցելու, այսինքն ցուցակներով, որը խիստ դժվարացնում է հիմնավորման ստուգումը և անցկացված միջոցառման օրինականությունը, այսինքն հատուկ աքսորավայրեր արտաքսելը:

Վերանայված են նաև զգալի քանակությամբ այն անձանց գործերը, ովքեր բռնաճնշման են ենթարկվել, այսինքն ընտանիքներով աքսորվել են Ալթայի երկրամաս 1949 թ. հունիսի 14-ին Հայրենական պատերազմի տարիներին գերմանական բանակի «Հայկական լեգեոնում» ծառայելու համար:

Այդ գործերի վերանայման ժամանակ հիմնականում կատարվել են հանգամանալի ստուգումներ, այսինքն վկաների հարցաքննություն, առերեսում, արխիվային նյութերի ստուգում, հարակից գործերի ուսումնասիրություն և այլն, որոնցում հաճախ հանրապետության Դատախազության ղեկավարության ցուցումով մասնակցել են նաև Հայաստանի ՊՔՎ և ՆԳՆ աշխատակիցները:

23 տարվա ընթացքում պետական անվտանգության մարմինների հետաքննության հսկողության գծով Հայաստանի Դատախազության բաժինը հսկողական կարգով վերանայել է 7422 արխիվային-քրեական և հաշվառման գործ 15.770 մարդու նկատմամբ (այդ թվի մեջ չեն մտնում այն գործերը, որոնք վերանայվել են ԽՍՀ Միության Դատախազության և Զինվորական դատախազության մարմինների կողմից). վերականգնվել է 12.987 մարդ (6015 գործերի գծով), մերժվել է վերականգնել. նախկինում ներկայացված մեղադրանքները ապացուցված լինելու կապակցությամբ, 2793 մարդ (1407 գործերի գծով)...*

Արխիվային-քրեական և հաշվառման գործերի հսկողական կարգով վերանայման աշխատանքը շարունակվում է: Շարադրվածի մասին զեկուցում եմ ի գիտություն:

Հայկական ԽՍՀ դատախազ, 2-րդ կարգի արդարադատության պետական խորհրդական Ս. Ա. Օսիպյան

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.571, ց.9, գ.78, թ.23-26: Թարգմ. ռուս.:

*Բաց են թողնվում 1954-1976թթ. ըստ տարիների տրված գործերի վերանայման արդյունքները: Հետագայում մերժվածների գործերը նորից են վերանայվել:

Ծանոթագրություններ

1. Ասքանազ Մռավյանի նամակը հավանաբար ուղղված է Մոսկվայում գտնվող հայ կոմունիստներին՝ նրանց միջոցով նամակը կամ նրա բովանդակությունը ՌԿ(բ)Կ ղեկավարությանը հասցնելու համար:

Նամակի դրդապատճառը Հայաստանի լարված քաղաքական դրությունն էր, ղեկավարության մեջ ծագած տարաձայնությունները և բորբոքված քաղաքացիական պատերազմը: Դրանց պատճառը այն բռնություններն էին, որ գործադրվեցին մտավորականության, սպայության, Դաշնակցության ու այլ կուսակցությունների անդամների, գյուղացիության և այլոց նկատմամբ: Բռնության քաղաքականության հեղինակները և պաշտպանները (Մռավյանի նշած «կտրիճները», «տղաները», «քյալլագյոզները») Հայաստանի կուսակցական և պետական մի խումբ ղեկավար գործիչներ էին, երիտասարդ բոլշևիկներ: Նրանց թվում էին Գևորգ Ալիխանյանը (ՀԿԿ Կենտկոմի քարտուղար), Ավիս Նուրիջանյանը (Ռազմհեղկոմի անդամ, զինվորական գործերի ժողովրդական կոմիսար), Իսահակ Դովլաթյանը (ներքին գործերի ժողկոմ) և ուրիշներ: Բռնությունները սաստկացան և լայն ծավալ ընդունեցին չեկիստ Գևորգ Աթարբեկյանի Հայաստան գալով, որը մինչ այդ ծառայել էր Ռուսաստանի Արտակարգ հանձնաժողովի մարմիններում:

Նամակագիրը ձգտում էր հասնել Հայաստանի ղեկավար մարմինների վերակազմությանը և երկրի ներսում չափավոր քաղաքականության անցնելուն, ակնկալելով Ռուսաստանի ղեկավար կենտրոնների օգնությունը: - 18

2. Դեկլարացիայի հրապարակումից որոշ ժամանակ անց «Կոմունիստ» թերթը տպագրել է հետևյալ նյութը, «Զորի Զորյանը կոմունիստ» վերնագրով.

Դաշնակցական հայտնի գործիչ, ՀՅԴ Վրաստանի Կենտրոնական կոմիտեի անդամ, Վրաստանի Սահմանադիր ժողովի պատգամավոր Զորի Զորյանը անցել է Կոմունիստական կուսակցության մեջ: Ստորև բերում ենք նրա նամակը Թիֆլիսի թերթերից մեկի խմբագրության. Ընկ. խմբագիր, խնդրում եմ Ձեր հարգելի թերթում տպագրեք իմ հետևյալ հայտարարությունը.

Ապրիլի կեսին դաշնակցական կուսակցությունը տպագրել էր մի դեկլարացիա, որի տակ տրված էր իմ ստորագրությունը:

Սրանով հայտնում եմ, որ ես իմ ստորագրությունը չեմ դրել, մտնում եմ Կոմունիստական կուսակցության մեջ և հեռացել եմ ինչպես Կենտրոնական կոմիտեից, նույնպես և Դաշնակցական կուսակցությունից: Զորի Զորյան: (Կոմունիստ, 12 մայիսի 1921 թ.) -2

3. Հավանորեն տվյալ «Դեկլարացիային» է վերաբերում1923 թ. մայիսի 26-ի հետևյալ փաստաթուղթը, որը հասցեագրված է Ստալինին, Մոլոտովին և Ռուձուտակին (ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարներ).

«Այդ կոչի նախագիծը ուղարկել է ընկ. Պետերսը, որը համաձայնեցված է ՊԲՎ, Դրոյի և ընկ. Տեր-Գաբրիելյանի (ԱԽՖՍՀ տնտեսական ներկայացուցիչ) միջև:

Ընկ. Պետերսը խնդրում է Կենտկոմի թույլտվությունը հրապարակելու համար՝ Դրոյի ղեկավարությամբ հայտնի դաշնակցականների ստորագրությամբ»: (ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, Ֆ.4047, g.1, գ. 191, թ. 40): - 72

4. Գերասիմ Աթաջանյանը, Կապանի շրջանի Կյուտկյում գյուղից, եղել է Գարեգին Նժդեհի տեղակալը Զանգեզուրի ինքնապաշտպանության ժամանակ, ղեկավարել է Ղաթարի հանքերի տարածքի պաշտպանությունը:

Ըստ խորհրդային գործակալության տվյալների 1921թ. նոյեմբերին, գնդապետ Թորոսյանի հետ Պարսկաստանից վերադարձել է Զանգեզուր, իրադրությանը ծանոթանալու համար: Նույնը տեղեկացնում է, թե Կապանից ստացվել է Գերասիմի նամակը Նժդեհին, որում ասված է, թե ինքը տղաներով թաքնվում է անտառում, որը խստորեն հսկվում է բոլշևիկների կողմից: (ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.205, թ.173, գ.37. թ.49):

Սողոմոնը Գերասիմ Աթաջանյանի եղբայրն է, որը, ինչպես գրել է Սողոմոնի կինը՝ Վարդիթերն իր դիմումում, 1926 թ. սեպտեմբերի 27-ին, ուղղված ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանին, ձերբակալվել էր Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի կողմից 1925 թ. դեկտեմբերին: Խնդրելով ներում շնորհել ամուսնուն, նամակագիրը միաժամանակ հայտնում է, թե Արտակարգ հանձնաժողովում իրեն ասել են, որ ամուսինը «բանտարկված է նրա համար, որ կապ է ունեցել եղբոր՝ Գերասիմ Աթաջանյանի հետ, որը ներկայումս գտնվում է Փարիզում»:

Այն ժամանակ, երբ Գերասիմը հանքերից փախավ, կարդում ենք նամակում, Արտակարգ հանձնաժողովը բանտարկեց Սողոմոնին, 7 ա-

միս անց ազատ արձակելով: Երկրորդ բանտարկությունից հետո անցել էր 11 ամիս և կինը հույս ուներ, որ այժմ էլ Սողոմոնը, արդար լինելով, պետք է ազատ արձակվի: (Նույն տեղում, գ.205, թ.37-38):

1926 թ. հունվարի 4-ին ձերբակալվել էր նաև Վարդիթեր Աթաջանյանի հայրը՝ Միխայիլ Էլչիբեկյանը, որի ներման մասին դիմումը ՀԽՍՀ Կենտգործկոմը մերժել է 1926 թ. հոկտեմբերի 13-ին: (Նույն տեղում, թ.173):

ՀԽՍՀ Կենտգործկոմի որոշումով (13 հոկտեմբերի 1926 թ.) ներման մասին Սողոմոն Աթաջանյանի դիմումը հարգվել է, իսկ Միխայիլ Էլչիբեկյանինը՝ մերժվել: (Նույն տեղում, Ֆ.112,ց.3, գ.150, թ.142):

Պատմվում է, թե Գերասիմ Աթաջանյանը փախել է միլիցիայի ձեռքից ձերբակալության ժամանակ, երբ նրան Կապանից ձիով տանում էին Գորիս (ձիու վրայից կամրջից նետվել է գետը): 1928թ. Գերասիմը Ֆրանսիայից եկել է Հայաստան և ընտանիքը փոխադրել: 1998թ. սեպտեմբերին մի անգամ ևս անցել է պետական սահմանը՝ եղբոր ընտանիքը տեղափոխելու համար: Սակայն վերադարձի ժամանակ գետում զոհվել է սահմանապահների գնդակից: Գերասիմ Աթաջանյանի աճյունը թաղված է Ուրգուբ գյուղի գերեզմանատանը: (Տե՛ս **Վարագ Առաքելյան**, Կապանի արծիվը. «Երեկոյան Երևան», 5 հուլիսի 1990թ.: **Վ. Ջիլֆուղարյան**, Արծիվը՝ Խուստափի ծերպերից. «Տաթև», թիվ 2(4) 1998թ., էջ 43): - 229

5. Ի կենսագործումն ՀԿ (բ)Կ Կենտկոմի տվյալ՝ 1928 թ. հունվարի 13-ի (փաստ. թիվ 205), ինչպես նաև Անդրերկրկոմի 1929 թ. հոկտեմբերի 14-ի (փաստ. թիվ 214) որոշումների տպագրվեցին դաշնակցության դեմ ուղղված մի շարք գրքույկներ: Նման գործեր հրատարակվել էին նաև մինչ այդ: Ահա հակադաշնակցական գրականության, 1920-1930-ական թվականներին լույս տեսած, ոչ լրիվ ցանկը.

1. Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները: Ստենոգրաֆիական հաշվետվություն 20-23 նոյեմբերի 1923 թ.: Եր.-1924:

2. Երզնկյան Ա.- Մանուկ Խուշոյանի դատավարության գործում հասարակական մեղադրող Ա. Երզնկյանի ճառը՝ արտասանված 1926 թ. հոկտեմբերի 17-ին և 18-ին: Եր.-1926:

3. Դաշնակցական տեռորիստների գործը: (Նյութեր Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության դատավարությունից): Զ. Աշրաֆյանի առաջաբանով: Եր.-1927:

4. Հովհաննիսյան Ա.- Դաշնակցությունը և պատերազմը: Եր.-1927:

5. Չուբարյան Գր.- Դաշնակցության տաճկական օրիենտացիան և Հայրենիքի փրկության կոմիտեն: Եր.-1929:

6. Աբով Գ.- Դաշնակցությունն անցյալում և այժմ: Եր.-1929:

7. Աբով Գ.- Դաշնակցությունն անցյալում և այժմ: 2-րդ վերափոխ. հրատ., Եր.-1930:

8. Խանոյան Ս.- Դաշնակցության տրագիկոմեդիան: Եր.-1930:

9. Չուբար Ե.- Դաշնակցությունը երրորդ շրջանում: Եր.- 1930:

10. Ակոպով Ա.- Անգլիական իմպերիալիզմի դավերը Խորհրդային Անդրկովկասի սահմանների վրա և հայ դաշնակները: Եր.-1931:

11. Խանջյան Աղասի - Ավելի զգաստ, ավելի աչալուրջ:(Ընդդեմ հակախորհրդային ինտերվենցիայի դաշնակցական սպասարկուների): Եր.-1931:

12. Կարինյան Ա.- Դաշնակցությունը և իր զինակիցները: Եր.-1932:

-230

6. Արփա գյուղի կոմունիստները նկատի ունեին այն մի շարք լրացուցիչ միջոցառումները, որոնք խորհրդային իշխանությունը տվյալ տարիներին իրականացնում էր նոր տնտեսական քաղաքականությունը շարունակելու ուղղությամբ, միջոցառումներ, որոնք պատմության մեջ հայտնի դարձան «Նոր ՆԷՊ» անունով: Ընդ որում այդ քաղաքականությունը արտասահմանում հույսեր ծնեց սմենովեխականների մոտ ԽՍՀՄ-ում կապիտալիզմը (համենայն դեպս տնտեսության մեջ) վերականգնելու ուղղությամբ: (*Վ. Ն. Ղազախեցյան*, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929թթ.: Երևան, 1975, էջ 33-34):-230

7. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը Արշակունու մասին 1931 թ. ապրիլի 19-ին կայացրել է հետևյալ որոշումը.«Պաշտպանել ՀայՊՔՎ կոլեգիայի միջնորդությունը ընկ. Ս. Արշակունուն «Կարմիր դրոշի» շքանշանով պարգևատրելու մասին՝ բանդիտիզմի դեմ պայքարում մատուցած մարտական ծառայությունների համար: Հանձնարարել Կենտգործկոմին ձևակերպել և հարցը անցկացնել խորհրդային կարգով՝ համապատասխան կենտրոնական մարմինների միջոցով»:

Ս. Արշակունու բնութագիրը ՀայՊՔՎ նախագահը ՀԿ(բ)/Կ Կենտկոմ ուղարկել է 1931 թ. մարտի 19-ին: (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.11, գ.21,

թ.119,120, 121-123): - 265

8. Վաղարշակ Մկրտչի Եղիազարյանը երկու տարի ժամկետով համակենտրոնացման ճամբար աքսորի (Պետրոզավոդսկ) դատապարտվել էր Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի 1922 թ. հոկտեմբերի 2-ի որոշումով՝ «Դաշնակցություն կուսակցությանը պատկանելու և հակահեղափոխական քարոզչության համար»: Նույն որոշումով դատապարտվել էին նաև հետևյալ քաղաքացիները՝ Արմեն Արսենի Բաղդասարյանը, Հակոբ Ստեփանի Թումանյանը, Մացակ Բարսեղի Պողոսյանը, Թադևոս Իվանի Թոշյանը, Կարապետ Մանուկի Այվազյանը, Ռուբեն Մեսրոպի Թաքոսյանը, Արամ Մովսեսի Հովհաննիսյանը, Ալեքսանդր Բագրատի Էլիզբարյանը, Միքայել Գևորգի Օհանյանը, Վարդան Մկրտչի Մկրտչյանը, Եղիշ Սիմոնի Զաքարյանը, Հարություն Համբարձումի Բուդաղյանը, Լևոն Գևորգի Բաղալյանը, Լևոն Պողոսի Մելիք-Դադոյանը, Վարդան Խաչատուրի Ազիզյանը, Մկրտիչ Ալեքսանդրի Մուրադյանը, Արարատ Սահակի Գարիսյանը, Պերճ Նիկոլայի <ազգանունը անընթ.է>, Արամայիս Արամի Խուդգարյանը, Մեսրոպ Կոստանտինի Աթայանը և Գեղամ Ռուբենի Իսահակյանը, ընդամենը 22 մարդ: (ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.112, g.8, գ.22, թ.68): - 280

9. Հայկական ԽՍՀ Աշտարակի շրջանի Բյուրական, Օրգով, Ագարակ և Դողս գյուղերի տվյալ ութ բնակիչները ձերբակալվել էին, ապա ազատ արձակվել, 1933 թ. և Պետքաղվարչության կողմից դատապարտվել երեք տարվա ազատ աքսորի: Նրանց աքսորավայր նախատեսված էին Սիբիրի Տյումեն և Ղազախստանի Ալմա-Աթա քաղաքները, ուր նրանք պարտավոր էին մեկնել 1934 թ. մարտի 13-ին: (ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.112, g.13, գ.34, թ.246-253՝ դատապարտվածների դիմումները ներման խնդրանքի մասին): - 289

10. 1921թ. Հայաստանից հեռանալուց հետո Դաշնակցության ղեկավարները Պարսկաստանում, տարագրության մեջ, ստեղծել էին կառավարություն, որի անդամներ էին Արշակ Հովհաննիսյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Արշալույս Աստվածատրյանը, Սերգեյ Մելիք-Յոլչյանը, Գեղեոն Տեր-Ավետիսյանը, բժիշկ Սմբատ Եղիազարյանը, Օհանջանյանը և Մինախորյանը: (ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.1, գ.37, թ.67-70): - 292

11. Գերասիմ Բալայանի նամակը չի հասել հասցեատիրոջը՝ Արշակ

Ղազարյանին: Այն ընկել է Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցչությանը կից Հայկական գործերի քարտուղար Ս. Առաքելյանի ձեռքը, որը և այն կից գրությամբ 1925 թ. օգոստոսի 25-ին ուղարկել է Թեհրանից ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս.Համբարձումյանին: Կից գրության մեջ ասված է .«Հարգելի ընկեր. Այս նամակը ստացել եմ ուղղակի փոստից և չեմ հանձնել բժ. Ղազարյանին, ի նկատի ունենալով դոկումենտի հետաքրքրությունը և այն հանգամանքը, որ նամակը որոշ չափով ապացույց է Ղազարյանի դեպի մեզ բռնած դիրքի անկեղծության: Ուղարկելով նամակը Ձեզ, խնդրում եմ պահել որպես գաղտնի դոկումենտ, այլապես կարող են վնասվել մեր և բժշկի փոխհարաբերությունները: Բարևներով՝ Ս. Առաքելյան»: Գրության վրա արված է հետևյալ մակագրությունը. «Պատճենը ԺԿԽ նախագահին և ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությանը ի գիտություն: 25.IX: Ստորագրություն»: (ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.113, g.3, գ.362, թ.8):

Արտասահմանում (Պարսկաստանում) խորհրդային ծառայողների կողմից հակառակորդի նամակները բռնելու մասին տես սույն ժողովածուի թիվ 298 նյութը (խորհրդային նախկին դիվանագետ Ագաբեկովի հիշողությունները):

Արխիվային գործում պահպանվել է նաև տվյալ նամակի ծրարը, ըստ որի նամակը ուղղված է՝ Պարսկաստան, Ղազվին, բժիշկ Արշակ Ղազարյանին:(Նույն տեղում, թ.5):

Բժիշկ Արշակ Ղազարյանի գործունեության մասին ժողովածուում կան այլ փաստաթղթեր ևս: - 310

12. Գրիգոր Սարուխանի Մեհրաբյանը, ինչպես ինքն է գրել, Համկ(բ)կ Անդրերկրկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով 1926-1929 թթ. աշխատել է Պարսկաստանում, քաղաքական գծով: Հետո նույնպիսի աշխատանքի համար գործուղվել է Ֆրանսիա, ավելի կարճ ժամանակով: Վաղ տարիներին աշխատել է Դիլիջանի կուսգավկոմի, այնուհետև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար: (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.91, g.3, գ.3234, թ.22-25, Ֆ.4, g.3, գ.2374, թ.12): - 315

13. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1926 թ. օգոստոսի 31-ին «Գյուտ եպիսկոպոսի» մասին, Արտակարգ հանձնաժողովի նախագահի զեկուցման կապակցությամբ ընդունել է որոշում. «Առաջարկել Արտակարգ հանձնաժողովին եպիսկոպոս Գյուտի մասին գործը ուղարկել Կենտկոմի նախագահության բոլոր անդամներին ծանոթանալու հա-

մար»: (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.1, ց.6, գ.5, թ.122):

1927 թ. հուլիսի 16-ին Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը տեսակցելով Պետքաղվարչության նախագահի հետ, Կաթողիկոսի անունից բարձրացրել է նաև Գյուտ եպիսկոպոսի մասին հարցը: Կաթողիկոսին ուղղված զեկուցագրում նա գրել է. «Խոսակցության վերջում խնդրեցի հայտնել, թե ինչ հետևանք ունեցավ իմ բանավոր և գրավոր դիմումը Գյուտ սրբազանին ազատ արձակելու մասին: Մելիք-Հովսեփյանը հայտնեց, որ խնդիրը հարգել է, և Գյուտ եպիսկոպոսը ազատ կարձակվի»: (Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.): Կազմեց Սանդրո Բեհբուդյան: Երևան, 1994, էջ 116): - 315

Վերջաբանի փոխարեն

Այո, վաղաժամ է Դաշնակցության «լիկվիդացիայի» մասին խոսելը, երբ բոլշևիզմն ապրում է իր անբուժելի սնանկության պրոցեսը:

Մեր մոլորակի վրա դեռ շատ բան պիտի փոխվի, պիտի փոխվի նաև քաղաքական քամիների ընթացքը ու Դաշնակցության հին նավը անպայման պիտի մտնի բանուկ հունի մեջ:

Իսկ մինչ այդ, զինված մեր օրերի հզորագույն զենքերով՝ համբերությամբ, տոկունությամբ և զգուշավորությամբ՝ պատրաստվենք այդ վարդագույն պայքարի արևոտ օրերին:

Վ. Նավասարդյան, ՀՅԴաշնակցության «լիկվիդացիան» (բոլշևիզմի սնանկության առիթով): Գահիրե, 1924, էջ 187:

Հապավումներ

ԱԽՖՍՀ - Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն

Անդրերկրկոմ - Անդրկովկասի երկրային կոմիտե:

Գ - Գաղտնի:

ԳՀԽ - Գերագույն հոգևոր խորհուրդ:

Դ/Կ - Դաշնակցություն կուսակցություն:

ԺԿԽ, Ժողկոմխորհ - Ժողովրդական կոմիսարների խորհուրդ:

ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

ԿԳԿ, Կենտգործկոմ - Կենտրոնական գործադիր կոմիտե:

Կենտկոմ - Կենտրոնական կոմիտե:

ԿՎՀ - Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով:

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն:

ՀԿԿ, ՀԿ(բ)Կ - Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն:

ՀԽՍՀ - Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

ՀԿԵՄ (ՀԼԿԵՄ) -Հայաստանի (լենինյան) կոմունիստական երիտասարդական միություն:

ՀամԿ (բ)Կ - Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն:

ՀՔԿՓ ԿՊԱ - Հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ:

ՀՊԳՄ - Հայաստանի պրոլետարական գրողների միություն:

ՀՕԿ - Հայաստանի օգնության կոմիտե:

ՆԳԺԿ - Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ:

ՆՊ ԿՊԱ - Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ:

ՊՔՎ, Պետքաղվարչություն - Պետական քաղաքական վարչություն:

ՌԽՖՍՀ - Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն:

ՔՊՕ - Քրեական դատավարական օրենսգիրք _

ՔՕ - Քրեական օրենսգիրք:

Ֆ, ց, գ, թ. - ֆոնդ, ցուցակ, գործ, թերթ:

Ցանկ անձնանունների

Աբրահամյան Աբրահամ Տեր-Միքայելի 266
Աբրահամյան Հայկ 291
Աբրահամյան Չոլո 303
Աբով Գ. 340
Աբուլյան 254, 266
Ագաբեկով Գ.Ս. 320, 322, 342
Ագրբա 240
Ազիզյան Դավիթ 296
Ազատյան Հ. 22, 121, 282
Ազիզյան Վարդան Խաչատուրի 341
Ազնավուրյան Արամայիս 282
Աթայան Մեսրոպ Կոստանտինի 341
Աթաբեկյան 29, 37, 188
Աթաբեկով Արշ. 72
Աթաջանյան Գերասիմ 213, 214, 216, 225, 226, 229, 338, 339
Աթաջանյան Սողոմոն 228, 282,338
Աթաջանյան Սոնիչկա 228, 229
Աթաջանյան Վարդիթեր 338, 339
Աթաբեկյան Գևորգ 14, 19, 337
Ալիխանյան Գևորգ 15, 337
Ալիխանյան Ս. 12, 15, 18
Ալոյան Գեղամ 296
Ախեյան Հովհաննես 291
Ակոպով Ա. 340
Աղամալյան Ա.Պ. 206, 208
Աղումյան Գրիգոր Պապիկի 260
Ամատունի 244, 245, 253, 325, 328,329-332
Ամիրխանյան Արմենակ 275, 276
Ամիրխանյան Շավարշ 21, 25, 28, 48, 94, 100, 279, 290,291
Ամիրխանյան Սմբատ Հովհաննեսի 261
Ամիրյան Գ. 169
Ամիրջանյան Գարեգին 299
Ամրազյան Վահան 77, 127, 129, 131, 139
Այվազ 251, 274
Այվազյան Այվազ 331
Այվազյան Կարապետ Մանուկի 341
Անանյան 78, 245

Անանուն Դավիթ 18, 23
Անդրանիկ 224
Աշրաֆյան Զ.Ա. 199, 206, 208, 340
Առաքելյան Ս. 311-314, 342
Առաքելյան Վարագ 339
Առուստամյան Արշակ 130, 147
Ասատրյան-Գևորգյան Սարգիս Գևորգի 277, 278
Ասլանյան Արշակ 269
Ասլանյան Մաղաք 269
Ասլանյան Սմբատ Հովհաննեսի 268, 269
Ասմարյան 23
Ասյա 228
Աստվածատրյան Արշալույս 341
Ավալյան Հայկ Սիմոնի 34, 52, 56, 67-69, 76, 81, 95-97, 99, 100-103, 106-108, 110-123, 127, 129, 151, 153, 155, 164
Ավետիսյան Տիգրան 60, 73
Ավետյան Գեղամ 116
Արծրունի Վահե 302
Արմաղանյան Կարապետ Սամսոնի 266, 267
Արշակունի Սուրենի Անդրիասի 265, 340, 341
Արուտյունով 301
Արքիմեդ 178
Աֆրիկյան Կ. 168

Բաբախանյան Գ. 111
Բաբայան 267
Բաբայան Սամսոն Լևոնի 266
Բագրատունի Սմբատ Կուրղինի 269, 270
Բաղալյան Լևոն Գևորգի 341
Բալայան Գերասիմ 310, 342
Բալա-Սարգիս 251
Բալասբեկյան Գրիգոր 127, 129, 130, 140, 147
Բալյան Լևոն 108
Բակունց Ալեքսանդր (Աղեքսանդր), Բակունց Ակսել 79-82, 87, 94, 96, 99-101, 106, 108, 111-115, 117-124, 126-131, 137, 138, 142, 143, 145, 147-149, 151, 153, 169, 171, 172, 179, 186, 188
Բակունց Երեմիա 27, 54, 210, 211
Բաղդասարյան Ալավերդի 288
Բաղդասարյան Արմեն Արսենի 341
Բաղդասարյան Ղազար 282

Բաղդասարյան Վարդան 296
Բարխուդարյան Ալեքսան 271
Բարխուդարյան Թովմաս 271
Բարխուդարյան Խաչատուր 81, 82
Բարխուդարյան Սարգիս Խաչատուրի 270, 271
Բարսեղյան Հարություն 288-289
Բարսեղյան Հմայակ 282, 283
Բեգլարյան Սարգիս 165, 171
Բեհբուդյան Սանդրո 343
Բեջանյան Վահան 299
Բերբերյան 274, 275
Բերիա 54
Բզնունի Ա. 256
Բորիսովսկի Ն. 311
Բուդաղյան Հարություն Համբարձումի 341
Բուդումյան Ս. 193
Բուլոյան 303
Բունիաթյան Ավ. 159

Գաբրիելյան Միքայել 165, 172
Գալոյան Արտաշես 282, 283
Գասպարյան Հազարապետ Գրիգորի 266
Գարագաշ 295
Գարեգին 229
Գարիսյան Արարատ Սահակի 341
Գենյա 99
Գինոսյան Հ. 169
Գիրջյան Մամիկոն (Վարդան) 215
Գյուլխանդանյան Ա. 154
Գյուլիքեխվյան Հ. 121
Գյուտ, եպիսկոպոս 315, 318, 342, 343
Գնունի 210
Գոգլիձե 326
Գոգոբերիձե 304
Գողթունի 10
Գործունյան Կ. 181
Գորոյան Լևոն Մկրտչի 261
Գորոյան Տիգրան 295
Գրիգորյան Արշակ 67, 68

Գրիգորյան Գրիգոր (Գրո) 169, 171, 172, 179, 183
Գրիգորյան Գրիգոր 165, 171
Գրիգորյան Գրիգոր 296
Գրիգորյան Գևորգ 108, 109, 110
Գրիգորյան Հազարապետ Համբարձումի 265
Գրիգորյան Հ. 79
Գրիգորյան Միխակ 296
Գրիգորյան Մ. 186
Գրիգորյան Սամսոն 296
Գրիգորյան Սիրակ 122, 127-129, 298, 299
Գրիգորյան 194
Գրիգորյան 263
Գրիգորյան 327
Գումեդին 162, 194, 195, 197
Գևորգյան Ա. 79
Գևորգյան Աշոտ 281
Գևորգյան Արմենակ 288
Գևորգայն Արտավազդ 284
Գևորկով 326, 327

Դաղալյան Արտաշես Գալուստի 272, 273
Դաղայան 210
Դանիելյան Հայրապետ 288
Դանիելյան Խաչիկ 96, 106, 108, 113, 115, 117, 119, 120, 122-124, 126, 127,
Դաստակյան 191
Դավթյան Սեդրակ 282, 283
Դավթյան 321
Դարբինյան (Չիլինկարյան) 39, 132, 141
Դձամոն 227
Դովլաթյան Իսահակ (Դովլաթով) 13, 15, 337
Դորունց Նիկ. 79, 127, 129
Դրո 11-13, 17, 18, 20, 28, 38, 42, 48, 68, 73-77, 125, 131, 132, 176, 221, 292, 310, 338
Դուբսոն 316, 320

Եկավյան 245
Եղիզարյան Սմբատ 341
Եղիզարյան Վաղարշակ Մկրտչի 280, 341
Ենգիբարյան Մկրտիչ Առաքելի 261, 262

Եպիսկոպոսյան Համ. 86, 96, 112, 115, 122-124, 127, 129
Եսայան 198
Երանոսյան Խաչատուր Հակոբի 261
Երեմյան Սարդար 270
Երզնկյան Արամայիս 22, 23, 75, 202, 304, 305, 324, 339
Երզնկյան Սուրեն 13
Երզնկյան 290, 291

Զազյան Սիմոն 260
Զաքարյան Գևորգ Եղիշի 260
Զաքարյան Եղիշ Սիմոնի 341
Զաքարյան Լիպարիտ 107, 108
Զաքարյան Մկրտիչ 171, 172, 181, 186
Զաքարյանց 156
Զաշիբալով 333
Զարգարյան Արտաշես 282, 283
Զարիֆյան Հակոբ 184
Զեյնալով 12
Զիլֆուղարյան Վ. 339
Զինոոև 62, 131, 143, 145, 305
Զորիկ 83
Զորյան Զորի 60, 337, 338

Էլիավա 304
Էլիզբարյան Ալեքսանդր Բագրատի 291, 341
Էլոյան Հովսեփ 332
Էլչիբեկյան Միխայիլ 282, 339
Էֆենդիև 23

Թաքար 83
Թաթյան Ա. 192
Թաթոսյան Ռուբեն Մեսրոպի 291, 341
Թալալյան Ա. 168
Թայիրյան 92
Թարխանյան Գևորգ 288
Թարվերդյան Հ. 111
Թեյմուրթաշ 321
Թոշյան Թադևոս Իվանի 341
Թովմասյան 279

Թովմասյան 326
Թորոսյան Պ. 245, 329-332
Թորոսյան Սահակ 58, 281, 282
Թորոսյան 338
Թոփչյան Բագրատ 60, 71, 73, 76
Թումանյան Լ. 67
Թումանյան Հակոբ Ստեփանի 341
Թումյան Հարություն (Արտեմ) 101, 119-121, 127, 130, 131

Ժամհարյան Դանիել Հայրոյի 261
Ժորդանիա Նոյ 19

Իշխանյան Բաշխի 23
Իշխանյան Եղիշե 159, 315, 320, 322
Իոաննիսյան Կ.Ի. 334
Իոնով 238
Իոֆե 61, 62, 65
Իսահակյան Ավետիք 258, 259
Իսահակյան Գեղամ Ռուբենի 341
Իսրայելյան Աշոտ 60, 73
Իսքենդարյան Գ. 298, 299

Լազգո 251
Լեգրան 67
Լենին 62, 131, 143, 145, 175, 177
Լեպին 240
Լուկաշին (Սրապիոնյան Սարգիս) 26, 65, 101, 122, 131, 143, 144, 216, 279, 291, 293, 301, 305, 314, 323

Խալաթյան Հովհաննես 326
Խանամիրյան Գեղամ 296
Խանամիրյան Վահան 296
Խանոյան Ս. 221, 340
Խանջյան Ա. 242-244, 246, 254-256, 258, 274, 275, 288, 322, 326, 340
Խաչատրյան Ասատուր Պետրոսի 201, 206, 207
Խաչատրյան Արշակ 326
Խաչատրյան Հակոբ 326
Խաչյան Ա. 22
Խատիսյան 156

Խատիսյան 310
Խատիսով Գեորգի 58
Խարմանդարյան Գուրգեն 152
Խլղաթյան վաղարշակ Ալեքսանդրի 261
Խոյեցյան Խաչատուր 262
Խոնդկարյան 23
Խորենի 185
Խուդգարյան Արամայիս Արամի 341
Խուշոյան Մանուկ 198-208, 339-340
Խուրշուդ 229

Ծատուրյան Վ. 326
Ծատուրով 234, 259
Ծովինյան Ծովակ 86, 131

Կասյան Սարգիս 14, 17, 18, 159, 221, 235
Կարապետյան Ալեքսան 69
Կարապետյան Անահիտ 283
Կարապետյան Գարուշ 275
Կարապետյան Գերասիմ 275
Կարապետյան Եղիազար (Ուստա) 84
Կարապետյան Կոստանտին 77
Կարապետյան Մելիքսեթ 283
Կարապետյան Սիմոն 296
Կարաև 240
Կարդաշխան 267
Կարինյան (Գաբրիելյա) Արտաշես 94, 199, 217, 230, 338, 340
Կարինյան Հրանտ 130, 147
Կարոյան Սմբատ 129, 130, 147
Կաուլ 234
Կերենսկի 175
Կիսիբեկյան Աբ. 299
Կիրակոզով 98
Կոստան 278
Կոստանյան Հ. 159, 258, 316
Կոստանյան Վարդ 198
Կորկոտյան Ջավեն 95
Կրասիլնիկով Գրիգորի 299
Կրինիցկի 240, 258
Կրմենանց Նիկոլյան (Նիկսար, Նիգտաս) 34, 74, 79, 80, 87,

96, 97, 99-101, 106-111, 113, 115, 117-122, 124, 126, 127, 129, 131, 147, 151, 158-161
Կուզնեցով 210

Հախնազարյան Սամսոն Մակարի 266, 267
Հախվերդյան Կոլոտ 231
Հախվերդյան Հովհաննես 288
Հախումյան Տ. 203
Հակոբյան Գ. 192
Հակոբյան Ենոք Մովսեսի 263
Հակոբյան Հակոբ Հարությունի 201, 206, 207
Հակոբյան (Սաֆարյան) Ասատուր Վլասի 273, 274
Համբարձումյան Ս. 37, 102, 131, 284, 311,342
Համդիլյան Կարո 312
Հայրապետյան Լևոն Մարկոսի 263, 264
Հայրապետյան Միս. (Մի-Հայր) 79, 127,129
Հանեսօղլյան 245
Հասան-Ջալալյան Աղ. 206
Հարությունյան Առաքել 294
Հարությունյան Արտավազդ 291
Հարությունյան Բարդուղիմեոս 282
Հարությունյան Կարապետ 269
Հարությունյան Մուշեղ Ավագի 280
Հարությունյան Սեդրակ 282, 283
Հարությունյան Վաղարշակ Դավթի 288
Հովակիմյան Հովակիմ Ալեքսանդրի 273, 274
Հովհաննիսյան Աբգար 96
Հովհաննիսյան Խաչիկ 188
Հովհաննիսյան Աշոտ 22, 24, 35, 39, 52, 75, 191, 199, 217, 293, 306, 311, 312, 340,
Հովհաննիսյան Արամ Մովսեսի 341
Հովհաննիսյան Արշակ 341
Հովհաննիսյան Արտաշես 296
Հովհաննիսյան Տիգրան Աբրահամի 268
Հովհաննիսյան 166
Հովհաննիսյան 274
Հովսեփյան Ա. 202
Հովսեփյան Վարդան 278
Հովսեփյան 23
Հուսեյնով 291, 299

Ղազազյան Կորյուն 28, 42, 60, 71, 73, 76, 125, 131, 132, 292
Ղազախեցյան Վլադիմիր Նահապետի 2, 3, 8, 340
Ղազար 278
Ղազարյան Արշակ 309, 310-313, 321, 342
Ղազարյան Ապրե Մխիթարի 201, 206, 207
Ղազարյան Արսեն 291
Ղազարյան Լ. 244, 245
Ղազարյան Կ. 71
Ղազարյան Կ. 168
Ղամբարյան Ռ. 108, 109
Ղամբարյան Վահան Ռուբենի 88
Ղարագյոզյան Ա. 22, 23
Ղարիբյան Սամսոն 282
Ղլըտճյան Արսեն, վարդապետ 318
Ղուկասյան Ղուկաս 331

Ճուտուրյան 301

Մադոնց Վ. 108, 109
Մագդոնալդ 175
Մակարյան Արո Սահակի 201, 206, 207
Մակարյան Մինաս 60, 73
Մակեդոնսկի 290, 291
Մակինցյան Պողոս 22, 216, 323
Մանդալյան 245
Մանուկյան Միհրան Շավարշի 201, 202
Մաշուրյան Հ. 79
Մաչանյան Մովսես 288
Մասսարիկ 294
Մարգարյան Մկրտիչ 164, 169, 171, 172, 179, 181, 186, 187
Մարգարյան Ս. 22, 23
Մարգարյան 317
Մարո [Նազարբեկ] 22
Մարտիկյան Ս. 22
Մարտիրոս 267
Մարտիրոսյան Բենիամին 299
Մարուքյան Միքայել (Լեմբել) 164, 171, 172, 182
Մարուքե 36
Մելիք-Դադոյան Լևոն Պողոսի 341

Մելիք-Թանգյան Ներսես, եպիսկոպոս 292, 294, 301, 314, 317, 318, 319, 321
Մելիք-Հովսեփյան 25, 37, 48, 51, 54, 55, 95-97, 99, 100, 103, 150, 158, 198, 211, 213, 227, 232, 234, 279, 283, 285, 286, 303, 343
Մուրադ-Մուրադյան 23
Մելիք-Յոլչյան Սերգեյ 302, 341
Մելիքյան-Պողոսյան Մելիք Պողոսի 261
Մելիք-Սարգսյան Սաֆար 108
Մելիքսեթյան Լևոն 291
Մելիք-Փարսադանյան Իս.79
Մելիք-Փարսադանյան Ս. 79
Մելիք-Օհանջանյան Կ. 23
Մելքումյան Ս. 79
Մեհրաբյան Գրիգոր Սարուխանի 315, 316, 342
Մենժինսկի 48, 49
Միլյուկով 176
Միխայելյան Միշա 160
Միխայլով 241
Միկոյան 305
Միհրան 83
Մինախորյան 23, 341
Մինասյան Մինաս 96
Մինասյան Մուշեղ 162, 163, 165, 166
Մինասյան 320
Միսակյան Շավարշ (Շավարշ-Միսակ) 215, 227, 324
Միրաքյան Ենոք 58
Միրաքյան Հ. 79
Միրզոյան Հովսեփ 127, 129, 130, 147
Միքայելյան 102
Միքայելյան 211, 283
Միքայելյան 289
Միքայելյան 329-331
Մխիթարյան Երեմ (Շեկ Երեմ) 331
Մխիթարյան Գ. 169
Մխիթարյան Ռաֆայել 329
Մկրտչյան Գևորգ Տոնոյի 201, 206, 207
Մկրտչյան Լևոն 148
Մկրտչյան Սաֆրազ Մանուչարի 263
Մկրտչյան Վարդան Մկրտչի 341
Մհեր 112

Մյասնիկյան Ալ. 41, 54, 64, 66, 69, 131, 304, 324
Մնացականյան Սուրեն 326
Մնացականյան Եգոր 231
Մոգիլևսկի 48, 54, 291, 301
Մոլոտով 61, 62, 338
Մովսեսյան Հակոբ 200, 201, 207
Մովսիսյան Աշոտ 260
Մռավյան Ասքանազ 14, 17, 18, 20, 35, 44, 52, 74, 77, 82, 101, 140, 142, 145, 199, 234, 304, 310, 337
Մրգո 83
Մուղդուսի 51, 53-55, 196, 198, 227, 275, 276, 283, 285, 286, 303, 308, 326
Մուշեցի Քեռի 83
Մուսայելյան 316
Մուսինյան Թադևոս 279
Մուսինյան 279
Մուրադբեկյան Խորեն, արքեպիսկոպոս 343
Մուրադյան Ալեքսան 278
Մուրադյան Արտաշես 317, 321
Մուրադյան Մկրտիչ Ալեքսանդրի 341
Մուրադյան Նիկողոս 262
Մուրուք-Կարո 251, 278

Յաղուբյան Հ. 22
Յամփրթ 194, 197
Յուրենև 312, 314

Նազարեթյան Հմայակ 240, 315, 324
Նազարով 308
Նաթալի Շահան 215, 227
Նալչաջյան Արամ 60, 73
Նահրատյան Արամ Արշակի 328, 329
Նասիբյան Գ. 108, 109
Նասիբյան Գուրգեն 291
Նավասարդյան Վահան 36, 39, 132, 141, 346
Նժդեհ Գարեգին 16, 65, 157, 160, 214, 290, 338
Նիկողոսյան 274
Նուրիջանյան Ավիս 12, 13, 15, 22, 337
Նուրի Փաշա 12

Շահբազյան Խաչատուր 280, 291
Շահինյան Սերգո 326
Շահխաթունի 185
Շահսուվարյան Ալեքսանդր 31, 34-37, 40-42, 44, 49, 51, 54, 77
79-81, 86, 94-100, 102, 103, 116, 131, 151, 158, 164, 188-192,
208, 299, 305, 308
Շահվերդյան Դանուշ (Դանիել) 216, 323, 324
Շավարշունի Արշավիր 1
Շումյացկի 291

Ոսկանյան Տ. 168
Ոսկանյան 285

Չալթիկյան Հ. 166
Չալխուշյան Գ. 236
Չալյան Մուշ. 241
Չարենց Եղիշե 36, 212
Չթչյան Օնիկ 172, 182
Չիչերին Գ. 61-63, 65
Չուբար Եղիա 213, 215, 216, 234, 249, 323, 324, 340
Չուբարյան Գրիգոր 206, 340

Պապիկ [Գրիգորի Մկրտչյան] 158
Պապիկյան Ոսկան 332
Պաստուխով Ս. 291, 314
Պարզյան Գ. 279
Պարույր 251, 278
Պետերս 338
Պետոյան Ղազար Մնացականի 201, 202, 207
Պետրոսյան Արտաշես 97, 101, 113-115, 117, 119, 120, 122,
123, 126, 127, 131, 143, 147, 188
Պետրոսյան Գրիգոր 138, 299
Պետրոսյան Ս. 168
Պետրոսյան 51, 52, 161, 198, 317
Պերճ Նիկոլայի 341
Պիճիկյան Գ. 23
Պիտոև 156
Պյուրոս 173
Պողոսյան Մացակ Բարսեղի 341
Պողոսյան Մխիթար 331

Պողոսյան 86
Պողոսյան 161, 317
Պոտո 83
Պրիբիլսկի 285, 328

Ջամալյան 185, 214, 227
Ջանիրյան Երվանդ 282
Ջեմալ Փաշա 25, 48, 49

Ռակովսկի Խ.Գ. 215
Ռեդենս 259
Ռիգին 216
Ռշտունի Գալուստ 262, 286, 287
Ռշտունի Գեղամ 299
Ռուդենկո Ռ.Ա. 333, 334
Ռուծուտակ 338

Սալին Դ.Ե. 332
Սահակյան Սուրեն 215
Սամոլուկով 333
Սայադյան Ենոք 296
Սառաֆյան Վ. 171
Սասունի Կարո 9, 159, 310
Սասունցի Մեծ Ղազար 83
Սասունցի Մկրտիչ 99
Սարատիկով 244, 245
Սարատիկովներ 251
Սարգիս [Սարկիսով (Դանիելյան) Սարկիս Արտեմի
(Հարությունի)] 12
Սարգիս 310
Սարգիսյան Հայկ 69
Սարգսյան Արշակ 160
Սարգսյան Մ.Մ. 206, 208
Սարինգուլյան Խ. 77
Սաֆարյան Լևոն Մեսրոպի 271, 272
Սաֆարյան Խալաթ Հովսեփի 261
Սաֆրազբեկյան Մ. 158, 159
Սերջանյան Միհրան 84, 96, 97, 111-113, 115, 120-124, 127, 188
Սիմոնյան 299
Սիմոնյան Դ. 316

Սիմոնյան Հրաչիկ 61
Սինանյան 185
Սինոյան Պետրոս Կիրակոսի 200-202, 205-207
Սլավուցկի Մ. 293
Սոլո 96, 112
Սողոմոնյան Ռաֆիկ 326
Ստալին Ի.Վ. 49, 65, 288, 338
Ստեփանյան Արտաշես Մարտիրոսի 200, 201, 206, 207
Ստեփանյան Հայկ 108
Ստեփանյան Ն. 11
Ստեփանյան 241
Ստեփանյան Սահակ Արտեմի 200-202, 204, 205, 207, 208
Սրաբով 263
Սրապիոն (Ժորես) 96, 101, 129
Սրապյան Ա. 168
Սուքիասյան Մամիկոն Սարգսի 329
Սուրեն 278
Սևդաշունի Հմայակ 84, 96, 97, 110-112, 115
Սկյան 285, 328

Վանյան Տիգրան 139, 165
Վանցյան Արտաշես 56, 69
Վարդանյան Աղասի 23
Վարդանյան Գրիգոր 23, 229, 316
Վարդանյան Հաբեթ 275
Վարդանյան Հայկազ Գևորգի 280
Վարդանյան Սիրակ 85
Վարդանյան Ս. 254
Վարդանյան (Վարդանով) 53, 55, 227, 234, 283, 285, 286, 303, 308
Վարդապետյան Լ. 199
Վարդապետյան Վ. 299
Վիշինսկի 329, 330
Վոլենբերգ 49
Վրացյան 17, 18, 20, 39, 68, 73, 74, 155, 185, 214, 227, 294

Տատյան Հ. 23, 282
Տեր-Աբրահամյան Մխիթար 131, 147
Տեր-Ավետիսյան Գեդեոն 341
Տեր-Ավետիսյան Վ. 171
Տեր-Բարսեղյան Տեր-Մաթևոս Տեր-Մելիքսեթի 261

Տեր-Գաբրիելյան Սահակ 12, 61-65, 338
Տեր-Գևորգյան Եզիկ 107
Տեր-Գրիգորյան Խաչիկ 96
Տեր-Կարապետյան 301
Տեր-Հակոբյան Հակոբ 341
Տեր-Հակոբյան Հ. 111
Տեր-Հակոբյան Մամբրե 165
Տեր-Հարությունյան Մամիկոն 114
Տեր-Հարությունյան Սուրեն 169-170, 171, 172, 182, 186
Տեր-Հարությունյան (հոգևորական) 231
Տեր-Հովհաննիսյան Անգին 284, 286
Տեր-Հովհաննիսյան Հրաչյա 77
Տեր-Հովհաննիսյան Միհրան 284-286
Տեր-Ղազարյան Թադևոս 67, 69
Տեր-Մարտիրոսյան Կամսարական, նաև՝ Համսո (Գամսո) 96, 127, 131, 188
Տեր-Մինասյան Անահիդ 148
Տեր-Մինասյան Ռուբեն (Ռուբեն փաշա) 16, 72, 83, 159, 214, 227, 278, 324
Տեր-Միքայելյան Անուշավան, նաև՝ Անուշ 129, 131, 147
Տեր-Միքայելյան Միքայել Մկրտչի 285
Տեր-Ներսեսով 18
Տեր-Պողոսյան Պողոս 60, 127, 129, 130, 140, 142, 147
Տեր-Ռուբինյան Գ. 23
Տեր-Սահակյան Միհրան 131, 147
Տեր-Սիմոնյան 22
Տեր-Վարդանյան Ալեքսանդր 294
Տեր-Վարդանյան Հակոբ 96
Տեր-Վարդանյան Խաչիկ 111
Տեր-Վարդանյան 301
Տերտերյան 68
Տոնյան Արամ 112, 119
Տոնյան Ռուբեն 96, 99, 106, 108, 111, 113-115, 117, 119, 120, 122-124, 127, 129, 188
Տոնոյան Աբգար 331
Տրդատյան Տ. 203
Տրդատյան, Նաև՝ Տրդատ 97, 115, 116
Տրոցկի 131, 143, 145, 309

Փանյան 234, 285, 328
Փարսյան Մ. 79
Փափազյան Վ. 61, 63
Փիլիպոսյան Գրիգոր 288
Փիրումյան Սիմոնիկ 75, 214, 216, 228, 304, 305, 323, 324
Փոլյան (նաև՝ Ֆոլյան) Սիմոն 97, 101, 115-123, 126, 127, 130, 140, 141, 145, 147, 169, 182, 188
Փոլոյան Սրապիոն 262

Քաթանյան 62
Քալաշյան Գ. 86
Քաջազնունի 39, 141, 186, 210, 211, 255, 256, 258
Քարտաշյան Վարդան 171, 172, 186
Քեմալ 175
Քեռի [Գաբրիելի Կարապետյան]
Քյուրդ-Ղազո 200, 201
Քոչարյան Արտուշ 281
Քոչարյան Հակոբ Գասպարի 227
Քոչարյան Սահակ (Սև Սահակ) 331
Քոչարյան 210
Քրիստափոր [Միքայելյան] 22

Օգանեզով Գրիգորի Հովհաննեսի 265
Օգանեսով Արամ 291
Օթյան Ս. 242, 244, 245, 249
Օհանյան Միքայել Գևորգի 291, 341
Օհանջանյան Ավետիս 56, 69, 294, 301, 341
Օհանջանյան Համազասպ 155
Օհանջանյան Տիգրան 282
Օսիպյան Ս.Ա. 336
Օրախելաշվիլի Մամիա 17, 19, 72
Օրբելյան Նիկիտա 299
Օրջոնիկիձե Սերգո (Գրիգորի) 17, 304

Ֆահրադյան Ղազար Հարությունի 201, 202, 207
Ֆահրադյան Միքայել 46

Ցանկ տեղանունների

Աբարան (Ապարան) 276,329
Ագարակ 341
Ադամխան 261
Ադրբեջան 12, 16, 72, 98, 121, 128, 138, 146, 152, 179, 180, 298, 300, 305-307, 322
Ալագյազ 133, 202, 203
Ալափարս 244, 252
Ալեքսանդրապոլ (Լենինական) 11, 26, 45, 47, 59, 67, 92, 96, 97, 101, 102, 111-114, 117-119, 123, 127, 128, 134, 136, 162, 169, 180, 181, 184, 185, 244, 250, 265, 270, 282, 284, 286, 328
Ալեքսանդրիա 309
Ալթայ 333
Ալմա-Աթա 341
Ախսրով 278
Ախտա 112, 119, 120
Աղբաբա 276
Ամասիա 332
Ամերիկա 29, 35, 141, 175, 176, 215, 232, 292, 293, 305, 312
Այնազուր (Այնաձոր) 283, 326
Անգլիա 175
Անգորա (Էնկյուրի) 318, 319
Անդրկասպյան երկիր 128
Անդրկովկաս 58, 60, 72, 105, 178, 183, 218, 219, 222, 225, 228, 304, 307, 308
Աշտարակ 119, 253, 260, 273-275, 277, 341
Առաջավոր Ասիա 222, 223
Ատրպատական 318, 319
Արագած 200, 201, 207
Արազ 82
Արարատ 317
Արդահան 152
Արմուդլու 85
Արփա 256, 257, 326, 340
Արևմտյան Եվրոպա 291-292

Բազարչայ 264
Բալկաններ 305

Բայբուրթ 151
Բայգարա 269
Բաշ-Գյառնի 129
Բասարգեչար 243, 251, 253, 261
Բաքու, նաև՝ Բագու (ներառյալ՝ Բալախանի, Բիբի-էյբաթ, Ջաբրադ, Սաբունչի, Սամանի, Սարուխանի, Սպիտակ քաղաք, Սև քաղաք) 12-14, 17, 98, 99, 101, 117, 118, 121-123, 127-129, 137-139, 151, 153, 154, 156, 158, 178, 240, 290, 297, 298, 300
Բեռլին 60, 62
Բյուրական 341
Բռնակոթ 156, 157
Բրազիլիա 177
Բրեստ 175
Բուխարեստ 61

Գահիրե 36, 346
Գերմանիա 125, 173-175
Գյանջա 153
Գյուքգեմ 213
Գնդևազ 264, 269, 274
Գորիս, նաև՝ Բուն Ջանգեզուր 78-81, 151, 240, 272, 273, 339

Դավալու 251
Դարաբաս 80
Դարալագյազ 107, 112, 123, 157, 210, 215, 240, 242-244, 250, 251, 254, 256, 257, 263-268, 276-278, 283
Դարաշամբ 277, 278
Դիլիջան 26, 47-48, 86, 102, 114, 162, 180, 184, 243, 244, 253
Դիսբադեն 323
Դողս 341
Դուգքենդ 252, 269, 270

Ելիզավետպոլ 99
Եվրոպա 29, 173, 174, 177, 312, 323
Երևան 2, 3, 10-16, 18, 22, 47, 56, 57, 59, 60, 66, 70, 79, 80, 82, 87, 92, 97, 101, 102, 106-108, 111, 113, 117, 118, 122, 123, 128-130, 132, 134, 146-148, 151-155, 157, 158, 162, 176, 180, 181, 185, 196, 198, 211, 212, 216, 227, 228, 232, 240, 243, 244, 249, 250, 258, 262, 267, 271, 272, 275, 278, 279, 293, 294, 311, 343

Ջանգեզուր 16, 27, 38, 41, 48, 52, 62-65, 72, 78, 80, 96, 102, 123, 133, 151, 153, 156-158, 160, 162, 180, 210, 213, 214, 216, 226, 240, 243, 244, 250, 264, 265, 282, 338
Ջանգիբասար 112

Էլփին 257
Էջմիածին (Վաղարշապատ) 38, 59, 82, 84, 86, 96-98, 102, 111, 112, 115, 116, 121, 123, 136, 151, 162, 180, 181, 201, 205, 207, 234, 260, 265, 271, 272, 318
Էվջիլար 85
Էրզրում 151, 152

Թալին 82, 83, 139, 253, 276
Թավրիզ 45, 46, 66, 71, 88, 106, 107, 110-112, 117, 123, 134, 157-160, 213, 233, 278, 290-294, 297, 301-303, 306, 315, 317, 318, 320-322
Թափադեբի 85
Թեհրան 72, 159, 278, 292, 301, 311, 313, 320, 321, 342
Թիֆլիս 12, 13, 21, 32, 33, 38, 39, 47-49, 58, 64, 69, 70, 72, 77, 98, 118, 122, 123, 152, 227, 270, 294, 317, 324, 337
Թրինդ 84
Թուրքական Քրդստան 320
Թուրքիա (Տաճկաստան) 12, 146, 175, 209, 221, 277, 318, 322

Ժնև 185

Իջևան 27, 242, 243, 276
Իտալիա 323

Լիճք 270, 271
Լոնդոն 175, 314
Լոռի 45, 47, 96, 136, 243, 251
Լոռի-Փամբակ (Փամբակ-Լոռի, Փամբակ-Ղարաքիլիսա) 101, 102, 118, 123, 181
Լոր 151

Խաչիկ 257
Խարկով 80, 152
Խուստուփ 339

Կարելիա 280
Կխտագիրմազ 329
Կյուտկյում 338
Կոչբեկ 264
Կոստանդնուպոլիս (Պոլիս) 176, 216, 293, 305, 322
Կովկաս 90, 128, 176, 179, 223, 286, 292, 300
Կոտայք 18, 96, 244, 252, 253
Կրասնոսելսկ 243, 251

Հալիձոր 80
Համամլու 244
Հայաստան 4-13, 15, 16, 21, 22, 24, 27, 29, 30, 32, 36, 39, 45-47, 50, 54, 56-61, 63, 64, 66-70, 72, 73, 76, 84, 87-89, 93, 96, 98, 99, 103-105, 107, 109, 113, 116, 117, 125-128, 130, 133, 134, 137, 138, 142, 144-150, 152, 155, 157, 158, 166, 168, 169, 177, 179-181, 183, 185, 200, 202, 207, 209, 210, 215, 217-219, 221, 222, 225-228, 233, 234, 239, 251, 258, 259, 271, 277, 279, 284-287, 290,
294, 296, 298, 299, 301-304, 312, 314, 320, 323, 324, 332, 335, 337, 339, 341
Հաջիղարա 271, 272
Հաջիմուխան 261
Հերհեր 263, 264
Հին Գորիս 272, 273
Հին Նախիջևան 116
Հյուսիսային Կովկաս 55, 128, 305-308
Հռոմ 36

Ղազախստան 288, 341
Ղազվին 313, 342
Ղաթար 338
Ղամարլու 111, 276
Ղարաբաղ (Լեռնային Ղարաբաղ) 98, 116, 118, 122, 123, 240, 299
Ղարաջորան 275-276
Ղարաքիլիսա (Վանաձոր) 26, 46, 48, 96, 99, 162, 180, 244
Ղարս (Կարս) 59, 73, 152, 269, 331
Ղափան (Կապան) 80, 81, 151, 213, 226, 240, 338-339
Ղզըլ-Օրդա 288
Ղզլթամուր 273, 274

Ղոնախղռան 269
Ղոնջալի 332
Ղուզիգեդան 85
Ղուշչի 264
Ղուրդալի 85
Ղուրդուղուլի 85

Ճապոնիա 175

Մազրան 261
Մամախաթուն 151
Մարգարա 85
Մարիական Մարզ 287
Մարսել 305, 309
Մարտիրոս 266, 267
Մարտունի 261
Մեծ Շահրիար 85
Մեղրի 38, 96, 114, 123, 133, 156, 193, 253, 270, 271
Միլան 216
Միկոյան 326
Միջագետք 293
Միջերկրական ծով 309
Մյունխեն 148
Մոլլաբայազեդ 85
Մոլլա-Գեոկչա 252, 253
Մոսկվա 12, 19, 35, 48, 49, 63-65, 67, 152, 176, 178, 228, 279, 288, 311, 337
Մուժամբար 72

Նախիջևան 98, 116, 240, 267
Ներքին Աղջաղալա 200, 203, 207
Նյու-Յորք 226
Նորաշեն 240
Նոր Բայազետ 38, 45, 102, 107, 111, 115, 123, 136, 139, 180, 181, 261, 262

Շամշադին 242, 250
Շխմամուդ 116
Շուշի 151

Չեխոսլովակիա 293
Չիվա 257

Պարսկական Ադրբեջան 294, 295, 317
Պարսկաստան 24, 46, 102, 132, 135, 157, 160, 184, 185, 200, 277, 278, 290, 291, 301, 303, 312, 314-317, 319, 321, 338, 341, 342
Պետրոզավոդսկ 280, 341
Պրահա 292

Ջաֆարբադ 85
Ջուլֆա 96, 134, 291

Ռամաշան 267
Ռեշտ 314
Ռիգա 56, 61, 62, 64-66, 173, 221
Ռինդ 257
Ռումինիա 310
Ռուսաստան 12, 13, 16, 64, 65, 100, 152, 174, 175, 177, 284, 310, 337
Ռուր 173, 174
Ռևել (Տալին) 65

Սարդարապատ 152, 210
Սարդինիա 309
Սարիղամիշ 152
Սելիմ 152
Սերնուր 287
Սիբիր 273, 341
Սիսիան 80, 81, 156, 157, 160, 243, 252
Սիցիլիա 309
Ստալինաբադ 273
Ստեփանակերտ 299
Ստեփանավան 244
Սևան 251

Վան 91
Վասպուրական 82
Վեդի-Բասար (Վեդի) 250, 253, 276, 277
Վերին Ադիյաման 261

Վերսայլ 174
Վիեննա 39, 75, 131, 141
Վրաստան 21, 59, 60, 70, 72-74, 76, 98, 123, 128, 129, 146, 179, 180, 209, 227, 298, 305-307, 337

Տյումեն 341

Ուզունօբա 85
Ուկրաինա 152
Ուրգուբ 339

Փաշալու 268, 269, 274
Փարիզ 16, 75, 91, 213, 215, 216, 227, 228, 304, 305, 309, 310, 313, 316, 320, 322, 323, 338
Փոքր Շահրիար 85

Քալագարխ 85
Քեշիշքենդ 269
Քրդստան 321

Օշական 198
Օրգով 341
Օրդուբադ 271

Ֆրանսիա 173-175, 310, 323, 339, 342

Բովանդակություն

Նախաբան 5

Գլուխ I. Դաշնակցության կազմալուծման խորհրդային իշխանության (Կոմունիստական կուսակցության) ռազմավարությունը 9

Գլուխ II. Պետական անվտանգության մարմինների դերը 45

Գլուխ III. Կուսակցության կազմալուծման) փորձերը «ձախերի» միջոցով: Ռիգայի բանակցությունները 56

Գլուխ IV. Դաշնակցությունը կազմացրող համագումարը Հայաստանում 76

Ա. Հայտարարություններ, զեկուցագրեր, հոդվածներ 76

Բ. Համագումարը նախապատրաստող ՀԿ(բ)Կ Կենտկոմի եռյակը 94

Գ. Համագումար նախաձեռնող Բյուրոն 103

Դ. Հայաստանում Դաշնակցության ինքնավերացման համագումարը 130

Ե. Ակսել Բակունց, Հայկ Ավալյան, Նիկոլայ Կրմենանց 151

Գլուխ V. Երիտասարդ դաշնակցականների միության համագումարը 162

Ա. Համագումարի նախապատրաստումը 162

Բ. Նախկին երիտասարդ դաշնակցականների համահայաստանյան համագումարը 172

Գլուխ VI. Կազմալուծման հետհամագումարյան գործընթացը 188

Ա. Աշխատանքը նախկին դաշնակցականների շրջանում 188

Բ. Երիտասարդության դաստիարակությունը 194

Գ. Դաշնակցության դատավարությունը (Մանուկ Խուշոյանի ահաբեկչական գործի դատավարության փոխարեն) 198

Դ. Կազմակերպական և գաղափարական ճնշման խստացումը 208

Գլուխ VII. Կուսակցության կազմալուծման եզրափակիչ փուլը Հայաստանում 239

Ա. Կազմալուծման միջոցառումները գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմաններում 239

Բ. Կուսակցության կազմակերպական ջախջախումը 258

Գլուխ VIII. Աքսորավայրերում ու բանտերում (ներման խնդրագրեր) 279

Գլուխ IX. Կազմալուծման փորձերը Հայաստանից դուրս 290

Հավելված 325

Ծանոթագրություններ 336

Վերջաբանի փոխարեն 343

Հապավումներ 344

Ցանկ անձնանունների 345

Ցանկ տեղանունների 361

Բովանդակություն 368

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վ.Ն. Ղազախեցյան

Շարվածքը, ձևավորումը և տպագրությունը «ՀԱՅ ԷԴԻԹ» ՍՊԸ
Երևան, Հալաբյան 41ա:

ՀԱՅ ԷԴԻԹ